Մովսիսի խորենացւոյ պատմութիւն Հայոց

ԳՄԴ 84.21
Մ916

Հրատարակության է պատրաստել բանաս. գիտ. թեկն.
Գ. Գ. ԱՆԱՆՅԱՆԸ

«Ուսանողի գրադարան» մատենաշարի
խմբագրական հանձնաժողով.
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ.,
ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ Հ. Ս., ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Մ.,
ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ., ՍԱՄՎԵԼՅԱՆ Լ. Օ.

Մովսես Խորենացի.
Մ916 Հայոց պատմություն/Խոր., ներած., և ծանոթություն. Ս. Մալխասյան.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1981.— 428 էջ:

Ներկա հրատարակությունը 1940 թ. Ստ. Մալխասյանի թարգմանության, ներածականով ու ծանոթագրություններով լույս տեսած «Հայոց պատմության» վերահրատարակությունն է:

4702080000—10
704/02/—1981
31—1981

ԳՄԴ 84.21+63.3(22)1
Ար1+9(Ա43)1

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ[1]

«Անմահ յիշատակ թողուլ գայս ինձ և որ զկնի ես գալոց են ազգք»: (Խոր. Ա. ա):

«Մի՞թե մատեան մեծ կայցէ ինձ կամ դպրութիւնք ոք ճայրենեաց... Սակայն ակայց, թէպէտ և չանիւ. միայն թէ շնորհակալ ոմ մեռցս գոհիցի աշխատութեանց»: (Անդ. Ա. գ.):

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ: ՆՐԱ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱԼԱԾԱՆԴՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ: ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ՀՈՐՈՄՈՐԴ ԳՐՔԻ ՀԱՐՑԸ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ: ՄԱՐ-ԱԲԱՍՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ: ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՈՃԸ. ԼԵԶՈՒՆ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՆԵՐԿԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆԴՆԵՐԸ:

Մովսես Խորենացին եզակիան գրական դեմք է մեր հին մատենագիրների մեջ: Նա տասնևչորս դար շարունակ աննվազ հետաքրքրություն է շարժել հայ ժողովրդի և բանասիրության մեջ իր Հայոց պատմությամբ, որ ծառայել է իբրև ուսման առարկա և իբրև ուսումնասիրության նյութ: Ավելի քան տասը դար այս գրվածքը եղել է հայ ազգի միակ դասագիրքը իր հին անցյալի հետ ծանոթանալու համար. եղել է աղբյուր և օրինակ հետագա պատմիչների համար, որոնք նրանից քաղվածքներ են անում, ընդօրինակում են, հետևում են նրա ստեղծած պատմագրության տիպին: Ամենաբարձր գովեստներով հիշում են նրա անունը՝ տիեզերահռչակյալ քերթող, պատմահայր, քերթողահայրն (իբրև հատուկ նրան սեփական տիտղոս): Նրան կոչել են հայ Հերոդոտոս, որ և,

[1] *Կատարվել են ուղղագրական և կետադրական խիստ անհրաժեշտ շտկումներ: Եանոթ. կազմողի:*

ինչպես Գուտշմիտն ասում է, հայերը, եթե փոքր ինչ անափառություն ունեն, իրավունք ունեն այսպես կոչելու նրան. նա արևելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնությամբ առաջիններից մեկն է ս. գրքից հետո[2]։

Սակայն տասնևիններորդ դարից այս կողմը հետզհետե փոխվեց վերաբերմունքը դեպի այս Պատմությունը և նրա հեղինակը՝ շնորհիվ եվրոպական բանասիրության քննադատության։ Սկզբում դեռ թույլ կերպով, բայց հետզհետե ավելի համարձակ և վստահ սկսեցին քննադատել նրա պատմության աղբյուրները, նրա ըստուգությունը կամ արժանահավատությունը. շոշափեցին հեղինակի անձնավորությունը, այսինքն՝ թե նա հիրավի հինգերորդ դարի հեղինա՞կ է, Սահակի և Մեսրոպի աշակերտը, ինչպես ինքն է գրում իր մասին. արդյոք նրա Պատմությունը հինգերորդ դարի գործ է, թե ավելի ուշ ժամանակի։ Այս քննադատությունն իր գագաթնակետին հասավ անցյալ դարի իննսնական թվականներին և մեր դարի սկզբներին, երբ բանասերներն աշխատում էին մեկը մյուսից գերազանցել իրենց մերկացուցիչ և բացասական վերաբերմունքով դեպի հեղինակն ու նրա գործը. կարծես մրցանակ էր նշանակված ամենաանպաստ քննադատության համար, և քննադատները ձգտում էին մեկը մյուսի ձեռքից խլել այս մրցանակը։ Պատմության գրության ժամանակն իջեցրին մինչև իններորդ դարը, նրան համարեցին կեղծիք՝ Մովսես Խորենացու անունով, մինչև անգամ նրան մկրտեցին «Պատմություն ստոյն Մովսեսի Խորենացու» (Pseudo-Moses) անունով։ Մեծ թվով ընդարձակ ու համառոտ քննադատություններ գրվեցին առանձին գրքերով կամ պարբերական մամուլի մեջ, մասամբ ի պաշտպանություն, մասամբ ընդդեմ Խորենացու. ստեղծվեցին հատուկ անուններ՝ Մովսեսապաշտներ և Մովսեսատյացներ։ Ամեն մի բանասեր, որ զբաղվել է հայոց գրականությամբ, շատ կամ քիչ զբաղվել է և Խորենացիով, նրա Պատմությամբ։ Հիշենք միայն գլխավորներին։ Եվրոպացի բանասերներից Խորենացու և նրա Պատմության մասին գրել են՝ Բաումգարտներ, Գելցեր, Գուտշմիտ, Դյուլորիե, Լակրոզ, Լանգլաու, Կարբիեր, Կիպերտ, Կոնիբեր, Մակլեր, Մառ, Մակվարտ, Նեվ, Նիկար, Պետերման, Պիշար, Սեն-Մարտեն, Ֆեռլեր, Ֆլորիվալ, Ֆրերե։ Հայ հեղինակներից—Աբեղյան, Ադոնց, Ալիշան, Ակինյան, Գարա-

[2] *Խորենացու արժանահավատությունը. եր. 3 և 6։*

դաշյան, Գաֆըրճյան, Գևորգյան (Ճուղուրյան), Դաղթաշյան, Զարպհանալյան, Էմին, Խալաթյանց Բ., Խալաթյանց Գ., Կարինյան, Մ. Տեր-Մովսեսյան, Միքաբան (Գ. Տեր-Մկրտչյան), Նորայր, Չամչյան, Պատկանյան, Պարոնյան, Սարգսյան Բ., Տաշյան, տողերիս գրողը և ուրիշներ[3]։

Վերջերս, շնորհիվ նոր հայտնություններուն, այս գրոհը կանգ առավ և Խորենացին ու նրա Պատմությունը դարձյալ իրենց արժանավոր դիրքը գրավեցին մեր հին պատմագրության մեջ։

Թե ինչն էր պատճառը այս բացառիկ հետաքրքրության Խորենացիով հին և նոր ժամանակ՝ այս հարցին կջանանք համառոտակի պատասխանել այս ներածության մեջ, ավելի մանրամասն տեղեկությունների համար հանձնարարելով դիմել մասնագիտական գրվածքներին։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ։ Խորենացու մասին կենսագրական տեղեկություններ քիչ ունենք։ Նրանցից մեծ մասը հազորդում է ինքը՝ հեղինակը Պատմության մեջ պատահական կերպով։ Սրանց վրա ավելացնելու է ժամանակով նրան մոտիկ ու նրան ծանոթ Ղազար Փարպեցու կարճառոտ, բայց շատ կարևոր վկայությունը։ Ուշ ժամանակի հեղինակների հազորդած տեղեկություններն անարժեք են իրրև անստույգ, նույնիսկ հակասող հեղինակի հազորդած տեղեկություններին։ Հիշյալ կցկտուր տվյալները կապակցելով՝ կարելի է մոտավորապես մի ամփոփ գաղափար կազմել Պատմահոր կյանքի և գործունեության մասին։

Խորենացի բառը, որով կոչվում է Պատմահայրը, ցույց է տալիս, որ նա ծնված պետք է լինի Խորեն կամ Խորեան անունով մի տեղում։ Այս անունով քաղաք կամ գյուղ հայտնի չէր մինչև վերջին ժամանակներս։ Նա երբեմն կոչվում է նաև Տարոնացի. Տարոն գավառում եղել է Խորնի կամ Խորոն անունով մի գյուղ. բայց եթե Մովսեսը այստեղ ծնված լիներ՝ պետք է կոչվեր Խորնեցի կամ Խորանացի (ինչպես մի ժամանակ Վենետիկի Մխիթարյաններից ոմանք գրում էին)։ Ավելի հավանական է կարծել, թե նա ծնված է Սյունիքում, Հաբառնդ դավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Սեբեր. Օրբելյանը («Պատմություն»,

---

[3] Տե՛ս Մ. Խորենացու Պատմությունը («Պատմագիրք Հայոց» Տիֆլիս, 1913, էջ Նե—Կ)։

Թիֆլիս, եր. 517), տասներեքերորդ դարի վերջում՝ Օրբելյանի հիշած խորհա ձևը հինգերորդ դարում հնչում էր ավելի լիակատար ձևով—խորհան։ (Համեմատել՝ արևելյան և արևելեա, այժմյան և այժմեա, միջերկրյան և միջերկրեա, Մամիկոնյան և Մամիկոնեա և այլն)։ Այս ենթադրության ուժ են տալիս մի քանի կողմնակի փաստեր, ինչպես խորենացու լավ ծանոթ լինելը Սյունիքին, Երասխի հոսանքին, Երասխի ափերին մոտ եղած շիներին, Սյունյաց նահապետ Սիսակին մեծ գովեստներով հիշելը, հակակրությունը դեպի Մամիկոնյանները, որոնք Սյունյաց հակառակորդներն էին 5 դարի երկրորդ կեսում և այլն։ (Տե՛ս այս մասին ավելի ընդարձակ մեր «Խորենացու առեղծվածի շուրջը», Հավելված Դ)։

Նրա ծննդյան տարին նույնպես որոշ հայտնի չէ։ Հիմնվելով Սամվել Անեցու ժամանակագրության վրա՝ բանասերներն, սկսած Սեն-Մարտենից մինչև Էմինը և Ստեփանեն, ենթադրել են, թե նա ծնված պետք է լինի 370 թվականին և մեռած 490-ին, 120 տարեկան հասակում։ Շատ անհավանական է այս 120 տարվա հասակը և մանավանդ անընդունելի է 370 թվին ծնվելը. սա հակասում է Պատմահոր ցուցմանն նա գրում է, որ Եփեսոսի ժողովից՝ հետո, ուրեմն 432—437 թվականների ընթացքում, Սահակն ու Մեսրոպը նրան ուրիշ ընկերների հետ ուղարկեցին Ալեքսանդրիա բարձրագույն ուսում ստանալու։ Բայց 370-ին ծնվածը այն ժամանակ կլիներ 62—66 տարեկան ծերունի։ Այսպիսի տարիքում, ալևորված մորուքով, չեն գնում բարձրագույն ուսում ստանալու, այլ ավելի երիտասարդ հասակում։

Դեն դցելով այս առասպելը, որի աղբյուրը թվում է, թե Թովմա Արծրունու մի խոսքն է[4], մենք նրա ծննդյան հավանական տարին կդտնենք հենց խորենացու հիշյալ վկայությունից։ Այնպիսի հեռավոր ու դժվար ճանապարհորդություն կատարելու, օտարության մեջ ինքն իրեն կառավարել գիտենալու համար պետք էր բավական չափահաս ու փորձառու լինել, միանգամայն սուր հիշողություն, մտքի թարմություն և ուսանելու բուռն փափագ ունենալ։ Այսպիսի հասակ մենք համարում ենք մարդու 22—23 տարեկան հասակը. ուստի երբ խորենացին, արտասահման ուղարկվելիս, այսինքն 432—434 թվականներին 22—23 տա-

[4] *«Որոյ ամք կենացն տեսեալ ձգնալ ամս հարիւր և քսան լի և պարարտ ծերութեամբ» ասելն։ Սրա մասին քիչ հետո մանրամասն կխոսենք։*

բեկան լիներ՝ պետք է ծնված լիներ 410 թվականի շուրջը, մի-երկու տարով առաջ կամ հետու։ Այս թվականը լավ հարմարվում է նրա մյուս վկայութիւնը, թե Պատմութիւնը գրելիս, 480-ական թվականներին, եղել է տայր ծեր և հիւանդոտ և անպարապ ի թարգմանութիւնից»։

Այսպես՝ խորենացու ծնունդը դնելով 410 թվականի մոտ՝ այնուհետև եզրակացնում ենք, որ նա մանկութեան տարիներում սկզբնական կրթութիւնն ստացել է հենց Սյունիքում, ս. Մեսրոպի այնտեղ հիմնած դպրոցում, ինչպես վկայում է Կորյունը։ Այստեղ ուսանելով ավանդված տարրական գիտութիւնը, որ էր զրաւարժ ընթերցանութիւն և երգեցողութիւն, և ցույց տալով աչքի ընկնող ընդունակութիւն՝ նա 15—16 տարեկան հասակում, այսինքն մոտ 427 թվականին, ուղարկվում է Վաղարշապատ, Հայոց այն ժամանակվա կենտրոնական վարժարանը, որտեղ ուսուցանում էր ինքը՝ ս. Մեսրոպը։ Այստեղ էլ նա ուսանում է 5—6 տարի, բացի հայերենից սովորելով նաև հունարեն և ասորերեն (առանց այս լեզուների ծանոթութեան՝ նա չէր կարող հանապարհորդել Ասորիքով և ապրել Ալեքսանդրիայում)։ Պահլավերեն էլ (Սասանյանների ժամանակի պարսկերենը), թեև ոչ գրավոր՝ բայց գործնականապես նույնպես գիտեր։ Սա երևում է մի շարք պահլավերեն բառերի ուղիղ մեկնութիւններից, որ պատահում ենք նրա Պատմութեան մեջ։

Եփեսոսի ժողովից հետո (431), երբ Սահակն ու Մեսրոպը ս. գիրքն ուղղում էին ըստ հունարեն բնագրի (կամ հունարենից երկրորդ անգամ էին թարգմանում)՝ կարիք զգացին քաջ հունագետների, քերթողական արվեստին հմուտ գիտնականների. ուստի որոշեցին իրենց ամենաընդունակ աշակերտներից մի քանիսին ուղարկել Ալեքսանդրիա, գիտութիւնների այն ժամանակվա կենտրոնը, որտեղ իրար հանդիպում և իրար հետ զոդվում էին Արևելքն ու Արևմուտքը։ Այս ընտրյալների դասին էր պատկանում և նրանց մեջ առաջինն էր պատանի Մովսեսը, մոտ 22 տարեկան հասակում, որ հիացմունքով ու վառ հույսերով լի նկարագրում է իր ճանապարհորդութիւնը, իր ուսուցիչներին նմանեցնելով արեգակի, իսկ իրենց՝ այդ արեգակից լույս ստացող աստղերի։ Այս ճանապարհորդութիւնը ենթադրում ենք 432-ից հետո, ոչ ուշ քան 435 թվականը։

Ի՛նչ էր նա սովորում Ալեքսանդրիայում՝ ստույգ չգիտենք. նա իր ուսուցչին կոչում է նոր Պղատոն, առանց անունը տալու. ուստի

և հավանական է, որ նա իմաստասեր՝ գիտնական լիներ, քան աստվածաբան։ Նկատի ունենալով նրա գալու գլխավոր նպատակը՝ պետք է հետևեցնենք, որ նրա ուսման հիմնական առարկաներն էին հունարեն լեզուն և քերթողական արվեստը, այսինքն լեզվի և խոսքի թեորիան, քերականություն, ճարտասանություն։ Ուրկրորդաբար նա սովորում էր ս. գրքի մեկնությունները, պատմություն, հունաց դիցաբանություն։ Ալեքսանդրիայի աշխարհահռչակ մատենադարանը միջոց էր տալիս ուսումնասեր հայ երիտասարդներին կարդալու հույն բանաստեղծների, փիլիսոփաների, պատմագիրների և այլ գիտնականների գրվածքները, որոնցից հետո Խորենացին հաճախակի օգտվում է իր Պատմությունը գրելիս։

Հայտնի չէ, թե ո՛րքան ժամանակ հայ ուսանողները մնացին Ալեքսանդրիայում և առհասարակ պանդխտության մեջ, հավանաբար դեպս ոչ պակաս քան 5—6 տարի։ Նրանք վերադարձան 439 թվականից հետո, երբ Հայաստանի երկու լուսավորիչներն ու նրանց ուսուցիչներն արդեն վախճանված էին։ Նրանց համար անակընկալ էր այս ցավալի իրողությունը։ Ի՞նչպես սրտառուչ կերպով արտահայտում է Խորենացին իր վիշտը. «Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել... և առաջաստի երգեր երգել,— այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով. նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն և օրհնությունը» (Ողբ)։

Բայց գուցե այս երկու մահերից ավելի դառն էր այն սառն, գրեթե քշնամական ընդունելությունը, որին նրանք հանդիպեցին իրենց կարոտած հայրենիքում։ Գիտության պաշարով ծանրաբեռնված, հայրենիքին ծառայելու տենչով ոգևորված՝ նրանք գալիս են և հանդիպում են արհամարհանքի ու հալածանքների։ Նրանց ասպարեզ չէին տալիս գործելու, ծաղրում էին նրանց գիտությունը, հալածում էին տեղից տեղ, դատապարտում էին զրկանքներով լի կյանքի, աղքատության։ Այդ մասին միանման վկայում են Խորենացին և Ղ. Փարպեցին, մեկը մյուսին լրացնելով։ Խորենացին ասում է. «Արդ նրանք այսպես վարվեցին երբ աստծու սրբերի հետ (խոսքը Տրդատ թագավորին քրիստոնեություն մասին է)... այլևս մենք ի՞նչ կարող ենք ասել աստծուն՝ ձեր կողմից մեզ

*հասած նեղությունների համար, մեզ՝ որ սովոր ենք նեղությունների և աղքատության... Ո՞վ մեր եկած ժամանակ հանգիստ, ո՞վ մեզ տուն կամ իջևան պատրաստեց։ Բողնում եմ մյուս բաները, որովհետև դուք չսանձահարեցիք շար լեզուներն ու տգիտությունը, նրանց սնոտի փառամոլությամբ և կատաղի լեզվաբարությամբ, այլ ձեր ուսումնասյաց բարքով նրանց անմտությունը հրահրելով բորբոքեցիք ավելի քան Բաբելոնի հնոցը... Ո՞ր մտածող մարդը չի ողբա դրանց մասին, այլև,— թող ոչ ոք չնեղանա,— նրանց մասին, որ դրանց հորդորում են այսպես լինել» (Բ. Ղր)։ Ողբի մեջ ասում է. «Ո՞վ այսուհետև պիտի հարգե մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր աշակերտիս առաջադիմությամբ... Ո՞վ պետք է զսպե առողջ վարդապետության հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք... իրենց համար շար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ (մարդկանց)»։ Ղազար Փարպեցին գրում է իր թղթում փիլիսոփա Մովսեսի մասին, որ ընդհանրապես համարվում է Մովսես Խորենացին. «Ծիրանեվի Մովսես փիլիսոփոսը, որ քանի կենդանի էր՝ հրեշտակի նման կյանք ուներ, չէ՞ որ հայոց այդ աթեղայական խումբը նրան տեղից տեղ հալածեց, չէ՞ որ այն լուսավորչին և նրա տգիտահալած գրքերն իրենց անգիտությամբ կոչում էին փաթաղ իկես[5], և ուրիշ շատ բաներով էլ նրան վշտացնելուց հետո՝ ուրիշներից ամաչելով խաբեական եպիսկոպոսությունը նրան տվին իբրև մահադեղ և արքի ձայնը խեղդեցին»։

ՀԱՎԱԾԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ։ Ի՞նչ էր այս հալածանքների պատճառը։ Էմինը և սրա հետևողությամբ Ստեփաննն այս բանը վերագրում են տղետ հայ հոգևորականության նախանձին, որ միանգամայն անընդունելի է և հակասում է իրականության։ Պետք է ուրիշ՝ կենցաղական և սոցիալական պայմանների մեջ փնտրել այս պատճառները, քանի որ նրանք, ինչպես իսկույն կտեսնենք, սկզբունքային, իդեական բնույթ ունեն։ Եթե այս հալածանքները անհատական բնույթ ունենային, լոկ Խորենացու դեմ ուղղված՝ կարելի կլիներ դրանք բացատրել Խորենացու հարա-

---

[5] Ն. Մառ այս երկու բառերը, որ սեմական ծագում ունեն՝ բացատրում է «աղճատված», «աղավաղված» նշանակությամբ (исковерканный, изпращенный). (Начальная история Армении Агошика, էջ 30)։

ձակախոս լեզվով, որ իրեն համարում էր «ամենիմաստ արվեստի տեր», կատարելագույն պատրաստություն ունեցող անձ, իսկ մյուսներին առանց քաշվելու միշտ տգետ էր անվանում, որով հարկավ շատերին կդրգռեր իր դեմ. կամ կարելի կլիներ այդ հալածանքները վերագրել խորենացու ատելությամբ դեպի Մամիկոնյանները այնպիսի ժամանակ, երբ կրոնական պատերազմի նախօրյակին կամ նրանից հետո Մամիկոնյանները՝ հանձին Վարդան Մամիկոնյանի և քիչ հետո Վահանի, ազգային հերոսների անուն ու հարգանք էին վայելում հայ հոգևորականության մեջ և որոնց սակայն խորենացին այս կամ այն բանում մեղադրում էր կամ պախարակում[6]։ Բայց, ինչպես ասացինք, երևույթը մասսայական բնույթ ուներ. հալածանքները հետևանք էին դասակարգային պայքարի։

Պայքարը մղվում էր հայ հոգևորականության երկու խավերի միջև, որոնցից մեկը ասորական օրիենտացիայի հետևող էր, մյուսը հունականի։ Ասորիները վազուց ի վեր տիրապետող ազդեցություն էին ձեռք բերել Հայաստանում. չմոռանանք, որ քրիստոնեությունն սկսվելուց ի վեր ասորի հոգևորականներով լցվեց Հայաստանը. ժամերգությունը կատարվում էր ասորերեն լեզվով. հայ պատանիները Ասորիք էին գնում ասորերեն սովորելու, որպեսզի հայրենիք վերադառնալով կարողանան ասորերեն լեզվով պաշտամունք կատարել հայոց եկեղեցիներում։ Պարսից կառավարությունն էլ, հունական քաղաքականությունից կասկածելով՝ խոչընդոտ էր լինում հունարենի տարածման և խրախուսում էր ասորական ազդեցությունը։ Գրերի գյուտի համար ս. Մեսրոպը Ասորիք դիմեց և ոչ Հունաստան. ս. գիրքը առաջին անգամ ասորերենից թարգմանվեց. նույնիսկ հունարեն գրվածքները հայերեն էին թարգմանվում ասորերեն թարգմանություններից։ Ս. Սահակի գահընկեցության միջոցին հետզհետե հայոց կաթողիկոս նստեցին ասորի հոգևորականներ։ Ասորիներն ուժեղ

---

[6] Այս ենթադրության մեջ ոչ մի անհավանական բան չկա։ Մեզ այսօր, երբ առաջին կրոնական պատերազմի պատմությունը դիտենք միայն երկու Մամիկոնյան պատմիչներից,— և այնուամենայնիվ լուրջ բանասիրությունը, հենց նրանց գրածների վրա հիմնվելով, չի դատապարտում Վասակին և չի փառաբանում Վարդանին,—որքա՞ն նոր ու տարբեր բաներ մենք կիմանայինք և իրողությունը տարբեր կերպարանք կստանար, եթե այդ պատմությունը գրողը մի այլանդակ կամ գոնե մի անկողմնապահ մարդ լիներ։

էին իրենց մասսայով ու գրաված բարձր դիրքով և ունեին շատ հետևողներ հայ հոգևորականության միջից։ Այս խումբը պահպանողական էր և համեմատաբար ավելի ազգու։

Հունական օրինակացիան ավելի ուշ առաջ եկավ, հավանորեն այն ժամանակից, երբ ս. Մեսրոպ Բյուզանդիա գնաց իրավունք ձեռք բերելու, որ Հայաստանի Հունական բաժնումն էլ հայերեն գրագիտություն մուծվի։ Այս թույլտվությունն ստացվեց, բայց ուրիշ փոխադարձ դիջումով, այն է, որ ս. գիրքը նորից թարգմանվի կամ գոնե ուղղվի ըստ Հունարեն բնագրի և որ հայ ուսանողությունն այնուհետև Բյուզանդիա գնա ուսում ստանալու փոխանակ Ասորիք գնալու։ Եվ տեսնում ենք, որ երիտասարդությունը փափագելով դիմում էր Բյուզանդիա, նույնիսկ առանց իրենց ուսուցիչների թույլտվության։ Այս երիտասարդների թվին էին պատկանում նաև Խորենացին իր ընկերներով, որոնք ուղարկվեցին Ալեքսանդրիա բարձրագույն ուսում ստանալու և քերթողական արվեստը սովորելու։ Սրանց ընդհանուր հատկանիշն էր ավելի լայն աշխարհայացք և ավելի բարձր կրթություն։

Այս երիտասարդները, որ հետզհետե գալիս էին Հայաստան՝ դեմ առ դեմ հանդիպում էին պահպանողական և անուսում, բայց ուժեղ հոգևորականության։ Իրար դեմ էին գալիս երկու խումբ՝ տարբեր կրթություններով, տարբեր աշխարհայացքով։ Պայքարն անխուսափելի էր։ (Հիշենք՝ որպիսի ընդունելություն գտավ մեզանից հարյուր տարի առաջ Խաչ. Աբովյանը Էջմիածնի հոգևորականության կողմից)։

Որ այս պայքարը դասակարգային էր ու իդեական և ոչ անհատական կամ անձնական՝ պարզ երևում է Ղ. Փարպեցու կարևոր վկայությունից։ Իր Թղթի վերջում, իր կրած հալածանքները նկարագրելուց հետո՝ նա ասում է. «Բայց ընդունենք, որ ես այս չարչարանքները կրեցի իրավացի կերպով իմ գործերի համար. իսկ այն մյուս առաքելանման մարդիկ ինչո՞ւ այսպիսի և ավելի խիստ վշտեր կրեցին այս աշխարհում և խստագույն վշտերի մեջ վախճանվեցին»։ Սկսում է բերել օրինակներ, առաջին տեղում հիշելով «երանելի Մովսես փիլիսոփոսին» (տե՛ս վերը, էջ XIII)։ Այնուհետև ձեռագրում մի թերթ պակասում է (կամ կորել է պատահաբար, կամ, որ ավելի հավանական է, դիտմամբ պոկել հանել են՝ ազգային խայտառակության քսմունելի արարքներն անհետացնելու համար)։ Հաջորդ թղթի վրա շարունակության

մեջ գրվում է մի անհայտ անձի մասին (անունը եղել է պոկված թղթի մեջ)... Անդրան նշանակից անչափ անհանգիստ աշխատանքների վրա գիշեր ու ցերեկ, Հայոց աշխարհի լուսավորության համար։ Ոսկորները գերեզմանից հանել էին տալիս և գետը թափում։ Հրեշտականման Տերին նույն անհանգիստ հալածանքներով վախճանեցրին, և դեռ այժմ էլ անհագ քինախնդրությամբ կռվում են մեռածի հետ։ ԵՒնարատ և ամենից հարգված հույսը, տեր Խոսրովիկ, դեռ մեր սահմանը չհասած, մինչ գալիս էր՝ լսեցին և ինչպես թշնամու դեմ զինվեցին ասելով՝ «Ահա մյուս թարգմանն էլ. ո՞ւր է գալիս»։ Եվ այն օրհնյալը հեռվից լսելով մահաբեր աղեղների ճայթյունը՝ ազոթեց բարձրյալին և յուր խնդրածը գտավ, և նրա ցանկալի նշխարները ամփոփելու արժանացան ուրիշները և ոչ մենք»։ Եվ այլն։ Ո՞րքան բնորոշ է՝ «Ահա՜, մյուս թարգմանն էլ գալիս է» խոսքը։ Դեռ հայրենիքի սահմանը ոտք չհոխած, դեռ ոչ մի գործ չարած՝ նա իր դեմ է զինում հալածիչների խումբը լոկ այն պատճառով, որ թարգմանիչ է, Բյուզանդիայում բարձրագույն ուսում է ստացել։ Ուրեմն պայքարը մղվում էր մի որոշ դասակարգի դեմ, անկախ նրանց անհատական հանգամանքներից։ Եվ երբ հալածանքի ենթարկվածները թարգմանիչներն էին, այսինքն հունական կրթություն և օրիենտացիա ունեցողները, ապա գիտենք նաև, թե ովքեր էին հալածողները։ Նույն Փարպեցին նրանց շարունակ անվանում է աբեղյանդ Հայոց, ասորական աբեղա բառից (ասոր. aw̄īlā կրոնավոր), մինչդեռ մյուս հոգևորականներին կոչում է պարեգոտավոր (փարաջավոր)։ Դարձյալ տեսնում ենք, որ Մովսես փիլիսոփոսին ծաղրելու համար նրա գրքերը կոչում էին փաթաղիկես[7] ու դարձյալ ասորական բառերով, ուրեմն ասորի էին կամ ասորագետ։

Պայքարն իրոք սկսվեց և աղետալի հետևանքներ ունեցավ Հայ կուլտուրայի համար։

Մենք առայժմ երկու կոնկրետ առիթ կարող ենք ցույց տալ այդ պայքարի— լեզվի շուրջը և կրոնի շուրջը, որոնց երկուսի մեջ

[7] Ասորա-հունական հակամարտությունը Հայաստանում և հիշյալ ասորական բառերի բնորոշ գործածությունը առաջին անգամ մատնանշեց Մառը Нач. ист. Арм. Анонима.

Լեզվի այսպիսի բարենորոգչական փորձեր, ոչ միայն բառակազմության, այլև քերականական ձևերի մեջ՝ խորթ չեն մեզանում. բավական է հիշել Տաճկահայոց՝ Ռուսինյանին, Մինաս Չերազին, մեր մեջ՝ Ս. Ստեփանեին, Աղայանին և ուրիշներին։ Իսկ բանաստեղծությունը ունի շատ ներկայացուցիչներ։

էլ ասորական խումբը հանդիսանում է պահպանողական, իսկ Հունասերների խումբը՝ առաջադիմական։

Լեզվի հարցում նորեկ Հունասեր խումբը հանդես բերեց մի քարեկորոգչական ձգտում— հայերենի մեջ մուծել գոնե մի մասը այն բազմատեսակ առավելություններից, որ ուներ Հունարենը, որով նրանք սիրահարված էին— նախդիրներով կազմված հարաբավոր բառեր, համաձայնական ազատություններ, հոդեր, սեռեր և այլն, որոնցից զուրկ էր հայերենը։

Թողնելով ուրիշ գրվածքները՝ կարող ենք հաստատ ասել, որ Փիլոնի ճառերը, Դիոնիսիոսի քերականությունը, Եվսեբիոսի ժամանակագրությունը, Պիտույից գիրքը արդեն թարգմանված էին հայերեն այս թարգմանիչների ձեռքով, այն ժամանակ, երբ դեռ կենդանի էին «ոսկեղենիկ» լեզվի պարագլուխները— Ագաթանգեղոսի խմբագրողը, Փավստոսի անհայտ հեղինակը, գուցե և Եղնիկն ու Եղիշեն։ Կարո՞ղ էին այս հեղինակավոր մատենագիրները հաշտ աչքով նայել վերոհիշյալ թարգմանությունների և նրանց թարգմանիչների վրա, որոնք ահագին հեղափոխություն էին մտցնում դասական հայերեն լեզվի բառամթերքի և քերականության մեջ։ Եթե մեզ մոտ ժամանակներում և հենց մեր օրերում լեզվի բառամթերքի, քերականության և ուղղագրության մեջ նորամուծություններն այնքան քննադատությունների և բողոքների առիթ են տալիս, (հիշենք Ստ. Նազարյանի և նրա խմբի պայքարը լեզվի ավանդապահների հետ), ի՞նչ կլիներ այն ժամանակ, երբ պահպանողականությունը, նախնյաց հետևելու սովորությունը օրենք էր։ Մի հիշատակագիր, որի գրածը մեջ է բերում Գ. Զարպհանալյանը (Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց, էջ 397), առանց հեղինակի անունը տալու, ասում է. «Ամեն ինչ անտես անելով, ծնողներ, ազգականներ, ստացվածքներ՝ փութացին ուսման վայրերը, իմաստության և գիտության տունը, երկար աշխատանքով ձեռք բերին գիտություն, դարձան սոփեստներ[8] և քաջ փիլիսոփաներ... Այնուհետև մեծ խնդությամբ գարձան իրենց աշխարհը՝ իմաստություն տարածելու... Բայց ոչ միայն ընդունելություն չգտան, այլև ենթարկվեցին հեգնանքի հակառակորդների կողմից, «ի՞նչ եք դուրս

[8] Բնագրում գրված է սոփերք, որ մենք համարում ենք ազավաղություն փոխանակ սոփեստք։

տալիս (թաղքաշեք), ասում էին նրանց. ձեր պաշտպանած արվեստակյալ լեզուն (սեթևեթանք) մեզ բոլորովին անպետք են թվում, սուտ և ունայն է ձեր իմաստությունը, անօգուտ ձեր աշխատանքը։ Եվ նրանք տխրում, խոր խոցվում էին տրտմությամբ։

Երկրորդ առիթը, որ ավելի սուր էր և ավելի աղետալի հետևանքներով՝ կրոնական պայքարն էր, տարաձայնությունը Քաղկեդոնի ժողովի դավանաբանության նկատմամբ։ Այս ժողովը իր ընդունած բանաձևով Քրիստոսի մի թե երկու բնության մասին՝ ամբողջ քրիստոնյա աշխարհը բաժանեց երկու հակամարտող անհաշտ խմբերի—երկբնակների (երկու բնություն դավանողների՝ ըստ Քաղկեդոնի ժողովի բանաձևի), որոնց ամրոցներն էին Բյուզանդիոնը և Հռոմը, և միաբնակների (մի բնություն դավանողների)՝ հզոր ամրոցներով Ալեքսանդրիայում, Անտիոքում, Ասորիքում։ Հայաստանը, որ մյուս քրիստոնյա աշխարհից կղզիացած չէր և շփում ուներ թե՛ Բյուզանդիոնի և թե Ասորիքի հետ՝ հարկավ չէր կարող անմասն մնալ այս հարցում, որով զբաղված էր ամբողջ քրիստոնյա աշխարհը։ Ասորական ուժեղ տարրը Հայաստանում անտարակույս միաբնակ էր, այսինքն մերժում էր Քաղկեդոնի դավանաբանությունը։ Տիմոթեոս Կուզի, հակաքաղկեդոնիկ ուժեղ պայքարողի «Հակաճառությունը» արդեն թարգմանված էր հայերեն Ե դարի ութսունական թվականներին։ Իսկ Հունաստանում ուսած նոր սերունդը, թարգմանչական խումբը, բնականաբար երկաբնակ էր, այսինքն ընդունում էր Քաղկեդոնի դավանաբանությունը։ Այս կերպով հայ հոգևորականության մեջ ծագեց երկպառակություն. մի կողմն էր ասորական միաբնակ հոծ խումբը, որ ուժեղ էր յուր մասսայով և զրահված բարձր դիրքերով. մյուս կողմն էր հունական երկաբնակ սակավաթիվ խումբը, որ ուժեղ էր գիտական պատրաստությամբ և հենարանով—տիեզերական ժողովի բանաձևով։ Եկեղեցին պաշտոնապես դեռ չեզոք էր մնում. (առաջին երկցիմի որոշումը Քաղկեդոնի դավանաբանության դեմ Հայոց եկեղեցական ժողովը կայացրեց միայն 508 թվին, ժողովից 57 տարի հետո). Նա դժվարանում էր միաբնակների ստվար խմբի դեմ գնալ և միևնույն ժամանակ զգուշանում էր՝ հակառակ որոշում կայացնելով խզել իր կապը տիեզերական ժողովի և ընդհանուր քրիստոնեական եկեղեցու հետ և շարժել Բյուզանդական կայսրների բարկությունը։

Բայց ավագ եկեղեցականներն անպաշտոն կերպով թև էին տալիս միաբնակներին նրանց պայքարի մեջ[9]:

Որ Հյուսիսի Հայաստանում Ծ դարի երկրորդ կեսում կրոնական բուռն պայքար էր մղվում և երկու կողմերը մեկը մյուսին համարում էր մոլորված, չարափառ, հերձվածող՝ պարզ երևում է Խորենացու գրքից: Հենց սկզբում նա գրում է, որ «ուղղափառությունը վրդովվեց, *ագիտության շնորհիվ* չարափառությունը հիմնավորվեց»: *Քիչ հետո նա ասում է. «Ո՞վ պետք է պապանձեցնի* առողջ վարդապետության դեմ *դուրս եկողների բերանը»: Մի երրորդ տեղ նա ասում է. «այժմ կռիվներ ներսից և սարսափներ դրսից, սարսափներ հեթանոսների (=կրակապաշտ պարսիկների) կողմից և կռիվներ* հերձվածողների կողմից»: *Այս վերջին հերձվածող բառը միանգամայն որոշում է Խորենացու գիրքը այս պայքարի մեջ: Հերձվածող կոչվում է նա, ով ճեղքվում, անջատվում է եկեղեցու միությունից, այս անունը կարող էր տրվել միմիայն նրանց, որոնք քրիստոնեական ժողովի որոշումը մերժելով՝ անջատվել էին քրիստոնեական եկեղեցու միությունից, այսինքն միաբնակներին: Ուրեմն, ըստ Խորենացու, հերձվածողները, չարափառները միաբնակներն էին, իսկ ուղղափառները, առողջ վարդապետություն ունեցողները Քաղկեդոնի դավանաբանությունն ընդունողներն էին, այսինքն երկաբնակները: Սրանից հետևում է, որ Խորենացին երկաբնակ էր, քաղկեդոնական: Այս մասին մի ծանրակշիռ վկայություն ունենք և վրաց գրականությունից, վրաց Արսենիոս կաթողիկոսը (Թ դարում) խոսելով Մովսեսի մասին՝ նրան կոչում է ուղղափառ վարդապետ, այսինքն քաղկեդոնական, ինչպես ինքն էր*[10]:

---

[9] *Սրան ապացույց կարելի է համարել Խորենացու ողբը. «Հասկացող մարդկանցից ո՞վ սրանց չի ողբա, և եթե չեք հեղանա՝ կասեմ՝ և* հռանց. ու ռանց նորոգում են այսպես լինել»: *Ղ. Փարպեցին էլ իւր Թղթում գրում է, թե հալածանքների ենթարկված ժամանակ դիմեց քահանայության գլխավորին, խնդրելով իւր գործը քննել, արդարացնել կամ պատժել, իսկ նա պատասխանեց. «չեմ կարող, չեմ համարձակվում քեզ տեսնել, մի գուցե ինձ էլ քեզ հետ թաղեն»:*

[10] *Ա. Լ. Մելիքսեթբեկի Վրաց աղբյուրները, Ա. էջ 38:— Որ քաղկեդոնականությունը Հայաստանում և սահմանակից երկրներում տարածված էր հայերի մեջ դեռ Ծ դարից սկսած՝ ապացուցել է Ն. Մառը փաստերով* Аркаун *անունով հետազոտության մեջ: Այստեղ ի միջի այլոց նա այն միտքն է հայտնում, թե հայ ցեղի մեջ մուծված հունադավան*[illegible] *քաղկեդոնիկների գործն էր. (Նույնը ենթադրում է և ակադեմիկ Մանանդյան*[illegible] *միանգամայն*

[illegible] ՀԱՄԱԼՍԱՐԱՆ [illegible]

Քաղկեդոնիկների մեջ գիտությամբ և ազդեցությամբ աչքի էր ընկնում Խորենացին, գուցե և նրանց պարագլուխն էր, ուստի և գլխավորապես նրա դեմ էին ուղղված կասկածանքները։ Երկար տարիների ընթացքում նրան ոչ միայն անտես էին անում, ծաղրում, արհամարհում էին ևս այլ շատ բաներով թշնամանում», այլև նրան դատապարտում էին աղքատության և զրկանքների. բայց նա աննկուն էր մնում, հանդիմանում էր նրանց տգիտությունը, մաքառում էր նրանց հերձվածողության դեմ։ Վերջը մի ճար գտան նրան լռեցնելու, ինչպես ասում է Փարպեցին՝ ուրիշներից ամաչելով նրան եպիսկոպոսություն տվին իբրև մահադեղ, որպեսզի այս միջոցով նրա բողոքի ձայնը կտրեն, աչք փակելով նրա կրոնական համոզմունքի վրա։

Մեզ հասել է հնուց մի գրավոր ավանդություն, որ շատ համապատասխանում է Փարպեցու այս տեղեկության և Խորենացու Պատմությունից բխող հետևության։ Ըստ այդ ավանդության՝ Խորենացին թաքնվելիս է եղել անհայտության մեջ Վաղարշապատի շրջակայքի մի գյուղում, արդեն ծերացած հասակում։ Նրան որոնելիս են լինում, որոնում է եղել և նրա աշակերտակից Գյուտ կաթողիկոսը։ Սա մի անգամ գալիս իջնում է այդ գյուղը, նրան դիմավորում են, պատվով ընդունում։ Ճաշի ժամանակ, սեղանի վրա ամեն մեկը մի բան էր ասում կաթողիկոսի պատվին. դարձան և մի օտարական ծերունու, որ ներկա էր այնտեղ, և առաջարկեցին, որ մի բան էլ նա ասի։ Նա սկզբից հրաժարվեց, բայց երբ թախանձեցին՝ զիջելով՝ հանպատրաստից մի շատ գեղեցիկ ճառ ասաց քերթողական ոճով, երեք տնից բաղկացած, շարականի նման։ Բոլորը ապշած մնացին։ Այն ժամանակ այդ օտարական ծերունու աշակերտը դիմելով կաթողիկոսին հայտնեց, թե սա այն Մովսեսն է, որին դու փնտրում էիր։ Կաթողիկոսը նայում է ծերունու կերպարանքին, հիշում է նրա դիմագծերը, ճանաչում է յուր վաղուց կորած աշակերտակից ընկերին, վեր է կենում, համբուրվում է նրա հետ և յուր հետ տանելով, Բագրեվանդի և Արշարունյաց եպիսկոպոս է ձեռնադրում Եզնիկի մահից հետո։ Հետո նրանից խնդրում են գրել Հայոց Պատմությունը, որ նա կատարում է հրաշալի հորինվածքով։

Համաձայն ենք, բայց հունաբանությունը չենք կապում քաղկեդոնականության հետ իբրև հետևանք, այլ երկուսն էլ, միմյանցից անկախ, համարում ենք հետևանք թարգմանիչների հունասիրության, հունական օրիենտացիայի։

Այս ավանդության կարևոր կետերն են. առաջին՝ Գյուտ կաթողիկոսը, որ աթոռը գրավեց 461—471 թվականներին, ուսումն առել էր նույնպես Հունաստանում, ուրեմն նույնպես քաղկեդոնիկ էր կամ գոնե հակառակորդ չէր նրանց. երկրորդ կետն է Մովսեսի ձեռնադրվելը Բագրևանդի և Արշարունյաց եպիսկոպոս; քանի որ այս բանը վկայվում է և մի տարբեր աղբյուրում, մի կանոնագրքում «ի սրբոյն Գրիգորէ Բագրեւանդ և Արշարունիք մի եպիսկոպոսի վիճակ կարգեալ էին մինչև ցվախճան Քերթողահօրն երանելւոյն Մովսէսի եպիսկոպոսի, ապա զատուցեալ»[11]։ Երրորդ կետն այն է, որ այս Մովսեսը Ղազար Փարպեցու հիշած փիլիսոփոսն է, Մովսես Խորենացին։

Վերոհիշյալներն ամփոփելով՝ կարող ենք Խորենացու կյանքի շարունակությունը արտաստհմանից վերադառնալուց հետո այսպես ձևակերպել մոտավորապես։ Հունարան լեզվի և մանավանդ քաղկեդոնիկ լինելու պատճառով նա արհամարհանքի ու հալածանքի ենթարկվեց, աղքատություն ու զրկանքներ կրեց մոտ երեսուն տարի, և յոթանասնական թվականների սկզբում, երբ արդեն վաթսուն տարեկան ծերունի էր՝ եպիսկոպոս ձեռնադրվեց; որով ոչ միայն վերականգնվում էր նրա պատիվը, դադարում էին հարձակումները, այլև նպաստավոր պայմաններ էին ստեղծվում ծերունու համար՝ իր սիրած գրական աշխատանքներին նվիրվելու։ Որ իրոք նա ծերության հասակում հարգված և շատ հեղինակավոր անձնավորություն էր՝ երևում է նրա պատմության շատ տեղերից։ Այս ժամանակներն էր ահա, որ Սահակ Բագրատունի իշխանը, նրա գիտության համբավը լսած լինելով, թեև անձամբ ոչ ծանոթ, դիմում է նրան՝ խնդրելով գրել Հայոց պատմություն, հատկապես հայ թագավորների և նախարարական տոհմերի ծագման պատմություն։ Այս դործը, որի մասին սիրտ խոսենք, նա ավարտեց ե դարի ութսունական թվականներին, մոտ 483—485-ին, երբ իր խոսքով, «այր ծեր էր և հիվանդոտ և անպարապ ի թարգմանութեանց»։ Նրա մահը տեղի ունեցավ հավանորեն նույն դարի իննսնական թվականների սկզբին, (ումանք դնում են 493-ին), համենայն դեպս Ղ. Փարպեցու Թուղթը գրելուց ոչ շատ առաջ։

Մի շատ տարածված և շատ սխալ կարծիք կա բանասիրու-

---

[11] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 56։

քյան մեջ, իբր թե նրա մահից հետո նրա ոսկորները գերեզմանից հանել են, ջուրն են թափել։ Այս առասպելը կրկնում են ոչ միայն հին գրականության անծանոթ հեղինակները, այլ նույնիսկ բանասերները, Խորենացու թարգմանիչները, ինչպես Էմինը և Ստեփաննոս։ Նրանք այս կարծիքը հիմնում են Ղ. Փարպեցու՝ վերը բերված խոսքի վրա, թե «զոսկերսն ի գերեզմանէն հանել և ի գետ արկանել»։ Սակայն նրանք մոռանում են, որ Փարպեցու քղթում՝ Մովսեսի հիշատակությունից հետո ձեռագրից մի թուղթ է ընկած, որի մեջ թվարկվում էին հալածանքի ենթարկված ուրիշ մարդիկ, որոնցից վերջինին է վերաբերում տեղեկությունը՝ ոսկորները գերեզմանից հանելու մասին։ Խորենացին, եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, որ նշան էր հայ հոգևորականության հաշտության նրա հետ՝ իր գիտական համբավի հետ վայելում էր նաև ընդհանուր հարգանք։ Հենց միայն այս հանգամանքը, որ Բագրատունյաց իշխանը նրան էր դիմել Պատմությունը գրելու խնդրով՝ շատ պետք է բարձրացներ նրա պատիվը։ Այսպիսի պայմաններում նույնիսկ անհասկանալի կլիներ մահից հետո նրա ոսկորները հանելը և գետն ածելը։ Ընդհակառակը, տեսնում ենք, որ հոգևորականությունն աշխատում էր մոռացնել տալ նրա քաղկեդոնիկ լինելու հիշատակը, և յոթներորդ դարի քսանական թվականներին (Հոհան Մայրագոմեցու մասնակցությամբ) նրա անունով մի թուղթ կեղծեցին միաբնակների ոգով, որով ձգտում էին միանգամայն ոչնչացնել նրա երկաբնակ լինելու իրողությունը, որ գուցե ավանդաբար դեռ հիշվում էր տեղ-տեղ, և միևնույն ժամանակ այս կեղծված թղթով, Մովսես Խորենացու հեղինակությամբ, կռվել մյուս երկաբնակների դեմ։ Ուստի բացեիբաց պետք է հրաժարվել այս սխալ ենթադրությունից, թե ոսկորները գերեզմանից հանելու տեղեկությունը Խորենացուն է վերաբերում։

ԱՇԵԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Մեր հին մատենագրության մեջ Խորենացին միակ անձն է, որի արհեստը, սովորական պարապմունքը եղել է գրելը, մատենագրելը։ Բագրատունի իշխանից առաջարկություն ստանալով Հայոց Պատմությունը գրելու՝ ոգևորությամբ ընդունում է և ասում, թե դա սիրելի է իր ճաշակին և մանավանդ սովորությանը։ Սակայն նրա գրածներն ամբողջապես մեր ձեռքը չեն հասել։ Անհետ կորել են նրա այն գրվածքները, որոնց մեջ նա, իր հալածանքի մոտ 30 տարիներում, մաքառել է միաբնակների դեմ։ Հայ հոգևորականության խիստ գրաքննությու-

ձը ոչնչացրել է նրա այս գրվածքները թե՛ ուրիշ ընթերցողների չգայթակղեցնելու և թե՛ նրա անունը երկաբնակության արատից մաքրելու համար։ Մի բացահայտ վկայություն ունենք Փարպեցուց, թե Մովսեսը վախճանվելու ժամանակ գրով թողել է մի ահավոր նզովք ոի վեր գլխատրաց քահանայութեանդ, որպէս դուք ինքնին (=Վահան Մամիկոնեան) գիտէք տեղեկացեալ. ուրեմն մի հայտնի գրվածք. սակայն այդ գրված նզովքը բոլորովին անհետացած է և միայն Փարպեցու Թղթից գիտենք, որ նա երբեմն գոյություն է ունեցել։ Նույն բախտին արժանացած կլինեն նաև նրա քաղկեդոնական ոգով գրածները։ Նույնիսկ նրա Պատմությունն անցել է հայ հոգևորականության խիստ քննության բովով և ուղղագրվել է։

Նրա անունով մեր ձեռքը հասել են հետևյալ ինքնուրույն աշխատությունները.

1. Ներբողյան Հռիփսիմյանց, երիտասարդ հատակում գրված։

2. Պատմութիւն Հռիփսիմյանց։

3. Ճառ վարդավառի։

4. Թուղթ առ Սահակ Արծրունի։

5. Պատմություն Հայոց։

Բայց պրանք, բացի Պատմությունից, կասկածելի են՝ իբրև անհարազատ գրվածքներ՝ Խորենացուն վերագրված։ Նրա քարտմանական աշխատությունն է Պիտույից գիրքը։ Բանասիրությունը մեծ հավանականությամբ նրան է վերագրում Քարզմանության կեղծ Կալլիսթենեսի Պատմություն վարուց Աղեքսանդրի և Գրիգոր Նազիանզացու (աստվածաբանի) ճառերի մի մասին։

Նոր ձեռագիրներում նրան է վերագրվում ծանոթ Աշխարհացույցը, բայց վերջիվերջո պարզվեց, թե դա Անանիա Շիրակացու գրածն է յոթներորդ դարի երկրորդ կեսում։

Կան և ուրիշ մանր գրվածքներ քերականական բովանդակությամբ, որոնք ձեռագիրներում վերագրվում են Խորենացուն, բայց դրանք չեն տպագրված և ստուգված։

Կա վերջապես նրա անունով կեղծված մի գրություն միաբնակների ոգով, որի մասին վերը հիշեցինք (տպագրված է Գիրք Թղթոցի մեջ, էջ 22—28)։

Այս կերպով՝ Խորենացու անունով տպված մատենագրու-

թյունից անկասկած նրան են պատկանում Պիտոյից գրքի թարգմանությունը և ինքնագիր Հայոց Պատմությունը։

Պիտոյից գիրքը ճարտասանական ձևնարկ է, բաղկանում է տասը գլխից. Պետք (որից և ամբողջ գրքի վերնագիրը՝ Պիտոյից), Խրատ, Եղծումն, Հասարակ տեղիք, Ներբողյան, Պարսավ, Բաղդատություն, Բարառնություն, Արտասանություն, Դրուբյուն։ Յուրաքանչյուր գլխի սկզբում համառոտ ավանդվում է Թեոդրիան— ինչ կանոններով պետք է գրել, ապա գործնականը— —6—7 շարադրություն յուրաքանչյուրի համար։ Վերջում իբրև հավելված դրված են երեք նոր օրինակ բարառնության, որոնք պատկանում են մի ուրիշ Մովսես քերթողի, որ վերջը դնում է նաև մի «խրատաբանության հորդորական» իր Թեոդրոս աշակերտի համար։ Այս կերպով Թեոդորոսը խորենացու աշակերտը չէ, ինչպես ընդունում է Գ. Ջարպհանալյան[12], այլ այս հավելվածի հեղինակ Մովսես քերթողի, որ որակով շատ ստոր է խորենացուց։

Պիտոյից գիրքը թարգմանություն է հունարենից և հավանորեն խորենացու անդրանիկ աշխատություններից է, գուցե հենց Ալեքսանդրիայում ուսանողության ժամանակ գրված, որովհետև հունաբան լեզուն նրա մեջ շատ ավելի է նկատվում, քան Պատմության մեջ, որը Պատմահայրը գրել է Ալեքսանդրիայից վերադառնալուց մոտ քառասուն տարի հետո, երբ երկար կյանքը հայ միջավայրում, հայերեն գրքերի ընթերցումը, հայերի հետ շփումը շատ մեղմացրել ու չափավորել էին նրա երբեմնի ծայրահեղ հունաբանությունը։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ։ Գանք նրա գլուխգործոցին, Հայոց Պատմությանը, որ իսկապես անմահացրել է նրա անունը և մեծացել է ամենամեծ հիշատակարան հայ մատենագրության։

Այս գիրքը նա գրել է Սահակ Բագրատունու խնդրանքը, որ, ինչպես բանասիրությունը ենթադրում է, այն Բագրատունի իշխանն է, որին Վահան Մամիկոնյանը և նրա համախոհ ընկերները ապստամբության սկզբում հայտարարեցին Հայաստանի մարզպան և որը մի ճակատամարտի մեջ սպանվեց մոտ 482 թվին։ Գրվածքի ընթացքում հեղինակը հաճախ դիմում է իր մեկենասին, նրա խնդրածների վերաբերմամբ այս կամ այն պատաս-

---

[12] *Պատմություն Հայերեն հին դպրության, 1886, էջ 350,*

խանը տալով, որից կարելի է եզրակացնել, թե Պատմահայրը իր դրածները մաս-մաս ուղարկում էր նրան, առանց սպասելու իր գործի ավարտին։

Պատմությունը բաժանվում է երեք մասի կամ Հատած[13], որոնք կոչվում են 1) Հայոց մեծերի ծննդաբանություն, 2) Հայոց միջին պատմություն և 3) Մեր հայրենիքի պատմության ավարտը։

Առաջին գիրքը կամ մասը պարունակում է 32 գլուխ, որոնցից առաջին յոթը գլուխները նախապատրաստական նյութեր են —Սահակ Բագրատունու թղթի պատասխանը և նրա խնդիրը կատարելու խոստում (ա). Հունական աղբյուրներին նախապատվություն տալը (բ). Մեր նախկին թագավորների և իշխանների անհմաստասեր բարքը (գ). Ադամի և մյուս նահապետների մասին արտաքին պատմիչների տարբեր պատմածները (դ). Նոյի երեք որդիների ազգաբանությունը մինչև Աբրահամ, Նինոս և Արամ (ե). Արտաքին պատմիչների ս. գրքին նման և նրանից տարբեր պատմածները և Ոլիմպիոդորոս փիլիսոփայի անգիր զրույցները (զ). Արտաքին հեղինակների Բել կոչածը ս. գրքի Նեբրովթն է (է). Ութերորդ և իններորդ գլուխներում պատմում է իր դխավոր աղբյուրի՝ Մար-Աբասի մասին, որ Վաղարշակի թղթով գնում է Արշակ Մեծի մոտ և նրանից թույլտվություն է ստանում քննել Նինվեի գրադարանը. այստեղ նա գտնում է մի գիրք հունարեն լեզվով, որի վրա մակագրված է եղել, թե այս մատյանը Ադեքսանդրի (Մեծի) հրամանով թարգմանված է քաղդեականից հունարենի և պարունակում է բուն հների և նախնիքների պատմությունը։ Այս մատյանից Մար-Աբասը քաղում է Հայոց պատմության վերաբերյալ մասը հունարեն և ասորերեն գրով և բերում է Վաղարշակին։ Սա մեծ ուրախությամբ ընդունում է Մար-Աբասի բերած պատմությունը, հրամայում է զգուշությամբ պահել արքունիքում, իսկ մի մասը հրամայում է արձանի վրա դրոշմել։ «Որից» (պարզ չէ, արձանի վրա դրոշմածի՞ց, թե բուն գրքից) հեղինակը պատմական անցքերին ծանոթանալով՝ խոստանում է բավարարել իր մեկենասի հարցասիրությունը և մեր

---

[13] *Հատած կամ հատված կազմված է հունարենի հետևողությամբ,* témnō *հատանել՝ կտրել բայից* tómos *(ռուս—том)— հատված, կտոր։ Ավելի սովորական ձևն է հատոր։*

բնիկ՝ նախարարների ճյուղագրությունը հասցնել մինչև քաղդեացոց Սարդանապալ թագավորը։

Տասներորդ գլխով սկսվում է բուն Հայոց պատմությունը, Հայկի պատերազմը Բելի հետ (ժ ժա). Հայկի հաջորդները (ժբ) Արամի գործերը (ժգ, ժդ). Շամիրամի պատերազմը Արայի հետ և կատարած շինությունները (ժե—ժը). Բրրայեցոց, Քաղդեացոց և Հայոց մեծերի ծննդաբանությունը մինչև Դավիթ Սարդանապալ և Սկայորդի (ժթ). Արայան Արա (ի). Հայոց առաջին թագավոր Պարույրը և նրա հաջորդները (իա, իբ), Արծրունյաց, Գնունյանց և Անգեղտան ծագումը և Աղձնյաց բդեշխը (իգ). Տիգրան Երվանդյան (իդ —լ). Տիգրանի հաջորդները (լա). Եղիական պատերազմը և Ջարմայրը (լբ)։ Տիգրանի հաջորդներից վերջինն է եղել Վահեբ որ ապստամբելով ապանվում է Աղեքսանդր Մակեդոնացուց. (+323 ՆՔ), որից հետո, մինչև Վաղարշակի թագավորելը (132 ՆՔ) հեղինակը ոչինչ չի պատմում Հայոց մասին, ասելով, թե առուշդ բան չունի պատմելու, որովհետև ազմուկ և շփոթություն էր տիրում և շատերը մրցում էին՝ մեր աշխարհին տիրանալու համար, մինչև որ Պարթևների Արշակ մեծն թագավորը հեշտությամբ մուտք գործեց Հայաստան և թագավորեցրեց իր եղբորը՝ Վաղարշակին։

Առաջին գրքից հետո առանձին դրված են երկու գլուխ «Պարսից առասպելներից», որոնցից առաջինում բերված են պարսից առասպելները Բյուրասպի Աժդահակի և Հրուդենի մասին, իսկ երկրորդում՝ այդ առասպելների բացատրությունը, ճշմարտյալ պատմությունը։ Հեղինակը հայտնում է, թե ինքն առելով առում է, նույնիսկ զզվում է այդ անմիտ և անհարմար առասպելներից, բայց գրում է՝ ստիպված մեկենասի թախանձանքից, միայն արժան չի համարել նրանց զետեղել իր պատմության որևէ մասում, այլ դրել է զատ, առանձին։

Երկրորդ գիրքը բաղկացած է 92 գլխից, սկսվում է Պարթևների ապստամբությունից Սելևկացոց դեմ (ա, բ) և Վաղարշակին Հայոց վրա թագավորեցնելուց (132 ՆՔ) (գ). և վերջանում է Տրդատի մահով (318 հՔ)[14], ուրեմն պարունակում է Հայոց 450 տարվա պատմություն։ Այս մասում պատմական կարևոր շրջան-

---

[14] *Տե՛ս Սինխրոնիկ աղյուսակը գրքի վերջում։*

Ներսի մասին պատմելիս՝ հեղինակը հիշում է այն աղբյուրները, որոնցից օգտվել է։

Երրորդ գիրքը պարունակում է 68 գլուխ, «Հեղինակին ժամանակով մոտ կամ քիչ առաջ պատահած անցքերը», սկսած Տրդատի հաջորդ խոսրով Փոքրիկից (319) մինչև Արշակունյաց թագավորության բարձումը (428), այսինքն 110 տարվա պատմություն (ա—կդ), այնուհետև Սահակ կաթողիկոսի Պարսկաստանից հետ դառնալը Շմուելի հետ (կե). Շմուելի անարժան գործերը (կզ). Ս. Սահակի և Մեսրոպի վախճանելը (կէ) և իբրև վերջաբան՝ «Ողբ՝ Արշակունյաց թագավորության վերացման և ս. Գրիգորի տոհմից քահանայապետության դադարման մասին». (կը)։

ՉՈՐՐՈՐԴ ԳՐՔԻ ՀԱՐՑԸ, ծ դարի հեղինակ Բովսա Արծրունին հիշում է Խորենացու Պատմության մի Չորրորդ գիրք ևս։ Նախապես հիշելով Սահակ կաթողիկոսին և հայտնելով, որ նա ապրեց 120 տարի, այնուհետև հիշում է Սահակ Բագրատունի սպարապետի մահը, որից մի քանի տող հետո շարունակում է. «Սահակն այս այն Սահակն է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսրըն Զենոն, որոյ ժամանակ կենացն տեսեալ ձգեալ ամս ՃԻ լի և պարարտ ծերութեամբ. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեան Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երկնցունց դրուագեալ հատուածին. զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրոպայ յիւրումն աւուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ». (ս. Պետերբ., 1887, էջ 75—76)։

Այս խառնաշփոթ հատվածը գտել է իրեն հավատացողներ, մասնավորապես Ղ. Ալիշանին և Էմինին։ Առաջինը դեռ 1851 թ. «Բազմավեպում» և սրանից հետո տարի հետո Հայապատումում (1901, Վենետիկ) պաշտպանում է չորրորդ գրքի գոյությունը և կարծում է, թե այս գրքի մեջ էր մտնում ս. Մեսրոպի մահվան ու թաղման վերաբերյալ հատվածը (որի մեջ գտնվում է քառացի ընդարձակ փոխառություն Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից, Գ. կէ), նույնպես մի քանի բառեր ու վկայություններ՝ որ Ստ. Ոշկյան քաղել է Խորենացուց յուր Հայ-լատին քառարանի մեջ, թեպետ ինքն էլ Հ. Ալիշանը խոստովանում է,

քե դրանք կարող են քաղված լինել ոչ քե Խորենացու ենթադրյալ չորրորդ գրքից, այլ նրա ուրիշ պատմական գրվածքներից։ Մ. Էմինը իր ռուսերեն թարգմանության երկու տպագրությունների մեջ (1858 և 1893) գրում է, որ այս չորրորդ գրքի մաս պետք է կազմեին «ի Պարսից առասպելաց» երկու գլուխները և Գ գրքի 62-րդ գլուխը՝ Խորենացու Ճանապարհորդության նկարագրությունը։ Հավանորեն, ասում է նա, նույն Գ գրքում պետք է գետեղված լիներ և ժամանակագրական աղյուսակ, որի վրա ակնարկում է Խորենացին իր Պատմության մեջ, ինչպես նաև Հայոց պատմության շարունակությունը Արշակունյաց բարձումից մինչև Զենոն կայսրը (474—491), այսինքն մինչև 491 թվականը։

Բայց այս բանասերների հիշած հատվածները (ս. Մեսրոպի մահը, պարսից առասպելները, Ճանապարհորդությունը) արդեն գետեղված են իրենց տեղերում. հո չի կարելի ենթադրել, քե դրանք առաջ գոնվելիս են եղել Գ գրքում, բայց հետո անհայտ մեկը, վճռելով ոչնչացնել Գ գիրքը, նախ հանել է այդ հատվածներն ու գետեղել նրանց այժմյան տեղերում և ապա Գ գիրքը ոչնչացրել։ Ժամանակագրական աղյուսակի մասին էլ ակնարկություն մենք չենք գտնում Պատմության մեջ. մյուս ենթադրություններն էլ մնում են լոկ անապացույց ենթադրություններ և այդպես էլ կմնան։

Գ գրքի գոյությունը պետք է բացեիբաց մերժել, քանի որ ուրիշ ոչ մի հեղինակ նրան չի հիշում, ոչ մի հեղինակ նրանից ոչ մի քաղվածք չի անում, այլ բոլորը առաջին երեք գրքից օգտվելուց հետո դիմում են ուրիշ հեղինակների և նրանցից քաղվածքներ անում. քանի որ ոչ մի ձեռագիր, ոչ իսկ գրքերի ցանկերը, չեն պարունակում որևէ հետք այդ գրքի գոյության, իսկ Գ գիրքը իր անունով՝ «Աւարտաբանութիւն մերոց հայրենեացց» և վերջաբանի ոգով ապացուցանում են, որ Գ գրքով էլ վերջանում է Հայոց Պատմությունը։ Այնպես որ Թ. Արծրունու մի անգամ հիշած Գ գիրքը պետք է համարել կամ թյուրիմացություն կամ աղավաղություն, մանավանդ որ Արծրունին հայտնի է իրրև անհավատ մատենագրական և պատմական տեղեկություններ հաղորդող հեղինակ։

Այս թյուրիմացությունը բացատրելու համար նախ հարկավոր է նշանակել «երկեցունց» անսովոր բառը, որ կարող է աղավաղված լինել կամ «երկոցունց» բառից կամ «երեցունց» բառից։

Երկրորդ՝ հարկավոր է ճիշտ որոշել, թե ո՞ւմ է վերաբերում «որոյ» բառը՝ «որոյ ամք կենաց տեսեալ ձգեալ ամս ճԻ» խոսքում։ Քերականորեն դատելով՝ այս դերանունը կարող է վերաբերվել Սահակ Բագրատունուն, «որոյ հրամանաւ գրեաց Մովսէս...», բայց սա անկարելի է, որովհետև ծերունի Մովսեսը չէր կարող յուր Դ գրքում հիշել երիտասարդ Սահակ Բագրատունու 120 տարի ապրելը, մանավանդ որ Սահակ Բագրատունին դեռ երիտասարդ հասակում ընկած էր կռվի մեջ 482-ին կամ 483-ին։ Կարող է այդ «որոյ» դերանունը վերաբերվել և Մովսես Խորենացուն (այսպես էլ հասկացել է Սամվել Անեցին, տալով Խորենացուն 120 տարվա կյանք, 370—491)։ Բայց այս էլ անկարելի է, որովհետև Խորենացին չէր կարող իր Դ գրքում վկայել իր մասին, թե ինքն ապրել է 120 տարի, մանավանդ որ Կորյունն էլ, որին վկա է կանչում Թովման, Խորենացու անունն անգամ չի հիշում և չէր կարող հիշել։ Մնում է միակ հնարավոր ենթադրությունը, որքան էլ որ քերականորեն անընդունելի լինի, այն է, որ այդ «որոյ»-ի տակ պետք է հասկանալ Սահակ կաթողիկոսին, որի մասին Թովման մի երես առաջ հայտնել էր, թե նա ապրեց 120 տարի։ Այս ենթադրությունը հավանական է դառնում նրանով, որ թե՛ Խորենացին և թե Կորյունը հիրավի հիշում են ս. Սահակի խորին ծերության հասնելը (առանց սակայն 120 տարին հիշելու, որ անշուշտ Թովմայի ավելացրածն է)։ Այս դեպքում Թովմայի «ի չորրորդ դրուագի» խոսքը պետք է ուղղել «յերրորդ դրուագի (ձեռագրում գրված պետք է լիներ ի Դ դրուագի, որ Դ և Դ գրերի նմանության պատճառով դարձել է ի Դ դրուագի), և «ի վերայ երկեցունց»-ը պետք է ուղղել «ի վերայ երկոցունց», և ամբողջ խոսքը հասկանալ այս մտքով, թե Սահակ կաթողիկոսը ապրել է 120 տարի՝ լի և պարարտ ծերությամբ, ինչպես վկայում է Մովսես Խորենացին (լի և պարարտ ծերությունը իր Պատմության երրորդ գրքում (=երրորդ դրուագի) երկուսի (այսինքն Սահակի և Մեսրոպի) մասին գրված գլխում, որին վկայում է և Կորյունը։ Այս է հավանական լուծումը համբավված Դ գրքի գոյության հարցի։ Իսկ գալով Զենոն կայսրի հիշատակության, իբրև թե Խորենացու պատմությունը հասցրած է եղել մինչև Զենոն կայսրը՝ պետք է ասել, թե Ք. Արծրունին, ժամանակագրական ճիշտ թվեր չունենալով և գիտենալով, որ Խորենացին ապրել է մինչև Զենոն

կայսրի տարիները՝ իր կողմից եզրակացրել է, թե մինչև այդ ժամանակ էլ հասցրած պետք է լինի իր պատմությունը[15]։

*Դ դրքի հարցն ապառելու համար ավելորդ չենք համարում բերել և մի նոր ենթադրություն։ Պիտույից գրքի մեջ, որ Խորենացու թարգմանությունն է ճանաչված, Մովսես մարգարեի ներբողյանում ասված է. «և զկնի կենացն կնանքն լի և խորին և պատուոյ ծերութեամբ յերիս քառասուներորդս հասանէր ամս» (Մատեն. Խորենացւոյ, Վենետիկ, 1865, էջ 420)։ «Լի և պատուոյ ծերություն» խոսքը, որ բառացի կրկնվում է Ք. Ա. Արծրունու մոտ, և 120 տարի տևող կյանքը թույլ են տալիս կարծել, թե Ք. Ա. Արծրունին Պիտույից գրքի այս հատվածն է ունեցել նկատի, ս. Սահակին վերագրելով այն, ինչ որ այնտեղ ասված է Մովսես մարգարեի մասին, ինչ որ Ք. Ա. Արծրունու կողմից անսպասելի չէ։ Եթե այս ենթադրությունը հիմք ունի, այս դեպքում Ք. Ա. Արծրունու վերոհիշյալ խոսքը պետք է կարդալ՝ «ի յորորդ դրուագի խոստաբանեալ պատմութեան Մովսէսի Խորենացւոյ՝ վերադարձութեան ի վերայ երեցոյց դրուագեալ հատուածին», և հասկանալ այս մրցքով, թե 120 տարի ապրելու մասին գրված է Մովսես Խորենացու Չորրորդ գրքում, որ հավելված է (=վերադարձություն) երեք (գրքի) վրա։ Ուրեմն պետք կլինի ենթադրել, թե Թովման Ձեռքի տակ ունեցել է Խորենացու մի պատմություն, որի մեջ երեք հայտնի գրքից հետո գրված է եղել իբրև հավելված՝ Պիտույից գիրքը, որը նա կոչում է Չորրորդ։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ։ Խորենացին ձեռնարկելով նոր՝ իր նմանը Հայաստանում չունեցող գործի, այսինքն հորինելու հայոց սիստեմատիկան պատմությունը նախնական ժամանակներից մինչև իր օրերը՝ բնականաբար կարիք պետք է ունենար աղբյուրների։ Ինքը քանիցս գանգատվում է, թե ձեռքի տակ չունի այս կամ այն կարևոր գիրքը կամ ժամանակագրական ձեռնարկը, որոնցից անսխալ կերպով հյուսեր պատմական անցքերն ու ժամանակները։ Եվ այս գանգատը շատ հասկանալի է մի հեղինակի կողմից, որ զգում է, թե որքան մեծ ու պատասխանատու է իր սկսած գործը և ո՛րքան ինքը զուրկ է անհրաժեշտ

---

[15] Դ դրքի գոյության հարցի մասին մանրամասն տե՛ս Մխաքանի «Խորենացու Պատմության տումնասիրությունը», Վազարշապատ, 1896 և մեր դասընթաց Հայոց մատենագրության պատմության, վիմատիպ. Թիֆլիս, 1902 և 1903։

միջոցներից, հեռու է լուսավորության կենտրոններից, ապրում է մի երկրում, որտեղ գիրքն ընդհանրապես հազվագյուտ մի բան էր։ Ուստի նա, դրական այս անապատում, մանանայի նման ընդունում է որևէ գրվածք, որ գոնե մի նախադասությամբ՝ մի ակնարկով կարող էր իրեն օգտակար լինել։

Նա գործ է ածել բազմաթիվ աղբյուրներ, որոնցից մի մասը հանվանե հիշում է, մյուսները չի հիշում։ Բայց այս բոլորն էլ, բացի Մար-Աբասյան աղբյուրից և ժողովրդական երգերից, Հայոց պատմության համար երկրորդական նշանակություն ունեն և պահանջին չեն բավարարում։

Նրա հիշած աղբյուրներն են՝ ս. գիրքը, Մար-Աբաս Կատինայի պատմությունը, Հյուսումն Պիտոյից, հայ ժողովրդական ավանդությունները կամ երգերը. Հուլիոս Ափրիկանոս (Գ դարից). Եվսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմությունը (Դ դար). Հովսեպոս Փլաբիոս (Ա դար), Լաբուբնա (Ղերուբնա) Եդեսացի (մոտ Գ դարում), Խոռոհբուդ (Դ դար), Փերմելիանոս եպիսկոպոս (Գ դար), Ագաթանգեղոս (Ե դարի երկրորդ կես), Հիպողիտս (Գ դար), Մանեթոն (Գ դար ՆՔ), Ողհյուպ քուրմ (Ա—Բ դար). Արիստոն Փեղղացի (Ա դար), Բարդածան (Գ դար). Բարծումա (Դ դար), Արտիթեոս (Դ դար), Պոլիկրատես, Եվագարոս, Սկամադրոս և Փղեգոնիոս չորս հույն հռետոր հեղինակներ. նաև Հոմերոս, Հերոդոտոս, Պղատոն, որոնցից ցիտատներ է բերում կամ տեղեկություն ստանում։ Հիշում է նաև Բեռոսոս Քաղդեացուն, Աղեքսանդր Բազմավեպին, Աբյուդենոսին, Կեփաղիոնին, որոնց նա ծանոթ է Եվսեբիոսի ժամանակագրության միջոցով և ոչ թե անմիջապես։

Նրա չհիշած, բայց օգտագործած աղբյուրներն են՝ հայ հեղինակներից՝ Կորյուն, վկայաբանություն ս. Թադեոս առաքյալի, Փավստոս, իսկ օտարազգի՝ հայերեն թարգմանված հեղինակներից՝ Կղեմես Աղեքսանդրացի, Դիոդորոս Սիկիլիացի, Փիլոն Եբրայեցի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի կամ Աստվածաբան, Եվսեբեոսի ժամանակագրություն, Սուտ Կալլիսթենեսի Պատմություն վարուց Աղեքսանդրի, Սոկրատի Եկեղեցական պատմության և Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունը, Եղովբոսի կենսագրությունը։

Թե ինչո՞ւ Խորենացին աղբյուրներից մի մասը հիշում է, մյուս մասը՝ ոչ, դժվար է ճիշտ և սպառիչ պատասխան տալ։

խոսք չի կարող լինել այն մասին, թե նա կամենում է թաքցնել իր գործածած աղբյուրները։ Կորյունին, Եվսեբիոսի ժամանակագրությունը, Փիլոնին, Դիոդորոսին հիշելը միայն պատիվ կարող էր բերել Պատմությանը և նրան ավելի արժանահավատ դարձնել, չհիշելը միայն կարող էր վնասել։ Թվում է, թե Խորենացին ընդհանրապես չի հիշում այն աղբյուրները, որոնք շատ հայտնի և ըստինքյան հասկանալի են, ինչպես մենք այժմ իրրև աղբյուր ցույց չենք տալիս հանրագիտական բառարանները կամ ժամանակագրական աղյուսակները։ Դարձյալ չի հիշում այն աղբյուրները, որոնք չեն վերաբերում պատմության որոշ շրջանի, այլ որոնցից նա մասնավոր անցքի մասին որևէ տեղեկություն է քաղում կամ ընտիր ոճեր ու ասացվածքներ։ Դարձյալ չի հիշում այն գրվածքները, որոնք ինքն է թարգմանել, ուրեմն և մասամբ իր աշխատությունն է համարում։ Բայց առանձին պայմանի մեջ է այստեղ Փավստոսի Պատմությունը, որից օգտվել է Խորենացին, բայց թաքցնում է այս աղբյուրը՝ նրա խոշոր պակասությունների պատճառով։ (Այս մասին հետո ավելի կունենանք խոսելու)։

Վերոհիշյալ ավելի քան քառասուն աղբյուրներից ամենակարևորները և բանասերներին ավելի դրազեցնողները եղել են Մար-Աբասի Պատմությունը և հայ ժողովրդական առասպելները։ Մյուս աղբյուրները մեծ մասամբ հայտնի են և ուսումնասիրված, մի քանիսն էլ բոլորովին անծանոթ են, որոնց մասին ուրեմն ոչինչ չի կարելի ասել։

ՄԱՐ-ԱԲԱՍՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ։ Խորենացին ինքը պատմում է այս աղբյուրի ծագումը (Ա, Ը, Թ)։ Եթե ստույգ լիներ ինչ որ Խորենացին պատմում է այս Պատմության ծագման մասին, այսինքն որ Մար-Աբասյան աղբյուրը հանված է Ալեքսանդր Մեծի հրամանով քաղդեարենից հունարենի թարգմանված մի պատմությունից, ապա նա կլիներ ամենահին և ամենապատվական պատմական հիշատակարանը աշխարհի վրա (չհաշված քևեռագիր և հիերոգլիֆ արձանագրությունները). և սկզբներում այսպես էլ նայում էին այս աղբյուրի վրա։ Բայց եվրոպական բանասիրական քննադատությունը հետզհետե երևան հանեց այս աղբյուրի կեղծիքը. նրանց հետևեցին և հայ բանասերները։ Քննադատությունը գտավ, որ Ալեքսանդրի ժամանակ Նինվեի քաղաքը չկար, փլատակների կույտ էր. եթե նույնիսկ քաղաքը գոյություն ունենար, նրա մեջ մատյաններ չէին կարող գտնվել, այլ

աղյուսիկների վրա դրոշմված սեպագրություններ, որոնք հազարներով գտնվեցին անցյալ դարում Նինվեի փլատակների պեղումների ժամանակ. բայց ամենագլխավորն այն է, որ Նինվեի մատյանում կամ սեպագրությունների մեջ չէր կարող պարունակվել այնպիսի պատմություն, որի մեջ Բաբելոնի և Նինվեի աստվածները (Բել, Շամիրամ) սրատված կամ ամոթալի դերի մեջ դուրս բերված լինեին, իսկ հայերը (Հայկ, Արա) իրրև դյուցազուններ և առաքինության տիպարներ պեղումներից դուրս եկած սեպագրությունների մեջ պատմվում են Բաբելացիների և Ասորեստանցիների փառավոր հաղթություններ միայն—քաղաքներ ավերելը, երկրներ կողոպտելը, օտար թագավորներ սպանել կամ գերելը, բայց ոչ մի անգամ իրենց պարտությունը.— տա է խոկական ոսկին այդ սեպագրություններու

Մար-Աբասյան աղբյուրի կեղծիքը բացվելուց հետո հարց ծագեց, թե ո՞վ է կատարել այդ կեղծիքը և ի՞նչ իրական հիմք ուներ այդ պատմություն։ Շատերը կարծիք հայտնեցին, թե Մար-Աբաս անունով անձ առհասարակ չի եղել, նրան հնարել է ինքը Խորենացին, ուրեմն Մար-Աբաս և Խորենացի նույն անձն է։ Բայց վերջը այս ծայրահեղ կարծիքը մերժվեց, և այժմ ընդունված է, թե եղել է Մար-Աբաս անունով մի մարդ (Հայ կամ ասորի՝ հայտնի չէ), որ գրի է առել Հայոց նախնական ժամանակին վերաբերյալ ավանդությունները և նրանց վավերականությունն ընծայելու նպատակով հնարել է նրա ծագումը Նինվեի գրատնից. իսկ Խորենացին հավատացել է նրա պատմածին։ Իսկ այս ավանդությունների հիմքը Մ. Գարագաշյանը համարեց հույն մատենագիրների Ասորեստանցիների և Պարսիկների մասին արած պատմությունները, որ մեծ մասամբ առնված են Նիսևբիոսի ժամանակագրությունից և հարմարեցրած են հայերին (?)։

Սակայն Մար-Աբասյան աղբյուրը, մեր կարծիքով, ուրիշ հիմք ունի, որով, նախկին հմայքը կորցնելուց հետո ուրիշ՝ նոր հմայք է ստանում, իբրև հայ ժողովրդի հիշողությունների նախահայկական, այսինքն՝ Ուրարտական ժամանակների Հայաստանի պատմության։ Որ արաբական տիրապետության ժամանակի հիշողությունները հազար տարի ապրել են ժողովրդի մեջ Սասունցի Դավիթի վեպով, ինչո՞ւ նույն ժողովուրդը չէր կարող նույնպես հազար տարվա հիշողություններ պահպանել իր երկրի հնագույն պատմության մասին. եթե նկատի առնենք, որ այդ աղբյուրի մեջ

գործող անձերից Բելը Բաբելոնի աստվածն է եղել, Շամիրամը Ասորեստանի աստվածուհի, Հայկը Հայոց հին աստված, որի անունով կոչված է Օրիոնի համաստեղությունը, իսկ Արան մի անմահ ոգի (համապատասխան Խշտար=Շամիրամի սիրահար Ադոնիսին), Պզատոնի հիշած հայ էրը, ապա դյուրավ կհամոզվենք, որ այս անունների տակ մարմնացել են մի կողմից Բաբելոնն ու Ասորեստանը (Բել, Շամիրամ), և մյուս կողմից Հայաստանը (Հայկ, Արա), և Բելի ու Շամիրամի արշավանքները Հայաստանի վրա՝ աղոտ հիշողություններ են Բաբելոնի և Ասորեստանի մղած դարավոր պատերազմների Ուրարտական թագավորների դեմ։ Հիշողությունները նույնիսկ պահպանել են այս պատմական անցքերի հաջորդականությունը։

Բաբելոնի անընդհատ, դարից դար շարունակվող արշավանքները, ինչպես վկայում են սեպագիր արձանագրությունները, ապացույց են այդ արշավանքների անհաջողության, որ հայ ժողովրդի հիշողությունների մեջ արտահայտվել է Բելի սպանվելով աղեղնավոր Հայկից, իսկ Ասորեստանի արշավանքները, որոնք հաջողությամբ պսակվեցին Ուրարտուի նվաճումով, արտահայտված են Արայի սպանվելով Շամիրամի ձորքերից։ Հետաքրքրական է, որ հիշողությունները պահպանել են Շամիրամ աստվածուհու բնորոշ գծերը՝ ռազմականությունն և վայելշությունը։

Այսպես ուրեմն, Մար-Աբասյան աղբյուրի մեջ պահված են այս վաղեմի պատերազմների հիշողությունները, մինչդեռ Խորենացին, որ այդ պատերազմները նկարագրում է ըստ Մար-Աբասի, հանկացողություն անգամ չունի նրանց իսկական նշանակության մասին և վանի շինությունը, ուրարտական թագավորների բնորոշ արձանագրությունները վերագրում է Շամիրամին։

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ Խորենացու պատմության առաջին գիրքը ամբողջապես Մար-Աբասյան աղբյուրից չէ, այլ մի մասը միայն[16], մյուս մասերն առնված են ուրիշ աղբյուրներից, «յուրոսյան Սիբիլլայից, ի քանից արանց իմաստնոց և յայսոսիկ քաջախոհաց» (Ա, ժբ), որոնց ստուգության մասին այնքան էլ վստահ չէ, և հատկապես Տիգրան Երվանդյանի պատմության առել է մեզ անծանոթ «Հիւսուսն Պիսոյից» կոչ-

[16] Տե՛ս Միսքան (Գ. Տեր-Մկրտչյան) Խորենացու ուսումնասիրություն, Վաղարշապատ, 1898 թ., էջ 57—84։

ված քերթվածից, որից պատահաբար 3—4 տող պահպանված է հին քերականների մեջ.

> «Եւ արդ ներգործեալ ի միտս երկիր առ խորհուրդս փոքարեն մեծոգւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի, իւր ներգործեալ զկուշաբարն, նաև ողջամիտ աշխարհածուփ», որ վերագրվում է Դավիթ Անհաղթին.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ. Խորենացին հաճախ պատմական նյութ է քաղում ժողովրդական երգերից և ավանդություններից, որոնց նա զանազան անուններ է տալիս՝ երգք վիպասանաց, երգք Թուելեաց, վիպասանք, երգարանք, բանավորք, ցոյցք, բանք, առասպելք: (Սրանց մասին տես ծանոթ. 8): Այդ ժողովրդական բանահյուսությունից նա շատ անգամ բառացի բերում է հատվածներ, իսկ երբեմն բերում է նրանց կարճառոտ բովանդակությունն իր խոսքերով: Այսպես՝ նա Վահագնի վերաբերյալ հատվածը բառացի մեջ բերելուց հետո շարունակում է. «յետ արդ և ընդ վիշապաց մաքին լսեցին կռուել նմա և յաղթել և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն նմա երգէին: Այլ և ասեն զսա աստուածացեալ, և անդրի ի Վրաց աշխարհին զսորա չափ հասակին կանգնեալ պատուէին զոհիւք» (Ա, լա): Այսպես նաև Արծրունիների ծագման մասին կարճառոտ հիշում է առասպելը. «Թողում զառասպելաց բանջաղանս որ ի Հաղամակերտին պատմին—մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակեալ, և հովանի թռչնոյն՝ պատահեալն Թալկացելոյ» (Բ, է): Նույնպես՝ «Ի Պարսից առասպելացս» վերնագրի տակ առաջին գլխում շատ կարճ բերում է Բյուրասպի Աժդահակի մասին առասպելները: Թողնելով Հայկի, Արամի, Արայի և Տիգրան Երվանդյանի պատմությունները, որոնք ժողովրդական ծագում ունեն, բայց Խորենացու ձեռքն անցել են գրավոր աղբյուրներով, ինքն անմիջապես ժողովրդական բանահյուսությունից օգտվել է Վահագնի, Վարդգես մանկան, Տորք կամ Տուրք Անգեղի, վիշապազունների, Բյուրասպի Աժդահակի, Երվանդի, Սանատրուկի, մանավանդ Արտաշես Բ-ի և Արտավազդի մասին գրելիս: Արամի պատմությանը դեռ չձեռնարկած՝ նա իր մեկենասին հայտնում է, թե Արամի մասին պատմվում են շատ քաջություններ ու հաղթություններ. «Բայց զընդարձակութիւն պատմութեան սորա և զգործս քաջութեան... թե կամիցիս՝ արտաքոյ այսորիկ գրոցս կարգես-

ցուք և կամ թողցուք, ապա թե ոչ՝ ի սմին» (Ա, ժբ)։ Շատ տարօրինակ է թվում, որ Խորենացին հոժարություն է հայտնում իր պատմությունից դուրս գցելու այնպիսի պատմություն, որ շատ թանկագին սեռք է համարվեր, մանավանդ այնպիսի հին ժամանակի և նահապետի վերաբերմամբ։ Բայց հանելուկը շուտով պարզվում է. Արամի պատմության վերջում Խորենացին ասում է, թե այս պատմությունը բուն թագավորական մատյաններում չէ եղել, այլ «ի փորունց ոմանց և յանհնչանից արանց ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիվանի Արքունեաց» (Ա, ժդ, Սեբեոսի Մար-Աբաս Մծուրնացին էլ չունի Արամի պատմությունների և ոչ մեկը, այլ միայն անունն է հիշում)։ Արտաշես Բ-ի թագավորության մասին հայտնում է. «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Դողթան—չինել զքաղաքն և խնամութիւն ընդ Ալանս և ծնունդք զարմից և իբր տրփանք Սաթինական ընդ վիշապապունս՝ առասպելաբար... մարտ ընդ նոսա և քայքայումն չիշխանութեանէն և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն և նախանձ որպւոցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանցն» (Բ, խթ)։ Այս խոսքերից երևում է, որ Դողթան վիպասաններն ընդարձակ պատմական տեղեկություններ էին պարունակում Արտաշեսի գործերի մասին, որոնցից Խորենացին օգտվել է։ Նույնը տեսնում ենք և Արտավազդի վերաբերությամբ, որի կյանքի գծերն ու գործերը, սկսած ծնունդից, երբ «վիշապապունք գողացան զմանուկն Արտավազդ և դև փոխանակ եդին», մինչև մահը, երբ քաջքերի ձեռքով բանտարկվեց ազատ Մասիսի վրա և տպատնում է, որ մի օր դուրս կգա և աշխարհիս կտիրե՝ այս բոլորը նյութ է եղել ժողովրդական բանահյուսության։ Ուստի սխալ չի լինի ենթադրել, թե այս երկու թագավորների կյանքն ու գործունեությունը ծայրեծայր պատմվելիս և երգվելիս են եղել հայ աշուղներից, բայց հայտնի չէ, իբրև մի ամբողջական միակտուր վեպ, թե մանր անջատ երգերով։ Ավելի հավանական է առաջինը։ (Համեմատել Դավթի և Մհերի վեպի հետ)։

Խորենացին ինքնուրույն եղանակ ունի ժողովրդական բանահյուսությունից օգտվելու։ Նա ժողովրդական վեպը՝ առասպելը համարում է այլաբանություն, այսինքն այնպիսի մի պատմվածք, որ արտաքին նյութական բովանդակության տակ թաքցրած ունի ներքին բովանդակություն, իրականը, կարևորը, ինչպես

առակների մեջ։ Այսպես՝ նա պարսից առասպելների մասին իր արհամարհանքն է հայտնում ասելով. «Մի՞ արդեօք յունական պերճ և ողորկ առասպելքն իցեն հանդերձ պատճառաւ, որք ջնջմարտութիւն իրացն այլաբանաբար չինքեանս ունեն ցնագուցեալ»։ Նույնպես Արտաշես Բ-ի մասին վիպասանների բովանդակությունը հիշելով՝ ասում է. «այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վիպասանացն, բայց յիշատակեսցուք և մեք կարճառօտիւք և զայլաբանութիւնն ճշմարտեսցուք» (Բ, խթ)։ Այսպիսի հասկացողության բնական հետևանքն այն է եղել, որ խորենացին երգը կամ առասպելը կարճառոտ բերելով՝ ինքը նրան մեկնում է, այսինքն այլաբանությունը բացատրում է կամ, ինչպես ինքն է ասում. «ճշմարտում է»։ Եվ ինչ որ մենք խորենացու մեջ կարդում ենք իբրև պատմություն Արտաշեսի, Արտավազդի և ուրիշների մասին, որոնք ծագում են ժողովրդական վեպից՝ իսկապես նույն ինքն խորենացու մեկնությունն է, ժողովրդական վեպի «այլաբանությունից» նրա ստեղծած «ճշմարտեալ պատմութիւնը»։

Այս այսպես լինելով՝ հասկանալի է, որ խորենացու ճշմարտյալ պատմությունը կարող է լինել ուղիղ կամ սխալ, նայելով, թե նա ո՛րքան հիշտ է ըմբռնել ժողովրդական վեպի էությունը և ո՛րչափ հաջող է մեկնել՝ եթե այդ վեպը հիրավի այլաբանություն է եղել։ Օրինակ, տեսնում ենք, որ խորենացին հիշտ բացատրություն է տալիս «տեղ ոսկի տեղայր» երգին, ասելով, թե «սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարն հասանել՝ դահեկանս ճապաղել... Նույնպես և թագուհացն յառագաստին՝ մարգարիտ. այս է ճշմարտութիւն բանիցս» (Բ, ծ)։ Նույնպես բերելով Վարդգես մանկան երգը. «Հաստուած գնացեալ»... բացատրում է այսպես. «Այս երուանդ առաջինն է, սակաւակեացն, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեն զաւանս զայս» (Բ, կե), այսինքն Վաղարշապատը, որ առաջ կոչվելիս է եղել Վարդգեսի ավան։ Այս առաջին մասը, այն է, որ երգի մեջ հիշված երվանդը սակավակյացն է՝ կարող է հիշտ լինել կամ սխալ, բայց երկրորդ մասն անպայման հիշտ մեկնություն է երգի «կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի» խոսքին։ Մեկի դուռը կռել, կոփել՝ նշանակում է այդ տանից կին ուզել։

Բերենք մի երկու օրինակ էլ, որտեղ խորենացու ճշմարտյալ պատմությունը սխալ է դուրս եկել։ Սաթենիկի առևանգման անցքը պատմելիս խորենացին ասում է. «զայս տեղի առասպելաբա-

նելով վիպասանքն յերգելն իւրեանց ասեն... Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ... որ ճշմարտութեամբ ունի այսպէս, քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լայքա շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթենիկ. այս է ոսկեօղ շիկափոկ պարանն» (Բ, ծ), այնինչ երգը մի պարզ առևանգության նկարագրություն է, և ոսկեօղ շիկափոկ պարանը այն պարանն է, որ ձգում էին հակառակորդի վրա և նրան կաշկանդում։ Խորենացին ուրիշ տեղ (Բ, ծե) հիշում է, ինչպես Բասլաց թագավորը իր նյարդյա քեմխտապատ պարանով կաշկանդեց Տրդատ թագավորի ուսը։ Խորենացու սխալն այստեղ նրա մեջ է, որ նա այլաբանություն է համարել իրական անցքի նկարագրությունը և ջանացել է նրան «ճշմարտել»։ Ուրիշ օրինակ։ Խորենացին հաճախ հիշում է վիշապազուններին և նրանց ու Հայոց թագավորների մեջ եղած կռիվները, սկսելով մարաց Աժդահակից մինչև Արգավանը, որին սիրահարվում է Սաթենիկը և որին սպանում է Արտավազդը։ Երգերի մեջ հիշված վիշապազունների առասպելը Խորենացին «ճշմարտում է»։ Նկատելով, որ Աժդահակ պարսկերեն նշանակում է վիշապ Դահակ (կամ Զոհակ), որ մար պարսկերեն նշանակում է օձ, նա եզրակացնում է, որ երգերի մեջ հիշված վիշապազունները Աժդահակ թագավորի սերունդն են, որ Մասիսի մոտերը և վրան ապրող վիշապները մարեր են (մեդացիք), որ Մուրացան նախարարության անունը իսկապես մարացոց (այսինքն օձերի, վիշապների) անունից է առաջ եկել, և որ Մուրացանների Արգամ նահապետը երգի մեջ հիշված Արգավանն է։ Այս գյուտն այնքան է ուրախացրել Պատմահորը, որ պարծենալով դիմում է իր մեկենասին, ասելով. «Եւ արդ ո՞չ առաւել աստանօր զարմացցիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեան, թէ որպես յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յԱզատն ի վեր ի Մասիս» (Ա, լ)։ Այնինչ վիշապազունների և վիշապների այդ բոլոր պատմությունը ներկայումս բացատրվում է ավելի բնական կերպով. դրանք բոլորն էլ ընդհանրապես օձերի և վիշապների, նրանց թագավորների կռիվների մասին ժողովրդի ունեցած հավատալիքներն են, որոնք մինչև այժմ պահպանված են հեքիաթների և բերանացի պատմվող ժողովրդական առասպելների մեջ։ Նույնպիսի հեքիաթներ, ավելի մանրամասն, պատմելիս են եղել և Խորենացու ժամանակ, և նա նրանց ընդունել է իբրև այլաբանական վիպական երգ, պատմական հիմք ունեցող, ուստի նրանց

մեկնելով համարեցրել է պատմական անձերի, այնպես որ այս կետերում Խորենացու մեկնությունների մեջ պատմականն ու առասպելականը խառնվել են իրար հետ[17]։ Այս օրինակումն էլ Խորենացու սխալը կայանում է նրանում, որ նա սնոտիապաշտական առասպելին ընդունել է իբրև պատմական իրականություն և աշխատել է ճշմարտել». բայց անհաջող կերպով։ Մի ուրիշ տեղ (Ա, գ) բերելով Սիբիլլայի հայտնի տողը, «Լինէին իշխանք երկրի Զրուան. Տիտան և Յապետոսթէ», իր կողմից ճշմարտում է ասելով, «որ ինձ թուին Սեմ, Քամ, Յաբեթ», այնինչ Սիբիլլայի տողում բերվածները հունական դիցաբանության մեջ հիշված աստվածներն են՝ Կռոնոս, Տիտան, Յապետոս—Ուրանոսի որդիները։

Սրանից երևում է, որ Խորենացու ժողովրդական աղբյուրից հյուսված մասերում պետք է ուշադրությամբ որոշել, թե ո՞րն է իսկապես ժողովրդականը և ո՞րն է Խորենացու ավելացրածը իբրև մեկնություն կամ լրացում ժողովրդական աղբյուրի. առանց սրան՝ ասպարեզ կբացվի զանազան թյուրիմացությունների։

Բազմաթիվ օտարազգի աղբյուրներից, որ վերը հիշեցինք, ոչ մեկը հատկապես Հայոց կամ Հայաստանին չի վերաբերում, չի պարունակում Հայոց սիստեմական պատմությունը։ Նրանք բոլորը, զանազան տեղերում, տարբեր ժամանակներում և տարբեր ոգով գրված՝ պարունակում են պատահական կցկտուր տեղեկություններ Հայոց մասին, սխալ կամ ուղիղ։ Խորենացին էլ պատմության սկզբում ասում է. «Մի՞թե մատեան մերձ կայցէ ինձ... կամ դպրութիւնք քոց հայրենեացն, որով նմանագոյնս արտաքոյ եբրայեցւոց պատմագրացն ի վերուստ ի քեզ խոստացանիցեմ անսխալ, կամ ի քէն և յայլոց սկսեալ անդի ի վեր համիցեմ ի սկիզբն։ Բայց սակայն սկսայց, թէպէտ և ջանիւ» (Ա, գ)։ Խորենացին ձեռքի տակ ուներ իսկապես ոչ թե պատմական աղբյուրներ, այլ կտորտանքներ, որոնք նա պետք է իրար մոտ դներ, կցկցեր, իրար հարմարեցներ և ամբողջացներ։ Եվ այս պատասխանատու գործը կատարելիս նա չուներ գոնե ստույգ ժամանակագրական աղյուսակներ, թագավորների հաջորդական ցանկով, որոնք իրեն առաջնորդ լինեին. այդ ցանկերն էլ դարձյալ ինքը պետք է կազմեր հիշյալ կտորտանքների հիման վրա՝ հավանականությամբ։

Ստույգ աղբյուրների բացակայության շնորհիվ Խորենացին

[17] Տե՛ս Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 325—379։

ակամայից ընկնում է խոշոր սխալների մեջ։ Այսպես, նա չգիտե և բոլորովին չի հիշում մոտ երկու հարյուր տարվա Հայաստանի թագավորներ—Արտաշես, Արիոբարզան, Երատո, Վանոն, Զենոն, Միհրդատ, Հռադամիստ, Տրդատ (Ա), Պարթամասիր, Պարթամասպատ, Աքեմենիդա, Սոյեմոս (35 նՔ. 169 հՔ), և այս երկար ժամանակամիջոցը լցնում է ուրիշ թագավորների անուններով, որոնք արտաքին պատմիչներին անհայտ են, ինչպես Արշամ, Աբգար, Անանուն, Սանատրուկ, Երվանդ, Արտաշես (Բ), Արտավազդ (Բ), Տիրան, Տիգրան (Գ)։ Այսպես նաև Խորենացին Արտաշես Ա-ին է վերագրում Կրեսոսի ձերբակալությունը, թեպետ գիտե, որ այս բանը ուրիշ հեղինակներ վերագրում են Կյուրոսին։ Չորս հույն հռետոր հեղինակների միաբան վկայությունը նրան թելադրել, կարելի է ասել, ստիպել է հայոց Արտաշեսին այս անցքը վերագրել. նա չի գիտցել, որ հույները հենց Կյուրոսին Արտաշես են կոչում, ինչպես վկայում է Հովսեպոսը[18]։ Աբգարին նա դարձնում է հայոց թագավոր, հիմնվելով մի ասորական աղբյուրի վրա, իսկ նրա Ուշամա մականունից, որ նշանակում է թուխ, և հայ թարգմանչի մոտ դարձել է Աշամա կամ Արշամա՝ ստեղծել է մի նոր թագավոր Արշամ, որովհետև «Աբգար Արշամա» խոսքը, որ գտնվելիս է եղել Խորենացու աղբյուրում, հայերեն ուրիշ բան չի կարելի հասկանալ, քան Աբգար որդի Արշամա։— Տիգրան Մեծի մասին Խորենացու բոլոր տեղեկությունները առնված են Հովսեպոսից, իսկ սա Տիգրանի մասին անցողակի այնքան է միայն գրել, որքան Տիգրանը շփում է ունեցել Հրեաստանի կամ Ասորիքի հետ, իսկ նրա ուրիշ տեղերում կատարած ուրիշ գործերի մասին ոչինչ չի գրել։ Այս պատճառով Տիգրան Մեծի, Հայաստանի ամենանշանավոր թագավորի մասին Խորենացու գրածը շատ թերի է, անշուշտ է և նույնիսկ Խորենացին կարծես մի տեսակ անտարբերություն կամ հակակրանք է տածում դեպի այս թագավորը, երևի այն պատճառով, որ նա նախագահությունը, Խորենացու կարծիքով, զիջեց Պարթևներին, նրանց հետ հաշտվելու նպատակով, որ սակայն ճիշտ չէ։

Այսպիսի սխալների և թյուրիմացությունների օրինակներ էլի

---

[18] «Քսերքսի մահից հետո նրան հաջորդեց Կյուրոս որդին, որին հույներն անվանում են Արտաքսերքս (Արտաշես)»։ Հնախոսություն հրեից, XI. տե՛ս Խալաթյանց, Армянские Аршакиды, էջ 40։

շատ կարելի է բերել, որոնք բացատրվում են զանազան պատճառներով—աղբյուրների քացակայությամբ կամ քերությամբ, աղբյուրների անորոշությամբ կամ սխալով, որի շնորհիվ Խորենացին մի թագավորի գործերը վերագրել է ուրիշ թագավորի, միևնույն անձի անունների տարբերությամբ հայ և օտարազգի պատմիչների մոտ, վերջապես Խորենացու քննադատական վերաբերմունքով դեպի աղբյուրները։

Այսպես տեսնում ենք, որ Խորենացին Տիգրան Մեծի պատմությունն այնպես անշուք ու կիսատ տալով՝ Տիգրան Երվանդյանին մեծ դովեստներ է շռայլում, հիացմունքով նկարագրելով նրա աշխարհաշինությունը (Ա, իդ), այնինչ այդ բոլորը վերաբերում են Տիգրան Մեծին, ինչպես ցույց են տվել բանասերները (Գելցեր, Աբեղյան, Մանանդյան)։ Նույն Տիգրան Մեծին է վերաբերում մի մասն այն գործերից, որ Խորենացին վերագրում է գոյություն չունեցող Արտաշես Ա-ին, այսինքն նախագահությունը Պարթևներից առնելը, իր անունով դրամ կտրելը, կոտքերի արձաններ Փոքր Ասիայից Հայաստան փոխադրելը, իր դուստրը Մհերդատին (Ատրապատականի թագավորին) կնության տալը։ Այս Արտաշեսի գործերի մյուս մասն էլ— մեծամեծ նվաճումները, ծովը նավերով լցնելը, զորքի մեջ ծագած ապստամբության պատճառով օտարության մեջ սպանվելը (անձնասպանություն գործելը) վերաբերում են Մհերդատ Պոնտացուն— Տրդատ Ա-ին, որ պարթևների և Հռոմայեցիների մեջ կայացած համաձայնության հիման վրա գնաց Հռոմ և շքեղությամբ Հայաստանի վրա թագավոր պսակվեց Ներոնից, Խորենացին չգիտե։ Բայց նա Տրդատ Բ-ին, քրիստոնեություն ընդունողին, վերագրում է գործողություններ, որոնք վերաբերում են առաջինին, օրինակ, Հռոմ գնալը Կոստանդիանոսի մոտ, իր քրոջ Խոսրովիդուխտի համար Գառնիի ամրոցը շինելը (որ իսկապես հեթանոսական մեհյան է եղել, Հռոմից բերված ճարտարապետների ձեռքով շինված), Բասիլների հետ պատերազմը (Բ, ձև), երբ Տրդատը (Ա) հազիվ ազատվեց մահից— Արտաշես Բ-ի, որի գործերն այնպես սիրով պատմում է Խորենացին ըստ ժողովրդական երգերի, նոր բանասերների կարծիքով Տրդատ Ա-ն է։ Խորենացու Երվանդը օտարազգի հեղինակների Հռատամիսոն է։

Առանձնապես նշանակելու է Խորենացու վերաբերմունքը դեպի իր աղբյուր Փավստոսի պատմությունը, որի պատճառով Հանիրավի բամբասված է իբրև Փավստոսի պատմության խարդա-

Խոզ Փավստոսի դիրքը մի սքանչելի զրույց է, հեքիաթ է, ժողովրդական հիշողություններից հավաքված ու զարդարված, որի մեջ պատմականն ու առասպելականը այնպես են խառնված իրար հետ, ինչպես չուրն ու շաքարը մի բաժակ թեյի մեջ։ Խորենացին, որ պատմություն էր գրում, աշխատել է Փավստոսի ավանդածների մեջ պատմականը զատել առասպելականից. ուստի այս երկու հեղինակների մեջ պատմական կորիզը նույնն է, բայց պարագաները շատ տարբեր են։ Բերենք մի երկու օրինակ։ Փավստոսը պատմում է, թե Տիրիթը սիրահարված լինելով Գնելի վհոջ Փառանձեմին, Արշակ թագավորի մոտ զրպարտում է Գնելին, ուստի Արշակը նենդությամբ կանչում է նրան իր մոտ. երբ Գնելը Փառանձեմի հետ հասնում են թագավորական բանակը, Արշակը զահիճ է ուղարկում, որ Գնելին բռնի ու տանի գլխատի։ Փառանձեմը վազում է եկեղեցին, որտեղ ներսես կաթողիկոսը ժամերգություն էր կատարում և աղաչում է շտապել փրկել իր անմեղ ամուսնուն։ Ներսեսը դադարեցնում է ժամերգությունը և անմիջապես դիմում է թագավորի մոտ։ Նա այնքան կարճամիտ է, որ չի մտածում, թե մինչև ինքը թագավորի մոտ գնա, նրան համոզե հրամանը հետ առնել, զահիճն իր գործն արդեն կատարած կլինի։ Չի մտածում, թե պետք է նախ զահճին հասնել, հորդորել, որ հրամանի կատարումը հետաձգի մինչև թագավորից նոր հրաման ստանալը։ Այսպես էլ լինում է. մինչ կաթողիկոսը թագավորի առաջ կանգնած (որ քնած էր իրեն ձևացնում) գայլի շարականներ էր կարդում, զահիճը ներս է մտնում և գլխուցում թագավորին, թե նրա հրամանը կատարեց։ Այնուհետև թագավորը հրամայում է սգահանդես կատարել Արշակունի մեծ սեպուհ Գնելի մահվան համար, և մինչ բոլորը գիտեին, որ նրան սպանել տվողը հենց ինքը թագավորն էր, սա էլ նստել ու սուգ էր անում իր սպանել տված մարդու համար։ Սգի ժամանակ Փառանձեմը, այն ժամանակվա սովորությամբ, բզկտում է շորերը, ատինքները բացվում են։ Տիրիթը տեսնում է, ցանկական կրքերը գսպել չկարողանալով՝ մարդ է ուղարկում վշտացած սգավոր Փառանձեմի մոտ, թե այնքան էլ մի՛ տրտմիր, ես քո մարդուց պակաս տղամարդ չեմ, քո սիրուց նրան սպանել տվի... Կարո՞ղ էր Խորենացին հավատալ այս բաններին. նա լավ է արել, որ չի հավատացել և Գնելի սպանության պատմությունից բոլորովին դուրս է գցել սիրահարության պարագան և սպանությունը բացատրել է բնական պատճառով։

Ուրիշ օրինակ։ Հուլների և պարսիկների մեջ պատերազմ կա. Շապուհը Արշակ Քաջավորից խնդրում է, որ իրեն օգնի։ Արշակ Հայոց զորքով՝ Վասակ Մամիկոնյան սպարապետի առաջնորդությամբ դիմում է պատերազմի վայրը, որտեղ արդեն բանակ էին դրել Հուլները, իսկ պարսիկները դեռ չէին եկել։ Առանց սրանց սպասելու, Հայերը հարձակվում են Հուլների վրա, մինչև վերջին մարդը կոտորում։ Հետո գալիս է Շապուհը, տեսնում է ամեն ինչ կատարված, կամենում է վարձատրել Հայոց մեծամեծներին, ի միջի այլոց որոշում է Արշակին կնությեան տալ իր դուստրը, և մեծամեծ վայելվածներ Հայաստանից մինչև Պարսկաստան։ Արշակը ամուսնացած էր աշխի Փառանձեմի հետ։ Սրա հայրը, Անդոկ, զգալով, որ Արշակի նոր ամուսնությամբ Շապուհի դստեր հետ իր աղջկա դիրքը կնսեմանա, կաշառում է պարսից և Հայոց շատ մեծամեծների, որոնք գալիս իրրև դաղտնիք Արշակին հայտնում են, թե Շապուհը մտադիր է նրան սպանել։ Եվ Արշակն իր զորքով, որ հունաց բանակը ոչնչացրել էր, որ այնուհետև 30 տարի շարունակ տասնյակ միլիոններով պարսից զորքեր էր ջարդել, այս անգամ ուրիշ ելք չի գտնում, քան դիշերով, վրանները, կահավորությունը թողած, փախչել Շապուհից։ Շապուհը մարդ է ուղարկում հետևից, հրավիրում է դառնալ, բայց Արշակը չի լսում. այս պատճառով ծագում է 30-ամյա կամ 34-ամյա պատերազմ, որի ընթացքում դալիս են պարսիկ զորավարներ, Մեհրուժան Արծրունու առաջնորդությամբ, անթիվ զորքերով, երբեմն չորս միլիոնանոց բանակով։ Նրանց բոլորին մինչև վերջին մարդը կոտորում են Հայերը, ամեն անգամ միայն չարագործ Մեհրուժանը մի ձիով փախչում էր։ Վերջապես Հայոց նախարարները հոգնում են պարսիկ կոտորելուց, հրաժարվում են այլևս կռվել, իսկ Շապուհը գրով կանչում է Արշակին իր մոտ։ Արշակը կամա ակամա գնում է և իրեն շատ համեստ ու խոնարհ է պահում պարսից արքունիքում։ Շապուհը մտածում է նրան նորից Հայաստան ուղարկել, բայց կասկածում է, թե գուցե հայրենիք վերադառնալով դարձյալ ապստամբի։ Քավդևանները նրան խորհուրդ են տալիս Հայաստանից բերել տալ մի քիչ հող և ջուր, խորանի հատակի կեսի վրա ցանել այդ հողից և սրսկել այդ ջրով, իսկ մյուս կեսը պահել բնական դրությամբ, ապա Արշակին շրջեցնել այս երկու տեղում և տեսնել, թե ի՛նչպես է իրեն պահում Արշակը։ Շապուհն այսպես էլ անում է, և Արշակի հետ զբոսնում է խորանում։

Պարսկական հողի վրա եղած ժամանակ հարցնում է Արշակին. «Ես քեզ սիրում էի, ուզում էի աղջիկս քեզ կնության տալ, ինչո՞ւ փախար ինձանից և այնքան վտտորածների պատճառ դարձար»։ Արշակը պատասխանում է. «Մեղավոր եմ քո առաջ, թշնամիները ինձ վախեցրին ու փախցնել տվին...»։ Շապուհը բերում է նրան Հայաստանի հողի վրա. Արշակը լեզուն փոխում է, սկսում է խրոխտալ, Շապուհին սպառնալ։ Դարձյալ տանում է պարսկական հողի վրա, Արշակը սկսում է զղջալ, ուզում է Շապուհի ոտները լիզել։ Դարձյալ բերում է հայահատակ հողի վրա. Արշակի հանդգնությունը չափից անցնում էր։ Առավոտից մինչև երեկո Շապուհը կրկնում է այս փորձը. ամեն անգամ Արշակը պարսկական հողի վրա խեղճանում, նվաստանում, ստրկանում է, իսկ հայահատակ հողի վրա ամբարտավանանում, խրոխտում, սպառնում։ Շապուհի համար ամեն ինչ պարզվում է, բայց նա ուզում է, որ վկաների ներկայությամբ էլ այս փորձը կրկնվի։ Երեկոյան ընթրիքի ժամանակ Արշակի համար բազմոց են պատրաստում բոլորից ներքև (իսկ սովորությունն այնպես էր, որ պարսից և հայոց թագավորները մի տախտի վրա էին բազմում), իսկ հատակը ցանում են Հայաստանի հողից և ջրից։ Բերում են Արշակին բազմեցնում են. առ ժամանակ մռութները կախած լուռ է մնում, մեկ էլ վեր է թռչում տեղից և ամբողջ բազմության ներկայությամբ Շապուհին է դիմում բարձր ձայնով. «Վե՛ր կաց այդ տեղից, թող որ ես նստեմ, դա մեր բնիկ Արշակունիների տեղն է, որ դու գրավել ես. երբ ես հայրենիք վերադառնամ, քեզանից կլուծեմ Արտավանի մահվան վրեժը. դուք, ծառաներդ, ձեր տերերի վրա այժմ տեր եք դարձել»։ Ամեն ինչ կատարյալ է. բերում են շղթաներ, Արշակի վիզը, ոտները կապում և տանում են Անհուշ բերդը, ցմահ բանտարկության ննջարկում։ Մի շատ գեղեցիկ ռոման է այս, որը մարդ հաճույքով կարդում է Փավստոսի գեղարվեստական նկարագրությամբ, որի մեջ այլաբանորեն դուրս է բերված անհատի հոգեկան դրությունը հայրենիքում, ազատ ժամանակ, և օտարության մեջ, ուրիշից կախման վիճակում։ Բայց արդյոք պատմությո՞ւն է այս, կարելի՞ է սրան հավատալ։ Խորենացին չի հավատացել և իրավունք ուներ. նա Արշակի Պարսկաստան գնալուն և Անհուշ բերդում բանտարկվելուն ուրիշ՝ հավանական և բնական բացատրություն է տալիս։ Ուրիշ տեղ Խորենացին խիստ խոսքերով դատապարտում է Եսրով Կոտակին

(Փոքրին), որ նա անփույթ է եղել քաջութեան, բարի հիշատակ թողնելու, որսորդութեան և զբոսանքների է հետևել, որի համար և անտառ է տնկել՝ որսի երեներ բազմացնելու նպատակով (Գ, բ)։ Այնինչ Փավստոսը Խոսրովին կոչում է քաջարանց և աշխարհաշեն։ Այստեղ էլ Խորենացին անտես է արել Փավստոսի այս ձրի գովեստները և ուշադրութիւն է դարձրել Խոսրովի գործերի վրա, որոնք պատմված են նույն Փավստոսի մեջ, և այս գործերից դուրս է բերել բոլորովին արդարացի պնահատութիւն Խոսրովի մասին[19]։ Ուրիշ տեղերում էլ Խորենացին ցույց է տալիս, որ քննադատաբար է վերաբերվում աղբյուրներին, անխտրաբար չի օգտվում նրանցից։ Տրդատի հոր՝ Խոսրովի մասին պատմելիս դրում էր թե «Փեդմելիանոս եպիսկոպոսը գրել է եկեղեցու հալածանքների պատմութիւնը, որի մեջ հիշում է նաև, թե մեր աշխարհում էլ շատերը նահատակվել են Խոսրովի ձեռքով, բայց որովհետև ճշմարտութեամբ և ոճով չի պատմում, ոչ էլ նշանակում է նահատակվածների անունները և նահատակութեան տեղը, մենք հարկ չհամարեցինք երկրորդել. իսկ ինչ որ նա գրում է Խոսրովի մահից հետո կատարված անցքերի մասին՝ մինչև Տրդատի թագավորելը՝ ստույգ համարելով՝ համառոտ կրկնում ենք քեզ համար» (Բ, իե)։ Տիգրան Գ-ի ժամանակ հաստատված անշան նախարարական տոհմերի մասին գրում է, թե անուն առ անուն չի նշանակում, մասամբ՝ որովհետև իրեն հայտնի չեն, և մասամբ՝ որովհետև խուսափում է աշխատութիւնից, մանավանդ որ շատերի անստուգութիւնը կասկածելի է դարձնում և ամբողջը։ «Այս պատճառով էլ մենք ոչինչ չենք գրի Տիգրան վերջինից հաստատված ցեղերի մասին, թեկուզ շատ անգամ էլ սրա համար աղաչես, այլ կգրենք միայն հետո հաստատվածներիը, որոնց մասին հավաստի գիտենք։ Որովհետև մենք, որքան հնար էր, խուսափեցինք ավելորդ ու պատճռված խոսքերից և ինչ որ անհավաստի գործ կամ կարծիք կար, միայն հետևելով արդարն ու ճշմարիտը գրելու, ուրիշներից (օգտվելով) կամ մեզանից՝ որքան կարողութիւն ունեինք։ Եվ քեզ էլ, ինչպես շատ անգամ, այժմ էս աղաչում եմ, մեզ մի՛ հարկադրիր ավելորդ բաներ գրելու (մի գուցե այդ-

---

[19] Տե՛ս այս մասին իմ հոդվածները «Մշակ», 1898 թ. №№ 201—205։ Բոլորովին նույնպես է վերաբերվում և Ն. Ադոնցը Зап. Вост. От. Р. арх. общ. 1904, էջ 154—155։

պիսի բիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավաստի տրքողջ աշխատությունն անպետք ու ավելորդ մի գործ դառնա, որ հավասարապես վտանգ է և ինձ, և քեզ» (Բ, կդ)։

Այս բոլորը ցույց են տալիս, ո՛րքան ուշադիր և զգուշավոր է Խորենացին իր աղբյուրների նկատմամբ, ո՛րքան քննադատաբար և ընտրանքը է ընդունում և օգտագործում նրանց, ո՛րքան իր աղբյուրները ուշադրությամբ քննելով՝ ուղղում է նրանց սխալները իրեն մատչելի ուրիշ տեղեկություններով կամ գոնե այնպես, ինչպես իրեն հավանական է թվում։ Եթե այսուամենայնիվ նա ընկնում է սխալների մեջ, սա քնավ չար դիտավորությամբ չէ, այլ կամ աղբյուրների սխալներից է առաջ գալիս, որոնց սխալները նա չի կարողացել ճանաչել, կամ ուրիշ պատճառներից, որ վերը հիշեցինք։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եթե Խորենացու Պատմությունը տասնյակ դարերով եղել է միակ հեղինակավոր աղբյուր հայոց նախնական պատմության համար, եթե բոլոր հետագա պատմագիրներն իրրև պատգամ ընդունել են նրա գրած Պատմությունը, և ոչ մեկը փորձ չի արել երկրորդ անգամ գրել հայ ազգի նախնական պատմությունը՝ սրա պատճառն այն առանձնահատկություններն են, որ սեփական են միայն Խորենացուն, շնորհիվ նրա բնածին տաղանդի և բազմակողմանի պատրաստության, որոնցով նա գերազանցում է բոլոր իրենից հետո եկող պատմագիրներից։ Տանոթանանք այս հատկություններին։

Խորենացին առաջինը եղավ, որ դրեց հայ ազգի սիստեմատիկան պատմությունը սկզբից մինչև իր ժամանակները։ Սա մի ստեղծագործություն էր «ի չգոյէ ի գոյ ածել» էր մի ազգի անցյալը. սա մի ծննդյան վկայական էր մեր ազգի համար, որ մինչև այդ ժամանակ չգիտեր, թե ո՞վ է ինքը, և ի՞նչ ծագում ունի։ Կապելով հայ ազգի սկզբնավորությունը ս. գրքի հետ, ծագեցնելով հայերին Հաբեթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատվավոր տեղ մյուս հին ազգերի շարքում։ Սերեցնելով հայերին աշտարակաշինության ժամանակակից Հայկից, նկարագրելով այս հսկա ազնվավորին իրրև ազատության սիրահար և բռնակալ Բելին սպանող, նա փառավոր և սիրելի դարձրեց հայերին իրենց ծագումը։ Ճիշտ է, այս պատմությունը հիմնված է առասպելի վրա.

քայց ո՞ւր ազգն է, որի հնագույն պատմությունը՝ ծագումը առասպելական չէ։ Հռոմայեցիների նախահայրը Հռոմուլոսը գալիք ծծով է մեծացել և իր առաջին գործն է եղել իր սննդակից եղբորն սպանել։ Հելլենների նախահայր Հելլենը այն քարերից է առաջացել, որ նրա հայր Դևկալիոնը վերցնում էր գետնից և շպրտում էր իր հետևից։ «Առասպելական մանրամասնությունները, մինչև առասպելական ժամանակագրությունը,— ասում է Ն. Մառը,— անխուսափելի հատկություններ են ժողովրդի ամեն մի իսկական ազգային ավանդության իր նախնական ծագման մասին, որքան էլ սա հիմնված լինի անկասկած առողջ ցեղային ավանդության վրա»[20]։

Այս առեղծագործության համար Խորենացին գործ է ածել ավելի քան քառասուն աղբյուր, թե՛ նյութեր հավաքելու, և թե՛ նկարագրություններ, դարձվածքներ, կտրուկ դատողություններ փոխառնելու համար։ Նա գործ է ածել այնքան աղբյուր, որքան չի գործածել և ոչ մի հայ հեղինակ նրանից առաջ և հետո։ Բայց նշանավոր է ոչ այնքան աղբյուրների քանակը, որքան հեղինակի սուր ըմբռնողությունը, որով նա կարողացել է մի չնչին տեղեկության կամ նախադասության մի հեղինակի մոտ գնահատել և օգտագործել։ Ինչպես մի թռչուն այս ու այն տեղից հավաքելով մի ծղոտ, մի տերև, մի սեզ, մի փետուր, միակ իր կտուցի օգնությամբ հյուսում է բույն ձագուկների համար, այնպես էլ Խորենացին դանադան կցկտուր, անկապ, ավելի կամ պակաս հավանական տեղեկություններ այստեղից-այնտեղից հավաքելով, իր հմտության ու տաղանդի շնորհիվ կցկցել, միացրել, հարմարեցրել է իրար այդ նյութերը և ստեղծել է իր հոյակապ պատմագրական շենքը իր ազգի համար։ Սրա համար է, որ մենք ասում ենք, թե նա «ի չգոյէ ի գոյ» ածեց Հայոց Պատմությունը։

Առանձնապես հիշելու է, որ Խորենացին առաջինը եղավ և միակը, որ գնահատեց ազգային անգիր ավանդություններն իբրև պատմական աղբյուր և նրանցից մեծ չափով օգտվեց, իր կողմից լուսաբանելով ու լրացնելով այս ավանդություններր։ Այսպիսի ավանդությունները կամ առասպելները հին ժամանակ արհամարհված էին (Եղիշե, Փավստոս և այլն), նրանց արժեքը հաղիվ ճանաչվեց մեր մեջ տասնիններորդ դարի կեսերին։ Իսկ Խորենացին, որ դեռ հինգերորդ դարում գնահատեց այդ արհամարհված

[20] Тексты и разыскания по Кавказской философии, I, էջ 103։

գանձը և նույնիսկ իբրև պատմական աղբյուր գործածեց, իր մեծ տավոր կարողությամբ անշուշտ ավելի բարձր կանգնած պետք է լինի բոլոր ժամանակակիցներից և նախորդ ու հաջորդ հեղինակներից։

Խորենացին մտցրեց մեր մատենագրության մեջ սովորությունն հիշելու գործածած աղբյուրները։ Մինչև նրա ժամանակ գրող հեղինակները (Եզնիկ, Ագաթանգեղոս, Փավստոս) այս սովորությունը չունին։ Քննադատները ներկայումս մեղադրում են նրան, որ չի հիշում բոլոր աղբյուրները. բայց այդ մեղադրությունն արդարացի չէ։ Աղբյուրները չհիշելը ընդհանուր սովորություն է եղել հայոց հին հեղինակների. Խորենացին բախտավոր բացառություն է կազմում՝ գոնե գլխավոր աղբյուրները հիշելով։

Խորենացին պատմական գրականության մեջ մտցրեց ժամանակագրություն, և ամեն մի թագավորի կամ հայրապետի գահակալությունը, ամեն մի նշանավոր անցք աշխատում է որոշել ժամանակագրությամբ, երբեմն նաև սինխրոնիզմով։ Նա այնքան կարևորություն է տալիս ժամանակագրությանը, որ մի տեղ ասում է. «Ո՛չ է պատմութիւն առանց ժամանակագրութեան» (Բ, ձբ)։ ԵՒ այս մի նախապատրաստություն, այնպիսի հեղինակավոր անձի կողմից ասված՝ ո՛րքան մեծ ազդեցություն է ունեցել հաջորդ պատմագիրների վրա, որոնք աշխատում են ժամանակագրական թվեր տալ իրենց պատմած անցքերի ու դահակալություններ համար։

Այս հատկությունները կազմում են Խորենացու պատմության արտաքին, տեխնիկական կողմը։ Սրանց համապատասխանում են մի շարք ներքին հատկություններ— հեղինակի վերաբերմունքը դեպի պատմական աղբյուրները, պատմական անձերը, դեպի հայ ազգն ու նրա պատմությունը։ Այս մասում առավել պես նկատվում է Խորենացու բարձր մտավոր դարդացումը համեմատությամբ իր ապրած ժամանակին, և նրա քննադատական ոգին։

Նա Եվհեմերյան փիլիսոփայության հետևող է, ըստ որում հավատացած է, թե հեթանոսական աստվածները սկզբնապես նշանավոր մարդիկ են եղել, որոնք հետո, ժողովրդական ավանդությունների մեջ, աստվածացել են։ Այս հայացքի հիման վրա Խորենացին նորից մարդ է դարձնում Բելին, Հայկին, Շամիրամին, Արային, Վահագնին, որոնք բաբելական և հայ ազգի

աստվածություններ էին։ Նույն սկզբունքով նա սովորական մարդիկ է դարձնում Տորք կամ Տուրք Անգեղին, Բյուրատպի Աժդահակին, Արտավազդին, որոնք առասպելական հերոսներ կամ ոգիներ էին։ Առասպելական կամ անհավատալի դիպվածների համար նա աշխատում է գտնել բնական բացատրություններ։ Այսպես՝ Տորքի մասին բերելով անհավատալի առասպելներ, իր կողմից նկատում է, թե նա սաստիկ ուժեղ է եղել, ուստի և արժանացել է այսպիսի գրույցների (Ա, ը)։ Երվանդի աչքերի կախարդական զորության մասին պատմելուց հետո իր կողմից բացատրում է. սա սուտ և առասպել է, կամ որևէ դիվական զորություն է ունեցել (Բ, խբ)։ Նա պատմում է Արտավազդի կալանավորումը քաջքերից, ինչպես հետևանք իր հոր Արտաշեսի անեծքի, որ շատ ընդհանրացված միջազգային առասպել է զանազան վարիանտներով. բայց իր կողմից մի պարզ՝ բնական բացատրություն է տալիս.— Արտավազդը որսի գնացած լինելով՝ հանկարծ մի խելագարություն է գալիս վրան և նա ձիով հանդերձ գահավիժում է խոր վհի մեջ և կորչում (Բ, կա)։

Նույն հայացքի արտահայտությունն է և այն աչքի ընկնող երևույթը, որ Խորենացին տեղ չի տալիս հրաշքներին. իր Պատմության մեջ և իր աղբյուրների մեջ նկարագրված հրաշքները նա բացատրում է իբրև բնական երևույթներ։ Այս հատկությունը մանավանդ զարմանալի է նրանով, որ Խորենացին ինքը բարեպաշտ հավատացյալ էր։ Օրինակ բերենք մի դեպք։ Փավստոս պատմում է, թե Ներսես Մեծը յոթանասուն մարդով Վաղես կայսրի հրամանով աքսորվեց մի ամայի կղզի, որտեղ ոչ քուրմ կար, ոչ արմատ, այլ միայն ժայռեր ու ավազ, որպեսզի աքսորականները սովամահ լինեն։ Ներսես Մեծը քաջալերում է ընկերներին, հետո առաջարկում է ծունկ չոքել և աղոթք անել, և հանկարծ ծովն ահագին քանակությամբ ձուկ է ափ գցում, նույնպես և փայտ. փայտն ինքն իրեն բոցավառվում է, ձուկը խորովում են և ուտում։ Այսպես, այս կղզու վրա ապրում են իննը տարի (Փավստոս, Դ, ղ)։ Խորենացին, որ աչքի առաջ ուներ Փավստոսի այս պատմությունը, հետևյալ կերպով է նկարագրում դեպքը։ Նավակոծությունից ազատվածները տագնապի մեջ չմնացին. նրանք ուտում էին անտառի արմատները և այն ձկները, որ աստծու հրամանով ծովը կենդանի ափ էր գցում. այսպես ապրեցին նրանք ութ ամիս (Գ, չ)։ Այստեղ կա դարձյալ աստծու նախախնամությունը, բայց չկա հրաշք, ամեն ինչ բնական

է և հնարավոր։ Ուրեմն Խորենացին մերժում է գերբնականը, որ չի համարում պատմության ճշմարտյալ ոճին։ Միակ բացառությունը նա անում է իր սիրելի վարդապետի (ուսուցչի)՝ Մեսրոպ Մաշտոցի վերաբերմամբ, երբ պատմում է, թե նրա դագաղի վրա լուսեղեն խաչ երևաց, որ մարմինը Վաղարշապատից մինչև Օշական տանելը երևում էր։ Բայց այս «հրաշքին» տեղ տալու համար նա չի բավականանում ժամանակակից Կորյունի վկայությամբ, այլ ուրիշներից ևս ստուգում է նույնը.—«Որպէս լուայ ի բազմաց և ի հաւատարիմ արանցն», և միայն այսպիսի զգուշավոր քննությունից հետո թույլ է տալիս իրեն պատմել այս նշանը, որ իսկապես դարձյալ մի պարզ բնական երևույթ է, ինչպես բացատրել ենք 344-րդ ծանոթության մեջ։

Խորենացին շատ բարձր է գնահատում ուսումը, արվեստները, մատենագրությունը, առհասարակ լուսավորությունը։ Մարդն ստեղծված է ըստ պատկերի աստուծո, ասում է նա, իսկ մարդու էական հատկությունը բանականությունն է, և ով որ բանականությունը զարգարում է, հետամուտ լինելով ուսման և դպրության, նա արժանավոր է դառնում աստծու պատկեր կոչվելու (Ա, ա)։ Այսպիսի տրամաբանական ուղիղ դատողությամբ նա ներբողում է իր մեկենաս Սահակ Բագրատունուն այն պատճառով, որ նա հետամուտ եղավ դպրության և իրեն առաջարկեց գրել Հայոց Պատմությունը։ Նույնպիսի գովեստներ է տալիս նա Պտղոմեոս Եղբայրասերին, որ գիտությունները ծաղկեցրեց Եգիպտոսում, Ալեքսանդրիայի հռչակավոր մատենադարանը հիմնեց, ս. Սահակին ու Մեսրոպին, որոնք Հայաստանի լուսավորության մեծ հիմնադիրները եղան։ Իսկ այս բարեմասնությունները չունեցող թագավորներին նա կոչում է անբան, թուլամիտ, վայրենի։

Խորենացին հելլենական քաղաքակրթության, հելլենասիրության լավագույն և ազդեցիկ ներկայացուցիչն է եղել Հայաստանում, հունական դպրոցն ու գիտությունը գերադասելով ասորականից և պարսկականից և Հունաստանը կոչելով «մայր կամ դայակ իմաստից»։ Այժմյան լեզվով ասելով՝ նա եվրոպական կուլտուրայի հետևող և տարածող էր արևելքում, հակառակ ասիական կուլտուրայի։ Այս հանգամանքն առանձնապես գնահատելի է մի մատենագրի կողմից, որ ապրում էր Հայաստանում, մի աշխարհում, որ գլխովին ողողված էր պարսկական կուլտուրայով, որտեղ

արքունական տունը, նախարարական տները յուրացրել էին պարսկական ճաշակ կյանքի բոլոր պարագաներում, որի լավագույն ապացույցն է—հին չինեին ուրիշ ապացույցներ—հայերեն լեզուն, լինելի հեղեղված պահլավական բառերով ու ոճերով։ Հենց ինքը Խորենացին շատ հմուտ է պարսկական առասպելներին, թեպետ և նրանց առում է, և առհասարակ լավատեղյակ է պարսկական գործերին։ Ոսիման Խորենացու հեղինակությունը խոր զգացված և անշեղ գործադրվող գիծ է նրա մատենի կարողության, և ոչ թե լոկ համակրություն հույներին իբրև քրիստոնյաների հանդեպ հեթանոս պարսիկների։ Ասորիները նույնպես քրիստոնյա էին և ավելի շփում ունեին հայերի հետ, սակայն Խորենացին նրանց էլ արհամարհում է, աշխատում է անտես անել նրանց ազդեցությունը գրերի գյուտի ժամանակ, այնպես որ, ըստ Խորենացու, գրերի գյուտը տեղի է ունեցել ոչ թե Ասորիքում, Սամոսատ քաղաքում, այլ Հունաստանում, Սամոս կղզու վրա, հույն Հոոփանոսի աջակցությամբ, որ գնացած՝ միայնացած է լինում այդ կղզում։ Ուրիշ տեղ էլ նա ասորի գիտնականներին բնորոշում է իբրև փոքր և անհաշտ մարդիկ։

Խորենացին անցքեր պատմելիս կամ անձեր նկարագրելիս լոկ դիտող՝ անտարբեր արձանագրող չէ, այլ նրանց հետ կապվում է հոգով ու սրտով, քննադատում է և դնահատում։ Նա չի բավականանում միայն պատմելով։ Պատմությունը, նրա համոզմունքով, լոկ անցքերի դասավորություն չէ, այլ մի գիրք, որտեղ անցքերը պետք է լուսաբանված լինեն, անձերը գնահատված. մի գիրք, որ ընթերցողին պետք է ուղեցույց լինի կյանքի մեջ, առաջնորդելով նրան դեպի առաքինություն, բարեգործություն, ուսումնասիրություն և հայրենասիրություն։ Այս պատճառով նա կանգ է առնում պատմական անձնավորությունների վրա, գնահատելով նրանց գործերը, գովելով կամ պարսավելով։ Այն մարդիկ, որոնք հետամուտ են եղել ուսման, գրականության զարգացման, հատուցել են հայրենիքի թշնամիներին, փառավորել են հայրենիքը հաղթություններով, մուծել են քաղաքական և տնտեսական բարեկարգումներ, ընդհանրապես աշխատել են ժողովրդի մտավոր, տնտեսական, քաղաքական և բարոյական առաջադիմության համար, արժանանում են Խորենացու անհնախանձ ու խելացի գովեստներին.— «Նրանց անմահ հիշատակը մնում է աշխարհում», «Նրանք մեռնելուց հետո էլ շարունակում են ապրել», «Նրանք

մահկանացու ծնվելով՝ անմահ են թողնում իրենց հիշատակը»։ Ընդհակառակն, այն անձնավորությունները, որոնք ոչ մի օգտակար գործ չեն անում ժողովրդի համար, անփույթ են լինում «անմահ հիշատակ» թողնելու, այլ միայն իրենց զվարճության համար են ապրում, ենթարկվում են Խորենացու արդարացի և խիստ պարսավին, ինչպես Թուլամորթ, վայրենի, որովայնի ստրուկ, աղքանոցներ մեծացնող, անմիտ, անզգամ և այլն։ Առաջին կարգին են պատկանում Տիգրանները, Արտաշեսները, Տրդատը, Սահակ Բագրատունին, Սահակ և Մեսրոպ և այլն։ Երկրորդ կարգին են պատկանում Արտավազդը, Խոսրով Փոքրը, Արշակ Բ-ը, Պապը և ուրիշներ։

Իր դատաստանների մեջ Խորենացին անաչառ է և խիստ, միևնույն ժամանակ ինքնուրույն և համարձակ։ Արդեն մի շարք թագավորների այնպիսի կծու խոսքերով պարսավելը ցույց է տալիս, որ նա չի քաշվում ազգային պատիվը վիրավորելու երկչոտ զգացմունքից։ Նա իր համոզմունքից բարձր ոչինչ չի ճանաչում, և երբ համոզմունքը թելադրում է նրան մի բան, նա ասում է համարձակ, թեկուզ սրանով շատ սրտեր վիրավորվեն, նվիրական դարձած զգացմունքներ թուլանան։ Բերենք մի օրինակ։ Հայտնի է, որ ս. Գրիգոր Լուսավորիչը, ըստ ազգային ավանդության, իր կրած անտանելի չարչարանքներով, մի ամբողջ աշխարհ քրիստոնեական լույսով լուսավորելով, Հայոց եկեղեցու նվիրապետությունը հիմնելով և ճգնությամբ հայ ազգի և եկեղեցու ամենասիրելի, ամենաժողովրդական սուրբը, պաշտելի անձնավորությունը դարձավ։ Հայոց եկեղեցիներում ամեն օր նրա անունն սկսեց հիշվել իբրև բարեխոսի առ աստված՝ աստվածածնի, Հովհաննես Մկրտչի, Ստեփաննոս Նախավկայի, առաքյալների և մարգարեների հետ (տե՛ս «Բարեխոս ունիմք» մաղթանքը)։ Նրա հիշատակի համար տարեկան երեք տոն սահմանվեց— մուտն ի վիրապն, ելն ի վիրապէն, գիւտ նշխարաց։ Նրա անունով բազմաթիվ տաճարներ կառուցվեցին, ժողովուրդն աղոթելիս միշտ նրան է կանչում բարեխոս (Ղ. Փարպեցին)։ Եվ ահա Խորենացին, իբրև պատմաբան, այս երկնաքաղաքացի սրբին նորից աշխարհ է իջեցնում, և նրան համեմատելով Տրդատի հետ, վերջինիս կոչում է «սուրբ, մեծ, երկրորդ նահատակ, մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացու, գործակից և հաւասար ճգնող մերոյ նախաշաւղի և լուսաւորութեանց նահապետի»։ Լուսավորչին տալիս

է առաջնությունը իբրև վկայի և առաքյալի, իսկ այնուհետև երկուսը «զուգաքան և հավասարագործ» են։ Բայց այստեղ նա ճանաչում է թագավորի առավելությունը. որովհետև աստծու մասին խորհելու և ճգնելու մեջ իրար հավասար լինելով, թագավորն այն առավելությունն է ունեցել, որ հորդորական խոսքերով ու հրամաններով նվաճել է ժողովուրդը նոր կրոնի լծի տակ։ Այսպիսի համեմատություն անելու, Տրդատ թագավորին և Լուսավորչին հավասարապատիվ համարելու համար պետք էր ունենալ Խորենացու չափավոր խորաթափանց միտքը և խիզախ համարձակությունը։ Նույն համարձակությունը տեսնում ենք և ուրիշ տեղեր, մանավանդ Ողբի մեջ, որտեղ անխնա հարվածում է հայոց բոլոր դասակարգերին, հանդիմանելով ամեն մի դասակարգի բնորոշ արատները։

Խորենացին հայրենասեր է այս բառի ամենաազնիվ նշանակությամբ։ Հայրենասեր է նրանով, որ ցանկանում է տեսնել իր հայրենիքը փառավոր, անկախ, իր հայրենակիցներին՝ առաքինի, քաղաքակրթված, առավել։ Հայրենասեր է նրանով, որ իր ազդու գրչով հարվածում է տգիտությունը, անգործությունը, մոլությունները, գովում է գիտությունը, օգտակար գործունեությունը, առաքինությունը։ Նա ուրախակից է ազգի ուրախություններին, ցավակից է նրա ցավերին։ Բայց նրա հայրենասիրությունն զգաստ է, գիտակցող և չի փոխվում վնասակար հայրենամոլության (շովինիզմի), երբ ամեն ինչ, որ ազգային է, վարդագույն, կատարյալ է երևում, երբ ազգի պակասությունները թվում են իբրև առաքինություն կամ վերագրվում են թշնամուն կամ օտար ազդեցության։ Այդ տեսակետով պետք է արձանագրել Խորենացու այն կարճ, բայց գիտակցությամբ լի խոսքերը, որոնցից երևում է, թե ո՛րքան լավ է ըմբռնում նա մեր ազգի համեմատաբար համեստ դրությունը, և միևնույն ժամանակ սիրում է նրան. «Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի» (Ա, դ)։ Մի անկեղծ խոստովանություն, որ զգաստության և ինքնագիտակցության օրինակ կարող է ծառայել նույնիսկ մեր օրերում։

Խորենացու Պատմության հատկությունները լրիվ բնորոշելու համար պետք է հիշել և նրա տարապայման սերը դեպի ստու-

դաբանությունը։ Նա ստուգաբանությունը գործ է ածում դարձյալ իբրև օժանդակ աղբյուր՝ տեղերի անունները բացատրելու, նախարարական տոհմերի ծագումը կամ պաշտոնը որոշելու համար և այլն։ Այսպես՝ Հարք գավառի անունը նա առաջ է բերում «Հայր» բառի հոգնակի ձևից (հարք), իբրև թե «Հարք են ասեն բնակեալք ազգի տանն Թորգոմայ (Ա, ժ)։ Գեղեցմանք կամ Գեղեցմանակք անունով Հայկը կոչում է այն բլուրը, որտեղ ընկավ Բելը (Ա, ժա)։ Մարմետ դաստակերտի անունը նա առաջ է բերում պարսկերեն «մար ամատ» (մարը եկավ) բացականչությունից, որով Արտաշեսի զորքերն իմաց տվին Երվանդին Արտաշեսի հաղթական հարձակումը. (Երվանդը Արտաշեսին թշնամանելու համար մար է եղել կոչելիս) (Բ, խզ)։ Սանատրուկ անունը նա բացատրում է իբրև Սանոտայ տուրք (Սանոտը եղել է Սանատրուկի դայակը, որ ձյունի բուքի ժամանակ երեխային երեք օր և երեք գիշեր պահել է ձյունի տակ, ստինքների մեջ, մինչև եկել գտել են (Բ, լզ)։ Բզնունյաց նախարարությունը նա ծագեցնում է Բազից, Մանավազի որդուց (Ա, իբ)։ Սյունիքի Սիսական անունը առաջ է բերում Սյունյաց նահապետ Սիսակի անունից (Ա, ժբ)։ Անգեղ տան անունը առաջ է բերում այդ տան նահապետ Տորքի տգեղությունից (=անգեղեցիկ, Բ, ը)։ Ամատունյաց նախարարության անունը առաջ է բերում պարսկերեն ամետեն (գալ) բայից, իբրև եկվորներ (Բ, ծե)։ Սլկունյաց նախարարության անունը առաջ է բերում նրանց Սլաք նահապետի անունից (Բ, ը)։ Արծրունիք՝ նա մեկնում է իբրև արծիվ ունիք։ Սպանդունիք՝ իբրև սպանդանոցների (ջենարանների) վերակացուներ։ Հավնունիք՝ իբրև բազեակիրներ և բազեակալներ (հավ գրաբար նշանակում է թռչուն)։ Գնունիք՝ իբրև գինի ունիք (Բ, է)։ Նույնիսկ օտարազգի հատուկ անունները նա ստուգաբանում է հայերեն բառերով։ Այսպես՝ Կեսարիա քաղաքի նախկին Մաժաք անունը նա համարում է առաջ եկած Մշակ բառից, այն կողմնակալի անունից, որին Արամը նշանակել էր կառավարիչ իր նվաճած Կապադովկիայի. տեղացիները չկարողանալով Մշակ բառն ուղիղ արտասանել, փոխել են Մաժաքի (Ա, ժա). Աբգար անունը նա մեկնում է «աւագայր», որ այսպես կոչված է իր առավել հեզության և իմաստության, ինչպես և տարիքի պատճառով. Հույներն ու ասորիները չկարողանալով ուղիղ արտասանել, փոխել են Աբգարի (Բ, իզ)։ Մծբին քաղաքի անունը մեկնում է իբր «մնաց մին», այսինքն թե Սանատրուկն այս քա-

դաքը վերաշինելիս իր արձանը կանգնեցրել էր նրա մեջ, ձեռքին մի դրամ բռնած, որ նշանակելիս է եղել, թե այս քաղաքի վրա բոլոր դրամներս ծախսեցի, միայն այս դրամը մնաց (Բ, լդ)։

Այսպիսի օրինակներ էլի շատ կարելի է բերել։ Սրանց ամենամեծ մասն իհարկե անհաջող և բոնապետական աստւածաբանություններ են, գուցե մի քանիսն առնված ժողովրդից, բայց համենայն դեպս պատմության արժանիքը չեն ավելացնում, միայն ցույց են տալիս, որ Պատմահայրը երբեմն ի՛նչ անվավերական աղբյուրների և միջոցների է դիմում պատմական նյութ քաղելու համար։

Պետք է վերջապես կանգ առնենք Խորենացու Պատմության ոտին մի քանի հատկություններ վրա ևս, որոնք մեր այժմյան հայացքով դատապարտելի են։

Խորենացին հաճախ մեջ է բերում նամակներ, որ փոխանակում են իրար մեջ մի կողմից հայոց և մյուս կողմից օտարազգի թագավորները կամ հայոց կաթողիկոսը և հունաց պատրիարքը։ Բոլոր նամակներն էլ աչքի են ընկնում իրենց հակիրճ ոճով և գործնական բնույթով։ Այս նամակներից ոչ մեկը վավերական չէ. նրանց ստեղծել է ինքը, Խորենացին, այն բովանդակությամբ ու այն ձևով, ինչպես որ, նրա կարծիքով, նրանք պետք է գրված լինեին, եթե իրոք գրվեին։ Մեր հաստատողությամբ սա կեղծիք է, խարդախություն, բայց Խորենացու դարում սա մի ընդունված սովորական ձև էր ոչ միայն մեր, այլև օտարազգի մատենագրության մեջ[21]։ Բայց այդ նամակներն ուրիշ հետաքրքրական կողմ ունեն.—նրանցից երևում է, թե ինչպես է Խորենացին պատկերացնում հիշյալ թղթակիցների փոխադարձ հարաբերությունը, ինչպիսի տիտղոսներ են կրում իրենք կամ տալիս են իրենց թղթակիցներին. արդյոք մտերմակա՞ն են այդ հարաբերությունները, թե պաշտոնական, իրրև հավասարնե՞ր են դրում միմյանց, թե իրրև պետը ստորադրյալին կամ ստորադրյալը պետին. սրանցով էլ որոշվում են հայոց թագավորների քաղաքական դիրքն ու նշանակությունը օտար թագավորների նկատմամբ, ինչպես ենթադրում է Խորենացին։

---

[21] *Այս տեսակետով էլ պետք է նայել Նիշնի և Փարպեցու մեջ բերած՝ Միհրներսեհի կամ Հաղկերտի նամակին և Հայոց պատասխանին, որոնք բոլորովին իրարից տարբերվում են երկու հեղինակների մոտ։*

Գարձյալ նա սովորություն ունի իր աղբյուրների մեջ փոփոխություններ ու լրացումներ մտցնել այնպես, ինչպես ինքը կարծում է, թե իսկապես պետք է լիներ։ Լաբուրնայի մեջ գրված է, թե Թադեոս առաքյալը նզեսիա գալով՝ իշխանից Տուբիայի մոտ, խորենացին լրացնում է— հրեա Տուբիա իշխանի մոտ, որի մասին ասում են, թե Բագրատունյաց տոհմից է եղել (Բ, լգ)։ Ուրիշ տեղ խորենացին պատմում է, թե Տիգրանը (Բ) պարսից Արտաշես թագավորին վերադարձնելով նախագահության, հաշտեցնում է իր հետ, նրանից օգնական զորք է առնում, հայոց և պարսից միացած զորքի վրա սպարապետ է նշանակում Ռշտունյաց նահապետ Բարզափրանին և ուղարկում է հռոմայեցիների զորքերի դեմ (Բ, ժԲ)։ Այս պատմությունը խորենացին մանրամասնությամբ և շատ տեղ բառացի առնում է Հովսեպոսից, բայց Հովսեպոսը ամբողջ գործը վերագրում է պարսից թագավորին, Բարզափրանին էլ կոչում է Պարթևաց զորավար. ոչ Տիգրանի անունը կա Հովսեպոսի մոտ և ոչ Բարզափրանի Ռշտունյաց նահապետ լինելը։ Շարունակության մեջ Հովսեպոսը հիշում է թագավորի մի մատռվակի (տակառապետի), առանց անունը տալու։ Խորենացին ավելացնում է— «Գնել ումն տակառապետ արքային հայոց, որ էր յազգէն Գնունեանց»։— Պատմության Բ գրքի իդ և իե գլուխներում խորենացին պատմում է Արշամի կամ Արշամի գործերը, որին համարում է որդի Արտաշեսի, եղբայր Տիգրանի, հայր Աբգարի։ Բայց հայտնի է, որ Արշամ անունով թագավոր չի եղել, այլ այդ բառն ասորերեն Ուքամա (հայերեն թարգմանության մեջ՝ Արշամա) բառն է, որ նշանակում է թուխ և եղել է Աբգար թագավորի մականունը— Աբգար Արշամա=Աբգար թուխ։ Խորենացին այս բառի ծագումն ու նշանակությունը չհասկանալով, կարծել է, թե հատուկ անուն է սեռական հոլովով գրված, և քանի հայերեն լեզվի քերականության հասկացել է Աբգար (որդի) Արշամի։ Սա, իհարկե, արդյունք է սխալ հասկացողության։ Բայց այն գործերը, ինչ որ նա վերագրում է այս Արշամին— ենանոս Բագրատունու հետ գժտվելը Հյուրկանոսի պատճառով կամ Հերովդեսի հետ ընդհարումը քանվորներ տալը մերժելու պատճառով՝ արդեն չեն կարող կոչվել սխալներ. սրանք խորենացին է ստեղծել մասամբ Հովսեպոսից առնելով, մասամբ իրենից հարմարեցնելով։

Այսպիսի օրինակներ էլի կան խորենացու Պատմության մեջ։

Սրանք, իհարկե, աններելի են մեր այժմյան հասկացողությամբ, բայց հեղինակին պետք է դատել իր ժամանակի և շրջավայրի տեսակետից, նրա ժամանակ տիրող սովորությունների համեմատությամբ։ Վերը բերած օրինակները գիտակցական ստեր չեն Խորենացու կողմից հորինված. նրանք պախարներ են՝ հիմնված հավանականության վրա, և Խորենացին բոլոր այս դեպքերում որոշ հիմքեր ուներ՝ նրանց հավանական համարելու։ Մյուս կողմից՝ եթե նրանք հայ ժողովրդի համար պարծանք են, գոնե ուրիշ ազգերի չեն թշնամանում կամ ստորացնում։ Իսկ երբ վերցնում ենք Ղազիշին, որ Վասակին վերածել է մի հրեշի, երբ վերցնում ենք Ագաթանգեղոսին, որի մեջ պատմական ճշմարտությունը խոշորացույցով պետք է փնտրել, երբ վերցնում ենք Փավստոսին, որի մեջ առասպելն ու զերբենականը սերտ հյուսված են պատմական իրականության հետ, երբ վերցնում ենք Փարպեցուն, որ իր վկայությամբ ստեպ ստեպ կարդալով Կորյունի գրվածքը, տեղեկացել է գրերի գյուտի պատմությանը և սակայն Մեսրոպի դերը գրերի գյուտի գործում հավասարեցրել է զրոյի, այն աստիճան նվաստացրել է նրան,— ապա սրանց համեմատությամբ Խորենացին շատ և շատ բարձր է ճշմարտասիրության կողմից։ Պակաս չեն նման օրինակներ և օտար պատմագիրների մեջ։ Հրեա պատմագիր Հովսեպոսը նկատում է «Մինչևիսկ ականատես հռոմեական հեղինակները մեծ չափով աղավաղել են փաստերի իսկությունը և, խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը, կամ ներբողներ են գրել ի հաճույս Հռոմի և կամ չարախոսություններ նրա թշնամիների մասին»[22]։ Ակադ. Մանանդյանը Պլուտարքոսի «Կենսագրություններ» որակում է իբրև կասկածելի և անվստահելի, «որոնց մեջ չարամտորեն տրված են Տիգրան Բ-ի և նրա պետության ֆեոդալական կազմակերպության այլանդակ ծաղրանկարներ»[23] Մեր ժամանակ էլ քիչ չեն այսպիսի պակասություններ նույնիսկ գիտական գրվածքներում։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ, ՈՃԸ։ Խորենացու լեզուն արվեստական է և բարձր, որով շատ պանապանվում է Փավստոսի և Փարպեցու գրեթե ժողովրդական լեզվից։ Նա փայլում է ճոխությամբ, բառերի արվեստական, բայց պատշաճ ու ներդաշնակ դասավորու-

---

[22] *Ակադ. Մանանդյան, Տիգրան երկրորդ, էջ 8։*

[23] *Նույն տեղը, էջ 9։*

թյամբ, կանոնավոր քերականությամբ թե՛ ատուգաբանության և թե՛ շարահյուսության մեջ. չնայելով, որ երբեմն շատ երկար պարբերություններ է գործածում, ոչ մի անգամ խոսքի տրամաբանական կապը չի խզվում, այլ ստացվում է մի բարդ, բազմահարկ և գեղեցիկ դասավորված կառուցվածք. Շաղկապների, կրճատված նախադասությունների նպատակահարմար գործածությունը ոչ միայն խոսքը պարզ և հասկանալի է դարձնում, այլև ընթերցողին միջոց է տալիս հետևելու հեղինակի մտածողության եղանակին. Նա լեզվի վարպետ է և քերականության ընձեռած բոլոր միջոցները հմտորեն ծառայեցնում է իր մտքերն արտահայտելու.

Նա հունաբան հեղինակ է. Հունաբանությունը երևան է գալիս՝ հունական կաղապարով, նախդիրներով բառեր ստեղծելու մեջ, ինչպես արտասանություն, առարկություն, արտասահմանել, պարածածկել, ներբողական, վերաբանություն, աշխարհագրություն (ինչպես գիտություն), հարցասիրություն և այլ շատ բառեր. Բայց հունաբանությունը առավելապես արտահայտվում է շարադասության մեջ, որոնցից մի քանիսը հիշենք. Գործ է ածում հայցական հոլովով ենթակա անորոշ դերբայի մոտ («Սիրելի էր ինձ... առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել». «Եվ ասէին գոգցես երկրին Հայկազանց զայս լինել»). Երկրորդական նախադասությունը հարաբերական դերանվան հետ գլխավորից առաջ դնել և հարաբերյալի հոլովը համաձայնեցնել հարաբերականի հոլովի հետ («Զի՞նչ ինձ է գիրս յայս արդեօք իցէ բան սիրելի քան թէ որ յաղագս սորա էին դովեստք և պատմութիւնք յերկարել». «Անմահ յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քո գալոց ենք ազգք»). Երկրորդական նախադասությունների տեսակ-տեսակ կրճատումներ համաձայն հունարենի ոգուն («Իսկ մերոյն ոչ այսպիսի ինչ խորհելոցն՝ մնացին յիշատակիալ ի վերջինսն». «Եւ այսոցիկ այսպէս կարգելոց՝ սկսայց և որ ինչ զկնի այսոցիկ». «Գայլ առ Տրդատ մեր թագաւոր, եղբարց նորա առ Շապուհ երթալով». «Զսկզբնատիպն այսորիկ ասի ուրախացուցանել»). Հայցականի սեռի խնդիրներ՝ կրավորական բայերի մոտ («Ի շահատակելն իւրում հարկանի յումեմնէ սակերք զգուխն». «Ի զվանէրն ի խորհրդակցացն հարցանիլ՝ յերկարէ ժամս ինչ զպատասխանիսն»). Անցյալ դերբայը իբրև որոշիչ գործածելն այնտեղ, որտեղ սպասելու էր անորոշ դերբայ իբրև ասացված («Ի մտելոց անուանց

Նոցա ի քարտէս արքունի» «Ցոլ գտելոց շահմարանաց յարեաւ գօրքն ի վերայ»)։ Առանձնապես նա սիրում է քերականորեն իրար հետ կապ ունեցող բառերը, ինչպես որոշիչ և որոշյալ, հատկացուցիչ և հատկացյալ, բայ և մակբայ իրարից բաժանել միջանկյալ բառերով։ Օրինակ. «Զանդուլ հոգւոյն ի վերայ իմացուածոց քոց շարժմունս»։ «ի քաջէն զրկեալ ճովուէ և հովուակցէ»։ «ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տերութեան»։ «Ոչ արտաքուստ ուսեալ այսոցիկ ի ներքո ածեալ խորհեցան օժանդակութիւնս իմաստից»։ «կամիմ զնոցա կշռամբութեան յարմարել զբանս»։ «Զանդրէն քոյոյն յուսալով զարձ» և այլն։

Խորենացին պատմելու հատուկ ձև ունի. նա շարունակ խոսում է իր մեկենասի և ընդհանրապես ընթերցողի հետ. երբեմն նա իր գնահատությունն է անում, երբեմն իր ուրախությունը կամ վիշտը արտահայտում, երբեմն կասկած հայտնում իր գրածի կամ գործածած աղբյուրի ստուգության մասին, երբեմն ընթերցողին հրավիրում է զարմանալ իր մի հայտող գյուտի վրա, այնպես որ նա միշտ ընթերցողի աչքի առաջ է և ընթերցողին այնպես է թվում, թե ինքը ոչ թե գիրք է կարդում, այլ լսում է մի հեղինակավոր ծերունու կենդանի զրույցը. կարծես մի հոգեկան կապ է ստեղծվում ընթերցողի և հեղինակի մեջ։ Այս պատճառով նրա պատմությունը կենդանի է դառնում և հետաքրքրական։ Նրա ոճը գեղարվեստական լինելով հանդերձ նաև իմաստալից է. ամեն մի բառ մտածված է, ավելորդ խոսքեր չկան նրա մեջ, ուստի պահանջվում է լուրջ ուշադրություն՝ նրա ամեն մի խոսքը հասկանալու համար։ Այս է պատճառը, որ Խորենացուն որքան շատ ենք կարդում, այնքան նոր բաներ ենք գտնում նրա մեջ։

Նա գրում է խոր համոզմամբ, և երբ մի անցք կամ անձնավորություն նրա վրա խոր տպավորություն են թողնում, նրա գրածն էլ այսպիսի տեղերում անչափ ազդու է լինում և խորապես ազդում է ընթերցողի վրա։ Արճիճի ծանրությամբ ճնշում է մեր հոգին Տրդատ թագավորի մահվան գլուխը, որին կցել է հեղինակը և իր կրած զրկանքները (Բ, ղբ). նուլնպես խիստ տպավորություն է թողնում Ողբը, որի մեջ մեր հայրենիքի թշվառությունը և հեղինակի անձնականը խառնվում են իրար։

Բայց Խորենացու ոճը պատմության բոլոր ընթացքում միանման չէ. կան մասեր, որտեղ գեղարվեստը և քերթողական արվեստը բարձր աստիճանի են հասած. կան ավելի շատ տեղեր,

երբ նրա ոճը հասարակ է, բայց միշտ արվեստական։ Երրորդ գիրքն սկսելիս, երբ պետք է խոսի իրեն ժամանակակից կամ ժամանակով մոտ անցքերի մասին, նախապես հայտնում է, որ այս մասի պատմությունը դրելու է «հասարակաց խօսքով»։ Հեղինակը նուրբ ճաշակ ունի և պատշաճության ղգացմունք. այս պատճառով նկատվում է զարմանալի ներդաշնակություն պատմության նյութի և նրա արտահայտության մեջ. ինչ բնավորություն ունի նյութը, նույն բնավորությունն է ստանում և ոճը։ Երբ խորենացին նկարում է պատկերներ, տեսարաններ, ստացվում է լայնածավալ, հանդարտ, գեղարվեստական ոճ՝ նմանություններով, փոխաբերություններով զարդարված։ Երբ պատմում է սովորական անցք, ստացվում է գործնական մարդու կարճ, անպաճույճ, արագընթաց ոճ։ Երբ դատողություն է անում կամ գնահատում, նկատվում է փիլիսոփայական դրվածքի ծանր, մանվածապատ, մթին ոճ։ Ուստի սխալ է այն ընդհանրացած կարծիքը, թե խորենացին համառոտասեր հեղինակ է. նա գիտե տեղը թե՛ համառոտաբան, գրեթե ժլատ լինելու և թե մանրապատում երկարաբանելու։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ։ Երբ մենք ի նկատի ենք առնում այս բոլոր ներքին և արտաքին հատկությունները, որոնք բոլորը կրում են դրոշմը հաստատ համոզմունքի, լայն աշխարհայացքի, լուրջ քննադատության, բարձր կրթության, առողջ հայրենասիրության, հետաքրքիր աշխատասիրության և գեղարվեստական ճաշակի, այն ժամանակ մեզ հասկանալի կդառնա, թե ինչո՛ւ խորենացու Պատմությունը տասնյակ դարերով գերիշխող է եղել հայոց պատմական մատենագրության մեջ։ Այսպիսի ընդունակություններ, գոնե մասամբ, չի ունեցել հաջորդ դարերում ոչ մի հայ պատմագիր, ուստի խորենացին մնացել է բարձր վեհության մեջ անհամեմատելի։ Նրա ազդեցությունը հայոց գրականության վրա դարերի ընթացքում դժվար է որոշել, բայց դա պետք է շատ մեծ լինի։ Հաջորդ պատմագիրներից շատերը (Սեբեոս, Ղևոնդ, Հովհաննես կաթողիկոս, Ասողիկ և այլն) ընդունել են նրա ստեղծած պատմագրության տիպը։ Նրա Պատմության քննական բովից անցած պատմական անձնավորություններն ու անցքերը նվիրագործվել են և առանց նոր քննության ուղղակի ընդունվել են բոլոր հաջորդներից։ Թագավորների շարքը, նրանց գործերը, ժամանակագրությունը—խորենացունն են, որոնք կըր-

կրնվել են հաջորդաբար դարերի ընթացքում։ Նույնիսկ խոր ազդեցություն թողած պիտի լինի այս Պատմությունը և հայ քննթերցող դասակարգի մտքերի, աշխարհայացքի և ճաշակի վրա, նրա նկարագրած ազգային հերոսները, ինչպես Հայկը, Արամը, Տիգրանը և այլն, ազգի սիրելի անձերը դարձան, ազգն իրեն ճանաչեց ու ղգաց իբրև սերունդ այդ հերոսների. ազգի ինքնաճանաչությունը, գիտակցական հայրենասիրությունը հիմնվեցին Խորենացու Պատմության վրա, որովհետև պատմություն չունեցող ժողովուրդն ազգ չէ։ Հայ ժողովրդի մտքի ու սրտի վրա ունեցած ազդեցության տեսակետից Խորենացու հետ մասամբ կարող է համեմատվել Եղիշեն, իսկ քննադատական ոգու կողմից էլ Փարպեցին իր Պատմությամբ և Ղազով. իսկ բոլոր գծերով նրա հետ գոնե մոտավորապես համեմատվող ուրիշ պատմագիր չենք ունեցել։ Նա լի է առավելություններով, լի է և պակասություններով. բայց պակասությունները նրա ապրած դարինն են և նրա ունեցած թերի և սխալ աղբյուրներինը, իսկ առավելությունները նրա սեփական արժանիքն են կազմում։

Ներկայումս Խորենացու Պատմության նշանակությունը շատ է փոխվել. նա այլևս չի կարող ծառայել իբրև հայոց պատմության դասագիրք, իբրև միակ աղբյուր Հայաստանի հնագույն ժամանակների պատմության, իբրև անսխալ հեղինակ, որի ամեն մի խոսքը պատգամ էր հաջորդ հեղինակների համար։ Եվ այս շատ բնական է, նախ այն պատճառով, որ Խորենացին գործ է ածել բազմաթիվ աղբյուրներ, և եթե այս աղբյուրները այժմ էլ կան և մեզ մատչելի են, էլ մենք կարիք չենք զգա Խորենացու միջնորդությանը դիմելու, այլ հենց նրա աղբյուրին կդիմենք։ Չի հնանում այն հեղինակը, որ գրում է իբրև ժամանակակիցը, առանց աղբյուրի, որքան էլ նա գունավորած կամ աղավաղած լինի իրողությունը, ինչպես են մեր մեջ Կորյունը, Եղիշեն, Սեբեոսը։ Իսկ այն հեղինակը, որ աղբյուրներից է օգտվել, վաղ թե ուշ պետք է հնանա։ Երկրորդ՝ այն պատճառով, որ հինգերորդ դարից մինչև այսօր, ինչպես ամեն դիտություն, այնպես էլ պատմություն շատ է զարգացել և փոխվել թե՛ ըստ բովանդակության և թե՛ ըստ աղբյուրների։ Պատմությունն այժմ պետք է պարունակի այնպիսի բաներ, որոնք առաջ բոլորովին անտես էին առնվում, ինչպես ժողովրդի անտեսական վիճակը, արդյունաբերությունը, հարաբերությունն իշխող և ստորադրյալ դասակար-

գերի մեջ, պետության եկամուտներն ու ծախքերը, առևտուրը, հաղորդակցության միջոցները և այլն, և այլն։ Աղբյուրների նկատմամբ էլ ահագին առաջադիմություն է եղած. գտնվել, ուսումնասիրվել և հրատարակվել են բազմաթիվ հին պատմական գրվածքներ զանազան ազգերի, որոնք մեկը մյուսին լրացնում են կամ ստուգում։ Կատարվել են պեղումներ, որոնք երևան են հանել հին կենցաղի զանազան պարագաները, հին ազգերի սեպագիր արխիվները, դասավորվել են հին թագավորների դրամները, որոնք անկասկածելի վկաներ են նրանց գոյության և նրանց ապրած ժամանակի. կարդացվել են ամենահին ժամանակների պատմական հիշատակարանները—հիերոգլիֆները, սեպագրությունները և այլ վիմական արձանագրությունները՝ ժամանակակիցների ձեռքով կատարված. լեզուների համեմատական ուսումնասիրությունը լայն հնարավորություն է տվել ծանոթանալու զանազան ազգերի ծագման, նրանց կրած ազդեցություններին, նրանց շփմանն ուրիշ ազգերի հետ։ Եթե մենք մի ժամանակ միամիտ կարդում էինք հայ թագավորների անունները— Արշակ, Վաղարշակ, Արտաշես, Տրդատ, Խոսրով, Վռամշապուհ և այլն, և նրանց համարում էինք զուտ հայ թագավորներ, այժմ գիտենք, որ այդ բոլոր անունները պարթևական են, որ, ամենաքիչը, նրանք պարթևական կուլտուրայի ենթարկված անձեր են։ Եթե մենք կարդում ու գործ էինք ածում իբրև զուտ հայերին բառեր—աշխարհ, թագավոր, նախարար, սեպուհ, ազատ, ասպետ, զորք, զենք, սպարապետ, սպասք, սաղավարտ, դրոշակ և այլ այսպիսի հարյուրավոր կենցաղական, ռազմական, կրոնական, քաղաքական բառեր,— այժմ գիտենք, որ դրանք բոլորը իրանական՝ պարսկերեն բառեր են և, ուրեմն, որ Հայաստանը հնումը սաստիկ ենթարկված, կարելի է ասել՝ կլանված է եղել պարսկական կուլտուրայով կյանքի բոլոր բնագավառներում։

Հասկանալի է, ուրեմն, որ եթե այսքան արմատապես փոխված են պատմության բովանդակությունն ու աղբյուրները, մեզ չի կարող այժմ բավարարություն տալ Խորենացու Պատմությունն իբրև պատմություն այժմյան նշանակությամբ, քանի որ թե՛ նրա բովանդակությունը սահմանափակ է,— թագավորների, նախարարների, հայրապետների գործունեության շուրջը,— և թե աղբյուրները, թերի, պատահական ու կցկտուր են, մանավանդ ուղղադրված ըստ հեղինակի կարծիքի։ Բայց նա իր նշանակությունը

պահպանել է ուրիշ կերպ—իբրև մեկն այն աղբյուրներից, որոնցից այսօր օգտվում է գիտությունը պատմագրական և այլ նպատակներով։ Այս տեսակետից իրենց լիուլի արժեքը պահպանում են Խորենացու Պատմության այն մասերը, որոնց միակ աղբյուրն ինքն է, այսինքն Հայկազյան շրջանի մեծագույն մասը (բացի ելուզադրություններից), ժողովրդական երգերը և սրանց հիման վրա հեղինակի ստեղծած պատմությունը, Վաղարշակի պատմությունը, որտեղ նախարարական տոհմերի ծագման պատմությունն է բերված, որքան գիտցել կամ մակաբերել է հեղինակը, Երվանդի, Արտաշեսի պատմությունները, Վաղարշ, Խոսրով, մասամբ Տրդատ։ Իսկ երրորդ գիրքն ամբողջապես, սկզբի մասը, մինչև Արշակունյաց թագավորության քաժանումը՝ իբրև կորենկատիվ Փավստոսի պատմության, իսկ հաջորդ մասն իբրև ժամանակակից հեղինակի ինքնուրույն գործ, բացի փոքր չափով Կորյունի ազդեցությունից։ Արժեքից զուրկ են իբրև պատմական աղբյուր Խորենացու պատմության այն մասերը, որ նա քաղել կամ հարմարեցրել է ուրիշ աղբյուրներից՝ երբ նրանք մեզ էլ մատչելի են, ինչպես Եվսեբիոս, Հովսեպոս, ս. գիրք, Լաբուբնա, Փերմելիանոս և այլն։ Մյուս կողմից՝ այս Պատմությունը կարևոր նշանակություն ունի՝ ծանոթանալու համար հինգերորդ դարի ամենազարգացած և առաջադեմ հեղինակի հայացքներին, ճաշակին, իդեալներին. այս տեսակետից նա երբեք չի հնանա և նրա նշանակությունն օրեցօր կաճի։ Իսկ նրա մատենագրական արժանավորություններն այնքան մեծ են, որ խոստովանում են նրա երջայլ հակառակորդներն անգամ։

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես այս առաջաբանի սկզբում ասացինք, ավելի քան քառասուն բանասեր, հայ կամ օտարազգի, զբաղվել են Խորենացու և նրա Պատմության քննությամբ, ընդարձակ կամ համառոտ գրվածքներով։ Անհնար է այստեղ հաշիվ տալ այս քննությունների մասին, մանավանդ որ շատերը չենք էլ կարողացել կարդալ[24]։ Այս քննությունները շոշափել են գլխավորապես երեք

[24] Շատ օգտակար գործ կլիներ, եթե հայերեն գրականությամբ հարուստ գրադարանները, ինչպես մեր Գիտական մատենադարանը, ձեռնարկեին մի ժողովածու կազմելու, բոլոր ծանոթ քննությունների մանրամասն բովանդակությունն ամփո-

Հարց. 1) Պատմության գրության ժամանակը, 2) նրա արժանահավատությունը և 3) նրա աղբյուրները։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Գրության ժամանակի մասին դեռ Լա Կրոզը տասնութերորդ դարի առաջին կեսում կարծիք հայտնեց, թե այս պատմությունը պետք է գրված լինի իններորդ կամ տասներորդ դարում, Բագրատունյաց Հայաստանում։ Ի միջի այլոց նա տպագույց էր բերում Բաբերդի կամ Բայբերդի հիշատակությունը, որ ըստ Պրոկոպիոսի՝ շինված է Հուստինիանոսի ձեռքով վեցերորդ դարում։ Սակայն Լա Կրոզի կարծիքն արձագանք չգտավ։ Անցյալ դարի ութսունական թվականներին Գուտշմիտը բրիտանական Հանրագիտարանում դեռևս հոդվածում վճռական կերպով պնդում է, թե Պատմությունը պետք է գրված լինի յոթներորդ դարի առաջին կեսում, 634—642 թվականների միջև, և նրա հեղինակը ոչ թե Մովսես Խորենացին է, հինգերորդ դարի հռչակավոր թարգմանիչը, այլ նրա դիմակի տակ թաքնված մի անհայտ անձ։ Գուտշմիտն իր այս կարծիքը հիմնում էր մի քանի փաստերի վրա, օրինակ. Պատմության մեջ հիշատակվում են Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք, այնինչ հայտնի է, որ այդ բաժանումները սահմանված են Հուստինիանոս կայսրի ձեռքով 596 թվին։ Դարձյալ հիշատակվում է Պատմության մեջ, թե Շապուհ Բ Հունաստան արշավելիս հասել է մինչև Բյութանիա (Դ, ժդ), այնինչ հայտնի է, որ Սասանյանները մինչև այդտեղ հասել են առաջին անգամ 608 թվին։ Նույնպես Գուտշմիտ խորենացուն էր վերագրում հին Աշխարհացույցը, որ հորինված պետք է լինի յոթներորդ դարում։ Բայց բուն պայքարը Խորենացու Պատմության ուշ ժամանակի գործ լինելու մասին սկավեց 1892 թվին ֆրանսիացի հայագետ Կարրիերի ելույթով, որ մի շարք ուսումնասիրություններ մեջ ջանաց ցույց տալ, թե Հայոց Պատմության հեղինակն օգտվել է Սոկրատի եկեղեցական Պատմության և նրանց կցված Սեղբեստրոսի վարքի հայերեն ըն-

---

փելով, կարևորներն ամբողջապես արտատպելով։ Այլապես Խորենացիով մատնագիտորեն զբաղվողները դուրկ են մնում այս քննությունների մեծ մասից, նրանց անմատչելիության պատճառով։

դարձակ և համառոտ թարգմանություններից, որոնք կատարվել են յոթներորդ դարի վերջերում, ս. Բարսեղի վարքից (Սոկրատի միջոցով), Մալալայից (Զ դարի վերջը), Ջատկական ժամանակագրությունից (է դարի սկզբներում), Պրոկոպիոս Կեսարացուց (Զ դարի երկրորդ կեսում), Կարրիերի ուսումնասիրությունները լույս տեսան Վիեննայի «Հանդես ամսօրյայում» 1893—1894 թվականներում։ Երեք տարի հետո, 1897-ին Մեսրոպ վ. Տեր-Մովսեսյանը Վաղարշապատում հրատարակեց Սոկրատի Եկեղեցական Պատմության ու նրան կից Սեղբեստրոսի վարքի հայերեն կրկին թարգմանությունները (Մեծ Սոկրատ և Փոքր Սոկրատ)։ Հրատարակիչն ընդարձակ առաջաբանում աշխատում էր ապացուցել, թե Խորենացին չի ճանաչել Սոկրատին և ոչ էլ որևէ կերպ օգտվել է նրա հունարեն բնագրից կամ հայերեն թարգմանությունից, բայց օգտվել է Սեղբեստրոսից, «թեև ոչ մեր ձեռքը հասած հայերեն թարգմանությունից» (էջ ԽԹ)։ «Երբ կրճատվում էր Մեծ Սոկրատը, համառոտողը խոնարհվելով նրա (այսինքն Խորենացու) մեծ հեղինակության առաջ, նույնիսկ իր բնագիրը ըստ այնմ է փոխում, շարունակ օգտվելով Խորենացուց» (էջ ԶԶ)։ Բայց գրքի լույս տեսնելուց հետո երկու բանասեր միմյանցից անկախ, Միաբանը («Արարատ», 1897 թ., էջ 422) և Խալաթյանցը («Հանդես ամսօրյա», 1898 թ.), ցույց տվին Խորենացու Պատմության մեջ մի ընդարձակ հատված, որ բառացի առնված էր Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից։ Ահա այս հետաքրքրական հատվածը։

Խորենացին ս. Մեսրոպին ներբողելիս գրում է (Գ, կէ).

«Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն առի ի նոցա վարս տենչի գտանել երբէք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր։ Վասն սի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարսափիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ։

Այլ վասն զի զբոլոր նորա ուղղութիւնս ոչ եմ բաւական ասել՝ ի հանգիստ նորա նշխարացն դարձուցից զբանս»։

Ընդարձակ Սեղբեստրոսի մեջ բառացի նույնն է, հետևյալ տարբերություններով. այստեղ պակասում են «մտօք ծննդական»

և «ուսուցանելով անձանձրոյթ» խոսքերը, որ Խորենացու հավելվածներն են՝ բնորոշելու համար ս. Մեսրոպին իբրև հնարող հայերեն գրերի և ուսուցանող հայ ժողովրդի. «Լաւակամ»-ի փոխարեն Սեղբեստրոսի վարքն ունի բարեկամ, «պայծառ»-ի փոխանակ ունի տրամապայծառացեալ, որ տառացի թարգմանություն է հունարեն dia-lampo բառի և անկասկածելի ապացույց, թե վարքն անմիջական թարգմանություն է հունարենից, իսկ Խորենացին նրանից օգտվելիս կոկ բառ է գործածել «տրամապայծառացեալ» անսովոր բառի փոխարեն։ Հատվածի վերջում էլ վարքն ունի «առ ի մասնաւորականն նորա գործեցեալս դարձուցից զբանս» (էջ 699), որ Խորենացին փոխել է ս. Մեսրոպի մարմնի թաղման։

Այս գլուխն այնպիսի մեծ իրարանցում առաջ բերեց բանասիրության մեջ, որ շատ տատանվող մտքեր հարեցին Կարրիերի կարծիքին, նույնիսկ Սոկրատի հրատարակիչ Մեսրոպ վարդապետը «Արարատի» մեջ (1898 թ., էջ 165—173) մի հոդված տըպեց, որով հրաժարվում էր իր գրքի առաջաբանում հայտնած կարծիքից, թե Խորենացին չի օգտվել Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից։

Սակայն Կարրիերի և նրա համախոհների կարծիքը չմնաց առանց քննադատության և հերքման։ Թողնելով շատերը, հիշենք միայն Նորայր Բյուզանդացուն և Կոնիբերին։ Առաջինը մի շարք հոդվածներում («Հայերեն հին գրականության խնդիրներ», «Մշակ», 1898 թ., №№ 192, 193, 195, 203, 216, 217, 1899 թ., №№ 16, 17) ի միջի այլոց անկասկածելի կերպով ապացուցեց, որ ոչ թե Խորենացին է օգտվել Համառոտ Սեղբեստրոսից, այլ Համառոտողն է օգտվել Խորենացուց (ինչպես պաշտպանում էր և Մեսրոպ վարդապետը). իսկ Մեծ Սեղբեստրոսի մասին կարծիք հայտնեց, թե ավելի հին թարգմանություն է։ (Նրա հոդվածների շարքն ընդհատվեց և այս վերջին կարծիքը մնաց չապացուցված)։

Ավելի հետաքրքրական է անգլիացի հայագետ Կոնիբերի ելույթը նրանով, որ սկզբում հարած լինելով Կարրիերի կարծիքին, վերջը, երկար ուսումնասիրություններից հետո նա թողեց այդ կարծիքը և դարձյալ Խորենացու պատմությունը ճանաչեց 6 դարի գործ։ Նա 1901 թվին գերմանական մի ամսագրում տպագրեց մի հոդված, (որի հայերեն թարգմանությունը լույս տեսավ

«Հանգես ամսօրյայում», 1902 թ. հունվարի և մարտի համարներում), որի մեջ համառոտից քննության ենթարկեց Խորենացու այն հատվածները, որոնք համարվում էին փոխառություններ Մեծ և Փոքր Սոկրատից, Սեղբեստրոսի վարքից, Մալալայից և առհասարակ այն աղբյուրներից, որոնց վրա մատնանշել էին Կարրիերը և նրա հետևողները և եկավ հետևյալ եզրակացություններին. Փոքր Սոկրատից և Փոքր Սեղբեստրոսից Խորենացին չի օգտվել, ընդհակառակը, սրանց համառոտողն է օգտվել Խորենացուց (նույն կարծիքը հայտնել էր և Ն. Բյուզանդացին և սրանից առաջ Մեսրոպ վարդապետը)։ Մեծ Սոկրատից և Մեծ Սեղբեստրոսից Խորենացին արդարև օգտվել է, բայց սրանք չեն թարգմանված է դարում, Փիլոն Տիրակացու ձեռքով, ինչպես սխալմամբ ընդունված էր, այլ շատ վաղ, դեռ հինգերորդ դարում, գուցե հենց Մ. Խորենացու ձեռքով. թարգմանության լեզուն հիշեցնում է Ե դարի ավագ թարգմանիչների լեզուն (Նույն միտքը հայտնել էր և Ն. Բյուզանդացին, բայց հոդվածների շարունակությունն ընդհատվել էր)։ Մալալան չի ծառայել Խորենացուն իբրև աղբյուր. սրանք երկուսն էլ, իրարից անկախ, օգտվել են հնագույն հունարեն աղբյուրից, որ դեռ չորրորդ դարում գոյություն ուներ։

Այս հերքումները բավական փարատեցին կասկածը Պատմության ուշ ժամանակի գործ լինելու մասին։ Այս կարծիքը պաշտպանողները նույնիսկ հայտնեցին, թե կարրիերի բերած հիմքերն արդեն կորցրին իրենց նշանակությունը և թե այս Պատմությունը ուշ ժամանակի գործ պետք է համարել արդեն ուրիշ փաստերի հիման վրա։

Իբրև այսպիսի նոր փաստ պետք է համարել Ն. Մառի հայտնած կարծիքը նորագյուտ Մար-Աբասի մասին արած զեկուցման մեջ։ Նա ասում է. «Խորենացու Պատմության գրվելու ժամանակը որոշելու ամենալավ հիմքերն են, նախ՝ պատմության ընդհանուր ոգին, որ զգալի կերպով ազգային է, և երկրորդ՝ որ հեղինակը սիրահար է հունական ուսման և գիտության, և երրորդ՝ որ նա ընտրում է այնպիսի պատմական աղբյուրներ, որոնք հայտնապես ասորական ծագումն ունեն կամ ասորական մշակություն։ Այսպիսի հիշատակարանը, հասկանալի է, չի կարող վերագրվել հինգերորդ դարին, որ հայոց գրականության առաջին դարն էր, այլ բավական ավելի ուշ ժամանակի, երբ բացառապես ասորական ուղղությունը ավանդության կարգն էր ան-

ցել և նրան փոխարինող հունասիրությունը գրականության մեջ կարողացել էր առաջ բերել ազգային ուղղություն։ Խորենացու պատմության ժամանակի այս ընդհանուր որոշմանը համապատասխանում է... ի միջի այլոց և լեզուն, որով գրված է»։ Ուրիշ տեղ նույն զեկուցման մեջ Ն. Մառն ասում է, թե Խորենացին, իբրև հունասեր, արհամարհում է ասորական ուսումը, ջանք է գործ դնում նվազեցնելու ասորիների նշանակությունը, որպեսզի կռվի ասորական գիտության համբավի հետ, որ դեռ չէր թուլացել Հայաստանում։

Բայց այս հիմքերը ոչ միայն չեն ապացուցում Պատմության ուշ ժամանակի գործ լինելը, այլ, ընդհակառակը, կարող են ապացույց համարվել նրա հինգերորդ դարի գործ լինելուն։ Եթե արդարև ազգային ոգին, որ փայլում է Խորենացու Պատմության մեջ, արդյունք է հունասիրության, ապա այս հունասիրությունը հայերի համար բավական էր միայն հինգերորդ դարում, երբ եկեղեցիները դեռ չէին բաժանված և Հայաստանից խումբ-խումբ երիտասարդներ էին գնում Հունաստան (Բյուզանդիոն, Ալեքսանդրիա) հունարեն սովորելու և հունական կրթություն ստանալու։ Այս բանին վկա են Կորյունը, Խորենացին, Ղ. Փարպեցին (որ ինքն էլ Հունաստանում էր ուսել և նույնը վկայում է Գյուտ կաթողիկոսի մասին և Թղթի մեջ բերում է «մյուս թարգմանիչ» միջադեպը)։ Բայց հաջորդ դարից սկսած, երբ երկու եկեղեցիների մեջ անջատում ընկավ, հայերն այլևս խորշում էին Հունաստանից, իբրև մի երկրից, որտեղ ուսանողները կարող էին վարակվել քաղկեդոնականությամբ։ Գոնե մեզ չեն հասել տեղեկություններ՝ Զ—է—Ը դարերում դեպի Հունաստան կատարված ուսումնական ճանապարհորդությունների մասին։ Մյուս կողմից՝ եթե Խորենացու մեջ նկատվում է ազգային ոգի, նույն ոգին մեծ չափով նկատվում է և Ղ. Փարպեցու մեջ, իսկ սրանք երկուսը իրար շատ մոտ են ժամանակով։ Ասորական ծագում կամ մշակություն ունեցող աղբյուրներին գալով՝ իրողությունը ցույց է տալիս, որ Խորենացին խորշում է նրանցից և ընտրում է հունական աղբյուրներ, և այս բանը նա հիմնավորում է՝ մի առանձին գլուխ նվիրելով հունական աղբյուրների գերազանցությանը (Ա, բ)։ Երեք-չորս ասորական ծագում կամ մշակություն ունեցող աղբյուրներ գործածելը, այն էլ հայերեն կամ հունարեն թարգմանությամբ, չի հակասում հեղինակի սկզբունքին։ Բացի սրանից, մի

հակասություն է նկատվում վերոհիշյալ կարծիքների մեջ, այն է, որ Խորենացին սիրահար է հունական ուսման և դիտության, բայց քնարում է այնպիսի պատմական աղբյուրներ, որոնք հայտնապես ասորական ծագում կամ մշակություն ունեն. Խորենացին բնականապես պետք է խուսափեր այսպիսի աղբյուրներից:

Պետք է առհասարակ նկատել, որ Ն. Մառը տատանվում է Խորենացու Պատմության ժամանակի վերաբերմամբ: Սկզբում նա այս Պատմությունը համարում էր Ե դարի գործ («О начальной истории Армении Анонима. «Византийский Временник», 1894 г., стр. 270 և հաջորդ). Հետո նա հայտարարեց, թե Խորենացու մեր ձեռքը հասած Պատմությունը խմբագրություն է Զ—է դարի կամ ավելի ուշ ժամանակի (Քննադատություն Խալաթյանցի Армянский эпос-ի, 1898 թ., էջ 2): Վերջապես 1925 թվին այս Պատմությունը (մեր ձեռքը հասած խմբագրությամբ) նա համարեց Ը—Թ դարի գործ (Вступительная лекция в Лазаревском Переднеазиатском Институте, էջ 3, 5):

Մենք կարծում ենք, թե Պատմության գրության ժամանակի հարցը պետք է սպասված համարվի այն բազմաթիվ հին և նոր ապացույցներից հետո, որ մենք բերել ենք «Խորենացու առեղծվածի շուրջը» մեր աշխատության առաջին հավելվածում: Բավական է միայն նկատի առնել, որ Սեբեոսի պատմության մեջ և նրա աղբյուր Մար-Աբաս Մծուրնացու մոտ այս Պատմությունից երեք քաղվածք է բերված և մի քաղվածք Պիտոյից գրքից, որ Խորենացու թարգմանությունն է ճանաչված: Իսկ որ նրա Պատմությունն սկզբնական ձևով մեր ձեռքը չի հասել, այլ նրա խմբագրությունը է կամ Ը դարից, այս էլ մենք ցույց ենք տվել նույն աշխատության երկրորդ հավելվածում: Այստեղ ուզում ենք ավելացնել երկու նոր ապացույց խմբագրական ձեռնմխության այս Պատմության մեջ: Առաջինը վերաբերում է Տրդատ թագավորի մահվան և թաղման նվիրված մի անվավերական գրվածքի, որ Ղ. Ալիշանը հայմամուրքներից հանելով գետեղել է իր Հայապատումի մեջ (բ մասն, հոդված 76, էջ 104—105): Ղ. Ալիշանն այս հատվածը համարում է վավերական՝ Խորենացու գրածը, որին մենք համամիտ չենք: Թեպետ այս հատվածը Խորենացու Պատմության մեր ձեռքը հասած բազմաթիվ ձեռագրերից ոչ մեկի մեջ չկա, բայց Թովմա Արծրունին գիտե այս հատվածը: Նա գրում է. «Սրբոյ թագաւորին և քաջ նահատակին

Տրդատայ բարիոք պատերազմեալ... փոխի երկրաւոր աշխատութեանցս ի Հանգիստ, մեծաւ պատուով, թագաւորական շքեղ և երևելի դիւզարդութեամբ, որպես ընթեռնուք (ուղղելի՝ ընթեռնումք) ի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի... որ պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն», էջ 58)։ Ուրեմն Թովման ոչ միայն գիտե Տրդատի փառավոր թաղումը, ինչպես նկարագրված է վերոհիշյալ հատվածում, այլև շատ ճիշտ նշանակում է Խորենացու Պատմության մեջ այն գլուխը, որի մեջ նա կարդացել է այդ նկարագրությունը, այսինքն Բ Գրքի վերջին գլխում, որտեղ այժմ մենք կարդում ենք Տրդատի մահվան մասին, բայց առանց ոչ մի խոսքի նրա շքեղ հուղարկավորության մասին։ Սրանից եզրակացնում ենք, որ Թովմայի ձեռքին եղել է Խորենացու Պատմության այնպիսի օրինակ, որի մեջ գետեղված է եղել Տրդատի թաղման վերաբերյալ այդ հատվածը, որ այժմյան մեզ հայտնի օրինակներում չկա։ Արդյոք ընդմիջարկությո՞ւն է եղել այս հատվածը Թովմայի օրինակում, թե սկզբից ևեթ եղել է, բայց հետո հանվել է՝ այս հարցում նշանակություն չունի. էականն այն է, որ Պատմությունը ենթարկվել է խմբագրության կամ ընդմիջարկվել է (որ ավելի հավանական է) կամ կրճատվել։

Երկրորդ ապացույցն է ս. Սահակի տեսիլը և նրա մեկնությունը, որ գտնվում է 1668 թվին գրված մի ձեռագրի մեջ, որ քննական հրատարակության մեջ նշանակված է y տառով։ (Տե՛ս այս հրատարակության առաջաբանը, էջ իգ և բնագրում՝ էջ 354, ծանոթ. ու. 18)։ Դեռ քանի՜-քանի ուրիշ այսպիսի ընդմիջարկություններ կամ կրճատումներ են կատարված Ե—ԺԲ դարերի ընթացքում, որոնց մասին չունենք փաստացի տվյալներ։

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Խորենացու Պատմության արժանահավատության մասին արդեն լա Կրուզը բացատրական կարծիք էր հայտնել դեռ ԺԸ դարում, երբ այս Պատմության առաջին լիակատար լատիներեն թարգմանությունն էր տպագրվում Վիստոն եղբայրների ձեռքով։ Հետո եղան մի քանի մասնակի քննություններ այս մտքով, բայց ամենից հիմնավոր քննադատությունն այս մասին լույս տեսավ

1876 թվին գերմանացի հմուտ գիտնական Գուտշմիդի ձեռքով[25], Հայերեն չգիտենալով, նա Խորենացու Պատմությունը քննեց ըստ լատինական (Վիստոնների) և ֆրանսական (դը Ֆլորիվալի) թարգմանությունների։ Չնայելով դրան, նրա հմտալից և անաչառ քննությունը լավագույններից մեկը, եթե ոչ ամենալավը պետք է համարել ուրիշ բազմաթիվ քննադատությունների մեջ։

Գուտշմիդը միառմի քննադատության է ենթարկում Խորենացու հիշած աղբյուրները, ցույց է տալիս՝ ո՞րն է նրանցից կասկածելի, ո՞րը իրական, ի՞նչպես է օգտվում Խորենացին այս աղբյուրներից, ի՞նչպես հաճախ աղավաղում է նրանց։ Ցույց է տալիս Խորենացու Պատմության թույլ կողմերը. նա չի քաշվում Խորենացուն երբեմն ուղղակի ստախոս կոչելուց, բայց խոստովանում է նրա արժանավոր կողմերը և նրա նշանակությունը հայոց ազնըվականության (նախարարական տոհմերի) պատմության համար և ընդհանրապես հայ ազգի մեջ ինքնաճանաչություն զարթեցնելու մեջ։ Խորենացու գիտակցական շեղումներն իր բնագրերից նա հաճախ բացատրում է նրա ժամանակ գոյություն ունեցող մատենագրական սովորություններով։ Նա մեծ արժեք է տալիս Պարթև թագավորների ցանկին Խորենացու մոտ, Խորենացուն ընդհանրապես լավատեղյակ է համարում Պարսկաստանին վերաբերյալ հարցերում, իսկ Հռոմին և Բյուզանդիային վերաբերյալ հարցերում անտեղյակ։ Նա բարձր է գնահատում ժողովրդական երգերն ու առասպելները, որ պահպանել է Խորենացին։ Իր եզրակացությունը Գուտշմիդը ամփոփում է հետևյալ կերպով. «Խորենացու Պատմությունը, նրա ստահոդ ցիտատների և, չնայելով դրան, նրա բովանդակության հարատև պիտանության տեսակետից, կարելի է համեմատել Ռավեննայի Աշխարհագրության կամ Մանմուրի Բրիտանական Պատմության հետ։ Որ նա իրեն առաջադրված գործն աջողությամբ գլուխ է բերել՝ երևում է այն չըլսված արդյունքից, որ նրա Պատմությունն ունեցավ։ Ոճից անկախ՝ նա այս հետևանքին հասավ՝ իբրև միակ արխիվը ավանդությունների և առասպելների, որոնք սիրելի էին հայ ազգին, և իբրև ոսկե գրքույկ հայ ազնվականության... Գալով նրա պիտանությանն իբրև պատմական աղբյուր, պետք է ասել, որ նա

[25] Von Gutschmid, Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren, Leipzig, 1876.

ընդարձակ չափով օգտագործել է հայ ժողովրդական առասպելները և հայ աղնվականության տոհմական ավանդություններ։ Գալով նրա իսկապես պատմական աղբյուրներին՝ նա ընդհանրապես օգտվել է պարսկական և այլ արևելյան աղբյուրներից։ Հունական պատմություններից նա առել է հապիվ թե ավելի բան, քան մենք այժմ ունենք... Ով որ կամենում է Խորենացուց օգտվել պատմական հետազոտությունների համար, պետք է կցկցված առասպելները վերածի անընդհատ պատմության և այն ժամանակ կստանա իրական տեղեկություն ավանդությունների մասին, թեպետ ոչ արտաքուստ այնքան շքեղ, բայց իսկապես պիտանի և օգտագործելի աղբյուր։ Մենք համեմատ դեպս հավատացած ենք, որ... Խորենացու հաճախակի հավաստիացումները, թե ինքը ոչինչ իրենից չէ հնարել՝ բուն պատմական նյութի վերաբերմամբ ճշմարտության վրա են հենվում»։

Ամենից խիստ, բայց նվազ հմտալից է Գարագաշյանի քննադատությունը Խորենացու արժանահավատության նրան է պատկանում ամենաընդարձակ քննությունը Խորենացու ամբողջ Պատմության նա իր քննական պատմության մեջ մի կողմ է դրել Խորենացու Պատմությունն իբրև պատմական աղբյուր, այլ օգտվել է օտարազգի աղբյուրներից, իսկ Տրդատի մահից հետո մինչև Արշակունյաց թագավորության բաժանումը՝ Փավստոսից։ Բայցևայնպես նա շարունակ դիմում է Խորենացուն և սրա հաղորդած տեղեկություններով լրացնում է օտարազգի պատմիչների կամ Փավստոսի ավանդածները, այս վերջինին կոչելով արիական թել՝ Տրդատից մինչև Արշակունյաց բաժանումը ժամանակագրությունը որոշելիս, թեպետ Փավստոսը ժամանակագրություն չունի, իսկ Խորենացունը գտնում է այս մասում ճիշտ և օգտվում է նրանից։ Միայն նա երկու անհաջող ուղղում է մտցնում այստեղ ժամանակագրության մեջ (տե՛ս Սինխրոնիկ աղյուսակները)։

Շատ ավելի նպաստավոր է Խորենացու նկատմամբ Ն. Մառի և Ն. Ադոնցի վերաբերմունքը, չնայելով որ երկուսն էլ Խորենացու Պատմության ժամանակը 5 դարից ներքև են իջեցնում։ Ն. Մառը Խորենացու մասին հատուկ ուսումնասիրություն չի գրել, բայց նա իր բազմաթիվ հոդվածների մեջ հարյուրավոր անդամներ հիշում է Խորենացուն, հիմնվում է նրա հաղորդած տեղեկությունների վրա և առհասարակ հարգանքով է խոսում նրա մասին։

Նա ճանաչում է Խորենացու Պատմությունն իբրև հիմնական աղբյուր Հայոց պատմության և հայկական ավանդությունների[26]։ Ուրիշ տեղ նա ասում է, թե Խորենացու Պատմությունը վատ են հասկացել և ավելի ևս անիրավացի կերպով դատապարտել[27]։ Նույնպիսի հարգանքով է վերաբերվում Խորենացուն և Ն. Ադոնցը իր աշխատությունների մեջ, մանավանդ «Армения в эпоху Юстиниана» մոտալից հետազոտության մեջ։ Նա գտնում է, որ Խորենացին բոլոր հայ մատենագիրներից ավելի լիակատար տեղեկություններ է պարունակում հայոց նախարարությունների մասին։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորենացու Պատմության աղբյուրների քննությամբ առաջին անգամ զբաղվեց Վ. Լանգլուան 1861 թվին և նրանից հետո Գուտշմիտ՝ վերը հիշված ուսումնասիրության մեջ 1876 թվին։ Երկուսն էլ քննում էին այն աղբյուրները, որոնք հիշված են Խորենացու կողմից իր Պատմության մեջ։ Նրանցից խիստ տարբերվում է քննության մեթոդով Գր. Խալաթյանցը, որ երկու ընդարձակ աշխատությունների մեջ քննության ենթարկեց Խորենացու ամբողջ Պատմությունը աղբյուրների տեսակետից և իր քննությունների հիման վրա եկավ բոլորովին նոր եզրակացություններու։ Պետք է նախապես ասել, որ Խալաթյանցը, Կարրիերի հոդվածների ազդեցության տակ, հաստատ համոզմունք էր կազմել, թե Խորենացու Պատմությունը Ը—Թ դարերի գործ է, և այս սխալ տեսակետով է առաջնորդվել իր ամբողջ աշխատության մեջ, որ, իհարկե, պետք է հասցներ սխալ եզրակացությունների։

Առաջին աշխատությունը, «Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского» վերնագրով, լույս տեսավ 1896 թվին։ Այս գործում նա քննության է առնում Խորենացու Պատմության մեջ վիպական կամ վիպական համարված մասերը, այսինքն՝ 1) այն գլուխները, որտեղ Խորենացին բերել է անփոփոխ ժողովրդական առասպելները զանազան անունների տակ (երգ, առասպել, վիպասանք և այլն)։ 2) Այն գլուխները, որտեղ Խորե-

[26] Тексты и разыскания по Кавказской филологии, 1925 г., I, էջ 109։
[27] Նույն տեղում, էջ 113։

նային գրում է իր Պատմությունը՝ օգտվելով այս առասպելներից, այսինքն նրանց մեկնաբանելով կամ ճշմարտելով, և 3) այն գլուխները, որոնք բանասերների կարծիքով ծագած են ժողովրդական աղբյուրներից։ Խալաթյանցը այս երեք տարբեր ծագում ունեցող նյութերն անխտրաբար համարում է ժողովրդական վեպ և քննադատում է։

Գիրքը բաղկացած է երկու մասից. առաջին մասն է հետազոտությունը. այստեղ Խալաթյանցը գլուխ առ գլուխ հետևում է Խորենացու Պատմության, բերում է բնագիրները (ըստ էմինի թարգմանության), մանրամասն քննում է դրանք, աշխատելով ցույց տալ Խորենացու աղբյուրներն այս մասերում։ Երկրորդ մասում բերվում են նյութերը, այսինքն աղբյուրները. այստեղ զուգահեռաբար դետեղված են՝ քննության ենթակա հատվածը Խորենացուց և նրա դեմ՝ հատվածներն այս և այն հեղինակից կամ հեղինակներից, որոնք Խալաթյանցի կարծիքով իբրև աղբյուր են ծառայել Խորենացու այդ հատվածին։ Բառացի նմանությունները շարված են նոտր գրով։

Նրա եզրակացություններն են.

1. Խորենացին բացի իր հիշած աղբյուրներից գործ է ածել և ուրիշ աղբյուրներ, որ չի հիշում և սրանք նրա կարևորագույն աղբյուրներն են։ Առաջին տեսակի «հայտնի» աղբյուրների կարգին են պատկանում ըստ Խալաթյանցի՝ Մար-Աբաս Կատինան, Աբյուդենոսը, Բերոսոսը, Կեփազիոնը, Ալեքսանդր Բազմավեպը, Նպիփան Կիպրացին, Ոլիմպիոդորոսը։ Սիբիլլան, Ուղյուպը, Բարդածանը, Արիստոն Փեղղացին, պարսկական մատյանները, ժողովրդական վեպը։ Երկրորդ տեսակի՝ «գաղտնի» աղբյուրներին են պատկանում հետևյալ գրվածքները, որոնք իրապես Խորենացուն բազմակողմանի նյութեր են մատակարարել վեպի համար. թարգմանականներ— ս. գրքի զանազան մասերը, Հովհաննու Հայտնությունը, Եվսեբիոսի ժամանակագրությունը և եկեղեցական պատմությունը, սուտ Կալլիսթենեսի վարքը Ալեքսանդրի, Փիլոնը, Լաբուբնան, Եփրեմ Ասորին, Գրիգոր Նազիանզացին, և ինքնուրույն հայերեն—Ագաթանգեղոսը, Փավստոսը, Եզնիկը, Ղ. Փարպեցին, Սեբեոսը, Անանիա Շիրակացին, Անանունը (=Սեբեոսի Պատմության Ա գլուխը), Ղևոնդը։ Բացի սրանցից, նաև հատվածներ Հոմերոսի Ոդիսականից, Դիոդորոս Սիկիլիացուց,

Հովսեպոսից, Կղեմես Ալեքսանդրացուց, Պրոկոպիոս Կեսարացուց և Սվեդայի այն աղբյուրից, որից օգտվել է Խորենացին։

2. Ինչ որ Խորենացին համախ մեջ է բերում իբրև ժողովրդական վեպ՝ ընդհանրապես գրական ծագում ունեն. դրանք մեծ մասամբ ավելի կամ պակաս ճարտարությամբ վերամշակումներ են ս. գրքի մոտիվների և պատկանում են Խորենացուն։

Այս կերպով Խալաթյանցը առաջինը և միակն եղավ, որ հերքեց ժողովրդական վեպի գոյությունը Խորենացու Պատմության մեջ, այն վեպի, որ բոլոր քննադատներն ընդունել են և համարել են ամենաարժեքավոր մասը նրա Պատմության։ Բայց պետք է ասել, որ այս մասում Խալաթյանցը ինքն իրեն հերքում էր։ Իր գրքում նա զանազան տեղերում ստիպված ընդունում է, թե այս կամ այն վեպը կամ առասպելը «կարելի է», «հավանական է», որ ժողովրդական լինի։ Երբ այսպիսի հատվածները նրա գրքի զանազան տեղերից ամփոփում ենք, տեսնում ենք. որ նա ժողովրդական է համարում հետևյալ հատվածները.— «Երկնէր երկին», «Հեծաւ արի արքայն Արտաշէս», «Մինչ դու գնացեր», «Եթէ դու յորս հեծցիս», «Հատուած գնացեալ», «Մանկան նիրհելոյ», «Տենչայ Սաթենիկ տիկին»,— այսինքն դրեթե այն բոլոր կտորները, որոնք Խորենացին բառացի բերում է իբրև ժողովրդական վեպ։ Ուրեմն, իսկապես, Խալաթյանցը հերքել է իբրև վեպ այն հատվածները, որոնք կամ Խորենացու մեկնողություններն են կամ բանասերների կողմից վեպ համարվածներ։

Հասկացողություն տալու համար, թե Խալաթյանցը ինչպիսի աղբյուրներից ծագած է համարում Խորենացու այս կամ այն վիպական հատվածը կամ ինչպես է նա ս. գրքի մոտիվները վերամշակում իբրև վեպ, բերենք մի երկու օրինակ։

Եսթերի գրքում պատմվում է, թե պարսից Արտաշես թագավորը իր Ասթինե կնոջ վրա բարկանալով, իրենից հեռացնում է և կամենում է ուրիշ կին առնել։ Ամբողջ թագավորության մեջ փնտրում են գեղեցիկ աղջիկներ, որոնցից նա պետք է ընտրեր մեկին։ Պալատում բարձր պաշտոն է ունեցել Մուրդքե անունով մի հրեա, Նաբուգոդոնոսորի ժամանակ գերի տարված հրեաներից. նա իր տանը պահած և մեծացրած է լինում իր մի որբ ազգականուհուն, Եսթեր անունով։ Նրան էլ ուրիշ շատ գեղեցկուհիների թվում, ամիսներով դարմանում են, գեղեցկացնելու բոլոր միջոցները գործ են դնում։ Արտաշեսի ընտրությունն ընկնում է

այս Եսթերի վրա, նրան կին է առնում, դարձնում է Թագուհիների Թագուհի։ Թագավորն ունեցել էր մի բարձր պաշտոնյա Համան անունով, ծագումով մակեդոնացի, որի ձեռքումն է եղել երկրի կառավարության գործը։ Համանը գերի տարված հրեաների դեմ ոխ ունենալով (որովհետև Մուրդքեն չէր կամենում իրեն երկրպագել ուրիշների նման), խորհուրդ է տալիս Թագավորին՝ բոլոր հրեական ժողովուրդը, իբրև վնասակար և անհնազանդ ազգ, մեծից մինչև փոքրը մի օրում կոտորել։ Թագավորը համաձայնում է, նրա անունից գրավոր հրաման է արձակում Թագավորության բոլոր կողմերը, պատվիրելով սահմանված օրում բոլոր հրեաներին անխտիր կոտորել, բնաջինջ անել։ Մայրաքաղաքի հրեաներն ընկնում են սարսափի մեջ, փրկության մի ելք են մտածում։ Մուրդքեն Եսթերին հորդորում է՝ իր ժողովրդի փրկության համար աշխատել, թեկուզ կյանքը վտանգի ենթարկելով։ Մտածում կազմում են ծրագիր։ Եսթերը մի օր, շքեղ զարդարված, գնում մըտնում է Թագավորի ատենական դահլիճը, մտնում է և իսկույն ուշաթափվում։ (Առանց հրավերի այդ դահլիճը մտնողի պատիժը մահ էր)։ Թագավորը շփոթվում է գեղեցկուհի կնոջը ուշաթափված տեսնելով, իջնում է գահից, գալիս է ուշաթափված Եսթերի մոտ, ոսկի գավազանը մեկնում է նրա վրա (իբրև նշան, թե նեռում է նրան՝ առանց թույլտվության ներս մտնելը), աշխատում է նրան ուշքի բերել։ Եսթերն ուշքի է գալիս և կրկին ուշաթափվում։ Վերջապես Թագավորին երկար հուզելուց հետո, երբ բոլորովին ուշքի է գալիս, Թագավորի հարցին, թե ինչ է խնդրում, ասում է, թե խնդրում եմ այսօր Համանի հետ ինձ մոտ ընթրիքի գաս։ Թագավորը խոստանում է, Համանը հրճվում է։ Ընթրիքի ժամանակ Եսթերը խնդրում է, որ հաջորդ օրն էլ գան, այդ օրն էլ խնդրում է՝ երրորդ օրը դարձյալ գալ։ Այս անգամ լավ կերուխումից հետո, Արտաշեսը հարցնում է Եսթերից. «Ի՞նչ է խնդիրդ, ասա՛, կկատարեմ, մինչև Թագավորությանս կեսը կտամ»։ Այն ժամանակ Եսթերը բաց է անում իր սիրտը. նա ասում է. «Այս չար մարդու (այսինքն Համանի) պատճառով ես և իմ ամբողջ հրեա ժողովուրդը կոտորի ենք դատապարտվել. այս մի չարը վերանա մեջտեղից, և մենք բոլորս հանգիստ կգտնենք»։ Թագավորը հուզված դուրս է գալիս սենյակից, գնում է ծաղկոցը։ Համանը նրա բացակայությամբ ընկնում է Եսթերի ոտները, աղաչելով խնայել իր կյանքը։ Այս ժամանակ ներս է մտնում Թագավորը.

տեսնելով Համանին Եսթերի գահույքի առաջ՝ բարկանալով ասում է. «Այժմ այնքան հանդգնեցար, որ իմ տան մեջ ուզում ես կնո՞ջս բռնաբարել»։ Հրամայում է Համանին ցից հանել։ Այնուհետև Արտաշեսը Համանի տեղ նշանակում է Մուրդքեին, և սրա ու Եսթերի խնդրով նոր հրովարտակ է արձակում, որով խափանում է առաջին հրովարտակի գործադրությունը, և այսպիսով հրեաները մեծ վտանգից փրկվում են։

Ըստ Խալաթյանցի՝ Եսթերի այս պատմության վերամշակությամբ հորենացին ստեղծել է Արտաշես—Սաթենիկի վեպը, որի բովանդակությունը հետևյալն է. Ալանները հարձակվում են Հայաստանի վրա կողոպուտի նպատակով։ Արտաշեսը նրանց վանում է մինչև Կուր գետը, գերի է վերցնում Ալանների թագավորի որդուն։ Թագավորի դուստրը, Սաթենիկ, գալիս է գետի ափը և թարգմանի միջոցով դիմում է Արտաշեսին գետի մյուս ափում և խնդրում է ազատել գերի ընկած պատանուն, քաջի ցեղն անզավակ չդարձնել կամ ինչպես ստրուկ չծառայեցնել և հավիտենական թշնամություն երկու քաջ ազգերի մեջ հաստատել։ Արտաշեսը հավանում է Սաթենիկին, իր դայակ Սմբատին ուղարկում է Ալանների թագավորի մոտ՝ Սաթենիկին կնության խնդրելու։ Թագավորը շատ մեծ վարձանք է պահանջում։ Արտաշեսը հեծնում է իր գեղեցիկ սև ձին, անցնում է գետը, ոսկեօղ շիկափոկ պարանով կաշկանդում է Սաթենիկին, շատ ցավեցնելով փափուկ օրիորդի մեջքը, և շտապով փախցնում բերում է իր բանակը։ Հարսանիքի ժամանակ ոսկի և մարգարիտ էր տեղում անձրևի պես— շաղ էին տալիս ժողովրդի համար։ Վերջը այս Սաթենիկը սիրահարվում է Մուրացյանների նահապետ Արգամին, իսկ Արտավազդը, Սաթենիկի անդրանիկ որդին, սպանում է Արգամին։

Ո՞ւմ մտքով կանցներ, թե Եսթերի հիշյալ պատմությունը հորենացուն իբրև նյութ ծառայած լինի Արտաշես—Սաթենիկ այս վեպն ստեղծելու։ Բայց Խալաթյանցը պնդում է, որ այս այսպես է, և բերում է մի շարք նմանություններ Եսթերի պատմության և հայոց վեպի մեջ։ Այսպես՝ 1) երկուսի մեջ էլ թագավորները կոչվում են Արտաշես։ 2) Երկուսի մեջ էլ գեղեցիկ օտարազգի թագուհիներ են, նման անուններով, այնտեղ Աստինէ (Արտաշեսի առաջին կինը), այստեղ Սաթենիկ։ 3) Երկուսի մեջ էլ խոսք է լինում շքեղ հարսանիքի, առատ ոսկու, մարգարտի, ակնեղենների մասին։

4) Վեպի մեջ Արտաշեսը ոսկեօղ պարանը ձգելով բռնում է Ալանների աղջկան և բերում է իր բանակը, իսկ այնտեղ Թագավորն իր ոսկի գավազանը մեկնում է Եսթերի վրա, որ վերկենալով գնում է ննջարանը (?)։ 5) Երկուսի մեջ էլ մի-մի հրեա կա արքունիքում բարձր պաշտոնով, այնտեղ Մուրդքեն, այստեղ Սմբատ Բագրատունին (որ հրեական ծագում ուներ)։ 6) Երկուսի մեջ էլ մի-մի օտարազգի պաշտոնյաներ կան, Թագավորների երկրորդները, այնտեղ մակեդոնացի Համանը, այստեղ մեդացի Արգամը։ 7) Երկուսի մեջ էլ ճաշ է տրվում. այնտեղ ճաշի ժամանակ Թագավորի երկրորդը մեղադրվում է իբրև դավադիր Թագավորի կյանքի դեմ, այստեղ նույնպիսի մեղադրանք Արգամի դեմ. երկու դեպքումն էլ մեղավորներն իրենց ընտանիքների հետ միասին կոտորվում են։ 8) Երկուսի մեջ էլ իբրև աղբյուր ցույց են տրված պարսից մատյանները, իսկ պատմությունները ճանաչված են իբրև այլաբանություն։

Իրավ, պետք է զարմանալ Խորենացու հանճարեղության վրա, որ, Խալաթյանցի ասելով, օգտվելով պարսից Արտաշեսի պատահաբար արտասանած մի խոսքից,— «այժմ այնքան հանդըգնեցար, որ իմ տան մեջ ուզում ես կնոջս բռնաբարե՞լ»՝ սրանից ստեղծել է մի գրավիչ սիրային ռոման, բայց ավելի զարմանալի է Խալաթյանցի սրատեսությունը, որ այս երկու պատմությունների մեջ նկատել է կապ և Արտաշես—Սաթենիկ վեպը ծագեցրել է Եսթերի պատմությունից։

Այս դեռ բավական չէ։ Դուրս է գալիս, որ Խորենացին իր շարադրած վեպի համար առանձին-առանձին բառեր փոխ է առել ս. գրքի զանազան տեղերից։ Այսպես՝ Արտաշեսի ոսկեօղ շիկափոկ պարանի ոսկեօղ բառի համար օգտվել է պարսից Արտաշես Թագավորի ոսկի գավազանից. շիկափոկ բառի համար օգտվել է Ելից գրքից, որտեղ ասված պատվիրում է Մովսեսին՝ վկայության խորանի վարագույրները պատրաստել շիկակարմիր մորթից։

Խալաթյանցի այս գրքի մասին մի մանրամասն ու հմտալից քննություն գրեց Մ. Աբեղյանը («Հայ ժողովրդական առասպելները», Վաղարշապատ, 1901 թ.), որի մեջ հերքեց Խալաթյանցի հիմնական միտքը, թե Խորենացու մեջ բերած իբր ժողովրդական վեպը մեծ մասամբ Խորենացու գրական մշակություններն են ս. գրքի զանազան մոտիվների և, ընդհակառակը, ապացուցեց այդ վեպերի իսկական ժողովրդական լինելը, նույնիսկ ցույց տվեց

նրանցից մի քանիսի ծագումը՝ իբրև հին, միջազգային առասպելների հայկական վարիանտներ (ինչպես Վահագնի երգը, Արտավազդի բռնվելը քաջքերից), կամ իբրև ժողովրդական հավատալիքներ օձերի, վիշապների, նրանց թագավորների, նրանց կռիվների մասին։

Իսկ Խալաթյանցի այս գործի գիտական բնույթը որոշելու համար մեջ ենք բերում Ն. Մառի հետևյալ գնահատությունները։ «Այս աշխատության մեջ երևան են գալիս հեղինակի կողմից մեծ աշխատություն և բծախնդրություն դեպի Մովսես Խորենացու մատենագրական կերպարանքը»[28]։ «Գ. Խալաթյանցը մերժում է Գողթան երգիչների գոյությունը այն հիման վրա, որ բացի Խորենացուց ոչ ոք նրանց մասին չի խոսում, և դարձյալ նա տարօրինակ է համարում, թե ինչո՞ւ այս երգերը պահպանված պետք է լինեին միմիայն Գողթնում։ Գ. Խալաթյանցի կարծիքով Խորենացին պետք է հաղորդեր միայն այն, ինչ որ ասում էին նրան ժամանակակից կամ ավելի նոր պատմագիրները, և այն ժամանակ Գ. Խալաթյանցը կասեր, թե Խորենացին նրանցից է արտագրել և ապրել է նրանցից հետո»[29]։ Մի ուրիշ տեղ Ն. Մառն ասում է. «Մի՞թե պարզ չէ, որ հեղինակը փոխանակ հաղթանակի, մեծ փորձանք է պատրաստում իր հիմնական մտքի համար և վարկաբեկում է նրան, երբ իբրև ապացույցի դիմում է մեր ցույց տվածի նման անվստահելի փաստարկումների։ Արդյոք այս բանը գործին ավելի չի՞ վնասում, քան օգուտ բերում։ Բայց այստեղ մի ուրիշ վտանգ էլ կա։ Կուտակումն այնպիսի փաստերի, որոնք վատ են հիմնավորված և հաճախ ամենևին չեն հիմնավորված՝ սպառնում է ստեղծել սխալ հասկացողության նոր մթնոլորտ հայոց անցյալի մասին, և այս մթնոլորտը խտանալով և արմատ գցելով, կարող է կորստաբեր լինել հայագիտության զարգացման համար, քան ավանդական սխալ հայացքը Խորենացու պատմական երկասիրության և անձի մասին»[30]։

Խալաթյանցի երկրորդ աշխատությունը՝ «Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского» վերնագրով, լույս տեսավ 1903 թվին։ Հեղինակն այստեղ նույն մեթոդով

---

[28] Քննություն «Армянский эпос»-ի, էջ 14։

[29] Նույն տեղը, էջ 15։

[30] Նույն տեղը, էջ 22։

քննության է առնում Խորենացու Պատմության մնացած՝ ոչ-վիպական գլուխները։ Այստեղ էլ գրքի առաջին մասում բնորում է Խորենացու բնագիրը, աշխատում է ցույց տալ Խորենացու հաղորդած տեղեկությունների «Հայտնի» և «գաղտնի» աղբյուրները, իրական կամ երևակայական, իսկ գրքի երկրորդ մասում զուգահեռաբար դնում է Խորենացու հայերեն բնագիրը և քաղվածքներ այն հեղինակներից, որոնք, Խալաթյանցի կարծիքով, իբրև աղբյուր են ծառայել Խորենացուն՝ տվյալ տեղեկության համար։ Պատահում են դեպքեր, որ Խորենացու պատմածը համապատասխանում է Խալաթյանցի ցույց տված աղբյուրի տեղեկության ճշրակացությունը պարզ է.— Խորենացին արտագրել է այս-ինչ (Հայտնի կամ գաղտնի) աղբյուրից։ Բայց շատ անգամ պատահում է, որ Խորենացին և նրա ենթադրված աղբյուրը իրար չեն համապատասխանում։ Այսպիսի դեպքերի համար Խալաթյանցը ունի շաբլոնական բացատրություն—Խորենացին այլայլել, անճանաչելի դարձնելու չափ կերպարանափոխել է իր աղբյուրը, որպեսզի չնկատվի, թե նա օգտվել է այդ աղբյուրից։ Այսպես վարվում է Խորենացին մանավանդ, երբ օգտվում է Կորյունից, Ագաթանգեղոսից, Փավստոսից, Ղազար Փարպեցուց, որպեսզի ցույց տա, թե ինքը նրանցից անկախ է և հինգերորդ դարի հեղինակ է, Սահակի և Մեսրոպի աշակերտ, Փարպեցու հիշած հռչակավոր փիլիսոփա Մովսեսը։

Այնպես որ, ըստ Խալաթյանցի, Խորենացին իր կողմից ոչ մի նոր բան չի տալիս, այլ ինչ որ պատմել է, առել է ուրիշներից, իր կողմից աղբյուրներն այլայլելով, մտացածին և դիտավորյալ հավելումներով։ «Այս կերպով,— ասում է Խալաթյանցն իր եզրակացության մեջ,—բոլորովին տապալվում է հավատը դեպի Խորենացին, իբրև արժանահավատ պատմիչ և հարկն ստիպում է հրաժարվել (հայոց պատմության) ամենահեղինակավոր աղբյուրներից մեկից, որ ավելի քան հազար տարի սիրապետում էր հայոց պատմական գրականության մեջ... Բայց սա չի նշանակում, թե Խորենացու գրվածքն այժմ պետք է կորցնեն որևէ նշանակություն։ Ոչ բնավ։ Նրա գրվածքը, իբրև մատենագրական հիշատակարան, պահպանում է շատ կարևոր, կարելի է ասել, առաջնակարգ նշանակություն» (եր. 377)։ Այնուհետև Խալաթյանցը շռայլ դովեստներով երկինք է բարձրացնում Խորենացուն նրա լեզվի, ոճի, մատենագրական ճաշակի, նույնիսկ նրա ստեղծած

գաղափարի համար—ստեղծելու հայոց նախնական ժամանակի պատմությունը ազգային ոգով։—Խալաթյանցի գիրքը կարդացողի վրա այս գովեստները թողնում են դամբանական ճառի տպավորություն։

Քննել Խալաթյանցի այս գրվածքը չի մտնում մեր ծրագրի մեջ, սակայն չենք կարող մատնանիշ չլինել մի քանի՝ սկզբունքային նշանակություն ունեցող կետերի վրա նրա այս գրվածքում։

Նա անպայման համոզված լինելով, թե Խորենացու Պատմությունը Հ—Ի դարերի գործ է, ըստ այսմ իբրև Խորենացու աղբյուր ցույց է տալիս հայ և օտարազգի հեղինակներ, որոնք իսկապես Խորենացու Պատմությունից հետո են գրվել և ոմանք իրենք են գործածել Խորենացու Պատմությունն իբրև աղբյուր։ Այսպիսի երևակայական աղբյուրներ են օտարազգի հեղինակներից՝ Պրոկոպիոս, Համառոտ Սոկրատ և Սեբեեոսրոս (հայերեն թարգմանությամբ). հայ հեղինակներից՝ Ղ. Փարպեցին[31], Սեբեոսը, Սեբեոսի Մար-Աբաս Մծուրնացին (Անանունը), Անանիա Շիրակացին, Ղևոնդը։ Երբ միայն այս հանգամանքը նկատի առնենք, Խալաթյանցի ենթադրություններից մեծ մասը կտապալվի և գոնե Սեբեոսի, Մար-Աբաս Մծուրնացու, Շիրակացու և Ղևոնդի նկատմամբ Խորենացին հանդիսանում է ոչ թե բանաքաղ, այլ աղբյուր, որից նրանք օգտվել են։

Անանիա Շիրակացին ունի մի ժամանակագրություն Ադամից սկսած մինչև 687 թվականը։ Իբրև աղբյուր նա հիշում է Մովսես Խորենացուն և Անդրեասին։ Էջմիածնի ձեռագրում էլ առանձին երեսի վրա խոշոր տառերով գրված է. «Մովսէսի Խորենացւոյ և Անդրեասի», որից հետո գալիս է մի ընդարձակ հատված, Ադամից մինչև ջրհեղեղը, մոտ երկու երես, որ բառացի առնված է Մ. Խորենացու Պատմությունից։ Խալաթյանցին հայտնի է այս իրողությունը, նա չի կարող հերքել ո՛չ Անանիայի կազմած ժամա-

---

[31] Դեռ քանի որ Խալաթյանցը Խորենացուն ն դարի հեղինակ էր ճանաչում, նա ապացուցում էր, թե Ղ. Փարպեցին է օգտվել Խորենացուց։ (Տե՛ս «Վազար Փարպեցի և գործք նորին», Մոսկվա, 1883 թ.)։ «Բայց այժմ,— ասում է նա «Армянский эпос»-ում (էջ 115, ծանոթ.),— երբ դուրս եկան նորագույն աշխատանքներ Խորենացու ապրած ժամանակի մասին, փոխառության հարցը պետք է հակառակ կերպով որոշվի»։ Այսինքն գողն առաջ Փարպեցին էր, իսկ այժմ Խորենացին։

նակագրությունը և ոչ Մ. Խորենացուց հատվածը նրա գրվածքում։ Իսկ Անանիան ապրել է է դարի վերջերում։ Այս գրական անհերքելի փաստը, թե Խորենացու Պատմությունը Անանիայից առաջ է գրված, կարծես պետք է համոզեր Խալաթյանցին, թե սխալ է Խորենացու Պատմության ժամանակն իջեցնել մինչև Ը—Թ դար, որ հիմնված էր Կարրիերի մի քանի (այժմ հերքված) ուսումնասիրությունների վրա։ Բայց Խալաթյանցն այսպես չի վարվում։ Նա հեշտ միջոց ունի այս անախորժ փաստն անարժեք դարձնելու. նա ասում է. «Խորենացուց... փոխ առնված հատվածը կարելի է ճետռ է կցված Անդրեասի արդեն պատրաստ գրվածքին՝ իբրև հարմար ներածություն» (եր. 53)։ Իսկ ապացո՞ւյց—ոչ մի։ Ուրեմն ըստ Խալաթյանցի դուրս է գալիս, որ Շիրակացին օգտվում է Անդրեասից՝ սկսած ջրհեղեղից, իսկ Ադամից մինչև ջրհեղեղը, որ նրա ժամանակագրության սկիզբն էր կազմում, նա չի գրում, բաց է թողնում այն հույսով, թե ապագայում մի մարդ կծնի Մովսես Խորենացի անունով, որ կգրի ժամանակագրություն Ադամից մինչև Նոյ, և մի բարի մարդ այս ժամանակագրությունը կառնի կկցի իր գրած ժամանակագրության սկզբին և կլրացնի բաց թողած տեղը։ Կարելի՞ է ենթադրել այսպիսի բան։ Այսպիսի կամայական և աշառու վերաբերմունքը դեպի գրավոր հաստատուն փաստերը, դեպի Խորենացին արատ է գցում Խալաթյանցի ամբողջ աշխատության վրա և նրան վարկաբեկում է ընթերցողի աչքում ու կասկածելի դարձնում նրա մյուս ենթադրություններն ու կարծիքները ևս։

Նույնպիսի կամայականություն նկատում ենք նաև Խալաթյանցի այն ենթադրության մեջ, թե երբ Խորենացին տարբերվում է իրական կամ կարծեցյալ աղբյուրից, նա դիտմամբ է այլայլում իր աղբյուրը, որպեսզի թաքցնի ընթերցողից այդ աղբյուրը։ Այս ենթադրությունը նա կրկնում է շատ անգամ (տե՛ս էջ 129, 192, 219, 229 և այլն)։ Փոխանակ լուրջ կերպով ուսումնասիրելու հարցը, գտնելու իսկական պատճառը տարաձայնության Խորենացու և նրա աղբյուրների մեջ, Խալաթյանցը դիմում է այս հեշտ և անպատասխանատու միջոցին, մանավանդ որ այս կերպով ավելի սուվեր կգցի Խորենացու բարեխղճության վրա։ Բայց ճի՞շտ է արդյոք նրա այս անապացույց ենթադրությունը։ Ինչպես վերը տեսանք, ըստ Խալաթյանցի Խորենացին նաթեթի պատմությունից է ստեղծել Արտաշես—Սաթենիկի վեպը։ Ով ահա Խորենացին, որ

այնպես այլայլում է իր աղբյուրը, անճանաչելի դարձնելու նպատակով՝ այստեղ, ամեն զգուշություն մոռանալով, երկու թագավորներին էլ կոչում է Արտաշես, երկու թագուհիներին էլ նման անուններով—Ասթհիան և Սաթենիկ։ Ինչո՞ւ Խորենացին չի փոխել հայոց թագավորի և թագուհու անունները, չէ՞ որ ինքն է նրանց հնարողը,— որպեսզի իր աղբյուրը հայտնի չդառնա։ Ավելի ցայտուն օրինակ։ Խորենացին ս. Մեսրոպին դրվատելիս 7—8 տող բառացի արտագրում է Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից, իսկ այս թարգմանությունն, ըստ Կարրիերի և Խալաթյանցի, յոթներորդ դարի վերջումն է կատարված։ Մի՞թե Խորենացին չէր հասկանում, որ այս ընդարձակ հատվածի փոխառությամբ ինքն իրեն մատնում է, թե ինքը 5 դարի հեղինակ չէ, քանի որ օգտվում է է դարի գրվածքից։ Ինչո՞ւ նա չի այլայլում այստեղ իր աղբյուրը. պերճախոսությո՞ւնն էր արդյոք նրան պահաասում, թե հնարագիտությունը։ Եվ մենք ստիպված գալիս ենք այն եզրակացության, թե Խորենացին ամենևին մոտդրություն չի ունեցել իր աղբյուրները թաքցնելու նպատակով նրանց այլայլել և թե Խալաթյանցի ենթադրությունն այստեղ ևս անհիմն է և կամայական։

Հարկ ենք համարում Խալաթյանցի այս երկրորդ աշխատության մասին մեջ բերել Ն. Ադոնցի կարծիքները[32]։

«Պրոֆ. Խալաթյանցն այս գեղեցիկ նպատակն իրագործելու ձեռնարկել է կանխակալ որոշ տրամադրությամբ։ Նա հրապուրվելով Խորենացու բացասական քննադատության եզրակացություններից, նրանց հաստրել է ծայրահեղության և այնպիսի կատուցումներ ու վճիռներ է կայացրել, որ գիտական տեսակետից շատ պակասավոր են։ Նրա եզրակացություններն աչքի են ընկնում հետևողականությամբ, բայց ցավակցարար այս հետևողականությունը զուրկ է գիտական հաստատուն հիմքերից... Խորենացին հաճախակի գործ էր ունենում իրար հակասող ցուցմունքների հետ և ստիպված էր լինում նրանց հաշտեցնել։ Այսպիսի աշխատանքի ժամանակ անխուսափելի են սխալները, և նա հիրավի հաճախ ընկնում է սխալների մեջ։ Այսպիսի դեպքերում Խորե-

[32] Зап. Вост. Отд. Русск. Археолог. Общ. 1904, стр. 145—160. «Г. Халатянц, Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского».

նացու մեջ ենթադրել որոշ միասնականություն և փաստերի գիտակցական աղճատում, սա առնվազն անարդարացի է»։

Իբրև եզրակացություն Ն. Ադոնցը գրում է.

«Համենայն դեպս խորենացու վիճակը դեռ մնում է առեղծված, որ պահանջում է ավելի հիմնավոր լուծում։ Իբրև ներկայացուցիչ խորենացու բացասական քննադատության՝ Խալաթյանցն իր աշխատանքը կատարեց այս ուղղությամբ։ Նրա հետազոտությունն իր արդյունքներով հանդիսանում է ամենախիստ արտահայտությունը՝ հայ պատմագրին թշնամաբար վերաբերվող քննադատությունների մեջ։ Պ. Խալաթյանցի աշխատության էությունը կայանում է իր եզրակացությունների հենց այս ծայրահեղության և խստության մեջ։ Նրա հետազոտությամբ վերջանում է բացասական շրջանը խորենացու ուսումնասիրության պատմության մեջ և հանդիսանում է իբրև մի անհրաժեշտ աստիճան՝ անցնելու համար ավելի դրական և իրականությանը համապատասխան տեսակետի։ Այն ամենը, ինչ որ կարելի էր ասել ընդդեմ Հայոց Պատմության, պ. Խալաթյանցն ասաց արդեն։ Խորենացու քննադատության առաջիկա մերձավորագույն խնդիրը պետք է լինի՝ չափավորել զառանցանքների եռանդը և ավելի ճիշտ որոշել Հայոց Պատմության տեղն ու ժամանակը հայ գրական հիշատակարանների շարքում Զ—Ը դարերում»։

Չի կարելի արդարև չցավել, որ Խալաթյանցի այս երկու ընդարձակ գրվածքները, որոնց վրա ահագին աշխատանք է գործ դրված և որոնց մեջ շատ նորություններ կան, վարակված են հեղինակի կանխակալ, անհիմն հոռետեսությամբ դեպի խորենացու բարոյական կերպարանքը և նրա Պատմության գրվելու ժամանակը, որի պատճառով նրա եզրակացությունները անընդունելի և առնվազն կասկածելի են դառնում։

Վերջացնելու համար խորենացու մասին գրված քննությունների տեսությունը, հիշելու ենք վերջին երկու մեզ հայտնի ուսումնասիրությունները։

Առաջինն է Ն. Ակինյանի «Ղևոնդ երէց և Մովսէս Խորենացի» աշխատությունը, որ լույս տեսավ Վիեննայում 1930 թվին և երկրորդը՝ ակադ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» ուսումնասիրությունը, որ լույս տեսավ Երևանում 1934 թվին։ Ն. Ակինյանն աշխատում է ապացուցել, թե Խորենացու Պատմությունը գրված է իննհարյուրդարի սկզբներին Ղևոնդ երեցի ձեռ-

քով, և թե Մովսես Խորենացի անունով մարդ գոյություն չի ունեցել։ Ակադ. Մանանդյանն աշխատում է ապացուցել, թե Խորենացու Պատմությունը գրված է իններորդ դարի վաթսունականներին սկզբին։ Այս երկու քննությունների մասին մենք հայտնել ենք մեր կարծիքը մոտ օրերս լույս տեսած մեր «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատության մեջ, որի մեջ աշխատել ենք հերքել հիշյալ երկու քննությունների եզրակացությունները. այստեղ ավելորդ ենք համարում նույնը կրկնել[33]։

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր ձեռքը հասել են Խորենացու Պատմության մեծ քանակությամբ ձեռագիրներ, որոնց թիվը հասնում է մինչև 48-ի։ Սակայն սրանք բոլորը շատ նոր են, տասնվեցերորդ դարից։ Վենետիկի Մխիթարյաններն ունեն մի ձեռագիր տասնվեցերորդ դարի սկզբից, և Երևանի ձեռագրերների մատենադարանում կա մի կարկատած ձեռագիր, որի հին մասը գրված է ԺԴ—ԺԴ դարերում, իսկ նորոգված մասը 1567 թվից է։ Սա է մեզ մոտ ամենահին ձեռագիրը։ Մի պատառիկ էլ գտնվել է Պետ. Ձեռագրատանը, ըստ երևույթին ԺԱ դարի մի օրինակից մնացած։ Այնպես որ այս ձեռագիրները չեն պարունակում Պատմության սկզբնական բնագիրը, այլ արտագրություններ են հետագա խմբագրության կամ խմբագրություններից մեկի։ Նրանց մեջ բազմաթիվ օրինակներ կան, որ մի բառ, մի ֆրազ, մի քանի ձեռագրներ մի տեսակ ունեն, մյուսներն ուրիշ տեսակ։ Բայց սրանք ավելի ոճաբանական կամ մեկնողական տարբերություններ են և ոչ թե տարբեր խմբագրությունների հետևանք։ Իսկ որ Խորենացու Պատմությունը մեզ չի հասել սկզբնական ձևով, այլ նորագույն խմբագրությամբ է—Ը դարերի, այս ընդունված ճշմարտություն է։ Ն. Մառը ենթադրում է նույնիսկ մի քանի անգամ կատարված խմբագրություն։ Այս պատճառով դատողությունները և եզրակացությունները, որոնք հիմնված են մեր այժմ ունեցած խմբագրված բնագիրների վրա, որոշ չափով տարակուսական են և թույլ չեն տալիս

---

[33] Դուցե 1914 թվից հետո արտասահմանում լույս են տեսել և ուրիշ քննություններ, մեզ նրանք հայտնի չեն։

անսխալ վճիռ կայացնել Խորենացու Պատմության իսկական բովանդակության և նրա հայացքների մասին։

Խորենացու պատմությունն ունեցել է տասներկու հրատարակություն, որոնցից ինը միայն հայերեն լեզվով, իսկ երեքը լատիներեն կամ ֆրանսերեն թարգմանությունների հետ։

Հայերեն անդրանիկ տպագրությունը լույս տեսավ Ամստերդամում 1685 թվին, Թովմաս Վանանդացու ձեռքով, հետևյալ վերնագրով. «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան յօրինեցեալ ի Մովսէէ Խորենացւոյ, յեռամեծ վարդապետէ և յոգևերախտ քերթողահօրէ, ի խնդրոյ պայազատապետի Սահակայ Բագրատունւոյ։ Հարազատ և բուն պատմութիւն նախնեացն առաջնոց, թագաւորաց, իշխանաց, նախարարաց և հայրապետաց Արամեան ազգին, սկսեալ ի Հայկ Քաջէ մինչև ցԱրտաշիր թագաւորն մեր»։ Տպագրությունը կատարված է մի ձեռագրի վրայից, ուստի շատ աղավաղություններ է պարունակում։

Երկրորդ տպագրությունը, լատինական թարգմանության հետ միասին և հարուստ մատենագրական ծանոթություններով, հրատարակեցին Վիլհելմ և Գէորգ Վիստոն՝ եղբայրները, բնագրի ուղղման համար գործ ածելով ուրիշ երկու օրինակներ ևս։ Տպված է Լոնդոնում, 1736 թվին։

Երրորդ տպագրությունը կատարվեց Վենետիկում 1753 թվին։ Արտատպություն է առաջին տպագրության։

Չորրորդ տպագրությունը Վենետիկում 1827 թվին։

Հինգերորդ տպագրությունը ֆրանսերեն թարգմանության հետ միասին (Ա և Բ գրքերը միայն) կատարեց դը Ֆլորիվալը։ Տպված է Վենետիկում 1841 թվին։

Վեցերորդ տպագրությունը, Խորենացու մյուս աշխատությունների հետ միասին, վեց ձեռագրերի քաղդատությամբ, կատարվեց 1843-ին Վենետիկում։

Յոթներորդ տպագրությունը, ֆրանսերեն թարգմանության հետ միասին և բազմաթիվ ծանոթություններով, կատարեց դը Ֆլորիվալը Փարիզում 1845 թվին։

Ութերորդ տպագրությունը կատարվեց Վենետիկում 1865 թվին։ Սա արտատպություն է վեցերորդ տպագրության։

Իններորդ տպագրությունը՝ Վենետիկում 1881-ին։

Տասներորդ տպագրությունը՝ Թիֆլիսում 1881-ին։

Տասնմեկերորդ տպագրությունը «Պատմագիրք Հայոց» հրա-

տարակուսյան շարքում, բազմաթիվ ձեռագիրների մանրամասն բաղդատությամբ և քննադատական առաջաբանով Խորենացու Պատմության ձեռագիրների և նրանց դասավորության մասին, խմբագրությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի։ Տպված է Թիֆլիսում 1913 թվին։ Այս հրատարակությունը մենք կոչում ենք քննական հրատարակություն։

Տասներկուերորդ տպագրությունը Թիֆլիսում, նախորդի արտատպություն, առանց ծանոթությունների և առաջաբանի։

Խորենացու Պատմությունը թարգմանված է զանազան լեզուներով։ Բացի վերը հիշված՝ Վիստոնների լատիներեն և դը Ֆլորիվալի ֆրանսերեն թարգմանություններից եղել են դարձյալ.

Լատիներեն թարգմանություն Բրեննների, տպագրված Ստոկհոլմում 1733 թվին։ Սակայն այս թարգմանությունը ոչ մի մատենադարանում չկա և այն ոչ ոք չի տեսել։

Իտալերեն—Վենետիկի Մխիթարյանների, որ լեզվի կողմից ուղղագրված է Տոմմազեոի ձեռքով։ Ունի հարուստ ծանոթություններ։ Տպված է Վենետիկում 1841-ին։ Նույնի երկրորդ տպագրությունը նույն տեղում 1850-ին։

Իտալերեն—Կապպելլետտիի, Վենետիկ 1841-ին։

Ֆրանսերեն—Լանգլուայի, պատմական, քննադատական և բանասիրական ծանոթություններով, Փարիզում, 1869-ին։ Մտնում է Լանգլուայի հայ պատմագիրների ժողովածուի Ա հատորի մեջ (Collection des historiens Arméniens)։

Ռուսերեն— Հովսեփ Հովհաննիսյան սարկավագի, Պետերբուրգ. 1809-ին։

Ռուսերեն— Մ. Էմինի, բազմաթիվ ծանոթություններով և հավելվածներով, Մոսկվա, 1858 թ.։ Նույնի երկրորդ տպագրությունը, սրբագրված և ուղղված, Մոսկվա 1893 թ. (թարգմանչի մահից հետո)։

Հունգարերեն—Քրիստ. Սոնկոտիանի, Կեռլա (?) 1892 թ.։

Գերմաներեն—մասնակի թարգմանություն Լաուերի, Ռեգենսբուրգում, 1869 թ.։

Աշխարհաբար թարգմանություն—Խորեն Վ. Ստեփանեի, առաջաբանով, բազմաթիվ ծանոթություններով և հավելվածներով, Ս. Պետերբուրգ 1889 թ.։ Նույնի երկրորդ տպագրությունը, սրբագրված և ուղղված, Ս. Պետերբուրգ 1898 թ.։

Այս թարգմանությունների մեջ ճշտության կողմից լավա-

գույն են համարվում Մխիթարյանների իտալերեն, էմինի ռուսերեն և Ստեփանեի աշխարհաբար թարգմանությունները։

ՆԵՐԿԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Պետ. Հրատարակչությունն ինձ հանձնարարեց Խորենացու Պատմության նոր թարգմանություն կատարել՝ առաջաբանով և ծանոթություններով հանրամատչելի բովանդակությամբ, ժողովրդի ընթերցանության համար, մոտ տասը մամուլով սահմանափակելով ներածության և ծանոթությունների ծավալը։

Թարգմանությանս իբրև բնագիր ընտրեցի, բնականապես, քննական հրատարակությունը՝ բազմաթիվ ձեռագրական վարիանտներով, բայց ես ամեն տեղ չեմ հետևել բնագրին, հաճախ ընտրել եմ այս կամ այն ձեռագրի կամ ձեռագրական խմբի ընթերցվածը՝ որ ինձ ավելի ուղիղ է թվացել։ Ինչպես այս հրատարակության Առաջաբանի մեջ հիշված է՝ «բնագրի կազմությանը օգնել է շատ անգամ Ստ. Մալխասյանցը, որ ...ամեն մամուլի համար բազմաթիվ ցուցումներ և դիտողություններ է ուղարկել էջմիածին Մ. Աբեղյանին... ինչպես և առաջարկելով այս կամ այն ընթերցվածքը ծանոթությունների մեջ դնելու փոխանակ՝ բնագրի մեջ առնել կամ ընդհակառակն։ Մ. Աբեղյանը հաճախ օգտվել է այս առաջարկություններից... երբեմն, եթե Ստ. Մալխասյանցի առաջարկությանը համակարծիք չի եղել Մ. Աբեղյանը, իսկ առաջարկությունը կարևոր է համարվել բնագիրն այս կամ այն կերպ հասկանալու նկատմամբ՝ Ստ. Մալխասյանցի առաջարկությունը, ինչպես սկզբից պայմանավորված է եղել Հրատարակչական Հանձնախմբի հետ՝ զետեղված է ծանոթությունների մեջ յուր անվան սկզբնատառերով» (էջ ծ)։

Թե այն հատվածներում, որոնք ծանոթությունների մեջ նշանակված են Ստ. Մ. սկզբնատառերով և թե ուրիշ տեղերում, եթե նորագույն ուսումնասիրությունների շնորհիվ բնագրի այս կամ այն ընթերցվածքը հարկ եղավ ուղղել ըստ ձեռագրական վարիանտների՝ ես շեղվել եմ բնագրի ընթերցվածքներից և ընտրել եմ վարիանտները։

Թարգմանությանս միջոցին ես ձեռքի տակ ունեի Վիստոնների, էմինի երկու և Ստեփանեի առաջին թարգմանությունները, որոնց, մանավանդ էմինին և Ստեփանեին հաճախ դիմում էի՝

տեղեկանալու համար, թե ի՞նչպես են նրանք հասկացել բնագրի որևէ դժվար կամ մութ տեղը։ Այս համեմատությունների ժամանակ ես բազմաթիվ նոր փաստեր ունեցա, որ էմինի երկու թարգմանություններն էլ շատ հեռու են ճիշտ լինելուց. հաճախ պատահում են կոպիտ սխալներ, վատ հասկացված և աղճատված տեղեր[34]։ Սրանցից մի քանիսը, որ առանձին աչքի են ընկնում՝ նշանակել եմ ծանոթությունների մեջ։ Բնագրին շատ ավելի մոտ է Ստեփանեի թարգմանությունը, բայց սա մի ուրիշ պակասություն ունի—աշխարհաբար թարգմանության լեզուն սահուն չէ, որ առաջ է գալիս մասամբ բնագրի ոճին խիստ հետևելու ձգտումով և մասամբ թարգմանչի սովորությամբ, որ է՝ անշուշտ աշխարհաբարի ձևեր գործածել, խուսափելով որքան հնար է գրաբարի ձևերից, ինչպես օրինակ. «երբ ընթերցասիրում ենք Քաղդեացիների, Ասորեստանցիների, Եգիպտացիների և Հույների իմաստուն ճառերն ու զրույցները»։ Իմ թարգմանությունը սրանցից անկախ է. հազիվ մի-երկու տեղ օգտված լինեմ այս թարգմանություններից և այս բանը հիշել եմ ծանոթությունների մեջ[35]։

Խորենացու Պատմության թարգմանությունը կրկնակի տեսակետից դժվարություններ է հարուցանում—ճշտության և գեղեցկության կողմից։ Նրա մեջ կան շատ մութ տեղեր, որ թարգմանիչները զանազան կերպ են հասկանում. կան սեղմ դարձվածքներ, ակնարկություններ, հատուկ նշանակությամբ գործածված բառեր։ Շատ ուշադրություն է հարկավոր նրանց ճիշտ հասկանալու համար։ Ես աշխատել եմ, որքան ուժս պատել է, հաղթել այս դժվարություններին— շատ տեղ ուղղված են նախկին սխալ թարգմա-

---

[34] Էմինի թարգմանությունների պակասությունները նկատել են նաև Ն. Մառը, Ն. Ադոնցը և ինքը Խալաթյանցը, հնարելով որ այս թարգմանություններից է բերում իր քննելիք հատվածները։

[35] Բայց պետք է նկատեմ, որ հաճախ, երբ էմինի թարգմանությունը սխալ է, իմ թարգմանությունն ու Ստեփանեինը իրար համերաշխ են։ Սա կարող է տեղիք տալ մտածելու, թե ես լռելյայն օգտվել եմ Ստեփանեի թարգմանությունից։ Ուստի ստիպված եմ ասել, որ այսպես չէ։ Ես ինքս կարդացել եմ Ստեփանեի թարգմանության ձեռագիրը, որ շատ նման էր էմինի թարգմանության, և Ձայրեծայր համեմատելով՝ ուղղել եմ նրա թարգմանության մեջ կրկնված էմինի սխալները՝ որքան այն ժամանակ (1888-ին) ձեռնհաս էի։ Այնպես որ Ստեփանեն է ինձանից օգտվել և ոչ թե ես նրանից։ Իմ այս աշխատության մասին հիշում է Ստեփանեն Առաջաբանի վերջում, որքան թույլ էր տալիս իր արժանապատվությունը և մի անգամ (առանց անուն տալու) Ֆ-րդ ծանոթության մեջ։

նույնները. մի տեղ վերականգնված է բնագիրը, որի աղավաղությունը տեղիք էր տվել սխալ և անտեղի թարգմանություններիր (տե՛ս ծանոթ. 187), բայց և այնպես անշուշտ մնում են մի քանի մութ տեղեր և գուցե սխալ թարգմանություններ, որոնց ուղղումը մնում է ավելի ձեռնհասների կամ, մանավանդ, լավագույն ձեռագիրներիւ կարող եմ այսքանն ասել, որ այս թարգմանությունը, իմաստի ճշտության կողմից ավելի մոտ է բնագրին, քան մինչև այժմ եղածները։ (Այսպես դատում եմ՝ հենվելով Ստեփանեի ծանոթությունների մեջ բերված՝ բնագրի զանազան դժվար հատվածների այլևայլ թարգմանությունների վրա)։

Գալով թարգմանական լեզվի կոկության և գեղեցկության՝ պետք է ասեմ, որ այժմյան դրական լեզուն չի կարող մրցել դրաքարի հետ, ի նկատի առնելով վերջինիս բազմատեսակ դյուրությունները միտք արտահայտելու համար, բառերի դասավորության մեծ ազատությունը, նախդիրները, հարուստ բառամթերքը, չի կարող մանավանդ մրցել խորենացու ճոխ, նկարագնակ, գեղարվեստական լեզվի հետ։ Այս կողմից՝ բնագրի՝ գեղեցկության հավասարվելու մասին խոսք անգամ չի կարող լինել։ Ես աշխատել եմ, որքան հնար է՝ հավատարիմ մնալ բնագրի արտահայտությանը, ոճին, նույնիսկ բառերին, բայց այն պայմանով, որ սրանք չվնասեն աշխարհաբար լեզվի կոկության և շատ չբարդացնեն արտահայտության ձևը։ Թե ո՞րքան հաջողվել է իմ թարգմանությունս այս կողմից՝ ինքս չեմ կարող դատավոր լինել. այստեղ վճիռ տվողը ընթերցողն է։

Ծանոթությունները, որ տրվում են գրքի վերջում, նպատակ ունեն ընդհանրապես՝ օժանդակ լինել ընթերցողին բնագիրը լավ հասկանալու, բացատրել մութ տեղերը, ակնարկությունները, տալ օտարազգի թագավորների կամ մատենագիրների մասին համառոտ տեղեկություններ, օտար քաղաքների մասին ծանոթություններ և այլն։ Ես չեմ տվել ծանոթություններ Հայաստանի քաղաքների կամ այլ վայրերի մասին, չեմ համեմատել խորենացու պատմածը որևէ անցքի մասին՝ ուրիշ հայ կամ օտարազգի հեղինակի պատմածի հետ նույն անցքի մասին. խուսափել եմ խորենացու անձի կամ Պատմության գրության ժամանակի մասին հարուցված հարցերը շոշափելուց և այլն։ Եթե ընդարձակ ծավալով ծանոթություններ լինեին գրելու՝ բնագրից երկու-երեք անգամ ավելի մեծ կլիներ, իսկ իմ տեղը սահմանափակ էր։

Ծանոթությունների մեջ ես ես շատ քիչ անգամ եմ օգտվել Ջմինի կամ Ստեփանեի ծանոթություններից (որոնք իրենց կողմից օգտվել են օտարազգի թարգմանությունների ծանոթագրություններից, մանավանդ Ստեփանեն)։ Ամեն անգամ, երբ թեկուզ չնչին չափով օգտվել եմ նրանցից որևէ մեկից՝ անշուշտ հիշել եմ աղբյուրս։ Եվ ընդհանրապես ասելով՝ իմ ծանոթությունների ամենամեծ մասը նոր նյութերի մասին է, որոնք բոլորովին չեն շոշափված ուրիշ թարգմանիչների կողմից։

Գրքի վերջում կարևոր համարեցի դնել երկու սինխրոնիկ աղյուսակ Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի համար՝ ըստ օտարազգի աղբյուրների և ըստ Խորենացու։ Սրանք, կարծում եմ, օգտակար կլինեն ամեն ընթերցողի համար։

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

10 Հոկտ. 1940
Թբիլիսի



Մի էջ Խորենացու «Հայոց պատմության» հնագույն ձեռագրից
(Մատենադարան, ձեռ. № 2865, էջ 36 ա, XIV դ.)

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԲԱՂԿԱՑԱԾ ԵՐԵՔ ՀԱՏՎԱԾԻՑ

ՈՐ ՀՈՐԻՆԵԼ Է

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԽՆԴՐՈՎ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ[1] ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

ՍԱՀԱԿԻ ԹԳԹԻՆ ՊԱՏԱՒԱԿԱՆ ԵՒ ԽՈՍՏՈՒՄՆ ՆՐԱ ՀԱՆԴՐԱԾԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մովսես Խորենացին մեր ազգի պատմութեան այս սկզբում ողջունում է Սահակ Բագրատունուն

Քո մեջ եղած աստվածային շնորհքների անապատ գործունեությունը և հոգու անդադար շարժումները քո մտածողության վրա՝ ես ճանաչեցի այս գեղեցիկ խնդրի միջոցով, մարմնիդ առաջ հոգուդ հետ ծանոթանալով. սա իմ ճաշակին ես ախորժելի է, և մանավանդ իմ սովորություններին։ Ուստի ոչ միայն պետք է քեզ դովել, այլև քեզ համար աղոթել, որ միշտ այսպես մնաս։

Որովհետև եթե մենք բանականության պատճառով, ինչպես ասվում է, աստծու պատկեր ենք[2], և մյուս կողմից՝ բանականության արդյունքը խոհականությունն է, և քո մեջ անհատնելի է սրանց ցանկությունը՝ ուրեմն գեղեցիկ մտածողությամբ վառ և բորբոք պահելով քո խոհականության կայծը՝ զարդարում ես բանականությունը, որով մենում ես պատկեր լինելու։ Կարելի է ասել, որ սրա միջոցով ուրախացնում ես սրա սկզբնատուին գեղեցիկ և չափավոր մոլությամբ հետամուտ լինելով այս խնդիրներին։

Սրա հետ միասին հետևյալն էլ եմ նկատում, որ եթե մեզանից առաջ և մեր ժամանակ ապրող՝ Հայոց աշխարհի ցեղապետներն ու իշխանները ո՛չ իրենց ձեռքի տակ ընկած և հավանորեն եղած իմաստուններին հրամայեցին այսպիսի պատմական հիշատակարաններ գրել, ոչ էլ մտածեցին դրսից որևէ տեղից ներս բերել իմաստության նպաստներ, և այժմ քեզ ենք տեսնում այսպիսի մարդ—ուրեմն պարզ է, որ դու պետք է ճանաչվես բոլոր քեղանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն դովեստների արժանավոր և պատմական այսպիսի արձանագրության մեջ դրվելու արժանի։

Ուստի և ուրախությամբ ընդունելով քո խնդիրը՝ սիրով կաշխատեմ այն կատարել, անմահ հիշատակ թողնելով այս քեզ և քեզ հաջորդող սերունդներին։ Որովհետև նախնական և քաջ ազգ ես, արդյունավոր ոչ միայն խոսքի և գիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով, որոնք մենք կհիշատակենք այս պատմության ընթացքում, երբ հորից որդի ծննդաբանությունը կազմելով՝ Հայաստանի բոլոր նախարարությունների[3] ազգաբանությունը կգրենք, ամեն մեկի որտեղից և ինչպես ծագելը համառոտ և հավաստի պատմելով, ինչպես որ կա մի քանի հունական պատմությունների մեջ։

Բ

ԹԵ ԻՆՉՈ՞Ւ ՄԵՆՔ ՀՈՒՆԱՐԵՆԻՑ ԿԱՄԵՑԱՆՔ ՑՈՒՅՑ ՏԱԼ ՄԵՐ ԳՈՐԾԵՐԸ, ՄԻՆՉԴԵՌ ՔԱՂԴԵԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՄԱՏՅԱՆՆԵՐԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՐՄԱՐ ԵՆ ԳԱԼԻՍ ՍՐԱՆՔ

Եվ այս բանի վրա թող ոչ ոք չզարմանա, որ թեպետ շատ ազգեր մատենագիրներ են ունեցել, ինչպես ամենքին հայտնի է, մանավանդ պարսիկներն ու քաղդեացիները, որոնց մոտ ավելի շատ են գտնվում մեր ազգին վերաբերյալ բազմաթիվ գործերի հիշատակարաններ՝ մենք սակայն միայն հունաց պատմագիրները հիշեցինք և այնտեղից խոստացանք առաջ բերել մեր ազգաբանության շարքը։ Որովհետև ոչ միայն հունաց թագավորները հոգ տարան հույներին ավանդելու ինչպես (իրենց) աշխարհակալության, այնպես և գիտության վերաբերյալ աշխատությունները, իրենց ներքին գործերը կարգի բերելուց հետո, ինչպես, օրինակ, Պտղոմեոսը, որ եղբայրասեր է կոչվում[4], հարկավոր համարեց բոլոր ազգերի մատյաններն ու վեպերը հունարեն թարգմանելու.—

Բայց ոչ ոք[5] թող այստեղ մեզ անուսում համարելով չբամբասե, ինչպես մի քանի անվարժ ու տգետ մարդիկ, որ (Պտղոմեոսը) եգիպտացիների թագավոր է եղել, իսկ մենք նրան հունաց թագավոր գրեցինք։ Որովհետև նա հույներին էլ իր ձեռքի տակ նվաճելով՝ կոչվեց Աղեքսանդրիայի և հունաց թագավոր, ինչպես երբեք չկոչվեց և ոչ մեկը Պտղոմեոսներից կամ Եգիպտոսի ուրիշ տիրողներից։ Նա այնքան հունասեր բարք ուներ, որ իր աշխատությունը հույն լեզվով ժողովեց։ Ուրիշ շատ պատճառներ էլ կան մեր

նրան հունաց թագավոր կոչելուն, բայց մեր խոսքը համառոտելու համար բավական ենք համարում ասածս նրա մասին—այլև բազմաթիվ անվանի և դիտությամբ պարապած մարդիկ հունաց աշխարհից հոգ տարան հույն լեզվի թարգմանելու ոչ միայն ուրիշ ազգերի թագավորների դիվանների և մեհյանների դրքերը,— ինչպես գտնում ենք նրան, որ քաղդեացի Բերոսոսին[6], բոլոր դիտություններին քաջահմուտ մարդուն, հորդորեց այս բանն անելու,— այլև մեծամեծ և գարմանալու արժանի արվեստները, որոնք այս և այնտեղ դժվարությամբ գտնելով փոխադրեցին հույն լեզվի (ինչպես Ա. Ք-ի մոտ, և Բ. Փ-ի մոտ, և Կ. Ե-ի մոտ, և Շ. Թ-ի մոտ)[7]։ Եվ այս (արվեստները) ժողովեցին մարդիկ, որոնց անունները մենք հավաստի գիտենք, և նվիրեցին հելլենացոց աշխարհին, փառավորելով նրան։ Եվ գովելի են ինչպես ուսումնասիրողները՝ իրենց ջանքի և դիտությունը ուրիշ ազգերից ձեռք բերելու համար, նույնքան և ավելի նրանք, որոնք դիտության այսպիսի դյուտերն ընդունեցին և պատվեցին։ Այս պատճառով նշեմ տատանվում՝ ամբողջ Հունաստանը դիտության մայր կամ դայակ կոչել։

Եվ այսքանը բավական է բացատրելու համար հունաց պատմագիրներին դիմելու մեր կարիքը։

Գ.

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՐՆԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԱՆԻՄԱՍՏԱՍԵՐ ԲԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Կամենում եմ նաև առանց մեղապրական հիշատակի չթողնել մեր հին նախնիքների անիմաստասեր բարքը, այլ հենց այստեղ, մեր գործառնության սկզբում, նրանց կշտամբանքի խոսքերը դրել։ Որովհետև եթե հիրավի գովության արժանի են թագավորներից նրանք, որոնք իրենց ժամանակները գրով և պատմությամբ հաստատեցին և յուրաքանչյուրն իր իմաստության գործերն ու քաջությունն արձանագրեցին վեպերի[8] և պատմությունների մեջ, նրանց նման մեր կողմից գովաստանական խոսքերի արժանացան նաև դիվանների մատենագիրները, որոնք այս ծանր աշխատանքով պարապեցին։ Սրա շնորհիվ մենք էլ նրանց շարադրած գրվածքները կարդալիս աշխարհական կարգերի գիտությունն ենք ձեռք բերում և քաղաքական կարգեր ենք սովորում, երբ ուսումնասիրում

ենք այսպիսի գիտական ճառեր և պատմական գրվածքներ, ինչպես ունեն քաղդեացիները և ասորեստանցիները, եգիպտացիները և հելլենացիները. սրա հետ միասին գուցե նաև փափագենք այն մարդկանց իմաստության, որոնք այսպիսի աշխատանք հանձն առան։— Ապա ուրեմն մեզ ամենից հայտնի է մեր թագավորների և մյուս նախնիքների անփութությունը դեպի գիտությունը և բանական հոգու անկատարությունը։ Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու։ Արդ՝ այն մարդկանց, որոնք չմտածեցին նույնիսկ իրենց մի բարիք անել և իրենց անվան հիշատակը թողնել աշխարհում, ո՛րքան կհարմարի մեր մեղադրանքը և նրանցից ավելի մեծ բաներ և իրենցից առաջ եղածները պահանջելը։

Բայց գուցե մեկն ասե. այն ժամանակ գիր ու գրավականություն չլինելու պատճառով (եղավ այդ), կամ դանազան պատերազմների շնորհիվ, որ անընդհատ մեկը մյուսին հաջորդում էին։ Բայց իրավացի չի լինի այսպես կարծելը, որովհետև պատերազմների միջև եղել են և (խաղաղ) ժամանակամիջոցներ, և կային պատմից և հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, վերաբերյալ գյուղերի և գավառների և յուրաքանչյուր տների սեփականության, և ընդհանուր վեճերի և դաշինքների, մանավանդ սեպուհական ազնվականության ծագման[9]։ Բայց ինձ թվում է, որ ինչպես այժմ, այնպես էլ հին հայերը չեն ունեցել սեր դեպի գիտությունը և իմաստալից երգարաններըր։ Ուստի ավելորդ է մեզ այլ ևս խոսել անբան, թուլամիտ և վայրենի մարդկանց մասին։

Բայց ես շատ եմ զարմանում քո մտքի ծննդականության վրա, որ մեր (նախաթարախական) ցեղերի հներից սկսած մինչև այժմյանները մենակը գտնվեցիր այսպիսի մեծ խնդրի ձեռնարկելու և մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել— երկար և շահավոր գործով ճշտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախաթարախական ցեղերի և տոհմերի մասին, թե ո՛վ ումի՛ց է ծագել, ի՛նչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, և ո՛րն այս բաժանված ցեղերից քնիկ մեր ազգից է և որոնք եկվորներ են և հայացել՝ բնիկ են դարձել, ամեն մեկի գործերն ու ժամանակ-

ները գրով դրոշմել, անկարդ աշտարակի շինությունից սկսած մինչև ներկա ժամանակս[10]—նկատելով այս քեզ համար գեղեցիկ փառք և բավականություն առանց նեղության։

Այս առիթով այսքան միայն կասեմ. կա՞ արդյոք իմ ձեռքի տակ մատյան, ինչպես ասված է Հոբի[11] դրքում, կամ քո հայրենական պատմական գրվածքները, որոնց միջոցով եբրայեցի պատմագիրների նման, վերևից մինչև քեզ իջեցնեմ (ճյուղավորությունը) անսխալ կերպով, կամ թե քեզանից և ուրիշներից սկսելով դեպի վար տանեմ, դեպի սկիզբը։ Բայց և այնպես կսկսեմ, թեպետ և դժվարությամբ, միայն թե մարդիկ շնորհակալ լինեն մեր կրած նեղությունների համար։ Եվ կսկսեմ այնտեղից, որտեղից սկսում են եկեղեցական (մատենագիրներն) ըստ քրիստոնեական կրոնի, ավելորդ համարելով երկրորդել արտաքին հեղինակների առասպելները սկզբնական պատմության մասին, բայց հնտազայից կհիշենք որոշ ժամանակներ և հայտնի անձեր, որքան նրանք զուգադիպում են սուրբ գրքի պատմության, մինչև որ բնականարար կհասնենք հեթանոսական զրույցներին. բայց սրանից էլ կառնենք, ինչ որ հավաստի կհամարենք։

Դ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄՅՈՒՍ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԸ ՉԻՐԱԳԱՆՑԻՆ (Ս. ԳՐՔԻՆ) ԱՌԱՄԻ ԵՎ ՄՅՈՒՍ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Բոլոր մարդկության արմատի, կամ եթե մեկը կամենա ասել՝ ծագրի մասին պետք է մեղ մի քանի խոսք ասել, թե ինչո՞ւ մյուս պատմագիրները, ինչպես Բերոսոսը, Բազմավեպը, և Աբյուդենոսը[12], ս. հոգուն հակառակ մտածողությամբ չմիաբանեցին (ս. գրքին). ինչպես նաև նույնինքն նավակառույցի և մյուս նահապետների վերաբերմամբ, ոչ միայն (տարբեր) անուններ և ժամանակներ նշանակելով, այլև մարդկային ազգի սկիզբը դնելով ոչ այն՝ որ մեզ համար ստույգ և արժանահավատ է։

Որովհետև Աբյուդենոսը, մյուսների նման, այսպես է ասում նրա մասին. «Ամենախնամ աստվածը նրան նշանակեց ժողովրդին հովիվ և առաջնորդ»։ Որից հետո ասում է. «Ազովրոսը թագավորեց տասն շար[13]», որ լինում է երեսուն և վեց հազար տարի։ Նույնպես և նոյի համար գործ են ածում ուրիշ անուն և վերա-

գրում են նրան խիստ երկար ժամանակ, թեպետ և ջրերի սաստիկ (հորդության) և երկրի ապականության վերաբերմամբ խոսում են համաձայն սրբ. գրքի պատմածին. նույնպես և նահապետների թիվը, Քսիսութրոսով[14] միասին, տասն են հաշվում։ Նրանց այս հաշիվը հեռանում է ոչ միայն մեր, մանավանդ թե սրբ. գրքի արեգակնային տարիներից, որոնք գոյանում են չորսժամանակյան մի շրջան, կատարելով, այլև եթե լուսնի ծնունդներով հաշվենք տարիները եգիպտացիների նման։ Նույնիսկ եթե տարի հաշվելու լինենք այսպես կոչված աստվածների (շրջանները)[15], այնուամենայնիվ նրանք չեն համաձայնի առաջարկված անհուն թվերին և ճշմարիտ ժամանակին չեն հավասարի, երբեմն նվազ գալով և երբեմն խոշոր թիվ գումարելով։ Պետք է այստեղ իսկապես նրանց կարծիքներն ըստ մեր կարողության քացատրել, թե նրանցից յուրաքանչյուրը ի՛նչ մտածողությամբ այսպես գրեցին. բայց մեր առաջիկա գործի երկարության պատճառով՝ այդ բանը կթողնենք ուրիշ տեղի և ժամանակի և մեր խոսքը կընդհատենք այդ մասին, ու կսկսենք պատմել (նահապետների մասին) ինչպես որ հավատացած ենք։

Ադամ նախաստեղծ. սա երկու հարյուր երեսուն տարեկան ժամանակ ծնում է Սեթին։ Սեթ երկու հարյուր հինգ տարեկան՝ ծնում է Ենովքին։ Սրան են պատկանում արձանագրություններից երկուսը, երկու գալիք դիպվածների դեմ, ինչպես ասում է Հովսեփոսը[16], թեպետ անհայտ է նրանց տեղը։ Ենովքը առաջինն եղավ, որ Հուսաց աստծուն կոչելու։

Եվ ինչո՞ւ է այս այսպես, և ի՞նչ պատճառներից սա առաջինը Հուսաց՝ աստծուն կոչելու, և ի՞նչպես պետք է հասկանալ կոչը բառը։ Որովհետև Ադամ իսկապես աստվածաստեղծ էր, նա էր, որ աստծու բերանից պատվեր առացավ, ինչպես ասված է, և հանցանք գործելով ու թագ կենալով՝ «ո՞ւր ես» հարցը նրանից է լսում և ոչ ուրիշ մեկից, նույնպես և հանցանքի պատիժը նրա բերանից է լսում։ (Ադամից) հետո Աբելը աստծուն մերձավոր ու ծանոթ լինելով՝ նրան զոհ է մատուցանում, որ ընդունելի է լինում։ Արդ՝ երբ սրանք աստծուց ընդունված ու նրան ճանաչում էին, ինչո՞ւ սրա (Ենովքի) մասին է ասվում, թե առաջինը կոչեց աստծուն և այն՝ Հուսով։ Արդ՝ այս մասին ուրիշ քացատրությունների համար կուղարկենք մեր հրավիրած տեղը[17], իսկ ինչ որ առձեռն պատրաստ է, կասենք։

Որովհետև մարդկանց առաջինը պատվիրանազանց գտնվելով,

իր գործած չարիքի պատճառով արտաքսվեց դրախտից և աստծու (տեսությունից), ինչպես ասված է։ Հետո Ադամի որդիներից (Աքելը), ամենից մերձավորն աստծուն, սպանվում է իր հարազատ եղբորից։ Այնուհետև տեղի չունենալով ոչ աստվածային խոսք և ոչ որևէ հայտնություն՝ մարդկային ազգն ընկնում է տարակուսանքի և անհուսության մեջ, այլև իրապես ինքնահաճո գործերի մեջ։ Սրանց մեջ սա հուսալից լինելով՝ ուղղամտությամբ կոչում է աստծուն։ Իսկ կոչելը երկու կերպ կարելի է հասկանալ— կա՛մ անվանել, ինչպես մի մոռացված բան, կամ օգնության կանչել։ Արդ՝ անվանել հասկանալը, ինչպես մոռացվածին, հարմար չէ գալիս, որովհետև այնքան շատ տարիներ չէին անցել, որ աստված անունը նրանց մոռացնել տար կամ հենց նրան, որ այս անունով կոչվում էր, և դեռ նույնիսկ աստծուց ստեղծվածը մահվան և թաղման չէր հասել։ Ուրեմն սա (Ենովքը) աստծուն օգնության է կանչում։

Սա հարյուր իննսուն տարեկան՝ ծնում է Կայնանին։ Կայնան հարյուր յոթանասուն տարեկան՝ ծնում է Մաղաղայելին. Մաղաղայելը հարյուր վաթսուն և հինգ տարեկան՝ ծնում է Հարեդին. Հարեդը հարյուր վաթսուն և երկու տարեկան՝ ծնում է Ենովքին. Ենովքը հարյուր վաթսուն և հինգ տարեկան՝ ծնում է Մաթուսաղային։ Մաթուսաղային ծնելուց հետո նա երկու հարյուր տարի արժանավոր և հաճոյական վարք ունենալով—ինչպես գիտե նա, որ հաճեցավ—ամբարտիշների միջից տեղափոխվեց, ինչպես ասված է, որի պատճառը հետո կբացատրենք։ Մաթուսաղան հարյուր վաթսուն և հինգ տարեկան՝ ծնում է Ղամեքին։ Ղամեք հարյուր ութսուն և ութ տարեկան ծնում է որդի և անունը դնում Նոյ։

Նոյի մասին

Նվ ինչո՞ւ արդյոք միայն սրան որդի անունով կոչեց, իսկ բոլոր մյուսների մասին պարզաբար ասաց թե ծնան, որի մասին հայրն ինչ որ հակառակ բան է մարգարեանում.— «Սա մեզ կհանգստացնե, ասում է նա, մեր գործերից, մեր ձեռքերի տրտմությունից և աստծու անիծած երկրից», որ իրոք եղավ ոչ թե հանգիստ, այլ չնչում ամեն բանի, որ երկրի վրա կար։ Ինձ թվում է, թե «հանգստացնելը» նշանակում է դադարեցնել, իսկ դադարեցնելը՝ (ոչնչացնելը) ամբարշտությունը և բոլոր չարիքները, երկրորդ դարի զազրագործ մարդկանց սատակումով։ Որովհետև գեղեցիկ ասաց, «մեր

գործերից, այսինքն անօրինություններից, և «ձեռքերի արարումից», որոնցով պղծություն ենք կատարում։ Բայց ըստ այս մարգարեության հիրավի հանգչում են, բայց ոչ բոլորը, այլ առաքինությամբ կատարյալ հոգիները, նրբ չարիքներն ինչպես հեղեղով մաքրվում են, ինչպես Նոյի ժամանակ չար գործերի անձնատուր մարդիկ։ Իսկ որդի անունով մեծարեց ս. դիրքը (Նոյին), իբրև հայտնի ու նշանավոր մարդու և հայրենական առաքինությունների արժանավոր ժառանգի։

Ե

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՅԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՍՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍԱՐ Է ԴԱԼԻՍ ՄԻՆՉԵՎ ԱԲՐԱՀԱՄ, ՆԻՆՈՍ ԵՎ ԱՐԱՄ, ԵՎ ԹԵ ՆԻՆՈՍԸ ՈՉ ԲԱՆ Է ԵՎ ՈՉ ԲԱՆԻ ՈՐԴԻՆ

Եվ այս հայտնի է ամենքին, թե դժվարագյուտ և տաժանելի է ժամանակագրություն կազմելը սկզբից մինչև մեր ժամանակները, մանավանդ որոշելը նախարարական ցեղերի սերումը Նոյի երեք որդիներից։ Մանավանդ որ ս. դիրքը յուրայիններին զատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներինը լքեց, իբրև արհամարհելի և իր կողմից նշանակվելու անարժան (ազգերի)։ Սրանցից սկսելով մենք կճառենք, որքան կարողություն ունենք, ինչպես որ հավատին գտանք հին պատմություններից մեջ, որոնք ըստ մեզ կատարելապես ճշմարիտ են։ Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցող, նայի՛ր այստեղ երեք ցեղերի շարքի հավասարությանը մինչև Աբրահամ, Նինոս և Արամ և զարմացիր։

Սեմը հարյուր տարեկան հասակում, ջրհեղեղից երկու տարի հետո, ըստ ս. դրքի, ծնում է Արփաքսաթին։

Սեմ

Սեմ հարյուր տարեկան՝ ծնում է Արփաքսաթին։

Արփաքսաթ հարյուր երեսուն և հինգ տարեկան՝ ծնում է Կայինանին։

Կայինան հարյուր և քսան տարեկան՝ ծնում է Սաղային։

Սաղա հարյուր երեսուն տարեկան՝ ծնում է Եբերին։

Եբեր հարյուր երեսուն և չորս տարեկան՝ ծնում է Փաղեկին։

Փաղեկ Հարյուր երեսուն և երեք տարեկան՝ ծնում է Ռագաւվին։

Ռագաւվ Հարյուր երեսուն տարեկան՝ ծնում է Սերուքին։
Սերուք Հարյուր երեսուն տարեկան՝ ծնում է Նաքովրին։
Նաքովր յոթանասուն և ինն տարեկան՝ ծնում է Թարայիին։
Թարա յոթանասուն տարեկան՝ ծնում է Աբրահամին։

Քամ

Քամ ծնում է Քուշին։
Քուշ ծնում է Մեստրայիմին։
Մեստրայիմ ծնում է Նեբրովթին։
Նեբրովթ ծնում է Բաբին։
Բաբ ծնում է Անեբիսին։
Անեբիս ծնում է Արբելին։
Արբել ծնում է Քայադին։
Քայադ ծնում է մյուս Արբելին։
Արբել ծնում է Նինոսին։
Նինոս ծնում է Նինուասին։

Հարեթ

Հարեթթ ծնում է Գամերին։
Գամեր ծնում է Թիրասին։
Թիրաս ծնում է Թորգոմին։
Թորգոմ ծնում է Հայկին։
Հայկ ծնում է Արամանյակին։
Արամանյակ ծնում է Արամայիսին։
Արամայիս ծնում է Ամասիային։
Ամասիա ծնում է Գեղամին։
Գեղամ ծնում է Հարմայիին։
Հարմա ծնում է Արամին։
Արամ ծնում է Արա Գեղեցիկին։

Արդ Կայինանին իբրև Նոյից չորրորդ և Սեմից երրորդ՝ գրում են բոլոր ժամանակագիրները։ Նույնպես և Թիրասին Նոյից չորրորդ և Հաբեթից երրորդ, թեպետ ըստ մեր (Հայերեն) թարգմանութեյան ոչ մի տեղ չի գտնվում ուղղակի ճյուղագրութեյան մեջ[18]։ Իսկ Մեստրայիմին իբրև Նոյից չորրորդ և Քամից երրորդ նշանակվածի

չենք գտնում ո՛չ մեր քարգմանության մեջ և ոչ որևէ ժամանակագրի կողմից։ Բայց այսպես նշանակված գտանք մի շատ ուշիմ և ընթերցասեր ասորու կողմից, և մեզ հավանական թվաց նրա ասածը։ Որովհետև այդ Մեսորայիմը Մեծրայիմն է, որի տակ հասկացվում է Եգիպտոսը։ Եվ որովհետև ժամանակագիրներից շատերը գրում են, թե Նեբրովթը, այսինքն Բելը, Եթովպացի է եղել՝ մենք համոզվեցինք, որ իսկապես այսպես է եղել, Եգիպտոսի (և Եթովպիայի) սահմանակցության պատճառով։

Սրանից հետո այս էլ ասենք, որ Թեպետ Քամի սերունդների տարիները մինչև Նինոս, և ոչ իսկ ստուգապես Նինոսինը, ոչ մի տեղ թվարկված չեն, կամ թե մեզ չեն հասել, իսկ Հաբեթի սերունդներինը բոլորովին չկան,— բայց և այնպես վերը բերված ազգաբանությունը հավաստի է, քանի որ երեք ցեղերն էլ տասնմեկական սերունդ են կազմում մինչև Աբրահամ, մինչև Նինոս և մինչև Արամ. որովհետև Արան, տասներկուերորդը՝ Նինոսից հետո է, երիտասարդ հասակում վախճանած։ Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի, որովհետև այս բաները մեզ պատմում է շատ բաներում վըստահելի Աբյուդենոսը, որ ասում է այսպես. «Ննինոս (որդի) Արբեղի, (որդի) Քալադի, (որդի) Արբեղի, (որդի) Անեբի, (որդի) Բաբի, (որդի) Բելի»։ Նույնպես մերը, Հայկից մինչև Արա Գեղեցիկը, որին վավաշոտ Շամիրամն սպանեց՝ թվարկում է այսպես. «Արա Գեղեցիկը (որդի) Արամի, (որդի) Հարմայի, (որդի) Գեղամի, (որդի) Ամասիայի, (որդի) Արամայիսի, (որդի) Արամանյակի, (որդի) Հայկի, որ դուրս եկավ Բելին հակառակորդ և միանգամայն նրա կյանքին վերջ դնողը»։ Այս բանն ասում է Աբյուդենոսը իր առաջին առանձին մասը ազգաբանության մեջ, որ վերջերս ոմանք դեն գցեցին։

Սրանց վկայում է և Կեփալիոն[19], որ ասում է (իր գրքի) գլուխներից մեկում. «Մեր աշխատության սկզբում սկսեցինք մանրամասն գրել բոլոր ազգաբանություններն արքունական դիվաններից (առնելով), բայց թագավորներից հրաման առացանք՝ հներից բաց թողնել աննշան և վատասիրտ մարդկանց հիշատակությունը, այլ հիշել միայն քաջ, իմաստուն և աշխարհակալ նախնիքներին և մեր ժամանակն իզուր չվատնել» և այլն։

Այլ մեզ բոլորովին օտարոտի և ճշմարտության հակառակ է թվում այն, որ ասում են, իբր Թե Նինոսը Բելի որդին է կամ նույն ինքն Բելը, որովհետև ոչ ազգաբանությունը, ոչ էլ տարիների

գումարումը այս քանը չեն հաստատում. գուցե մեկը (այս երկուսի) նշանավոր և անվանի լինելու պատճառով պատշաճ համարած լինի հեռավորին իբրև մոտավոր նշանակել։

Այս բաներն իսկապես մենք գտանք հունարեն գրականության մեջ։ Թեպետ և իրենք հույները քաղդեարեններից փոխադրեցին իրենց լեզվին, և թեպետ քաղդեացիները կամ ինքնաբերաբար՝ հոժար կամքով այս կատարեցին կամ թագավորների հրամանից հարկադրված՝ ինչպես մի ոմն Ակիռա[20] և ուրիշ շատերը, բայց մենք հույներիններն ենք համարում, նրանցից ուսած լինելով։

Զ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՄՅՈՒՍ ՀՆԱԽՈՍՆԵՐԸ ՈՐՈՇ ԲԱՆԵՐՈՒՄ ՄՈՎՍԵՍ (ՄԱՐԳԱՐԵԻՆ) ՀԱՄԱՁԱՅՆ ԵՆ ԵՎ ՈՐՈՇ ԲԱՆԵՐՈՒՄ ՏԱՐԲԵՐ, ԵՎ ՈԼՈՄՊԻՈԴՈՐՈՍ ՓԻԼԻՍՓԱՅԻ ՀԻՆ ԱՆԴԻՐ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բազմաթիվ դրվածքներից ընտրելով հավաստին, որքան կարողացանք՝ նշանակեցինք նույն երեք որդիների սերունդները մինչև Աբրահամ, մինչև Նինոս և մինչև Արամ, որին, կարծում եմ, խելացի մարդկանցից ոչ ոք չի հակառակի, եթե միայն մարդ չցանկա, հմարտության ոճը խանգարելով, հմարիտ պատմությունները առասպելների վերածել։ Այս դեպքում թող ամեն մի միտք ուրախանա՝ ինչպես կամենա։

Բայց եթե դու շնորհակալ լինես մեր նեղությունների և ջանքերի համար, ո՛վ ուսումնասեր և մեզ այս հարցերում աշխատեցնող, համառոտ խոսքերով կհիշատակեմ, թե հին վիպագիրներն ի՛նչպես գրեցին մեր վերը նշանակած անձերի մասին, թեպետ ներկայումս չեմ կարող ասել, արդյոք թագավորների մատենադարաններում այնպես գտնելով, թե ամեն մեկն ըստ իր ճաշակի կամեցավ փոփոխել անունները, գրույցները և ժամանակները, կամ թե մի ուրիշ որևէ պատճառից։ Բայց ինչպես սկզբի մասին երբեմն ճշմարիտ են ասում և երբեմն սուտ են,— օրինակ՝ նախաստեղծին չկոչելով առաջին մարդ, այլ թագավոր, նրան օտարոտի և նշանակությունից զուրկ անուն տալով և երեսուն և վեց հազար տարվա կյանք վերագրելով (սուտ են). իսկ նահապետների թվով և ջրհեղեղի հիշատակությամբ զուգընթանում են Մովսես (մարգարեին),— այնպես էլ ջրհեղեղից հետո եղեք անվանի մարդիկ նշա-

նակելով աշտարակաշինությունից առաջ և Քսիսութրիոսի Հայաստան նավարկությունից հետո՝ ճշմարիտ են խոսում։ Իսկ անունների փոփոխումով և ուրիշ շատ բաներով սուտ են։

Բայց ես այժմ ուրախանում եմ՝ իմ առաջիկա խոսքերին սկիզբ դնելով ինձ սիրելի և շատերից ավելի ճշմարտախոս Բերոսյան Սիբիլլայից[21]։ Նա ասում է. «Նախ քան աշտարակը և մարդկային խոսակցության բազմալեզու դառնալը, և Քսիսութրիոսի դեպի Հայաստան նավարկությունից հետո, երկրի իշխաններ էին դառնում Զրվանը, Տիտանը և Հապետոսթենն»[22], որ ինձ թվում են Սեմը, Քամը և Հաբեթը։

«Ներ նրանք, ասում է նա, բոլոր տիեզերքը բաժանում էին իրենց իշխանությունների տակ, Զրվանը բռնանալով տիրում է մյուս երկուսի վրա»։ Հետո արդեն Զրադաշտ մոգը, բակտրիացիների, այսինքն մեդացիների թագավորը, այս Զրվանին կոչեց սկիզբ և աստվածների հայր և էլի ուրիշ շատ բաներ նրա մասին առասպելաբանեց, որոնք կրկնելը անտեղի ենք համարում։

«Արդ՝ իբրև Զրվանը բռնացավ ասում է (Սիբիլլան)՝ Տիտանը և Հապետոսթենն նրան դիմադրություն ցույց տվին, նրա հետ պատերազմի բռնվելով, որովհետև նա մտադրություն ուներ՝ իր որդիներին բոլորի վրա թագավորեցնել։ Այս խառնակության ժամանակ, ասում է, Տիտանը հափշտակեց Զրվանի ժառանգության սահմաններից մի մասը։ Այս ժամանակ մեջ մտավ նրանց բույրը, Աստղիկը, և համոզեց, որ խռովությունը դադարեցնեն։ (Տիտանը և Հապետոսթենն) համաձայնում են, որ Զրվանը թագավորե, բայց ուխտով և երդումով դաշինք են հաստատում, որ Զրվանից ծնվելիք բոլոր արուներին սպանեն, որպեսզի սերունդն սերունդ չթագավորե. այս նպատակով հզոր մարդկանց վերահսկող նշանակեցին նրա կանանց ծնունդների վրա։ Եվ երբ երկուսին սպանեցին, երդումը և ուխտը հաստատ պահելու համար, ապա Աստղիկ բույրը Զրվանի կանանց հետ միասին համոզում են Տիտաններից մի քանիսին՝ մյուս տղաներին կենդանի պահել և ուղարկել արևմուտք, այն լեռը, որին ասում էին Դյուցրնկեց, իսկ այժմ կոչվում է Ողիմպոս[23]։

Արդ՝ այս բաները ուրիշ մեկը թեկուզ ճշմարտություն համարի, թեկուզ առասպել, բայց ես հավատացած եմ, որ շատ բան ճշմարիտ է։ Որովհետև Կիպրոսի Կոստանդիա (քաղաքի) եպիսկոպոս Եպիփանը[24] հերձվածների դեմ գրած գրքում, երբ ձեռնարկում է ապացուցանել աստծու ճշմարտությունն ու արդարադատու-

թյունը՝ այսպես է ասում իսրայելացիների ձեռքով յոթն ազգերի ոչնչացման մասին. աստված արդարադատությամբ ոչնչացրեց այդ ազգերը իսրայելացիների առաջ, որովհետև նրանց կալվածների հողըն ընկնում էր Սեմի որդիների բաժնի մեջ, իսկ Քամը հարձակվելով բռնությամբ հափշտակեց այդ երկիրը. իսկ աստված երդմամբ տրված ուխտի իրավունքը պաշտպանելով վրեժ է առնում Քամի ցեղից և ժառանգությունը վերադարձնում է Սեմի որդիներին։ Բայց Տիտաններին և Ռափայիմներին ս. դիրքն էլ հիշում է։

Բայց մենք պետք է թեկուզ շատ կարճառոտ երկրորդենք ոմանց անգիր հին զրույցները, որ վաղ ժամանակ պատմվում էին հունաց իմաստունների մեջ։ Այս զրույցները մեզ հասան Գորգի և Բանան կոչվող անձերի ձեռքով, ինչպես և երրորդի՝ ոմն Դավթի[25] միջոցով։ Սրանցից մեկը, փիլիսոփայություն ուսած, այսպես էր ասում. «Ո՛վ ծերեր, երբ ես Հունաստանում էի և ուսանում էի գիտություններ՝ մի օր դեպք եղավ, որ իմաստուն և բազմամտմուտ անձերի մեջ խոսակցություն բացվեց աշխարհագրության և ազգերի բաժանման մասին։ Ոմանք գրքերը բացատրում էին այլաբանորեն, ոմանք ուրիշ կերպ։ Իսկ Ոլիմպիոդորոս անունով մեկը[26], որ նրանց մեջ ամենահմուտն էր՝ այսպես ասաց. «Ձեզ պատմեմ անգիր զրույցներ, որ ավանդաբար հասել են մինչև մեզ, որ գիշչուկներից շատերն էլ մինչև այժմ պատմում են։ Եղել է մի մատյան Քսիսութրիոսի և նրա որդիների մասին, որ այժմ ոչ մի տեղ չի երևում, որի մեջ, ասում են, պատմվելիս է եղել այսպես։ Երբ Քսիսութրիոսը նավեց դեպի Հայաստան և ցամաքի հանդիպեց՝ նրա որդիներից մեկը, Սեմ անունով, գնաց դեպի հյուսիսային արևմուտք՝ երկիրը դիտելու. հանդիպեց մի փոքր դաշտի մի երկայնանիստ լեռան մոտ, որի (դաշտի) միջով գետ էր հոսում դեպի Ասորեստանի կողմերը։ Այստեղ գետի մոտ նա կանգ է առնում ու մնում է երկու լուսնական ամիս, լեռն իր անունով կոչում է Սիմ և նորից վերադառնում է արևելահարավ՝ որտեղից որ եկել էր։ Իսկ նրա կրտսերագույն որդիներից մեկը, Տարբան անունով, երեսուն որդիներով և տասնհինգ աղջիկներով ու սրանց ամուսիններով, հորից բաժանվելով բնակություն է հաստատում նույն գետի ափին, որի անունով (Սեմը) դավառը կոչում է Տարավն (Տարոն), իսկ այն տեղը, որտեղ (Տարբանը) բնակվեց, կոչում է Ծրոնք, որովհետև այնտեղ առաջին անգամ որդիները բաժանվեցին նրանից։ Դարձյալ պատմում էին, թե նա կարճ օրեր ապրել է

բակտրիացիների սահմանների մոտ, և այստեղ էլ մնացել է նրա որդիներից մեկը։ Որովհետև արևելքի կողմերում Սեմին Զրվան են կոչում, իսկ գավառը կոչում են Զարավանդ մինչև այսօր։ Բայց ավելի հաճախ Արամյան ազգի ծերունիները փանդիռների նվագակցությամբ ցուցքերի և պարերի երգերում[27] հիշատակում են այս բաները։

Եվ այս զրույցները սուտ են թե իրոք եղած՝ մեզ համար կարևոր չէ, միայն որպեսզի դու ամեն բան գիտենաս, այս գրքում զետեղում եմ՝ ինչ որ լսվի գիտեմ և ինչ որ գրքերից, որպեսզի իմանաս իմ մտքի անկեղծությունը դեպի քեզ։

Է

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԹԵ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԲԵԼ ԿՈՉԱԾԸ ԸՍՏ Ս. ԳՐՔԻ ԻՍԿԱՊԵՍ ՆԵԲՐՈՎԹՆ Է

Բելի մասին, որին ժամանակակից էր մեր նախնին՝ Հայկը, շատեր շատ բաներ են պատմում այլընդայլը, բայց ես ասում եմ, թե Կռոնոս[28] կոչվածը և Բելը՝ Նեբրովթն է, ինչպես եգիպտացիները Մովսեսի նման թվում են՝ Հեփեստոս, Արեգակ, Կռոնոս, որ են Քամ, Քուշ, Նեբրովթ, բաց թողնելով Մեստրայիմին, որովհետև նրանք ասում են, թե իրենց առաջին մարդն եղել է Հեփեստոսը[29], որ գտել է կրակը։ (Թե ինչո՞ւ է սա կոչվում կրակը գտնող, կամ որ Պրոմեթեոսը[30] գողացել է կրակն աստվածներից և շնորհել է մարդկանց— այս այլաբանությունը բացատրելը մեր նյութին չի վերաբերում)։ Նաև եգիպտացիների թագավորական ցեղերի կարգը և տարիների գումարումը Հովիվների թագավորական հարստությունից մինչև Հեփեստոս հավասար է գալիս եբրայեցոց, Հովսեփի ժամանակներից մինչև Սեմ, Քամ և Հաբեթ։

Այսքանը բավական կհամարենք այս հարցերի մասին։ Որովհետև եթե աշտարակաշինությունից սկսած մինչև ներկա ժամանակներս պատահած բոլոր բաները ջանանք մեջ բերել մեր պատմության մեջ ի գիտություն քեզ, ապա ե՞րբ կհասնենք քո ցանկացած պատմական զրույցներին, մանավանդ որ մեր առաջիկա գործն երկար է, իսկ մահկանացուների ժամանակը կարճ է և անհայտ։ Ուստի կսկսեմ քեզ ցույց տալ մեր (պատմությունը), թե ո՞րտեղից և ի՞նչպես (սկսվեց)։

Ը

ԹԵ Ո՞Վ ԵՎ Ո՞ՐՏԵՂԻՑ ԳՏԱՎ ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմում են, թե Արշակ մեծը[31], Պարսից և Պարթևաց թագավորը, որ ինքն էլ ցեղով պարթև էր, ապստամբեց մակեդոնացիների դեմ, թագավորեց բոլոր Արևելքի և Ասորեստանի վրա, սպանեց Նինվեում Անտիոքոս թագավորին և բոլոր տիեզերքը հնազանդեցրեց իր ձեռքի տակ։ Սա իր եղբորը՝ Վաղարշակին թագավորեցնում է մեր Հայոց աշխարհի վրա, այսպես նպատակահարմար համարելով, որպեսզի իր թագավորությունն անխախտ մնա։ Նրան թագավորության քաղաք է նշանակում Մծբինը և նրան սահմաններ է որոշում՝ Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պաղեստինը, Ասիան, ամբողջ Միջերկրայքը[32] և Թետալիան[33], Պոնտոս ծովից մինչև այնտեղ, ուր Կովկասը վերջանում է արևմտյան ծովի մոտ[34], նաև Ատրպատականը, «և էլի՝ որքան քո միտքն ու քաջությունը կհասնեն, որովհետև, ասում է, քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կկտրի, այնքան էլ կտիրի»։

Սա իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե ո՞վքեր արդյոք և ի՞նչպիսի մարդիկ տիրելիս են եղել Հայոց աշխարհի վրա իրենից առաջ, արդյոք ինքը քաջերի՞ տեղն է գրավում, թե ապիկարների։ Նա գտավ մի ուշիմ ասորի, Մար Աբաս Կատինա անունով, քաղդեական և հունարեն գրության մեջ վարժ, և նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծի մոտ արժանավայել ընծաներով, (խնդրելով) բանալ նրա առաջ արքունական դիվանը։ Եվ նրան թուղթ է գրում այս բովանդակությամբ։

Թ

ՀԱՅՈՑ ՎԱՂԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԹՈՒՂԹԸ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐ ԱՐՇԱԿ ՄԵԾԻՆ[35]

«Արշակ թագավոր ցամաքի և ծովի, որի անձն ու կերպարանքն իսկապես մեր աստվածներին են նման, բախտն ու հաջողությունները՝ բոլոր թագավորներից գերազանց և մտքի լայնությունը՝ ինչպես երկնքինը երկրի վրա. Վաղարշակ, քո կրտսեր

եղբայրն ու նիզակակիցը, որ քեզանից նշանակվեց Հայոց թագավոր։ Ողջ եղիր մշտական հաղթությամբ։

Որովհետև քեզանից պատվեր ստացա քաջության և ամեն տեսակ իմաստության հոգ տանել՝ երբեք զանց չարի քո խրատն անփութությամբ, այլ ամեն բանի խնամք և հոգ տարա՝ որքան միտքս կտրում էր և հնարավոր էր։ Եվ այժմ քո խնամակալությամբ թագավորությունս կարգավորելով՝ միտքս դրի իմանալ, թե ինձանից առաջ ովքե՞ր են տիրել Հայոց աշխարհիս և ո՞րտեղից են այն նախարարությունները, որ այստեղ կան։ Որովհետև այստեղ ոչ Հայտնի կարգեր են եղել և ոչ մեհենական պաշտամունքներ, և աշխարհիս դիվավորներից ոչ առաջինն է Հայտնի և ոչ վերջինը, և ոչ ուրիշ մի օրինավոր բան կա, այլ ամեն ինչ խառնիխուռն է և վայրենի։

Ուստի աղաչում եմ քո տերությանը, որ հրամայես արքունական դիվանը բանալ քո հղոր տերության ներկայացող այդ մարդու առաջ, որպեսզի քո եղբոր և որդուն ցանկալի (պատմությունը) գտնելով՝ փութով բերե։ Համատացած եմ, որ մեր բավականությունը, որ կունենանք (քո) կամքը կատարելով, քեզ ևս ուրախություն կլինի։ Ողջ եղիր, աստվածների մեջ բնակությամբ երևելի՛դ։

Արշակ մեծն ընդունելով Մար Աբաս Կատինայից դրությունը, մեծ հոժարությամբ հրամայում է առաջարկել նրան արքունական ընծաներ, որ Նինվեումն էր, միանգամայն ուրախանալով, որ այսպիսի մտադրություն ունի իր եղբայրը, որին հանձնարարել էր իր թագավորության կեսը (Մար Աբասը) աչքի անցկացնելով բոլոր մատյանները՝ գտնում է մի մատյան հունարեն դրված, որ ուներ, ասում է, այսպիսի վերնագիր.

Մատյանի սկիզբը

Այս մատյանն Աղեքսանդրի[36] հրամանով քաղդեարեն լեզվից թարգմանված է հունարենի և պարունակում է բուն հների և նախնիքների պատմությունները։

Որի սկզբում, ասում է, նշանակված են եղել Զրվանը, Տիտանը և Հապետոսթեն, և այս երեք նախարարական մարդկանց սերունդներից բոլոր նշանավոր մարդիկ, յուրաքանչյուրն իր տեղում դասավորված երկար տարիների ընթացքում։

Մար Աբաս Կատինան այս մատյանից հանելով միայն մեր

աղղի հավաստի պատմությունը հուն և ասորի դրերով՝ բերում է Մծբին, Վաղարշակ թագավորին[37], են բարեկազմ ու քաջ աղեղնավոր, արի Վաղարշակը, կորովախոս ու հանճարևղը, ընդունելով այն՝ համարելով առաջինն իր դանձերի մեջ՝ հրամայում է մեծ ջգուշությամբ պահել արքունիքում և մի մասը նրանից հրամայում է արձանի վրա դրոշմել։ Որից մենք հավաստի տեղեկանալով դրույցների կարդին՝ կկրկնենք այժմ, քո հարցասիրությունը (դոհացնելով), հասցնելով մեր բնիկ նախնարարությունները մինչև քաղդեացոց Սարդանապալը և դեռ ավելի մոտ։

Պատմությունն այսպես էր սկսվում։

Աստվածներից առաջինները ահեղ էին և երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդության սկիզբ։ Սրանցից առաջ եկան հսկաների սերունդը, անհեթեթ, հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությամբ հղանալով ծնան աշտարակաշինության ամբարիշտ խորհուրդը, որը և ձեռնարկեցին իրագործելու։ Աստվածների ցասումից ինչ-որ ահագին և աստվածային հողմ փչելով կործանում է աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է (մյուսներին) անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ աղմուկ և շփոթություն է ընկնում։ Սրանցից մեկն էր և Հապետոսթյան Հայկը, անվանի և քաջ նախապարը, հատ աղեղով և հզոր նետաձիգ»։

Բայց մենք կդադարեցնենք դրուցաբանության այս կարգը, որովհետև մեր նպատակն է ոչ թե պատմությունն ամբողջությամբ գրել, այլ աշխատել ցույց տալ մեր առաջին և բուն հին նախնիքներին։ Արդ՝ նույն մատյանից սկսելով կասեմ. Հապետոսթե, Մեբոդ, Սիրաթ, Թակլաղ, որ են Հաբեթ, Գոմար, Թիրաս, Թորգոմ։ Որից հետո նույն մատենագիրը շարունակելով ասում է կարգով— Հայկ, Արամանյակ և այլն, որոնց մասին արդեն հիշել ենք։

Ը

ՀԱՅԿԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հատ բազուկներով։ Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձնոք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների

վրա տիրապետելու։ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային աղգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամարտիկ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ։ Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու, և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել։ Որին Հայկը չկամենալով հնազանդել, Բարելոնում Արամանյակ որդին ծնելուց հետո. չվեց դեպի Արարադի[38] երկիրը, որ գտնվում է Հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեքհարյուր հոգի, և ուրիշ ընդօծիններով[39], նրան հարած ևկվորներով և բոլոր տունուտեղով[40]։ Գնում բնակվում է մի լեռան ստորոտում դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից։ Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն[41] և տալիս է ժառանգության Կադմոսին, Արամանյակի որդուն։ Սա արդարացնում է ասված անգիր հին ըրույցները։

Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), իր մնացած մարդկանցով և տունուտեղով շարժվում է դեպի հյուսիսային արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն քե այստեղ քնակողները հայրեր են Թորգոմի տան սերունդի։ Շինում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն։ Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, քե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդել են դյուցազնին։ Այս էլ արդարացնում է ասված անգիր ըրույցները։

ԺԱ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲԵԼԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Խոսքը շարունակելով (Մար Աբասը) ասում է, քե իբր Տիտանյան Բելը[42] իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է հյուսիսի կողմը Հայկի մոտ, որ նա հնազանդության գա և-

խաղաղությամբ ապրիր։ «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրելով։ Հայկը Բելի պատգամավորներին հետ է դարձնում խստությամբ պատասխանելով։ Ուղարկված (պատգամավորը) վերադառնում է Բաբելոն։

Այն ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարատի երկիրը, Կադմոսի տան մոտ։ Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ, իրենից առաջ արագագնաց (մարդիկ) ուղարկելով։ «Գիտցած եղիր, ասում է, ո՛վ մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա հավերժական քաջերով և երկնադեզ հասակով մրցող հսկաներով։ Եվ ես լսելով, որ նա մոտեցել է իմ տանը՝ փախա և ահա տագնապած գալիս եմ քեզ մոտ։ Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես»։

Իսկ Բելը հանդուգն ու անճոռնի ամբոխի զորությամբ, ինչպես մի հեղեղ, որ զառիվայրից ներքև է վիժում, շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները, վստահ լինելով զորավոր մարդկանց սրտերի և անձերի վրա։ Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հսկան, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, շտապով հավաքում է իր որդիներին և թոռներին, քաջ և աղեղնավոր մարդկանց, թվով շատ նվազ, և ուրիշ մարդկանց, որ ձեռքի տակ ուներ, գնում հասնում է մի ծովակի ափ[43], որի ջրերն աղի են և մանր ձկներ են պարունակում։ Եվ իր զորքերը կանչելով՝ ասում է նրանց. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք»։

Եվ ամբողջ ասպարեզներ[44] դեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ։ Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը, Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի

վրա՝ իբրև դիտանոցում։ Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա և ամբոխի մեջ։ Նա կրում էր երկաթե գլխանոց, նշաններ կրող վերջերով, թիկունքի և լանջի վրա պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որից ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը. աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում վահան, նրա աջ և ձախ կողմում ընտիր (զորականներ)։ Հայկը տեսնելով պինդ սպառազինված Տիտանյանին և նրա աջ և ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետև աղնվ և սուր (գործածելու մեջ) կորովի մարդիկ էին, ինքը կանգնեց առջևից և մյուս բազմությունը կանգնեցրեց իր հետևում, դասավորեց մոտավորապես եռանկյունի ձևով և հանդարտ առաջ շարժվեց։

Երբ երկու կողմի հսկաներն իրար մոտ հասան, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին իրենց զրահներով և իրար վրա ահ ու սարսափ էին գցում իրենց հարձակումների ձևերով։ Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բռնանի հանդիպելով թավալվում ընկնում էին գետին, և կռիվն (անորոշ էր մնում), երկու կողմերն էլ անպարտելի մնալով։ Այս ահռելապահի տարակուսական դիրքը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց, և հետո քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր. որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի։ Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քարշում է լայնալիճ[45] աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում. այս կերպով՝ ճոխացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գետին և շունչը փչում էր։ Իսկ ամբոխն այս քաջության ահագին գործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը։ Այսքանը բավական լինի այս մասին։

Բայց ճակատամարտի տեղը շենցնում՝ դարձնում է դաստակերտ և անունը դնում է Հայք, հաղթական պատերազմի պատճառով. սրանից գալաոն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր։ Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ զորականների հետ՝ Հայկը

կոչեց Գերեզմանք, որին այժմ ասում են Գերեզմանակ։ Բայց Բելի դիակը, ասում է (Մար Աբաս), դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների։ Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք։

ԺԲ

ՀԱՅԿԻՑ ՍԵՐՎԱԾ ՑԵՂԵՐԻ ԵՎ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՆՐԱՆՑԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՆՉ ԳՈՐԾԵՑ

(Մար Աբասի) մատյանում սրանից հետո ուրիշ շատ բաներ են պատմվում. բայց մենք կշարունակենք այն, որ պիտանի է մեր հավաքման համար։

Սրանից հետո, ասում է նա, Հայկը դառնում է իր բնակության տեղը, իր Կադմոս թոռին շատ բան է պարգևում պատերազմի ավարից և անվանի մարդիկ իր ընտրածներից։ Նրան հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը գնում դադարում է Հարք կոչված դաշտում։ Սա տարիներ ապրելով՝ Արամանյակին ծնում Բաբելոնում, ինչպես վերն ասացինք. դրանից հետո դարձյալ ոչ քիչ տարիներ ապրելով՝ մեռնում է, ամբողջ ազգը հանձնելով իր Արամանյակ որդուն։

Սա իր եղբայրներից երկուսին, Խոռին և Մանավազին, իրենց բոլոր աղխով թողնում է Հարք կոչված տեղում, ինչպես նաև Մանավազի որդուն՝ Բազին։ Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բազը ժառանգում է աղի ծովի արևմտյան հյուսիսային ափը և գավառն ու ծովը կոչում է իր անունով[45]։ Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյաց նահապետությունները, նաև Որդունի կոչվածը, որոնք վերջերս, սուրբ Տրդատից հետո, մեկը մյուսին ոչնչացրին պատերազմով։ Իսկ Խոռը բազմանում է հյուսիսային կողմերում, շեներ է հիմնում, և, ասում են, որ նրանից սկսած մինչև այժմ շարունակում է Խոռխոռունիների ցեղի մեծ նախարարությունը, քաջ և անվանի մարդիկ, որոնք այժմ էլ մեր ժամանակ երևելի են։

Իսկ Արամանյակը բոլոր բազմությունն առնելով չվում է դեպի հյուսիսային արևելք և գնում իջնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված, որի միջով մի կարկաչա-

սահ գետ էր անցնում արևմտյան կողմից, և դաշտը կարծես թեքված էր դեպի արևելք և երկարությամբ ձգվում էր արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում էին բազմաթիվ ականակիտ աղբյուրներ, որոնք միանալով, գետեր կազմելով, հեզաբար հոսում էին նրանց սահմանների մոտ, լեռների ստորոտներով և դաշտի ափերով, որպես թե պատանիներ շրջեին երիտասարդուհիների մոտերը։ Իսկ հարավային արեգակնաճեմ[47] լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել էր երկրից՝ պինդ գոտևորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հետզհետե սրվում էր դեպի վեր. իսկապես մի ծերունի լեռ՝ երիտասարդացած լեռների մեջ։ Արամանյակն այս խոր դաշտում բնակելով՝ շենցնում էր մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը նույն կողմում, լեռն իր անվան հարմարեցնելով կոչում է Արագած, իսկ կալվածը՝ ոտն Արագածո (Արագածի ստորոտ)։

Բայց սքանչելի մի բան է ասում պատմագիրը, թե շատ տեղերում ցիրուցան բնակում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր բնիկ նախնի Հայկի գալուստը։

Արամանյակը տարիներ ապրելուց հետո ծնավ Արամայիսին, որից հետո էլի քսավական տարիներ ապրելով մեռավ։ Նրա որդին՝ Արամայիսը իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով կոչում է Արմավիր, իսկ գետը կոչում է Երասխ՝ իր թոռան Երաստի անունով։ Իսկ իր որդուն, բազմազավակ և շատակեր Շարայինին[48] ամբողջ աղիով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ։ Ուստի, թվում է, թե արդարանում է գյուղացիների մեջ գործածվող առածը. «Հոս, ասում են, Շարայի որկորն ունես, բայց մենք Շիրակի ամբարները չունենք»։ Այս Արամայիսը տարիներ ապրելով ծնավ Ամասիային, որից հետո էլի տարիներ ապրելով մեռավ։

Ամասիան Արմավիրում բնակվելով տարիներ անցնելուց հետո ծնում է Գեղամին և Գեղամից հետո արի Փառոխին և Ցուլակին։ Սրանց ծնելուց հետո գետն անցնում է, մոտենում է Հարավային լեռան։ Այստեղ, լեռան ստորոտում, խորշերում, խոշոր ծախսերով շինում է երկու տուն, մեկը դեպի արևելք, լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների մոտ, իսկ մյուսը՝ այդ տնից դեպի արև-

մուտք, նրանից հեռու՝ հետևակ մարդու կես օրվա ճանապարհով երկար օրում[49]։ Այս տները նա տվեց ժառանգություն իր երկու որդիներին, արի Փառոխին, և կայտառ Յոլակին, որոնք այնտեղ բնակվելով՝ իրենց անունով կոչեցին այդ տեղերը, Փառոխից՝ Փառախոտ և Յոլակից՝ Յոլակերտ։ Իսկ լեռը Ամասիան իր անունով կոչեց Մասիս[50] և հետո նորից Արմավիր դառնալով կարճ տարիներ ապրեց և մեռավ։

Իսկ Գեղամը տարիներ անցնելուց հետո Արմավիրում ծրնավ Հարմային. նա Հարմային թողեց Արմավիրում բնակվելու իր որդիների հետ. իսկ ինքը գնաց արևելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետևի կողմը, մի ծովակի ափ։ Նա շենցնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները Գեղարքունի, ինչպես կոչվում է նաև ծովը։ Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեգ ու քիկնավետ, վայելչակազմ, կորովախոս գեղեցիկ աղեղնավոր էր։ Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ մարդիկ իբրև ծառա[51] և նրա ժառանգության սահման է կարում ծովից դեպի արևելք մինչև մի դաշտ, որտեղ Երասխը, սևապտած լեռները ձեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով ահագին շառաչյունով թափվում է դաշտը։ Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով և աշխարհը իր անունով կոչում է Սյունիք, բայց պարսիկներն ավելի ճիշտ կոչում են Սիսական։ Վերջերը Վաղարշակ, Հայոց առաջին թագավորը Պարթև ցեղից, գտնելով սրա սերունդներից անվանի մարդիկ՝ այս աշխարհին տեր է նշանակում, որ Սիսական ցեղն է։ Վաղարշակ այս անում է պատմությունից իմանալով, իսկ ինչպես այս եղավ, իր տեղում կպատմենք։

Իսկ ինքը Գեղամը նորից դառնում է հիշյալ դաշտը և նույն լեռան ստորոտում, մի ամուր ձորակում շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամի, որ հետո նրա թոռան Դառնիկի անունով կոչվեց Դառնի։ Վերջերը, Վաղարշակի թոռան Արտաշեսի ժամանակ, սրա սերունդներից մի պատանի է եղել Վարաժ անունով, հզչերությունների, այծյամների և վարազների որսերում հաջողակ, ուժեղ և ճիշտ նետաձիգ։ Սրան (Արտաշեսը) նշանակում է արքունական որսերի վրա և շեներ է պարգևում Հրազդան կոչված գետի ափերին։ Սրանից, ասում են, առաջ է եկել Վարաժնունյաց տունը։ Այս Գեղամը, ինչպես ասացինք, տարիներ ապրելով

ծնավ Հարմային, որից հետո էլի ապրելով մեռավ և իր որդուն՝ Հարմային հրամայեց Արմավիրում բնակվել։

Այս է Հայկը, որ հայ ազգի նախնին, որ Թորգոմի որդին էր, սա՝ Թիրասի, սա՝ Գամերի, սա՝ Հաբեթի, և այս են նրա ցեղերն ու սերունդները և նրանց բնակության աշխարհը։ Այնուհետև, ասում է (Մար Աբասը), նրանք սկսեցին բազմանալ և երկիրը լցնել։

Հարման տարիներ ապրելով ծնավ Արամին։

Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ։ Բայց սրա ընդարձակ պատմությունն ու քաջության գործերը, թե ի՛նչպես և ո՛ր ժամանակ կատարվեցին՝ եթե կամենաս՝ այս գրքից դուրս կդնենք, կամ բաց կթողնենք, իսկ եթե ոչ՝ կդնենք հենց այստեղ[52]։

ԾԳ.

ԱՐԵՎԵԼՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒՔԱՐ ՄԱԴԵՍԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Եվ որովհետև մեզ հաճելի թվաց քո հրամանով մեր հանձն առած նեղությունն ավելի մեծ բավականություն համարել, քան ուրիշներից (առաջարկված) ուրախություններն ու կերուխումը, ուստի համաձայնեցինք կարճառոտ մեջ բերել զրույցները Հայկյան Արամի վարած պատերազմների մասին։ Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ի՛նչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա։

Այս Արամը Նինոսի Ասորեստանին և Նինվեին տիրելուց քիչ տարիներ առաջ, շրջակա ազգերից նեղվելով՝ ժողովում է ընտանի քաջ և աղեղնավոր մարդկանց բազմություն, մոտ հինգ բյուր մարդ, վարժ նիզակավոր, շատ ուժեղ երիտասարդներ, հաջողակ ձեռքերով, սրտոտ և պատերազմելու հմուտ։ Նա պատահում է Հայոց սահմաններին մոտ մեդացոց երիտասարդներին,

որոնց առաջնորդում էր մի ոմն Նյութար Մագես[53], մի հպարտ և պատերազմասեր մարդ, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը։ Որ մի անգամ քուշանների նման ասպատակելով (Ֆերի) սըմբակներով ոտնակոխ արավ Հայաստանի սահմանները և երկու տարի իրեն ծառայեցրեց։ Արամը հանկարծորեն նրա վրա հարձակվելով արևը ծագելուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիվ ամրոխը և իրեն՝ Նյութարին էլ, որ Մագես էր կոչվում, ձերբակալ անելով բերեց Արմավիր և այնտեղ պարսպի աշտարակի ծայրին հրամայեց պատին վարսել, երկաթե ցից մխելով ճակատի մեջ, ի ցույց դնելով անցորդներին և բոլոր եկվորներին, իսկ նրա աշխարհը, մինչև Ջարասպ կոչված լեռը, իրեն ծառայեցնելով հարկատու գարձրեց մինչև Նինոսի թագավորելն Ասորեստանի և Նինվեի վրա։

Իսկ Նինոսը Նինվեում թագավորելով՝ մտքումը պահած ուներ իր նախնիի՝ Բելի վրեժի հիշատակը, զրույցներից լսած լինելով, և երկար տարիներ մտածում էր վրեժխնդիր լինել, դիտելով ու սպասելով նպաստավոր ժամանակի, որպեսզի քաջ Հայկի սերունդներից սերմանված ամեն մի ճետ ոչնչացնե։ Բայց կասկածելով, թե այսպիսի ձեռնարկությունը կարող է նրա թագավորության կորստյան պատճառ դառնալ, իր չար խորհուրդը թաքցնում է. (Արամին) հրամայում է առանց կասկածի իր իշխանությունը վարել, իրավունք է տալիս մարգարտե վարսակալ կրել և իր երկրորդը կոչվել։ Բայց բավական լինի այսքան ասվածը, որովհետև մեր առաջիկա գործը թույլ չի տալիս երկար կանգ առնել մեր պատմության սկզբում։

ԺԴ

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԿՌՎԻ ԵՎ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅԱՊԻՍ ՔԱՆԱՉՅԱՅԻ ՄԱՍԻՆ, ՆԱԵՎ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարճառոտ խոսքերով հիշատակենք ինչ որ նույն մասյանում պատմվում է սրա քաջության դործերի մասին արևմուտքում, և Ասորեստանցիների հետ կռիվը, դեպքերի պատճառն ու նշանակությունը միայն հայտնելով, իսկ գործի ընդարձակությունը համառոտ խոսքերով բացատրելով։

Նույն այս Արամը, արևելցիների հետ ճակատամարտը վերջացնելուց հետո, նույն զորությամբ շարժվում է Ասորեստանի

կողմերը, այնտեղ ևս գտնվում է մի ուրիշ ապականիչ իր երկրին Բարշամ անունով, հսկաների ցեղից, չորս բյուր սպառազեն հետևակներով և հինգ հազար հեծյալներով. նա խիստ հարկերով սաստիկ նեղելով անասելա էր դարձրել բոլոր շրջակայքը։ Արամը պատերազմով նրան ընդհարվելով՝ հալածում է նրան Կորդուքի միջով մինչև Ասորեստանի դաշտը, շատերին կոտորելով. Բարշամն էլ նրա զինակիրների առաջը պատահելով սպանվում էր։ Այս Բարշամին ասորիները երկար ժամանակ աստվածացրած պաշտում էին նրա բազմաթիվ արիական գործերի պատճառով։ Իսկ Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամ հարկատու ծառայության մեջ պահեց երկար ժամանակ։

Իսկ ինչ քաջության գործ որ սա կատարեց արևմտյան կողմը Տիտանյանների հետ, մենք դեռ պետք է պատմենք։ Սա դեպի արևմուտք շարժվելով, առաջինի վրա չորս բյուր հետևակ և երկու հազար հեծյալ (ավելացնելով)[54], հասնում է կապադովկացոց կողմերը, մի տեղ, որ այժմ Կեսարիա է կոչվում։ Որովհետև նա արևելյան և հարավային (ազգերը) նվաճելով և հնձնելով այս երկու ցեղերին, արևելքը Միսակյաններին և Ասորեստանի կողմերը Կադմոսի տան հաջորդներին՝ այլևս ոչ մի տեղից չփոթության կասկած չուներ՝ ուստի երկար ժամանակ մնաց արևմուտքում։ Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանյան Պայապիս Քաաղյան, որ բռնացել գրավել էր տարածությունը երկու մեծ ծովերի միջև, այսինքն Պոնտոսի[55] և Օվկիանոսի (Արամը) նրան ընդհարվելով վանում և փախցնում է մի կղզի ասիական ծովում. այնտեղ աշխարհի (պահպանության) համար թողնելով Մշակ անունով մեկին իր ցեղից և մի բյուր զորք՝ ինքը վերադառնում է Հայաստան։

Բայց այդ աշխարհի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն, այս պատճառով հույները մինչև այսօր այդ երկրամասը կոչում են Պռոտին Արմենիան[56], որ թարգմանվում է Առաջին Հայք։ Իսկ այն դաստակերտը, որ Արամից կողմնապետ նշանակված Մշակը շինեց իր անունով և փոքր պարսպով պատեց՝ այդ աշխարհի հին մարդիկ կոչում էին Մաժաք, կարծես չկարողանալով ճիշտ արտասանել. հետո նա ուրիշներից ավելի ընդարձակ շինվելով կոչվեց Կեսարիա։ Միևնույն կարգով՝ այդ տե-

ղերից մինչև բուն երկրի սահմանները շատ անբնակ տեղեր բնակիչներով լցրեց, որոնք կոչվեցին Երկրորդ և Երրորդ Հայք, նաև Չորրորդ (Հայք)[57]։ Այս է բուն և ճշմարիտ պատճառը՝ մեր արևմտյան կողմը՝ Առաջին և Երկրորդ, այլև Երրորդ և Չորրորդ Հայք անվանելու։ Իսկ ինչ որ այլապես է պատմվում հունական կողմերում՝ մեզ ընդունելի չէ, ուրիշներն ինչպես կամենան։

Սա այսպես հզոր և անվանի դառնալով՝ նրա անունով մինչև այսօր մեր աշխարհն անվանում են մեր շրջակա ազգերը, ինչպես ամենքին հայտնի է։ Սա ուրիշ շատ քաջության գործեր էլ ունի կատարած, բայց ինչքան որ առաջինը՝ բավական ենք համարում։

Բայց թե ինչո՞ւ այս բաները թագավորների բուն մատյաններում կամ մեհենական պատմություններում չհիշատակվեցին, թող այս մասին ոչ ոք չտարակուսի, կասկածի չդնա։ Նախ՝ որ այս ժամանակը Նինոսի թագավորությունից առաջ է, երբ ոչ ոք այսպիսի բաների հոգ չէր տանում, երկրորդ՝ որ նրանք հարկավոր և կարևոր չէին համարում օտար ազգերի, հեռավոր աշխարհների հին լուրերն ու նախնական զրույցները իրենց թագավորների կամ մեհյաններից մատյաններում դրել, մանավանդ որ պարծանք և պատիվ չէր օտար ազգերի քաջությունը և արիական գործերը հիշատակել։ Բայց թեպետ և (սրանք) բուն մատյաններում չկան, սակայն, ինչպես Մար Աբաս Կատինան պատմում է, փոքր և աննշան մարդկանց ձեռքով գուսանական (երգերից) ժողովված են արքունի դիվանում։ Մի ուրիշ պատճառ էլ բերում է նույն մարդը. ըն ի՛նչպես իմացա, Նինոսը Հայարդ և անձնասեր մարդ լինելով և կամենալով միայն իրեն ցույց տալ իբրև սկիզբ աշխարհակալության, ամեն տնօրեն քաջության և կատարելության՝ հրամայում է այրել բազմաթիվ մատյաններ և նախնյաց մասին զրույցներ (որ վերաբերում էին) զանազան տեղերի և առանձին մարդկանց քաջության գործերին, իր ժամանակ եղածներինը դադարեցնելով (գրել) և գրել միայն այն՝ ինչ որ իրեն է վերաբերում։ Բայց այս կրկնելն ավելորդ էլ էր։

Այս Արամը տարիներ ապրելով ծնավ Արային, որից հետո էլի շատ տարիներ ապրելով մեռավ։

ԱՐԱՅԻ ԵՎ ՆՐԱ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ ՇԱՄԻՐԱՄԻՑ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ

Արան Նինոսի վախճանելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին, Նինոսից նույնպիսի շնորհի արժանանալով՝ ինչպես և իր հայր Արամը։ Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել։ Իսկ Նինոսի վախճանվելուց կամ կրետե փախչելուց հետո, ինչպես համոզված եմ, Շամիրամ իր ախտը համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով, և շատ աղաչանքներով ու պարգևների խոստումով խնդրում է գալ Նինվե իր մոտ, և կա՛մ իրեն կին առնել և թոլորի վրա թագավորել, կամ նրա ցանկության կամքը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ։

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկություն կատարեցին և Արան չհամաձայնեց, ապա Շամիրամը սաստիկ չարանալով, պատգամավորությունը դադարելուց հետո, առնում է իր զորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Հայոց երկիրը՝ Արայի վրա. բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանել կամ հալածել, որքան նվաճել կամ իր ձեռքը գցել, որպեսզի իր ցանկության կամքը կատարե. որովհետև մոլեգին ցանկությունից՝ նա տոհմանքով սիրահարվել էր (Արայի) մասին եղած պատմություններին՝ որպես թե նրան տեսնելիս լիներ։ Փութով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ։ Ճակատը պատրաստելիս նա իր զորապետներին պատվեր է տալիս, եթե դեպքը բերի, չանալ կենդանի պահել Արային։ Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից։ Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակների մեջ փնտրելու իր ցանկալի տարփածուին։ Արային գտնում են մեռած քաջամարտիկների մեջ։ Հրամայում է նրան տանել դնել ապարանքի վերնատունը։

Երբ Հայոց զորքը պատրաստվում էր նորից պատերազմելու Շամիրամ տիկնոջ հետ, Արայի մահվան վրեժն առնելու համար՝ (Շամիրամն) ասում է. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա

վերքերը լիզել և նա կկենդանանա»։ Միևնույն ժամանակ նա հույս ուներ կախարդական դյութությամբ Արային կենդանացնել, տուփական ցանկությունից ցնորված։ Բայց երբ դիակն սկսեց նեխել, հրամայեց զցել նրան մի մեծ վիհի մեջ ու ծածկել, իսկ իր սիրականներից մեկին զարդարելով ու ծածուկ պահելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Աստվածներն Արային լիզելով ու կենդանացնելով՝ մեր փափագն ու ցանկությունը կատարեցին. ուստի այսուհետև նրանք ավելի ևս արժանի են մեղանից պաշտվելու և փառավորվելու, իբրև մեզ ուրախացնողներ և մեր կամքը կատարողներ»։ Նաև մի նոր արձան է կանգնեցնում աստվածների անունով և մեծամեծ զոհերով պատվում է նրան, ցույց տալով, իբր թե աստվածների այս զորությունը կենդանացրեց Արային։ Այսպիսի լուրեր տարածելով Հայոց աշխարհում և բոլորին համոզելով՝ հուզմունքը խաղաղեցնում է։

Արայի մասին այսքանը բավական է կարճառոտ հիշատակել։ Նա տարիներ ապրելով ծնավ Կարդոսին։

ԺԶ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԱՄԻՐԱՄԸ ԱՐԱՅԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ՇԻՆՈՒԻՄ Է ՔԱՂԱՔԸ ԵՎ ԴԵՏԻ ԱՄԲԱՐՏԱՎԸ ԵՎ ԻՐ ՏԱՒՆԸ

Այսպիսի հաջող գործերից հետո Շամիրամը սակավ օրեր մնում է այն դաշտում, որ Արայի անունով կոչվեց Այրարատ. քարձրանում է երկրի հարավակողմն ընկած լեռնային գավառը, որովհետև ամառային եղանակ էր, կամենալով հովիտներում և ծաղկավետ դաշտերում զբոսնել։ Նվ տեսնելով երկրի գեղեցկությունը, օդի մաքրությունը, բխող մաքուր աղբյուրները, կարկաչահոս ու բարեհնաց գետերը՝ նա ասում է. «Պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինել, որպեսզի տարվա շրջանի մի չորրորդ մասը, այսինքն ամառային եղանակը, ամենաառեսակ վայելչությամբ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը, օդի զով ժամանակը, կյանք վայելենք Նինվեում»։

Շատ տեղերով անցնելով՝ գալիս հասնում է աղի ծովակի մոտ արևելյան կողմից. տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր[58], որ երկայնությամբ ձգվում էր դեպի արևմուտք, հյուսիսա-

յին կողմում մի փոքր թեքությամբ, իսկ միջօրեական (հարավային)՝ ուղղահայաց դեպի երկինք բարձրացած, զառիվայր ապառաժ։ Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտաձև երկայնաձև հովիտ, որ լեռան արևելյան կողմից իջնում էր ծովի ափը, ընդարձակ և գեղեցիկ ձորի ձևով. նրա միջով հոսում էին քաղցրահամ ջրեր լեռներից իջնելով, ծմակներից և հովիտներից ծորելով, որոնք լեռների ստորոտների մոտ միավորվելով՝ ծավալվում, գեղեցիկ գետեր էին կազմում։ Հովտաձև ձորակի մեջ ոչ սակավ շեներ կային, ջրերի աջ ու ձախ կողմերում գետեղված։ Այս հաճելի բլուրից դեպի արևելք կար մի փոքրագույն լեռ[58]։

Այս տեղի վրա աչք դնելով՝ այրասիրտ և վավաշոտ Շամիրամը հրամայում է անմիջապես Ասորեստանից և իր իշխանության մյուս տեղերից փափագած տեղը բերել չորս բյուր և երկու հազար անարվեստ դործավորներ և իր ընտրյալներից վեց հազար արվեստավոր գործավորներ[59], որոնք կատաղելապես հմուտ էին փայտի, քարի, պղնձի և երկաթի դործի արհեստներում։ Հրամանն ասածին պես կատարվում էր. բերվեցին անարվեստ բանվորների և բազմարվեստ հանճարեղ վարպետների բազմությունները։ Եվ հրամայում է՝ նախ գետի ամբարտակը շինել ապառաժ խոշոր քարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն և բարձր, որ միևնույն ժամ, ինչպես ասում են, հաստատուն մնում է։ Գետի այս ամբարտակի ճեղքվածքներում այրտեղի մարդիկ, ինչպես լսում եմ, փախչում ամրանում են ասպատակությունների և գաղթականությունների ժամանակ, որպես թե ամրանալիս լինեին ապառաժ լեռների գագաթներին։ Եվ եթե մեկը կամենա փորձել՝ նա չի կարողանա ամբարտակի շինվածքից պոկել թեկուզ մի փոքր քար՝ պարսատիկի համար, որչափ էլ աշխատի։ Եվ երբ մարդ նայում է քարերի շուրջն եղած կրի ծեփին, նրան այնպես է թվում, թե ճարպ է ածած այնտեղ[60]։ Այսպես երկար ասպարեզներով ամբարտակն անցկացնելով՝ հասցնում է քաղաքի համար որոշված տեղը։

Այստեղ հրամայում է բազմությունը շատ դասերի բաժանել և ամեն մի դասի վրա ղեկավար նշանակել վարպետներից ընտիրներին, և այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով՝ քիչ տարիներից հետո դլուխ է բերում հրաշալի շինվածքը, ամուր պարիսպներով ու պղնձից շինած դռներով։ Քաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ ընտիր ապարանքներ. կրկնահարկ և

ծառահարկ, զարդարված տեսակ տեսակ գույնզգույն քարերով, և ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության[61]: Քաղաքի կողմերն էլ որոշում է գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով: Շինում է նաև չքնաղ և զարմանալու արժանի բաղանիքներ, համապատասխան քաղաքի դիրքին և պիտույքներին: Գետի մի մասը (առուների) բաժանելով՝ անց է կացնում քաղաքի միջով ամեն տեսակ պիտույքների և բուրաստանների ու ծաղկոցների ոռոգման համար. իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակի աջ և ձախ ափերով՝ քաղաքի և բոլոր շրջակայքի ոռոգման համար: Քաղաքի բոլոր արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնտեղ տնկում է բազմաթիվ առատաբեր և դինեբեր այգիներ: Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու հռչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում է մարդկանց անթիվ բազմություն:

Իսկ քաղաքի (վերի) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում և պատմելու հնարավորություն չկա: Այդտեղ գազաթի շուրջը պարիսպ քաշելով՝ ներսը շինում է դժվար մտնելու և դժվար դուրս գալու ինչ-որ ծածուկ և ահռելի արքայանիստ շինվածքներ: Դրանց շինության որպիսությունը մենք ոչ ոքից ճշտությամբ չենք լսել, ուստի հարմար չենք դատում մեր պատմության մեջ հյուսել. այսքան կասենք, թե, ինչպես լսել ենք, սրանք բոլոր թագավորական գործերի մեջ առաջին և վեհագույն են համարվում:

Իսկ քարաժայռի դեպի արեգակը դարձած կողմը, որտեղ այժմ և ոչ մի գիծ կարող է մարդ գծել երկաթով, այսպիսի կարծր քարի մեջ զանազան սենյակներ, ննջարաններ, գանձարաններ և երկար վիհեր՝ հայտնի չէ ինչ բանի համար, հրաշակերտեց: Իսկ քարաժայռի բոլոր երեսը հարթելով, ինչպես դրշով հարթում են մեղրամոմը[62], վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է[63]: Եվ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և նույն գրերով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել, և շատ տեղերում նույն գրով սահմաններ էր հաստատում:

Ահա առաջինը ինչ գործեր որ Շամիրամը կատարել է Հայաստանում:

ՇԱՄԻՐԱՄԻ ՄԱՀԻՆ. ԹԵ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՈՎ ԿՈՏՈՐԵՑ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻՆ, ԶՐԱԴԱՇՏ ՄՈՒԹԻՑ ՓԱԽՈՒՍ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄՆՈՒՍ ԻՐ ՆԻՆՎԱՍ ՈՐԴՈՒՆ ՉՆՈՔՈՎ

Սա շարունակ ամառային հղանակին, երբ գալիս էր հյուսիսային կողմերը, Հայաստանում շինած իր ամարանոցի քաղաքը՝ կողմնապես և Ասորեստանի և Նինվեի վիրակացու էր Բողնում Զրադաշտ մոգին, Մարաց նահապետին, և այսպես երկար ժամանակ վարվելով՝ նրան հավատում է իր իշխանությունը վարել։

Եվ հաճախ իր որդիներից հանդիմանվելով իր սաստիկ վայելչատ և անառակ վարքի պատճառով՝ նրանց բոլորին կոտորում է. ազատվում է միայն ամենափորրը՝ Նինվասը։ Նա իր բոլոր իշխանությունն ու գանձերը բարեկամներին ու սիրականներին պարգևելով՝ որդիների մասին ամենևին հոգ չի տանում։ Որովհետև նրա ամուսինն էլ, Նինոսը, ոչ թե, ինչպես ասվում է, մեռավ ու թաղվեց նրա ձեռքով Նինվեում, այլ գիտենալով նրա ախտասեր և չարասեր բարքը՝ թողեց թագավորությունը և փախավ դնաց Կրետե։ Իսկ երբ որդիները չափահաս և խելահաս դարձան, նրան այս բոլորը հիշեցրին, կարծելով թե նրան հետ կկացնեն դիվական առաքանքից, և նա իր որդիներին՝ կրա իշխանությունն ու գանձերը։ Սրա վրա ավելի զայրանալավ՝ (Շամիրամը) կոտորում է բոլորին, կենդանի է մնում միայն Նինվասը, ինչպես վերն ասացինք։

Իսկ երբ Զրադաշտը սիկնոջ դեմ մի հնարանք գործեց և մեջտեղը հակառակություն ընկավ, Շամիրամը նրա դեմ պատերազմ է սկսում, որովհետև Մարացին մոտադրվել էր ամենքի վրա բռնանալ։ Երբ պատերազմը սաստկացավ, Շամիրամը փախուստ տվեց Զրադաշտից և դիմեց Հայաստան։ Այս ժամանակ Նինվասը վրեժխնդրության համար ժամանակ դանելով՝ մորն սպանում է և ինքը թագավորում է Ասորեստանի և Նինվեի վրա։

Ահա Շամիրամի մահվան մասին էլ ասացինք, թե ինչի՛ց և ե՛րբ պատահեց։

ԾԸ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՀԱՄՏԱՏԱՊԵՍ ՆԱԽ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՇԱՄԻՐԱՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՀԵՏՈ ՆՐԱ ՄԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ես նկատի ունեմ կեփաղիոնի պատմածն էլ, որպեսզի շատերին տեղիք չտամ մեղ ծաղրելու, որովհետև նա ուրիշ շատ բաների թվում խոսում է նախ Շամիրամի ծնունդի մասին, հետո գնում է Շամիրամի պատերազմը Զրադաշտի հետ և նրան հաղթելը և արդեն վերջը գնում է Հնդկաստանի պատերազմը։ Բայց մեզ ավելի հավանական է թվում Մար Աբաս Կատինայի կատարած քննությունը քաղդեական մատյանների, քան այս, որովհետև սեղին է պատմում և պատերազմի պատճառն էլ հայտնում է։ Բացի սրանից՝ մեր աշխարհի առասպելներն էլ արդարացնում են քաղմամհուտ ասորուն, թե այստեղ է պատահել Շամիրամի մահը, նրա հետիոտն փախչելը, ծարավելը, ջրի պապակելը, ջուր խմելը, այլև՝ սուսերավորների մոտենալիս հուսահատները ծովը նետելը և նրա ասած խոսքը—«Ուլունք Շամիրամա ի ծով»։ Բայց եթե առասպել ախորժում ես՝ Շամիրամի Նիոբեից առաջ քար դարձավ[64]։

Արդ՝ այսքանը բավական է. մենք դառնանք հաջորդ անցքերին։

ԾԹ

ԻՆՉ ԱՐ ՊԱՏԱՀԵՑ ՇԱՄԻՐԱՄԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

Ամեն ինչ հարմարեցնելով ես այս գրքում կնշանակեմ մեր ազգի ավագադույն մարդկանց ու նախնիքներին և ինչ որ նրանց յուրաքանչյուրի մասին գրույցներ և գործողություններ կան, չմտցնելով սրա մեջ ոչ մի ինքնահնար կամ անպատշաճ բան, այլ ինչ որ (հավաքեցինք) գրքերից և սրանց հետևողությամբ՝ իմաստուն և այս հարցերում լավատեղյակ անձերից, որոնցից հավատարմությամբ ջանացինք հնագրությունները հավաքել։ Եվ մենք ասում ենք, որ մենք այս պատմության մեջ արդարախոս ենք եղել մեր դիտավորությամբ և ուղղամտությամբ. իսկ ինչ (աղբյուրներից) որ հավաքել ենք՝ այդ ասածուն է հայտնի. նրանք գովելի՞ են թե պախարակելի, այդ մեզ չի վերաբերում, մենք հետու

ենք դրանցից[65]։ Բայց պատմածների համաձայնությունը, և պատաճինների ճյուղագրության մեջ թվերի համապատասխանությունը ցույց են տալիս մեր աշխատասիրության ճշմարտությունը։ Արդ՝ այս այսպես կարգավորելով, կա՛մ բոլորովին հավաստի կամ փոքր ինչ ճշմարտից շեղվելով, կսկսեմ քեզ այսուհետև եղածները պատմել Պիտոյից Հյուսման պատմությունից։

Արդ՝ Շամիրամի մահից հետո, որ տեղի ունեցավ Արային սպանելուց հետո իր Զամեսես որդու ձեռքով, որ ինքը Նինվասն է, պատմության կարգը հստակ այսպես է գիտենանք։ Նինվասն սպանելով իր հեշտասեր մորը, թագավորում է ինքը և խաղաղ կյանք է վարում։ Սրա ժամանակ լրանում են Աբրահամի կյանքի տարիները։

(ՄԵՐ ԱԶԳԻ ՃՅՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵԲՐԱՅԵՑՈՑ ԵՎ ՔԱՂԴԵԱՑՈՑ ՃՅՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԻՆՉԵՎ ՍԱՐԴԱՆԱՊԱԼՈՍ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԹՈՆՈՍ ԿՈՆԿՈՂԵՌՈՍ)։

[66]Եբրայեցոց	Քաղդեացոց	Հայոց
Իսահակ	*Արիոս*	*Արայան Արա**
Հակոբ	*Առալիոս, որ է Ամյուռոս,*	*Անուշավան*
Ղևի	*Քսերքսես, որ և Բաղեոս*	*Պարետ*
Կահաթ	*Առմամիթռեոս*	*Արբակ*
Ամրամ	*Բելոքոս*	*Զավան*
Մովսես	*Բալեոս*	*Փառնակ*
*Հեսու***	*Աղտադաս*	*Սուր****

* *Սա մեր Արայի որդին է, որին Շամիրամը Արա կոչեց և մեր աշխարհի վերակացության գործը նրան հավատաց. նրանից սերվեցին—*

** *Սրանից առաջ (տիրում էին) ոչ թե բուն ցեղի, այլ բուն առաջադիմության, որովհետև բոլորն էլ Աբրահամից էին։ Երբ սա քանանացիներին կոտորեց, սրանք ղեկի Թարսիս նավելով անցան Ագրաս, և այս հայտնի է Աֆրիկեցիների աշխարհում արձանների վրա դրոշմված արձանագրությունից, որ մինչև այժմ կա (հետևյալ բովանդակությամբ). «Մենք քանանացիների նախարարներս գող Հեսուից փախչելով եկանք այստեղ բնակվելու»։ Սրանցից է և մեր պատվական Քանիդասը[67] Հայաստանում։ Եվ մենք ստուգելով հաստատ իմացանք, որ Գնթունիների ցեղն անտարակույս սրանցից է սերված, և այս ցեղի բարքը ցույց է տալիս, որ քանանացի են։*

*** *Սրա ժամանակին էր ապրում Հեսու Նավյանը։*

Գոթոնիել	Մամիթոս	Հավանակ
Ավովդ	Մանքաղեոս	Վաշտակ
Բարակ	Սփերոս	Հայկակ*
Գեդեոն	Մամիղոս	Ամպակ
Աբիմելեք	Սպարեթոս	Առնակ
Թովղա	Ասկատադես	Շավարշ
Հայիր	Ամինտես	Նորայր
Եփթայե	Բելոքոս	Վստամ
Եսեբովն	Բաղատորես	Կառ[68]
Եղովն	Ղամպարիդես	Գոռակ
Ղաբդոն	Սոսարես	Հրանտ
Սամփսոն	Ղամպարես	Ընձաք
Հեղի	Պաննիաս	Գլակ
Սամուել	Սոսարմոս	Հոռո
Սավուղ	Միթռեոս	
Դավիթ և հաջորդները	Տետամոս	Զարմայր**
	Տետեոս	Պերճ
	Թինեոս	Արբուն
	Դերկյուղոս	Բազուկ
	Եվպաղմոս	Հոյ
	Ղավոսթենես	Հուսակ
	Պերտիադես	Կայպակ
	Ոփրատեոս	Սկայորդի
	Փռատինես	
	Ակրազանես	
	Սարդանապաղոս.	

Ի

ԱՐԱՅԱՆ ԱՐԱՅԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՄՐԱ ՈՐԴԻՆ ԷՐ ՍՈՍԱՆՎԵՐ ԱՆՈՒՇԱՎԱՆԸ

Իսկ Շամիրամը դեռ իր կենդանության ժամանակ Արայի որդուն, որ ծնած էր նրա սիրելի կնոջից՝ Նվարդից և տասներկու

* Սրա մասին ասում են, թե ապրել է Բելոքոսի ժամանակ և մի անմիտ խռովության հարուցանելով նրա մեջ մեռել է։

** Սա Տետամոսից օգնական ուղարկվեց Պրիամոսին եթովպական զորքի հետ և մեռավ հելլենացոց քաջերից։

տարեկան երեխա էր մնացել Արայի մահվան ժամանակ, դնպի Արա Գեղեցիկը տաճած գորովի պատճառով՝ նրա անունով կոչում է Արա և նշանակում է մեր աշխարհին վերակացու, մտերմաբար նրան վստահացած լինելով. և ասում են, թե նա պատերազմում Շամիրամի հետ մեռավ։

Բայց (Մար Աբասը) պատմությունը շարունակում է այսպես. Արայան Արան պատերազմի մեջ մնռնում է Շամիրամի հետ, թողնելով արու զավակ՝ գործով հզոր, խոսքով հանճարեղ Անուշավան Սոսանվերին, որովհետև նա (կրոնական) պաշտամունքի հաւմաձայն նվիրված էր Արամենակի սոսի ծառերին Արմավիր քաղաքում, որոնց տերևների հանդարտ կամ սաստիկ շարժվելուց, նայելով քամու ուժին և ուղղությանը՝ մեր Հայոց աշխարհում սովոր էին գուշակություններ անել երկար ժամանակ։

Այս Անուշավանը բավական ժամանակ արհամարհանք կրելով Ջամհասեից, տառապում է արքունի դռանը. հետո բարեկամներից օգնություն գտնելով ձեռք է բերում մեր աշխարհի մի մասը՝ խնամելու համար իբրև հարկատու, վերջը նաև ամբողջ աշխարհը։

Բայց չափազանց շատ կլիներ, եթե մենք այս գլխում վերը հիշված մարդկանց բոլոր գործերն ու պատմությունները գրեինք՝ ինչպես արժան է։

ԺԱ

ՍԿՍՅՈՐԴՈՒՅՆ ԾՆՎԱԾ ՊԱՐՈՒՅՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՕԳՆԱԿԱՆ Է ԼԻՆՈՒՄ ՄԱՐԱՑԻ ՎԱՐԲԱԿԵՍԻՆ՝ ՍԱՐԴԱՆԱՊԱԼՅԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՑՆԵԼՈՒ

Բաց թողնելով գեպքերից ոչ կարևորները, ասենք ինչ որ հարկավորն է։ Վերջինն այն մարդկանցից, որ եղել են Ասորեստանցիների թագավորության ժամանակ, Շամիրամից կամ Նինոսից հետո, մեր Պարույրն եղավ Սարդանապալի ժամանակ։ Սա ոչ փոքր օգնություն է ցույց տվել Մարացի Վարբակեսին՝ թագավորությունը Սարդանապալից վերցնելու։

Ահա այժմ ևս գվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդ-

Ները թագավորության աստիճանի են հասնում։ Ուստի վայել է մեզ այստեղ մեծ գործ կատարել և շատ պատմական ճառեր գրել, որոնց հիմունքը մենք ինքներս արժանացանք կարդալու իմաստուն, իմաստունների մեջ իմաստնագույն և քաղմարդյուն հեղինակի շուրս հաղներդությունների մեջ[69]։

Որովհետև Վարբակևսը, ծննդյամբ մեդացի, այս ամբարգույն աշխարհի ծայրի աննշան կողմերից, կենցաղավարության մեջ շատ խորամանկ, կռիվների մեջ խիզախ, գիտենալով Թոնոս Կոնկոդեռոսի տարդի բնավորությունը և հնշտասեր ու թուլամորթ ծուլությունը՝ իր սիրալիր վարմունքով ու առատաձեռնությամբ ավելացնում է իրեն բարեկամներ այն քաջ ու սիրտանի մարդկանցից, որոնց ձեռքով այն ժամանակ մեծ հաստատությամբ հայտնապես կառավարվում էր Ասորեստանի աշխարհակալ պետությունը. իր կողմն է գրավում նաև մեր քաջ նախարար Պարույրին, խոստանալով նրան թագավորության պատիվ և ձև։ Գումարում է նաև արի մարդկանց մեծ բազմություն, որոնք աջող էին նիզակ, աղեղ և սուր գործածելու մեջ։ Այս կերպով Սարդանապալից թագավորությունը գրավելով՝ տիրում է Ասորեստանին և Նինվեհին։ Բայց Ասորեստանի վրա վերակացուներ թողնելով՝ թուգավորությունը փոխադրում է Մարաստան։

Բայց եթե այս բանր ուրիշների մոտ տարբեր է պատմվում, մի՛ զարմանար։ Որովհետև ինչպես որ մեր (պատմության) առաջին գլուխներում մեղադրեցինք մեր հին նախնիների անխմաստասեր բարքն ու ճաշակը, նույնը պատահում է և այստեղ։ Որովհետև ինչ գործեր որ կատարվել են նաբուգոդոնոսոր հոր կողմից, գրի են առնված նրանց հիշատակագիրների ձեռքով. իսկ մերոնք, որովհետև այսպիսի բան չմտածեցին, (նրանց գործերը) նշանակվեցին վերջերը[70]։ *Բայց եթե հարցնես, թե ո՞րտեղից մենք այսպես գիտենք մեր նախնիքների անունները, այլ և շատերի գործերը՝ կպատասխանեմ—Քաղդեացիների, Ասորեստանցիների և Պարսից հին դիվանններից, որովհետև մեր (նահապետները) նրանց գործակալները և նրանցից մեր աշխարհի վրա նշանակված վերակացուներն ու մեծ կողմնակալները լինելով՝ նրանց անուններն ու գործերը մուծվել են արքունի գրքերի մեջ։*

ԻԲ

ՄԵՐ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԹՎԱՐԿՈՒՄԸ ՀՈՐԻՑ ՈՐԴԻ

Այժմ ես կանգնեմ թվարկելու մեր մարդկանց, մանավանդ թե թագավորներին, մինչև Պարթևների տիրության (հաստատվելը): Որովհետև մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի, իբրև բնիկներ, արյունակիցներ և իսկական հարազատներ[71]: Ես շատ կփափագեի, որ այն ժամանակ Փրկիչն եկած և ինձ գնած լիներ, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ զվարճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի: Բայց շատ վաղ մեզանից այդ դրությունը փախավ, գուցե նաև վիճակը: Բայց ես այժմ օտարների թագավորության ժամանակ ապրելով՝ նրանց (թագավորների) հետ միասին պետք է նշանակեմ մեր թագավորների կարգը, որովհետև մեր աշխարհի բնիկ պսակավորներն այն մարդիկն են, որոնց անունները ներքևը կգրոշմենք:

Եվ որ այդ ժամանակները մեր ազգը թագավորություն ուներ՝ սրան վկայում է Երեմիա մարգարեն իր մարգարեության մեջ՝ Բաբելոնի դեմ պատերազմի հրավիրելով. «Հրաման տուր, ասում է նա, Այրարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին[72]»: Սա ապացույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն:

Բայց մենք (մեր թագավորների) ցուցակը կկազմենք, մտցնելով նաև Մարաց թագավորներին:

Մարաց առաջին	Իսկ մեր առաջինը, Մարացի Վարբակեսից թագադրված
Վարբակես	*Պարույր, Սկայորդու որդին.*
Մոդակես	*Հրաչյա**

---

* *Սա Հրաչյա է կոչվում առավելապես պայծառ երես և բոսորավուն աչքեր ունենալու համար: Ասում են, թե սրա ժամանակն է եղել Նաբուգոդոնոսորը, որ հրեաներին գերեց: Եվ ասում են, որ սա Նաբուգոդոնոսորից խնդրեց գերված եբրայեցիների իշխաններից մեկին՝ Շամբաթ անունով և բերեց մեր երկրում բնակեցրեց մեծ պատվով: Պատմագիրն ասում է, թե սրանից սերվեց Բագրատունիների ցեղը. և այս ստույգ է: Բայց թե ինչպիսի ջանքեր գործ դրին մեր թագավորները՝ նրանց ստիպելու, որ կուռքերը պաշտեն և թե նրանցից քանիսը և ովքեր*

Մարաց	Հայոց
Սոսարմոս	Փառնավազ
Արտիկաս	Պաճույճ
Դեովկես	Կոռնակ
Փավորտես	Փավոս[73]
Կվաքսարես	Մյուս Հայկակ
Աժդահակ։	Երվանդ սակավակյաց
	Տիգրան

Որովհետև ես հավանական եմ գտնում, որ սրանց անունով կոչված են վերջին Երվանդն ու Տիգրանն ըստ հույսի[74], ժամանակը շատ հեռու չլինելով՝ մեկը հիշած կլիներ այս անունները։

ԺԹ

ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԹԵ ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԸ, ԳՆՈՒՆԻՆԵՐԸ ԵՎ ԱՂՁՆՅԱՑ ԲԴԵՇԽ ԿՈՉՎԱԾԸ ՆՐԱՆՑԻՑ ԵՆ ՍԵՐՎԱԾ ՆՈՒՅՆ ԳԼԽՈՒՄ ՆԱԵՎ՝ ԹԵ ԱՆԳԵՂ ՏՈՒՆԸ ՊԱՍՔԱՄԻՑ Է

Բայց նախ քան ձեռնարկենք մեծ Տիգրանի մասին եղած պատմությունների, որ մեր բնիկ թագավորներից իններորդն էր, հուժկու, անվանի և հաղթող այլ աշխարհակալների շարքում, պատմենք ինչ որ անհրաժեշտ է մեր պատմության կարգը պահպանելու համար։ Մենք կարծես մոռացության տվինք Սենեքերիմի մասին (խոսել)։ Որովհետև Նաբուգոդոնոսորի թագավորությունից ութսուն, բիչ ավելի կամ պակաս տարի առաջ՝ այս Սենեքերիմը Ասորեստանի թագավոր է եղել, նա որ Երուսաղեմը պաշարեց հրեաների Եզեկիա առաջնորդի ժամանակ։ Նրա որդիները, Ադրամելեք և Սանասար, նրան սպանելով, փախան եկան մեզ մոտ։

աստվածապաշտությամբ վերջացրին իրենց կյանքը՝ հետո կարգով կպատմենք։ Որովհետև մի բանի անխտրաբար մարդիկ ասում են, ըստ իրենց հեթանոսության, բայց ոչ ճշմարտությամբ, իբր թե Բագրատունիների թագադիր ցեղը հրեա է։ Հայկից։ Ուստի ես ասում եմ. այսպիսի հիմար խոսքերի մի՛ հավատար, որովհետև ոչ մի հետք կամ ապացույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա նրանց ճշմարտությունը։ Որովհետև Հայկի և նմանների մասին էլ կակազում են վայրիվերո և անկարգ կերպով։ Բայց գիտցիր, որ Սմբատ անունը, որ Բագրատունիները հաճախ դնում են պատանիներին, ինչպես Շամբաթն է, նրանց հին՝ եբրայական լեզվով։

Սրանցից մեկին, այն է Սանասարին, մեր քաջ Նախնի Սկայորդին բնակեցնում է նույն Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի արևմտյան հարավում։ Նրա սերունդն աճելով ու բազմանալով լցրեց Սիմ կոչված լեռը։ Իսկ նրանցից ականավոր և գլխավոր մարդիկ վերջերը գործերով հավատարմություն ցույց տալով մեր թագավորներին՝ արժանացան այդ կողմերի բդեշխությունն[76] ստանալու։ Իսկ Արգամոզանը[77] բնակվեց նույն կողմի արևելյան հարավում։ Պատմագիրն ասում է, թե սրանից սերվեցին Արծրունիներն ու Գնունիները։ Այս էր պատճառը, որ մենք հիշեցինք Սենեքերիմին։

Բայց Անգեղ տան մասին նույն պատմագիրն ասում է, թե սերված է մի ոմն Պասքամից, Հայկի թոռից։

ԻԴ.

ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԱՅՐԸ ԲԱՆՈՎ

Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին։ Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ։ Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրենց հնազանդեցրեց. և մեր բնակության սահմանները ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը և թե իր ժամանակը։

Ո՞վ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական քաջերի և խոհականության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել։ Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ (օտարների) լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. մթերքներ ոսկու և արծաթի, և պատվական քարերի և զգեստների և զանազան գույների և գործվածքների՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ դյուցազունների էին նմանում։ Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն

հաջող աղեղնավորներ, կոպալներով կռվողները զինվեցին սրերով ու տիգավոր նիզակներով. մերկերը[78] պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով։ Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլմունքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու։ Նա խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուղով և մեղրով։

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր. որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն։ Եվ այս գրքում ի՞նչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարել։ Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը[79]։

Սա սկզբում դաշնակից լինելով Աժդահակին, որ Մարացի էր, նրան կին է տալիս իր Տիգրանուհի քույրը, որին թախանձանքով խնդրում էր Աժդահակը։ Որովհետև (Աժդահակը) մտածում էր՝ այսպիսի ազգականության շնորհիվ կամ հաստատուն սեր պահպանել Տիգրանի հետ, կամ այս կերպով հեշտությամբ դավաճանորեն սպանել։ Որովհետև նրա միտքը կասկածի մեջ էր, երբ մի անսպասելի մարգարեություն նրան ցույց տվեց առաջիկայում նրան պատահելիքը։

ԻԶ

ԱԺԴԱՀԱԿԻ ԵՐԿՅՈՒՂԸ ԵՎ ԿԱՍԿԱԾԱՆՔԸ ՄԱՍԻՆ ԿՅՈՒՐՈՍԻ ԵՎ ՏԻԳՐԱՆԻ ՍԻՐՈ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Բայց նրա այս մտածմունքների առիթն էր մտերմական դաշնակցությունը, որ Կյուրոսն առաջարկեց Տիգրանին. և շատ

անգամ, երբ Աժդահակն այս բանը հիշում էր, քունը փախչում էր նրանից, և անդադար նա խորհրդակիցներին այսպիսի հարց էր տալիս. «Ի՞նչպիսի հնարքներով մենք պիտի կարողանանք քանդել սիրո կապը պարսիկի և բազմաբյուրավոր հայի միջև»։ Եվ այսպիսի շփոթ մտածմունքների ժամանակ առաջիկա դեպքերը նրան հայտնվում են երազի մեջ նախատեսությամբ, այս կերպ, ինչպես ասում է պատմողը։

ԻԹ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱԺԴԱՀԱԿ, ԿԱՍԿԱԾՆԵՐԻ ՄԵՋ ԼԻՆԵԼՈՎ, ԻՐԵՆ ՊԱՏԱՀԵԼԻՔ ԴԻՊՎԱԾԸ ՏԵՍՆՈՒՄ Է ՍՔԱՆՉԵԼԻ ԵՐԱԶՈՎ

Այդ օրերում, ասում է, ոչ փոքր վտանգ էր սպառնում Մարաց Աժդահակին Կյուրոսի և Տիգրանի միաբանությունից։ Ուստի և մտքերի սաստիկ ալեկոծությունից՝ գիշերը քնի մեջ տեսիլքով երևաց նրան այն, ինչ որ արթուն ժամանակ ոչ աչքով էր տեսել երբեք և ոչ ականջով լսել։ Ուստի քնից վեր թռչելով՝ չի սպասում խորհրդակցության ժամին սովորական կարգով, այլ իսկույն, մինչդեռ գիշերվան բավական ժամեր դեռ կային, կանչում է խորհրդակիցներին և տրտում երեսով, գետնին նայելով սրտի խորքերից հառաչանք է արձակում։ Երբ խորհրդակիցները պատճառը հարցնում են, նա ժամերով ուշացնում է պատասխանը և վերջապես հեծկլտանքով սկսելով՝ բաց է անում սրտում ծածուկ պահած խորհուրդներն ու կասկածը, նաև սարսափելի տեսիլքը։

«Ո՜վ սիրելիք, ասում է նա, (երազումս թվում էր), թե ես մի անծանոթ երկրում եմ գտնվում, մի լեռան մոտ, որ երկրի վրա երկար բարձրացած էր և որի գագաթը թվում էր սաստիկ սառնամանիքով պատած, և կարծես ասելիս լինեին, թե այս Հայկազանց երկրումն է։ Եվ երբ ես երկար նայում էի այդ լեռան, մի ծիրանազգեստ կին երևաց ինձ երկնագույն քողով, բարձր լեռան գագաթին նստած, խոշոր աչքերով, բարձրահասակ, կարմիր այտերով, որ բռնված էր ծննդի երկունքով։ Երբ ես երկար նայում էի այս երևույթին և հիացման մեջ էի, հանկարծ կինը երեք (զավակ) ծնեց, կատարյալ դյուցազուններ հասակով և բնությամբ։ Առաջինն առյուծ հեծած՝ սլանում էր դեպի արևմուտք, երկրորդն ինձ հեծած դեպի հյուսիս էր դիմում, իսկ

երորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշավակի մեր աերուբյան վրա էր հարձակվում։

Այս խառն երազների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած եմ իմ արքունի (ապարանքի) վրա. տեսնում էի նրա կտուրը բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պահող աստվածներին հրաշալի տեսքով այնտեղ կանգնած, և ինձ՝ ձեզ հետ միասին նրանց զոհերով ու խնկերով պատվելիս։ Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա որ այն վիշապ հեծած մարդը, կարծես արծվի թևերով սլանալով՝ վրա հարձակվեց և մոտենալով ոտքում էր աստվածներին կործանել։ Իսկ ես, Աժդահակս, մեջ ընկնելով, այն հարձակումն ինձ վրա ընդունեցի, սքանչելի դյուցազնի հետ կռվի բռնվելով։ Նախ նիզակների տեգերով իրար մարմիններդ խոցոտելով՝ արյան վտակներ վար հոսեցրինք և ապարանքի արեգակի նման փայլող երեսը[80] արյան ծով դարձրինք։ Հետո ուրիշ զենքերով (կռվեցինք) ոչ սակավ ժամեր։

Բայց ի՞նչ օգուտ է խոսքս երկարացնել. որովհետև գործի վերջը իմ կործանումն եղավ։ Տագնապից սաստիկ քրտինքը կոխեց, և քունս փախավ, և այլևս կենդանի չեմ թվում։ Որովհետև այս երևույթների երազը ուրիշ բան չի նշանակում քան այն, որ Հայկազյան Տիգրանի կողմից քոնի հարձակում պիտի կատարվի մեզ վրա։ Բայց ո՞վ ձեզանից, աստվածների օգնությունից հետո, խոսքով ու գործով մեզ բարիք խորհելով չի հուսա մեզ թագավորակից լինել»։

Եվ խորհրդակիցներից շատ օգտակար առաջարկություններ լսելով՝ շնորհակալությամբ պատվում է նրանց։

ԻԷ

ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՍՔԵՐԸ. ՀԵՏՈ ԵՎ ԻՐ ՄՏԱԾԱԾ ՄԻՋՈՑԸ ՆՎ ԱՆՄԻՋԱՒԱՆ ԴՈՐՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ձեզանից, ո՛վ սիրելիներ, ասում է (Աժդահակը), շատ հանճարեղ և իմաստուն բաներ լսելուց հետո՝ կասեմ և ես, ինչ որ, աստվածների օգնությունից հետո, մտածում եմ իրրև օգտակար միջոց։ Որովհետև թշնամիներից զգուշանալու և նրանց մտադրություններին ծանոթանալու համար ոչ մի բան այնքան մեծ օգնություն չի բերում, քան երբ մեկը (թշնամուն) կրուստ պատրաստի՝

սիրտ միջոցով նրան դավելով։ Եվ այս ամենը մենք այժմ հնարավորություն չունենք կատարելու ոչ գանձերի միջոցով և ոչ պատրոդական խոսքերով, այլ միայն այն կերպով, որ ես մտադիր եմ գործադրել։ Իմ խորհուրդը կատարելու՝ որոգայթ սարքելու միջոցն է՝ նրա քույր Տիգրանուհին, գեղեցկագույնն ու խոհեմը կանանց մեջ։ Որովհետև այսպիսի խնամիական ազգականությունները, համարձակ երթևեկության միջոցով, ընդարձակ հնարավորություն են ստեղծում թաքուն կերպով դավեր լարելու— կա՛մ նրա մտերիմներին գանձեր ու պատիվ խոստանալով հրամայել՝ նրան հանկարծակի սպանել սրով կամ թույների միջոցով, կամ նրա մտերիմներին ու կուսակալներին գանձերով նրանից բաժանել և այս կերպով նրան, իբրև մի անզոր տղայի, մեր ձեռքը գցել»։

Բարեկամների այս խորհուրդն ազդու համարելով, գործի են ձեռնարկում։ Աժդահակը) իր խորհրդակիցներից մեկին մեծ գանձ տալով ուղարկում է (Տիգրանի մոտ) մի թղթով, որ հետևյալ բովանդակությունն ուներ։

ԻԸ

ԱԺԴԱՀԱԿԻ ԹՈՒՂԹԸ, ՏԻԳՐԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԻԳՐԱՆՈՒՀՈՒՆ ՄԱՐԱՍՏԱՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ

«Քո սիրելի եղբայրությունդ գիտե, որ այս աշխարհի կյանքում ասուպածները մեզ չեն պարգևել ավելի օգտակար բան, քան սիրելիների բազմություն, իշարկե իմաստուն և հզորագուններից, որովհետև այս դեպքում դրսից խռովություններ չեն համարձակվում ծագել, և եթե պատահեն, իսկույն կընկճվեն, իսկ ներսում նրանք կհալածվեն, քանի որ այսպիսի չարությունը ոչ ոքից չի կարող մուտք գործել։ Արդ՝ ես տեսնելով բարեկամությունից առաջ եկող այս օգուտը, կամեցա ավելի հաստատուն դարձնել ու խորացնել մեր մեջ եղած սերը, որպեսզի երկուքս էլ բոլոր կողմերից ապահովվելով՝ ամբողջ և հաստատ պահենք մեր տերությունները։ Եվ այս բանը կկատարվի, եթե ինձ կնություն տաս քո քույր Տիգրանուհուն, մեծ Հայոց օրիորդին[81]. թերևս նրա համար նաև բարի համարես, որ թագուհիների թագուհի լինի։ Ողջ եղիր, մեր թագակից և սիրելի եղբայր»։

Առանց խոսքս երկարացնելու ասեմ։ Պատգամավորը գալիս

է, գեղեցիկ օրիորդին վերաբերյալ գործը կատարում է, որովհետև Տիգրանը համաձայնում է իր քույր Տիգրանուհուն Աժդահակին կնության տալ։ Դեռ չգիտենալով նրա կողմից սարքված դավաճանությունը՝ քրոջն ուղարկում է թագավորավայել կարգով։ Աժդահակը նրան կին անելով՝ ոչ միայն իր սրտում թաքցրած նենգության, այլև (Տիգրանուհու) գեղեցկության պատճառով իր կանանց մեջ առաջին է դարձնում, իսկ ներքուստ նյութում է չարություն։

ԻԹ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԻ ԴԱՐՁԱՎ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՍԿՍՎԵՑ, ԵՎ ԱԺԴԱՀԱԿԻ ՄԱՀՆ ԱՅԴ ԿՌՎՈՒՄ

Սրանից հետո ասում է[82], թե երբ Աժդահակը Տիգրանուհուն տիկնության մեջ հաստատեց, իր թագավորության մեջ ոչինչ չէր գործում առանց նրա հավանության, այլ ամեն բան կարգադրում էր նրա ասածի պես և հրամայում էր, որ բոլորը նրա հրամանին հնազանդվեն։ Այս այսպես կարգադրելով՝ սկսում է այնուհետև մեղմով խաբեությամբ նրան գրավել։ «Դու չգիտես, ասում է նա, որ քո եղբայրդ Տիգրանը նախանձում է, որ դու Արյաց[83] տիկին ես դարձել, նրան գրգռում է նրա կինը՝ Զարուհին։ Ի՞նչ կլինի սրա հետևանքը, եթե ոչ՝ որ նախ ես կմեռնեմ և հետո Զարուհին Արյաց վրա (տիկին) կդառնա և աստվածուհիների տեղը կբռնի։ Ուրեմն քեզ մնում է ընտրել այս երկուսից մեկը—կա՛մ լինել եղբայրասեր և հանձն առնել խայտառակ կործանում Արյաց առաջ, կամ քո բարին հասկանալով մի օգտակար բան մտածել և առաջիկա անցքերի մասին հոգալ»։

Այս խորամանկության մեջ թաքցրած էր (և սպառնալիք), թե Տիգրանուհին կմեռնի՝ եթե մարապարսկացու ցանկության համաձայն չվարվի։ Իսկ խորագետ գեղեցկուհին այս դավաճանությունը հասկանալով՝ սիրալիր խոսքերով է պատասխանում Աժդահակին և մտերիմների միջոցով շտապով եղբորը հայտնում է (Աժդահակի) նենգությունը։

(Աժդահակն) այնուհետև գործի է ձեռնարկում, պատգամավորների ձեռքով (առաջարկելով Տիգրանին), որ բարեկամական տեսակցության համար գա երկու թագավորությունների սահմանագլուխ մի տեղում, իբրև թե մի կարևոր գործ ու խոսելիք կա, որ չի կարելի կատարել գրի և պատվիրակության միջոցով, բայց միայն անձամբ դեմ առ դեմ պատահելով։ Սակայն Տիգրանը պատվիրակության դիտավորությունը գիտնալով՝ Աժդահակի խորհուրդներից ոչ մի բան ծածուկ չի թողնում, այլ գրով հայտնում է, ինչ որ նրա սրտի խորքում կար։ Ուրբ այսպիսով չարությունը հայտնի դարձավ, այլևս ոչ մի խոսքով, ոչ մի խորամանկությամբ չէր կարելի չարությունը ծածկել, և այնուհետև թշնամական դրությունը հայտնի գրգռվում էր։

Նվ Հայոց թագավորը (ղորք) է ժողովում Կապադովկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից ընտիրները՝ որքան որ կային, և Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և բոլոր զորությամբ դիմում է Մեդացոց կողմերը։ Վտանդը հարկադրում է Աժդահակին Հայկազունի դեմ ելնել պատերազմով ոչ փոքր բազմությամբ։ Հակառակության գործը ձգձգվում էր մինչև հինգ ամիս, որովհետև արագ ու առողջ գործը հիվանդանում էր՝ քանի որ Տիգրանը մտածում էր իր սիրելի քրոջ (Տիգրանուհու) մասին։ Նա աշխատում էր այնպիսի մի հնար դտնել, որ Տիգրանուհին փրկվելու ճար գտնի։ Երբ այս հաջողվում է, մոտենում է և կռվի ժամը։

Բայց գովում եմ իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մեկը մյուսին ամեն կերպ պատշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ և ուժի կողմից իրեն հավասարը չունեցող։ Նվ ինչո՞ւ եմ խոսքս երկարացնում. կռվի ժամանակ Աժդահակի երկաթե ամուր զրահը խնչպես ջուր ճեղքելով՝ Աժդահակին շամփրում է իր նիզակի ընդարձակ տեգին, և ձեռքը հետ քաշելիս՝ նրա թոքի կեսն էլ զենքի հետ դուրս է բերում։ Բայց կռիվն սքանչելի էր, որովհետև քաջեր քաջերի հանդիպելով՝ ոչ մեկը մյուսին շուտով թիկունք չէր դարձնում, ուստի պատերազմը երկարում էր բավական ժամեր, մինչև գործին վերջ էր դնում Աժդահակի մահը։ Այս բարեբախտ դիպվածը նոր փառք էր ավելացնում Տիգրանին։

Ե

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐ ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՔՈՒՅՐՆ ՈՒՂԱՐԿԵՑ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, ԱՅԼ ԵՎ ԱՀԴԱՀԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿՆՈՋ ԱՆՈՒՇՅԻ ԵՎ ԳԵՐԻՆԵՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս էլ է պատմվում, թե այս գործը վերջանալուց հետո (Տիգրանը) իր քույր Տիգրանուհուն մեծ բազմությամբ ուղարկում է թագավորավայել կերպով Տիգրանակերտ[84] քաղաքը, որը Տիգրանը շինեց իր անունով, և այն գավառները հրամայում է նրա ծառայության մեջ դնել: Եվ այդ կողմերի ոստան[85] կոչված ազնվական դասակարգն, ասում է, սրա սերունդից է առաջացել, իբրև թագավորական սերունդ:

Իսկ Աժդահակի առաջին կնոջը՝ Անուշչին, և շատ աղջիկներ Աժդահակի սերունդից՝ պատանիներով և դերիների բազմությամբ հանդերձ, ավելի քան մի բյուր մարդ, (Տիգրանը) բնակեցնում է մեծ լեռան արևելյան կողմը մինչև Գողթնի սահմանները, որ են Տամբատ, Ոսկիողա, Դաժգույնք և ուրիշ դաստակերտներ գետի ափով, որոնցից մեկն էլ Վրանցունքը, մինչև նախճավանի ամրոցի դեմուդիմը: Նրանց է թողնում նաև երեք ավաններ—Խրամ, Ջուղա և Խո(ր)շակունիք՝ գետի մյուս կողմում, ամբողջ դաշտը, որի գլուխն է Աժդանական, մինչև նույն նախճավանի ամրոցը: Բայց վերը հիշված Անուշչ կնոջն իր որդիներով հանգիստ բնակեցնում է մեծ լեռան փլվածքի վերջում: (Այս փլվածքն, ասում են, առաջ է եկել մի ահագին երկրաշարժից. այս բանը պատմում են այն մարդիկ, որոնք Պտղոմեոսի[86] հրամանով ընդարձակ ուղևորություններ կատարելով ասպարեզներով չափեցին մարդկանց բնակության տեղերը, մասամբ նաև ծովը և անբնակ վայրերը Այրեցյալ ջրատուց մինչև Քիմյուռոն[87]: Իսկ Անուշչին սպասավորներ տալիս է նույն այն մարդկանցից, որ լեռան ստորոտում բնակվեցին:

Այս բանը ճշմարտապես պատմում են և թվելյաք[88] երգերը, որ, ինչպես լսում եմ, ախորժելով պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ. այդ երգերում շարժվում են պատմությունները Արտաշեսի և նրա որդիների մասին, այլաբանաբար հիշելով և Աժդահակի սերունդները, նրանց վիշապաղումներ կոչելով: Որովհետև Աժդահակ մեր լեզվով նշանակում է վիշապ[89]: Այլև (այդ երգերում) ասում են, թե՝

«Արգավանը ճաշ սարքեց ի պատիվ Արտաշեսի
Եվ նրա դեմ դավ լարեց վիշապների դահլիճում»—
Այս‌ և ասում են.
«Արտավազդը չգտավ,
Արտաշեսի քաջ որդին,
Ապարանքի փոքրիկ տեղ
Արտաշատը հիմնելիս՝
Անցավ գնաց և շինեց
Մարաստանում Մարակերտը»
[«Արտավազդը, Արտաշեսի քաջ որդին, Արտաշատի հիմնվելու ժամանակ, մի փոքրիկ տեղ չգտնելով ապարանքի համար՝ անցավ, ասում են, գնաց և Մարաց մեջ շինեց Մարակերտը»], որ գտնվում է Շարուրա կոչված դաշտում։ Ասում են նաև.
«Տենչալով տենչում է Սաթենիկ տիկինը
Արտախուր խավարտ և տից խավարծի
Արգավանի բարձերից»[96]
[«Փափագելով փափագում է Սաթենիկ տիկինը արտախուր խավարտ և տից խավարծի Արգավանի բարձերից»]։
Արդ դու այստեղ առավելապես չե՞ս զարմանա, թե ինչպես պատմեցինք ճշմարիտը՝ բացատրելով մութ պատմությունները այն վիշապների մասին, որ ապրում են Ազատն ի վեր[91], Մասիսի վրա։

ԼԱ

ԹԵ Ո՞ՐՈՆՔ ԵՆ ՍՐԱ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ԵՎ Ի՞ՆՉ ՑԵՂԵՐ ՋԱՏՎԵՑԻՆ ՍՐԱՆԻՑ

Ինչպես որ ինձ, պատմողիս, սիրելի է հավաստի պատմել այս պատմության մեջ բուն և առաջին Տիգրանի և նրա գործերի մասին, հիշելով զրույցներն այս Երվանդյան Տիգրանի մասին, նույնպես սիրելի պետք է լինեն ընթերցողիդ ինչպես այդ մարդն ու նրա գործերը, այնպես էլ նրան վերաբերյալ պատմությունները։ Ուստի ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել— Հայկ, Արամ, Տիգրան. որովհետև քաջերի սերունդները քաջերն են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես ուզում է՝ թող կոչի։ Բայց դիցաբանական տեսակետից ևս ճշմարիտ է մեր ասածը։ Չկա ոչ մի Արամազդ, բայց միայն նրանց համար, որոնք

կամենում են, որ Արամազդ լինի. և այսպես կոչված չորս Արամազդներից մեկն է միայն՝ Ճաղատ Արամազդը[92]։ Այսպես նաև շատերը կան Տիգրան անունով, բայց սա մեկ և միակն է Հայկազունեներից, որ Աժդահակին սպանեց և գերի տարավ նրա տունը և Անուշչին, վիշապների մորը, Կյուրոսին, նրա բարի կամքով և հոժարությամբ, օժանդակ ունենալով՝ Մարաց և Պարսից իշխանությունը հափշտակեց։

Սրա որդիներն են Բաբ, Տիրան և Վահագն[93], որի մասին մեր աշխարհի առասպելներն ասում են.

«Երկնում էր երկինք, երկնում էր երկիր,
Երկնում էր և ծովը ծիրանի.
Երկունքը բռնել էր ծովում
Նաև կաթմրիկ եղեգնիկին[94]։

Եղեգնի փողով ծուխ էր ելնում,
Եղեգնի փողով բոց էր վելնում
Եվ բոցից դուրս էր վազում
Մի պատանեկիկ։

Վազում էր խարտյաշ մի պատանեկիկ,
Նա հուր մազեր ուներ, (ապա թե)՝
Բոց մորուք ուներ,
Եվ աչքերն էին արեգակներ»։

Մենք մեր ականջով լսեցինք, ինչպես այս ոմանք երգում էին փանդիռներով։ Իրանից հետո երգում ասում էին, թե կռվել է վիշապների հետ ու հաղթել, և Հերակլեսի քաջագործություններին շատ նման բաներ էին երգում նրա մասին։ Բայց ասում են նաև, թե սա աստվածացրած է, և Վրաց աշխարհում սրա հասակով արծան կանգնեցնելով՝ պատվում էին զոհերով։

Սրա սերունդներն են Վահունիները։ Սրա կրտսեր որդուց Առավանից ծագել են Առավենյանները։ Սրա որդին էր Առավանը, սրանը՝ Նեռսեհը, սրանը՝ Զարեհը. սրա սերունդից են Զարեհավանյան կոչված գեղերը։ (Զարեհի) առաջին որդին էր Արմոգը, սրանը՝ Բագամը, սրանը՝ Վահանը, սրանը՝ Վահեան։ Սա Աղեքսանդր Մակեդոնացու դեմ ապստամբելով՝ մեռնում է նրա ձեռքով։

Այստեղից սկսած մինչև Վաղարշակի թագավորելը Հայաս-

տանում՝ ստույգ բան չունեմ քեզ պատմելու, որովհետև խառնակություններ և շփոթություններ լինելով՝ մեկը մյուսից առաջ էր վազում մեր աշխարհին տիրելու։ Այս պատճառով էլ Արշակ Մեծը դյուրավ Հայաստան մտնելով՝ իր եղբորը Վաղարշակին թագավորեցնում է մեր Հայոց աշխարհի վրա։

ԼԲ

ԹԵ ԵՂԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ[95] ՏԵՎՏԱՄՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՂԱՎ, ԵՎ ՄԵՐ ԶԱՐՄԱՅՐԸ ՍԱԿԱՎԱԹԻՎ ԵԹՈՎՊԱՑԻ ԶՈՐՔԻ ՀԵՏ ԱՅՆՏԵՂ ԷՐ ԵՎ ԱՅՆՏԵՂ ՄԵՌԱՎ

Այս երկու (պայմաններն) են, որ քո հարցասիրության շնորհիվ մեզ տագնապ ու նեղություն են պատճառում—համառոտաբանություն և արագաբանություն, այն էլ սերտ ու պայծառ, ինչպես պլատոնական խոսքերը, ստությունից հեռու և լի ճշմարտությամբ, այս կերպով քեզ մի անգամից պատմել առաջին մարդուց սկսած մինչև քեզ։ Բայց այս բոլորը միասին չի կարող պատահել։ Որովհետև (աստված), որ ամեն բան ստեղծեց, նա, որ կարող էր մի ակնկալությամբ մի ակնթարթում ամեն ինչ գոյացնել՝ այսպես չարավ, այլ օրեր որոշեց և ստեղծվածների մեջ կարգեր, որովհետև մի քանիսն առաջին օրվա ստեղծվածներն են, մի քանիսը՝ երկրորդի, երրորդի և հաջորդ օրերի։ Եվ ս. Հոգին այս վարդապետությամբ մեզ սովորեցնում է նույնպիսի կարգեր պահպանել։ Բայց քո փափագը մենք տեսնում ենք աստվածային սահմանից դուրս եկած— որ ամեն բան և միանգամից և ճշմարտությամբ քեզ ասված լինի։ Իսկ մենք կա՛մ երկար պետք է գրենք, որպեսզի ցանկացածիդ պես լինի, կամ կարճ, որ քեզ հաճելի չի լինի։ Որովհետև քո շտապեցնելուց մենք ոչինչ չգրեցինք (Աղեքսանդր) Մակեդոնացու մասին, ոչ էլ Եղիական (պատերազմի) մասին իր տեղում հիշեցինք, և այստեղ ենք կցում։ Չենք կարող ասել, թե իմաստո՞ւն թե անհանճար հյուսն ենք մենք դառնում այստեղ, պատշա՞ճ է թե ոչ՝ այժմ միայն վերջումը կցել կարևոր և մեր շարադրության արժանի պատմությունները։

Եվ այս ճառերից որո՞նք պետք է առաջինը լինեն, եթե ոչ Հոմերոսից պատմվածները, այն՝ ինչ որ նա պատմում է Եղիական պատերազմի մասին Ասորեստանցիների Տևտամոս թագավորի ժա-

մանակ, եվ մեր Զարմայրը, որ ասորեստանցիներին հպատակ էր, քիչ մարդով եռվպական զորքի հետ օգնական է եղել Պրիամոսին և այնտեղ հելլենացոց քաջերից վիրավորվելով մեռնում է, բայց վկամենայի թե Աքիլլեսից և ոչ թե մի ուրիշ քաջից։

Վերջացավ Առաջին գիրքը, Հայոց մեծերի ծննդաբանությունը։

ՊԱՐՍԻՑ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՑ

ԲՅՈՒՐԱՍՊԻ ԱԾԴԱՀԱԿԻ ՄԱՍԻՆ

Բայց ի՞նչ ցանկություն է արդյոք, որ ունես Բյուրասպի Աժդահակի[96] անպիտան և անճոռնի առասպելների նկատմամբ, կամ ինչո՞ւ մեզ նեղություն ես տալիս պարսից անհարմար ու անճաշակ զրույցների, մանավանդ թե անբանությա[97] պատճառով, (ինչպես են) նրա առաջին և անբարի բարերարությունը, գևերի նրան սպասավորելը, վրիպածին ու ստին վրիպեցնել չկարողանալը, ուսերը համբուրելը, այնտեղից վիշապներ ծնվելը, այնուհետև չարության աճումը, փորի համար մարդիկ սպառելը։ Հետո մի ոմն Հրուդենի նրան կապելը պղնձե լարերով և Դմբավենդ կոչված լեռը տանելը. հետո Հրուդենի քնելը ճանապարհին, Բյուրասպիի նրան քաշելով բլուր տանելը, Հրուդենի զարթնելը և նրան լեռան ինչ-որ այլ տանելն ու կապելը և ինքն իրեն նրա առաջ իբրև արձան հաստատելը, որից սարսափահար եղած՝ հնազանդ է մնում շղթաներին և չէ իշխում դուրս գալ և աշխարհն ապականել։

Ի՞նչ կարողություն ունես այս սուտ առասպելներին կամ ի՞նչ կարիք այսպիսի շինծու անմիտ և անհանճար զրույցներին։ Մի՞թե սրանք հույների պերճ ու ողորկ, պատճառավոր առասպելներն են, որոնց տակ թաքնված են ճշմարիտ իրողություններ։ Բայց դու մեզ ասում ես, որ իմաստ տանք նրանց անիմաստությանը և անզարդը զարդարենք։ Ես նույնը կրկնում եմ քեզ. ի՞նչ կարողություն ունես սրանց, և ի՞նչ փափագ է՝ անբաղձալի բաներին բաղձալը և մեզ նոր նեղություն պատճառելը։ Մենք այս վերագրում ենք քո մանկական հասակին և համարում ենք քո տհաս խակու-

թյան ցանկությունը։ Ուստի այստեղ էլ թող կատարած լինենք քո կամքը և փափագդ լրացնենք։

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՆՉ ՈՐ ՀԱՎԱՍՏԻ ԲԱՆ ԿԱ ԲՅՈՒՐԱՍՊԻ ՄԱՍԻՆ

Պլատոնի խոսքն այժմ համարձակապես կարտասանեմ. «Սիրողի համար կա՞ արդյոք ուրիշ ես, իհարկե, ոչ[98]»։ Որովհետև բացի ուրիշ անհամար բաներից, որ քեզ համար հնարավոր դարձրինք, այս էլ ենք կատարում։ Որովհետև նրանց այն զրույցներն ու գործերը, որ մենք ատում ենք և մանավանդ որոնց լուրը տաղտկություն էր մեզ պատճառում՝ այսօր իմ ձեռներով ինքս շարադրում եմ, նրանց անմտության մեջ միտք դնելով և նրանց չափազանց հին և նրանց համար անհասկանալի անցքերն ահա կբացատրեմ, միայն թե քեզ էլ ուրախություն պատճառեմ կամ օգուտ բերեմ։ Բայց գիտցիր մեր ատելությունը դեպի այսպիսի զրույցները, որ արժան չհամարեցինք մեր առաջին գրքում զետեղել, ոչ նույն իսկ վերջին զրույցներում, այլ զատ և առանձին։ Ես կսկսեմ այսպես։

(Պարսիկների) Բյուրասպի Աժդահակ ասածը նրանց նախնին է, Նեբրովթին ժամանակակից։ Որովհետև երբ լեզուները բոլոր երկրի վրա ցրվեցին, այս բանը չկատարվեց խառնիխուռն և առանց առաջնորդների, այլ կարծես մի աստվածային ակնարկությամբ որոշվեցին գլխավորներ և ցեղապետներ, որոնցից յուրաքանչյուրն իր սահմանը ժառանգեց կարգով և զորությամբ։ Եվ ես այս Բյուրասպի իսկական անունը ճանաչում եմ Կենտավրոս Պյութիդա[99], որ գտել եմ քաղդեական մատյանում։ Սա ոչ այնքան քաջությամբ, որքան ճոխությամբ և ճարտարությամբ իր ազգի ցեղապետությունը վարում էր, Նեբրովթին հնազանդելով, և կամենում էր ցույց տալ, որ ամենքը պետք է ընդհանուր կենցաղ ունենան. նա ասում էր, թե ոչ ոք չպետք է առանձին (սեփական) բան ունենա, այլ ամեն ինչ ընդհանուր պետք է լինի։ Նրա ամեն մի խոսքը, ամեն մի գործը հայտնի էր. ոչ մի բան ծածուկ չէր մտածում, այլ սրտի բոլոր գաղտնի խորհուրդները լեզվովն արտահայտում էր. և սահմանում էր, որ բարեկամները նրա մոտ ելևմուտ անեն ինչպես ցերեկով, այնպես էլ գիշերը։ Եվ այս է նրա այսպես կոչված անբարի բարերարությունը։

Եվ որովհետև աստեղաբանության մեջ հզոր լինելով կամեցավ նաև կատարյալ չարությունը[100] սովորել, և այս նրան ան-

կարելի էր,— որովհետև, ինչպես վերն ասացինք, մարդկանց պատրելու նպատակով սովորություն ուներ ոչ մի բան ծածուկ չգործել, ուստի այնպիսի կատարյալ և ծայրահեղ չարություն սովորելու հնարավորություն չկար,— այս ուսման համար մի դասն հնարք է մտածում,— իբրև թե փորի սարսափելի ցավեր ունի, որ ոչ մի ուրիշ միջոցով չի բժշկվի, եթե ոչ մի ինչ-որ խոսքով ու սոսկալի անունով, որը ոչ ոք չի կարող լսել առանց վտանգի։ Եվ սովորած չար ոգին, որ նյութում էր չարությունը, գլուխը Բյուրասպիի ուսերի վրա դնելով անկասկած սովորեցնում էր նրան անբարի արվեստը, տանը և հրապարակներում, ականջին խոսելով։ Սրա մասին առասպելում ասում են, թե սատանայի ճուտը նրան սպասավորելով կատարում էր նրա կամքը, որի համար հետո, պարգև խնդրելով, ուսը համբուրում էր։

Իսկ վիշապներ բուսնելը կամ Բյուրասպիի կատարելապես վիշապանալը, որ ասում են, այս է։ Որովհետև նա անթիվ մարդիկ սկսեց զոհել դևերին՝ ուստի բազմությունը նրանից տաղտկացավ և բոլորը միաբանեցին ու նրան հալածեցին. նա փախավ վերոհիշյալ լեռան կողմերը. երբ հալածանքը նրա դեմ սաստկացավ, նրա հետ եղած ամբոխը քայքայվեց և ցրվեց. հալածողներն այս բանին վստահանալով՝ մի քանի օր այդ տեղում հանգիստ առան։ Սակայն Բյուրասպին ցրվածներին նորից հավաքելով՝ հանկարծորեն նրանց վրա է հասնում, մեծ վնասներ պատճառելով. բայց բազմությունը հաղթում է և Բյուրասպին փախուստ է տալիս։ Հասնում, նրան սպանում են լեռան մոտ և գցում են մի մեծ ծծմբահոտ վիհի մեջ[101]։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՆԱԽՆԻՔՆԵՐԻ

Ա

Այժմ քեզ կգրեմ, ինչ որ մեր աշխարհում առանձին գործեր են կատարվել, սկսելով երկրորդ գիրքս, կարգով պատմելով Աղեքսանդրի թագավորությունից մինչև քաջ ու տոկուն մարդու՝ Տըրդատի թագավորությունը, ինչ որ այստեղ քաջության և արիության, իմաստության և բարեկարգության գործեր են կատարվել ամեն մի (թագավորի) ձեռքով, (սկսած) Պարսից Արշակ թագավորից և նրա վաղարշակ եղբորից[103], որին թագավորեցրեց մեր աշխարհի վրա, և մեր աշխարհի մյուս թագավորներից, որ նրանից հետո եղան նրա զարմից, որոնք տերությունը որդին հորից առնելով կոչվեցին Արշակունիներ՝ Արշակի անունից, որոնցից մեկն ըստ կարգի հաջորդում էր թագավորությանը, իսկ մյուսները, ավելորդները, աճում և բազմանում էին իբրև ցեղ։ Բայց կգրեմ կարճառոտ, որքան մեզ հարկավոր է, ավելորդները բաց թողնելով։ Որովհետև ուրիշ ազգերի մասին բավական է, ինչ որ շատերից արդեն ասված է։

Երբ բոլոր տիեզերքին տիրեց Աղեքսանդր Մակեդոնացին, Փիլիպպոսի և Olympiադայի որդին, քսան և չորսերորդն Աքիլլեսից, ապա ինքը մեռնում է՝ իր տերությունը թողնելով շատ մարդկանց, կտակելով, որ բոլորի իշխանությունն էլ կոչվի Մակեդոնական։ Նրանից հետո Բաբելոնի վրա թագավորեց Սելևկիոսը, որ շատերից իշխանությունը խլեց և պարթևներին մեծ պատերազմով հնազանդեցրեց, որի պատճառով և Նիկանովր (Հաղթող) կոչվեց։ Սա երեսուն և մեկ տարի տիրելուց հետո՝ թագավորությունը թողնում է իր որդուն Անտիոքին, որ Սոտեր էր կոչվում, սա (թագավորեց) տասն և ինն տարի։ Սրան հաջորդեց Թևոս կոչված Անտիոքոսը տասը տարի, իսկ տասն և մեկերորդ տարում պարթևներն ապըստամբում են և դուրս են գալիս մակեդոնացիների հպատակությու-

նից։ Ուստի թագավորում է Արշակ քաջը, որ Աբրահամի սերունդից էր, Քետուրայի զավակներից [104], որով հաստատվում էր Տիրոջ խոսքն Աբրահամին, թե՝ «Քեզնից ազգերի թագավորներ կծնվեն»[105]։

Բ

ԱՐՇԱԿԻ ԵՎ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ։ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՍԵՐ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Ինչպես ասացինք, Աղեքսանդրի մահից վաթսուն տարի հետո պարթևների վրա թագավորում էր Արշակ քաջը՝ Բահլ Առավոտին[106] կոչված քաղաքում, Քուշանների երկրում։ Նիստ առաստիկ պատերազմներ մղելով գրավում է ամբողջ արևելքը, Բաբելոնից էլ հալածում է մակեդոնացիների իշխանությունը։ Նա լսում է, որ հռոմայեցիները զորացել են (և իշխում են) բոլոր արևմուտքին ու ծովին, որ սպանիացիներից խլել են ոսկու և արծաթի հանքերը, գաղատացիներին հաղթելով հարկատու են դարձրել, ինչպես և ասիացիների թագավորությունը։ (Ուստի Արշակը) պատգամավորներ ուղարկելով խնդրում էր դաշնակցություն (կնքել), որպեսզի (հռոմայեցիները) մակեդոնացիներին չօգնեն, (իր կողմից խոստանալով) ոչ թե հարկ տալ, այլ միայն նվեր՝ տարեկան հարյուր քանքար։

Այսպես նա տիրեց երեսուն և մեկ տարի։ Նրանից հետո նրա որդին Արտաշեսը քսան և վեց տարի։ Սրան հաջորդում է որդին, Արշակը, որ կոչվեց Մեծ. պատերազմում է Դեմետրի և Դեմետրի որդու Անտիգոնոսի հետ, որ մակեդոնական զորքով նրա վրա եկավ Բաբելոն և պատերազմի մեջ դերի ընկավ, որին Արշակը բռնելով՝ երկաթե շղթաներով տարավ Պարթևների աշխարհը, որի պատճառով սիրիպինդես[107] կոչվեց։ Բայց նրա եղբայրը, Անտիոքոս Սիդիացին, լսելով որ Արշակը գնաց, գալիս գրավում է Ասորիքը։ Բայց Արշակը տասներկու բյուր զորքով նորից հետ է դառնում. Անտիոքոսը սաստիկ ճմռավանից նեղված, պատերազմով պատահում է նրան նեղ տեղերում և իր զորքի հետ միասին կորչում է, և Արշակ տիրում է աշխարհիս մի երրորդ մասին, ինչպես կարելի է սովորել Հերոդոտոսի[108] պատմության չորրորդ (գրքից), որտեղ

աշխարհը բաժանված է երեք մասի, և կոչված են՝ մեկը Եվրոպե, մեկը Լիբիե և մեկը Ասիա, որին և տիրեց Պրշակը։

Գ

ՎԱՂԱՐՇԱԿԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ԹԱԳԱՎՈՐԵՑՆԵԼԸ

Այն ժամանակ մեր Հայոց աշխարհի վրա թագավորեցնում է իր վաղարշակ եղբորը, նրան սահման տալով հյուսիսն ու արևմուտքը։ Սա, ինչպես մեր առաջին գրքում ասացինք, քաջ և խոհեմ մարդ լինելով, անկախորեն տիրեց իր սահմաններում[109] և կենցաղական կարգեր հաստատեց մեր աշխարհում՝ որքան կարելի էր, սահմանեց նախարարություններ և այս նախարարությունների համար նահապետներ պիտանի մարդկանցից, որոնք ծագում էին մեր նախնի Հայկի սերունդից և ուրիշներից։

Որովհետև մակեդոնացիներին սանձահարելուց հետո, երբ պատերազմը դադարեց, քաջ Պարթևը ձեռնարկում է բարեկարգությունների, նախևառաջ բարիքների փոխարենը հատուցանելով գործավոր և իմաստուն Շամբատ Բագարատին, որ հրեաներից էր, իշխանություն տալով նրան՝ որդոց որդի թագադիր լինել Արշակունիներին, (և սահմանելով) որ նրանից սերվող ցեղը Բագրատունի կոչվի նրա անունով, որ ներկայումս մեծ նախարարություն է մեր աշխարհում։ Որովհետև այս Բագարատն առաջինը կամավորապես ինքն իր անձը ընծա բերեց Վաղարշակին, նախքան Արշակի պատերազմները մակեդոնացիների հետ, երբ սա արքունի դռանն էր, իսկ (մեր երկրի) արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան նշանակեց կողմնակալ, բյուրերի և հազարների իշխան։

Բայց նորից վերադառնանք ու պատմենք Վաղարշակի պատերազմը պոնտացիների հետ և Փայտգիայում, և նրա հաղթություններ։

Դ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՂԱՐՇԱԿԸ ՀԱՅՈՑ ՔԱՋԵՐԻՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԾՆԵԼՈՎ՝ ԱՐՇԱՎԻՐ Է ՄԱՆԿՈՒՆԱՑԻՆԵՐԻ ՄՏԵՐԻՄՆԵՐԻ ՎՐԱ

Արշակի մակեդոնացիների հետ պատերազմից հետո, երբ նա գրավեց Բաբելոնը և Ասորեստանից արևելք և արևմուտք (ընկած

երկիրները), Վաղարշակն էլ մեծ ղորք է դումարում Ատրպատականից և Հայաստանի միջնաշխարհից՝ անվանի և քաջ մարդիկ, վերը հիշված Բագարատին և նրա ձեռքի տակ եղած քաջերին, ծովեզերքի երիտասարդներին[110], որ սերված էին Գեղամից և քանանացիներից, և Շարայի ու Գուշարի սերունդներից, և նրանց մերձակա Սիսակյաններին և Կադմյաններին իրենց մերձավորներով, գրեթե մեր աշխարհի կես մասը։ Հասնում է մեր աշխարհի միջավայրը, Մեծամորի ակունքից վեր, Երասխի ափը, Արմավիրի մոտ, որ Բլուր է կոչվում, բավական շատ օրեր մնում է այնտեղ, որովհետև, ինչպես հարկ է ասել՝ (զինվորական) կարգեր չգիտեին։

Եվ այստեղից, մեր աշխարհի բոլոր կողմերից (զորքերը) միացնելով, հասնում է Խաղտիքի[111] սահմաններըր. որովհետև Ղազիկան, Պոնտոսը, Փոյուգիան, Մաժաքը և ուրիշները, Արշակի պատերազմների լուրն առած չլինելով՝ հաստատ պահում էին բարեկամական դաշինքը մակեդոնացիների պետության հետ։ Ուստի և մի ումն Մորփյուղիկես վերոհիշյալ կողմերը միաբանեցնելով՝ պատերազմի է պատրաստվում Վաղարշակի հետ։ Ներքանք իրար պատահում են մի բարձրավանդակ քարագագաթ բլուրի մոտ, որ այժմ կոչվում է Կոլոնիա, և միմյանց մոտ գալով, մեջտեղը երկար ատպարեզներ թողած՝ երկու կողմերն ամրանում են բավական օրերի ընթացքում։

Ե

ՄՈՐՓՅՈՒՂԻԿԵՍԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՀԸ ՄԿՈՒՆԴԻ ՀԱՐՎԱԾԻՑ

Երբ այսպես շատ օրերի ընթացքում երկու կողմերն ամրացան, ապա պատերազմն սկսվում է մեր կողմից. ուստի և Մորփյուղիկեսը, կամա ակամա, կազմակերպում է իր զորքի ճակատը և հանդուգն հարձակումով վրա է վազում։ Որովհետև նա սրտոտ մարդ էր, երկար անդամներով, մարմնին համապատասխան, աստիճ ուժեղ էր և ամրացած էր պղնձով ու երկաթով և շրջապատված էր ուրիշ ընտիր սպառազիններով՝ ուստի ոչ սակավ ընտիր ու քաջ մարդիկ գետին էր գլորում Վաղարշակի երիտասարդներից և ջանք էր անում անցնել ու հասնել Հայոց թագավորի մոտ, որ ամրացած էր զինված մեծ խմբի մեջ։ Եվ մոտ հասնելով՝ հաջողվեց ավինը գցել, որովհետև կորովի և երկայնաձիգ էր,

աշտեն[112] հետու արձակեց, կարծես սրաթև թռչունի թռիչքով։ Բայց չհապաղեցին մեջ ընկնել քաջ և անվանի մարդիկ Հայկի և Աստղիկ տանի Սենեքերիմի սերունդներից, որոնք աշտեի հարվածով քաջին սպանեցին և նրա զորքերն առաջ խառնելով փախցրին, արյունե վտակներ թափելով դետինը ողողեցին՝ ինչպես անձրևի հեղեղներով։ Այնուհետև այդ երկիրը վաղարշակի ձեռքի տակ նվաճվելով խաղաղվում է և մակեդոնական սպառնալիքը դադարում է։

Զ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳԱՎՈՐԵՑ ՎԱՂԱՐՇԱԿԸ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ԱՐՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Այս դործը կատարելուց հետո (Վաղարշակը) կարգավորում է Մաժաքի կողմերը, պոնտացիներին և եգերացիներին[113], ու դառնում է դեպի հյուսիս, Պարխար լեռների ստորոտով, Տայքի միջով, դեպի անտառախիտ, գեղ, մառախլապատ լոռավետ տեղերը. գեղնցիկ կերպով կարգավորում է այս երկիրը, նրա լեռնային և ջերմին վայրերը փոխադարձաբար բարեխառնելով[114] իր թագավորության վայելչության համար, այնտեղ ամարանոցներ պատրաստելով՝ երբ ամառները դեպի հյուսիս գնալու լինի։ Երկու անտառախիտ տափարակները իրենց լեռներով հանդերձ վերածում է երկու գոմի, դարձնում է տրսերի տեղ, և Կոլայի ջերմությունը մեղմացնում է այդիներով և բուրաստաններով։ Բայց ես քաշվում եմ այդ սիրելի անձի մասին ամեն ինչ հայտնի և մանրամասն գրել, որովհետև ես միայն տեղերը ճիշտ նշանակեցի, առանց ոճի վրա ուշադրություն դարձնելու, հրաշալի անձի սիրո կապը անխզելի պահելու նպատակով։

Այստեղ նա կանչեց եկվոր վայրենի ցեղը, որ ապրում էր Հյուսիսային դաշտում և Կովկաս մեծ լեռան ստորոտում, այն հովիտներում և խորը ձգված երկայնաձև ձորերում, որ լեռան հարավային կողմից իջնում են մինչև մեծ դաշտի բերանը. նրանց պատվեր է տալիս թողնել ավազակությունը, դեն դցել մարդկանց դավելը, հպատակվել արքունական հրամաններին ու հարկերին, որպեսզի հաջորդ անդամ, երբ նրանց տեսնե, առաջնորդներ և իշխաններ հաստատե գեղեցիկ կարգերով։ Եվ նրանց արձակում է՝ իր կողմից իմաստուն մարդիկ և վերակացուներ նշանակելով։

Իսկ ինքը, արևմուտքից հավաքած բազմությունն արձակելով՝ իջնում է Շարայի սահմանի մոտի խոտավետ տեղերը, որ հին մարդիկ կոչում էին Անփայտ կամ Վերին Բասյան, բայց հետո Բուլղար Վղնդուր[115] Վունդի գաղթականության պատճառով, որ այդ տեղերում բնակվեց, նրա անունով կոչվեց Վանանդ. և (մոտակա) գյուղերը նրա եղբայրների և սերունդների անուններով են կոչվում մինչև այժմ։

Իսկ երբ Հյուսիսում ցրտեց և սառնամանիքներն սկսեցին փչել, նա այնտեղից շարժվեց, եկավ իջավ մեծ դաշտը, բանակ դրեց Մեծամորի ափին այն տեղում, որտեղ մեծ գետը Հյուսիսային ծովակից սկիզբ առնելով, իջնում խառնվում է Մեծամորի հետ։ Այստեղ մեր աշխարհի զորքերը կարգավորելով և իր կողմից վերակացուներ թողնելով՝ վերցնում է իր հետ բոլոր գլխավորներին և չվում է Մծբին։

Է

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԹԵ ՈՐՏԵՂԻՑ ՀՈՄՆՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀՐԱՄԱՅԵՑ ԿՆՆՅԱՂԱՎԱՐԵԼ

Այս գլուխը մեծ է և հավաստի պատմություններով լի և արժանի է ընդարձակ և կոկիկ պատմելու։ Որովհետև շատ կա այստեղ՝ տների, ցեղերի, քաղաքների, գյուղերի, դաստակերտների և ընդհանրապես թագավորության կարգերի և կարգավորման վերաբերյալ, ինչպես նաև թագավորության հետ կապված զորքերի, զորապետների, կողմերի կողմնակալների և սրանց նմանների։

Արդ՝ նախ և առաջ թագավորը կարգավորում է ինքն իրեն և իր տունը, սկսելով իր պնդից ու թագից։ Եվ Բագարատ կոչվածին, որ հրեաներից էր ծագում, շնորհակալություն ցույց տալով հենց սկզբից անձնատուր լինելուն և թագավորին օժանդակելուն համար, ինչպես և նրա հավատարմության և քաջության համար՝ պարգևում է նրան՝ ցեղի վերը հիշված տանուտիրական պատիվը[116], իրավունք տալով թագ դնել թագավորի գլուխը և կոչվել թագադիր, այլև ասպետ[117], և մանր մարգարիտից երեք փաթ վարսակալ կրել առանց ոսկու և (թանկագին) քարերի՝ երբ արքունիքում և թագավորի տանը շրջելիս լինի։

Իրեն դգեստներ հագցնող նշանակում է Զեռնեին[118], քանանա-

ցոց սերնդից և նրա ցեղի անունը դնում է Գնթունի, չգիտեմ ինչ պատճառով։ Իսկ իրեն զինված թիկնապահներ է նշանակում Հայկազն Խոռի սերնդից, ընտիր և քաջ նիզակավոր և սուսերավոր մարդկանց, և նրանց նախարարության գլուխ է նշանակում Մաղխաղ անունով մի բարի և սրտոտ մարդու. բայց ցեղի անունը պահում է սկզբնականը[119], Իսկ Դատին, որ Գառնիկի զավակներից էր, Գեղամից սերված, նշանակում է արքունական որսերի վրա։ Նա ունեցավ մի որդի Վարժ անունով, որի անունով և այս ցեղը կոչվեց[119], բայց այս հետո եղավ, Արտաշեսի ժամանակ։ Գաբաղ անունով մեկին նշանակում է ձիերի երամակների վրա, իսկ Աբելին (սեղանատան) սպասների և գահերի վրա[120]. նրանց պարգևվում է գյուղեր, որոնք նրանց անուններն են կրում, ինչպես նաև նախարարությունները կոչվեցին Աբեղյան և Գաբեղյան։

Իսկ Արծրունիներն իմ գիտցածով[121] ոչ թե Արծրունի են, այլ արծիվունի, որոնք (թագավորի) առջև արծիվներ էին կրում։ Ես դանց եմ անում առասպելների դատարկաբանությունները, որ պատմվում են Հաղամակերտում, իբր թե երեխայի քնելուն հակառակվելիս են եղել անձրևն ու արևը, և թռչունը հովանի է եղել թալկացած պատանուն։ Գնունիներն էլ իմ գիտցածով գինիունի են, որ թագավորին արժանի ըմպելիքներ էր պատրաստում, և կարմանալի կերպով զուգադիպեցին նրա գործն ու անունը, որովհետև թագավորին ըմպելիքներ էր պատրաստում ընտիր և համեղ գինիներից և անունն էլ Գին էր, որի վրա Վաղարշակը շատ զվարճանալով, ասում են, դասում է նախարարական ցեղերի թվում։ Եվ այս երկու տունը, Արծրունիներն ու Գնունիները, Սենեքերիմի սերունդներից են։

Նույնպես և Սպանդունիներին համարում են սպանդանոցների վրա (նշանակված), իսկ Հավունիներին՝ բազեակիրներ և բազե բռնողներ, որովհետև այրում էին անտառներում։ Եվ եթե դատարկախոս չհամարես ինձ՝ Ձյունականներին էլ ես համարում եմ ամարանոցների պահապաններ և ձյունակիրներ, որոնք առաջադիմելով ազնվականություն ստացան, իբրև թագավորներին ընտանի մարդիկ։

Եվ արքունի դռան չորս պահապան գունդ է նշանակում, ամեն մեկը բյուր սպառազեն մարդուց բաղկացած, բուն հին թագավորների սերունդներից, մեր նախնի Հայկից ծագած, որոնք բուն ոստան[122] էին կոչվում, և երբեմն հայերից ժառանգություն-

էին ստանում գյուղեր և դաստակերտներ։ Բայց վերջերը, Պարսից թագավորների ժամանակ, ինչպես լսում եմ, ուրիշ գնդեր են կազմվել ու ոստան կոչվել, չգիտեմ, արդյոք նախկին ցեղի սպառվելո՞ւ պատճառով, թե մի որևէ ընդդիմության պատճառով այդ ցեղը դեն գցելով և նրա տեղ ուրիշ գնդեր նշանակելով՝ արժանի անունով։ Բայց առաջինը հաստատ հին թագավորների սերնդից էր, ինչպես և այժմ կան Վրաց աշխարհում, որոնք Սեփեծուլ[123] են կոչվում։ Նաև հրամայում է նույն ցեղից ներքինիներ խագել և նրանց նահապետ է նշանակում Հայրին[124], որի իշխանությունը տարածվում էր Ատրպատականից մինչև Ճուաշ և Նախճավան։ Բայց սրա պատմությունը, թե ո՛րպես և ո՛րտեղ պատահեց, հիշատակված չէ, և ես չգիտեմ։

Ը

ՄԱՐԱՑ ԱԺԴԱՀԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՍԵՐՆԴԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՇԱՆԱԿԸ

Թագավորի տունը կարգավորելուց հետո՝ թագավորության երկրորդ նշանակում էր Աժդահակի՝ Մարաց թագավորի սերնդից, որ այժմ կոչվում են Մուրացյան, որովհետև այդ ցեղի նահապետներին չեն ասում Մուրացյան տեր, այլ Մարացոց տեր։ Նրան թողնում է բոլոր գյուղերը, որտեղ (ապրում էին) գերի բերված մարացիները։ Իսկ արևելյան կողմից, հայերեն խոսակցության վերջի սահմաններում, երկու կողմնակալ է նշանակում մի-մի բյուր մարդով, նահապետական տների ցեղերից, Սիսակյաններին և Կադմոսի սերունդներից, որոնց անունները հիշեցինք մեր նախորդ գլուխներից մեկում։

Սրանից հետո (Վաղարշակը) հաստատում է արևելյան հյուսիսային կողմի մեծ, անվանի բազմաբյուր կողմնակալությունը, (կողմնակալ նշանակելով) Առանին, որ անվանի մարդ էր, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում, Կուր կոչված մեծ գետի ընթացքով, որ անցնում է մեծ դաշտով։ Բայց գիտցիր, որ մենք Առաջին գրքում մոռացանք հիշատակել այս մեծ և անվանի ցեղը, այսինքն Սիսակից սերված զունդը, որ ժառանգեց Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը, Երասխ գետից մինչև Հնարակերտ կոչված ամրոցը. աշխարհն էլ Աղվանք

կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետև նրան աղու էին ասում։ Այս (Սիսակի) սերնդից էր և այս անվանի և քաջ Առանը, որ Պարթև Վաղարշակի կողմից բյուրավոր կողմնակալ նշանակվեց։ Ասում են, որ սրա զավակներից են սերվել Ուտեացոց ազգը և Գարդմանացոց, Ծավդեացոց և Գարգարացոց իշխանությունները։

Իսկ Գուշարին, Շարայի զավակներից, ժառանգություն տվեց Մթին լեռը, այսինքն Կանգարքը և Ջավախքի կես մասը, Կողբը, Ծոբը, Ձորը, մինչև Հնարակերտ ամրոցը։ Բայց Աշոցքի տեր և Տաշիրքի սեպուհ նշանակում է Վաղարշակը Հայկազն Գուշարի զավակներից։ Իսկ Կովկաս լեռան դեմ հյուսիսի կողմնակալ է նշանակում մեծ և հզոր ցեղը և նահապետության անունը դնում է Գուգարացոց բդեշխ, որ Դարեհի[125] Միհրդատ նախարարի սերունդից էր, որին Աղեքսանդրը բերելով իշխան նշանակեց Իվերիացոց ցեղից գերիների վրա, որոնց բերել էր Նաբուգոդոնոսորը, ինչպես պատմում է Աբյուդենոսը[126], ասելով. «Մեծազոր Նաբուգոդոնոսորը ավելի հզոր էր, քան Հերակլեսը. նա զորք ժողովելով հասնում էր լիբիացոց և Իվերիացոց աշխարհը, և հաղթահարելով իր ձեռքի տակ էր նվաճում, և նրանցից մի մասը տանում բնակեցնում էր Պոնտոս ծովի աջակողմում»։ (Իվերիան գտնվում է արևմուտքում աշխարհի ծայրում)։ Իսկ Բասենի մեծ հովտում նահապետություն է հաստատում, Որդունի անունով, Հայկի սերունդներից։

Իսկ Տորքին, որ սերված էր Հայկի թոռ Պասքամից, մի տգեղ, բարձր, կոպիտ կազմվածքով, տափակ քթով, փոս ընկած աչքերով, դժնյա հայացքով մարդու, որին սաստիկ տգեղության պատճառով կոչում էին Անգեղյա[127], որ վիթխարի հասակ և ուժ ուներ՝ արևմուտքի կուսակալ նշանակեց և ցեղի անունը կոչում է Անգեղ տուն՝ երեսի տգեղության պատճառով։ Բայց եթե ուզում ես, ես էլ նրա մասին անհամ ու անտեղի սուտ կպատմեմ, ինչպես պարսիկները, որ Ռոստոմ Սագճիկի մասին պատմում են, թե հարյուր քսան փղի ուժ է ունեցել։ Որովհետև նրա ուժեղության և սրտոտ լինելու պատճառով երգերը պատմում էին նրա մասին չափազանց անհարմար բաներ, որոնք ո՛չ Սամսոնին են հարմարում, ոչ Հերակլեսին և ոչ Սագճիկին[128]։ Որովհետև երգում էին նրա մասին, իբր թե ձեռք էր զարնում որձաքար ապառաժներին, որոնց վրա ոչ մի ճեղքվածք չկար, ուզածին պես ճեղքում էր մեծ

ու փոքր, նրունգներով տաշում էր, տախտակներ էր ձևացնում և նույնպես նրունգներով նրանց վրա գծում էր արծիվներ և նման բաներ։ Պոնտոս ծովի ափին պատահել է թշնամիների նավերի և վրա է հարձակվել. նրանք հեռացել են խոր ծովը մտ ուխ ապարեզ։ Չկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրաձև ժայռեր և շպրտում է նրանց հետևից։ Ջրերի ալեկոծվելուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի պատառումից առաջացած ալիքները մնացած նավերը շատ մղոններ առաջ են քշում[129]։ Ո՜հ, չափազանց առասպել է այս, առասպելների առասպել։ Բայց ի՞նչ կանես, որ մարդը սաստիկ ուժեղ էր և այսպիսի զրույցների արժանի։

Սրանից հետո (Վաղարշակը) հաստատում է Մոփաց նախարարությունը Չորրորդ կոչված Հայքում։ Նույնպես հաստատում է Ապահունյաց նախարարությունը, ինչպես և Մանավազյանը և Բզնունականը, նույնպես Հայկի սերունդներից, և բնակիչներից առաջավորներին գտնելով՝ տներ է նշանակում, դյուղերի և գավառների անուններով նրանց կոչելով։

Բայց մոռացանք Սլաք կոչված դժնյա մարդուն, որի մասին հաստատ չեմ կարող ասել, արդյոք Հայկի՞ց էր ծագել, թե նրանից առաջ մեր աշխարհում ապրողներից, որոնց գոյության մասին պատմում են զրույցները. բայց նա քաջ մարդ էր։ Սրան քիչ մարդկանցով նշանակում է լեռը պահպանելու և քոշեր որսալու. սրանք կոչվեցին Սլկունիներ։ Այսպես և նույնպիսի դործեթի վրա նշանակում է անդառնալի Միանդակին[130], որից սերվեցին Մանդակունիները։

Եվ Վահագնի զավակներից գտնելով մարդիկ, որոնք ինքնակամ խնդրեցին մեհյաններում սպասավորությունը, նրանց շատ պատվում է, նրանց է հանձնում քրմությունը, դասում է առաջին նախարարությունների շարքում և կոչում է Վահունիներ։ Նույնպես գտնելով, Առավենյանները և Զարեհավանյանները առաջին թագավորների սերունդներից են, նշանակում է նույնանուն ավաններում։

Իսկ Շարաշանին, որ Սանասարի տնից էր (ծագում) մեծ բդեշխ և կուսակալ է նշանակում արևմտյան-Հարավում, Ասորեստանի սահմաններին մոտ, Տիգրիս գետի ափին, նրան գավառներ պարգևելով Արձնը և նրա շրջակայքը, Տավրոս լեռը, որ է Սիմը, և ամբողջ Կղեսուրը[131]։

Իսկ Մոկքում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ սրիկաներ[132], հաստատում է նախարարություն։ Նույնպես հաստատում է Կորդվացիներին, Անձևացիներին և Ակեացիներին նույնանուն գավառներից։ Իսկ Ռշտունիների և Գողթնեցիների մասին գտա պատմված, թե նրանք անկասկած Սիսակյան (տան) հատվածն են կազմում, բայց չգիտեմ, արդյոք գավառնե՞րն են կոչվել մարդկանց անունով, թե գավառների անունով կոչված են նախարարությունները։

Այս բոլորից հետո Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիքներին։ Վաղարշակը շատ խնդրեց, նույնպես և խոսքերով հարկադրեց հրեա Շամբատի զավակ Բագարատին, որ թագադիր և ասպետ էր, որպեսզի թողնի հրեական կրոնը և կուռքերի պաշտի. բայց երբ նա հանձն չառավ, թագավորը նրա կամքին թողեց։

Նաև հրաման է տալիս նորոգել Շամիրամի քաղաքը, և ուրիշ շատ տեղերում շինել բազմամարդ քաղաքներ, գլխավոր մարդաշատ գյուղեր։

Եվ իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում (արքունիք) մտնելու և ելնելու, խորհրդի, կերուխումի և զբոսանքների համար։ Սահմանում է զինվորական կարգեր, առաջին, երկրորդ, երրորդ և այլն. և երկու մարդ գրով հիշեցնողներ, մեկը բարին հիշեցնողը, մյուսը՝ վրեժխնդրությունը։ Բարին հիշեցնողին հրաման է տալիս՝ թագավորի բարկանալու կամ անիրավ հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին և մարդասիրությունը։ Սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում։ Հրաման է տալիս, որ քաղաքացիների հարգն ու պատիվը ավելի լինի, քան գյուղացիներինը, որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխանների, բայց որ քաղաքացիները շատ չգոռոզանան գյուղացիների մոտ, այլ եղբայրաբար վարվեն, բարեկարգության և աննախանձ կյանքի համար, որ հիմք է կազմում շինության և խաղաղ կյանքի, — և ուրիշ նման բաներ։

Եվ որովհետև շատ որդիներ ուներ, հարմար գտավ, որ բոլորն էլ միասին իր մոտ չմնան Մծբինում, այլ նրանց ուղարկում է բնակվելու Հաշտենից գավառը, և նրան սահմանակից ձորը, որ Տարոնից դուրս է գտնվում, նրանց է թողնում բոլոր գյուղերը, ավելացնելով նաև առանձին եկամուտներ և ուտեստ արքունի

(գանձարանից)։ Միայն իր առաջին որդուն, որ կոչվում էր Արշակ, պահում է իր մոտ, իբրև թագավորության հաջորդ, նաև նրա որդուն, որին կոչեց Արտաշես և որին շատ էր սիրում, որովհետև երեխան հիրավի կայտառ էր և ուժեղ կազմվածքով, այնպես որ նրան նայողները նախատեսում էին, թե ի՛նչ արիություններ պիտի զարգանան նրա մեջ։ Եվ այս բանն այնուհետև մինչև վերջը օրենք դարձավ Արշակունի թագավորների համար, որ մի որդին ապրի թագավորի հետ՝ թագավորության փոխանորդ լինելու համար, իսկ մյուս որդիներն ու դուստրերը գնան Հաշտենից կողմերը իբրև ցեղի ժառանգներ։

Այսպիսի արիության գործերից և բարեկարգություններից հետո Վաղարշակը մեռնում է Մծբինում, քսաներկու տարի թագավորելուց հետո։

Թ

ՄԵՐ ԱՐՇԱԿ ԱՌԱՋԻՆԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Արշակը, Վաղարշակի որդին, Հայոց վրա թագավորում է տասներեք տարի. իր հոր առաքինություններին նախանձավոր և հետևող լինելով, նա շատ բարեկարգություններ մտցրեց. պոնտացիների հետ պատերազմելով, մեծ ծովի ափին իր (հաղթության) նշան թողեց (մի արձան). և ասում են թե իր բոլորակ տեգով նիզակը, որ թաթախված էր օձերի արյան մեջ, հեռվից նետելով՝ խորը նստեցրեց երկնաքարից շինած արձանի մեջ, որ կանգնեցրել էր ծովեզերքում։ Այս արձանը պոնտացիները երկար ժամանակ պաշտում էին իբրև աստվածների գործ, բայց երբ Արտաշեսը նորից պատերազմի բռնվեց պոնտացիների հետ, ասում են, նրանք այդ արձանը ծովը գցեցին։

Սրա ժամանակ մեծ խռովություններ ծագեցին Կովկաս մեծ լեռան դաշտերում, բուլղարների աշխարհում և նրանցից շատերը հեռանալով եկան մեր աշխարհը և բնակվեցին Կողից ներքև արգավանդ և հացառատ տեղերում երկար ժամանակ։

Բագարատի որդիները սրանից նեղվեցին, որպեսզի կուռք պաշտեն. նրանցից երկուսը սրով արիաբար վախճանվեցին իրենց հայրենական կրոնի համար, որոնց չեմ տատանվում կոչել. հետևող Անանյաններին և Եղիազարյաններին[133]. իսկ մյուսները

միայն այսքան բան հանձն են առնում—շաբաթ օրերը ձի հեծնել որսի և պատերազմի համար և տղա զավակներին անթլփատ թողնել եթե լինեն, որովհետև կին չունեին։ Եվ Արշակից հրաման դուրս եկավ բոլոր նախարարություններին՝ նրանց կին չտալ, եթե պայման չդնեն թլփատությունից հրաժարվելու։ Նրանք հանձն են առնում միայն այս երկուսը, բայց կուռքերին երկրպագելը՝ ոչ։

Այստեղ ավարտվում են ծերունի Մար Աբաս Կատինայի պատմությունները[134]։

Ժ

ԹԵ ՈՐՏԵՂԻՑ ԳՏԱՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐ ԱԲԱՍ ԿԱՏԻՆԱՅԻ ԳՐՔԻՑ ՀԵՏՈ

Կսկսենք պատմել քեզ Աֆրիկանոս[135] ժամանակագրի հինգերորդ գրքից, որին վկայում են Հովսեպոս և Հյուպողիտոս[136] և ուրիշ շատերը հույներից։ Որովհետև նա ամբողջապես փոխադրեց (հունարենի)՝ ինչ որ Եդեսիայի, այսինքն Ուռհայի դիվանում գրվածքներ կային մեր թագավորների մասին։ Այս մատյանները այնտեղ փոխադրված էին Մծբինից և Պոնտոսի Սինոպից[137], մեհենական պատմություններից։ Թող ոչ ոք չկասկածի, որովհետև մենք ինքներս մեր աչքով տեսանք այն դիվանը։ Եվ մեծավոր վկա ու երաշխավոր թող լինի Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական (պատմության) գիրքը, որը մեր երանելի ուսուցիչը Մաշտոց՝ թարգմանել տվեց հայերեն։ Փնտրել տուր այս գիրքը Գեղարքունիքում, Սյունյաց գավառում, և կգտնես առաջին դպրության տասներեքերորդ գլխում, որտեղ վկայում է, թե Եդեսիայի դիվանում եղել են մեր առաջին թագավորների բոլոր գործերը մինչև Աբգար և Աբգարից հետո մինչև Երվանդ։ Եվ կարծում եմ, որ մինչև այժմ էլ պահվելիս կլինի նույն քաղաքում։

ԺԱ

ՄԵՐ ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՋԻՆԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ (ՊԱՐՍԻԿՆԵՐԻՑ) ՀԱՓՇՏԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտաշեսն իր հոր Արշակի փոխանակ թագավորում է Հայոց վրա Պարսից Արշական թագավորի քսան և չորսերորդ տա-

րում, և առաջադեմ լինելով, չի կամենում երկրորդական գահը գրավել, այլ ձգտում է ավագության. Արշականը համաձայնելով՝ տալիս է նրան նախագահության։ Որովհետև (Արտաշեսը) հպարտ և պատերազմասեր մարդ էր, որ և Պարսկաստանում արքունի (պալատ) շինեց իր համար և առանձին դրամ կտրել տվեց, իր պատկերով, և Արշականին իր ձեռքի տակ թագավոր էր դնում Պարսկաստանի վրա, ինչպես և իր որդի Տիգրանին՝ Հայոց վրա։

Բայց իր որդի Տիգրանին հանձնում է Վարաժ անունով մի պատանու, որ Դատի որդին էր, Գառնիկի զավակներից, Գեղամի սերնդից, որովհետև այդ պատանին նշանավոր էր կորովի նետաձգությամբ, (պատվիրելով) Տիգրանին սովորեցնել։ Նրան նշանակում է վերակացու արքունական որսերի, պարգևում է նրան գյուղեր Հրազդան գետի մոտերը. նրա ցեղը նրա անունով կոչվում է Վարաժնունի։ Բայց իր Արտաշամա դուստրը կնության է տալիս ումն Միհրդատի[138], վրաց մեծ քրեշխի, որ Դարեհի նախարար Միհրդատի զավակներից էր, որին Աղեքսանդրը նշանակել էր իվերիացիների գերիների վրա, ինչպես առաջ պատմեցինք, և նրան է հավատում հյուսիսային լեռների և Պոնտոս ծովի կողմնակալությունը։

ԺԲ

ԱՐՏԱՇԵՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ, ԿՐԵՍՈՍԻՆ ԶԵՐԲԱԿԱԼԵԼԸ ԵՎ ԿՈՒՐՔՈՐԻ ԱՐՁԱՆՆԵՐՆ ԱՎԱՐ ԱՌՆԵԼՆ ՈՒ ՀԱՅԵՐԻՆ ՏԱԼԸ

Այն ժամանակ Արտաշեսը հրաման է տալիս արևելքից ու հյուսիսից զորք հանել խիստ մեծ բազմությամբ, այնպես որ նա նրանց հաշիվն էլ չգիտեր, այլ (հրամայում էր) ճանապարհների վրա և իջևաններում մարդապուխ մի քար դիզել և թողնել իբրև նշան իրենց բազմության։ Այնուհետև նա շարժվում է դեպի արևմուտք և ձերբակալում է լյուդացիների կրեսոս թագավորին։

Ասիայում գտնելով Արտեմիդի, Հերակլի և Ապոլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները, բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում։ Քրմապետները, որոնք վահունիների ցեղից էին, Ապոլոնի և Արտեմիդի արձաններն առնելով կանգնեցին Արմավիրում, իսկ Հերակլեսի արձանը, որ Սկյուղեսի

և կրետացի Դիպինոսի զործն էր[139], իրենց նախնի վահագնը համարելով, կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աշտիշատ գյուղում՝ Արտաշեսի մահից հետո։

Բայց Արտաշեսը երկու ծովերի մեջ եղած ցամաքը նվաճելով, օվկիանոսը լցնում է նավերի բազմությամբ, կամենալով բոլոր արևմուտքն իրեն հպատակեցնել. որովհետև Հռոմում մեծ խռովություն և շփոթություն լինելով՝ ոչ ոք նրան ուժեղ դիմադրություն ցույց չտվեց։ Բայց չեմ կարող ասել, ի՛նչ բանի ազդեցությամբ, ահագին ազմուկ և շփոթություն է ծագում, և բազմաթիվ զորքերն սկսում են միմյանց կոտորել. իսկ Արշաուհսը փախչելիս մեռնում է, ինչպես ասում են՝ իր զորքերից, քսան և հինգ տարի թագավորելով։

Բայց էլլադայում էլ վերցնելով Դիոսի, Արտեմիդի, Աթենասի, Հեփեստոսի և Ափրոդիտեի արձանները՝ ուղարկում է Հայաստան (Բերողները) դեռ մեր աշխարհի ներսերը չհասած՝ լսում են Արտաշեսի մահվան բոթը և արձանները փախցնում հասցնում են Անի ամրոցը. քուրմերն էլ արձանների հետ գնալով՝ նրանց մոտ էլ մնում են։

ԺԳ.

ՈՒՐԻՇ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻՑ ՎԻԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ՏԻԵԶԵՐԱՆԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԵՍՈՍԻՆ ԿԱՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս բանն ասում են Հունաց պատմագիրները, ո՛չ մեկը կամ երկուսը, այլ շատերը, որի մասին տարակուսելով՝ մենք շատ քննություն կատարեցինք։ Որովհետև մի քանի պատմություններից լսել էինք, թե Կյուրոսն է սպանել Կրեսոսին և լուտացող թագավորությունը վերցրել։ Նույնպես պատմվում է Կրեսոսի առարկությունը Նեքթանեբոսին[140], իսկ այս Նեքթանեբոսը, ինչպես պատմում է Մանեթոսը, եգիպտացիների վերջին թագավորն է, որին ոմանք համարում են Աղեքսանդրի հայրը։ Եվ զտնում ենք, որ Կրեսոսը Նեքթանեբոսից երկու հարյուր տարի առաջ է եղել, իսկ Նեքթանեբոսն ավելի քան երկու հարյուր տարի առաջ Հայոց Արտաշես Առաջին թագավորից։

Բայց որովհետև շատերն են, որ ասում են, թե մեր Արտաշեսն է բռնել Կրեսոսին և հարմար ոճով են պատմում, ուստի և ես հա-

մոզվում եմ, որովհետև Պոլիկրատեսն այսպես է ասում. «Իմ աչքում Պարթև Արտաշեսը բարձր է Աղեքսանդր Մակեդոնացուց, որովհետև իր աշխարհում մնալով՝ տիրեց Թեբեին ու Բաբելոնին, և Ալլուս գետը չանցած՝ լյուդացոց զորքը կոտորեց և Կրեսոսին բռնեց, և նախքան Ասիա հասնելը Աստիկեյի դղյակում հղչակվեց։ Ավա՛ղ բախտին. գոնե իր տերության մեջ լիներ վախճանված և ոչ թե փախուստի ժամանակ»։

Սրա նման ասում է Եվագարոսը. «Աղեքսանդրի և Դարեհի պատերազմը փոքր է թվում՝ Արտաշեսի (պատերազմի) հետ համեմատելիս, որովհետև նրանց ժամանակ ցերեկվա լույսը փոշու պատճառով պայծառ չէր երևում, իսկ սա նետաձգությամբ արեգակն ստվերով պատեց, կեսօրին արհեստական գիշեր ստեղծելով։ Նա փախստական չթողեց, որ լյուդացիներին լուր տաներ, այլև նրանց Կրեսոս թագավորին հրամայում է տապակի վրա դնել։ Ուստի և հոսող ջրերը չկարողացան գետը հորդացնել, (որովհետև զորքը) խմելով նրան իջեցնում էր ձմեռվա նվազության, քանի որ զորքի բազմությամբ ցույց տվեց, որ թվերը տկար են (նրանց քանակն արտահայտելու), այնպես որ ավելի չափ էր հարկավոր, քան հաշիվ։ Բայց նա սրանով չկպարտացավ, այլ արտասվեց, ասելով. «Ավա՛ղ այս անցավոր փառքին»։

Սկամադրոսն էլ այսպես է գրում. «Լյուդացիների հպարտացած Կրեսոսին մոլորության մեջ էր գցում Պյութիայի[141] գուշակը, պատասխանելով. «Կրեսոսն Ալլուս գետն անցնելով իշխանություններ կկործանե»։ Նա օտարների (իշխանությունները) կործանելով՝ իրենը կործանեց, որովհետև Պարթև Արտաշեսը նրան բռնելով հրամայեց երկաթե տապակի վրա դնել։ Իսկ Կրեսոսը հիշելով Աթենացի Սողոնի խոսքերը՝ իր լեզվով բացականչեց։ «Ո՛վ Սողոն, Սողոն, դու զեղեցիկ խոսեցիր, թե չի կարելի մարդու բարեբախտությանը երանի տալ մինչև նրա մահը»։ Նրա մոտն եղած մարդիկ այս լսելով Արտաշեսին պատմեցին, թե Կրեսոսը մի նոր աստծու կանչեց։ Արտաշեսը գթալով՝ հրամայեց նրան իր մոտ բերել, և երբ նրանից հարցրեց և իմացավ, թե ինչ էր նրա բացականչածը, հրամայեց ներել ու չտանջել»։

Փղեգոնիոսն[142] էլ գրում է. «Պարթև Արտաշեսը բոլոր թագավորներից հուժկու եղավ. նա ոչ միայն լյուդացիներին վանեց և Կրեսոսին կապեց, այլև Հելլեսպոնտոսում[143] և Թրակիայում տարերքների բնությունը փոխեց, ցամաքի վրայով ծովագնացու-

թյուն կատարեց, ծովով անցավ իբրև հետևակ. նա տալանում էր թեսաղացիներին, նրա համբավը հիացնում էր հելլենական (աշխարհը)։ Նա կործանեց լակեդեմոնացիներին, փախցրեց փոկեացիներին, ղոկրացիներն անձնատուր եղան, բյուտացիները նրա կալվածների մի մասն են, ամբողջ Էլլադան ահաբեկված էր նրանից։ Քիչ ժամանակ հետո (նրա) աղետները գերազանցեցին բոլորից. Կյուրոսն այնքան չթշվառացավ մասագեթների դեմ պատերազմելիս, այնպիսի (չարիքներ) չկրեց Դարեհը սկյութացիներից փախչելիս, ոչ էլ Կամբյուսեսը եթովպացոց աշխարհում. փոքր է և Քսերքսի զորքով Էլլադա հարձակվելը, որտեղ նա թողեց գանձերն ու խորանները և ինքը հազիվ փախչելով կենդանի մնաց։ Իսկ սա մեծամեծ հաղթանակներով փառավորվելուց հետո իր զորքերից խողխողվում է[142]։

Արդ՝ ես այս պատմությունները արժանահավատ եմ համարում, իսկ այն Կրեսոսը, որ, ինչպես պատմում են, եղել է Կյուրոսի կամ Նեքթանեբոսի ժամանակ, կամ սո՛ւտ է, կամ մի անունով կոչված են շատ թագավորներ, ինչպես շատերը սովորություն ունեն։

ԾԳ

ՏԻԳՐԱՆ ՄԻՋԻՆԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ՀՈՒՆԱՑ ԶՈՐՔԵՐԻՆ ԴԻՄԱԴՐԵԼԸ, ՄԵՀՅԱՆՆԵՐԸ ՇԻՆԵԼԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆ ԱՐՇԱՎԵԼԸ

Արտաշես Առաջինից հետո թագավորում է նրա Տիգրան որդին Պարսից Արշական թագավորի քառասուն և իններորդ տարում։ Հայոց զորքերը ժողովելով՝ նա գնում է Հունաց զորքերի դեմ, որոնք նրա հոր Արտաշեսի մահից և նրա զորքերի ցրվելուց հետո՝ նրանց հետապնդելով մեր աշխարհն էին գալիս։ Տիգրանը նրանց դեմ դուրս գալով՝ նրանց արշավանքն արգելում է և հետ է մղում։ Իր քրոջ մարդուն Միհրդատին հավատալով Մաժաքը և Միջերկրյա կողմերը և շատ զորք նրա մոտ թողնելով դառնում է մեր աշխարհը։

Իբրև առաջին գործ՝ նա կամեցավ մեհյանները շինել։ Իսկ քրմերը, որ եկել էին Հունաստանից, (հնար) մտածելով, որ իրենց Հայաստանի խորքերը չգնան, սուտ գուշակություններ հնարեցին.

իբրև թե աստվածները հենց նույն տեղում կամենում են բնակվել։ Տիգրանն այս բանին համաձայնելով՝ Ոլիմպիական Դիոսի արձանը կանգնեցնում է Անիում[144], Աթենասինը Թիլում, Արտեմիսի մյուս արձանը Երիզայում և Հեփեստոսինը Բագայառիճում։ Բայց Աֆրոդիտեի արձանը, իբրև Հերակլեսի տարփածուի, հրամայում է կանգնեցնել հենց Հերակլեսի արձանի մոտ Հաշտից տեղում[145]։ Եվ զայրանալով Վահունիների վրա, որոնք իրենց սեփական (գյուղում) համարձակվել էին կանգնեցնել իր հոր ուղարկած Հերակլեսի արձանը, զրկում է քրմությունից (պաշտոնից) և արքունիք է գրավում այն գյուղը, որտեղ արձանները դրվել էին։

Եվ այսպես մեհյաններ շինելով և մեհյանների առաջ բագիններ կանգնեցնելով՝ բոլոր նախարարներին հրամայում է զոհեր մատուցանել և երկրպագություն անել։ Բագրատունյաց ցեղի մարդիկ այս բանը հանձն չառան։ (Տիգրանը) նրանցից մեկի, որ Ասուդ էր կոչվում, լեզուն կտրեց, որովհետև անարգել էր արձանները. մյուսներին ուրիշ չարչարանքների չենթարկեց, որովհետև համաձայնեցին թագավորի զոհերից, նույնպես և խոզի միս ուտել, թեպետ իրենք զոհեր չմատուցին ու չերկրպագեցին (կուռքերին)։ Ուստի (Տիգրանը) նրանցից առնում է զորքի իշխանությունը, բայց թագադիր ասպետությունը չի առնում։ Ինքն իջնում է Միջագետք, այնտեղ գտնելով Բարշամինայի արձանը, որ շինված էր փղոսկրից և բյուրեղից և արծաթով կազմած, հրամայում է տանել կանգնեցնել Թորդան ավանում։

(Այնտեղից) անմիջապես դիմում է Պաղեստինացոց աշխարհը[146] Պտղոմյան Կղեոպատրայից վրեժ առնելու՝ նրա Դիոնիս որդու գործած հանցանքի համար իր հոր (Արտաշեսի) դեմ։ Հրեաներից շատ գերի վերցնելով՝ շրջապատում է Պտղոմայիդ քաղաքը[147]։ Իսկ հրեաների Աղեքսանդրիա կամ Մեսաղինա թագուհին, որ Հուդա Մակաբեի Շմավոն եղբոր որդի Հովհաննեսի որդի Աղեքսանդրի կինն էր եղել և այդ ժամանակ գրավում էր հրեական թագավորությունը՝ մեծ գանձ տալով (Տիգրանին) այնտեղից հետ դարձրեց։ Որովհետև (Տիգրանը) լսել էր, թե Վայկուն անունով մի ելուզակ[148] վրդովում է Հայոց աշխարհը, գրավելով այն ամուր լեռը, որ մինչև այսօր էլ այդ ելուզակի անունով կոչվում է Վայկունիք։

ԾԵ

ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ՊՈՄՊԵՈՍ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԵՐ ՎՐԱ ԴԻՄԵԼԸ, ՄԱՀԱՊԱՔՆ ԱՌՆԵԼԸ ԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՄԱՀԸ

Այն ժամանակ Հռոմայեցիների Պոմպեոս զորավարը մեծ զորքով գալիս հասնում է Միջերկրյա կողմերը և իր Սկավրոս սպարապետին ուղարկում է Ասորիք՝ Տիգրանի հետ պատերազմելու։ Նա գալիս է, բայց չի պատահում Տիգրանին, որովհետև սա վերադարձել էր իր աշխարհը ելուզակի հարուցած խռովարի պատճառով։ Սկավրոսն անցնում է Դամասկոս և, տեսնելով, որ Մետեղը և Ղուղը քաղաքն առել են, նրանց հալածում է և փութալով գնում է Հրեաստան Արիստաբուղի վրա, իբրև օգնական նրա ավագ եղբոր Հյուրկանոս քահանայապետին, որ Ազեքսանդրի որդին էր։

Իսկ Պոմպեոսը Միհրդատի հետ պատերազմելով՝ սաստիկ դիմադրության է հանդիպում և ահագին կռիվների. նա մեծ վտանգի է ենթարկվում, սակայն բազմությունը հաղթում է և Միհրդատը փախուստ է տալիս Պոնտոսի կողմերը։ Նրանից Պոմպեոսն անսպասելի կերպով ազատվելով՝ առնում է Մաժաքը, բռնում է նրա որդուն Միհրդատին, քաղաքում զորք է թողնում և առանց (Միհրդատին) հետամուտ լինելու՝ շտապում է Ասորիքով անցնել Հրեաստան։ Նա Պոնտացի Պիղատոսի հոր ձեռքով Միհրդատին սպանում է Բուսավոր դեղով։ Այս բանին վկայում է և Հովսեպոս՝ թլպատանին վերաբերող գլխում, ասելով «Որիքովի մոտ Պոմպեոսին հասնում է Միհրդատի մահվան ավետավոր լուրը»։

ԾԶ

ՏԻԳՐԱՆԻ՝ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ՁՈՐՔԵՐԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼԸ, ԳԱԲԻԱՆՈՍԻ ԽՈՒՏՍ ՏԱԼԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻՀՐԴԱՏԻՆ ԱՐՁԱԿԵԼԸ

Իսկ Տիգրանը գերի հրեաներին տեղավորելով Արմավիրում և վարդենի ավանում, Քասախ գետի վրա, ելուզակներին լեռնեփից բնաջինջ անելով և Միհրդատի սուգը կատարելով՝ այնուհետև շարժվում գնում է Ասորիք, հռոմայեցիների զորքերի վրա՝ վրեժ առնելու։ Նրա դեմ է գալիս Գաբիանոսը, հռոմայեցիների զորքի սպարապետը, որին այնտեղ թողել էր Պոմպեոսը Հռոմ վերադառնալիս։ Գաբիանոսը չի համարձակվում Տիգրանի հետ ընդհարվել,

և Եփրատի մոտերից դառնում գնում է Եգիպտոս, պատճառ բերելով Պտղոմեոսին։ Եվ Տիգրանի հետ գաղտնի հաշտություն կնքելով՝ հետ է տալիս Միհրդատի որդի պատանի Միհրդատին, որ Տիգրանի քեռորդին էր և որին բռնել էր Պոմպեոսը Մաժաքում, ասելով, թե (Միհրդատը) գաղտնի փախավ։

ԾԷ

ԿՐԱՍՈՍԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՏԻԳՐԱՆԻՑ ՍՊԱՆՎԵԼԸ

Հռոմայեցիները կասկածի գնալով՝ Գաբինոսին փոխում են են և նրա տեղ ուղարկում են Կրասոսին։ Նա գալով գրավում է բոլոր գանձը, որ գտնվում էր Երուսաղեմում աստծո տաճարում, և հետո դիմում է Տիգրանի վրա։ Եփրատն անցնելով Տիգրանի հետ պատերազմում է և բոլոր զորքի հետ միասին ինքն էլ սպանվում է։ Տիգրանը գանձերը ժողովելով վերադառնում է Հայաստան։

ԾԸ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՍՍԻՈՍ ԴԻՄԱԴՐԵՑ ՏԻԳՐԱՆԻՆ, ԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ԱՊՍՏԱՄԲԵԼՆ ՈՒ ԿԵՍԱՐԻԱՆ ՇԻՆԵԼԸ

Հռոմայեցիք զայրանալով ուղարկում են Կասսիոսին անթիվ զորքերով։ Սա գալով՝ դիմադրում է Հայոց զորքերին և թույլ չի տալիս Եփրատն անցնել և ասպատակել Ասորիքը։

Այս ժամանակները Տիգրանի մեջ կասկած է ծագում պատանի Միհրդատի մասին, թե իր քեռորդին չէ, ուստի նրան ոչ մի իշխանություն չի տալիս, ոչ իսկ նրա աշխարհը՝ Վրաստանը։ Միհրդատն արհամարհանք կրելով իր քեռի Տիգրանից՝ ապստամբում է (նրանից) և ապավինում է Կեսարին, և նրանից Պերգա քաղաքի իշխանությունն ստանալով՝ նրա հրամանով օգնում և աջակցում է Հերովդեսի հորը, Անդիպատրոսին։ Սա Մաժաք քաղաքը շենացնում է ավելի ընդարձակ և պայծառ շինություններով և կոչում է նրան Կեսարիա, ի պատիվ Կեսարի։ Այս ժամանակից սկսած այդ քաղաքի վրայից վերանում է Հայոց իշխանությունը։

ՏԻԳՐԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՊԱՂԵՍՏԻՆ ԱՍՊԱՏԱԿՈՂ ՉՈՐՔ ՈՒՂԱՐԿԵԼԸ. ՀՅՈՒՐԿԱՆՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԵՎ ԲԱԶՄԱԹԻՎ ՀՐԵԱՆՆԵՐԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս բոլորից հետո Տիգրանը, հիվանդ լինելով, ուզում է պարսից Արտաշես թագավորին՝ իրենց մեջ սեր հաստատել (որ խզվել էր) իր հոր հպարտության պատճառով, երբ նա պարսիկներից խլեց նախագահության Իսկ ինքը (Տիգրանը) երկրորդական գահն ընդունելով, ինչպես օրենքն էր, նախագահությունը վերադարձնում է նրան: Այս կերպով Արտաշեսին հաշտեցնելով՝ նրանցից օգնական զորք է խնդրում: Ապա Տիգրանը Ռշտունյաց նախարարության նահապետ Բարղափրանին սպարապետ նշանակելով Հայոց և Պարսից զորքերին՝ ուղարկում է հռոմեացիների զորքերի դեմ և հրաման է տալիս՝ ասորաց և պաղեստինացոց աշխարհների բնակիչներին հաշտություն բերել և խաղաղացնել Բարղափրանին ընդառաջ է գալիս մի ոմն Պակարոս, որի հայրը թագավոր էր եղել Ասորոց, իսկ ինքը խնամի էր Անտիոքոսին Արիստարքուչյան տոհմից: Գալով Ռշտունյաց նահապետ և Հայոց ու Պարսից սպարապետ Բարղափրանի մոտ, խոստանում է հինգ հարյուր գեղեցիկ կին և հազար քանքար ոսկի, եթե իրեն օգնի հրեաների Հյուրկանոսին թագավորությունից դրկելու և Անտիոքոսին թագավորեցնելու:

Երբ հրեաների քահանայապետ ու թագավոր Հյուրկանոսը և Հերովդեսի եղբայր Փասայելը տեսան, որ Բարղափրանը հռոմայեցիների զորքերին փախցրեց ոմանց դեպի ծովը, ոմանց զանազան քաղաքներ, ինքը խաղաղությամբ անցնում է երկրով՝ իրենք էլ նրա հետ բանակցում են խաղաղության համար: Նա էլ գնել անունով մեկին գնությաց ցեղից, որ Հայոց թագավորի տակառապետն էր, հնծելազորքով ուղարկում է Երուսաղեմ խաղաղություն կնքելու պատրվակով, բայց գաղտնապես՝ Անտիոքոսին օգնելու նպատակով: Հյուրկանոսը տակառապետին ներս չի ընդունում Երուսաղեմ բոլոր զորքերով, այլ միմիայն հինգհարյուր հեծյալներով: Եվ տակառապետը դավաճանորեն խորհուրդ է տալիս Հյուրկանոսին գնալ Բարղափրանի մոտ աշխարհի ավերմունքի մասին (խոսելու) և խոստանում է իր կողմից ևս բարեխոս լինելու

Հյուրկանոսը Բարզափրանից երդում է խնդրում, նա էլ երդվում է արնգակով, լուսնով և իրենց բոլոր երկնային և երկրային պաշտելիքներով, նաև Արտաշեղի և Տիգրանի արևով։ Այս բանին վրատահանալով՝ Հյուրկանոսը թողնում է Հերովդեսին Երուսաղեմի վրա և իր հետ վերցնելով Հերովդեսի երեք եղբոր Փասայելին, գալիս է Բարզափրանի մոտ՝ ծովի ափը, եքսիպոն կոչված պյուղը։

Բարզափրանը խորամանկությամբ նրանց պատվում էր, բայց հանկարծ այդ տեղից մեկնելով, մնացած զորքին հրաման էր տալիս նրանց բռնել և Անտիգոնոսի ձեռքը մատնել։ Եվ Անտիգոնոսը Հյուրկանոսի վրա ընկնելով՝ ատամներով կտրում է նրա ականջները, որպեսզի նրբե հանգամանքները փոխվեն, նա այլևս անկարող լինի քահանայապետության անել, որովհետև (հրեական) օրենքը պահանջում է, որ քահանա լինեն միայն ողջանդամները։ Եվ Փասայելը, Հերովդոսի եղբայրը, ինքն իր ղլուխը քարին զարկեց և բժիշկը, որ Անտիգոնոսից ուղարկվեց իբրև թե բժշկելու, նրա վերքը թունավոր դեղերով լցրեց ու մահացրեց։

Իսկ Բարզափրանը հրաման տվեց Հայոց թագավորի տակառապետ Գնելին, որ Երուսաղեմում Հերովդեսին որսա։ Գնելը չանաց խաբեությամբ Հերովդեսին պարսպից դուրս բերել, բայց Հերովդես հանձն չառավ, միևնույն ժամանակ չվստահացավ քաղաքում ևս մնալ Անտիգոնյանների զատվելու պատճառով, այլ զիշերը ծածուկ ընտանիքով փախավ եդոմայեցիների մոտ, և ընտանիքը Մասադան ամրոցում թողնելով, ինքն շտապեց Հռոմ հասնել։ Բայց Հայոց զորքը Անտիգոնյանների օժանդակությամբ Երուսաղեմ մտնելով՝ ոչ ոքի չվնասեցին, այլ միայն Հյուրկանոսի գույքերն առան ավելի քան երեքհարյուր քանքար։ Եվ գավառն ասպատակելով՝ Հյուրկանյաններին (հավատարիմ տեղերին) առաջ ավերեցին. Մարիսացոց քաղաքն էլ առնելով, այնտեղ թագավոր դրին Անտիգոնոսին։ Իսկ Հյուրկանոսին կապելով՝ գերիների հետ միասին բերին Տիգրանին, և Տիգրանը Բարզափրանին հրամայեց՝ Մարիսացոց քաղաքից բերված հրեա գերիներին բնակեցնել Շամիրամի քաղաքում։ Սրանից հետո Տիգրանն ապրելով ոչ ավելի քան երեք տարի, վախճանվում է, երեսուներեք տարի թագավորելուց հետո[149]։

ՀԱՅՈՑ ՄԻ ԱՅԼ ՊԱՏԵՐԱԶՄ ՀՌՈՄԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ. ՍԻԼՈՆԻ ԵՎ ԲԵՆԴԻԴԻՈՍԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հերովդեսը Հռոմ անցնելով՝ Անտոնիոսի, Կեսարի և սինկլիտոսի[150] առաջ պատմում է իր հավատարմությունը հռոմայեցիներին, և Անտոնիոսից Հրեաստանի թագավոր նշանակվելով՝ իրեն օգնական է վերցնում Բենդիդիոս ապարապետին հռոմեական զորքերով, որպեսզի Հայոց հետ պատերազմի և Անտիգոնոսին տապալի։ Աստիճ հասնելով՝ նա փախցնում է Հայոց զորքերը և Սիդոնին ծողնելով, որ հայերին դիմադրի Սփրատի մոտ և Պակարոսին սպանելով, ինքը դառնում է Երուսաղեմ՝ Անտիգոնոսի դեմ։ Բայց հայերը նորից օգնություն ստանալով պարսիկներից՝ դիմում են Սիդոնի վրա և փախցնում են նրան մինչև Բենդիդիոսի մոտ, անչափ արյունհեղություններ անելով։

ԻԱ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՆՏՈՆԻՈՍԸ ԱՆՁԱՄԲ ՀԱՅՈՑ ՁՈՐՔԵՐԻ ՎՐԱ ԳԻՄԵԼՈՎ ԱՌՆՈՒՄ Է ՇԱՄՇԱՏ ՔԱՂԱՔԸ

Անտոնիոսը զայրանալով ինքն անձամբ գալիս է հռոմեական բոլոր զորքերով։ Շամշատ[151] հասնելիս լսում է Տիգրանի մահը, քաղաքն առնում է Սովսիոսին օգնական ծողնելով Հերովդեսին՝ Երուսաղեմում Անտիգոնի դեմ կռվելու, ինքը ձմեռանոց է գնում Եգիպտոս։ Նա շտապում էր այնտեղ հասնել կնամոլ մարդու վավաշոտությամբ, վաղված ցանկությամբ դեպի Կղեոպատրան՝ եգիպտացիների թագուհին։ Այս Կղեոպատրան Պտղոմեոս Դիոնիսի դուստրն էր, Պտղոմյան Կղեոպատրայի քույրը և շատ սիրելի էր Հերովդեսին. այս պատճառով էլ Անտոնիոսն առավելապես հանձնարարում էր Հերովդեսը Սովսիոսին։ Սա քաջապես կռվելով առնում է Երուսաղեմը, ապտնում է Անտիգոնոսին և թագավորեցնում է Հերովդեսին ամբողջ Հրեաստանի և Գալիլիայի վրա։

ԻԸ

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԼԸ

Հայոց վրա թագավորում է Արտավազդը, Տիգրանի որդին։ Սա իր եղբայրներին և քույրերին բնակեցնում է Աղիովիտ և Առքերանի գավառներում, նրանց ժառանգություն թողնելով այդ գավառներում գտնված արքունական գյուղերը, առանձին եկամուտով և ուտեստով, նման նրանց այն ազգականներին, որ գտնվում էին Հաշտյանքի կողմերում, (սահմանելով) որ նրանք ավելի պատվավոր և ավելի թագավորազն ճանաչվեին, քան այն մյուս Արշակունիները. միայն սահմանում է, որ նրանք չապրեն Այրարատում, թագավորի բնակության տեղերում։

Բայց ուրիշ ոչ մի արուեստի ու քաջության գործ ցույց չտվեց, այլ անձնատուր էր եղել վերուխումի, թափառում էր ճախճախոտ տեղերում, եղեգնուտներում, քարափներում, վայրի էշեր և խոզեր որսալով, անփույթ լինելով ուտման, քաջության և փորի հիշատակների, միայն իր փորի ծառան և ստրուկը դառնալով՝ աղբանոցներ էր մեծացնում։ Իր զորքերից պախարակվելով իր անգործ ծուլության և սաստիկ որովայնամոլության պատճառով, մանավանդ որ Անտոնիոսը Միջագետքն առել էր նրանից, զայրացած հրամայում է զորքեր հանել՝ Ատրպատական նահանգի բյուրավորները, և Կովկաս լեռան բնակիչները ազվանների և վրացիների հետ, շարժվում գնում է Միջագետք և հալածում է հռոմայեցիների զորքերը։

ԻԹ

ԱՆՏՈՆԻՈՍԻ ՉԵՐԹԱԿԱՆԱԼԸ ԱՐՏԱՎԱԶԴԻՆ

Այսուծի նման գազանաբար մռնչաց Անտոնիոսը, մանավանդ գրգռվելով Կղեոպատրայից, որ (հայերի դեմ) քեն էր պահում իր մամի կրած չարշարանքների համար Տիգրանից։ (Կղեոպատրան) ոչ միայն հայերին էր լինում մահաբեր, այլև ուրիշ շատ թագավորների, որպեսզի նրանց իշխանություններին տիրե։ Ուստի և Անտոնիոսը շատ թագավորներ սպանելով՝ նրանց իշխանությունները

հավաքում է Կղեոպատրային, բացի Տյուրոսից և Սիդոնից և առհասարակ Ազատ գետի մոտերն եղածներից: Վերցնելով զորքերի բազմությունը՝ դիմում է Արտավազդի վրա. Միջագետքով անցնելով՝ սաստկապես կոտորում է Հայոց զորքերը, ձերբակալում է նրանց թագավորին և Եգիպտոս վերադառնալով՝ Կղեոպատրային է պարգևում Տիգրանի որդի Արտավազդին, նաև ուրիշ շատ իրեր պատերազմի ավարից[152]։

ԻԴ

ԱՐՇԱՄԻ ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ. ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅՈՑ ՄԱՍՆԱԿԻ ԿԵՐՊՈՎ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՏՈՒ ԴԱՌՆԱԼԸ. ՀՅՈՒՐԿԱՆՈՍԻ ԱՐՁԱԿՎԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՈՎ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՑԵՂԻՆ ՀԱՍԱԾ ՎՏԱՆԳԸ

Արշեզի կյանքի վերջին տարում, որ Նրա թագավորության քսանմեկերորդ տարին էր, Հայոց զորքերը ժողովվելով՝ Նրա հրամանով իրենց վրա թագավորեցրին Արջամին կամ Արշամին[153], որ Արտաշեսի որդին էր, Տիգրանի եղբայրը, Աբգարի հայրը։ Ասորիներից ոմանք այս Արշամին կոչեցին Մանովա, ինչպես շատերը սովորություն ունեն երկու անուն կրել, ինչպես Հերովդես Ագրիպպիաս, կամ Տիտոս Անտոնինոս, կամ Տիտոս Հուստոս։

Որովհետև այդ տարում Արշեզը վախճանվեց, Պարսից թագավորությունը թողնելով իր Արշավիր որդուն, որ շատ փոքրահասակ տղա էր, և չկար մեկը, որ Արշամին օգներ հռոմայեցիներին դիմադրելու համար, ուստի Արշամը նրանց հետ խաղաղության հաշտություն է կնքում՝ նրանց հարկ տալով Միջագետքից և Կեսարիայի կողմերից, Հերովդեսի ձեռքով։ Այս եղավ սկիզբը Հայոց մասնակի հարկատու դառնալուն հռոմայեցիներին։

Այս ժամանակներն Արշամի բարկությունը շարժվեց Ենանոսի վրա, որ մի թագակապ ասպետ էր, որովհետև նա արձակեց հրեաների քահանայապետ Հյուրկանոսին, որին գերի էր բերել Բարզափրան Ռշտունին Տիգրանի ժամանակ։ Ենանոսը պատճառ է բերում, թե (Հյուրկանոսը) խոստացավ հարյուր քանքար փրկանք տալ, որ ինքը հույս ունի ստանալ և համաձայն է (թագավորին) տալ։ Ուստի Արշամը որոշ ժամանակամիջոց է դնում նրան (փրկան-

քրն ստանալու)։ Նա իր եղբայրներից մեկին, որ Սենեքիա էր կոչվում, ուղարկում է Հյուրկանոսի մոտ, որ իր փրկության համար (խոստացածը) վճարեն Ենանոսից ուղարկվածը գալով՝ դնում է, որ Հերովդեսն սպանել է Հյուրկանոսին, որպեսզի իր թագավորության դեմ դավեր չսարքե։ Արդ՝ երբ որոշված ժամանակամիջոցը լրանում է և Ենանոսը Հյուրկանոսի փրկանքի գանձը չի տալիս, Սրշամը նրա վրա բարկանալով՝ պատվից ղրկում է և հրամայում է բանտը դնել։

Այդ ժամանակ Գնթունյաց ցեղի նահապետ Զորան նրա մասին քսություն է անում թագավորին, ասելով. «Գիտցած եղիր, թագավոր, որ Ենանոսը մտածում էր քեզանից ապստամբել և ինձ հետ խորհուրդ էր անում, որ Հրեաստանի Հերովդես թագավորից երդում խնդրենք այն մասին, որ մեզ կընդունի և մեզ ժառանգություն կտա մեր բնիկ երկրում, որովհետև այս աշխարհում մենք չտեսնված տանջանքների ենթարկվեցինք ու խայտառակ եղանք։ Ես նրա հետ չհամաձայնեցի և ասացի. ինչո՞ւ ենք մեզ խաբում հնացած զրույցներով ու պատռված առասպելներով ու մեզ պաղեստինացի համարում։ Նա ինձանից հույսը կտրելով՝ նույն նպատակով Հյուրկանոս քահանայապետին ուղարկեց Հերովդեսի մոտ, բայց Հերովդեսից է՛լ ավելի հուսախաբվեց։ Բայց նա իր ուխտադրուժ մտադրությունից հետ չի կենա, եթե դու, թագավոր, առաջը չառնես»։ Արշամ թագավորն այս քսությանը հավատալով՝ հրամայեց պես-պես տանջանքների ենթարկել Ենանոսին և իբրև վերջին վճիռ՝ կա՛մ բոլորովին թողնել հրեական կրոնըդ երկրպագելով արեգակին և թագավորի կուռքերը պաշտել, որին վստահելով թագավորը նրան նախկին իշխանությունը կտա, կամ փայտից կախվել և նրա ցեղը բնաջինջ լինել։ Եվ նրա աչքի առաջ սպանելով նրա ազգականներից մեկին, որի անունը Սարիա էր, երբ նրա մոտով սպանման տեղն էին տանում նրա որդիներին, Սափատիային և Ազարիային, նա որդիների մահվան երկյուղից և կանանց թախանձելուց կատարում է թագավորի հրամանը իր բոլոր ազգատոհմով և հաստատվում է նախկին պատվի մեջ։ Սակայն թագավորը լիովին չի վստահանում նրան, այլ ուղարկում է Հայաստան, աշխարհը նրան հավատալով, միայն թե Միջագետքից նրան հեռացնի։

ԱՐՇԱՄԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՐՈՎԴԵՍԻ ՀԵՏ ԵՎ ՆՐԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՈՒԹՅՈՒՆԸ

Սրանից հետո խռովություն ծագեց Հրեաստանի Հերովդես թագավորի և մեր Արշամ թագավորի մեջ։ Որովհետև Հերովդեսը բազմաթիվ արիական գործերից հետո ձեռնամուխ է լինում բարեգործություններին, շատ քաղաքներում գանազան շինություններ անելով, Հռոմից սկսած մինչև Դամասկոս։ Նա Արշամից խնդրեց բազմաթիվ հատարակ մշակներ, որպեսզի Ասորիքի Անտիոք քաղաքի հրապարակները, որ ազտեղություններից ու տղմից անանցանելի էին դարձել, լցնել տա։ Արշամը հանձն չառնելով՝ դորք է ժողովում Հերովդեսին դիմադրելու, և պատգամավորներ Հռոմ ուղարկելով խնդրում է կայսրից, որ իրեն Հերովդեսի իշխանությանը չհնթարկի։ Իսկ կայսրը ոչ միայն Արշամին չի ազատում Հերովդեսի իշխանությունից, այլև ամբողջ Ասորիքը նրան է հատկացնում։

Այն ժամանակ Հերովդեսը դաղտագիներից և պոնտացիներից տասը գունդ վերցնելով իր ծառայության՝ Միջերկրյքի վրա թագավոր է նշանակում, իր ձեռքի տակ, իր Աղեքսանդր որդու անչրջը, որ Տիմոնի որդին էր, իսկ մոր կողմից ծագում էր Մարաց թագավորությունից, Դարեհ Վշտասպյայի սերունդից։ Այս տեսնելով՝ Արշամն ամեն բանով հպատակվում է Հերովդեսին, իրեև աբրոջ և տալիս է նրա խնդրած մշակները, որոնց ձեռքով (Հերովդեսը) լցրեց Անտիոքացիների քաղաքի հրապարակները քան վտավան երկայնությամբ և սալահատակեց սպիտակ մարմարի սալաքարերով, որպեսզի հեղեղների ջրերը դյուրավ անցնեն այս հատակների վրայով և քաղաքին բոլորովին չվնասեն։ Բայց Արշամը քան տարի թագավորելով մեռավ։

ԻՋ

ԱՐԳԱՐԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ. ԵՎ ՀԱՅԵՐԻ ԱՄԲՈՂՋԱՊԵՍ ՀԱՐԿԱՏՈՒԻ ԴԱՌՆԱԼԸ ՀԻՒՄԱՅՑՑԻՆԵՐԻՆ. ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԵՐՈՎԴԵՍԻ ԶՈՐՔԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՆՐԱ ԵՂԲՈՐՈՐԻ ՀԱՎԱՏՓԻՆ ՍՊԱՆԵԼԸ

Թագավորում է Արզարը, Արշամի որդին, Պարսից Արշավիր թագավորի քսաներորդ տարում։ Այս Արգարոսը կոչվում էր «ավագ այր», իր առավել հեզության և իմաստության պատճա-

ով, հետո՝ նաև տարիքի։ Այս (բառերը) հույներն ու ասորիները պարզ չկարողանալով արտասանել, նրան կոչեցին Աբգարոս։ Սրա թագավորության երկրորդ տարում Հայաստանի բոլոր կողմերն էլ բոլորովին հռոմայեցիների հարկի տակ են ընկնում, որովհետև, ինչպես ասված է Ղուկասի ավետարանում՝ Օգոստոս կայսրից հրաման դուրս եկավ՝ ամբողջ տիեզերքն աշխարհագիր անելու։ Ուստի և Հայաստան էլ եկան հռոմայեցիների գործակալները, որոնք իրենց հետ բերին Օգոստոս կայսեր պատկերը և կանգնեցրին բոլոր մեհյաններում։ Այս ժամանակներում ծնվում է մեր փրկիչ Հիսուս Քրիստոսը, աստծու որդին։

Մոտ այս ժամանակները խռովություն է ծագում Աբգարի և Հերովդեսի մեջ. որովհետև Հերովդես հրամայեց հայոց մեհյաններում իր պատկերն էլ դնել կայսերական պատկերի մոտ, բայց երբ Աբգարն այս հանձն չառավ, այս Հերովդեսն սկսեց նրա դեմ դավեր սարքել։ Նա թրակացիների և գերմանացիների զորքերն ուղարկում է Պարսից երկիրն ասպատակելու, բայց հրաման է տալիս նրանց Աբգարի աշխարհովն անցնել։ Բայց Աբգարը չհամաձայնելով՝ ընդդիմանում է, ասելով, թե կայսերական հրամանն այսպես է, որ այդ զորքը պետք է անապատով անցնի Պարսից երկիրը։ Հերովդեսը զայրանում է, բայց անձամբ ոչինչ չի կարող հաջողեցնել, տեսակ տեսակ ցավերից բռնվելով, ինչպես պատմում է Հովսեպոս Քրիստոսի դեմ համարձակվելու պատճառով նա որդնալից եղավ։ Ուստի նա (Աբգարի դեմ) է ուղարկում իր Հովսեփի եղբորորդուն, որին տվել էր իր դուստրը, որ առաջ եղել էր կին իր եղբոր Փերուրինի։ Սա առնելով զորքի բազմությունը՝ գալիս հասնում է Միջագետքի աշխարհը և հանդիպում է Աբգարին Բուգնան զորանիստ գավառում. կռվի մեջ նա մեռնում է և զորքը փախուստի է դիմում։ Հենց այդ ժամանակ էլ մեռնում է և Հերովդեսը, և Օգոստոսը հրեից ազգապետ է նշանակում նրա Արքեղայոս որդուն։

ԻԸ.

ԵԴԵՍԻԱ ՔԱՂԱՔԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏՈՀՄԻ

Ոչ շատ օրեր անցած վախճանվում է Օգոստոսը և նրա տեղ հռոմայեցիների վրա թագավորում է Տիբերը. իսկ Գերմանիկոսը

կեսար դառնալով, անարգում է Արշավիրի և Աբգարի Հռոմ ուղարկած իշխաններին, նրանց պատերազմի պատճառով, որի մեջ սպանեցին Հերովդեսի եղբորորդուն։ Այս բանից զրդռված, Աբգարը միտքը դնում է ապստամբել և պատերազմի պատրաստություն է տեսնում։ Այս ժամանակ նա քաղաք է դարձնում այն տեղը, որտեղ առաջ Հայոց գունդը պահպանում էր Եփրատի անցքը Կասսիոսի դեմ, որ և կոչվեց Եդեսիա։ Այնտեղ է փոխադրում Մծբինից իր արքունիքը և բոլոր իր կուռքերը— Նաբոգը, Բելը, Բաբնիքաղը և Թարաղան, նույնպես և մեհյանների վարժարանի մատյանները և առհասարակ թագավորների դիվանները։

Սրանից հետո մեռնում է Արշավիրը և Պարսից վրա թագավորում է նրա որդին Արտաշեսը։ Արդ՝ քեպեռ ինչ որ ձեռնարկելու ենք պատմել, չի համապատասխանում ո՛չ ժամանակին և ո՛չ էլ պատմության կարգին, բայց որովհետև մեր Հայոց ազգի հավատին առիթ եղողները Արշավիր թագավորի սերունդներն են և նրա Արտաշես որդու հարազատները՝ ուստի այդ մարդկանց պատվականության պատճառով կսկսենք, վաղօրոք այս գրքում նշանակելով նրանց Արտաշեսի կողքին, որպեսզի կարդացողներն իմանան, որ նրանք այս քաջի համազգիներն են։ Իսկ հետո արդեն կնշանակենք նրանց հայրերի Հայաստան դալու ժամանակը, որ են Կարենյանները և Սուրենյանները, որից եղավ սուրբ Գրիգորը, ինչպես և Կամսարականները, երբ պատմության ընթացքում կհասնենք այն թագավորի ժամանակին, որ նրանց ընդունեց։

Բայց Աբգարի ապստամբելու մտադրությունը չհաջողվեց, որովհետև Պարսից թագավորության մեջ իր ազգականների միջև խռովություն ծագելով՝ զորք է ժողովում, չվում է այնտեղ, որպեսզի նրանց համոզի և խաղաղացնի։

ԻԸ

ԱԲԳԱՐԻ ԱՐՇԱԿԱՆ ԳՆԱԼԸ ԵՎ ՊԱՐՍԻՑ ՎՐԱ ԱՐՏԱՇԵՍԻՆ ԹԱԳԱՎՈՐԻՑՆԵԼԸ, ՆԱ ՔԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՑ (ԱՐՏԱՇԵՍԻՆ) ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ, ՈՐՔԱՆԻՑ ԾԱԳՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԳԱՏԻՑՆԵՐԸ

Աբգարն արևելք գնալով պտնում է, որ Պարսից վրա թագավորել է Արտաշեսը, Արշավիրի որդին և եղբայրները նրան ընդդիմանում են, որովհետև նա կամենում էր ժառանգաբար

նրանց վրա թագավորել, իսկ նրանք չէին համաձայնում։ Ուստի Արտաշեսը նրանց պաշարել էր և մահվան սպառնալիք արել և այս պատճառով զորքի և մյուս ազգականների մեջ մեծ երկպառակություն և հակառակություն էին ծագել։ Որովհետև Արշավիր թագավորը երեք որդի և մի դուստր ուներ. մեկն ինքը, Արտաշես թագավորը, երկրորդը Կարեն, երրորդը Սուրեն, իսկ նրանց քույրը, որ Կոշմ էր կոչվում, կին էր բոլոր արյաց զորավարին, որ նշանակված էր նրա հորից։

Աբգարը նրանց համոզում է խաղաղանալ և բոլորի մեջ այս կարգն է սահմանում.— կթագավորե Արտաշեսը իր զավակներով հանդերձ, ինչպես մտադրվել էր, իսկ եղբայրները կկոչվեն Պահլավներ՝ իրենց քաղաքի և մեծ ու պտղաբեր աշխարհի անունով և կհամարվեն Պարսից բոլոր նախարարությունների մեջ ամենապատվավորները և առաջինները՝ ինչպես իսկական թագավորական սերունդներ։ Նաև երդումով դաշինք է հաստատում (Աբգարը) նրանց մեջ, որ եթե Արտաշեսի ցեղից տղամարդիկ սպառվեն, թագավորությունը նրանց կանցնի։ Եվ նրա թագավորող ցեղից դուրս որոշել նրանց երեք ցեղերը, անվանելով Կարենի Պահլավ, Սուրենի Պահլավ և քրոջը՝ Ասպահապետի Պահլավ, նրա մարդու տանուտերության անունով։

Եվ ասում են, թե սուրբ Գրիգորը Սուրենյան Պահլավից է և Կամսարականները Կարենյան Պահլավից։ Բայց նրանց մեր աշխարհը գալու հանգամանքներն իր կարգին կպատմենք, այստեղ միայն նշանակելով նրանց Արտաշեսի կողքին, որպեսզի ճանաչես, որ այս մեծ ցեղը հիրավի Վաղարշակի արյունից է, այսինքն Վաղարշակի եղբոր Արշակ Մեծի սերունդը։

Այս այսպես կարգադրելով և դաշինքի գիրն իր հետ վերցնելով՝ Աբգարը հետ է դառնում ոչ առողջ, այլ չարաչար ցավերով ախտացած։

ԻԹ

ԱԲԳԱՐԻ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՆ ԱՐԵՎԵԼՔԻՑ ԵՎ ԱՐԵՍՏԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ՝ ՀԵՐՈՎԴԵՍ ՉՈՐՐՈՐԴԱՊԵՏԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԵԼԻՍ

Երբ Աբգարն արևելքից վերադարձավ, հռոմայեցիների մասին լսեց, թե նրանք կասկածի մեջ են ընկել նրա վերաբերմամբ, իբրև թե արևելք գնացել է զորք բերելու։ Ուստի նա հռոմայեցիների զոր-

ծակալներին գրեց իր Պարսկաստան գնալու պատճառը և ուղարկեց նաև այն դաշինքը, որ կնքված էր Արտաշեսի և նրա եղբայրների մեջ։ Բայց նրանք չհավատացին, մանավանդ որ Աբգարի մասին չարախոսում էին նրա թշնամիները—Պիղատոսը, Հերովդես Չորրորդապետը, Լյուսանիան և Փիլիպպոսը։ Իսկ Աբգարն իր եղեսիա քաղաքը գալով՝ միաբանեց պատրիացոց Արետ թագավորի հետ, նրան օգնական զորք ուղարկելով մի ոմն Խոսրան Արծրունու ձեռքով, որպեսզի Հերովդեսի հետ պատերազմի։ Որովհետև Հերովդեսը նախ կին էր առել Արետ թագավորի դստերը, ապա անարգելով արձակել էր և Հերովդիադային նրա ամուսնու կենդանության ժամանակ խլեց (և իրեն կին դարձրեց)։ Այս պատճառով էլ հաճախ Հովհաննես Մկրտչից հանդիմանվելով՝ նրան սպանեց։ Իր դստեր անարգանքի պատճառով Արետը նրա հետ պատերազմ ունեցավ, որի մեջ Հերովդեսի զորքը չարաչար ջոտորած կրեց Հայոց քաջերի օգնությամբ, կարծես աստվածային տնօրինությամբ, Հովհաննես Մկրտչի մահվան վրեժը լուծելու համար։

Լ

ԱԲԳԱՐԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ ՍԱԲԻՆՈՍԻ ՄՈՏ, ՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆՐԱՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՓՐԿԻՉ ՔՐԻՍՏՈՍԻՆ, ՈՐ ԱՌԻԹ ԵՂԱՎ ԱԲԳԱՐԻ ՀԱՎԱՏԱԼՈՒՆ

Այս ժամանակները կայսեր հազարապետ նշանակվեց Փյունիկեցիների[155], Պաղեստինցիների, Ասորիների և Միջագետքի վրա Սարինոսը՝ Ստրոգի որդին։ Աբգար իր գլխավորներից երկուսին այսինքն Աղձնիքի բդեշխ Մար Իհաբին և Ապահունիների տոհմի նահապետ Շամշագրամին, և իր հավատարիմ Անանին ուղարկեց նրա մոտ Բեթքուբին քաղաքը, բացատրելու համար իր արևելք գնալու պատճառը և ցույց տալու Արտաշեսի և եղբայրների մեջ կնքված դաշինքի թուղթը և նրա օգնությունն ու պաշտպանությունը խնդրելու։ Նրանք գալով գտան նրան Ելևթերոպոլսում[156], նա սիրով և պատվով ընդունեց նրանց և Աբգարին պատասխանեց, որ (արևելք գնալու) առիթով կայսրից չկասկածի, միայն թե հոգ տանի հարկերը լիով վճարելու։

Նրանք սյնտեղից վերադառնալիս մտան Երուսաղեմ մեր փրկիչ Քրիստոսին տեսնելու համար, որի սքանչելագործությունների համ-

բավը լսել էին, և իրենք էլ ականատես դառնալով (վերադարձան և) պատմեցին Աբգարին։ Աբգար զարմանալով ստուգիվ հավատաց, որ նա արդարև աստծու որդի է. նա ասաց. «Դրանք մարդու զորություններ չեն, այլ աստծու, որովհետև մարդկանցից ոչ ոք չի կարող մեռելներ հարուցանել, այլ միայն աստված»։ Եվ որովհետև նրա մարմինն ապահանված էր չարաչար ցավերով, որոնց նա տիրացել էր Պարսից աշխարհում յոթը տարի առաջ և մարդկանցից բժշկություն գտնելու հնար չէր եղել, ուստի (Քրիստոսին) աղաչանքի թուղթ ուղարկեց, որ գա և իր ցավերը բժշկի, հետևյալ խոստանդակությամբ.—

ԼԱ

ԱԲԳԱՐԻ ԹՈՒՂԹԸ ՓՐԿԶԻՆ

Աբգար Արշամի[157]*, աշխարհի իշխան, փարեխար և փրկիչ Հիսուսիդ, որ Երուսաղեմացոց աշխարհում երևեցար, ողջույն։*

Լսել եմ քո մասին և այն բժշկություններդ մասին, որ կատարվում են քո ձեռքով առանց դեղերի և արմատների, որովհետև, ինչպես ասում են, դու կույրերին տեսնել ես տալիս, կաղերին քայլեցնում ես, բորոտներին մաքրում ես, չար ոգիները և դևերը հանում ես և առհասարակ երկարատև հիվանդություններով չարչարվողներին բժշկում ես, նաև մեռածներին կենդանացնում ես։ Երբ այս ամենը քո մասին լսեցի, մտքումս դրի այս երկուսից մեկը— կա՛մ որ դու աստված կլինես, որ երկնքից իջել ես և այս բաներն անում ես, կամ աստծու որդի կլինես, որ այդ անում ես։ Այս պատճառով քեզ գրեցի, աղաչելով որ նեղություն կրես, գաս ինձ մոտ և բժշկես իմ ունեցած հիվանդությունը։ Նաև լսեցի, թե հրեաները քեզանից որոնղում են և ուզում են քեզ չարչարել, բայց ես մի փոքր և դեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բավական է։

Թուղթը տանողները նրան պատահեցին Երուսաղեմում։ Այս բանը վկայում է և ավետարանի խոսքը թե «Կային հեթանոսներից ոմանք, որ եկել էին նրա մոտ»[158]*։ Այս պատճառով լսողները չհամարձակվեցին ասել Հիսուսին, այլ ասացին Փիլիպպոսին և Անդրեասին, և նրանք ասացին Հիսուսին։ Իսկ մեր փրկիչը հանձն չառավ ինքը գնալ այն ժամանակ, երբ Աբգարը նրան կանչում էր, այլ նրան արժանացրեց թղթի, որ այս խոստումն ունի.—*

ԼԲ

ԱՒԳԱՐԻ ԹՂԹԻ ՊԱՏԱՄԱԲԱՆԸ, ՈՐ ԳՐԵՑ ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔՅԱԼԸ ՓԵԿՉԻ ՀՐԱՄԱՆՈՎ

Որանի նրան, ով ինձ հավատում է, թեպետ տեսած չլինի, որովհետև իմ մասին այսպես է գրված, թե որոնք ինձ տեսնում են, ինձ չեն հավատա, իսկ որոնք չեն տեսնում, կհավատան և կյանք կգտնեն։ Իսկ որ դու ինձ գրեցիր, որ գամ քեզ մոտ, ես այստեղ պետք է կատարեմ այն բոլորը, որի համար ուղարկված եմ։ Երբ այս բոլորը կկատարեմ, կհամբառնամ նրա մոտ, որ ինձ ուղարկեց, և երբ համբառնամ, քեզ մոտ կուղարկեմ իմ այս աշակերտներից մեկին, որ քո ցավերը բժշկե և կյանք շնորհե քեզ և քեզ հետ եղողներին։

Այս թուղթը գրեց Աբգարի սուրհանդակ Անանը և նրա հետ փրկչի կենդանագիր պատկերը[159], *որ մինչև այսօր գտնվում է Ոդեսացիների քաղաքում։*

ԼԳ

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՔԱՐՈԶՈՒԹՅՈՒՆԸ ՆԻՆԻԹԱՑՈՒՄ ԵՎ (ԱՒԳԱՐԻ) ՀԻՆԴ ԹՂԹԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐԸ

Բայց մեր փրկչի համբառնալուց հետո Թովմաս առաքյալը, տասներկու (առաքյալներից) մեկը, Ոդեսիա քաղաքն ուղարկեց Թադեոսին, յոթանասուն (աշակերտներից), որպեսզի Աբգարին բժշկի և ավետարանը քարոզե սիրուշ ասածի համաձայն։ Նա եկավ և իջևանեց հրեա Տուբիա իշխանի տանը, որի մասին ասում են, թե Բագրատունյաց ցեղից էր և Արշամից խուսափելով՝ հրեական կրոնը չուրացավ իր մյուս ազգականների հետ, այլ նույն կրոնով մնաց մինչև Քրիստոսին հավատալը։ Եվ նրա (գալու) համբավը ողջ քաղաքում տարածվեց։ Աբգարը լսելով ասաց. «Դա այն մարդն է, որի մասին Հիսուս դրեց», և իսկույն նրան կանչեց։ Երբ Թադեոսը ներս մտավ, նրա երեսի վրա աքանչելի տեսիլք երևաց Աբգարին. նա դահից վեր կացավ և երեսի վրա ընկնելով նրան երկրպագեց. շուրջը գտնվող բոլոր իշխանները զարմացան, որովհետև տեսիլքը չիմացան։ Աբգարը նրան հարցրեց. «Իսկապես դու օրհնյալ Հիսուսի աշակե՞րտն ես, որին խոստացավ այստեղ ուղարկել, և կարո՞ղ ես իմ ցավերը բժշկել»։ Թադեն նրան պատասխանեց. «Եթե հա-

վատաս Հիսուս Քրիստոսին, աստծու որդուն, քո սրտի բոլոր ցանկացածները կատանաս»: Աբգարը նրան ասաց. «Ես հավատացի նրան և նրա հորը, ուստի կամենում էի զորքերս առնել և գալ կոտորել նրան խաչող հրեաներին, եթե հռոմայեցիների թագավորությունն այս բանը չարգելեր»:

Այստեղից սկսելով՝ Թադեոսը քարոզեց ավետարանը նրան և բոլոր քաղաքին. ձեռքը վրան դնելով նրան բժշկեց, ինչպես և քաղաքի իշխանին, որ հիվանդ էր պոդագրայով[160] և մեծ պատիվ էր վայելում թագավորի արքունիքում, և առհասարակ բժշկեց քաղաքում եղած բոլոր հիվանդներին և ախտավորներին: Եվ բոլորը հավատացին, և մկրտվեցին ինքը Աբգարը և ամբողջ քաղաքը: Կուռքերի մեհյաններիի դռները փակեցին, և քարինի ու այլնի վրա եղած պատկերները եղեգով պատեցին: Նա ոչ սրի բռնությամբ չէր դարձնում հավատի, բայց հավատացյալներն օր-օրի վրա ավելանում էին:

Իսկ Թադեոս առաքյալն Ադդե անունով մեկին, որ մետաքսագործ և խույր կարող էր, Եդեսիայի վրա (եպիսկոպոս) ձեռնադրելով, նրան իր փոխարեն թողնում է թագավորի մոտ: Իսկ ինքն Աբգարից հրովարտակ առնելով, որ ամենքը Քրիստոսի ավետարանին լսեն, գալիս է Աբգարի քնորդի Սանատրուկի մոտ[161], որին նշանակել էր մեր աշխարհի և զորքերի վրա:— Բայց Աբգարը հոժարեց թուղթ գրել Տիբերիոս կայսեր, որ այսպիսի քրովանդակություն ուներ.—

Աբգարի թուղթը Տիբերիոսին

Աբգար Հայոց թագավոր, իմ տիրոջ, հռոմայեցիների Տիբերիոս կայսեր ողջույն:

Թևպես գիտեմ, որ քո թագավորությունից ոչ մի բան չի ծածկվի, բայց իբրև քո մտերիմ՝ ավելին քեզի իմաց եմ տալիս գրովի: Որովհետև պաղեստինացիների դավառներում բնակվող հրեաները ժողովվելով Քրիստոսին խաչեցին առանց որևէ հանցանքի, փոխանակ նրա մեծամեծ երախտիքներին, որ նրանց մոտ կատարեց—հրաշքներ և սքանչելի գործեր, մինչև անգամ մեռած մարդկանց կենդանացնել: Պետք է գիտենաս, որ սրանք սոսկական մարդու գործություններ չեն, այլ աստծու: Որովհետև հենց այն ժամանակ, երբ նրան խաչեցին, արեգակը խավարեց, երկիրը շարժվեց ու տատանվեց և ինքն էլ երեք օրից մեռած տե-

ղից հարուքյուն առավ և շատերին երևաց։ Եվ այժմ ամեն տեղ նրա անունը նրա աշակերտների միջոցով մեծամեծ սքանչելիքներ է կատարում, ինչպես հենց ինձ վրա հայտնի ցույց տվեց։ Արդ՝ այսուհետև քո տերությունը գիտե, թե ի՛նչ է պետք հրամայել հրեա ժողովրդի վերաբերմամբ, որոնք այն բանը գործեցին, և բոլոր աշխարհին գրել, որ Քրիստոսին երկրպագեն իբրև ճշմարիտ աստծուն։ Ողջ մնաս։

Աբգարի թղթի պատասխանը Տիբերիոսից

Տիբերիոս Հռոմայեցիների կայսր, Հայոց Աբգար թագավորին ողջույն։

Քո մտերմության թուղթը կարդացին իմ առաջ, նրա համար մեր կողմից շնորհակալություն։ Թեպետև առաջուց մենք շատերից էինք այդ լսել, բայց և Պիղատոսը ստուգապես մեզ հայտնեց նրա հրաշքների մասին և թե հարությունից հետո շատերը հավատացին, թե նա աստված է։ Ուստի և ես ևս կամեցա անել այն, ինչ որ դու մտածել ես։ Բայց որովհետև հռոմայեցիների սովորությունն այնպես է, որ միայն թագավորի հրամանով աստված չեն նատեցնում, մինչև որ նա սինկղիտոսի կողմից չիորձվի, չքննվի, ուստի ես այս բանը սինկղիտոսին հայտնեցի, բայց սինկղիտոսն արհամարհեց, որովհետև առաջուց իր կողմից քննված չէր։ Բայց մենք հրաման տվինք, որ ամեն ոք, ով կամենա, Հիսուսին էլ ընդունի աստվածների թվում, և մահ սպառնացինք նրանց, ովքեր քրիստոնյաների վրա կշարախոսեն։ Իսկ հրեա ժողովրդի վերաբերմամբ, որոնք հանդգնեցին նրան խաչել, որի մասին լսում եմ, թե չէր արժանի խաչի և մահվան, այլ պատվի և երկրպագության, նրանց դործը կքննեմ և արժանավոր (պատիժը) կհատուցանեմ, երբ ազատ ժամանակ գտնեմ սպանիացոց պատերազմից, որոնք ինձանից ապստամբել են։

Աբգարը դարձյալ թուղթ է գրում Տիբերիոսին

Աբգար Հայոց թագավոր, իմ տիրոջ՝ Հռոմայեցիների Տիբերիոս կայսեր ողջույն։

Քո տերության վայել թուղթը տեսա և ուրախացա քո մտածած հրամանի վրա։ Եթե վրաս չես նեղանա՝ սինկղիտոսի այդ գործը շատ մեղադրելի է, որովհետև դրանց մոտ՝ աստվածու-

թյուն տրվում է մարդկանց քննութեամբ. ուրեմն այսուհետև եթե աստված մարդուն հաճելի չլինի, էլ չի կարող աստված լինել, և այստեղից (հետևում է), թե մարդուն է վայելում աստծուն նվիրագործել[162]։ Բայց դու, տեր, բարեհաճիր ուրիշ մարդ ուղարկել Երուսաղեմ Պիղատոսի տեղ, որպեսզի նա անարգանքով հեռացվի այն իշխանութեունից, որ դու նշանակել ես, որովհետև նա հրեաների կամքը կատարեց և Քրիստոսին անմեղ տեղը խաչեց առանց քո հրամանի։ Ողջ եղիր։

Աբգարն այս (թուղթը) գրելով՝ նրա պատճենը դրեց իր դիվանի մեջ, ինչպես և մյուս թղթերինը։ Նա գրեց նաև Ասորեստանի մանկահասակ Ներսեհ թագավորին Բաբելոն։

Աբգարի թուղթը Ներսեհին

Աբգար Հայոց թագավոր, իմ որդի Ներսեհին ողջույն։

Քո ողջույնի գիրը տեսա, Պերոզին կապանքներից արձակեցի և հանցանքը ներեցի, և եթե կամենաս, նշանակիր նրան Նինվեի վերակացու, ինչպես ուզում ես։ Գալով քո գրածին, թե ինձ մոտ ուղակիր այդ բժշկին, որ այդ հրաշքները գործում է և քարոզում է մի ուրիշ աստված, որ հրից ու ջրից էլ վեր է, որպեսզի նրան տեսնեմ և լսեմ,— նա բժիշկ չէր մարդկային արվեստով, այլ աշակերտ էր աստծու որդու, հրի և ջրի ստեղծողի, և նա ուղարկվեց Հայաստանի կողմերը, ինչպես նրան վիճակ էր ընկել։ Բայց նրա գլխավոր ընկերներից մեկը, Սիմոն անունով, ուղարկված է այդտեղ, Պարսկաստանի կողմերը, նրան փնտրի՛ր, գտի՛ր և նրանից կլսես, ինչպես և քո Արտաշես Հայրը։ Նա բոլոր հիվանդությունները կբժշկե և ցույց կտա կյանքի ճանապարհ։

Նաև Պարսից Արտաշես թագավորին գրեց թուղթ այս բովանդակությամբ.—

Աբգարի թուղթն Արտաշեսին

Աբգար Հայոց թագավոր, իմ եղբայր Պարսից Արտաշես թագավորին ողջույն։

Գիտեմ, որ դու արդեն լսած կլինես Հիսուս Քրիստոսի, աստծու որդու մասին, որին հրեաները խաչեցին և որ մեռած տեղից հարություն առավ և իր աշակերտներին ուղարկեց բոլոր աշխարհը՝ ամեն տեղ ուսուցանելու։ Նրա գլխավոր աշակերտներից մեկը, Սի-

մոն անունով, քո տերության կողմերումն է։ Արդ՝ փնտրի՛ր, գտի՛ր նրան և նա կբժշկի ձեզ մոտ բոլոր ախտերն ու հիվանդությունները և կյանքի ճանապարհ ցույց կտա։ Դու հավատա նրա խոսքերին, դու և քո եղբայրները և բոլորը, որ կամովին հնազանդում են քեզ։ Որովհետև ինձ ախորժելի է, որ դուք, մարմնով իմ ազգականներս, նաև հոգով իմ մտերիմ հարազատները լինեք։

Եվ դեռ այս թղթերի պատասխանը չստացած՝ Աբգարիոսը վախճանվում է երեսուն և ութ տարի թագավորելուց հետո։

ԼԴ

ՄԵՐ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աբգարից հետո Հայոց թագավորությունը երկու մասի է բաժանվում, որովհետև նրա Անանուն որդին թագադրվեց ու թագավորեց Եդեսիայում, իսկ նրա քեռորդին Սանատրուկը (թագավորեց) Հայաստանում։ Սրանց ժամանակ պատահած անցքերն առաջուց գրված են ուրիշներից, ինչպես Թադեոս առաքյալի Հայաստան գալը, Սանատրուկի հավատալը և (հետո) նախարարների երկյուղից հավատը թողնելը, առաքյալի և նրա հետ եղողների կատարածը Շավարշան գավառում, որ այժմ Արտազ է կոչվում, ապառաժ քարի պատռվելը, և առաքյալի մարմինն ընդունելով էլի իրար գալը, հետո՝ աշակերտների նրա մարմինն այնտեղից առնելը և դաշտերում թաղելը, և թագավորի Սանդուխտ դստեր նահատակվելը ճանապարհին մոտ, և վերջերս երկուսի նշխարների հայտնվելը և առապարը փոխադրվելը։ Այս բոլորը, ինչպես ասացինք, մեզանից առաջ պատմված է ուրիշներից, ուստի կարևոր չհամարեցինք մանրամասն կրկնել։ Նույնպես մեզանից առաջ ուրիշներից պատմված է առաքյալի աշակերտ Ադդեի կատարածը Եդեսիայում Աբգարի որդու ձեռքով։

Սա (Աբգարի որդին) հոր տեղ թագավորելով՝ հայրենի առաքինության հետևող չեղավ, այլ կուռքերի մեհյանները բացեց ու հեթանոսական պաշտամունքն ընդունեց։ Եվ մարդ ուղարկեց Ադդեի մոտ, որ իրեն համար բեհեզից խույր կարե ոսկե բանվածքով, ինչպես առաջ անում էր իր հոր համար։ Պատասխան ընդունեց, [illegible] «Իմ ձեռքերը խույր չեն կարի անարժան գագաթի համար, որ [illegible] երկրպագում Քրիստոսին, կենդանի աստծունս։ (Թագավորն) [illegible]

պուն հրամայեց իր զինակիրներից մեկին, որ նրա ոտները սրով կտրեն։ Նա գնալով տեսավ, որ նստած էր վարդապետության աթոռը, սրով խփեց, նրա սրունքները կտրեց դեն գցեց, և նա իսկույն հոգին ավանդեց։ Այս էլ ծայրաքաղ անելով համառոտ հիշատակեցինք, քանի որ առաջուց ուրիշներից պատմված է։

Բայց հայերին վիճակվեց նաև Բարդուղիմեոս առաքյալը, որ նահատակվեց մեզ մոտ Արեբանոս քաղաքում[163], իսկ Սիմոնի մասին, որ պարսիկներին վիճակվեց, հաստատ չեմ կարող պատմել, թե ի՛նչ գործեց և ո՛րտեղ նահատակվեց։ Որովհետև ոմանք պատմում են, թե մի ոմն Սիմոն առաքյալ[164] նահատակվել է Վերիոսփորում. արդյոք իսկապես նա՞ է, և ի՛նչ պատճառով է գնացել նա այնտեղ՝ չգիտեմ, բայց միայն նշանակեցի, որպեսզի իմանաս, թե ես ոչ մի ջանք չեմ խնայում պատմել քեզ ամեն բան, ինչ որ հարկավոր է։

ԼԵ

ՍԱՆԱՏՐՈՒԿԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԵՎ ԱԲԳԱՐԻ ՁԱՎԱԿՆԵՐԻ ՍՊԱՆԵԼԸ, ՀԵՂԻՆԵ ՏԻԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Սանատրուկը թագավորելով՝ զորք է հավաքում իր դայակների[165] Բաքրատունի և Արծրունի քաջերի ձեռքով, որպեսզի գնա պատերազմելու Աբգարի որդիների հետ՝ ամբողջ թագավորությունը տիրելու նպատակով։ Եվ մինչ նա այս բանով էր զբաղված, կարծես մի աստվածային ակնարկությամբ Աբգարի որդուց Ադդեի սպանության վրեժն առնվեց։ Որովհետև նա ծրեսիայում իր ապրանքի վերնատանը մարմարե սյուն էր կանգնեցնել տալիս և ինքը ներքևը կանգնած հրամայում էր, թե ինչպես պետք է անել. սյունը բռնողների ձեռքից սրի գալով ընկավ նրա վրա, ոտները ջախջախեց և նրան սպանեց։

Իսկույն քաղաքի բնակիչները պատգամավոր ուղարկեցին Սանատրուկի մոտ, խնդրելով ուխտով պայման դնել, որ նա իրենց քրիստոնեական հավատին չդիպչի, իսկ իրենք նրան կհանձնեն քաղաքն ու թագավորական գանձերը։ (Սանատրուկը) կատարեց (նրանց խնդիրը), բայց հետո սուց, նույնիսկ Աբգարի տան բոլոր զավակներին սրով կոտորեց, բացի աղջիկներից, որոնց քաղաքից հեռացրեց, որ գնան Հաշտյանքում բնակվեն։ Նույնպես և

Աբգարի կանանցից գլխավորին, որի անունն էր Հեղինե, ուղարկեց, որ բնակվի իր քաղաքում, Խառանում, և նրան թողեց բոլոր Միջագետքի տիկնությունը իբրև փոխարեն այն բարիքների, որ ինքը գտել էր Աբգարից նրա միջոցով։

Իսկ Հեղինեն, որ իր ամուսնու՝ Աբգարի նման զարդարված էր հավատով, չհանդուրժեց կռապաշտների մեջ բնակվել, այլ գնաց Երուսաղեմ Կղավդիոսի օրերը, այն սովի ժամանակ, որը գուշակել էր Ագաբոսը։ Եվ իր բոլոր գանձերը Եգիպտոսում ծախսելով՝ շատ մեծ քանակությամբ ցորեն գնեց և բաժանեց բոլոր կարոտյալներին, որին վկայում է և Հովսեպոսը։ Նրա շիրիմը հայտնի նշանով մինչև այսօր էլ կա Երուսաղեմում, դռան առաջ։

ԼԶ

ՄԾԲԻՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ, ՍԱՆԱՏՐՈՒԿԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Սանատրուկի կատարած գործերի մեջ ոչ մի բան հիշատակելու արժանի չհամարեցինք, բացի Մծբին քաղաքի շինությունից։ Որովհետև քաղաքը երկրաշարժից խախտված լինելով՝ նա քանդեց ու նորից շինեց ավելի պայծառ և նրան պատեց կրկնակի պարիսպներով ու պատվարով. քաղաքի մեջ կանգնեցրեց իր արձանը, ձեռքին մի դրամ բռնած, որ այս է նշանակում, թե այս քաղաքի շինության վրա բոլոր գանձերս ծախսվեցին և այս միայն մնաց։

Բայց թե ինչո՞ւ նա Սանատրուկ կոչվեց, պետք է ասել։ Աբգարի քույր Ավդեն ձմեռ ժամանակ դեպի Հայաստան ճանապարհորդելիս բուքի է պատահում Կորդվաց լեռներում. մրրիկը բոլորին ցրեց, այնպես որ ոչ մեկը չգիտեր, թե ընկերն ո՛ւր մնաց։ Իսկ նրա դայակը, Սանոտը, Բյուրատ Բագրատունու քույրը, Խոսրեն Արծրունու կինը, երեխային, որ դեռ շատ փոքր էր, ստինքների մեջ առնելով՝ երեք օր և երեք գիշեր մնաց ձյունի տակ։ Սրա մասին առասպելաբանում են, թե մի ինչ-որ նորահրաշ սպիտակ կենդանի աստվածներից ուղարկվեց և նա պահպանում էր երեխային։ Բայց որքան մենք վերահասու եղանք, բանն այսպես է եղել. փնտրող մարդկանց հետ եկել է մի սպիտակ շուն, որ պատահել է երեխային և դայակին։ Այս պատճառով էլ նա կոչվեց Սանատրուկ, անունը դայակից ստանալով, իբրև թե Սանոտի տուրք։

Սա Պարսից Արտաշես թագավորի տասներկուերորդ տարում թագավոր դառնալով, երեսուն տարի ապրեց և որսի մեջ մեռավ, մեկի նետը պատահմամբ փորին դիպչելով, կարծես սուրը դստեր շարշարանքների վրեժը հատուցանելով։

Ղեբուբնան[166], Ափշադար դպրի որդին, դրեց բոլոր դործերը, որ կատարվել էին Աբգարի և Սանատրուկի ժամանակ և դրեց Դեսխայի դիվանում։

ԼԸ

ԵՐՎԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ՍԱՆԱՏՐՈՒԿԻ ՈՐԴԻՆԵՐԻՆ ԿՈՏՈՐԵԼԸ ԵՎ ԱՐՏԱՇԵՍԻ ՓԱԽՉԵԼով ԱԶԱՏՎԵԼԸ

Սանատրուկ թագավորի մահից հետո թագավորության մեջ շփոթություն է ծագում։ Որովհետև մի ումն երվանդ, Արշակունյաց ցեղից մի կնոջ որդի, թագավորում է վերջին Դարեհի ութերորդ տարում։ Նրա մասին զրույցներն այսպես են պատմում։ Մի կին Արշակունյաց ցեղից, պառաված, տգեղ ու վավաշոտ, որին ոչ ոք սիրտ չարավ կին առնելու, երկու մանուկ է ծնում ապօրինի խառնակությամբ, ինչպես Պատիփյանն[167] (ծնավ)։ Մինոտաւրոսին։ Երբ երեխաները զարգացան, նրանց անունները դրին Երվանդ և Երվազ։ Երվանդը հասակն առելով դառնում է մի սրտոտ և հաղթանդամ մարդ։ Նա շատ դեպքերում Սանատրուկից ուղարկվելով իբրև վերակացու և առաջնորդ, նշանավոր դարձավ, այնպես որ բոլոր նախարարների մեջ առաջինն եղավ, և իր խոնարհությամբ ու առատաձեռնությամբ բոլորին քաշեց իր կողմը դրավեց։ Եվ երբ Սանատրուկը մեռավ, բոլորը միաբանելով նրան թագավորեցրին, բայց առանց թագադրի Բագրատունիների ցեղից[168]։

Բայց Երվանդը թագավոր դառնալուց հետո Սանատրուկի որդիներից կասկած ունենալով՝ բոլորին կոտորում է։ Թվում է, թե Աբգարի որդիների կոտորածի վրեժը լուծվեց։ Բայց մի փոքրիկ տղայի, Արտաշես անունով, ծծմայրն առավ փախցրեց Հեր գավառի կողմերը, Մաղխազանի հովվական կայանները և լուր ուղարկեց նրա դայակին Սմբատին, Բյուրատ Բագրատունու որդուն, Սպեր դավառը, Սմբատավան գյուղը։ Արդ՝ երբ Սմբատը, Բյուրատի որդին լսում է Սանատրուկի (մահվան) և նրա որդիների կոտորածի գույժը, առնում է իր երկու դուստրներին՝ Սմբատանույշին ու

Սմբատուհուն, տանում նստեցնում է Բալբերդում, քաջ մարդիկ ամրոցին պահապան դնելով, իսկ ինքն իր մի կնոջ և սակավաթիվ մարդկանց հետ գնում է մանուկ Արտաշեսին որոնելու։ Երվանդ թագավորն այս բանը լսելով՝ մարդիկ է ուղարկում (նրանց թռնելու)։ Այս պատճառով (Սմբատը) երկար ժամանակ, կերպարանքը փոխած և հետիոտն թափառում է լեռներում ու դաշտերում երեխայի հետ և նրան սնուցանում է հովվական կալաններում և հովիվների մոտ, մինչև որ հարմար ժամ գտնելով անցնում գնում է Պարսից Դարեհ թագավորի մոտ։ Եվ որովհետև Սմբատը քաջ մարդ էր և առաջուց ծանոթ, ուստի մեծ պատվի է արժանանում Պարսից զորապետների հետ. նույնպես և երեխան ապրում է թագավորի որդիների հետ, որոնց բնակության տեղեր էին որոշված Բատ և Ոզոմն գավառները։

ԼԸ

ԻՆՉ ՉԱՆՔԻՐ ԳՈՐԾ ԴՐԵՑ ԵՐՎԱՆԴԸ՝ ԱՐՏԱՇԵՍԻՆ ԻՐ ՁԵՌՔԸ ԳՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵՎ ՄԻՋԱԳՑՏՔԸ ԹՂՂՆԵԼԸ

Բայց Երվանդը շարունակ մտածում էր, թե ի՛նչպիսի չարիք է սնվում նրա թագավորության համար Մարսում[169]. նրա սիրտը լիքն էր կասկածներով, և քունը քաղցր չէր թվում։ Արթուն ժամանակ միշտ այս մասին հոգալով՝ քնի մեջ էլ սարսափելի երազներ էր տեսնում այդ առիթով։ Ուստի պատգամավորների ձեռքով, նվերների միջոցով, աշխատում էր հաճեցնել Պարսից թագավորին, որ նա մանուկ Արտաշեսին իր ձեռքը տա։ Նա ասում էր. «Իմ արյունակից, իմ հարազատ. ինչո՞ւ ես այդ մարդուն Արտաշեսին սնուցանում ինձ և իմ թագավորության հակառակորդ, ականջ դնելով ավազակ Սմբատի խոսքերին, որ ասում է, թե Արտաշեսը Սանատրուկի որդին է. և հովիվների ու անդեորդների որդուն չաղնում է Արշակունի դարձնել, լուր տարածելով, թե նա քո արյունակիցն ու հարազատն է։ Նա Սանատրուկի որդին չէ, բայց Սմբատը մի մարդի տղա գտնելով՝ խաբված է և բարբանջում է»։ Շատ անգամ Սմբատին էլ (մարդ) էր ուղարկում, թե «ինչո՞ւ այդքան զուր նեղություններ ես կրում, ծծմորից խաբվելով այդ մարդի տղային սնուցանում ես ինձ հակառակ»։ Նա պատասխաններ է լսում ոչ հաճելի։ Այն ժամանակ Երվանդը մարդիկ է ուղարկում և կոտորեց

չ տալիս Բայբերդում (պահապան դրված) քաջերին, իսկ Սմբատի դուստրներին գերի բռնելով պահում է Անի ամրոցում ոչ վատ պայմաններում։

Բայց երվանդը Վեսպասիանոսի և Տիտոսի[170] թագավորության ժամանակ Միջագետքը հռոմայեցիներին թողնելով՝ նրանց իրեն թիկունք դարձրեց և այս կողմից այլևս վտանգ չէր զգում։ Այս ժամանակից սկսած Միջագետքի վրայից վերացավ Հայոց իշխանությունը, և Հայաստանից էլ ավելի մեծ հարկեր էր վճարում Երվանդը։ Իսկ հռոմայեցիների գործակալները նախկին քաղաքամեն կերպ սարքավորելով՝ այնտեղ հաստատում են գանձարաններ այն հարկերի համար, որ ժողովում էին Հայաստանից, Միջագետքից և Ասորեստանից։ Այնտեղ են ժողովում նաև բոլոր դիվանները, և հիմնում են երկու դպրոց, մեկը բուն տեղական ասորական և մյուսը հունական։ Այնտեղ են փոխադրվում հարկերի դիվանը, նաև մեհենական դիվանը, որ գտնվում էր պոնտացիների Մինոպ քաղաքում։

ԼԹ

ՆՐՎԱՆԴԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սրա ժամանակ արքունիքը Արմավիր կոչված բլրից փոխադրվում է, որովհետև նրասխ գետը (նրանից) հեռացել էր, և ձմեռն երկարելիս երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում, վտակը սառչում էր բոլորովին, և թագավորական կայանի համար խմելու բավական ջուր չէր ճարվում։ Սրանից երվանդը նեղվելով, մանավանդ մի ավելի ամուր տեղ փնտրելով՝ արքունիքը տեղափոխում է դեպի արևմտյան կողմը, մխակատար ապառաժ քլուրի վրա, որը շուրջ պատում է նրասխը, իսկ դիմացից էլ հոսում է Ախուրյան գետը (երվանդը) բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջնցնում է մինչև բլուրի հատակը, գետի (մակերևույթին) հավասար, այնպես որ գետից ջրերը հոսեն այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով։ Միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ պղնձե դռներ է դնում և երկաթե սանդուխքներ ներքևից մինչև վեր մինչև դուռը. սանդուխքի վրա, աստիճանների միջև, քաքնված որոգայթներ է շինում, որպեսզի եթե մեկը կամենա

գաղտնի բարձրանալ Թագավորին դավելու նպատակով, բռնվեր Սանդուխքը, ասում են, երկու տեսակ էր սարքված, մեկը ցերեկվան ճանապարհ արքունի սպասավորներին և ընդհանրապես ելևմուտքի համար, իսկ մյուսը գիշերային, դավադիրների դեմ։

Խ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԻՆԵՑ ԲԱԳԱՐԱՆԸ ԿՈՒՐՔԵՐԻ ՔԱՂԱՔԸ

Բայց Երվանդն իր քաղաքը շինելով՝ Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ քացի կուռքերից, որովհետև իրեն համար օգտակար չհամարեց նրանց էլ իր քաղաքը փոխադրել, որ մի գուցե երբ ժողովուրդը պահանջության համար այնտեղ գա, քաղաքն զգուշությամբ չպահվի։ Ուստի նրանից հյուսիս, մոտ քառասուն ասպարեզ հեռու, Ախուրյան գետի վրա, շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն թե բագինները այնտեղ են սարքավորված, և այնտեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը։ Շինեց նաև մեհյաններ և իր Երվաղ եղբորը քրմապետ նշանակեց։

ԽԱ

ՍՆՆԴՈՑ ԿՈՉՎԱԾ ԱՆՏԱՌԸ ՏՆԻՆՈՒ ՄԱՍԻՆ

Տնկում է նաև մեծ անտառ գետի հյուսիսային կողմում, պարիսպներով ամրացնում է և ներսն արգելում է արաղ այծյամներ, եղնիկների և եղջերուների ցեղեր, ցիռեր, վարազներ, որոնք ահեղով ու բազմանալով անտառը լցրին, և նրանցով Թագավորն որսախանում էր որսի օրերին։ Անտառը նա կոչում է Սննդոց անտառ։

ԽԲ

ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏ ԿՈՉՎԱԾ ՁԵՒԱԿԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Ինձ քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ Հորինվածքով։ Որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչու-

թյամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակչության շուրջը կազմում է ծաղկոցներ և թուրաստաններ, ինչպես բրի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանում էր խիտ արտևանունքի դեղեցիկ դծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր դեղեցիկ կուլսերի հոնքերին: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների դեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով: Եվ այս դեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա: Արդարև բերրի և թագավորական դաստակերտ:

Երվանդի այս բոլոր շինածները Տրդատ Մեծը պարգևում է կամարարականների ցեղի մարդկանց, իրեն իր մաերիմներին և Արշակունյաց ցեղի արյունակիցներին, ինչպես իր տեղում կպատմենք:

Բայց ասում են Երվանդի մասին, թե հմայքով չար աչք ուներ, որի պատճառով արքունի ամրասավորները սովորություն են ունեցել առավոտն արշալույսը բացվելիս որձաքար քարեր բռնել Երվանդի առաջ, որի հայացքի չարությունից այդ որձաքարերը, ասում են, պայթելիս են եղել: Սակայն այս բանը կամ սուտ է և առասպել, կամ թե ինչ-որ դիվական զորություն է ունեցել, որպեսզի այսպես, չարաչքի անունով, վնասե, ում որ կամենա:

ԻԳ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍՄԲԱՏԸ ՊԱՐՍԻՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ ՕԳՆԱԿԱՆ ԴԱՐՁՆԻԼՈՎ, ԽՆԴՐՈՒՄ ԻՐ ԱՐՏԱՇԵՍԻՆ ԹԱԳԱՎՈՐԵՑՆԵԼ

Իսկ երբ մանուկ Արտաշեսը զարգացավ և նրա դայակ Սմբատը քաջության և արիության շատ գործեր ցույց տվեց, Արյաց նախարարները նրան համակրելով թարեխոսում են թագավորին, որ նրան պարգև տա, ինչ որ նա խնդրե: Թագավորը համաձայնելով ասում է նախարարներին. «Իմացե՛ք, ի՛նչ է ցանկանում այդ քաջ մարդը»: Նրանք ասում են. «Անմա՛հ բարերար տեր, Սմբատն ուրիշ բան չի ցանկանում, այլ միայն, որ քո արյունակից և հարազատ Արտաշեսին, Սանատրուկի որդուն, որ զրկված է իր թագավորությունից, հաստատես իր թագավորության մեջ: Արքայից արքան համա-

ձայնելով՝ Սմբատի ձեռքն է տալիս մի մասը Աստրհատանի զորքերից և Ատրպատականի զորքերը, որպեսզի Արտաշեսին տանեն ու հայրենական գահի վրա հաստատեն։

ԽԶ.

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՐՎԱՆԴԸ ԼՍՈՒՄ Է ԱՐՏԱՇԵՍԻ ԳԱԼԸ ԵՎ ՉՈՐՔ Է ԴՈՒՄԱՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՎ

Երվանդին Ուտեացոց գավառում լուր է հասնում, թե Պարսից թագավորը մեծ զորք գումարեց Սմբատի ձեռքի տակ, որպեսզի քեզ վրա գա և մանուկ Արտաշեսին իր թագավորությունը բերի։ Երվանդն այս լսելով՝ այդ տեղում կողմնապահներ է թողնում նախարարներից շատերին և ինքն շտապով գալիս է իր քաղաքը, որպեսզի իր մոտ գումարե Հայոց, Վրաց և Կեսարիայի կողմերի զորքերը, նաև Միջագետքինը, խնդրելով և վարձ վճարելով։ Զարնանային օրեր էին, ուստի բոլոր զորքերը շուտով գումարվեցին նրա մոտ. եկավ նաև Արդամը, Մուրացյան ցեղի տանուտերը, Աժդահակի սերնդից, հետևակ զորքի բազմությամբ։ Որովհետև Երվանդը նրան վերադարձրել էր երկրորդական գահը, որը Տիգրանը խլել էր նրանցից և տվել էր իր քրոջ մարդուն, Միհրդատին, իսկ Միհրդատի մահից հետո ոչ ոքի չէր տրված, մինչև որ Երվանդը վերադարձրեց Արգամին։ Եվ ոչ միայն նրան, այլև բոլոր նախարարներին պարգևներ և պատիվներ է տալիս, և բոլոր զորքերին առատապես պարգևատրում էր։

ԽԷ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՏԱՇԵՍԻ ԻՐ ԱՇԽԱՐՀԸ ՄՏՆԵԼՈՒՆ ՊԵՍ ԳՈՐԾԸ ՀԱՋՈՂՎԵՑ

Իսկ Սմբատը մանուկ Արտաշեսի հետ շտապում էր հասնել Ուտեացոց սահմաններըւ Այնտեղ նրան ընդառաջ եկան այն կողմի զորքերը, նաև այն նախարարները, որոնց Երվանդը թողել էր այնտեղ։ Այս լսելով՝ Հայոց մյուս նախարարներն էլ լքվում, քայքայվում էին և մտածում էին Երվանդից բաժանվել, մանավանդ երբ տեսնում էին, որ Հռոմայեցիների զորքերը նրան օգնության չեկան։ Իսկ Երվանդն ավելի առատացնում էր պարգևները և ամեն

մեկին բաժանում էր գանձերը. և որքան շատ էր տալիս, այնքան ավելի առելի էր դառնում, որովհետև բոլորն էլ գիտեին, թե առատաձեռնությունից չէ, որ տալիս է, այլ երկյուղից վառնում էր։ Եվ այնքան սիրելի չէր դարձնում նրանց, որոնց շատ էր տալիս, որքան թշնամի էր դարձնում նրանց, որոնց այնքան առատ չէր տալիս։

ԽԶ

ԵՐՎԱՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԵՏ ԵՎ ՓԱԽՈՒՍՏԸ, ՔԱՂԱՔԻ ԱՌՆՎԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՀԸ

Բայց Սմբատը մանուկ Արտաշեսի հետ բարձրանում է Գեղամա ծովի ափը, Արագած կոչված լեռան թիկունքում. նրանք շտապում էին հասնել Երվանդի բանակին։ Նրա զորքերի բազմությանը նշանակություն չտալով, միայն Մուրացյան Արգամից էին ակնածում, որովհետև քաջ մարդ էր, բազմաթիվ տիգավորներով։ Եվ Երվանդի բանակը ավելի քան երեք հարյուր ասպարեզ հեռու էր նրա քաղաքից, Հյուսիսում, Ախուրյան գետի վրա։ Երվանդը երբ լսեց (Սմբատի մոտենալը), նրա դեմ հանեց իր զորքերի բազմությունը և ճակատեց իր բանակից ոչ հեռու։ Իսկ Արտաշեսը Մուրացյան նահապետին պատգամ էր ուղարկում հաստատուն երդումներով, որ նրան կթողնի, ինչ որ նա առացել էր Երվանդից, և էլի ուրիշ բաներ կավելացնի, միայն թե նա Երվանդին թողնի, մի կողմ քաշվի։

Երբ Արտաշեսի նշանները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արդամը հետևակների բազմությունն առավ ու մի կողմ քաշվեց։ Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողերը հնչեցնել և իր զորքի ճակատն առաջ շարժելով սլանում էր, ինչպես արծիվը կաքավների երամի վրա։ Իսկ Հայոց նախարարները, որոնք (Երվանդի ճակատի) աջ և ձախ թևերն էին կազմում, խառնվում միանում էին նրա հետ։ Վրաց զորքերը թևակոխ իրենց Փարաման թագավորի հետ հանդուգն հարձակում գործելով ընդհատվեցին, բայց շուտով փախչում էին մյուս կողմը։ Այդտեղ Երվանդի գունդը և Միջագետքի զորքերը սարսափելի կոտորած կրեցին։ Երկու ճակատների իրար խառնվելիս Արտաշեսի դեմ են գալիս Տավրոսցի քաջ մարդիկ, որոնք մահն աչքերն առած՝ Երվանդին խոստացել էին, թե

Արտաշեսին կապանեն։ Սրանց հետիոտն պատահում է Գիսակը, Արտաշեսի ծծմոր որդին, և մեջ մտնելով նրանց սպանում է և հաղթություն է տանում, որի ժամանակ նրա երեսի կեսն էլ սրով կտրում են և նա մնում է այս գործի վրա։ Մնացած զորքերը փախուստի են դիմում։

Իսկ Երվանդը ձիով շատ ասպարեզներ անցնելով և իր բանակից մինչև քաղաքը հատատած իչևաններում նոր-նոր ձիեր հեծնելով փախչում էր անընդհատաբար[171]։ Սմբատն էլ նրան հետամուտ լինելով՝ սաստկապես հալածում էր դիշերով մինչև քաղաքի դուռը։ Իսկ Մարաց զորքերը Երվանդի գնդի կողմն անցնելով՝ մթության մեջ բանակ էին դնում դիակների վրա։ Արտաշեսն էլ հասնելով Երվանդի խորանին, որի շուրջը նա կաշու և կտավի առագաստներով պարիսպ էր քաշել, իջավ և դիշերը նրա խորանում մնաց։ Իսկ երբ լուսացավ, նա տիրաբար կարգադրելով հրամայեց սպանվածներին թաղել։ Այն հովիտը, որտեղ (Մարաց) զորքերը դիակների վրա բանակ դրին[172], կոչեց Մարաց մարդ, իսկ ճակատամարտի տեղը կոչեց Երվանդավան, իրև թե այստեղ վանեց Երվանդին, այսպես էլ կոչվում է մինչև այսօրվա օրս։ Ապա չվեց գնաց Երվանդի քաղաքը. կեսօրից առաջ Երվանդի դաստակերտը հասնելով՝ զորքին հրամայեց, որ միասին բարձր աղաղակեն «Մար ամատ», որ թարգմանվում է՝ Մարը եկավ, սրանով հիշեցնելով այն վիրավորանքը, որ նրա մասին ուղարկում էր Երվանդը Պարսից թագավորին և Սմբատին, նրան Մար կոչելով։ Հենց այս ձայնով էլ այն դաստակերտը Մարմեան կոչվեց, հավանորեն Արտաշեսի կամքով, որպեսզի Երվանդի անունը նրա վրայից վերանա։ Այս է պատճառը այդ դաստակերտի անվանակոչության։

Բայց Սմբատը գիշերով Երվանդի հետևից գալով փոքրաթիվ վաշտով՝ քաղաքի դուռը պահում էր, մինչև որ Արտաշեսը և բոլոր զորքերն եկան։ Եվ երբ քաջերն սկսեցին ամրոցի դեմ կռվել՝ ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը բացին։ Ջինվորներից մեկը մտնելով՝ վազրով Երվանդի գլխին խփեց և ուղեղը տան հատակի վրա ցրվեց. այսպես ջախջախվելով վախճանվեց քսան տարի թագավորելուց հետո։ Բայց Արտաշեսը հիշելով, թե Երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ էր, հրամայում է թաղել և մահարձան դնել։

ԱՐՏԱՇԵՍԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԵՎ ԻՐ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԲԱՐԻՔՆԵՐ ԱՆԵԼԸ

Երվանդի մահից հետո Սմբատը մանելով խուզարկում է արքունական գանձերը. Սանատրուկ թագավորի թագը գտնելով, դնում է Արտաշեսի գլուխը և թագավորեցնում է բոլոր Հայոց աշխարհի վրա Պարսից Դարեհ թագավորի քսան և իններորդ տարում։ Արտաշեսը թագավորությունն առնելով՝ պարգևներ է տալիս Մարաց և Պարսից զորքերին և արձակում է, որ գնան իրենց աշխարհը։ Նույնպես տալիս է քաջ և պատվավոր Արդամին նրան խոստացած երկրորդական գահը, նաև հակինթներով զարդարված պսակ, երկու ականջներին գինդեր, մի ոսքին կարմիր ագանիկը, (իրավունք) գործածելու ոսկե գդալ և պատառաքաղ և ոսկեղեն գավաթներով (գինի) խմելու. Եվ այս պատիվներից ոչ պակաս տալիս է իր դայակ Սմբատին, բացի երկու գինդերից և կարմիր կոշկից։ Եվ բացի նրա հայրենական թագակապ ասպետությունից և արևմտյան զորքի իշխանությունից՝ նրան է հավատում Հայոց բոլոր զորքերը, մեր բոլոր երկրի գործակալները և ամբողջ արքունական տունը։ Իսկ Ներսեհին, իր ծծմոր Գիսակ որդու որդուն (նախարարական) ցեղ դարձնելով՝ այդ (ցեղը) կոչում է Դիմաքսյան՝ նրա հոր քաջագործությունների անունով, որովհետև, ինչպես ասացինք, նրա դեմքի կեսը սրով վեր բերին, երբ նա Արտաշեսի համար կռվում էր։

Պատմվում է, թե (Արտաշեսը) նույն օրերում (նախարարական) ցեղի է վերածել տասնևհինգ պատանի, Տուրի որդիներին, կոչելով ցեղը նրանց հոր անունով Տրունի, ոչ թե որևէ արիական գործի համար, այլ նրանց հոր լրտեսության համար, որ կատարում էր (Երվանդ) թագավորի տնից Սմբատին (տեղեկություններ ուղարկելով), որովհետև Երվանդին մտերիմ էր, որ և նրանից սպանվեց այս պատճառով։

ԽԶ

ԵՐՎԱԶԻՆ ՍՊԱՆԵԼԸ ԵՎ ՄՅՈՒՍ ԲԱԳԱՐԱՆԸ ՇԻՆԵԼԸ, ԵՎ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱՐԿԱՏՈՒ ԴԱՌՆԱԼԸ ՀՈՌՄԱՅԵՑՆԵՐԻՑ

Սրանից հետո (Արտաշեսը) հրամայում է Սմբատին գնալ Բագարան ամրոցը, որ Ախուրյան գետի վրա էր, Երվանդի քա-

ղաքին մոտ, և սպանել երվանդի եղբորը, երվազին։ Սմբատը նրան բռնելով՝ հրամայում է նրա շլնքից մի երկանաքար կապել և նետել գետի մի պտույտի մեջ։ Նրա տեղ բագիններին վրա նշանակում է մի երազահան մոգի աշակերտի, որ մտերիմ էր Արտաշեսին, որին այդ պատճառով Մոգպաշտ էին ասում։ Հետևավար է առնում երվազի գանձերը և հինգ հարյուր հոգի ծառաներ[173], նաև մեհյաններից ընտիրները և բերում է Արտաշեսին։ Արտաշեսը Սմբատին է պարգևում երվազի ծառաները, իսկ գանձերը հրամայում է տանել Պարսից Դարեհ թագավորին, իր գանձերից էլ վրան ավելացնելով, շնորհակալության և պատվի համար, իբրև իր հոր և օգնականի։

Այն ժամանակ Սմբատը երվազի ծառաներին, որ գերել էր Բագարանից, տանում բնակեցնում է Մասիսի թիկունքում (իր) ձեռակերտում, որը միևնույն անունով կոչեց Բագարան։ Հետևանցնում գնում է Պարսկաստան, ընծաները Դարեհին տանելով, հռոմայեցիների տերության նկատմամբ անփույթ լինելով։ Իսկ երբ Սմբատը գնում է Պարսկաստան, Հայոց սահմաններն են գալիս կայսեր հարկահանները ծանր զորքով։ Արտաշեսը հարկերը կրկին վճարելով և աղաչելով հաշտեցնում է։ Այս բանը մեզ հատուկտուկ պատմում է Հանիի Ողյումպ[174] քուրմը, որ գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ մենք պատմելու ենք, որին վկայում են նաև Պարսից մատյանները և Հայոց վիպասանների երգերը։

Խթ

ԱՐՏԱՇԵՍ ՋԱՂԱՔԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արտաշես վերջինի գործերից շատ բան հայտնի են քեզ այն վիպասանքներից, որ պատմվում են Դողթնում, ինչպես քաղաքը շինելը, խնամությունն Ալանների հետ և Սաթենիկի իբր թե սիրահարությունը առասպելական վիշապազուններին, այսինքն Աժդահակի սերունդներին, որ գրաված ունեն Մասիսի ամբողջ ստորոտը. կռիվը նրանց հետ, նրանց իշխանության քայքայումը, նրանց սպանությունը և շինվածքների հրկիզումը, և Արտաշեսի որդիների նախանձը և իրար դեմ գրգռվելը կանանց միջոցով։ Այս բոլորը, ինչպես ասացինք, քեզ հայտնի են վիպասանների երգե-

թից, բայց մենք ևս կարճառոտ կհիշատակենք և այլարանությունը կճշմարտենք[175]։

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ։ Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով։ Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արեամիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը։ Բայց Ապողոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, Ճանապարհին մոտ։ Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում։ Նաև Երվանդի քաղաքի բոլոր վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել՝ բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ (այդ քաղաքը) սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք։

Ը

ԱԼԱՆՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՄԵԶ ՎՐԱ ԵՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։ ԱՐՏԱՇԵՍԻ ԽՆԱՄԻԱՆԱԼԸ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Այս ժամանակներն ալանները բոլոր լեռնականների հետ միաբանելով, վրաց աշխարհի կեսն էլ իրենց կողմը ձգելով՝ մեծ բազմությամբ գալիս սփռվում են մեր աշխարհում։ Արտաշեսն էլ ժողովում է իր զորքերի բազմությունը և տեղի է ունենում պատերազմ երկու քաջ և աղեղնավոր ազգերի միջև։ Ալանների ազգը փոքր ինչ հետ է նահանջում և մեծ կուր գետն անցնելով՝ բանակ է դնում գետի ափին հյուսիսային կողմից. Արտաշեսն էլ գալով բանակում է գետի հարավային կողմում. գետը բաժանում է երկուսին։

Բայց որովհետև Հայոց զորքերն Ալանների թագավորի որդուն բանելով Արտաշեսի մոտ են բերում, Ալանների[176] *թագավորը հաշտություն էր խնդրում, խոստանալով տալ Արտաշեսին, ինչ որ ուզե, առաջակում էր նաև երդումով դաշինք անել, որ Ալանների երիտասարդներն այնուհետև չասպատակեն Հայոց աշխարհը։ Երբ Արտաշեսը չի համաձայնում պատանուն հետ*

տալ, պատանու քույրը գալիս է գետի ափը մի մեծ բարձրավանդակ և թարգմանների միջոցով ձայն է տալիս Արտաշեսի բանակը.

«Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր Ալանների քաջ ադին.
Ե՛կ լսի՛ր Ալանների գեղացյա դստերս խոսքերին
Եվ տուր պատանին,
Որովհետև օրենք չէ, որ քենի համար դյուցազները
Ուրիշ դյուցազն զարմերի կենդանությունը ջնջեն
Կամ իբրև ծառա ստրուկների կարգում պահեն,
Եվ երկու քաջ աղգերի մեջ
Մշտնջենավոր թշնամություն հաստատեն»։

Արտաշեսն այս իմաստուն խոսքերը լսելով գնաց գետի ափը և տեսնելով գեղեցիկ կույսին ու լսելով նրանից իմաստուն խոսքեր, նրան ցանկացավ։ Կանչում է իր դայակ Սմբատին, բայց է անում իր սրտի փափագը՝ կին առնել Ալանների արքայազն օրիորդին, դաշինք և ուխտ դնել քաջերի ազգի հետ և պատանուն խաղաղությամբ արձակել։ Սմբատը հավանություն է տալիս և մարդ է ուղարկում Ալանների թագավորի մոտ, որ ալանների արքայազն օրիորդ տիկին Սաթենիկին կնության տա Արտաշեսին։ Ալանների թագավորն ասում է.

«Եվ ո՞րտեղից քաջ Արտաշեսը պիտի տա
Հազար հազարներ ու բյուր բյուրեր
Քաջերի սերունդ այս կույսի՝
Ալանների աքայազն օրիորդի համար»։

Վիպասաններն երգելիս այս տեղն առատապեպաքանում են ասելով.

«Հեծավ արի Արտաշես արքան գեղեցիկ սև ձին,
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,
Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Ձգեց մեջքը Ալանաց օրիորդի,
Եվ շատ դավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,
Արագաբար իր բանակը հասցնելով»։

Իրապես այսպես է եղել։ Որովհետև Ալանների մոտ հարգի է կարմիր մորթը, (Արտաշեսը) բավական լայքա և շատ ոսկի է տալիս փարձանք և առնում է աղջկան օրիորդ Սաթենիկին։ Այս է, որ ասում են ոսկեօղ շիկափոկ պարան։ Նույնպես հարսանիքի մասին երգում են առասպելաբանելով.

«Ոսկի տեղ էր տեղում
Արտաշեսի փեսայության ժամանակ.
Մարգարիտ էր տեղում
Սաթենիկի հարսնության ժամանակ»։

Որովհետև մեր թագավորները սովորություն ունեին՝ իբրև փեսա դահլիճի դուռը հանելիս դրամներ շաղ տալ հռոմայեցիների հյուպատոսների նման. նույնպես և թագուհիները առագաստի սենյակում մարգարիտ։ Երգի իսկական իմաստն այս է։

Սա Արտաշեսի կանանց մեջ առաջինը դառնալով՝ ծնում է Արտավազդին և ուրիշ շատ զավակներ, որոնց այստեղ թվել կարևոր չհամարեցինք, այլ կհիշենք հետո, երբ մի գործի կհասնենք։

ԾԲ.

ԱՐԳԱՄԻ ԵՎ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արտավազդը, Արտաշեսի որդին, չափահաս դառնալով, դուրս եկավ մի քաջ, ինքնահավան և հպարտ մարդ։ Նա ծերունի Արգամին նախանձելով՝ պատրանքներով իր հոր զայրույթը շարժեց Արգամի դեմ, իբրև թե նա մտածում է բոլորի վրա թագավորել։ Այս կերպով նրան պատվից զցելով՝ ինքն է առնում երկրորդական գահը։ Սրանից հետո, երբ Արտաշեսը ճաշի է գնում Արգամի մոտ, ինչ-որ կասկած է ծագում, իբր թե դիտավորություն ունեն թագավորին դավելու, ուստի թագավորի որդիները աղմուկ են բարձրացնում և հենց ճաշի ժամանակ քարշում են Արգամի ալեոր մազերը։ Արտաշեսը սաստիկ շփոթված վերադառնում է Արտաշատ և իր Մաժան որդուն մեծ գնդով ուղարկում է, հրամայելով Մուրացյան ցեղից շատերին սպանել, Արգամի ապարանքն այրել և նրա հարճին, որ չքնաղ գեղեցկություն ուներ և շնորհալի քայլվածք[178] և կոչվում էր Մանդու, բերել իրեն իբրև հարճ։ Երկու

տարի հետո (Արգամին) նորից հնազանդության բերելով՝ հրամայում է նրա գույքը վերադարձնել, բացի հարճից։

Իսկ Արտավազդը չբավականանալով նրանով, որ երկրորդության պատիվն առել էր նրանցից, խլում է նաև Նախճավանը և բոլոր դյուղերը Նրասխից դեպի հյուսիս, և նրանց մեջ եղած ապարանքներն ու բերդերը իրեն ժառանգություն է դարձնում։ Արգամի որդիներն այս բանին չհամբերելով՝ նրան դիմադրում են, բայց արքայորդին հաղթելով, կոտորում է Արգամի բոլոր զավակներն իրենց հոր հետ, ինչպես և բոլոր երևելի մարդկանց Մուրացյան ցեղից, և գրավում է նրանց գյուղերը և նրանց բոլոր իշխանությունը։ Նրանցից ոչ ոք չփրկվեց, բացի մի քանի աննշան ու կրտսեր մարդկանցից, որոնք փախան Արտաշեսի մոտ և նրա արքունիքում փրկվեցին։ Այս Արգամն է, որ առասպելի մեջ կոչվում է Արգավան և այս է Արտավազդի հետ պատերազմի պատճառը։

ԾԲ

ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ՄԱՐԴ ԷՐ ՍԻՄԲԱՏԸ ԵՎ ԻՆՉ ԳՈՐԾ ԿԱՏԱՐԵՑ ԱԼԱՆՆԵՐԻՆ ԵՐԿՐՈՒՄ, ԵՎ ԱՐՏԱՁՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ

Ինձ սիրելի է խոսել նաև քաջ Սմբատի մասին, որովհետև նա, համաձայն առասպելին, որ շատ հեռու չէ ճշմարտությունից, ուներ իր քաջության համեմատ հասակ և անդամներ, իր առաքինությամբ որսում էր հոգիներ, վայելչացած էր դեղեցիկ ալևոր մազերով, աչքերի մեջ արյունի փոքրիկ նշանով, որ փայլում էր, ինչպես դրակոնտիկոն (ակնը)՝ ոսկու և մարդարտի մեջ (ագուցված)[179], արագաշարժ և փութկոտ անձի և մարմնի հետ նա միաժամանակ զգույշ էր ամեն բանում, և բոլոր մարդկանցից ավելի հայրդության շնորհք ուներ պատերազմների մեջ։ Այնքան քաջագործություններից հետո նա Արտաշեսի հրամանով զորքով գնում է Ալանների աշխարհը՝ Սաթենիկի եղբորը օգնության։ Որովհետև Սաթենիկի հայրը մեռնելով մի (կոզմնակի) մարդ բռնությամբ թագավորել էր Ալանների աշխարհի վրա և հալածում էր Սաթենիկի եղբորը։ Սմբատը նրան հալածեց հեռացրեց, Սաթենիկի եղբորը տեր դարձրեց իր աղդին և հակառակորդների երկիրն ավերեց, որտեղից բոլորին գերի վերցնելով, մեծ բազմությամբ

բերեց Արտաշատ։ Արտաշեսը հրամայում է նրանց բնակեցնել Մասիսի հարավ-արևելյան կողմում, որ կոչվում էր Շավարշական գավառ, (այս անվան հետ) պահպանելով նաև բնիկ Արտազ անունը, որովհետև մինչև այսօր էլ Արտազ է կոչվում այն աշխարհը, որտեղից նրանք գերվեցին։

ԾԳ

ԿԱՍՊԵՐԻ ԵՐԿՐԻ ԱՎԵՐՈՒՄԸ. ԱՐՏԱՇԵՍԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՄԲԱՏԻ ԴԵՄ ԵՎ ԻՐԱՐ ԴԵՄ

Պարսից Արշակ վերջին թագավորի մահից հետո մեր Արտաշեսը Պարսից աշխարհի վրա թագավորեցնում է իրեն համանուն Արտաշեսին, նրա որդուն։ Բայց նրան չկամեցան հնազանդել այն լեռան բնակիչները, որ իրենց լեզվով կոչվում է պատիժահար գավառ, որ Գեղամների[180] լեռն է, նույնպես և ծովեզերքի բնակիչները և դեռ ավելի այս կողմն ապրողները։ Այս առիթով նաև Կասպից երկիրն ապստամբում է մեր թագավորից։ Ուստի Արտաշեսը նրանց վրա է ուղարկում Սմբատին Հայոց բոլոր զորքերով, ինքն էլ յոթն օր հետո գնում է՝ նրան ճանապարհ դնելու համար։ Սմբատը գնալով բոլորին հնազանդեցնում է, բայց Կասպից երկիրն ավերելով՝ Սմբատն Արտազի գերիներից ավելի շատ գերի է բերում Հայաստան, որոնց հետ նաև նրանց Զարդմանոս անունով թագավորին։ Ուստի Արտաշեսը նրա ծառայությունների արժանապես (գնահատելով), նրան է պարգևում Գողթնի գյուղերում եղած արքունական հողերը և Ուղտի ակունքները, և բացի սրանից, նրան է թողնում ամբողջ ավարը։ Արտավազդն այս բանին նախանձելով՝ կամեցավ Սմբատին սպանել, բայց նրա դիտավորությունը բացվեց և այս բանը մեծ վիշտ պատճառեց նրա հորը։ Իսկ Սմբատը տեղի տալով՝ գնաց Ասորեստանի կողմերը, իր կամքով թողնելով Հայոց զորքի իշխանությունը, որի վրա աչք էր տնկել Արտավազդը։ (Սմբատը) Արտաշեսի հրամանով բնակություն է հաստատում Տմորիքում, որ այժմ կոչվում է Կորդիք, և բազմաթիվ գերիներին նստեցնում է Ալկիում։ Որովհետև նա ծերության հասակում կին էր առել այդ կողմերի ասորեստանցիներից և նրան շատ սիրում էր, այս պատճառով այդ կողմերում բնակվեց։

Իսկ Արտավազդը Սմբատի գնալուց հետո հորից ստանում է

բոլոր զորքերի իշխանությունը, որին փափագում էր։ Սրա վրա նրա եղբայրներն սկսեցին նախանձել, իրենց կանանցից գրգռվելով. ուստի Արտաշեսը Վրույրին, որ իմաստուն և բանաստեղծ մարդ էր, նշանակում է հաղարապետ և նրան է հավատում արքունական տան բոլոր գործերը, իսկ Մաժանին նշանակում է Անիում[181] Արամազդի կուռքի քրմապետ։ Զորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում. արևելյան կողմի զորքը թողնում է Արտավազդին, արևմտյանը տալիս է Տիրանին, հարավայինը հավատում է Սմբատին և հյուսիսայինը Զարեհին։ Զարեհը գոռող մարդ էր, երեների որսի մեջ խիզախ, բայց պատերազմների մեջ երկչոտ և դանդաղկոտ։ Այս բանը փորձով գիտենալով մի ոմն Քարձամ, վրաց թագավոր, ապստամբեցնում է այդ երկիրը և Զարեհին բռնելով բանտարկում է Կովկասում։ Բայց Արտավազդն ու Տիրանը նրա հետ պատերազմելով՝ իրենց եղբորը հետ են դարձնում, մեծ ուժից[182] հանելով։

ՎԴ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԱԳԱՎՈՐ ԴՈՄԵՏԻԱՆՈՍԻ ՋՈՐՔԵՐԻ ՀԵՏ

Արևմուտքում ինչ-որ հուզմունքներ են ծագում. սրա վրա վստահանալով՝ Արտաշեսն ապստամբում է Հռոմայեցիների տերության դեմ և հարկ չի վճարում։ Դոմետիանոս կայսրը սրա վրա զայրանալով զորք է ուղարկում Արտաշեսի վրա։ Նրանք գալիս հասնում են Կեսարիայի կողմերը, Տիրանին արևմտյան զորքի հետ առաջ խառնած քշում բերում են մինչև Բասենի մեծ և ընդարձակ հովիտը մեծ տագնապով։ Այստեղ Արտավազդը արևելյան և հյուսիսային զորքերով, թագավորի բոլոր որդիների հետ միասին, նրանց դեմ է դուրս գալիս, բայց պատերազմի ժամանակ շատ նեղն են ընկնում։ Պատերազմի վերջերին վրա է հասնում Սմբատը հարավային զորքերով և մեջ մտնելով վտանգից ազատում է թագավորի որդիներին, հաղթություն է տանում և վերջ դնում պատերազմին։ Որովհետև նա, ընակելով իր ծերության, երիտասարդի պես կազմակերպեց և ճակատամարտը մղեց, և հռոմայեցիների զորքին հետամուտ լինելով հալածեց մինչև Կեսարիայի սահմանները։

Առաջներում այս բանը երդել կամենալով՝ ասում են,

Քե եկած է եղել մի ումն Դոմետ[183]*, որ ինքը Դոմետիանոս կայսրն է, բայց ոչ Քե ինքն է եկել այս կողմերը, այլ նրա հրամանն ու զորքերը այլևայլանելով (առասպելները) նրա անունով են կոչել։*

Բայց Արտաշեսի բախտից՝ այդ ժամանակ Դոմետիանոսը մեռնում է Հռոմում. նրանից հետո Ներվասը թագավորում է ոչ ավելի, քան մի տարի։ Այս բանից հպարտացած՝ Հայոց և Պարսից զորքերը նույնիսկ ասպատակություն կատարեցին դեպի Հունաստան։ Սրանց օրինակով եգիպտացիները և պաղեստինացիների կողմերը նույնպես դադարեցին հարկ տալը։

ԾՆ

ՏՐԱՅԱՆՈՍԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ. ՄԱԺԱՆԻ ՄԱՀԸ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՋԵՌՔՈՎ

Այս ժամանակները Հռոմայեցիների վրա թագավորում է Տրայանոսը։ Նա ամբողջ արևմուտքը խաղաղացնելուց հետո դիմում է եգիպտացիների և պաղեստինացիների վրա, նրանց նվաճում է իր ձեռքի տակ և շարժվում է պարսիկների վրա։ Արտաշեսն աճապարելով՝ մեծ ընծաներով նրա առաջն է ելնում, հանձն է առնում իր հանցանքը, անցած տարիների հարկերն էլ նրա առաջն է դնում և նրանից ներումն առանալով վերադառնում է Հայոց աշխարհը։ Իսկ Տրայանոսը Պարսկաստան անցնելով և բոլոր իր ցանկացածը կատարելով՝ հետ է դառնում Ասորիքով։

Նրա առաջն է գալիս Մաժանը և եղբայրների վրա մատնություն է անում. «Գիտցիր, ասում է, ո՛վ թագավոր, եթե Արտավազդին և Տիրանին երկրից դուրս չքշես և Հայոց զորքերը Ջարեհին չհավատաս՝ հարկերն առանց դժվարության չեն հասնի քեզ»։ Մաժանն այս արավ, քեն պահած լինելով Սմբատի համար, որովհետև իրեն էլ նա էր սնուցել, միևնույն ժամանակ նա կամենում էր Տիրանին էլ հեռացնել, որպեսզի ինքը միաժամանակ Քե քրմապետ լինի և Քե արևմտյան (զորքի) սպարապետ։ Տրայանոսն ուշադրություն չդարձնելով՝ նրան ձեռնունայն հետ է դարձնում։ Իսկ Արտավազդն ու Տիրանը նրա այս դավը լսելով՝ որսի ժամանակ դարան սարքեցին և սպանեցին Մաժանին, և տարան թաղեցին Բագնաց ավանում (Բագավանում) իբրև քրմապետի։ Իսկ Արտաշեսն այդ ժամանակից սկսած անխափան հարկ վճարեց Տրայանոսին և նրանից հետո Ադրիանոս կայսեր՝ մինչև իր կյանքի վերջը։

ԾԶ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՏԱՇԵՍԸ ՄԵՐ ՍՇՆԱՐՀԸ ԲԱԺՄԱՄԱՐԴԱՅՐԵՑ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵՑ

Բոլոր առաքինական գործերից և բարեկարգություններից հետո Արտաշեսը հրամայում է գյուղերի և ագարակների սահմաններ որոշել, որովհետև նա մեր աշխարհը բաղմամարդացրեց շատ ազգեր (ուրիշ երկիրներից) բերելով, որոնց բնակեցրեց լեռներում, հովիտներում ու դաշտերում։ Սահմանների համար նա նշաններ սահմանեց այսպես. հրամայեց տաշել քառակուսի ձևով քարեր, մեջերը պնակի նման փոսացնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ գետնից քիչ բարձր։ Սրա վրա նախանձելով՝ Պարսից Արտաշիր (Թագավորը), Սասանորդին, հրամայում է Պարսկաստանումն էլ նրանց տեսակ անել և իր անունով կոչել, որպեսզի Արտաշեսի անունը չհիշվի։

Բայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտայինն, այնքան շենացել էր երկիրը։

ԾԷ

ԱՄԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ասում են, թե սրա ժամանակ է եկել Ամատունիների ցեղը Արյաց աշխարհի արևելյան կողմերից։ Բայց սրանք բնիկ հրեաներ են, մի ոմն Մանուից, որ մի ուժեղ և մեծահասակ որդի ուներ Սամսոն անունով, ինչպես հրեաների մեջ սովորություն կա՝ նախնիների անունը դնել ըստ հույսի[184]։ Բայց այս ճշմարիտ է, ինչպես այժմ էլ նկատվում է Ամատունիների սերնդի մեջ, որ նրանք հաղթանդամ, վայելչակազմ և ուժեղ մարդիկ են, ամեն բանում պատշաճ։ Սրանք տարված են եղել Արշակի ձեռքով, որ պարթևական ցեղից առաչինը թագավոր դարձավ, և առաջադիմելով՝ Արյաց աշխարհումն էլ պատվի հասան Ամատունի կողմերը։ Իսկ թե ի՞նչ պատճառով նրանք մեր աշխարհն եկան՝ չդիտեմ, միայն թե Արտաշեսից պատիվներ են գտնում գյուղերով ու դաստակերտներով և կոչվում են Ամատուններ, այսինքն եկվորներ։ Իսկ պարսիկների մի մասը նրանց Մանույան են կոչում, նրանց նախնիի անունով։

ԾԸ

ԱՌԱՎԵՂՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԻ ՄԱՍԻՆ, ԹԵ Ո՛ՐՏԵՂԻՑ Է ԱՅԴ ՑԵՂԸ ՍԿՍՎԵԼ

Սրա օրերում (առաջ եկան) Առավեղյաններն ևս, Ալաններից ազգից, որոնք Սաֆենիկի մերձավորներն էին և նրա հետ գալով՝ մեր աշխարհի նախարարությունների շարքը դասվեցին ղեղով, իբրև մեծ թագուհու հարազատները։ Տրդատի հոր հոսրովի ժամանակ նրանք իննամիացան Բասիլների դաղթականներից մի քաչի հետ։

ՃԹ

ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՇԵՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Որովհետև Արտաշեսի ժամանակ շատ գործեր կատարվեցին, ուստի մենք շատ գլուխների բաժանեցինք, որպեսզի խոսքի երկայնությունը ձանձրալի չդառնա ընթերցողներին. այս վերջին գլուխն էլ նրա համար է, որ հիշատակենք Արտաշեսի ժամանակ կատարված մյուս գործերն էլ։ Որովհետև թեպետ մեր նախորդ գլուխներում հիշատակված կարգերն ու զեղեցիկ սովորությունները սահմանվեցին Վաղարշակից և ուրիշ հին թագավորներից, բայց նրանք մեծամեծ արվեստներից ու դիտություններից դուրկ էին մնացել, ավելի կոզոպատների և ասպատակությունների հետևելով, իսկ այնպիսի գիտությունների կամ անփույթ էին կամ ձեռնհաս չէին, ինչպես շաբաթներ, ամիսներ, տարվան շրջաններ (սահմանելը). նրանք այսպիսի բաներ չդիտեին, գործ էին ածում ուրիշ ազգերինը։ Նույնպես և չկար նավագնացություն մեր աշխարհի ծովակների վրա, ոչ էլ ճանապարհորդություն գետերով, ոչ ձկնորսության գործիքներ, նույնիսկ երկրագործությունն ամեն տեղ տարածված չէր, այլ բիչ տեղերում. նրանք հյուսիսային ազգերի նման ապրում էին հում մսով և սրա նման բաներով։ Այս բոլորը սահմանվեցին Արտաշեսի ժամանակ։

Կ

ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Գեղեցիկ է պատմում և Սրիստոն Փեղղացին[185] Արտաշեսի մահվան մասին։ Որովհետև հրեաներն ապստամբել էին Հռոմա-

յեցիների Ադրիանոս թագավորից և պատերազմեցին Ռուփոս եպարքոսի հետ առաջնորդությամբ մի ավազակ մարդու, որ կոչվում էր Բարքոբա, այսինքն աստղի որդի. նա մի չարագործ և սպանող մարդ էր, բայց մեծ-մեծ չարդում էր պարծենալով, թե ինքը երկնքից ծագել է նրանց փրկիչ, նեղված ու գերված (ազգայիններին)։ Նա պատերազմն այնքան սաստկացրեց, որ նրան նայելով նաև Ասորիքը, Միջագետքը և ամբողջ Պարսկաստանը հռոմայեցիներին հարկ տալուց հրաժարվեցին, մանավանդ որ լսել էին, թե Ադրիանոսը վարակվել է ուրկության ախտով։ Բայց մեր Արտաշեսը հավատարիմ մնաց նրան։

Ահա այս ժամանակներն էր, որ Ադրիանոսն եկավ Պաղեստին, ապստամբներին կոտորեց՝ նրանց մի փոքր քաղաքում պաշարելով, Երուսաղեմի մոտ։ Նա հրամայեց, որ բոլոր հրեա ազգը քշեն հեռացնեն հայրենի աշխարհից, այնպես որ շատ հեռվից էլ չկարողանան Երուսաղեմը տեսնել։ Իսկ ինքը վերստին շինեց Երուսաղեմը, որը ավերել էին Վեսպասիանոսը, Տիտոսը և ինքը և իր անունով կոչեց Հեղիա, այսինքն արեգակ, ինչպես կոչվում էր ինքը Ադրիանոսը։ Այնտեղ նա բնակեցրեց հեթանոսներ և քրիստոնյաներ, որոնց եպիսկոպոսն էր մի ոմն Մարկոս։ Այս ժամանակները նա մեծ զորք ուղարկեց Ասորեստանի կողմերը, մեր Արտաշեսին էլ հրամայեց իր գլխավոր մարդկանցով գնալ Պարսկաստան։ Նրա հետ էր գոնվում իբրև քարտուղար այս մարդը (Արիստոնը), որ այս պատմությունը մեզ տվեց։ Նա Արտաշեսին հանդիպեց Մարաքում[186], Սոհուդ կոչված տեղում։

Արտաշեսը հիվանդացավ Մարանդում, Բակուրակերտ ավանում։ Նա Աբեղյանների տոհմի նահապետ ոմն Աբեղոյի, որ մի ճարպիկ, շողոքորթ և հաճոյախոս մարդ էր, հենց նրա խնդրով, ուղարկեց Եկեղյաց գավառը, Երիզա, Արտեմիսի մեհյանը, որպեսզի կուռքերից բժշկություն և երկար կյանք խնդրե (թագավորի համար)։ Նա դեռ հետ չդարձած՝ Արտաշեսի մահը վրա է հասնում։ Եվ (Արիստոնը) գրում է, թե ո՛րքան բազմություն մեռավ Արտաշեսի մահվան ժամանակ—նրա սիրելի կանայք, հարճերը և մտերիմ ծառաները, և ինչպես բազմատեսակ շքեղ պատիվներ մատուցին դիակին, քաղաքակիրթ (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման։ Նրա դագաղը, ասում է, ոսկեղեն էր, գահը և անկողինը բեհեզից և մարմինը պատող պատմուճանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա զենքն առչեր։ Գահը շրջապատում էին

որդիներն ու ազգականների բազմությունը, և սրանց մոտ զինվորական պաշտոնյաները, նահապետները, նախարարական գնդերը և ընդհանրապես զորականների վաշտերը, ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի. առջևից պղնձե փողեր էին հնչեցնում, իսկ հետևից սևազգեստ ձայնարկու կույսեր և լալկան կանայք[187]*, բոլորից վերջը՝ ռամիկների բազմությունը, եվ այսպես տանելով թագեցին նրա գերեզմանի վրա կամավոր մահեր էին լինում, ինչպես վերն ասացինք։ Սա թագավորեց քառասուն և մի տարի, այսպես սիրելի լինելով մեր աշխարհին։*

ԿԱ

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ՈՒ ՔՈՒՅՐԵՐԻՆ ՀԱԼԱԾԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՀԸ՝ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ

Արտաշեսից հետո թագավորում է նրա Արտավազդ որդին և Այրարատից բոլոր եղբայրներին հալածում է Ազիովիտ և Առքերանի գավառները, որպեսզի Այրարատում, թագավորի կալվածում, չապրեն. միայն Տիրանին պահում է իրեն փոխանորդ, որովհետև ինքը որդի չուներ։ Նա քիչ օրեր թագավորելուց հետո մի անգամ անցնում էր Արտաշատ քաղաքի կամուրջով՝ Գինա աւկունքների մոտ կինճեր և վայրի էշեր որսալու, հանկարծ ինչ-որ ցնորքից շփոթվում խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում անհետանում է[188]*։*

Նրա մասին Գողթնի երգիչներն այսպես են առասպելաբանում. Արտաշեսի մահվան ժամանակ, հեթանոսական սովորությամբ, շատ կոտորածներ էին լինում. սրա վրա, ասում են, Արտավազդը նեղանում է և ասում է հորը.

«Երբ դու գնացիր,
Ու բոլոր երկիրը քեզ հետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ի՞նչպես թագավորեմ»։

Սրա համար Արտաշեսը նրան անիծելով այսպես է ասում.

«Թե դու հեծնես որսի գնաս
Ագատն ի վեր, դեպի Մասիս,
Քաջերը քեզ բռնեն տանեն

Աղատն ի վեր, դեպի Մասիս.
Այնտեղ մնաս, լույս չտեսնես»։

Պատավները սրա մասին զրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անում դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, ասում են, դարբինների կռանահատուցյան ձայնից կապանքներն ամրանում են։ Ուստի դեռ մինչև այժմ էլ դարբիններից շատերը, առասպելին հետևելով, կիրակի օրերը երեք կամ չորս անգամ (կռանով) խփում են սալին, որպեսզի, ասում են, Արտավազդի շղթաներն ամրանան։ Բայց իսկական իրողությունն այնպես է, ինչպես վերն ասացինք։

Բայց ոմանք ասում են, թե հենց սրա ծնվելու ժամանակ մի պատահարը է հանդիպել. և կարծում են, թե Աժդահակի սերունդից կանայք նրան կախարդել են, որի պատճառով Արտաշեսը նրանց շատ չարչարեց։ Այս մասին նույն երգիչներն առասպելի մեջ այսպես են ասում.

«Վիշապաղունքը մանուկ Արտավազդին գողացան,
Եվ նրա տեղ դրին դև»։

Բայց ինձ ճշմարիտ է թվում այն լուրը, թե նա ծննդից ի վեր մոլությամբ է ապրել, մինչև որ նույն մոլությամբ մեռել է։ Թագավորությունն առնում է նրա Տիրան եղբայրը։

ԿԲ

ԻՆՉ ՈՐ ԿԱ ՏԻՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայոց վրա թագավորում է Տիրանը, Արտաշեսի որդին Պարսից Պերոզ առաչինի երրորդ տարում։ Սրա մասին ոչ մի քաջության գործ չի պատմվում, այլ միայն որ հավատարմությամբ հպատակ մնաց Հռոմայեցիներին և, ինչպես ասում են, անձնատուր եղավ որսի և զբոսանքների։ Նա երկու ձի է ունեցել, Պիգասոսից[189] ավելի թեթևաշարժ և անչափ արագագնաց, այնպես որ համարում էին, թե նրանք ոչ թե գետնի վրայով են գնում, այլ օդագնաց են։ Բզնունյաց մի ոմն իշխան Դատաքե խնդրեց այդ (ձիերը) հեծնել, և պարծենում էր, թե թագավորից ավելի հարուստ է։

Սրա մոտ եկան Արշակունյաց ցեղից իր հին ազգակիցները,

որոնք ապրում էին Հաշտյանքի կողմերում և ասում են. «Ընդարձակի՛ր մեր ժառանգությյան (հողերը), որովհետև մենք շատ բազմացանք և մեղ նեղ է գալիս (եղածը)»։ Նա էլ հրամայում է, որ նրանցից մի քանիսը գնան ապրելու Աղիովիտ և Առքերանի գավառներում։ Սրանք ավելի սաստիկ բողոք բարձրացրին, թե մեր տեղն ավելի նեղ է, բայց Տիրան ուշադրություն չդարձրեց, այլ հաստատապես վճռեց ոչ մի նոր (հող) չտալ նրանց ժառանգությյուն, այլ որ նրանք ինչ որ ունեն, հավասար իրենց մեջ բաժանեն։ Հողը մարդաթվով բաժանելիս դուրս եկավ, որ Հաշտյանքում բնակվողների ժառանգությյունը պակաս է, ուստի նրանցից շատերն եկան Աղիովիտ և Առքերանի գավառը։

Ասում են, սրա ժամանակ եղել է Անձևացյաց ցեղից մի պատանի Երախնավու անունով, ամեն բանում սեգ. նա կին է առել Արտավազդի կանանցից վերջինին, որ բերել էր տվել Հունաստանից։ Եվ որովհետև Արտավազդը զավակներ չունեցավ, ուստի թագավորը Երախնավուին թողեց Արտավազդի բոլոր տունը։ Նա, ասում էին, ընտիր մարդ է եղել, ամեն բանում համեստ և մարմնական ցանկությյան կողմից էլ օրինավոր։ Թագավորը նրան սիրելով՝ նրան է տալիս երկրորդական գահը, որ գրավում էր Արտավազդը, նույնպես նրան է հավատում արևելյան զորքի հոգսերը և նրա մոտ է թողնում Դրվասպ անունով մի պարսիկ, որ իր մտերիմն էր և խնամիացած էր Վասպուրականի նախարարների հետ, թագավորը նրան էր տվել Տաւոյնք ավանը ագարակներով հանդերձ և այն միակ այգին, որի մեջ էր մանում Գայլատվա ծովից[190] հանած մեծ առուն։ Իսկ ինքը թագավորը գնաց Եկեղյաց կողմերը և արքունիքը հաստատեց Ջրվեժ ավանում։ Նա խաղաղությյամբ վարեց իր թագավորությյունը քսան և մի տարի, և մեռավ ճանապարհին, ձյան հյուսի տակ մնալով։

ԿԶ.

ՏՐԴԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ, ԵՎ ՆՐԱ ՑԵՂԻ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Բագրատունյաց ցեղից կար մի ոմն Տրդատ, քաջ Սմբատի Սմբատուհի զստեր որդին, մի սրտոտ և ուժեղ մարդ, կարճ հասակով և գծուծ կերպարանքով։ Նրան Տիրան թագավորը ի-

րեն փեսայացրեց, իր Երանյակ դստերը նրան կնության տա-
լով։ Կինը չսիրեց իր մարդուն, Տրդատին, քամահրում էր նրան,
հոնքերը կիտում, շարունակ իրեն վայ էր տալիս, որ իր նման
չքնաղ ու աղնվազարմ կինն ստիպված է մի տգեղ և հասարակ
ծագումից մարդու հետ ապրել։ Սրա վրա դայրանալով, Տրդատը
մի օր սաստիկ ծեծում է նրան, կտրում է նրա շեկ մազերը,
փետուռում է խոպոպիքները և հրամայում է բաշեքաշ նրան սենյա-
կից դուրս գցել։ Իսկ ինքն ապստամբելով գնաց Մարաստանի
ամուր կողմերը։ Երբ նա հասավ Սյունյաց աշխարհը, այդտեղ
նրան հասավ Տիրանի մահվան լուրը, ուստի այդտեղ էլ մնաց։

Մի օր Սյունյաց Բակուր նահապետը նրան ընթրիքի հրա-
վիրեց։ Երբ գինով ուրախություն էին անում, Տրդատը տեսավ
մի կին, որ շատ դեղեցիկ էր և նվագում էր ձեռներով, անունը
Նաթինիկ։ Տրդատը նրան ցանկացավ և ասաց Բակուրին. «Այդ
վարձակի[191] ինձ տուր»։ Նա պատասխանում է. «Չեմ տա, որով-
հետև իմ հարճն է»։ Իսկ Տրդատը այդ կինն իր մոտ քաշելով
սեղանակիցների առաջ գգվում համբուրում էր նրան սիրահարված
անզուսպ երիտասարդի նման։ Բակուրը խանդոտելով վեր կա-
ցավ, որ կինը նրա ձեռքից խլի։ Բայց Տրդատը ոտքի ելնելով
ծաղկամանն իբրև զենք գործածեց, սեղանակիցներին էլ սեղա-
նից վանեց։ Կարծես մի նոր Ողիսևս էր[192] առաջ եկել, որ կուռո-
րում էր Պենելոպեի սիրահարներին, կամ Ղապիթանների և Հուշ-
կապարիկների կռիվ էր տեղի ունենում Պերիթոսի հարսանիքում։
Այսպես իր կացարանը հասնելով, իսկույն ձի հեծավ և հարճի
հետ միասին Սպեր գնաց։ Բայց իսկապես ավելորդ էր պատմել
այդ ցանկասեր մարդու քաջագործությունը։

Բայց գիտցիր, որ Բագրատունյաց ցեղի մարդիկ իրենց հայ-
րենի կրոնը թողնելիս սկզբում օտարոտի անուններ սկսեցին
կրել, ինչպես Բյուրատ, Տրդատ[193] և այլ այսպիսի անուններ,
զրկվելով իրենց նախնական անուններից, որ կրում էին ուրանա-
լուց առաջ, ինչպես Բագադիա, Տուբիա, Սենեքիա, Ակուդ, Սա-
փատիա, Վաղարիա, Ենանոս։ Եվ ինձ թվում է, թե Բագրատունի-
ների այժմ գործածած անուններից Բագարատը Բագադիա է,
Ակուդը Ակուտ, նույնպես և Վազարիան (դարձել է) Վարազ, Շամ-
բատը՝ Սմբատ։

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՏԻԳՐԱՆ ՎԵՐՋԻՆԸ ԵՎ ԻՆՉ ԳՈՐԾԵՐ Է ԱՐԵԼ.

Տիրանին հաջորդում է նրա եղբայրը, Տիգրան վերջինը, որ Հայոց վրա թագավորեց Պարսից Պերոզ թագավորի չորրորդ տարում։ Նա երկար ապրեց, քառասուն և երկու տարի, բայց ոչ մի արութեան գործ ցույց չտվեց, որ արժանի լիներ հիշատակելու, բայց մի հույն աղջկանից կալանավորվեց այն ժամանակ, երբ վախճանվեց Հռոմայեցիների Տիտոս երկրորդ թագավորը[194], որը կոչվեց Անտոնինոս Ավգոստոս, և Պարսից Պերոզ թագավորն արշավեց Հռոմայեցիների իշխանութեան վրա, որի պատճառով և Պերոզ կոչումն ստացավ, որ նշանակում է հաղթող, որովհետև նա առաջ հունարեն լեզվով կոչվում էր Վաղեգեսոս, իսկ թե պարսկերեն ինչպես էին կոչում՝ չգիտեմ։

Արդ՝ երբ Պերոզն Ասորիքի վրայով ասպատակում էր պաղեստինացիների կողմերը, նրա պատճառով և նրա հրամանով մեր Տիգրանն էլ ասպատակեց Միջերկրայքը, որտեղ և կալանավորվեց մի աղջկանից, որ իշխում էր այդ կողմերում, մինչ Ղուկիանոս կեսարը[195] Աքենեքում շինում էր մեհյաններ։ Սա Պերոզի մեռնելուց հետո մեծ զորքով Միջերկրայք գալով՝ նվաճեց Հայաստանը և արձակեց Տիգրանին։ Նա Տիգրանին կին տվեց իր մերձավոր Ռուֆի կույսը, որին (Տիգրան) Հայաստան դառնալիս արձակեց իր մոտից, իսկ նրանից ծնված չորս պատանիներին նախարարական ցեղի վերածեց, նրանց մոր Ռուֆիի անունով Ռուֆյան կոչելով, որպեսզի Արշակունի չկոչվեն, իսկ նրանցից առաջինին այդ նախարարության նահապետ նշանակեց։

Իսկ կրտսեր նախարարական ցեղերը թե՛ այստեղ մեզ մոտ և թե Կորճեքում հաստատում է այս Տիգրանը այն մարդկանցից, որոնք հեծելազորով աննշան էին[196], բայց անճամբ երևելի, և նրան փրկելու համար հույների հետ պատերազմեցին, ոմանք Կորճեքից և ոմանք մեր կողմից։ Խոսքս վերաբերում է Վճեննների մերձավոր հին ցեղերին[197], Հայկազանց սերունդներից, ինչպես և մի քանի եկվորներին։ Մենք անուն առ անուն չենք պատմի նրանց մասին, մասամբ՝ որովհետև մեզ հայտնի չեն, և մասամբ խույս տալով դժվար աշխատանքից, և երրորդ՝ որ շատերի անհաստատ լինելը կթելադրեր բոլորն էլ հետազոտել։ Այս պատճառով էլ մենք ոչինչ չենք գրի Տիգրան վերջինից հաստատված ցեղերի մասին, թեկուզ

շատ անգամ էլ սրա համար աղաչես[198], այլ կգրենք միայն հետո հաստատվածները, որոնց մասին հավաստի դիտենք։ Որովհետև մենք, որքան հնար էր, խուսափեցինք ավելորդ ու պաճուճված խոսքերից և ինչ որ անհավաստի գործ կամ կարծիք կար, միայն հետևելով արդարն ու ճշմարիտը գրելու, ուրիշներից (օգտվելով) կամ մեզանից՝ որքան կարողություն ունեինք։ Այստեղ էլ նույնպես վարվելով՝ խոսքիս ընթացքը կանգնեցնում եմ, երբ անպատշաճություն եմ նկատում կամ հավաստիության կողմից կասկածելի մի բան։ Եվ քեզ էլ, ինչպես շատ անգամ, այժմ ես աղաչում եմ, մեզ մի՛ հարկադրիր ավելորդ բաներ գրելու, (մի դուցե այդպիսի) քիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավաստի ամբողջ աշխատությունն անպետք ու ավելորդ մի գործ դառնա, որ հավասարապես վտանգ է և ինձ, և քեզ։

ԿԵ

ՎԱՂԱՐՇԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԼՈՒ ՄԱՍԻՆ. ԲԱԼԵՆԻ ԱՎԱԶԸ ՇԻՆԵԼԸ, ՆՈՐ ՔԱՂԱՔԸ ՊԱՐՍՊՈՎ ՊԱՏԵԼԸ, ՆԱԶԻՐՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՀԸ

Տիգրանի մահից հետո թագավորում է նրա որդին, Վաղարշը իր համանուն Վաղարշի, Պարսից թագավորի երեսուներկուերորդ տարում։ Սա ավան է շինում այն տեղը, ուր նա ճանապարհին ծնվեց, երբ նրա մայրն Այրարատ ձմեռանոցից գնալու ժամանակ հանկարծ երկունքը բռնեց և նրան ճանապարհի վրա ծնեց, Բասեն գավառում Մուրդ և Երասխ գետերի խառնուրդի մոտ։ Այս ավանը շինելով՝ իր անունով կոչեց Վաղարշավան։ Սա պարսպով պատեց նաև Վարդգեսի հզոր ավանը, որի մասին առասպելներն ասում են.

«Գաղթական գնաց Վարդգես մանուկը
Տուհաց գավառից, Քասախ գետի մոտ,
Եկավ ու նստավ Շրեշ բլրի մոտ,
Արտիմեդ քաղքի, Քասախ գետի մոտ,
Երվանդ արքայի դուռը թակելու»[199]։

Այս Երվանդը առաջինն է, Սակավակյացը, Հայկազուններից, որի քրոջը Վարդգեսը կին առնելով՝ այս ավանը շինեց, որտեղ և Արշակունի Տիգրան միջինը նստեցրեց հրեա գերիների կեսը, որ և

վաճառաշատ քաղաքագյուղ դարձավ։ Այժմ Վաղարշը պատեց նըրան պարսպով և ամուր պատվարով և կոչեց Վաղարշապատ, որ (կոչվում է նաև) նոր քաղաք։

Սա քսան տարի թագավորելով մեռավ։ Ուրիշները լոկ ասրնել են, բայց ես ասում եմ, որ սա մահից հետո էլ ապրում է իր բարի անունով քան շատերը թուլլ թագավորներից։ Որովհետև սրա ժամանակ հյուսիսային ազգերի բազմությունը, Խազիրներից և Բասիլներից[200] բազկացած, Ճորա դռնից[201] դուրս են գալիս, իրենց առաջնորդ և թագավոր ունենալով մի ոմն Վնասնակ Սուրհապի, և գալիս անցնում են Կուր գետի այս կողմը։ Նրանց դեմ է դուրս գալիս Վաղարշը մեծ բազմությամբ և քաջամարտիկ մարդկանցով, նրանց բազմությունը կոտորելով՝ դիակները սփռեց դաշտի երեսին, և երկար տեղ նրանց հալածելով անցնում է Ճորա կապանով։ Այստեղ թշնամիները նորից նակատամարտ կազմեցին. թեպետ Հայոց քաջերը նրանց փախուստի դարձրին, բայց Վաղարշը մեռավ կորովի աղեղնավորների ձեռքից։

Թագավորությունն առնում է նրա խոսրով որդին Պարսից Արտավան թագավորի երրորդ տարում։ Նա իսկույն Հայոց գործերը միացնելով անցնում է մեծ լեռը, իր հոր մահվան վրեժն առնելու. նա սրով և գեղարդով վանում է այդ հզոր ազգերին, բոլոր պիտանի մարդկանցից հարյուրից մեկը պատանդ է վերցնում և իբրև իր տերության նշան մի արձան է կանգնեցնում հունարեն գրով, որպեսզի հայտնի լինի, թե ինքը հնազանդում է հռոմայեցիներին։

ԿԶ

ԹԵ ՈՐՏԵՂԻՑ Է ՓԱՍՏՈՒՄ ԱՅՍ ԲԱՆԵՐԸ

Մեզ այս բաները պատմում է Բարդածանը[202], որ եղեսիայից էր։ Որովհետև նա վերջին Անտոնինոսի ժամանակ պատմագիր հանդիսացավ։ Նա առաջ հետևում էր Վաղենտիանոսի ազանդին, որը նա հետո անարգեց, ստությունը երևան հանելով, սակայն ինքը ճշմարտության չհանգեց, այլ միայն նրանից դատվելով՝ իրենից նոր աղանդ հնարեց։ Բայց պատմության մեջ չստեց, որովհետև հզոր էր խոսքով. նա նույնիսկ համաձայնեց թուղթ գրել Անտոնինոսին, շատ բան գրեց մարկիոնացոց աղանդի և ճա-

կատագրի դեմ և մեր աշխարհի կուռքերի պաշտամունքի մասին։

Որովհետև նա մեր կողմերն եկավ, հուսալով թե կկարողանա հետևողներ գտնել վայրենի հեթանոսների մեջ։ Բայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոցը, կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը. նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը փոխադրեց ասորի լեզվի և ապա նրանից հունարենի։ Իր մատյանում՝ մեհենական պաշտամունքի վերաբերմամբ պատմում է, թե Հայոց թագավոր Տիգրան վերջինը պատվել է իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բագավանում, Բագրևանդ գավառում, գերեզմանի վրա բագին շինելով, որպեսզի այդտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները և հյուրեր ընդունվեն գիշերելու համար։ Հետո Վաղարշն այդ տեղում ժողովրդական տոն սահմանեց նոր տարվա սկզբին, Նավասարդի ամսագլխին։ Մենք այս պատմությունից առանք ու գրեցինք քեզ Արտավազդի թագավորությունից մինչև Խոսրովի արձան (կանգնեցնելը)[203]։

ԿԸ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԵՑ

Ինչպես ասացինք, Վաղարշից թագավորությունն առնում է նրա որդին Խոսրովը, սուրբ Տրդատ Մեծի հայրը։ Նրա և նրա տոհմակիցների մասին փոքր ինչ համառոտ պատմում է Տրդատի հաջող քարտուղար Ագաթանգեղոսը[204], փոքրիշատե հիշատակելով Պարսից Արտավան թագավորի մահը, պարթևների տերության վերջանալը Սասանի որդի Արտաշիրի ձեռքով պարսիկների նվաճվելը նրա ձեռքի տակ, Տրդատի հոր Խոսրովի վրեժխնդիր լինելը և ապստամբությամբ Պարսից և ասորեստանցոց աշխարհն ավերելը։ Որից հետո ասում է, թե Խոսրովը (պատգամ) ուղարկեց իր բնիկ աշխարհը, քուշանների կողմը, որպեսզի իր տոհմակիցներն իրեն օգնության գան և Արտաշիրին դիմադրեն։ Բայց նրանք, ասում է, չլսեցին (Խոսրովին), որովհետև ավելի հաճ ու հավան էին Արտաշիրի տերությանը, քան իրենց ազգատոհմի և եղբայրության տերությանը, և որ Խոսրովը վրեժխնդիր է լինում առանց նրանց։ Սրա վրա (Ագաթանգեղոսն) ավելացնում է, թե (Խոսրովը) տասը տարի այսպես հաճախակի ավարելով նրանց

ամբողջ երկիրն ամայացնում էր։ Սրանից հետո պատմում է Անակի նենգավոր գալուստը, որ հրապուրվեց Արտաշիրի խոստումից, որ նա ասաց, թե «Ձեր բնիկ սեփական պատվական Պահլավը նորից ձեզ կդարձնեմ և քեզ թագով կփառավորեմ»։ Ուստի Անակը հանձն է առնում և սպանում է Խոսրովին։

Արդ՝ թեպետ Ագաթանգեղոսը համառոտ պատմեց այս անցքերը, բայց ես կամենում եմ երկար ու մանրամասն դրել այս ժամանակի պատմությունը բուն սկզբից, լի և խիտ ճշմարիտ տեղեկություններով։

ԿԲ

ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑԻՑ ՋՈՒՎԱՅՑԻՆ ՊԱՐԹՎԱԿԱՆ ՅԵՂԵՐԸ

Սուրբ գիրքը մեզ ավանդում է, որ Ադամից սկսած քսանևմեկերորդ նահապետն էր Աբրահամ, որից առաջ է եկել պարթևների ազգը։ Որովհետև (ս. գիրքն) ասում է, թե Սառայի մեռնելուց հետո Աբրահամը կին առավ Քետուրային[205], որից ծնվեցին Եմրանը և նրա եղբայրները, որոնց Աբրահամն իր կենդանության ժամանակ բաժանեց Իսահակից, արձակելով նրանց արևելյան երկիրը։ Նրանցից սերվեց պարթևների ազգը։ Սրանցից էր Արշակ քաջը, որ մակեդոնացիներից ապստամբելով թագավորեց Քուշանաց երկրում երեսուն և մի տարի. նրանից հետո նրա Արտաշես որդին քսան և վեց տարի, ապա նրա Արշակ որդին, որ կոչվեց Մեծ, որ Անտիոքոսին սպանեց և իր եղբորը՝ Վաղարշակին Հայոց վրա թագավոր դրեց, իր երկրորդը դարձնելով։ Իսկ ինքը չվելով Բահլ, այնտեղ հաստատեց իր թագավորությունը, հիսուներեք տարի. այս պատճառով նրա սերունդները Պահլավ կոչվեցին, ինչպես և նրա եղբոր Վաղարշակի սերունդները նախնիի անունով կոչվեցին Արշակունի։

Եվ սրանք են Պահլավիկ թագավորները.— Արշակ Մեծից հետո նրա թագավորությունն առնում է Արշական, Հայոց Վաղարշակ թագավորի տասներեքերորդ տարում՝ երեսուն տարի, ապա Արշանակ երեսուն և մի տարի. նրանից հետո Արշեզ քսան տարի. ապա Արշավիր քառասուն և վեց տարի. սա ունենում է երեք որդի և մի դուստր, ինչպես ասացի[206]. նրանցից անդրանի-

կի անունն էր Արտաշես, երկրորդինը Կարեն, երրորդինը Սուրեն, դուստրը կոչվում էր Կոշմ։

Արդ՝ Արտաշեսը հոր մահից հետո կամեցավ իր ցեղով թագավորել եղբայրների վրա. նրբ եղբայրները չհամաձայնեցին, նա նրանց նվաճեց ոչ այնքան ողոքական և պատրոդական խոսքերով, որքան սաստով։ Եվ Արգարը նրանց մեջ երդումով պայման և դաշինք հաստատեց, որ թագավորի Արտաշեսը իր զավակներով, իսկ եթե նրա զարմն սպառվի, ապա եղբայրներն ստանան թագավորությունն իրենց ավանդության կարգով։ Եվ Արտաշեսը նրանցից այս (համաձայնությունն) ստանալով՝ դավառներ է նրանց պարգևում և նրանցից ստեղծում է նախարարական ցեղեր, յուրաքանչյուր մեկի անունով, բոլոր նախարարություններից բարձր դասելով նրանց և նրանց ազգի նախնական անունը նրանց վրա պահելով, որպեսզի կոչվեն Կարենի Պահլավ, Սուրենի Պահլավ, իսկ քույրը Ասպահապետի Պահլավ, որովհետև նրա ամուսինը զորքերի վրա էր (նշանակված)։ Եվ այս կարգով նրանք երկար տարիներ մնացին, մինչև որ նրանց տերությունը վերջացավ։

Բայց դու այստեղ մեզ չդամբասես իբրև ավելորդաբանի, որ մեր մի անգամ արդեն պատմածը նորից ասացինք։ Բայց գիտցիր, որ մենք ցանկալով որ ընթերցողները լավ ծանոթություն ունենան մեր Լուսավորչի ազգականների մասին, ախորժելով կրկնեցինք մեր առածները։

ԿԹ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՊԱՐՍԻՑ ԱՐՏԱՇԵՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՑԵՂԸ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԸ

Անցննենք այժմ թվարկելու Արտաշեսի ցեղից թագավորներին, մինչև նրանց տերության վերջանալը։ Ինչպես ասացինք, Արշավիրից հետո թագավորում է Արտաշես երեսուն և չորս տարի։ Ապա Դարեհ երեսուն տարի, Արշակ տասն և ինը տարի, Արտաշես քսան տարի, Պերոզ երեսուն և չորս տարի, Վաղարշ հինգ տարի, Արտավան երեսուն և մի տարի[207]։ Սրան սպանեց ստահրացի Արտաշիրը, Սասանի որդին, պարթևների թագավորությունը վերջացնելով և նրանց ժառանգության աշխարհը գրավելով։ Այս ժամանակի վերաբերյալ պատմիչներ շատ կան Պարսից և Ասորոց մեջ, նաև Հույների։ Որովհետև պարթևներն իրենց թագավորության սկզբից մինչև նրա դադարումը գործ ունեցան հռոմայեցիների-

հետ, երբեմն հնազանդությամբ, երբեմն պատերազմով, ինչպես պատմում են Պաղեփատոս[208], Պորփյուր, Փիլեմոն և ուրիշ շատերը։ Բայց մենք կպատմենք Բարսումայի գրքից, որ բերեց Խորհրուրը։

Ա

ԻՆՉ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ ԿԱՆ ՊԱՀԼԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս Խորհրդուրը պարսից Շապուհ թագավորի դպիրն է եղել և ընկել է հույների ձեռքը, երբ Հուլիանոսը, Պառաբատոս կոչվածը, ղորքով Տիգրոնի վրա գնաց. իսկ նրա մահից հետո Հոբիանոսի հետ Հունաստան եկավ արքունական սպասավորների հետ միասին, մեր հավատն ընդունելով կոչվեց եղիազար և հունարեն սովորելով գրեց Շապուհի և Հուլիանոսի գործերի պատմությունը։ Սրա հետ միասին նա թարգմանեց հին (թագավորների) պատմությունը պարունակող մի մատյան, որ գրել էր իր գերեկից մի ոմն Բարսումա, որ պարսիկները կոչում են Ռաստատհուն[209], որտեղից առնելով մենք այս գրքում կրկնում ենք, դեն գցելով նրանց առասպելների բարբաջանքը։ Որովհետև մենք անտեղի ենք համարում այստեղ կրկնել առասպելները—Փափագի երազը[210], Սասանից մանվածապատ հուր դուրս գալը, հոտը պատելը, լուսնակը, կախարդների, այսինքն քավդյաների նախադուշակությունը և սրանից հետո պատահածները, Արտաշիրի պոռնկական խորհուրդը սպանությամբ հանդերձ, մոգի աղջկա անմիտ հանճարաբանությունը նոխազի մասին և բոլոր մնացածը. նաև այծի ծիծ տալը երեխային արծվի հովանու ներքև, ագռավի գուշակությունը, գերապանծ առյուծի պահպանությունը գայլի սպասավորությամբ, և քաջ մենամարտությունը, և ինչ որ այլաբանության կարգին է պատկանում։ Մենք միայն ստույգը կգրենք, ճշմարտության վայել պատմությունը։

ՀԱ

ԽՈՍՐՈՎԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԱՍՈՐԵՍՏԱՆ, ՈՐՈՎ ՄՏԱԴԻՐ ԷՐ ՕԳՆԵԼ ԱՐՏԱՎԱՆԻՆ

Երբ Արտաշեսը, Սասանի որդին, Արտավանին սպանեց և ինքը թագավորեց[211], Պահլավյան երկու ցեղերը, որոնք կոչվում

են Ասպահապետի և Սուրենի Պահլավ, նախանձ պահած լինելով իրենց հարազատ ազգից թագավորած ցեղի դեմ, որ Արտաշեսինն էր, հոժարությամբ ընդունեցին Սասանի որդի Արտաշիրի թագավորությունը։ Բայց Կարեն Պահլավի տունը հավատարմություն պահպանելով դեպի իրենց եղբայրական ազգականությունը, պատերազմով դիմադրեցին Սասանի որդուն՝ Արտաշիրին։ Բայց դեռ ավելի առաջ Հայոց Խոսրով թագավորը, հենց որ լսեց ծագած խռովության մասին, աճապարեց օգնության դիմելու Արտավանին, նրան փրկելու՝ եթե հնար լինի։ Բայց երբ նա Ասորեստան մտավ, այստեղ լսեց Արտավանի մահվան բոթը, բոլոր Պարսից զորքերի և նախարարների միաբանությունը (Արտաշիրի հետ), ինչպես և իր ազգի՝ Պարթևների և Պահլավիկների, բացի Կարենյան ցեղից։ Ուստի Խոսրով սրա մոտ պատգամավորներ ուղարկելով՝ մեծ տրտմությամբ ու վշտով վերադառնում է մեր աշխարհը։ Եվ իսկույն շտապով ծանուցանում է Հռոմայեցիների փիլիպպոս կայսրին, նրանից օգնություն խնդրելով։

ՀԲ

ԽՈՍՐՈՎԸ ՓԻԼԻՊՊՈՍԻՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՎ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ԴԻՄՈՒՄ Է ԱՐՏԱՇԻՐԻ ՎՐԱ

Փիլիպպոս, իր թագավորության մեջ խռովություն ծագած լինելով, չկարողացավ Հռոմայեցիների գնդերը պարապեցնել Խոսրովին օժանդակելու համար, բայց նրան օգնեց գրով—հրամայելով, որ բոլոր կողմերից նրան նպաստեն։ Այսպիսի հրաման ստանալով՝ նրան օգնության են հասնում Եգիպտոսից և անապատից սկսած մինչև Պոնտոսի ծովեզրյա կողմերը։ (Խոսրովը) այսքան բազմություն ձեռք բերելով՝ դիմում է Արտաշիրի վրա, ճակատամարտ տալով նրան ստիպում է փախչել և խլում է նրանից Ասորեստանը և մյուս արքայանիստ աշխարհները։

Դարձյալ պատգամավորներ է ուղարկում իր տոհմային Պարթև և Պահլավիկ ազգերին և քուշանաց աշխարհի բոլոր զորքերին, որ գան իր մոտ, Արտաշիրից վրեժ առնելու, և (հետո) ինքը նրանցից արժանավորին կթագավորեցնեն, որպեսզի տերությունը նրանց ձեռքից դուրս չգա։ Իսկ նրանք, վերը հիշված Ասպահապետի և Սուրենի Պահլավները, չհամաձայնեցին, որի պատ-

ճառով խոսրովը մեր աշխարհը վերադարձավ, ոչ այնչափ ուրախանալով տարած հաղթության վրա, որքան ցավելով իր ազգականների հետ կանգնելու համար։ Այս ժամանակ նրա մոտ են հասնում մի քանիսն այն պատգամավորներից, որոնք գնացել էին ամենապատվավոր ապգի մոտ, աշխարհի խորքերը, բուն Բահլը, և նրան լուր բերին, թե քո ազգական վեհաճանը իր ցեղով, Կարենյան Պահլավով, Արտաշիրին չհնազանդեց, այլ քո կոչին անսալով, գալիս է քեզ մոտ։

ՀԳ

ԽՈՍՐՈՎԻ ԿՐԿԻՆ ՀԱՐՁԱԿՎԵԼԸ ԱՐՏԱՇԻՐԻ ՎՐԱ՝ ԱՌԱՆՑ ՀԻՈՄԱՑԵՑԻՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ

Խոսրովը թեպետ շատ ուրախացավ, լսելով իր ազգականների գալստյան լուրը, բայց այս ուրախությունը երկար չտևեց, որովհետև շուտով հասավ բոթը, թե Արտաշիրն անձամբ միաբանած զորքերով հետամուտ է եղել և կոտորել է Կարենյան Պահլավի ցեղը, բոլոր արուներին ոչնչացնելով, երիտասարդներից սկսած մինչև կաթնակերները, բացի մի երեխայից, որին ազատեց նրանց տանը հավատարիմ մեկը Բուրդ անունով և փախցրեց Քուշանաց աշխարհը և հանձնեց նրա մի քանի հզոր ազգականներին։ Արտաշիրը շատ չանաց ու խնդրեց, որ այդ երեխան իր ձեռքը տան, բայց չհաջողվեց, որովհետև ազգականները միաբան (մերժեցին), այնպես որ Արտաշիրն ակամայից երդվեց, որ երեխային վտանգ չի հասնի։ Այս առիթով պարսիկները բյուր առասպելներ շինեցին նրա մասին, որ անբան (անասուններն) սպասավորելիս են եղել երեխային։ Սա Պերոզամատն է, Կամսարականների ցեղի նախնին, որի մասին իր տեղում կպատմենք։

Բայց մենք (դառնանք այն անցքերին), որ տեղի ունեցան Կարենյան Պահլավի ցեղի կոտորածից հետո, որի վրեժը պահանջեց խոսրով թագավորը ոչ թույլ չափով։ Թեպետ և Փիլիպպոսը վախճանվել էր և Հռոմայեցիների թագավորությունը շփոթության մեջ էր ընկել և մեկը մյուսի ձեռքից խլում էին տերությունը կարճ ժամանակով, ինչպես էին Դեկիոս, Գալլոս և Վաղերիանոս կայսրները, որոնք խոսրովին չօգնեցին, բայց նա իր զորքերով և Նրան հարած ուրիշ սիրելիներով և հյուսիսային ազգերի օգնու-

թյամբ Արտաշիրին հաղթեց և հալածելով քշեց մինչև Հնդկաց աշխարհը։

ՀԳ

ԱՆԱԿԻ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՀՂԱՓՈՒՄԸ

Այսպես Արտաշիրը խոսրովից մինչև Հնդկաց աշխարհը փախչելով և շատ նեղվելով՝ մեծամեծ խոստումներ էր անում նախարարներին, թե մեկն իրեն աղատի նրանից կամ դեղերի միջոցով կամ գաղտնապես սրով սպանելով. զանազան տեսակ պատիվներ էր խոստանում։ «Մանավանդ ձեզ, պարթևազուններիդ, ասում է նա, կարծես ավելի հեշտ կլինի նրա դեմ դավ սարքել սիրո պատրվակով. աղգականության պատճառով նա ձեղ կվստահանա և կպատրվի»։ Նրանց խոստանում էր վերադարձնել բուն պարթևական տունը, որ կոչվում էր Պահլավ, արքայանիստ Բահլ քաղաքը և ամբողջ Քուշանաց երկիրը։ Նաև խոստանում էր թագավորական ձև և պատիվներ, Արյաց աշխարհի կեսը և իր երկրորդը լինել իր ձեռքի տակ։ Այս խոստումներից հրապուրվելով՝ Անակը, որ Սուրենյան Պահլավի ցեղից էր, հանձն է առնում խոսրովին սպանել։ Եվ կեղծելով, թե գաղթում է, փախչում է Արտաշիրից. նրան ձևի համար հետամուտ են լինում Պարսից զորքերը և իբրև թե փախցնելով քշում են Ասորեստանով, բերում հանում են Ատրպատականի սահմաններին մոտ Կորդուքի միջով։ Մեծն խոսրովը ուտեցոց գավառում այս բանը լսելով՝ կարծում է, թե Կարենյաններն են եկողները և մի գունդ է ուղարկում Անակին օգնության։ Սրանք Անակին պատահելով՝ թագավորի հրամանով նրան տանում են Արտազ կոչված գավառը, մի դաշտավայր տեղ, որտեղ հայտնեցին մեր մեծ և սուրբ Թադեոս առաքյալի նշխարները։

Այստեղ ես հիշում եմ սքանչելի ծերի[212] զրույցը, որ ասում էր. «Նախնիքներից ունեմ այս զրույցը, որոնց հիշատակությունը անցել է հորից որդուն, ինչպես Ոլիմպիոդորի զրույցները Տարոնի և Սիմ լեռան մասին»։ Արդ՝ երբ Անակ ապրում էր Արտազի դաշտում, նրա գիշերելու տեղը խորանի ներսի դին, պատահեց սուրբ առաքյալի գերեզմանի մոտ անկողինը, և ասում են, այստեղ է հղություն առել մեր սուրբ և մեծ Լուսավորիչը։ Ուստի և

նույն առաքյալի շնորհն ստացավ նա, որ նրա հանգստարանի մոտ գոյություն գտավ և նրա հոգևոր մշակության պակասը լրացրեց։

Անակի Հայաստան գալուց երկու տարի անցած՝ երրորդում նա սպանում է Խոսրովին, որ թագավորեց քառասուն և ութ տարի։ Ինքը (Անակը) և բոլոր իրայինները մեռնում են. աստծու նախախնամությունը պահում է միայն սրան, որ, կարելի է ասել, աստծու կամքով և առաքյալի շնորհիվ ստեղծվեց կամ լուսավորվեց մոր արգանդում, որին և տվեց նա իր առաքելական շնորհը։ Իսկ այս զրույցներից մնացածները քեզ կպատմի Ագաթանգեղոսը։

ՀԵ

ԿԱՊԱԴՈՎԿԱԿԱՆ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԵՐՄԵԼԻԱՆՈՍԻ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կապադովկական Կեսարիայի Փերմելիանոս եպիսկոպոսը[213] աքանչելի էր ուսումնասիրությամբ, որ տղայության հասակում Որիգինեսի մոտ գնաց ուսանելու։ Նա շատ գրվածքներ գրեց, որոնցից մեկն է պատմությունը եկեղեցու հալածանքի, որ նախ ծագեց Մաքսիմիանոսի և Դեկոսի[214] ժամանակ և վերջը՝ Դիոկղետիանոսի օրերում, կցելով նաև թագավորների գործերը։ Այս գրքում նա ասում է, թե Աղեքսանդրացիների տասնվեցերորդ եպիսկոպոսն եղավ Պետրոսը, որ նահատակվեց հալածանքի իններորդ տարում։ Նույնպես գրում է, թե մեր աշխահում էլ շատերը նահատակվեցին Խոսրովի ձեռքով և նրանից հետո ուրիշները ուրիշներից։ Բայց որովհետև հավաստի և կարգին չի պատմում, ոչ էլ անուններն է նշանակում և նահատակության տեղերը, ուստի մենք էլ կարևոր չհամարեցինք կրկնել։ Նույնպես գրում է, թե Սևերոսի որդի Անտոնինոսը պատերազմել է Միջագետքում Պարսից վաղարշ թագավորի հետ և մեռել է Եդեսիայի և Խառանի միջև, իսկ մեր Խոսրովը ոչ մեկի կողմը չի անցել։

Իսկ ինչ որ նա պատմում է Խոսրովի մահից հետո մինչև Տրդատի թագավորելը, անիշխանության տարիների մասին, մենք ստույգ համարելով կրկնում ենք քեզ համար համառոտ խոսքերով։ Իսկ ինչ որ կատարվել է Տրդատի թագավորության ժամա-

նակ և նրանից հետո, մենք ոչ անփութությամբ և անղգուշությամբ վրիպելով և ոչ կամավոր սխալով նրա մեջ պատմություններ սարքելով, այլ հետևելով Հունաց դիվանների մատենագիրների հիշատակություններին, և սրանց նմանությամբ իմաստուն և հնախոս բանասեր մարդկանց հաղորդումներին, ստույգ տեղեկացանք և արդարապես քեզ պատմեցինք։

ԼԶ

ԱՐՏԱՇԵՐԻ ՄԵՋ ՎՐԱ ԴԻՄԵԼԸ ԵՎ ՏԱԿԻՏՈՍԻՆ ՀԱՂԹԵԼԸ

Նույն մարդն ասում է, թե Խոսրովի սրախողխող լինելուց հետո Հայոց նախարարները միաբանելով՝ իրենց օգնության են կանչում Փոյուգիայում գտնվող Հունաց զորքերը, պարսիկներին դիմադրելու և Հայոց աշխարհը պաշտպանելու համար, և իսկույն իմաց տվին Վաղերիանոս կայսրին։ Բայց որովհետև գոթերը Դանուբ գետն անցնելով շատ դավառներ գերեցին և Կյուկղապի կղզիները[215] կողոպտեցին, ուստի Վաղերիանոսը[216] չի կարողանում մեր աշխարհին հովանավորել նաև նրա կյանքն էլ կարճ է տևում, և թագավորությունն առնում է Կդավդիոս և նրանից հետո Ավրելիանոս, արագ-արագ իրար հաջորդելով, նույնիսկ ամիսներով թագավորեցին Կյունտոս և Տակիտոս և Փղորիանոս եղբայրները։ Այս պատճառով Արտաշիրը համարձակաբար արշավեց մեր երկիրը, Հունաց զորքերը փախցրեց և մեր աշխարհի մեծագույն մասը գերելով ավերակ դարձրեց։ Հայոց նախարարները Արշակունյաց ցեղի հետ նրանից (խուսափելով) գաղթում ապավինում էին հույներին. սրանցից մեկն էր և Արտավազդ Մանդակունին, որ Խոսրովի Տրդատ որդուն առնելով հասցնում է կայսեր դուռը։ Ուստի Տակիտոսը հարկադրված դալիս է Արտաշիրի վրա պոնտացոց կողմերը, իսկ իր եղբոր Փղորիանոսին ուրիշ զնդով արձակում է դեպի Կիլիկիա։ Իսկ Արտաշիրը Տակիտոսին հասնելով՝ նրան փախցնում է, որ և իրայիններից սպանվում է պոնտացոց Քանյուքում[217], այսինքն Խաղտիքում. այսպես և նրա Փղորիանոս եղբայրն (սպանվում է) Տարսոնում ութսուն և ութ օր հետո։

ԽԲ

ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ԽԱՂԱՂՈՒԹՅԻՒՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ ԵՎ ԱՐՏԱՇԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՐԵԿԱՐԳ ՊԱՀԵԼԸ ԱՆՇԵՆԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Բայց հոյների վրա թագավորեց Պռոբոսը և Արտաշիրի հետ խաղաղություն կնքելով՝ մեր աշխարհը բաժանում է, սահմանացույց փոսեր կտրելով։ Արտաշիրը նվաճեց նախարարական ցեղերը, զաղթածներին հետ դարձրեց, ամուր տեղեր ապավինածներին ներքև իջեցրեց, բացի Ամատունյաց ցեղից մի նախարարից, Օտա անունով, որ Սյկունյաց ցեղին փեսա էր և սնուցանում էր Խոսրովի դուստր Խոսրովիդուխտին, Անի ամրոցում իբրև մի որջում հանդարտ թաքնվելով։

Իսկ Արտաշիրը գնդեցիկ կարգավորում է Հայոց աշխարհը, վերականգնում է նախկին կարգերը։ Նաև այն Արշակունիներին, որոնք հրաժարեցրած էին թագից և Այրարատում բնակվելու իրավունքից, նա նույն տեղերում հաստատում է՝ եկամուտներով և ուտեստով, ինչպես որ առաջ էին։ Մեհյաններին պաշտամունքն էլ ավելի զարգացնում է, այլև հրամայում է անշեջ պահել Որմզդական հուրը Բագավանի բագինի վրա։ Բայց այն արձանները, որ Վաղարշակ շինել ավեց իր նախնիքներին պատկերներով, ինչպես և արեգակի և լուսնի պատկերներն Արմավիրում, որոնք Արմավիրից փոխադրվեցին Բագարան և նորից Արտաշատ՝ Արտաշիրը հրամայում է փշրել։ Մեր երկիրը նա հարկատու է դարձնում և ամեն բանում իր անունն է հաստատում։

Նաև Արտաշեսի հաստատած սահմանները, դեսնի մեջ քարեր կանգնեցնելով, նա նորոգեց և իր անունով կոչից Արտաշիրական։ Նա մեր աշխարհը կառավարեց պարսիկ գործակալների ձեռքով, ինչպես իր աշխարհներից մեկը, քսան և վեց տարի և նրանից հետո նրա որդին, որ կոչվեց Շապուհ, այսինքն արքայի որդի, մնկ տարի, մինչև Տրդատի թագավորելը։

ԽԳ

ՄԱՆՈՒԱՇԱՆՆԵՐԻ ՑԵՂԻ ԿՈՏՈՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱՇԵՐԻ ՁԵՌՔՈՎ

Բայց Արտաշիրը լսել էր, թե հայոց նախարարներից մեկը Խոսրովի որդիներից մեկին առնելով փախցրել ազատել է, կայսր դուռը հասցնելով։ Եվ քննելով, թե ո՞վ է այդ մարդը, իմա-

ցավ, որ Արտավազդն է, Մանդակունիների ցեղից. ուստի հրամայեց նրա բոլոր ցեղը կոտորել ոչնչացնել։ Որովհետև երբ հայերը Արտաշիրից (խուսափելով) գաղթեցին, Մանդակուններն ևս մյուս նախարարական ցեղերի հետ գաղթեցին, իսկ երբ Արտաշիրը մյուսներին նվաճեց, նրանք էլ հետ դարձան և բոլորը սրով կոտորվեցին։ Բայց Տաճատ անունով մեկը, որ Աշոցան ցեղից էր, հայկազն Գուշարի զարմից, դողացավ մի գեղեցկադեմ կույս՝ Արտավազդի քույրերից և Կեսարացոց քաղաքը փախցնելով, ազատեց կոտորածից և հետն ամուսնացավ նրա չքնաղ կերպարանքի պատճառով։

ՀԹ

ՏՐԴԱՏԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԾՆԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻՆ

(Փերմելիանոսը) պատմում է Տրդատի քաջագործությունների մասին. մանկության հասակում սիրում էր ձի հեծնել, կորովի ձիավարում էր, աչողակ էր վինաշարժության մեջ, սովորել էր պատերազմական արվեստը։ Հետո պեդոպոնեսացոց Հիփիտեի[218] հրամանի համաձայն՝ կրկեսի մրցության մեջ գերազանցեց Հռոլացի Կղիտոստրատոսից, որ միայն վզից բռնելով հաղթում էր, նաև արգիացի Կերասոսից, որովհետև սա եղան կճղակը պոկեց, իսկ (Տրդատը) երկու վայրենի ցուլերի եղջյուրը մի ձեռքով բռնելով պոկեց և վիզը ոլորելով չախչախեց։ Եվ մեծ կրկեսում ձիարշավի ժամանակ կամենալով կառքը քշել, հակառակորդի ճարպկությունից վեր ընկավ. նա իսկույն կառքից բռնեց, կանգնեցրեց, որի վրա բոլորը զարմացան։ Եվ երբ Պրորոսը պատերազմում էր Գոթերի հետ, սաստիկ սով եղավ, և մթերքների պակասության պատճառով զորքերը նրա դեմ ելան և սպանեցին, նույնպես դիմեցին բոլոր իշխանավորների վրա։ Իսկ Տրդատը մեծ դիմադրելով ոչ որի թույլ չտվեց մտնել Լիկիանոսի[219] ապարանքը, որի մոտ ինքը (ծառայում) էր։

Բայց Կարոսը իր Կարինոս և Նոմերիանոս որդիների հետ թագավորելով՝ զորք ժողովեց և պատերազմեց Պարսից թագավորի հետ, որին հաղթելով Հռոմ դարձավ։ Ուստի Արտաշիրը շատ աղքեր օգնական դարձնելով և Տաճկաստանի մեծ անապատը իրեն քիկունք շինելով՝ նորից ճակատեց Հռոմայեցիների հետ երկու

տեղ, Եփրատի այս ու այն կողմում։ Այս (պատերազմում) Կարոսը[220] սպանվեց Հռինոնում։ Նույնպես և Կարինոսը, որի հետ էր և Տրդատը, գնաց անապատը Կոռնակի դեմ և սպանվեց ինքը զորքի հետ միասին, մնացածներն էլ փախուստի դիմեցին։ Իսկ Տրդատի ձին վիրավորված լինելով, չկարողացավ փախստականների հետ գնալ, այլ առնելով իր զենքերն ու ձիու սարքը, լողալով անցավ լայնատարած ու խոր Եփրատ գետը և հասավ իրենց բուն զորքերի մոտ, որտեղ գտնվում էր Լիկիանոսը։ Նույն օրերում սպանվում է նաև Նումերիանոսը Թրակիայում և թագավորությունն ստանում է Դիոկղետիանոսը։ Իսկ ինչ գործեր որ սրա ժամանակ կատարել է Տրդատը, քեզ ավանդում է Ագաթանգեղոսը։

Զ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԾՆՎԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ ԱՐՏԻԹԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՂԹԻՑ, ՈՐ ԳՐԵԼ ԷՐ (ԻԲՐԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ) ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՄԻԱՅՆԱԿՅԱՑ ՄԱՐԿՈՍԻ ՀԱՐՑՄՈՒՆՔԻՆ[221]

Բուրգար անունով մեկը Պարսկաստանից, ոչ փոքր և աննշան մարդ, Պարսկաստանից դուրս գալով եկավ Գամիրքի կողմերը և պանդխտեց Կեսարիայում։ Հավատացյալներից նա կին առավ, Սոփի անունով, որ Եվթաղիոս անունով մի հարուստի քույրն էր, և հետ դարձավ՝ նորից Պարսկաստան գնալու իր կնոջ հետ։ Եվթաղիոսը նրա հետևից գնալով՝ համոզեց և արգելեց (որ չգնա)։ (Սոփին) մեր Լուսավորչի ծննդին պատահելով՝ ծծմայրի պաշտոն է ընդունում. իսկ երբ աղետը պատահեց, Եվթաղն առավ իր քույրը, նրա մարդու և երեխայի հետ և դարձավ Կապադովկացոց աշխարհը։ Բայց այս բոլորը գործում է աստծու նախախնամությունը, ինչպես ես ուզում եմ մտածել, մեր փրկության ճանապարհը (պատրաստելու համար), ապա թե ոչ, ի՞նչ հույսով պահլավիկ երեխային հռոմայեցիների իշխանության մեջ էին սնուցանում և քրիստոնեական հավատի մեջ կրթում։

Երբ մանուկը չափահաս դարձավ, մի հավատացյալ մարդ, Դավիթ անունով, նրան փեսայացրեց, նրան կին տալով իր Մարիամ անունով աղջկը։ Իսկ երեք տարի հետո, երբ երկու որդի ունեցան, փոխադարձ համաձայնությամբ իրարից բաժանվեցին ու հեռացան։ Մարիամը կրտսեր երեխայի հետ կանանց վանքը

մտնելով կրոնավոր դարձավ, և այս երեխան չափահաս դառնալով հետևող եղավ մի միայնակեցի, Նիկոմաքոս անունով, որ նրան անապատ ուղարկեց։ Իսկ անդրանիկը մնաց դայակների մոտ, որ հետո աշխարհի կարգ մտավ՝ ամուսնացավ։ Իսկ նրանց հայրը, Գրիգորը անցավ գնաց Տրդատի մոտ՝ հոր պարտքը հատուցանելու, կամ իսկապես ասելով՝ վարժվելու և պատրաստվելու մեր աշխարհի առաքելության և քահանայապետության, ինչպես և մարտիրոսության վիճակին։

Բայց հիրավի սքանչելի հոր ավելի զարմանալի որդիներ եղան. որովհետև ոչ նա իր որդիներին փնտրեց, երբ Տրդատի հետ վերադարձավ, ոչ էլ նրանք նրա մոտ եկան, ո՛չ միայն հալածանքի երկյուղից, այլև ո՛չ՝ երբ նրանց հայրը քահանայացավ ու փառավորվեց, նրանք երևան եկան ու փայլեցին։ Ուստի նա էլ երկար չմնաց կեսարիայում, այլ շուտով Սերաստացոց քաղաքը դառնալով, այնտեղ մնում էր՝ վարդապետության համար նյութ հավաքելու։ Բայց նույնիսկ եթե երկար մնալու լիներ կեսարիայում՝ չէին անի ոչինչ, ինչ որ կարելի էր մարքով անցնել, այլ միայն դիտում էին անապատն ու անանցականը. նրանք պատվի հետևից չէին ընկնում, այլ պատիվն էր նրանց հետևից գնում, ինչպես քեզ ասում է Ագաթանգեղոսը։

ՁԱ

ԹԷ ՈՐՏԵՂԻՑ ԵՎ ԻՆՉՊԻՍ Է ԾԱԳԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ՑԵՂԸ

Արտաշիրը, Մասյանի որդին, վախճանվելով, Պարսից թագավորությունը թողնում է իր Շապուհ որդուն։ Ասում են, որ սրա ժամանակ է Հայաստան եկել Մամիկոնյանների ցեղի նախնին, արևելյան հյուսիսային քաջատոհմիկ և պիտավոր աշխարհից, Ճենաստանից, որ ես բոլոր հյուսիսային աշխարհների մեջ առաջինն եմ համարում նրանց մասին այսպիսի վրույց կու։

Արտաշիրի կյանքի վերջին տարիներում եղել է Արբոկ անունով մի Ճեն-քակուր[222]—նրանց լեզվով այսպես է կոչվում թագավորական տիտղոսը։ Սա ունեցել է երկու հայակորդի, Բզդոխ և Մամգոն անունով, որոնք եղել են մեծ նախարարներ։ Բզդոխը Մամգունի մասին չարախոսում է, և Ճենաց թագավորը հրամայում է Մամգունին սպանել։ Մամգունն այս լսելով՝ թա-

պալատի կոչին չի գալիս, այլ իր աղխով փախչում ապավինում է Պարսից Արտաշիր թագավորին։ Արքունի պատգամավորներ է ուղարկում նրան պահանջելու, և որովհետև Արտաշիրը չի համաձայնում (տալ), Ճենաց թագավորը պատրաստվում է նրա դեմ պատերազմի։ Արտաշիրը շատ շուտով մեռնում է և թագավորում է Շապուհը։

Արդ՝ Շապուհը թեպետ Մամգունին չի հանձնում նրա տիրոջ ձեռքը, բայց նույնպես չի թողնում Արյաց աշխարհում, այլ բոլոր աղխովն իբրև աքսորական ուղարկում է Հայաստան իր գործակալների մոտ։ Եվ պատգամ է ուղարկում Ճենաց թագավորին, ասելով. «Քո դժվարը թող չգա, որ ես Մամգունին չկարողացա քո ձեռքը տալ, որովհետև հայրս նրան երդվել էր արեգակի լույսով. այլ որպեսզի դու միամիտ լինես՝ ես նրան իմ աշխարհից հալածեցի արևմտյան կողմը, աշխարհի ծայրը, որ նրա համար մահի հավասար է. ուրեմն թող իմ և քո մեջ պատերազմ չլինի»։ Եվ որովհետև, ինչպես ասում են, աշխարհիս երեսին ապրող բոլոր ազգերից ամենախաղաղասերը Ճենաց ազգն է, (թագավորը) հաշտվում է։ Սրանից էլ պարզ երևում է, որ Ճենաց ազգը հիրավի խաղաղասեր է և կենսասեր։

Նրանց աշխարհն սքանչելի է ամեն տեսակ պտուղների առատությամբ, պարզարված է գեղեցիկ բույսերով, ունի շատ սիրամարգ[223], արտադրում է առատ քրքում և մետաքս, անչափ շատ կան այնտեղ համույրներ, հրեշներ և էշայծյամ կոչվածներ։ Այնտեղ, ասում են, ընդհանուրի կերակուր են կազմում փասյանը, պորը և նմանները, որոնք մեզ մոտ պատվական և քչերին մատչելի կերակուրներ են։ Իսկ ակնեղենների և մարգարիտների հաշիվը, ասում են, չգիտեն։ Եվ այն զգեստները, որ մեզ մոտ պատվական է և քչերին մատչելի, նրանց մոտ սովորական զգեստ է։ Այսքան Ճենաց աշխարհի մասին։

Իսկ Մամգունը ոչ իր կամքով Հայաստան գալով՝ պատահեց Տրդատի գալստյանը, և Պարսից զորքերի հետ (Պարսկաստան) չդարձավ, այլ իր բոլոր աղխով Տրդատին ընդառաջ գնաց մեծ ընծաներով։ Տրդատը նրան ընդունեց, բայց հետը պատերազմի չտարավ Պարսից երկիրը, այլ բնակության տեղ տվեց նրա աղխի համար և ապրուստի միջոց, բավական երկար տարիներ տեղից տեղ փոխելով։

ՏՐԴԱՏԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱԳԱՎՈՐ ԵՎԱԾ ԺԱՄԱՆԱԿ, ՆԱԽՔԱՆ ՀԱՎԱՏՑԱԼԸ

Որովհետև պատմությունն առանց ժամանակագրության բաւական չէ, ուստի մանրամասն հետազոտությամբ պտանք, որ Տրդատ թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում, և այս կողմերն եկել մեծ զորքով։ Երբ նա կեսարիա հասավ, նախարարներից շատերը նրան ընդառաջ դնացին։ Եվ երբ հասավ մեր աշխարհը, տեսավ, որ Օտան սնուցել է իր խոսրովիդուխտ քրոջը և պահպանել է դանձերն ու ամրոցը մեծ համբերությամբ. և իսկապես էլ նա համբերող էր, ժուժկալ և շատ խելացի, որովհետև նա թեպետ աստծու մասին ճշմարտությունը չդիտցավ, բայց կուռքերի ստությունը հասկացավ։ Նրա պես էր և նրա սանը, խոսրովիդուխտը, մի օրինավոր համեստ կույս, և չուներ բոլորովին անդուռն բերան, ուրիշ կանանց նման։

Տրդատը Հայաստանի հազարապետ է նշանակում Օտային և շնորհակալությամբ պատվում է նրան, մանավանդ պատվում է իր դայեկորդուն, Արտավազդ Մանդակունուն, որ պատճառ եղավ իր փրկության և հայրենական փառքին հասնելուն. ուստի նրան է հանձնում Հայոց զորքերի սպարապետությունը։ Նույն պատճառով նրա քրոջ մարդուն, Տաճատին, Աշոցք գավառի (տեր) է դարձնում։ Սա էր, որ վերջինը հայտնեց իր աներոջ՝ Արտավազդին, և սա թագավորին, նախ՝ որ Գրիգորն Անակի որդին է, և հետո՝ Գրիգորի որդիների մասին. այս բաները նա իմացել էր Կեսարացոց քաղաքում ապրած լինելով։

Իսկ քաջ Տրդատը արագ-արագ բազմաթիվ ճակատամարտեր տալով նախ Հայաստանում և ապա Պարսկաստանում՝ ինքն անձամբ տանում էր հաղթություն։ Մի անգամ նա ավելի (մեծ քաջություն ցույց տվեց) քան հնումը Տղիանանը[224] և իր նիզակը կանգնեցրեց նույնքան թվով վիրավորների օգնական։ Մի երկրորդ անգամ՝ Պարսից կորովի զորականները փորձով դիտենալով հսկայի սաստիկ ուժը և կուռ զրահների ամրությունը, բազմաթիվ նետեր արձակելով ու ձին վիրավորելով սատկեցրին, որ դետին փռվելով թագավորին վեր է գցում։ Իսկ նա ոտքի կանգնելով և հետիոտն հարձակվելով, թշնամիներից շատերին դետին է պլորում և մնկի ձին բռնելով արիաբար թռչում է վրան։ Մի երկրորդ

անդամ նա կամավորապես ձիուց իջավ և հետիոտն հարձակվելով՝ սրով ցրվում է փղերի նրամակաները։ Այսպիսի քաջագործություններով բավական երկար մնաց Պարսկաստանում և Ասորեստանում, և Տիգրոնից էլ այն կողմն անցավ։

ԶԳ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏՐԴԱՏԸ ԿԻՆ Է ԱՌՆՈՒՄ ԱՇԽԵՆԻՆ ՆՎ ԿՈՍՏԱՆԴԻՆԸ ՄԱՔՍԻՄԻՆԱՅԻՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ (ԿՈՍՏԱՆԴԻՆ) ՀԱՎԱՏՔԻ ԵԿԱՎ

Տրդատը մեր աշխարհը վերադառնալով՝ Սմբատ սպասեին, Բագարատի հորը, ուղարկում է՝ իրեն կին բերելու Աշխադարի դստերը, Աշխեն կույսին, որ հասակով թագավորից պակաս չէր։ Հրամայում է նրան գրել Արշակունի, ծիրանիները հագցնել և մաղ կապել, որպեսզի թագավորին հարսնանա։ Նրանից ծնվեց խոսրով որդին, որ իր ծնողների հասակին համապատասխան չէր։

Նույն օրերում պատահում է նաև Մաքսիմինայի, Դիոկղետիանոսի դստեր հարսանիքը Նիկոմիդիայում, որին փեսայանում է Կոստանդիանոս կեսարը, Հռոմի Կոստոս թագավորի որդին, որ ծնված էր ոչ թե Մաքսիմիանոսի դստերից, այլ պոռնիկ Հեղինեից։ Այս Կոստանդիանոսը հարսանիքի ժամանակ բարեկամացել էր մեր Տրդատ թագավորի հետ։ Քիչ տարիներ հետո Կոստանդը մնռնում է, և Դիոկղետիանոսը նրա տեղ է ուղարկում նրա որդի և իրեն որդիացած Կոստանդիանոսին։

Սա թագավորելուց առաջ, քանի որ դեռ կեսար էր, կռվի մեջ պարտություն կրեց և մեծ ամոթության մեջ քնելով, քնի մեջ նրան երևաց երկնքից՝ աստղերից (բաղկացած) խաչ, շուրջը դրված՝ «Սրանով հաղթի՛ր»։ Որը (խաչը) նա պատերազմական նշան շինելով[225] և (զորքի) առջևից տանելով՝ պատերազմներում հաղթեց։ Բայց հետո հրապուրվելով իր Մաքսիմինա կնոջից, Դիոկղետիանոսի դստերից, նկղեցու դեմ հալածանք բացեց և շատերին նահատակեց, և այս հանդգնության պատճառով ինքն էլ բոլոր մարմնով ապականվեց նլեփանդական[226] բորոտությամբ։ Արիողական կախարդները և մարսիկյան բժիշկները[227] չկարողացան բժշկել, ուստի Տրդատին խնդրեց՝ Պարսկաստանից և Հնդկաստանից հմայողներ ուղարկել, բայց նրանք էլ օգուտ չբերին։ Այս ժամանակ մի քանի քրմեր, դևերից իրատավելով, հրամայեցին, որ

բաղմաթիվ փոքր երեխաներ մորթել տա ավազանի մեջ և նրանց տաք արյունի մեջ լողանա, որով կառողջանա։ (Կոստանդիանոսը)՝ երբ լսեց երեխաների լացը, նրանց մայրերի ողբը, մարդասիրությամբ գթաց, նրանց փրկությունն ավելի լավ համարելով, քան իրենը։ Սրա փոխարեն նա ընդունում է աստծուց.— երազի մեջ առաքյալներից հրաման ստացավ, որ (բորոտությունից) կմաքրվի՝ կենսատու ավազանում լվացվելով Հռոմի Սեղբեստրոս եպիսկոպոսի ձեռքով, որ նրա հալածանքից փախել ապրում էր Սեբրապտիոն լեռնում։ Նրանից նա ուսավ և հավատաց[228], և աստված բոլոր բռնավորներին նրա առաջ ոչնչացրեց, ինչպես պատմում է քեզ Ագաթանդեղոսը։

ՁԴ

ՍԼԿՈՒՆԻՆԵՐԻ ՐՆԱՋՆՋՈՒՄԸ ՃԵՆԱՁՆ ՄԱՄԳՈՒՆԻ ՁԵՌՔՈՎ

Երբ Պարսից Շապուհ թագավորը պատերազմներից հանգըստացավ, Տրդատի Հռոմ Կոստանդիանոսի մոտ գնալիս, Շապուհի միտքն այլևս զբաղված չլինելով՝ չարիքներ է նյութում մեր աշխարհի վրա։ Նա բոլոր հյուսիսային (ազգերին) թովեց և գրգռեց, որ արշավեն Հայաստան, ժամադիր լինելով, որ ինքն ևս մյուս կողմից կգա Արյաց գորքերով։ Նրա խոսքերից հրապուրվելով՝ Սլկունյաց ցեղի Սղուկ նահապետն սպանեց իր փեսային, Ծերացած Օտային, Ամատունյաց ցեղից, որ Խոսրովիդուխտի, Տրդատի քրոջ սնուցանողն էր։ Տրդատը շատ շուտով արևմուտքից վերադառնալով այս բոլորը լսեց, և գիտնալով, որ Շապուհը չեկավ ինչպես ժամադրվել էր, շարժվեց դիմեց հյուսիսականների վրա։ Իսկ Սլկունյաց ցեղի նահապետն ամրացել էր Ողական կոչված ամրոցում, ապավեն ունենալով Սիմ կոչված լեռան բնակիչներին։ Նա թագավորին ընդդիմանալով վրդովում էր երկիրը և լեռան մոտերը ոչ ոքի չէր թողնում որևէ գործով սքաղվելու (Տրդատ) թագավորը դիմեց Հայաստանի բոլոր նախարարություններին, ասելով. «Ով որ ինձ մոտ բերի Սլկունյաց ցեղի նահապետին, հավիտենական իշխանությամբ նրան կտամ Սլկունյաց ցեղի բոլոր գյուղերը, դաստակերտները և նրանց բոլոր իշխանությունը»։ Այս բանը հանձն առավ ճենազնյա Մամգունը։

Երբ թագավորը դիմեց Աղվանքի կողմերը հյուսիսականների վրա, Մամգունն էլ իր բոլոր ազխով գնաց Տարոնի կողմերը, իբրև

քե թագավորից ապստամբած՝ ճանապարհ ընկնելիս նա գաղտնի հետևակներ է ուղարկում և իմաց է տալիս Սլկունյաց ցեղի նահապետին, թե թագավորը գնաց Աղվանքի կողմերը։ «Թագավորը, ասում է, մեծ վտանգի մեջ է, ուստի նա Աղվանքի կողմերը գնաց՝ լեռան ստորոտներում ապրող բոլոր ազգերի հետ պատերազմելու. ուստի մեզ համար նպաստավոր ժամանակ է մտածելու և գործելու, ինչ որ կամենանք. որովհետև մտադիր եմ քեզ հետ դաշնակցել՝ թագավորից իմ կրած արհամարհանքի պատճառով»։ Սլկունյաց ցեղի նահապետը շատ ուրախանալով նրան ընդունում է ուխտի երդումով, բայց ամրոցը չի թողնում (մտնել), մինչև տեսնի, թե ո՛րքան հավատարիմ է նա երդմունքին և դաշինքին։ Իսկ հիշյալ Մամգունը ամեն կերպ ջանում է հավատարմություն ցույց տալ ապստամբին, մինչև որ գրավեց նրա վստահությունը իբրև իսկապես հավատարիմ գործակից, այնպես որ նրան իրավունք տվեց համարձակ ամրոցը մտնել և ելնել։

Շատ բաներով Սլկունյաց ցեղի նահապետին վստահեցնելուց հետո օրերից մեկում նրան հանդուգն է ամրոցից դուրս գալ և երեներ որսալ։ Երբ որսին միջամուխ են լինում, նա աղեղով խրփում է նրան թիկունքի մեջ և գետին է կործանում ապստամբին։ Եվ իսկույն իր մարդկանցով ամրոցի դուռը հասնելով՝ բերդը գրավում է, բոլոր ներսը եղողներին կապում։ Նա կամեցավ Սլկունյաց ամբողջ ցեղը ոչնչացնել և բոլորին կոտորեց, միայն երկուսը փախան ընկան Ծուփաց աշխարհը։ Իսկ Մամգունը շուտով տեղեկություն է հաղորդում թագավորին։ Տրդատն ուրախանալով հրովարտակ է գրում, որով նրան իշխանություն է տալիս այն ամենի վրա, ինչ որ խոստացել էր. նրան նշանակում է նախարար ապստամբի փոխանակ, և նրա անունով կոչում է Մամգունյան։ Բայց հրամայում է մնացած Սլկունիներին չվնասել։

ՁԵ

ՏՐԴԱՏԻ ՔԱՋԱԴՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ ԻՆՋՔԻՑ ԿԵՍ ԱՐԱՎ ԲԱՍԻԼՆԵՐԻ ԹԱԳՆԱՎՈՐԻՆ

Իսկ Տրդատ թագավորը Հայաստանի բոլոր (զորքերով) գարգարացոց դաշտն իջնելով՝ հանդիպում է հյուսիսականներին և ճակատամարտ է տալիս[229]։ Երբ երկու կողմերն իրար են խառնը-

վում, նա հսկայի նման հարձակվելով, թշնամիների բազմությունը երկուսի է ճեղքում։ Չեմ կարող նկարագրել նրա ձեռքի արագությունը, թե ի՛նչպես անհամար մարդիկ նրանից վարկվում՝ թավալվում գետին էին ընկնում, ինչպես հմուտ ձկնորսի ձկներով լիքը ցանցից ձկները գետին են թափվում ու վխտում հողի երեսին։ Բասիլների թագավորն այս տեսնելով՝ մոտ է գալիս (Հայոց) թագավորին, հանում է ձիու վրայից ջլերից հյուսված կաշեպատ պարանը և հեռվի կողմից ուժեղապես նետելով, հաջողությամբ գցում է նրա ձախ ուսից մինչև աջ կողմի անութը, որովհետև (այդ միջոցին Տրդատը) ձեռքը բարձրացրած էր՝ սրով մեկին խփելու համար. նա կրում էր վրան պինդ պահպանակներով, որի վրա նետերը նույնիսկ գիծ չէին թողնում։ (Բասիլների թագավորը չկարողանալով հսկային տեղից շարժել ձեռքով քաշելով)՝ (պարանը) իր ձիու լանջին գցեց, բայց չկարողացավ այնքան շուտ մտրակել ձին, որքան որ շուտ հսկան աճապարելով ձախ ձեռքով բռնեց պարանը և սաստիկ ուժով ցնցելով դեպի ինքը քաշեց և երկայրի սրի հաջող հարվածով կտրեց կես տրավ մարդուն և նրա հետ ձիու պարանոցն ու գլուխը։

Իսկ բոլոր զորքերը տեսնելով, թե ինչպես իրենց թագավորն ու զորավոր կռվողը միջակտուր եղավ այնպիսի ահավոր բազուկից, փախուստի դիմեցին. Տրդատը նրանց հետամուտ լինելով հալածեց մինչև Հոնաց աշխարհը։ Եվ թեպետ իր զորքին էլ փոքր հարված չհասավ և շատ մեծամեծ մարդիկ ընկան, և մեռավ Արտավազդ Մանդակունին՝ բոլոր Հայոց սպարապետը, բայց Տրդատը հայրենական կարգի համաձայն նրանցից պատանդներ առավ ու հետ դարձավ։ Այս կերպով բոլոր հյուսիսը միաբանելով՝ շատ զորք (այնտեղից) հանելով բանակ է կազմում և դիմում է Պարսից աշխարհը, Արտաշիրի որդի Շապուհի վրա, իր մարդկանցից չորս զորավար նշանակելով—վրաց առաջնորդ Միհրանին, նրան վստահանալով քրիստոնեական հավատի պատճառով, Բագարատ ասպետին, Ռշտունյաց Սանաճիրը նահապետին և Ամատունյաց Վահան նահապետին։ Բայց Միհրանի և Վրաց աշխարհի հավատալու մասին մենք դեռ պատմելու ենք։

ՆՐԱՆԵԼԻ ՆՈՒՆԵԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԼ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ

Մի կին, Նունե անունով, սուրբ Հռիփսիմյանների ցրված ընկերներից, փախչում հասնում է Վրաց աշխարհը, Մծխիթա, որ նրանց նախագահ քաղաքն էր, խիստ ճգնություններով նա բժշկության շնորհք ստացավ, որով շատ ախտավորներ բժշկեց, մինչև իսկ Միհրանի, Վրաց առաջնորդի կնոջը։ Այս առիթով Միհրանը նրան հարցրեց, թե ի՞նչ զորությամբ այդ սքանչելիքները գործում ես և նրանից լսեց Քրիստոսի ավետարանի քարոզությունը, և լսածին ախորժելով, կովատանությամբ պատմեց իր նախարարներին։ Շուտով նրան լուր հասավ այն սքանչելիքների մասին, որ Հայաստանում կատարվեցին թագավորի և նախարարների վրա, ինչպես և Նրանելի Նունեի ընկերների մասին։ Այս բաների վրա հիացած՝ նա պատմեց Նրանելի Նունեին, որից և ավելի ստույգ կերպով և մանրամասն տեղեկացավ բոլոր բաներին։

Այդ օրերում դեպք եղավ, որ Միհրանը որսի գնաց և մոլորվեց լեռների ժխորակոխ տեղերում, օդի, բայց ոչ աչքերի խավարելուց, ինչպես որ գրված է. «խոսքով մեզ է բերում»[230], կամ՝ «ցերեկը մթնեցնում դիշեր է դարձնում»[231]։ Այսպիսի մի խավար պատեց Միհրանին, որ առիթ դարձավ նրա մշտնջենավոր լուսով լուսավորվելուն։ Որովհետև նա ղարհուրեց, հիշելով Տրդատի մասին լսածը, թե երբ ճանապարհ ընկավ, կամենալով որսի գնալ՝ աստծուց հարվածներ հասան նրան. նա կարծեց, թե իրեն էլ այդպիսի բան պիտի պատահի։ Մեծ երկյուղից պաշարված՝ նա խնդրից աղոթքով, որ օդը լուսավորվի և ինքը խաղաղ (տուն) վերադառնա, խոստանալով պաշտել Նունեի աստծուն։ Խնդրածը դտնելով՝ ասածը կատարեց։

Իսկ Նրանելի Նունեն հավատարիմ մարդիկ խնդրելով՝ ուղարկեց ս. Գրիգորի մոտ, թե ինչ կհրամայե այնուհետև անել, որովհետև վրացիները հոժարությամբ ընդունեցին ավետարանի քարոզությունը։ Նա հրաման ստացավ՝ կուռքերը կործանել, ինչպես արել էր և ինքը, և կանգնեցնել պատվական խաչի նշանը, մինչև որ աստված հովիվ տա նրանց առաջնորդելու։ (Նունեն)

իսկույն կործանեց ամպրոպային Արամազդի արձանը, որ քաղաքից հեռու էր դրված, և մեծ գետն անցնում էր երկուսի միջով։ (Այդ արձանին) սովոր էին երկրպագել առավոտներն յուրաքանչյուրն իր տան կառուրից, որովհետև երևում էր նրանց դիմացը, իսկ ով որ կամենար ղոհել, անցնում էր գետը և ղոհում էր մեհյանի առաջ։

Նրա վրա հարձակվեցին քաղաքի նախարարները, թե ո՞ւմ պիտի երկրպագենք կուռքերի փոխանակ. (նունեն) ասաց, թե Քրիստոսի խաչի նշանին։ (Խաչ) շինեցին, կանգնեցրին վայելուչ բլուրի վրա, քաղաքի արևելյան կողմը, որ նույնպես բաժանված էր փոքրագույն գետով[232]։ Առավոտը բոլոր բազմությունը նրան երկրպագեց, դարձյալ ամեն մեկն իր տան տանիքից։ Բայց երբ բլուրը բարձրացան ու տեսան, որ մի տաշած փայտ է, ոչ ճարտար ձեռքի գործ, շատ շատերն արհամարհեցին ասելով, թե այդպիսի փայտով նրանց անտառը լիքն է, և թողին հեռացան։ Բայց բարերարն աստված նրանց դայթակղվելը տեսնելով, երկնքից ամպի սյուն իջեցրեց, լեռը լցվեց անուշահոտ բուրմունքով, և լսելի եղավ բազմաթիվ ոաղմոսերգուների քաղցր ձայն, և լույս ծագեց խաչի նման, փայտյա խաչի ձևով ու չափով, որ կանգնեց նրա վրա՝ տասներկու աստղով։ Ապա բոլորը հավատացին ու (այդ խաչին) երկրպագեցին, և այնուհետև նրանից բժշկական զորություններ էին կատարվում։

Իսկ երանելի Նունեն այնտեղից գնաց, որ Վրաստանի մյուս գավառներին էլ քարոզի իր անապական լեզվով, շատ հաստատակ կերպով շրջելով, առանց որևէ ավելորդի, աշխարհից և աշխարհային ամեն բանից հրաժարված, ավելի ճիշտ խոսելով՝ խաչվելով, կյանքը դարձնելով մահվան կրթության միջոց, աստծու խոսքին (բանին) խոսքով վկա դառնալով և իր հոժարությամբ պսակվելով՝ ինչպես արյունով։ Համարձակվում եմ ասել, որ նա առաքելուհի դարձած քարոզեց Կղարջքից[233] սկսած, Ալանաց և Կասբից դռների մոտով մինչև Մասքութների սահմանները, ինչպես քեզ պատմում է Ագաթանգեղոսը[234]։

Բայց մենք նորից դառնանք Տրդատի Պարսկաստանի վրա հարձակվելու պատմությանը։

ՇԱՊՈՒՀԻ ԿՐԱՑ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԿԱՄԱՅԻՑ ՀՆԱԶԱՆԴԵԼԸ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ՄԵՆԵՆ. ՏՐԴԱՏԻ ԵԿԵՑԱՆԸ ԳՐԱՎԵԼԸ ԵՎ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ԳԱԼԸ, ԵՎ ԹՆ ԱՅՍ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՓՐԿԱԿԱՆ ԽԱՉԻ ԴՅՈՒՐԸ

Բայց Տրդատը թեպետ հաղթություն էր տարել, միայն թե իր զորքի կոտորվելու և շատ նախարարների սպանվելու պատճառով չվստահացավ մենակ իր ուժերով Շապուհի հետ կռվելու, մինչև որ հասավ Հռոմայեցիների զորքերի բազմությունը, որոնք Ասորեստանի վրայով հարձակվեցին, Շապուհին փախցուտական դարձրին և ավարեցին ամբողջ երկիրը։ (Այն ժամանակ) Տրդատն էլ բոլոր իրայիններով և իր ձեռքի տակ եղած զորքերով արշավեց Պարսից իշխանության հյուսիսային կողմերը տարոնով[235] *ասպատակությամբ։*

Այս ժամանակ նրա մոտ է գալիս Կամսարը, նրա ազգականն ու հարազատը, Պերոզամատի առաջին որդին։ Այս Պերոզամատն այն տղան է, որին Բուրդը փախցնելով փրկեց՝ մինչ Արտաշիրը կոտորում էր Կարենյան Պահլավի ցեղը։ Երբ նա երիտասարդ դարձավ, Արտաշիրը նրան հաստատեց հոր պատվի մեջ և նշանակեց զորքին ղորագլուխ՝ խուժադուժ ադգերի հետ կռվելու համար, նենգությամբ մտածելով, որ այս կերպով նրան բարբարոսների ձեռքը կձգե։ Բայց նա քաջ մարդ լինելով սքանչելի կերպով վարեց պատերազմները, և երբ նա հաղթեց Վղրկին[236]*, որ նաքան էր կռվում՝ սա նվաճելով նրան կնության տվեց իր դուստրը։ Նա ուրիշ կանայք էլ առավ, Արտաշիրի մերձավորներից, բազմաթիվ որդիներ ունեցավ և զորանալով բռնաբար տիրում էր այն կողմերին։ Թեպետ նա Արտաշիրի (հպատակների) հաշվում էր, բայց նրան չտեսավ, և նրա մեռնելուց հետո չհնազանդեց նրա Շապուհ որդուն, կռվեց (նրա հետ), շատ պատերազմներում հաղթեց, բայց Շապուհի մտերիմներից թունավորվելով մեռավ։*

Այս ժամանակները մի ուրիշ Վղրկ նաքան նստեց, որ թշնամությամբ էր վարվում նրա որդու Կամսարի հետ։ Իսկ Կամսարը դժվար համարելով երկու հզոր թշնամի թագավորների միջև ապրել, մանավանդ որ եղբայրները նրա հետ չմիաբանեցին, վեր կացավ ամբողջ ընտանիքով ու ազխով եկավ մեր Տրդատ թագավորի մոտ, այնինչ նրա եղբայրները գնացին Շապուհի մոտ։ Այս Կամսարը հոր (կենդանության) ժամանակ քաջաբար

նախամարտիկ էր լինում պատերազմների մեջ, և կռվի մեջ մեկը սակրով խփում է նրա գլխին և սկավառակի մի մասը կտրում է. հետո նա դեղերով բժշկվում է, բայց գագաթի բոլորակությունը պակաս է մնում, այս պատճառով էլ կոչվել է Կամսար[237]։

Բայց Տրդատը յոթնպարսպյան եկեղեցուն տիրելով՝ թողնում է այնտեղ իր երկրորդին և վերակացուներ[238] և վերադառնում է Հայաստան, իր հետ բերելով Կամսարին՝ բոլոր նրա ունեցածով։ Իսկ Շապուհը հաղթող Կոստանդիանոսին աղաչեց հաշտություն կնքել և խաղաղություն հաստատել։ Կոստանդիանոս այս կատարեց և այնուհետև իր մորը՝ Հեղինեին ուղարկեց Երուսաղեմ՝ պատվական խաչը որոնելու, որ և գտավ փրկական քայլը հինգ բևեռների հետ միասին Հուդա անունով մի հրեայի ձեռքով, որ հետո Երուսաղեմի եպիսկոպոս դարձավ։

ԱԸ

ԼԻԿԻԱՆՈՍԻ ԿԱՊՎԵԼԸ. ԱՐՔՈՒՆՅԱՑ ՀՌՈՄԻՑ ՓՈԽԱԴԱՐՁԵԼԸ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ ասվածը բոլոր բանավորներին ուշնչացրեց Կոստանդիանոսի առաջ, սա շատ մեծ պատիվներով մեծարեց Լիկիանոսին[239], նրան կնության տվեց մոր կողմից իորթ իր քրոջը, նրան զարդարեց ծիրանիներով և կայսերական պատկով, և երկրորդական գահի պատվին հասցնելով՝ ամբողջ Արևելքի թագավոր նշանակեց։ Բայց ինչ որ աստվածային խոսքն ասում է երբայեցիների մասին, թե չարին անկարելի է փոխվել, նույնը պատահում է և այստեղ. ինչպես որ անկարելի է ինձին իր խայտուցը փոխել և եթովպացուն իր թխությունը, այսպես էլ (անկարելի է) ամբարիշտ մարդուն իր բարքը փոխել[240]։

Որովհետև նա դուրս եկավ նախ իր հավատին դրժող և ապա՝ իր բարերարի դեմ ապստամբ։ Նա եկեղեցու դեմ հալածանք հանեց և գաղտնի աննդությամբ լարեց Կոստանդիանոսի դեմ և առհասարակ բազմատեսակ չարիքներ հասցրեց իր իշխանության տակ եղողներին, այս ցանկասեր և գարշելի ալևորը, որ ներկում էր մազերը և իր կնոջը մեծ նեղության ենթարկեց, սիրահարվելով

երանելի Գլփյուռային, որի պատճառով սպանեց սուրբ Բասիլիոսին, պոնտական Ամասիայի եպիսկոպոսին։

Երբ նրա դավը բացվեց, և նա իմացավ, թե Կոստանդիանոսը լուռ չի մնա, զորք ժողովեց՝ պատերազմով նրան ընդդիմանալու։ Նա ցրտացավ սիրուց դեպի մեր Տրդատ թագավորը և նրանից ակնածում էր ինչպես իսկական թշնամուց, որովհետև գիտեր, թե արդար մարդուն ատելի է որևէ ամբարիշտ։ Իսկ երբ հաղթող Կոստանդիանոսն եկավ, պարտված նրա ձեռքը մատնեց Լիկիանոսին. նա (նրա կյանքին) խնայեց, ինչպես ծնողին և իր քրոջ ամուսնուն, հրամայեց երկաթե կապանքներով տանել Գաղղիա, հանքերի մեջ պահելու, որ աստծուն աղոթե, դուցե նա ներողամիտ դառնի։ Իսկ ինքն իր որդիներով հայտարարելով, թե հռոմայեցիների թագավորությունը մեկ հատ է, իր քսանամյակը կատարեց Նիկոմիդիացիների քաղաքում. որովհետև նա սկսեց թագավորել հալածանքների չորրորդ տարում մինչև խաղաղության տասներեքերորդ տարին։ Այս տոնը այսօր էլ տոնում է աշխարհը։

Եվ հարկ չհամարելով Հռոմ դառնալ, արքունիքը հաստատում է Բյուզանդիոնում, ինչպես նրան հրամայվեց նախատեսությամբ տեսիլքի միջոցով։ Նա մեծապայծառ շինություններ անելով՝ քաղաքը հնգապատիկ մեծացրեց։ Որովհետև ոչ մի մեծ թագավոր այնտեղ այսպիսի ձեռնարկություններ չէր ունեցել բացի մի քանի բաներից, ինչպես տիեզերակալ Աղեքսանդր Մակեդոնացու (շինածները), երբ նա այստեղ սպառազինվում էր Դարեհի դեմ գնալու, ուստի և իր հիշատակի համար շինեց Ստրատիգիոն կոչվածը, որովհետև այնտեղ նա կազմակերպեց իր պատերազմական սարքը։ Հետո հռոմայեցիների Սևերիոս կայսրը նրան նորոգեց և իր կողմից շինեց բաղանիքը այն սյունի տեղում, որի տակ գրված էր խորհրդավոր Արեգակ բառը, թրակացոց լեզվով՝ Զևքսիպոն, և այս անունով էլ կոչվեց բաղանիքը։ Նա շինեց նաև թատրոնը, գազանամարտության և խաղերի (կրկեսը) և ձիարշավի տեղը, բայց չավարտեց։ Իսկ Կոստանդիանոսը ամեն կերպ նրան բարեկարգեց և կոչեց նոր Հռոմ, բայց աշխարհը նրան կոչեց Կոստանդիանոսի քաղաք (Կոստանդնուպոլիս)։ Այս էլ են ասում, թե Հռոմից գաղտնի հանեց և բերեց Պալադիոն կոչված քանդակը[24] և դրեց Փորոնում սյունի տակ, որ ինքը կանգնեցրեց։ Բայց այս մեզ անհավատալի է թվում, ուրիշներն ինչպես կամենան։

ԱՐԻՈՍԻ ՀԵՐԵՏԻԿՈՍԻ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՈՎ ՆԿԻԱՅՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԳՐԻԳՈՐԻՈՍԻ ՎՐԱ ԵՐԵՎՑԱԾ ՍՓԱՆՉՆՅԻԻ ՄԱՍԻՆ

Այս ժամանակներն երևաց Արիոս Ազեքսանդրիացին, որ ուսուցանում էր չարաչար ամբարշտություն, թե որդին Հորը հավասար չէ և ոչ էլ Հոր բնությունից և էությունից, և չի ծնված Հորից նախքան որևէ ժամանակ, այլ օտար ումն է, և արարած, և կրտսեր և ժամանակի ընթացքում գոյացած։ Այս ամբարիշտ Արիոսը արտաքնոցումն էլ սատկեց, ինչպես իրեն արժան էր։ Նրա պատճառով ինքնակալ Կոստանդիանոսից հրաման ելավ, որ Բյութանիայի Նիկիա քաղաքում բազմաթիվ եպիսկոպոսների ժողով գումարվի։ Եվ ժողովեցին—Բիտոն և Բիկենդ երեցները Հռոմ քաղաքից, սուրբ Սեղբեստրոսի դրավոր հրահանգով, Ազեքսանդրոս՝ Ազեքսանդրիայի, Եվստաթիոս Անտիոքի, Մակարիոս Երուսաղեմի, Ազեքսանդրոս Կոստանդնուպոլսի եպիսկոպոսները։

Այս ժամանակ ինքնակալ Կոստանդիանոսից հրովարտակ է հասնում մեր Տրդատ թագավորին, որ սուրբ Գրիգորին հետն առնելով գնա ժողովին։ Բայց Տրդատ հանձն չառավ, որովհետև լսել էր, թե Շապուհը խնամիացել է Հնդկաց թագավորի և արևելյան խաքանի հետ, և զորավարություն է անում ներսհի, որ թագավորեց ինը տարի, և Որմիզդը, որ նույնպես երեք տարի թագավորեց քաչագործություններով. ուստի կասկածի մեջ էր, միգուցե (Շապուհը) պայմանին ստե, հեթանոսների սովորությամբ, այս պատճառով էլ մեր աշխարհն առանց իր ներկայության չթողեց։ Բայց սուրբ Գրիգորն էլ չհամաձայնեց գնալու, որպեսզի ժողովից չափազանց պատիվներ չկրե իբրև խոստովանող[242], քանի որ նրան այնպիսի փափագով և մեծ փութով հրավիրում էին։ Նրանք իրենց փոխարեն ուղարկեցին Արիստակեսին, ճշմարիտ խոստովանությամբ և երկուսի դրվ։ (Արիստակեսը) գնալով հասնում է մեծն Ղևոնդին և նրան հանդիպում է այն ժամին, երբ նա մկրտում է Գրիգոր աստվածաբանի Հորը՝ Գրիգորին, որը երբ ջրից դուրս եկավ, նրա շուրջը լույս փայլատակեց, որը բազմությունից ուրիշ ոչ ոք չտեսավ, այլ միայն Ղևոնդիոսը, որ մկրտում էր, և մեր Արիստակեսը, Եղեսիայի եվթաղը, Մծբնի Հակոբ և

Պարսկաստանի Հոռան եպիսկոպոսները, որոնք նույն ճանապարհով ուղևորվում էին ժողովին։

Դ

ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՆԻԿԻԱՅԻՑ ԴԱՌՆԱԼԸ, ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱԼԸ ԵՎ ԳԱՌՆԻՈՒՄ ԵՂԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արիստակեսը մեծն Ղևոնդի հետ գնում հասնում է Նիկիացոց քաղաքը, որտեղ ժողովված էին երեքհարյուր տասնևութ հայրեր՝ արիանոսներին տապալելու, որոնց նզովեցին և եկեղեցու հաղորդակցությունից հեռացրին, և ինքնակալ (Կոստանդիանոսն էր նրանց) աքսորեց հանքերը։ Ապա Արիստակեսը հետ է դառնում ճշմարիտ դավանությամբ և ժողովի քսան գլուխ կանոններով, և գալիս հանդիպում է հորը և թագավորին Վաղարշապատ քաղաքում։ Սուրբ Գրիգորն ուրախանալով՝ իր կողմից մասնավոր գլուխներ է ավելացնում ժողովի կանոնների վրա՝ իր հոտի ավելի մեծ զգուշության համար։

Այս ժամանակ նրանց ազգական Կամսարն ևս իրայինների հետ մկրտվում է մեծ Գրիգորի ձեռքով, և թագավորը նրան ջրից ընդունելով, նրան ժառանգություն է տալիս Արտաշեսի մեծ դաստակերտը, որ այժմ Դրասխանակերտ է կոչվում, և Շիրակ գավառը՝ իբրև իր ազգականին և մտերիմ հարազատին։ Բայց նա մկրտությունից հետո յոթն օրից ավելի չապրեց ու վախճանվեց։ Բայց Տրդատ թագավորը Կամսարի որդիներից մեծին, Արշավիրին, մխիթարելով, հոր փոխարեն է նշանակում, նախարարական ցեղ է սահմանում նրա հոր անունով և մտցնում է նախարարությունների թվի մեջ։ Դեռ ուրիշ պարգևներ էլ է ավելացնում—Երվանդի քաղաքը և նրա գավառը, մինչև մեծ ձորի գլուխը, միայն թե նրա մտքից հանել տա հիշատակը իրենց բնիկ աշխարհի, որ Պահլավ է կոչվում, որպեսզի հավատի մեջ հաստատուն մնա։ Իսկ Արշավիրն այդ գավառը շատ սիրելով՝ իր անունով կոչում է Արշարունիք, որ առաջ կոչվում էր Երասխաձոր։ Ահա ասացինք երկու ցեղերի, պարթևների և պահլավիկների գալստյան պատճառը։

Այն ժամանակները Տրդատն ավարտում է Գառնիի ամրոցի շինությունը տաշած որձաքար քարերով, որոնք ագուցված էին երկաթե գամերով և կապարով. նրա մեջ շինում է հովանոց՝ ար-

ձաննևրով, սքանչելի դրվագներով և բարձրաքանդակներով, իր խոսրովիդուխտ քրոջ համար, և նրա վրա գրում է իր հիշատակը հունարեն դրերով։

Բայց սուրբ Գրիգորը նույն լեռները դառնալով, այնուհետև այլևս ոչ ոքի չերևաց մինչև վախճանվելը։

ՂԱ

ԳՐԻԳՈՐԻ ԵՎ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՈՎ ԼԵՌԸ ԿՈՉՎՈՒՄ Է ՄԱՆՅԱՅ ԱՅՐՔ

Մենք գտանք, որ սուրբ Գրիգորը, մեր Հայրն ու ծնողն ըստ ավետարանի՝ սուրբ Թադեոս առաքյալի աթոռը նստավ Տրդատի թագավորության տասնևյոթներորդ տարում։ Երբ նա ամբողջ Հայաստանը լուսավորեց աստվածագիտության լուսով, կռապաշտության խավարը փարատեց և բոլոր կողմերը լցրեց եպիսկոպոսներով և կրոնի ուսուցիչներով, այնուհետև նա սիրեց լեռներն ու ամայությունը, որպեսզի հանդարտ մտքով ինքն իր մեջ ամփոփվի և աստծու հետ խոսի՝ (ուրիշ) զբաղմունքներից ազատ. իր տեղ փոխանորդ թողեց իր Արիստակես որդուն և ինքը մնաց Դարանաղյաց գավառում, Մանյա այրք լեռան մոտ։

Բայց ասենք, թե ինչո՞ւ է կոչվում Մանյա այրք։ Որովհետև սուրբ Հռիփսիմյանց ընկերների մեջ կար մի կին, Մանի անունով, ինչպես վրացիներին ուսուցանող Նունեն, որ չկարողացավ հասնել և հետևել (ընկերներին), երբ գալիս էին մեզ մոտ, գիտնալով, որ բոլոր տեղերն էլ աստծունն են, բնակվեց այս լեռներում, քարայրների մեջ, որի պատճառով լեռան անունը կոչվեց Մանյա այրք. նույն այրումն էլ բնակվեց սուրբ Գրիգորը։

Թեպետև նա այնտեղ բնակվեց, բայց ժամանակ առ ժամանակ հայտնվում էր, շրջում էր մեր աշխարհում, աշակերտվածներին հաստատում էր հավատի մեջ։ Իսկ երբ նրա Արիստակես որդին Նիկիայի ժողովից հետ եկավ՝ այդ ժամանակից ի վեր սուրբ Գրիգորիոսն այլևս ոչ ոքի չերևաց և չհայտնվեց։ Ուստի հաշվելով նրա քահանայանալու սկզբից, այսինքն Տրդատի թագավորության տասնևյոթերորդ տարուց, մինչև նրա (թագավորության) քառասունևվեցերորդ տարին, երբ այլևս ոչ ոքի չերևաց, դուրս կգա երեսուն տարի։

Նրանից հետո (նստավ) Արիստակեսը յոթ տարի, Տրդատի քառասուն և յոթներորդ տարուց մինչև Հիսուներեքերորդը, երբ տեղի ունեցավ Արիստակեսի կատարածը։ Որովհետև նա իսկապես հոգևոր սուր էր, ինչպես ասված է[243], ուստի նա թշնամի էր թվում բոլոր անիրավ և աղտեղագործ մարդկանց։ Ուստի Արքեղայոսը, որ Ջորբորդ Հայքի վերակացու էր նշանակված, նրանից հանդիմանվելով, հարմար օրվան էր սպասում և Մուխայ գավառում նրան հանապարհին պատահելով, սրով սպանեց, իսկ ինքը փախավ դնաց Կիլիկիայի Տավրոս (լեռը)։ Իսկ երանելու աշակերտները նրա մարմինը վերցնելով բերին Եկեղյայց գավառը, իր ավանում՝ Թիլում թաղելու։ Եվ աճոռը հաջորդեց նրա մեծ եղբայրը, Վրթանես, Տրդատի Հիսուն և չորսերորդ տարուց այս կողմը։

Իսկ սուրբ Գրիգորը Մանյա այրում երկար տարիներ աներեվութաբար ապրելուց հետո մեռնում՝ փոխադրվում է Հրեշտակների կարգերը։ Հովիվները նրան վանճանված գտնելով, նույն տեղումն էլ թաղում են, առանց գիտենալու, թե ո՛վ է։ Եվ հիրավի, վայել էր, որ նրանք, որոնք մեր փրկչի ծննդյան խորհուրդին մասնակից եղան, նաև սպասավոր դառնան նրա աշակերտի հուղարկավորության[244]։ Եվ այսպես (մարմինը) երկար տարիներ ծածուկ մնաց, կարծես ինչ-որ աստվածային անօրինությամբ, ինչպես հնումը Մովսեսինը, որպեսզի նորազարձ բարբարոս աղգերից չպաշտվի։ Իսկ երբ մեր կողմերում հավատն արմատացավ ու հաստատվեց, շատ ժամանակ անցնելուց հետո հայտնվեց Գառնիկ անունով մի ճգնավորի, և ապա սուրբ Գրիգորի նշխարները բերվեցին և թաղվեցին Բորգան գյուղում։

Սա, ինչպես ամենքին հայտնի է, Պարթևական աշխարհից էր, Պահլավների գավառից, թագավորող ցեղից զատված Արշակունի, Սուրենի ցեղից, Անակ անունով հորից. նա մեր աշխարհի արևելյան կողմերից մեկ ճշմարիտ արևելք ծագեց և իմանալի արեգակ և հոգևոր ճառագայթ, կռապաշտության խոր չարությունից ելք, ճշմարիտ բարի և դիվահալած, երանության և հոգևոր շինության ահրի, իսկապես աստվածային արմավենի, տիրոջ տանը տնկված և մեր աստծու գավթում ծաղկած[245]։ Նա այսպիսի և այսքան ժողովուրդներ բազմացրեց և մեզ պատրաստեց հոգևոր պարարտ ծերության ի փառս և ի գովեստ աստծու[246]։

ՏՐԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՎԱՒՃԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻ ՀԵՏ ԵՎ ՈՂԲԵՐԴԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սուրբ և մեծ և երկրորդ նահատակի և մեր լուսավորության հոգևոր վերակացվի մասին ճառելիս,— որովհետև Քրիստոս է բոլոր գոյացությունների ճշմարիտ թագավորը,— պետք էր հրաշափառ խոսքերով զրել, ինչպես մեր լուսավորության նախաշավղին ու նահապետին հավասար Հոնոզի և նրա գործակցի մասին։ Որովհետև սուրբ հոգուն հաճո թվաց ավագություն տալ իմ լուսավորչին՝ միայն խոստովանողի, կավիլացնեմ նաև առաքելության կոչումով, իսկ սրանից դուրս՝ (նրանք երկուսը) իրար հավասար են խոսքերով և գործով։ Բայց այստեղ ես նկատում եմ թագավորի առավելությունը, որովհետև աստծու մասին մտածելու և ճգնողության մեջ նրանք երկուսը հավասար էին, իսկ համոզական կամ ստիպողական խոսքերով (նոր հավատին) հնազանդեցնելու մեջ՝ թագավորի շնորհն ավելի էր, որովհետև նրա հավատից գործը հետ չէր մնում։ Այս է պատճառը, որ ես նրան կոչում եմ նախաշավիղ ճանապարհ և մեր լուսավորության երկրորդ հայր։ Բայց որովհետև այժմ պատմելու ժամանակ է և՝ ոչ գովեստների, մանավանդ որ այս հատվածը պատմագիրների առանձին արտահայտությունների համաձայն շարադրվեց, և ոչ թե հատկապես մեզանից[248] անցնենք սրան վերաբերյալ պատմության կարգին։

Սա Քրիստոսին հավատալուց հետո ամեն տեսակ առաքինություններով փայլելով՝ ավելի և ավելի ջանքեր էր անում խոսքով ու գործով Քրիստոսի (հավատի) համար. սաստելով և համոզելով մեծամեծ նախարարներին, այլև ռամիկ մարդկանց բազմությունը, իրապես Քրիստոսի (հավատացյալ) լինելու, որպեսզի նրանց գործերը համապատասխանեն նրանց հավատին։ Բայց այստեղ ես շեշտելու եմ մեր ազգի խստասրտությունը, այլև ամբարտավանությունը սկզբից մինչև այժմ, որ նրանք անտարբեր լինելով դեպի բարին, խորթ լինելով ճշմարտության. կամ թե բնությամբ մեծամիտ և կամակոր լինելով, դիմադրում են թագավորի կամքին քրիստոնեական կրոնի վերաբերմամբ, հետևելով իրենց կանանց և հարճերի կամքին։ Եվ թագավորը, չկարողանալով այս բանը ներել, գնում է երկրային պսակը, գնում է երկնային պսակի հետևից, շուտով հասնելով այն տեղը,

ուր Քրիստոսի ճշմարիտը (Մանին) լեռների քարայրում էր ապրիլ։

Այստեղ ես ամաչում եմ ասել ճշմարտությունը, մանավանդ թե մեր աղգի անօրենությունն ու ամբարշտությունը, մեծամեծ աղբերի և արտասուքների արժանի նրանց գործը։ Որովհետև նրա հետևից մարդ են ուղարկում, կանչում են, որ գա թագավորությունը շարունակի, (խոստանալով) նրա կամքով վարվելու։ Իսկ երբ սուրբը չի համաձայնում, նրան (թունավոր) ըմպելիք են տալիս, ինչպես հնումը աթենացիները Սոկրատին տվին մոլախինդը, կամ մերն ասելով՝ կատաղած երրայեցիները մեր աստծուն տվին լեղի խառնած ըմպելիք։ Այսպես անելով նրանք իրենց վրայից հանգցրին աստվածապաշտության բազմաիայլ ճառագայթը։

Այս պատճառով ես իմ (ժողովրդի) վրա ողբալով ասում եմ՝ ինչպես ասել է Պավղոսն իր (ժողովրդի) և Քրիստոսի խաչի թշնամիների մասին. բայց ասում են ոչ իմ խոսքերը, այլ սուրբ Հոգու.— Ո՛վ չար և ստահակ ազգ, ազգ՝ որ իր սիրտը չուղղեց և որի Հոգին աստծուն հավատարիմ չմնաց[249]։ Արամյան մարդիկ, մինչև ե՞րբ պիտի մնաք անզգա. ինչո՞ւ եք սիրում ունայնությունը և անաստվածությունը։ Դուք չմոռացա՞ք, որ տերը սքանչելի դարձրեց իր սրբին, և նա ձեզ չի լսի, երբ դուք աղաղակելով նրան դիմելու լինեք։ Դուք բարկանալով մեղանչեցիք, բայց ձեր անկողիններում չղղջացիք[250], որովհետև անօրեն դեներում կատարեցիք և արհամարհեցիք նրան, ով հույսը դրել էր սիրոջ վրա։ Այս պատճառով ձեր վրա կհասնի որոգայթ որը, դուք չդիտեք, և այն որսը, որ դուք որսացիք, նա ձեզ կբռնի, և նույն որոգայթով կբռնվեիք։ Իսկ նրա անձը աստուծով կցնծա, իր փրկությամբ կուրախանա և իր ամբողջ էությամբ կասի. Տե՛ր, ո՞վ է քեզ նման[251]։

Եվ որովհետև այս բոլորը ճշմարիտ այսպես է, ապա և մենք մխիթարվենք մեր նեղություններում։ «Եթե կանաչող ծառին այսպես արին, ասում է Քրիստոս, ապա չորին ի՞նչ կանենա»։ Արդ՝ երբ նրանք այսպես վարվեցին աստծու սրբերի հետ և որոնք աստծու համար իրենք իրենց նվաստացրին, թագավորությունից (հրաժարվելով), այլևս մենք ի՞նչ կարող ենք ասել աստծուն՝ ձեր կողմից մեզ հասած նեղությունների համար, մեզ՝ որ սովոր ենք նեղությունների և աղքատության։ Բայցևայնպես կասեմ. ո՞վ ձեզանից մեր համար ապրուստ, ո՞վ ուսուցիչների մոտ միջնորդու-

թյուն, ո՞վ համոզիչ կամ խրախուսական խոսք, ո՞վ մեր գնալիս բեռնակիրներ, ո՞վ մեր եկած ժամանակ հանգիստ, ո՞վ մեզ տուն կամ իջևան պատրաստեց։ Թողնում եմ մյուս բաները, որովհետև դուք լսանձահարեցիք չար լեզուներն ու տգիտությունը, նրանց սնոտի փառամոլությամբ և կատաղի լեզվագարությամբ, այլ ձեր ուսումնատյաց բարքով նրանց անմտությունը հրահրելով բորբոքեցիք ավելի քան Բաբելոնի հնոցը։

Այս պատճառով յուրաքանչյուր մեկը իր համար առանձին քուրմ է և պաշտոնյա, ինչպես ասում է ս. գիրքը, որ հարմար է գալիս ներկա պայմաններին, երբ շատերն են, որ խոսում են աստվածային նյութերի մասին, բայց առանց հասկանալու խնդրի էությունը, և խոսողները ոչ թե ս. Հոգու հաճույքով են (ընտրված), այլ օտարի։ Ուստի ապշեցուցիչ են այս ճառերը և սարսափելի՝ մտածող մարդկանց համար. որովհետև խոսողը խոսում է աստծու և աստվածային նյութերի մասին, բայց խոսողի միտքն ուղղված է դեպի օտարը։ Որովհետև նա Հոգում է ոչ թե խոսած նյութի մասին և ոչ էլ խոսում է մեղմ ու հեզաբար, ինչպես որ պատվիրված է, թե «ոչ ոք դուրսը նրա ձայնը լլսի»[252], այլ (Հոգում է) մարդկային փառքի համար, և որոտագին հնչեցնում են մարդկանց լսելիքին։ Նրանց շատախոսությունը հորդաբար հոսում է իբրև աղբյուրից, ինչպես ասաց հներից մեկը[253], և բորբոքեցնում են կոչունքներն ու հրապարակները։ Ո՞ր մտածող մարդը չի ողբա դրանց մասին, այլև,— թող ոչ ոք չնեղանա,—նրանց մասին, որ դրանց հորդորում են այսպես լինել։ Ես ինձ դպում եմ Քրիստոսի խոսքը կրկնել, թե նրանք պետք է վճարեն վրեժը արդար Աբելի արյունից սկսած մինչև Զաքարիայի արյունը, որ թափվեց տաճարում սեղանի առաջ[254]։

Այստեղ կարճում ենք մեր խոսքը, դուր նեղություն չկրելով խոսելու մեռածների ականջներին[255]։ Բայց սուրբ Տրդատի մասին մեր պատմածը ճշմարիտ է. նրան մահվան դեղ խմցնելով՝ դրկվեցին նրա շնորհի ճառագայթների լույսից։ Նա թագավորեց հիսուն և վեց տարի։

Ավարտվեց երկրորդ գիրքը
Հայոց մեծերի առաջադիմության

ՀԱՏԱԾ ԵՐՐՈՐԴ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

Ա

Ոչ հին ատրիների պատմություն է ունեցել մեր աշխարհը, ոչ էլ ժամանակի կարճության պատճառով, կարողացանք անցնել բոլոր Հունական (աղբյուրները), ոչ նույնիսկ Դիոդորի[256] գրվածքները մեր ձեռքի տակ են, որ ալքերս նրա վրա պահելով՝ բոլորն անմոռաց անցնեինք, որպեսզի բաց չթողնեինք որևէ գլխավոր և պիտանի բան, որ արժան է մեր շարադրության մեջ հիշատակվելու։ Այլ որքան ջանքն ու հիշողությունը բավականացան, մենք սուտգությամբ պատմեցինք Աղեքսանդր Մեծից մինչև սուրբ Տրդատի մահը, շատ կանուխ և հին ժամանակի (անցքերը)։ Ուստի մեզ չպետք է մեղադրես ու պարսավես, որովհետև ահա ինչ որ մեր ժամանակները կամ քիչ առաջ պատահել է, քեզ անսխալ կպատմեմ, երրորդ գիրքը գրելով, անցքերը սուրբ Տրդատից հետո մինչև Արշակունյաց ցեղի պադարեզը թագավորությունից և սուրբ Գրիգորի սերունդներն՝ քահանայապետությունից, հասարակ լեզվով այս պատմություններն անելով, որպեսզի այնպես չերևի, թե մեկը փափաղում է (կարդալու) պերճաբանությունից զրավվելով, այլ մեր պատմածների ճշմարտության կարոտելով՝ համախակի և անդադար կարդան մեր հայրենիքի պատմությունը։

Բ

ԻՆՉ[257] ԱՆՑՔԵՐ ՊԱՏԱՀԵՑԻՆ ՄԵԾՆ ՎՐԹԱՆԵՍԻՆ ԵՎ ԵՐԵՔ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԴԱՏԻ ՎԱԽՃԱՆՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Տրդատի վախճանվելու ժամանակ մեծ վրթանես պատահմամբ գտնվում էր սուրբ Հովհաննեսի վկայարանում[258], որ նրա հայրն էր շինել Տարոնում։ Այստեղ այդ լեռան բնակիչները, նա-

խարարների թելադրությամբ, դավ սարքեցին, կամենալով նրան սպանել։ Բայց նրանք անըմբռնելի ձեռքով կապվեցին, ինչպես հնումը Ծղիսեի ժամանակ[259], կամ նույն ինքն Քրիստոսի մեր աստծու ժամանակ հրեաները զնտնին զարկվեցին, (այնպես որ վրթանեսը) առանց որևէ վնասի անցավ գնաց Սկեղյաց գավառը, Ֆիլ ավանը, որտեղ գտնվում էր նրա Արիստակես եղբոր հանգստարանը, և սուգ էր անում Հայոց աշխարհիս վրա, որ անիշխանության մեջ մնալով՝ նախարարական ցեղերը մեկը մյուսի դեմ ելան իրար կոտորելու, որով երեք տոհմեր, Բղնունականը, Մանավազյանը և Որդունին, ոչնչացան մեկը մյուսի ձեռքով։

Գ

ՍՈՒՐՄ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՄԱՀԸ ԲԱԲԲԱՐՈՍՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ

Մեծ պնդությամբ երանելի Տրդատը վրեժխնդիր էր լինում հավատի և վարքի նկատմամբ, մանավանդ նրանց, որոնք իր իշխանության հեռավոր տեղերում էին ապրում։ Ուստի նրա մոտ եկան արևելյան հյուսիսային կողմերի գործակալները, Փայտակարան կոչված հեռավոր քաղաքի վերակացուները և ասացին թագավորին. «Եթե կամենում ես, որ այն կողմի մարդիկ ուղիղ վարք ունենան ըստ այս (նոր) հավատի, ապա նրանց համար եպիսկոպոս ուղարկիր սուրբ Գրիգորի սերնդից, որովհետև մեծ փափագով խնդրում են, և մենք հաստատ գիտենք, որ Գրիգորի հրաշակված անվան պատճառով կակնածեն նրա սերնդից և նրա հրամանի համաձայն կվարվենա։ Երանելի Տրդատը համաձայնելով՝ նրանց եպիսկոպոս է տալիս մանուկ Գրիգորիսին, Վրթանեսի երեց որդուն։ Թեպետ նրա անչափահասությանը նայելով, այս բանը կանոնի դեմ էր համարվում, բայց նկատելով նրա հոգու մեծությունը և հիշելով, որ Սողոմոնը տասներկու տարեկան հասակում թագավորեց իսրայելցիների վրա, մեծ վստահությամբ ուղարկեց, մի ամն Սանատրուկի հետ, որ իր Արշակունի ցեղից էր։

Նա գնալով՝ բարի օրինակ էր դառնում, հայրենական առաքինություններով վարվելով, բայց կուսությամբ զերազանցելով հայրերից, իսկ պատժելու կողմից՝ թագավորին հավասարվելով։ Իսկ երբ Տրդատի վախճանվելու լուրը հասավ, բարբարոսները նույն Սանատրուկի և ուրիշ մի քանի միշտ սուտ խոսող աղվաննե-

յի դավելով, երանելի (Գրիգորիսին) սպանեցին Վատնյան դաշտում, Կասբիական կոչված ծովի մոտ, ձիերին ոտնատակ տալով։ Նրա սարկավագները նրա մարմինը բերին փոքր Սյունիք, թաղեցին Ամարաս ավանում։ Իսկ Սանասարուկը թագ դնելով իր գլուխը՝ դրավեց Փայտակարան քաղաքը, և մտածում էր բոլոր Հայաստանին տիրել օտար ազգերի օգնությամբ։

Դ

ԲԱԿՈՒՐ ԲԴԵՇԽԻ ԱՆՋԱՏՎԱԼՔ ՀԱՅՈՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՐՀՈՒՐԴԸ՝ ԱՄՍԵՐՈՎԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինչպես աստվածային պատմություններից մեջ դտնում ենք ասված՝ երբ յական ազգը դատավորներից հետո, անիշխանության անխաղաղ ժամանակ, չուներ թագավոր և ամեն մարդ վարվում էր ըստ իր հաճույքի, նույն բանը կարելի էր տեսնել և մեր աշխարհում։ Որովհետև երբ երանելի Տրդատը վախճանվեց, Բակուր մեծ իշխանը, որ կոչվում էր Ալձնիքի բդեշխ, տեսնելով որ Սանասարուկը թագավորեց Փայտակարանում, նույնը կամեցավ և ինքն անել, սակայն չթագավորել, որովհետև Արշակունի չէր, այլ կամեցավ ինքնագլուխ լինել։ Ուստի Հայոց միաբանությունից անջատվելով՝ ձեռքը մեկնեց Պարսից Որմիզդ թագավորին։ Ապա Հայոց նախարարները ուշքի և խելքի գալով՝ ժողովվեցին մեծն Վրթանեսի մոտ և պատվավոր իշխաններից երկու անձ, Մոփքի Մար իշխանին և Հաշտյանքի Գագ իշխանին, ուղարկեցին նախագահ քաղաքը գնալու Կոստանդիանոսի որդու՝ Կոստանդ կայսրի մոտ, նվերներով և թղթով, հեռևյալ բովանդակությամբ.—

Ե

ՀԱՅՈՑ ԹՂԹԻ ՊԱՏՃԵՆԸ

«Վրթանես եպիսկոպոսապետը և նրա ձեռքի տակ եղած եպիսկոպոսները և Մեծ Հայաստանի բոլոր նախարարները մեր տիրոջ՝ ինքնակալ Կոստանդ կայսրին ողջույն են մատուցանում։

Միտքդ բեր քո հոր Կոստանդիանոսի ուխտադրությամբ պայմանը մեր Տրդատ թագավորի հետ և մեր աշխարհը մի՛ թողնիր անաստված պարսիկներին, այլ օգնիր մեզ զորքով՝ Տըր-

դատի որդուն Խոսրովին թագավորեցնելու համար։ Որովհետև աստված ձեզ ոչ միայն Եվրոպային տիրացրեց, այլև բոլոր Միջերկրայքին և ձեր զորության առջև մինչև աշխարհի ծայրը տարածվեց։ Եվ մենք խնդրում ենք, որ դուք ավելի և ավելի տիրանաք։ Ողջ եղեք»։

Կոստանդն այս (խնդրին) լսելով՝ Անտիոքոսին, իր պալատի կառավարչին, մեծ զորքով ուղարկեց, նաև ծիրանի զգեստ ու պսակ և թուղթ հետևյալ բովանդակությամբ.—

Կոստանդի թուղթը.

«Ինքնակալ ավգուստոս Կոստանդիոս կայսրը մեծ Վրթանեսին և բոլոր քո աշխարհականներին՝ ողջույն։

Մեծ զորք ուղարկեցի օգնության և հրաման՝ ձեզ վրա թագավորեցնելու Խոսրովին՝ ձեր Տրդատ թագավորի որդուն, որպեսզի բարեկարգության մեջ հաստատվի և հավատարմությամբ մեզ հպատակվի։ Ողջ եղեք»։

Ձ

ԱՆՏԻՈՔՈՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ

Անտիոքոսն եկավ, Խոսրովին թագավորեցրեց և չորս սպարապետներին հանձնեց զորքի վրա նույն իշխանությունը, որոնց նշանակել էր Տրդատն իր կենդանության ժամանակ՝ իր դայակ Արտավազդ Մանդակունու մահից հետո, որ միակ սպարապետն էր և բոլոր Հայոց (զորքերի) զորավարը։ Առաջին՝ Բագարատ ասպետը արևմտյան գնդին զորավար, երկրորդ՝ Միհրան, Վրաց առաջնորդը և Գուգարացոց բդեշխը, հյուսիսային զորքին սպարապետ, երրորդ՝ Վահան, Ամատունյաց նահապետը, արևելյան գնդին զորավար, չորրորդ՝ Մանաճիհր, Ռշտունյաց նահապետը, հարավային զորքին սպարապետ։ Եվ զորքը բաժանեց, տվեց յուրաքանչյուրին իր բաժինը։ Մանաճիհրին հարավային զորքով, կիլիկեցի զորքն էլ նրանց հետ, ուղարկեց Ասորեստանի և Միջերկրայքի կողմերը, իսկ Ամատունյաց Վահան նահապետին արևելյան գնդով, և նրանց հետ գաղատացի զորքերը, ուղարկեց Ատրպատականի կողմերը՝ պահպանելու (երկիրը) Պարսից թագավորից։

Իսկ ինքը, թողնելով Խոսրովին,— որովհետև մարմնով փոքր էր, թույլ ոսկորներով և պատերազմական հասակ և հարմարու-

թյուն չուներ,— առավ իր հետ Միհրանին և Բագարատին իրենց զորքերով, և բոլոր հունական զորքի հետ միասին դիմեց Սանատրուկի վրա։ Իսկ նա, Փալտակարան քաղաքը պարսկական զորքով լցնելով, շտապով գնում ապավինում է Շապուհ թագավորին, ազվանից նախարարների հետ միասին։ Անտիոքոսը տեսնելով, որ նրանք չհնազանդվեցին և խաղաղությամբ չնվաճվեցին, հրամայում է պատակտվածների իշխանությունն ավարառությամբ տկատրացնել, իսկ ինքը (աշխարհի) հարկը ժողովելով գնում է կայսրի մոտ։

Է

ՄԱՆԱՃԻՀՐԻ ՀԱՆՑԱՆՔԸ ՄԵՄՆ ՀԱԿՈՒԲԻ ԴԵՄ ԵՎ ՆՐԱ ՄԱՀԸ

Մանաճիհրը Հայոց հարավային գնդով և կիլիկեցի զորքով Աստբեստանի կողմերը գնալով պատերազմեց Բակուր բդեշխի հետ և սպանեց նրան, իսկ նրա զորքերն ու նրան օգնության ուղարկված պարսիկներին հալածեց. Բակուրի որդուն, Հեշային ձերբակալելով՝ երկաթե կապանքներով ուղարկում է Խոսրովին, իսկ նրա իշխանության գավառներն անխնա սրի է մատնում, ոչ միայն կովողներին, այլև ամիկ գյուղացիներին, և շատ գերիներ է առնում Մծբինի կողմերից, որոնց թվում նաև Հակոբ մեծ եպիսկոպոսի[260] ութ սարկավագներին։ Հակոբը նրանց հետևից գալով՝ հորդորում է Մանաճիհրին արձակել ռամիկ գերիներին, քանի որ նրանք անմեղ են, բայց Մանաճիհրը չի համաձայնում, պատճառ բերելով թագավորին։

Հակոբը դիմում է թագավորին. սրա վրա Մանաճիհրն ավելի է լարանում, և գավառացիների թելադրությամբ նրա ութ սարկավագներին, որ կալանավորված էին, հրամայում է ծովը նետել։ Երբ այս լսում է մեծն Հակոբ, ասատիկ բարկացած վերադառնում է իր տեղը, ինչպես Մովսեսը Փարավոնի մոտից, բարձրանում է մի լեռ, որտեղից ամբողջ գավառն երևում էր, և անիծում է Մանաճիհրին և նրա գավառը։ Եվ ասածու պատաստանը շուտ վրա է հասնում, որովհետև Մանաճիհրը Հերովդեսի նման տեսակ տեսակ ցավերից բռնվում է և մեռնում, և գավառի պտղաբեր չրարբի հողերը աղշոտ հողերի են փոխվում, երկինքը նրանց վրա պղինձ դառնալով, ըստ սուրբ դրքի, ծովն էլ հակառակելով՝ (բարձրա-

նում) ծածկում է արտերի սահմանները։ Երբ այս բաները լսում են մեծն Վրթանես և խոսրով թագավորը, դայրանալով հրամայում են գերվածներին արձակել, և նույն մարդուն դիմել զղջումով ու աղաչանքով, որ դուցե աստծու բարկությունը դադարի։ Եվ Մանաճիհրի որդին ու ժառանգը, Հակոբի այս աշխարհից փոխվելուց հետո, գեղեցիկ ապաշխարհությամբ, հորդ արտասուքներով ու հառաչանքներով նրա բարեխոսությամբ ստացավ գավառի բժշկությունը։

Ը

ՓՈՔՐ ԽՈՍՐՈՎԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ԱՐՔՈՒՆԻՔԸ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ ԵՎ ԱՆՏԱՌԸ ՏՆԿԵԼԸ

Պարսից Որմիղդ թագավորի երկրորդ և Կոստանդի ինքնակալության ութերորդ տարում նրա օգնությամբ թագավորեց Խոսրովը. նա ոչ մի քաջության գործ ցույց չտվեց հոր նման. նա նույնիսկ հակառակություն ցույց չտվեց անջատված կողմերի վերաբերմամբ, մի անգամից հետո, որ հունական զորքերից կրեցին[261], այլ Պարսից թագավորին իր կամքին թողնելով՝ նրա հետ խաղաղություն է կնքում, բավական համարելով ուրիշ մնացած սահմաններին, բոլորովին չտածելով աղնվական խորհուրդներ։ Որովհետև թեպետ նա մարմնով փոքր էր, բայց ոչ Աղեքսանդր Մակեդոնացու չափ, որ միայն երեք կանգուն[262] հասակ ուներ, որ (սակայն) չէր խափանում նրա հոգու աշխուժը։ Իսկ սա անփույթ լինելով քաջությամբ և բարի հիշատակների՝ զբաղված էր զբոսանքներով, թուլորսությամբ և այլ որսերով, որի համար էլ նա անտառ մնկեց Ազատ գետի մոտ, որ մինչև այսօր էլ կոչվում է նրա անունով։

Նաև արքունիքը փոխադրում է անտառից վերև մի բլուրի վրա և շինում է արևից պատսպարված ապարանք. (այս տեղը) պարսկական լեզվով կոչվում է Դվին, որ նշանակում է բլուր[263]։ Որովհետև այդ ժամանակ Հրատն ուղեկցում էր Արեգակին և անմաքուր ջերմ օդը գարշելի հոտ էր բուրում, ուստի Արտաշատում բնակվողներն այս բանին չդիմանալով՝ կամավ հանձն առան այս տեղափոխությունը։

ՍՐԱ ԺԱՄԱՆԱԿ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱԶԳԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՄԵՋ ՎՐԱ, ԵՎ ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սրա ժամանակ հյուսիսային Կովկասի բնակիչները միաբանելով, գիտնալով նրա թուլասրտությունն ու ծուլությունը, մանավանդ հրապուրվելով Սանատրուկի թելադրությունից, Պարսից Շապուհ թագավորի գաղտնի հրամանով արշավեցին ու հասան մեր աշխարհի միջին վայրերը մեծ բազմությամբ, մոտ երկու բյուր մարդով։ Պատերազմելով նրանց դեմ դուրս եկան Հայոց արևելյան և արևմտյան զորքերն իրենց զորապետներով, այսինքն Բագարատ ասպետով և Ամատունյաց Վահան նահապետով։ Որովհետև մեր հարավային գնդերը Խոսրովի մոտ էին Մոփաց աշխարհում, իսկ Միհրանին սպանել ու մեր հյուսիսային գունդը չարդել ու փախցրել էին թշնամիները և (այս կերպով) հասել էին մինչև Վաղարշապատ ու պաշարել։ Նրանց վրա հանկարծակի հարձակվեցին մեր արևելյան և արևմտյան զորքերը և հետ վանեցին դեպի Օշականի առապարը և թույլ չտվին, որ նրանք ցրիվ գալով նետաձգություն կատարեն ըստ իրենց սովորության, այլ քաջաձի հեծյալները նրանց շտապ շտապ ու արագապես հետամուտ լինելով մղեցին քարքարոտ դժվար տեղերը, այնպես որ թշնամիներն ակամայից ստիպվեցին ճակատամարտ կազմելու։

Նրանց նիզակավորների զորագլուխն էր մի վիթխարի հսկա, սպառազինված և ամբողջ մարմինը ծածկված խիտ թաղիքով. այսպես նա արշավանքներ էր կատարում զորքի մեջ։ Հայոց քաջերն աչքերը նրա վրա պահելով՝ հարձակվում էին վրան, բայց չէին կարողանում վնասել, որովհետև երբ նիզակով խփում էին, թաղիքը շուռ էր գալիս[264]։ Այս ժամանակ քաջ Վահան Ամատունին դառնալով դեպի կաթողիկն եկեղեցին՝ ասաց. «Օգնիր ինձ, աստված. դու որ Դավթի պարսաքարը դիպցրիր խրոխտացող Գողիաթի ճակատին, իմ նիզակս էլ ուղիղ այս հզորի աչքին[265]։ Նրա խնդրվածքը զուր չանցավ. ձիու գավակիցը խփելով՝ գետին գլորեց ահագին հսկային։ Այս դիպվածն առիթ դարձավ թշնամիների փախուստին և Հայոց գունդը զորացրեց հաղթանակ տանելու։

Այստեղից Մոփաց աշխարհը դառնալիս՝ Բագարատն առանց նախանձի հաստատապես վկայում է թագավորին Վահանի քաջագործությունների և այս առաքինական դիպվածի մասին։ Ուստի

թագավորը նրան է պարգևում ճակատամարտի տեղը, Օշականը, որտեղ Վահանն ինքնակամ դեմ ելավ ու մենամարտեց (հակաթշնամու հետ)։ Իսկ Միհրանի փոխարեն գործի վրա նշանակում է Գարջույլ Մաղխազին, Խոռխոռունիների նահապետին։

Ծ

ԽՈՍՐՈՎԻ ՎԱԽՃԱՆՎԵԼԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՀԵՏ

Սրանից հետո Խոսրովն իմանալով, որ Պարսից Շապուհ թագավորը թշնամիների հետ է, լուծում է նրա հետ կնքած խաղաղությունը նրան վճարած մասնավոր հարկը կտրելով՝ այլև կայսրին է տալիս և Հունաց զորքերը բերելով, դիմադրում է Պարսից թագավորին։ Բայց նրա կյանքը երկար չտևեց, նա վախճանվեց ինն տարի թագավորելուց հետո։ Նրա մարմինը վերցրին և թաղեցին Անիում, հայրերի մոտ։ Իսկ մեծն Վրթանես ժողովելով բոլոր Հայոց նախարարներին, զորքերով ու զորապետներով, մեր աշխարհը հանձնում է Արշավիր Կամսարականին, իբրև գլխավոր և թագավորից հետո առաջին պատվավոր անձի[266], իսկ ինքն առնելով Տիրանին, Խոսրովի որդուն, գնում է կայսրի մոտ, որպեսզի նրան հոր տեղ Հայոց թագավոր նշանակի։

Իսկ երբ Պարսից Շապուհ թագավորը լսեց Խոսրովի մահը և թե նրա Տիրան որդին կայսրի մոտ գնաց, մեծ զորք է գումարում իր Ներսեհ եղբոր ձեռքի տակ, իբրև թե մտադրվելով նրան թագավորեցնել Հայոց վրա, և ուղարկում է մեր աշխարհը, համարելով թե նա անառաջնորդ է մնացել։ Նրանց հանդիպում է քաջ Արշավիր Կամսարականը բոլոր հայկական զորքով Մռուղ կոչված դաշտում, և թեպետ պատերազմում շատերն ընկան մեծամեծ նախարարներից, բայց հաղթությունը տարավ Հայոց գունդը և փախուստի մատնեց Պարսից զորքերը։ Այսպես մեր աշխարհը պահեցին մինչև Տիրանի գալը։

ԾԱ

ՏԻՐԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ. ՄԵԾՆ ՎՐԹԱՆԵՍԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ ՓՈԽՎԵԼԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈՒՍԻԿԻ ՀԱՋՈՐԴԵԼԸ ԱԹՈՌԻՆ

Ավգուստոս Կոստանդը, Կոստանդիանոսի որդին, իր ինքնակալության տասներորդ տարում թագավորեցնում է Տի-

քանին, Խոսրովի որդուն և ուղարկում Հայաստան մեծն Վրթանեսի հետ։ Նա գալով խաղաղությամբ պահում է մեր աշխարհը, պարսիկների հետ հաշտություն անելով և ոչ թե պատերազմներ Հարկ վճարելով հույներին, մասնավոր բան էլ պարսիկներին, խաղաղ ապրում էր իր հոր նման, նույնպես ոչ մի քաջության գործ ցույց չտալով, նույնիսկ չհետևելով հայրենական առաքինությանը, այլ ամեն բարեպաշտությունից թուլացած դաղտնի կերպով, որովհետև մեծն Վրթանեսից քաշվելով չէր համարձակվում հայտնապես ախտերին անձնատուր լինել։

Իսկ մեծն Վրթանեսը եպիսկոպոսության տասնևհինգ տարին լրանալիս փոխվում է այս աշխարհից Տիրանի երրորդ տարում։ Թագավորի հրամանով նրան տարան Թաղեցին Թորգան գյուղում, կարծես մարգարեական աչքով տեսնելով, որ շատ ժամանակ անցնելուց հետո նույն տեղում պետք է թաղվեն նրա հոր նշխարները։ Իսկ աթոռը հաջորդում է նրա Հուսիկ որդին, Տիրանի չորրորդ տարում, որ լիովին հետևող է լինում իր հայրերի առաքինության։

ԺԲ

ՇԱՊՈՒՀԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿՈՍՏԱՆԴԻ ՀԵՏ

Բայց Շապուհը, Որմզդի որդին, շատ սեր հաստատեց մեր Տիրան թագավորի հետ, մինչև իսկ նրան թիկունք և օգնական եղավ՝ նրան ազատելով հյուսիսային ապգերի հարձակումից, որոնք միաբանելով դուրս եկան Ճորա պահակից[267] և չորս տարի ժամանակ բանակ դրին ու մնացին Աղվանքի սահմաններում։ Ուրիշ շատ թագավորների էլ նվաճեց Շապուհը և շատ բարբարոս ապգերից էլ օժանդակություն գտնելով՝ հարձակվեց Միջերկրայքի և Պաղեստինի վրա։ Իսկ Կոստանդը Հուլիանոս կեսար[268] դարձնելով՝ ինքը զինվեց պարսիկների դեմ։ Ճակատամարտի մեջ երկու կողմերն էլ պարտություն կրեցին, որովհետև երկու կողմից էլ շատերն ընկան, և ոչ մեկը մյուսից երես չդարձրեց. այնպես որ համաձայնության գալով՝ խաղաղություն կնքեցին մի քանի տարով։ Պարսիկների (պատերազմից) վերադառնալով՝ Կոստանդը երկար հիվանդությունից հետո վախճանվեց Կիլիկիայի Մոմիսուեստա քաղաքում, քսաներեք տարի թագավորելուց հետո։ Սրա օրե-

բում Երուսաղեմում երկնքից երևաց լուսեղեն խաչը քաղաքի բոլոր հավատացյալներին և անհավատներին երանելի Կյուրեղի[269] ժամանակ։

ԺԳ.

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԻՐԱՆԸ ՀՈՒԼԻԱՆՈՍԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԳՆԱԼՈՎ ՊԱՏԱՆԴՆԵՐ Է ՏԱԼԻՍ

Այս ժամանակներում Հունաց վրա թագավորեց ամբարիշտ Հուլիանոսը[270]. նա աստծուն ուրացավ, կուռքերը պաշտեց, հալածանք և խռովություն հուզեց եկեղեցու դեմ և ամեն կերպ ջանում էր քրիստոնեական հավատը հանգցնել. բայց ոչ թե բռնությամբ էր հնազանդեցնում, այլ խորամանկությամբ հնարք էր փնտրում, որ Քրիստոսի պաշտոնը խափանվի և դևերին երկրպագություն մատուցվի։ Երբ նա բուն իրավունքի զինվեց[271] պարսիկների դեմ և Կիլիկիայով անցնելով Միջագետք հասավ, Պարսից սահմանապահ զորքերը Եփրատ գետի նավակամրջի չվանները կտրելով՝ անցքը պաշտպանում էին։ Իսկ մեր Տիրան թագավորը Հուլիանոսին ընդառաջ գալով՝ հարձակվում է Պարսից զորքերի վրա, նրանց հալածում է և սպասավորություն մատուցանելով՝ ամբարիշտ Հուլիանոսին և հեծելազորի ամբողջ բազմությունն անց է կացնում (գետով) և շատ մեծարվում է Հուլիանոսից։

Նրանից այս խնդիրն է անում, որ նրան իր հետ Պարսկաստան չտանի, պատճառ բերելով, թե անկարող է ձի հեծնել։ Հուլիանոսը համաձայնում է, բայց խնդրում է նրանից զորք և պատանդներ։ Տիրանը խնայելով իր երկրորդ որդուն, Արշակին, տալիս է Տրդատին երրորդ որդուն, կնոջ և որդիներով և իր Տիրիթ թոռանը, իր մեռած անդրանիկ որդու՝ Արտաշեսի որդուն։ Հուլիանոսը նրանց առնում անմիջապես ուղարկում է Բյուզանդիոն, իսկ Տիրանին արձակում է՝ իր աշխարհը գնալու։ Նրան տալիս է իր պատկերը, տախտակի վրա նկարված, որի վրա (նկարված էին) նաև մի քանի դևերի պատկերներ, և հրամայում է կանգնեցնել եկեղեցում՝ արևելյան կողմում, ասելով, թե հռոմայեցիների տերության հարկատու ազգերը բոլորն այդպես են անում։ Տիրանը հանձն առնելով բերում է, մտքով չանցկացնելով, թե խաբեությամբ դևերի պատկերներին երկրպագություն կմատուցվի։

ՍՈՒՐԲ ՀՈՒՍԻԿԻ ԵՎ ԴԱՆԻԵԼԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիրանը Սոփաց գավառը հանելով կամեցավ պատկերը դնել իր արքունիքի եկեղեցում։ Սուրբ Հուսիկը պատկերը հափշտակեց թագավորի ձեռքից, գետին գցեց և ոտով կոխեց ու մանրեց, հատկացնելով թագավորին բանի խորամանկություն։ Տիրանը նրան լլսեց, վախենալով Հուլիանոսից, որովհետև մտածեց, թե ինքը կարող է մեռնել, իրեն թագավորի պատկերը ոտնակոխ անող։ Ուստի ավելի ևս բորբոքվեց նրա մեջ ղայրույթը, որ տածում էր դեպի սուրբ Հուսիկը՝ իր հանցանքները շարունակ հանդիմանելու պատճառով, և հրամայեց ճիպոտներով այնքան երկար ձաղկել նրան, որ ծեծելիս հոգին ավանդեց։

Նրա վախճանվելուց հետո Տիրանը նախատինքի և անեծքի ենթարկվեց ծերունի Դանիել քահանայի կողմից, որ սուրբ Գրիգորի աշակերտն ու սպասավորն էր, ուստի հրամայեց նրան խեզդամահ անել։ Աշակերտները նրա մարմինը վերցնելով թաղեցին նրա միայնարանում, որ կոչվում է Հացյաց դրախտ։ Իսկ սուրբ Հուսիկի մարմինը վերցրին տարան իր հոր մոտ, Թորդան գյուղը։ Նա եպիսկոպոսություն արավ վեց տարի։

ԾԵ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՁՈՐԱՆ ՀԱՅՈՑ ՁՈՐՔԵՐՆ ԱՌՆԵԼՈՎ ՀՈՒԼԻԱՆՈՍԻ ՄՈՏԻՑ ՀԵՏ Է ԴԱՌՆՈՒՄ ԵՎ ՅՆԼՈՎ ԿՈՏՈՐՎՈՒՄ Է

Սուրբ Հուսիկի սպանման լուրը և բոլոր նախարարների քըրթմընջյունը հասավ Ոշաունյաց նահապետի ականջին, որ Հայոց Հարավային դնդի զորապետն էր Մանաճիհրի փոխանակ և Տիրանի հրամանով գնացել էր իր զորքով Հուլիանոսի հետ։ Այս լուրը լսելով՝ նա ասաց իր զորքին. «Չվարվենք այն մարդու հրամանով, որ գայթակղություն է գցում Քրիստոսի երկրպագության մեջ և սպանում է նրա սրբերին, և չուղեկցենք այս ամբարիշտ թագավորին»։ Զորքն իրեն կամակից դարձնելով՝ հետ է դառնում և գնում ամրանում է Տմորիքում, մինչև տեսնի, թե ինչ պիտի անեն մյուս նախարարները։ Բայց Հուլիանոսի սուրհանդակները նրա գալուց առաջ են հասնում և բերում են Տիրանին թուղթ հետևյալ բովանդակությամբ.—

Հուլիանոսի թուղթը Տիրանին.

«Ինքնակալ Հուլիանոս, Ինաքի սերունդ, Արամազդի որդի, ճակատագրով անմահության սահմանված, մեր Տիրան գործակային ողջույն։

Այն զորքը, որ մեզ հետ ուղարկեցիր, նրանց զորագլուխն առավ և հետ դարձավ։ Մենք կարող էինք մեր անթիվ գնդերից ուղարկել նրանց հետևից ու բռնել, բայց թույլ տվինք (նրանց հեռանալ) երկու պատճառով. նախ՝ որպեսզի պարսիկները չասեն, թե զորքը բերում է բռնությամբ և ոչ կամովին, և երկրորդ՝ որպեսզի փորձենք քո հավատարմությունը։ Արդ՝ եթե նա այդ բանն արավ ոչ քո կամքով, ապա նրան ցեղովին բնաջինջ արա, որպեսզի մնացորդ չմնա, հակառակ դեպքում երդվում եմ Ռասով[272], որ մեզ թագավորությունը շնորհեց, և Աթենասով, որ հաղթություն, որ մեր վերադարձին անպարտելի զորությամբ կխորտակենք քեզ էլ, քո աշխարհն էլ»։

Տիրանն այս տեսնելով՝ զարհուրում է և Հայր կոչված մարդպետին ուղարկում է Զորայի մոտ, երդումով նրան կանչում է։ Նրա զորքը տեսնելով, որ բոլոր նախարարները լուռ են մնացել, մեր ազգի անժուժկալությամբ ցրվեցին, յուրաքանչյուրը գնաց իր տունը։ Զորան մենակ մնալով ակամայից գալիս է թագավորի մոտ։ Նրան բռնելով՝ թագավորը գրավում է Աղթամարը, նրա ամուր բերդը և բոլորին կոտորում սպառում է։ Բայց մի փոքրիկ երեխա, նրա Մեհենդակ եղբոր որդին, դայակները փախցրին փրկեցին։ Իսկ թագավորը նրա տեղ նշանակում է Սաղամութին, Անձիտի տիրոջը։

ԺԶ

ՀՈՒՍԻԿԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՀԸ ԵՎ ՓԱՌՆԵՐՍԵՀԻ ՀԱՋՈՐԴԵԼՆ ԱԹՈՌԻՆ

Իսկ Հայոց նախարարները Տիրանից խնդրում են մի արժանավոր մարդ, Հուսիկի փոխարեն եպիսկոպոս դնելու համար։ Որովհետև նրա որդիները գովելի վարք չունեցան և անարժան էին այն առաքելական աթոռին. և բացի սրանից, այդ օրերում նրանց վրա մահ հասավ ահռելի, սարսափելի, լսելու արժանի,— մի տեղում երկուսը միասին կայծակնահար եղան, որոնց անուններն էին Պապ և Աթանագինես. նրանք չթողին չափահաս զա-

վակ այդ պաշտոնին համապատասխան, բացի Աթանագինեսի մի որդուց, Ներսես անունով, որ Կեսարիայում սովորում էր և այդ ժամանակ գնացել էր Բյուզանդիոն՝ կին առնելու մի ոմն Ասպիոն մեծ իշխանի աղջկան։ Ուստի որովհետև Գրիգորի ցեղից մարդ չկար, ընտրեցին մի ոմն Փառներսեհի Տարոնի Աշտիշատից և դրին քահանայապետ Տիրանի տասներորդ տարում։ Նա աթոռը գրավեց չորս տարի։

ԺԷ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԻՐԱՆԸ ՇԱՊՈՒՀԻՑ ՆԱԲՎԵՑ ՈՒ ՆՐԱ ԿՈՉԻՆ ԳՆԱՀՈՎ ՆՐԱՆԻՑ ԿՈՒՐԱՑՎԵՑ

Այս բոլորից հետո ամբարիշտ Հուլիանոսը փորից վիրավորվելով սատկում է Պարսկաստանում, ինչպես արժանի էր նրա չար խորհուրդների համար։ Նրա գործը հետ դարձավ, թագավոր ընտրելով Հոբիանոսին, որը ճանապարհին վախճանվեց՝ Բյուզանդիոն չհասած։ Իսկ Պարսից Շապուհ թագավորը նրանց հետամուտ է լինում և խաբեությամբ կանչում է Տիրանին իր մոտ, պրելով նրան այսպիսի թուղթ.—

Շապուհի թուղթը Տիրանին։

«Մազդեզանց քաջ[273]*, արեգակին բարձակից Շապուհ արքայից արքա. մեր բարյացակամությամբ հիշած սիրելի եղբոր, Հայոց Տիրան թագավորին շատ ողջույն։*

Մենք ստուգապես վերահասու եղանք, որ դու հաստատ պահեցիր քո սերը դեպի մեզ, կայսրի հետ չեկար մեր Պարսից աշխարհը, և այն գունդը, որ քեզանից առավ (Հուլիանոսը), հետևիցդ մարդ ուղարկելով հետ կանչեցիր։ Եվ առաջինը ինչ որ դու արիր, գիտենք նրա համար արիր, որպեսզի քո աշխարհով չանցնի, այն, ինչ որ նա ինքը պիտի աներ։ Ուստի մեր պահապանները երկյուղությամբ թողին հետացան՝ քեզ պատճառ բռնելով, որի վրա զայրանալով՝ մենք ցուլի արյուն տվինք խմցնել նրանց գլխավորին։ Քո թագավորությանը մենք ոչ մի վնաս չենք հասցնի, երդվում ենք Միհր մեծ աստուծով, միայն շտապիր գալ մեզ տեսության, հասարակական օգուտի մասին խորհրդակցելու համար»։

Տիրանն այս տեսնելով՝ խելագարվեց գնաց նրա մոտ, որով-

Հետև արդարությունը նրան տանում էր հատուցման տեղը։ Շապուհը նրան տեսնելով՝ նախատեց խոսքերով իր զորքերի դեմ հանդիման և նրա աչքերը կուրացրեց, ինչպես հնում Սեդեկիային[274]։ Գուցե սրանով նա վրեժը տուժեց սուրբ մարդու, որով չուսավորվում էր մեր աշխարհն ըստ ավետարանի խոսքի, աշխարհի լույսը լինելով։ Տիրան նրա լույսը խավարեցրեց Հայաստանում և ինքն էլ խավարեց, տասնամեակ տարի թագավորություն անելուց հետո։

ԾԸ

ՇԱՊՈՒՀԻ ԱՐՇԱԿԻՆ ԹԱԳԱՎՈՐԵՑՆԵԼԸ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆ ԱՐՇԱՎԵԼԸ

Բայց Շապուհը Տիրանի փոխարեն թագավորեցրեց նրա որդուն Արշակին, ակնածելով Հայոց զորքերից, որպեսզի որևէ կերպով չխափանեն իր ձեռնարկելիք գործը։ Նա այսպես պատշաճ համարեց, որ բարեպաշտություն անելով մեր աշխարհը հաստատ իր կողմը գրավե. նախապարական ցեղերն էլ նա ջնջեց, ամենքից պատանդներ առնելով։ Եվ Հայոց արևելյան զորքին վահան Ամատունու փոխանակ սպարապետ նշանակեց իրեն հավատարիմ Սյունի Վաղինակին, և Հայաստանը նրան հանձնելով, ինքը հետամուտ եղավ հունական զորքին, հասավ մինչև Բյութանիա և այնտեղ նստեց շատ ամիսներ։ Ոչինչ անել չկարողանալով, ծուլի մոտ մի սյուն է կանգնեցնում, վրան դնում է առյուծ, ոտքերի տակ մի գիրք բռնած, որ այս է նշանակում. ինչպես առյուծը հզորն է գազանների մեջ, այնպես է և Պարսկականը թագավորների մեջ, իսկ գիրքը պարունակում է գիտություն՝ ինչպես է Հռոմայեցիների տերությունը։

ԾԹ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿ ԱՐՇԱՄԱՐՀԵՑ ՀՈՒՆԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Այս ժամանակների ընթացքում հյուսիսային ազգերի կողմից խռովություններ ծագեցին, (որոնք զբաղեցրին) Պարսից Շապուհ թագավորին։ Իսկ հույների վրա թագավորեց Վաղենտիանոս, որ զորքի գումարտակ է ուղարկում Միջերկրայք և հալածում է պարս-

կական զորքերին։ Հետո մեր Արշակ թագավորին ուղարկում է այսպիսի թուղթ.—

Վաղենտիանոսի թուղթն Արշակին

«Ինքնակալ Վաղենտիանոս Ավգոստոս, մեր աթոռակից և թագակից Վաղես կայսրի հետ, Հայոց Արշակ թագավորին ողջույն։

Դու պետք է հիշեիր այն չարիքները, որ ձեզ հասան անաստված պարսիկներից, և այն երախտիքները, որ մեզանից գտել եք հնուց իվեր մինչև քո ժամանակ, և պետք է հեռանայիր նրանցից և մեզ մոտենայիր։ Որպեսզի մեր զորքի հետ խառնըվելով, միասին կռվեք նրանց դեմ. մեր այդտեղի զորավարների ձեռքով ուղարկիր ձեր աշխարհի հարկերը, նրանց գոհացողական թղթերով, որպեսզի նրանք քո այստեղի եղբորը և նրա հետ եղած պատանդներն առնելով դուրս բերեն։ Ողջ եղիր, լիովին հնազանդությամբ մեր հռոմեական տերությանն»։

Իսկ Արշակը նույնիսկ չպատասխանեց այս թղթին, այլ ատամ բացելով նրանց արհամարհեց. միևնույն ժամանակ նա Շապուհի կողմն էլ չդարձավ բոլոր սրտով, այլ ինքնահավանությամբ պարծենում էր միշտ կերուխումների ժամանակ և վարձկան երգիչների բերանով, իբրև թե Աքիլլեսից[275] էլ ավելի քաջ ու արի է, բայց իրոք նմանվելով կաղ ու սրագլուխ Թերսիտեսին, իր մեծամեծներից մերժված, մինչև որ իր ամբարտավանության վարձն ստացավ։

Ի

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍԻ ՆՎ ՆՐԱ ՄՈՒՏՔԱԾ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արշակի թագավորության երրորդ տարում Հայոց եպիսկոպոսապետ դարձավ մեծն Ներսես, Աթանագինեսի որդին, Հուսիկի որդու, Վրթանեսի որդու, սուրբ Գրիգորի որդու։ Բյուզանդիայից Կեսարիա վերադառնալով՝ նա եկավ Հայաստան և իր հայրերի բոլոր ուղղության կարգերը նորոգեց, և ավելին ևս, որովհետև ինչ բարեկարգություններ որ նա տեսավ հույների աշխարհում, մանավանդ թագավորանիստ քաղաքում, նույնը սահմանեց և մեր աշ-

խարհում։ Նա եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմաններով հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արավ անգթությունը, որ մեր երկրում իբրև սովորական էր։ Որովհետև բորոտները[276] հալածվում էին, իբրև օրենքով պիղծ ճանաչված մարդիկ, ուրուկներին էլ փախուստի էին ենթարկում, որպեսզի ախտը նրանցից ուրիշների վրա չփոխադրվի. նրանց կացարաններն անապատներն էին և ամայի տեղերը, նրանց ծածկույթը՝ քարերն ու մացառները, իրենց թշվառության մեջ նրանք ոչ ոքից մխիթարություն չէին գտնում։ Բացի սրանցից, հաշմանդամները չէին խնամվում, անծանոթ հյուրեր չէին ընդունվում, օտարականները պաշտպանություն չէին գտնում։

Իսկ նա հրամայեց, որ ամեն մի գավառում շինեն աղքատանոցներ առանձնացած անբնակ տեղերում, որպեսզի Հունաց հիվանդանոցների նման մխիթարություն լինեն մարմնով վշտացածներին։ Այս (հիվանդանոցների) վրա բաշխեց ավանները և ագարակները, որպեսզի իրենց արտերի արդյունքներից, արածող անասունների կթից ու բրդից բաժին հանեն և պարտավորաբար նրանց պետքերը հոգան, հեռանց հեռու, իսկ նրանք դուրս չգան իրենց բնակության (սահմանված) շենքերից։ Այս գործը նա հանձնեց իր սարկավագին, Խազ անունով, որ Կարնի Մարգաց (գյուղից) էր։ Նույնիսկ սահմանում է, որ բոլոր գյուղերում իջևաններ շինվեն օտարականների համար, սնունդի տեղեր որբերի և ծերերի համար և խնամք չքավորների համար։ Շինում է նաև անապատ և անմարդաբնակ տեղերում եղբայրանոցներ և մենաստաններ և մենակ (ճգնողների) համար խրճիթներ։ Սրանց վրա հայր և վերահսկիչ է նշանակում Շաղիտային, Նպիփանին, Նիրեմին և Գինդին Սկունյաց ցեղից և ուրիշ մի քանիսին։

Եվ նախարարական ցեղերի միջից վերացնում է այս երկու բանը.— առաջին՝ խնամությունը մերձավոր ազգականների միջև, որը գործադրում էին՝ սեպուհական աղնվականության պատճառով ազատելով, և երկրորդ՝ որ մեռածների վրա ոճիրներ էին գործում հեթանոսական սովորությամբ։ Այնուհետև մեր աշխարհի մարդիկ երևացան արդեն ոչ բարբարոսների պես այլանդակված, այլ քաղաքացիների նման համեստացած։

ԻԱ

ԱՐՇԱԿԻ ԵՂԲՈՐ՝ ՏՐԴԱՏԻ ՍՊԱՆՎԵԼԸ, ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍԻ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ ԳՆԱԼՆ ՈՒ ՊԱՏԱՆԴՆԵՐԸ ՀԵՏ ԴԱՐՁՆԵԼԸ

Վաղենտիանոսն անիրավ մարդկանց վերաբերմամբ շատ խիստ ու ահավոր էր. նա շատ իշխաններ սպանեց հափշտակության պատճառով, և Ռոդանոս անունով մի ներքինապետ կենդանի այրեց, որովհետև ինքը երեք անգամ հրամայեց, բայց նա չվերադարձրեց մի այրի կնոջից հափշտակած գույքը։ Նույն այդ օրը հասան նրա այն պատգամավորները, որոնց ուղարկել էր Հայաստան և նրան ավելի զայրացրին՝ Արշակի խրոխտալու դեպքը պատմելով։ Եվ որովհետև նա բարկացած դրության մեջ էր, հրամայեց սպանել Արշակի եղբորը Տրդատին, մանուկ Գնելի հորը, և Թեոդոսին պատվիրեց ծանր դորքով Հայոց վրա դիմել։ Երբ նա Հայաստանի սահմաններին հասավ, Արշակը զարհուրեց, նրան ընդառաջ ուղարկեց մեծն Ներսեսին, խնդրեց հաշտվել, խափանված հարկերը լիովին վճարեց և Ներսեսին շքեղ ընծաներով նրա հետ ուղարկեց (Բյուզանդիոն)։ Նա գնալով՝ թագավորին հանդարտեցնում է, շատ մեծարվում է նրանցից և պատանդները խնդրում՝ հետ է առնում ու վերադառնում։ Եվ մի կույս Ոլիմպիադա անունով, կայսրի ցեղից, կին է բերում Արշակին։ Բայց կայսրը բարեբարությունն անելով մանուկ Գնելին, նրա հոր Տրդատի անմեղ մահվան համար իրենց ձեռքով՝ տալիս է հյուպատոսության պատիվ և շատ գանձեր։ Տիրիթը սրա վրա նախանձելով՝ շարունակ մտածում էր նրան չարիք գործել, հարմար օրվան սպասելով։

ԻԲ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԱՎ ԱՐՇԱԿԻ ԵՎ ԳՆԵԼԻ ՄԵՋ, ԵՎ ՏԻՐԱՆԻ ՄԱՀԸ

Իսկ Գնել եկավ Կուաշ ավանը Արագած կոչված լեռան ստորոտում, իր կուրացած Տիրան պապի մոտ, որ դեռ կենդանի էր։ Տիրանը դառնապես ողբաց իր Տրդատ որդուն, Գնելի հորը, ինքն իրեն պատճառ համարելով նրա սպանվելուն, ուստի Գնելին է տալիս իր բոլոր ունեցածը և կալվածները, գյուղեր և դաստակերտներ, և հրամայում է հենց նույն Կուաշ ավանում բնակվել։

Այնուհետև Գնելը կին է առնում մի ոմն Փառանձեմի, Սյունյաց ցեղից, և թագավորավայել հարսանիք անելով առատ-առատ պարգևներ է տալիս բոլոր նախարարներին։ Սրանք նրան հավանելով ու սիրելով՝ իրենց զավակներին նրան հանձնեցին, որոնց նա փառավոր զարդարեց զենքերով ու զարդերով։ Սրա համար նրան ավելի ևս սիրեցին։ Այստեղ ահա Տիրիթն առիթ գտավ քսության։ Նա եկավ թագավորի մոտ իր բարեկամ Վարդանի հետ, որ թագավորի դինակիրն էր, Մամիկոնյան տոհմից, և ասում են. «Մի՞թե չգիտես, որ Գնելը միտքը դրել է քեզ սպանել և քո փոխանակ թագավորել։ Ահա տես, թագավոր, այս բանի ապացույցները. Գնելը բնակվեց Այրարատում, ձեր թագավորական կալվածում, բոլոր նախարարները սրտով նրան են հարած։ Կայսրներն այս գավը սարքելով՝ նրան հյուսլատոսության պատիվ տվին և շատ մեծ դանձ, որով նա նախարարներին գրավեց»։ Վարդանը երդվում էր թագավորի արևով և ասում էր. «Ես իմ ականջովս լսեցի Գնելից, որ ասում էր, թե ես իմ հորեղբորը չեմ թողնի իմ հոր մահվան վրեժը, որ նրա պատճառով եղավ»։

Արշակ այս բանին հավատալով՝ նույն Վարդանին ուղարկում է Գնելի մոտ, թե «Ինչո՞ւ բնակվեցիր Այրարատում և հայրենական կարգը խանգարեցիր։ (Որովհետև սովորություն այնպես էր, որ Այրարատում բնակվի միայն թագավորը և նրա մի որդին, որին պահում էին իբրև թագավորին հայրդրդ, իսկ մյուս Արշակունիներն ապրեն Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի գավառներում, արքունական եկամուտներով և ուտևտով)։ Արդ՝ դու պետք է ընտրես երկուսից մեկը, կա՛մ մահ ընդունել, կամ Այրարատից հեռանալ և քեզանից հեռացնել նախարարների որդիներին»։ Գնելն այս լսելով թագավորի հրամանը կատարեց ու գնաց Աղիովիտ և Առբերանի։ Բայց Տիրան, նրա պապը, խիստ խոսքեր ուղղեց իր Արշակ որդուն, որի պատճառով իր սենեկապետների ձեռքով խեղդամահ եղավ՝ Արշակի գաղտնի հրամանով և թաղվեց նույն կուշտ ավանում, չարժանանալով իր հայրերի գերեզմաններին. գուցե նա հատուցումն արավ աստծու մարդու՝ Դանիելի մահվան։ Ինչ չափով որ չափեց, նրանով էլ ինքը չափվեց, ինչպես ասված է ս. գրքում[277],

ԻԳ

ԱՐՇԱԿԻ ՆՈՐԻՑ ՆԱԽԱՆՁԵԼԸ ԳՆԵԼԻՆ ԵՎ ՆՐԱՆ ՍՊԱՆԵԼԸ

Սրանից հետո թագավորը որսի գնաց Մասիսի թիկունքում իր սիրած Կոգայովիտ գավառը։ Սաստիկ մեծ որս եղավ, և Արշակը խմելիս պարծենում էր, թե իրենից առաջ ոչ մի թագավորի ժամանակ այսքան բազմաթիվ երե չի կոտորվել մի ժամում։ Այստեղ Տիրիթն ու վարդանը նորոգում են իրենց նենգությունն ասելով, թե Գնելը այդ օրերում ավելի շատ երեներ է սպանել իր լեռան վրա, որ Շահապիվան է կոչվում, որ նրան հասել էր նրա մոր պապից, Գնել Գնունուց։ Ուստի (Արշակը Գնելին) այսպիսի հրովարտակ է ուղարկում.—

Արշակի թուղթը Գնելին

«Արշակ, Մեծ Հայքի թագավոր, իմ Գնել որդուն ողջույն։ Այդտեղ, Ծաղկանց լեռան[278] վրա, անտառում և ջրավետ տեղում ընտրիր և պատրաստիր առատ որսով տեղ, որպեսզի մենք գանք և թագավորավայել որսի հանդիպենք»։

Հրովարտակն ուղարկելուց հետո Արշակն իսկույն գնաց, մտածելով, որ եթե Գնելը հրամանի համաձայն չի կատարել, նրան կապե, իբրև թե նա դժկամակել է թագավորի ուրախանալուն։ Բայց երբ գալիս տեսնում է որսի այնպիսի պատրաստություն և երեների այնպիսի բազմություն, որ նա երբեք չէր տեսել, խոցվում է սրտում նախանձից ու կասկածներից, և հրամայում է նույն վարդանին՝ որսատեղում Գնելին սպանել, իբրև թե պատահմամբ, նետը որսի վրա արձակելիս՝ նրան դիպչելով։ Այս հրամանն ստանալով՝ նա իսկույն կատարում է, ոչ այնքան թագավորի հրամանի պատճառով, որքան իր սիրելի Տիրիթի կամքը կատարելով։ Իսկ Արշակը Գնելի դին նախարարների հետ ազիովտի դաշտն իջեցնելով՝ թաղում է արքունական Զարիշատ քաղաքում և անմեղ ձեռնալով՝ մեծ կոծ է կատարում։

ԻԴ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿԸ ՀԱՆԴԻՒՆՑ ԳՆԵԼԻ ԿՆՈՋՆ ԱՌՆԵԼ, ՈՐԻՑ ԾՆՎԵՑ ՊԱՊՔ

Թևպետ կարծում էր Արշակ, թե այդ չարիքները թաքուն գործեց, բայց ինչ որ չի ծածկվում աստծու ամենատես աչքից, հայտ-

նի է դառնում և աշխարհին, հանցավորներին ի սարսափ, ինչպես Տիրանի և Գնելի մահը։ Երբ բոլորն այս բանն իմացան, իմացավ նաև մեծն Ներսես, որ անիծելով Արշակին և սպանության առիթ եզողին, գնաց սուգ նստավ շատ օրեր, ինչպես Սամվելը Սավուղի համար։ Իսկ Արշակ չզղջաց, չապաշխարեց, այլ անամոթաբար, սպանվածի գանձերին և ժառանգությանն ագահելով, դեռ նրա կնոջը, Փառանձեմին էլ իրեն կին առավ, որից ծնվեց մի պատանի, որ կոչվեց Պապ։

Այս Փառանձեմը մի անլուր և անկարելի չարիք դործեց, որից լսողները պիտի սարսափին։ Մի անարժան ու սուտանուն քահանայի ձեռքով մահացու դեղ խառնեց կյանքի դեղի մեջ[279] և տվեց Ոլիմպիադային, Արշակի առաջին կնոջը, և նրան կյանքից զրկեց, նախանձելով նրա տիկնության վրա։ Նույնպես և Արշակի ձեռքով սպանել է տալիս Վաղինակին և նրա տեղ նշանակում է իր հորը՝ Անտիոքին։

ԻԵ

ՏԻՐԻՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Շապուհը հյուսիսական ազգերից խստզաղվեց և պատերազմներից հանգիստ առավ՝ արտահայտեց իր բարկությունը Արշակի վրա, որ նա այնքան տարիներ հարկ է տալիս կայսրին, և ոչ իրեն։ Այս պատճառով Արշակ նրա մոտ է ուղարկում Տիրիքին և նրա սիրելի Վարպանին՝ արժանավայել ընծաներով, հաշտություն խնդրելու համար։ Բայց Շապուհը որովհետև ուզում էր հույներից վրեժխնդիր լինել անցյալ պատերազմների համար ինքը գնում է նրանց դեմ պատերազմի, ուստի և խնդրում է մեր Արշակ թագավորին, որ իր հետ գնա բոլոր Հայոց զորքերով։ Բայց Արշակը, պատճառներ բերելով, չկամեցավ անձամբ գնալ, այլ մի փոքր գունդ ուղարկեց Շապուհի հետևից։

Իսկ ինքը Տիրիքի վրա բարկանալով, զրկում է պատվից, իբրև թե այդ բանը կատարվեց նրա թելադրանքով, որովհետև նա ատում էր հույներին։ Թագավորին ավելի գրգռում էր նրա զինակիրը, Վասակը, որ եղբորը նախանձում էր մի հարճ աղջկա պատճառով։ Ուստի թագավորը նրանց (Տիրիքին ու Վարդանին) սաստիկ նախատեց ամոթալի վիրավորական խոսքերով։ Իսկ

նրանք այսպիսի անպատվություն և պարսավանք տանել չկարողանալով՝ զատվեցին (Արշակից) և դիմեցին գնացին Շապուհի մոտ։ Սրա վրա ավելի զայրանալով՝ Արշակ հրամայում է նույն Վասակին՝ նրանց հետևիցն ընկնել ուժեղ գնդով և նրանց սպանել, որտեղ որ նրանց հասնի։ Վասակն անփույթ չեղավ (այս հրամանը) կատարելու, թեպետ Վարդանը իր եղբայրն էր։ Այս կերպով Գնելի անմեղ արյան վրեժը պահանջվեց ամբարիշտ Տիրիթից, ինչպես անիծել էր Ներսեսը, և Վարդանից, որին վիճակվեց իր հարազատ եղբորից սպանվել։

ԻԶ

ՇԱՊՈՒՀԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԵԼԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Իսկ Շապուհը դալիս հասնում է մեր Տիգրանակերտ քաղաքը։ Նրան դեմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ զորքը, որովհետև Սյունյաց Անտիոք նահապետը, որ Արշակի աներն էր և քաղաքի վերակացուն, հրամայեց քաղաքի դռները կողպել Շապուհի առաջ։ Եվ ոչ միայն արգելեց մտնել, այլև ոչ պատգամավորներ ուղարկեց նրա մոտ, ոչ էլ նրա ուղարկածներին ընդունեց։ Տեղի ունեցավ խիստ կռիվ, որի ժամանակ շատ պարսիկների սպանեցին. Շապուհի գունդը պարտություն կրելով նորից Մծբին դարձավ։ Երբ զորքը հանգստացավ ու կրած նեղություններից կաղդուրվեց՝ (Շապուհը) կամեցավ (դնալ և) Տիգրանակերտն առնել, բայց նրա առաջապահ գնդերը և լրտեսները չթողին այս բանով զբաղվել, (ասելով թե) դրանով հույների դեմ ձեռնարկված գործը կխանգարվի։ Եվ Շապուհն առաջ անցնելով՝ այսպիսի թուղթ է գրում նրանց.—

Շապուհի թուղթը Տիգրանակերտին

«Մաղթեզանց քաջ Շապուհ արքայից արքա, Տիգրանակերտացիներին, որ այլևս չեք հիշվելու արյաց և անարյաց մեջ։

Ես կամենում էի ձեզանից սկսելով բոլոր առաջիկա քաղաքները մուտք գործել խաղաղությամբ և քաջին վայել ազնվականությամբ։ Եվ եթե դուք, տիգրանակերտցիներդ, որ առաջինն եք, ոչ թե քաջությամբ, այլ իմ ուղևորության ճանապարհի վրա, ինձ հակառակ կանգնեցիք, մյուսներն էլ ձեզանից օրինակ կառնեն

նույնպես վարվելու։ Բայց իմ դարձի ժամանակ իմ բարկությամբ ձեզ այնպես կվնասեմ, որ նորից սրինակ դառնաք խելացնոր ատահականերին»։

ԻԷ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿԱՎԱՆԸ ՇՈՒՆԻՑ ՈՒ ԿՈՐՍԱՆՎԵՑ, ԵՎ ԱՆԻՆ ԱՌՆՎԵՑ

Բայց Արշակն ավելի ևս հանդգնելով մի անմիտ գործ գործեց։ Մասիս լեռան թիկունքում նա շինեց մի դաստակերտ—մեղավոր մարդկանց ժողովատեղի. և հրաման արձակեց, թե ով որ կարողանա այդտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա դատաստան և իրավունք չի լինի։ Անմիջապես բոլոր հավիտը ինչպես ժող լցվեց մարդկանց բազմությամբ. որովհետև ավանդատուներն ու պարտապանները, ծառաներն ու հանցագործները, զղերն ու մարդասպանները, ուրիշների կանանց փախցնողները և ուրիշ սրանց նմանները փախչում ապաստանում էին այնտեղ,—և նրանց դեմ հարց ու դատաստան չկար։ Նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակ նրանց չլսեց, այն աստիճան, որ նրանք մինչև Շապուհին դիմեցին։ Եվ երբ Շապուհ Հունաստանից հետ էր դառնում, իր սպարապետներից մեկին հայ գնդով ուղարկեց, որ երբ դիպքը դա, Արշակին բռնի։ Բայց նա խուսափեց նրանցից, փախավ Կովկասի կողմերը, վրացիների հետ միաբանելով։

Իսկ Պարսից սպարապետը Հայաստան գալով նախարարների օժանդակությամբ առնում է Անի ամրոցը, ավարի է առնում այնտեղ պահված բոլոր արքունական գանձերը, այլև թագավորների ոսկորները, չդիտեմ՝ Արշակին նախատինք հասցնելու նպատակով, թե որևէ հեթանոսական հմայքի համար։ Բայց հետո նախարարները խնդրեցին հետ տտացան (ոսկորները) և թաղեցին Աղջք ավանում, Արագած կոչված լեռան ստորոտում։ Որովհետև նրանք չկարողացան ջոկել հեթանոսների և հավատացյալների ոսկորները, քանի որ գերողները խառնել էին իրար հետ, ուստի արժան չհամարեցին թաղել սրբերի հանգստարանում, վաղարշապատ քաղաքում։

Իսկ Հայոց նախարարները ժողովվելով դիմեցին թագավորական դաստակերտի՝ Արշակավանի վրա, սրով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բացի ծծկեր երեխաներից, որովհետև նրանք յուրաքանչյուրը կառաղած էին իրենց ծառաների և վնա-

սարարների դեմ։ Այս բանը թեպետ իմացավ մեծն Ներսեսը, բայց չկարողացավ կուսորածից առաջ հասնել, այլ հասավ վերջում, երբ կուսորվածների երեխաներին բաժանվով ուղում էին գերի առնել, ինչպես հեռավոր թշնամիների երեխաներին։ Մեծն Ներսեսը նրանց ազատեց և հրամայեց քթոցներով կրել[280] մի գոմ. նրանց համար սնուցիչներ և սնունդ նշանակեց։ Հետո նրանք (մեծանալով) ավան կազմեցին, որ այս պատճառով կոչվեց Որթք (քթոցներ)։

ԽԸ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՌՆՎԱԼԸ ԵՎ ՀԻՄՆՈՎԻՆ ՔԱՆԴՎԵԼԸ

Իսկ Շապուհ հկավ Տիգրանակերտ։ Դռները գարձյալ կոդպեցին և պարսպի վրա բարձրանալով աղաղակում էին. «Հեռացի՛ր մեզանից, Շապուհ, ապա թե ոչ քեզ առաջինից սվելի մեծ չարիքներ կհասցնենք»։ Իսկ նա պատասխանեց. «Ո՛վ քաջ հայեր, որ ինքներդ ձեզ արդելել փակել եք Տիգրանակերտի պարիսպների հետև, և ներսից սպառնալիքներ եք արձակում։ Քաջ տղամարդիկ կռվում են արձակ դաշտում և ազատ տեղում. կանայք են, որ փակվում են, կռվից վախենալով»։ Այս առելով դարձավ գերի բռնված հույներին և առաջ. «Նրա ձեր կռվելով այս քաղաքն առնեմ, ձեզ բոլորիդ կպատառեմ ձեր բնտանիքներով հանդերձ», իսկ Պարսից զորքերին հրամայեց քաղաքի շուրջը պատվել և պարսպի վրա եղողներին նետերով խոցոտել։

Իսկ հույները մոտ գալով, մեծ ուժով պարսպին դեմ դրին էշ կոչված (գործիքը)։ Սա մի անվավար մեքենա է, որ քշելով տանում են երկար մարդ, նրանց ներքևում կան կացիններ, երկբերանի սակրներ և սրածայր մուրճեր՝ հիմքերը փորելու համար, և այն պատերը, որ Հայկազնյան Տիգրանը շինել էր հաստ և ամուր, հիմքից քանդելով, տապալեցին, դռներում և բոլոր կողմերում կրակներ վառեցին, և նետում էին բարեր, նետեր և տեգեր։ Մերոնք խոցոտվելով շշկլվեցին։ Բոլոր զորքը ներս մտավ, պարսկական ձեռքը չէր հոգնում բազմախոդխոդ սուրը արյունով հագեցնելուց, այնպես որ սպանվածների արյունով լցվում էին հիմքերը։ Իսկ հունական ձեռքը կրակի էր մատնում բոլոր փայտակերտ շինություններ։ Շապուհը կուսորածից մնացածներին գերի առնելով չվում է Պարսկաստան, իսկ Հայաստանում

եղած գնդերին մարդիկ է ուղարկում, հրամայելով, որ Սյունյաց տոհմը (բնաջինջ անեն) անզավակ դարձնեն[281]։

ԻԹ

ԱՐՇԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԻՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՊԱՊԻ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ ՈՒՂԱՐԿՎԵԼԸ

Շապուհի համար դարձյալ խռովություններ ծագեցին նույն (Հյուսիսական) ազգերից, իսկ խաղաղությունը շատ եկավ Հույների կողմը, համաձայն այն խոսքի, թե փոփոխակի իրար փոխարինում են[282], սրանց խաղաղությունը նրանց խռովության մեջ է կայանում, և նրանց խաղաղությունը սրանց խռովության մեջ, այնպես որ մեկի վախճանը մյուսի սկիզբն է դառնում։ Որովհետև Վաղենտիանոսը[283] Բերգիտիոն կոչված բերդում հիվանդանալով մեռնում է, և տերությունն առնում է նրա եղբայրը, Վաղես, որ Գոթերի հետ բարեբախտ պատերազմ մղելով ու հաղթելով հետ է դառնում և անմիջապես զորք է ուղարկում Միջագետք, Հայաստան՝ Շապուհին օգնական զորք տալու համար։

Բայց Արշակը վրացական գնդով գալով՝ իր մտերիմներից էլ սակավաթիվ զորք է ժողովում և պատերազմ է սկսում այն նախարարների հետ իր Արշակավան դաստակերտի վրեժն առնելու համար։ Նրանք էլ միաբանելով՝ Ներսեհի, Կամսարի որդու առաջնորդությամբ պատերազմով դիմագրավում են Արշակին։ Տեղի է ունենում սաստիկ կռիվ, որի մեջ յուրաքանչյուր կողմից շատ մարդիկ են ընկնում. տղամարդ տղամարդի դեմ դուրս գալով, ոչ մեկը չէր կամենում պարտություն կրած լինել։ Երբ նրանք սրանով են լինում զբաղված, վրա են հասնում կայսերական զորքերը։ Այն ժամանակ Արշակը տեսնելով, թե իրեն թշնամի են Շապուհը, Վաղեսը և իր նախարարները, ամենքից լքված՝ շատ անգամ մարդ է ուղարկում մեծն Ներսեսի մոտ աղաչանքով, խոստանում է հետ կանգնել բոլոր չար ճանապարհներից, նրա կամքով վարվել, քուրձով ու մոխրով ապաշխարել, միայն թե նա գա, խաղաղություն դնի և իրեն փրկե հզոր Հույների ձեռքից։ Նույն բանի համար նախարարների կողմից էլ իրար վրա հաճախ խնդիրներ էին գալիս. այնպես էլ եպիսկոպոսները ժողով գումարե-

լով նրան թախանձելով խնդրում էին, որ անտարբեր չմնա իր վիճակի կորուստին։

Ապա մեծն Ներսեսը համաձայնելով ելավ և նրանց մեջ խաղաղություն հաստատեց, որովհետև թագավորն էլ, նախարարներն էլ նրան լսեցին, բացի Արծրունիների նահապետ Մեհրուժանից և նրա քրոջ մարդուց Վահան Մամիկոնյանից, որոնք անլսող եղան և ապստամբելով գնացին Շապուհի մոտ։ Իսկ մյուս բոլոր նախարարները ուխտ հաստատեցին, որ թագավորն այնուհետև ուղղությամբ վարվի և իրենք հավատարմությամբ նրան ծառայեն։ Այսպես (հաստատվեց) նրանց մեջ։ Բայց Հունաց զորքերի մոտ էլ գնաց մեծն Ներսեսը և աղաչում էր, որ մեր աշխարհին վնաս չհասցնեն, այլ հարկերն ստանան, Արշակի որդուն Պապին բոլոր նախարարների որդիներով հանդերձ պատանդ վերցնեն ու հետ դառնան։ Քաղցր ու մեծ Թեոդոս զորավարը համաձայնեց ու դարձավ կայսրի մոտ պատանդներով հանդերձ, հետը տանելով մեծն Ներսեսին Արշակի թղթով, որ հետևյալ բովանդակությունն ուներ.—

Արշակի թուղթը Վաղեսին

«Արշակ թագավոր Մեծ Հայքի և Արամյան ազգի բոլոր նախարարներս մեր տիրոջ՝ ինքնակալ Վաղես Ավգուստոսին և քո Գրատիանոս որդուդ ողջույն։

Թող ինքնակալդ այնպես չմտածե, թե մենք ձեր ատելուց ստամբակեցինք կամ մեզ հզոր համարելով ասպատակող գունդ ուղարկեցինք Հունաց երկիրը. բայց դիտենալով, որ մեծ խռովություն է ծագել ձեր մեջ և որ ոչ ոք մեզ չի փրկի Շապուհի ձեռքից, երկյուղից նրան օգնեցինք մի փոքր գնդով. բայց ես ինքս, Արշակս, նրա հետ չեկա, հավատարիմ մնալով ձեզ, որի պատճառով նա ավերեց մեր աշխարհը, մինչև անգամ մեր հայրերի գերեզմանները փորեց, ոսկորները հանեց։ Արդ՝ այս երդություններին հավատալով՝ հաստատ պահեցեք ձեր նախկին սերը դեպի մեզ և մենք հավատարմությամբ ձեզ կծառայենք»։

Բայց Վաղեսը ոչ թուղթը կարդաց և ոչ մեծն Ներսեսին կամեցավ տեսնել, այլ ուղղակի հրամայեց նրան աքսորել և բոլոր պատանդներին սրի անցկացնել։

Լ

ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍԻ ԱՔՍՈՐՎԵԼԸ ԵՎ ԱՆԲՆԱԿ ԿՂԶԻ ԳՆԱԼԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՔ ԿԵՐԱԿՐՎՈՒՄ ԷԻՆ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՆԱՄՔՈՎ

Այս ժամանակ Բյուզանդիոնի եպիսկոպոսական աթոռը նըստում էր հոգեմարտ Մակեդոնը։ Երբ արքունիքից հրաման եկավ մեծն Ներսեսին աքսորելու, իբրև մի անգամ կայսրին խաբողի և ուխտադրուժի, նրա մոտ եկան մի քանի հերձվածողներ Արիոսի աղանդից և ասացին. «Եթե մեզ հետ դավանես, քեզ կփրկե մեր հայրը, Մակեդոնը»։ Նա չհամաձայնեց ու աքսորվեց։ Երբ նավով լողում էին, ձմեռվա խիստ քամիները նավը քշեցին դեպի մի անապատ կղզի ու խորտակեցին։ Նավորդները չէին վստահանում մակույկներով նավել, մնացին տարակուսած և ուտում էին անտառի ծառերի արմատները։ Բայց աստծու խնամքով նրանք ութ ամիս կերակրվեցին այն ձկներով, որ ծովը կենդանի ափ էր գցում։ Իսկ Պապը և բոլոր պատանդները հանձն առան և Մակեդոնը նըրանց ազատեց։

ԼԱ

ԱՐՇԱԿԻ ԿՈՏՈՐԵԼԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ ԵՎ ԽԱԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Երբ մեծն Ներսեսը հեռացավ, Արշակը դրժեց բոլոր պայմանները, որ կնքել էր նախարարների հետ և կամեցավ իր Արշակավան դաստակերտի վրեժը հանել։ Նա կոտորեց նախարարներից շատերին, մանավանդ բնաջինջ արավ Կամսարականների ցեղը, ագահելով Արտագերս ամրոցին և Երվանդաշատ քաղաքին, որ նրանց ոստանն[284] *էր։ Նրանց հրավիրեց իր մոտ, Արմավիրի լըքված պալատը, իբրև ազգականների, պատվելու, մեծարելու պատճառանքով, և հրամայեց բոլորին միանգամայն կոտորել, մարդկանց, կանանց, երեխաներին։ Ոչ ոք նրանցից չփրկվեց, բացի Սպանդարատից, Արշավիրի որդուց, որ Արշակունյաց (տոհմից) կին ունենալով՝ գնաց բնակվեց նրա ժառանգության կալվածում, Տարոնի և Հաշտյանքի կողմերում, իբրև տրտնջող իր Ներսեհ հորեղբորից. այս պատճառով էլ նա նրանց կոտորածի տեղում չհանդիպեց։ Բայց երբ (իր ազգատոհմի կոտորածի) բոթը լսեց, իր Շավարշ և Գաղավոն որդիների հետ բոլոր ընտանիքով փախավ գնաց Հունաստան։*

Բայց մեծն Ներսես Հունաստան գնալիս հաղ սարկավագին հեռնապրել էր Բագրեւանդի և Արշարունիքի եպիսկոպոս և նրան էր հավատացել մեր աշխարհի վերակացության բոլոր գործերը մինչև իր վերադարձի ժամանակը։ Այս հաղը մեծն Ներսեսին էր նման ամեն բանով, մանավանդ աղքատների խնամատարության գործում, որի շահեմարաններն էլ հենց աղբյուրի նման առատացան սքանչելի կերպով, ինչպես Եղիայի և Եղիսեի ժամանակ[285]. և թագավորին հանդիմանելու մեջ էլ նա խիստ էր և ահավոր ու աներկյուղ։ Սատանան ոչ մի կերպ նրան դիպչել չկարողացավ բացի մի քանից.— որ նա ղգեստի կողմից պճնասեր էր և ձիասեր, որի պատճառով նրան պարսավում և ծաղրում էին փոխարինաբար նրանք, որոնց նա հանդիմանում էր։ Այս պատճառով նա հրաժարվեց շքեղ ղգեստներից և մազնդեն հագնելով՝ իշով էր մանգալիս մինչև իր մահվան օրը։

ԼԲ

ԹՆ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿ ԿԱՄԵՑՆՈՒՄ ԷՐ ՔԱՐՇԵԼ ԵՎ ՔԱՐԿՈՒՄԵԼ ԵՐԱՆԵԼԻ ՆԱԴԻՆ՝ ԻՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ ՀԱՆԴԻՄԱՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Երբ Արշակ կամսարականների ցեղը կոտորեց, հրամայեց նրանց դիակները քարշ տալ, գնդ ղցել առանց թաղելու, որպեսզի շների կերակուր դառնան, իսկ ինքը, իբրև մեծ հաղթությամբ պսակված, մի քանի օր ուրախություններով անց կացրեց և հրամայեց, որ նրանց մթերքները բերեն և Արմավիրում համբարեն։ Փորձին բացին նախճավան գյուղում նրանց երկու շատ խոր և շատ լայն հորերը և նրանց ավանի սայլերով բերին։ Սայլապանները տեսնելով մարդկային ոսկորներ, որ թափթփված էին փոսի մոտերը և պաղաններին կերակուր էին դարձել, հարցրին իմացան, որ իրենց տերերի ոսկորներն են. սայլերում հավաքեցին, եղեգով ծածկեցին, տարան նույն հորերում թաղեցին։ Արշակն այս իմանալով՝ հրամայում է սայլապաններին նույն հորերի վրա փայտից կախել։

Խաղն առաջին դեպքին չպատահեց, իսկ այս անգամ հասավ և սկսեց հանդիմանական խոսքերով թաղավորին պարսավել։ Արշակ հրամայեց նրան քարշել և քարկոծել։ Եվ որովհետև նրա

աղչիկները տեգրեր ունեին մեծ նախարարություններից, Ապահունյաց քաջ և զորեղ ցեղից, սրանք սրերը հանելով քարշողներին կիսամեռ արին և խաղին նրանց ձեռքից հափշտակելով իրենց գավառը գնացին։ Արշակը հակառակ չգնաց. ծպտուն չհանեց, մի գուցե բոլոր նախարարները զրդռվեն։

ԼԳ

ԹԵՈԴՈՍ ՄԵԾԻ ԹԱԳԱՎՈՐԸՆԿԸ ԵՎ ՀՈԳԵՄԱՐՏՆԵՐԻ ԳԱՆՁԱՒՈՎ ԳՈՒՄԱՐՎԱՆ ԺՈՂՈՎԸ

Բայց վաղես կայսրը մշտնջենական գեհենի օրինակն հենց այստեղ կրելով, Ադրիանուպոլսում հրակեղ եղավ ու սատկեց, ինչպես արժան էր իր դիտավորություններին։ Թագն ստացավ Թեոդոսը։ Սա մինչև հատակը քանդեց կուռքերի մեհյանները, որոնք սուրբ Կոստանդիանոսից միայն փակված էին, այսինքն Արեգակի, Արտեմիսի և Ափրոդիտեի (մեհյանները) Բյուզանդիոնում։ Նույնպես ավերեց Դամասկոսի տաճարն ու վերածեց եկեղեցու. այսպես նաև Իլիու[286] քաղաքի տաճարը Լիբանոսի մեծ և հռչակավոր (տաճարը որ կոչվում էր) Երիքքարյանն։

Սա հետ դարձրեց բոլոր սուրբ հայրերին, որոնք ուղղափառության պատճառով աքսոր էին ուղարկված, որոնց թվում նաև Մեծ Ներսեսին բերելով իր մոտ Բյուզանդիոն, պահում է մեծ պատվով, մինչև սուտգլի ճշմարիտ հավատը՝ ամբարիշտ Մակեդոնի[287] հայհոյություններ առիթով. որովհետև նա սուրբ Հոգուն չէր զավանում տեր, և ոչ երկրպագելի և ոչ փառաբանելի հոր և որդու հետ, այլ աստծու բնությունից օտար, ստացական, ծառա, պաշտոնյա, ոչ թե մի անձնավորություն, այլ մի ազդումն։ Եվ թագավորանիստ Բյուզանդիոն քաղաքում ժողովվեցին սուրբ հայրերը—Հռոմի Դամասիոսը, Կոստանդնուպոլսի Նեքտարիոսը, Աղեքսանդրիայի Տիմոթեոսը, Անտիոքի Մելիտոսը, Երուսաղեմի Կյուրեղը, Նյուսիայի Գրիգորիոսը, Կեսարիայի Գեղասիոսը, Նաձիանձու Գրիգորիոսը, Իկոնիայի Ամփյուլոքսիոսը և ուրիշ եպիսկոպոսներ, ընդամենը հարյուրհիսուն հայր, որոնք նզովեցին և մերժեցին Մակեդոնին և բոլոր հոգեմարտներին։

ԼԴ

ԱՐՇԱԿԻ ԱԳԱՄԱ ԳՆԱԼԸ ՇԱՊՈՒՀԻ ՄՈՏ ԵՎ ԷԼ ՀԵՏ ՉԴԱՌՆԱԼԸ

Շապուհը պատերազմներից դարձյալ դադար գտնելով՝ Արշակի վրա է ուղարկում ուժեղ զնդով մի ոմն Պահլավիկ Ալանաողանի, որ Արշակին ազգակից էր։ Արշակը նրանից խույս տվեց, որովհետև անօգնական մնաց շատ նախարարների կողմից, որոնք իրենց Արշակ Թագավորից տաղտկացած, Ալանաողանին ձեռք էին մեկնում և իրենց կամքով գնում էին Շապուհի մոտ, որից մեծարվելով դառնում էին մեր աշխարհը։ Սրանից Արշակը տարակուսած՝ պատգամ է ուղարկում Պարսից զորքի իշխանին, թե՝ «Դու իմ արյունակիցն ու հարազատն ես, ինչո՞ւ ես այդպիսի խըստությամբ հալածում ինձ. գիտեմ, որ դու ակամա ես եկել (իմ վրա), չկարողանալով հակառակել Շապուհի հրամանին, որ դաս քո ազգականիդ վրա։ Արդ՝ մի քիչ թուլացրու (հալածանքդ), որ ես կարողանամ կարճ ժամանակ մի տեղ թաքնվել, մինչև շունչ առնեմ և կարողանամ Հունաց երկիրն անցնել. իսկ դու մեր աշխարհը կգրավես և ինձանից մեծամեծ բարիքներ կգտնես, ինչպես մտերիմ հարազատից»։

Ալանաողանը նրան այսպիսի պատասխան է տալիս. «Եթե դու, ասում է, չհնազանդիր մեր ազգական Կամսարականներին, որոնք ինձանից ավելի մոտ հարազատներ էին քեզ, ձեր կրոնի կողմից և միևնույն աշխարհում բնակվելով, ի՞նչպես կարող ես հուսալ, որ ես քեզ խնայեմ, որ քեզանից հեռու եմ և՛ կրոնով և՛ բնակութեամբ, և ի՞նչպես կարելի է, որ քո բարիքներին հուսալով, որ հայտնի չէ, թե կստանամ, կորցնեմ այն բարիքները, որ գտել եմ իմ Թագավորից»։

Այնուհետև Արշակը, սաստիկ նեղն ընկած, ակամա գնում է Շապուհի մոտ և արգելված պահվում է։ Բռնի ստիպմունքից հարկադրված՝ գրում է իր Փառանձեմ կնոջը, որ դուռը գաւ Շապուհն էլ հրամայում է բոլոր մեծամեծներին, որ Փառանձեմի հետ գան։

ԼԵ

ԹԵ ԻՆՉ ՁԱՐԻՔՆԵՐ ԲԵՐԵՑ ՇԱՊՈՒՀԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ, ԵՎ ԱՐՇԱԿԻ ՄԱՀԸ

Հայոց այն նախարարները, որոնք Արշակից առաջ ձեռք էին մեկնել Պարսից Շապուհ Թագավորին, երբ իմացան, թե իրենց

կանանցն էլ կանչել է, ինչպես և այն նախարարներինը, որոնք հավատարիմ էին մնացել Արշակին, երբ տեսան նաև, թե Ալանաոզանը գնաց, և մի փոքր գունդ է, որ այս բանի համար եկել է, միաբանեցին, նրանց հալածեցին և իրենց կանանց ու որդիներին առնելով փախան Հունաց աշխարհը։ Փառանձեմն էլ իր մարդու կոչին չգնաց, այլ զանձերով հանդերձ ընկավ Արտագերս բերդը. նա լուր ուղարկեց իր Պապ որդուն և հույս ուներ Շապուհի ձեռքից ազատվելու։ Շապուհը սրա վրա զայրանալով՝ Արշակի ուսները կապում է երկաթե շղթաներով և ուղարկում է Խուժաստանի երկիրը, Անհուշ կոչված բերդում[288] (բանտարկելու)։ Եվ մեծ զորք է գումարում Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի ձեռքի տակ, որոնք ուրացել էին Քրիստոսին և արձակում է նրանց Հայաստան։ Նրանք եկան և նստեցին Արտագերս բերդի շուրջը։ Եվ թեպետ ոչինչ չէին կարողանում անել, բերդի անմատչելի ամրության պատճառով, բայց որովհետև աստծու բարկությունը Արշակի վրա էր, ամրոցի մարդիկ չկամեցան սպասել մինչև Պապից լուր գա, այլ կամովին, առանց բռնության անձնատուր եղան։ Նրանց գերի վերցրին և Փառանձեմ տիկնոջ և զանձերի հետ միասին տարան Ասորեստան և այնտեղ սայլի ցցի վրա վարսելով սպանեցին։

Նույն ժամին Հրաման հասավ Շապուհ թագավորից, որ բոլոր քաղաքների ամրությունները քանդեն և հրեաներին տեղահան անեն և գերի բերեն. նաև այն հրեաներին, որ հրեական կրոնով ապրում էին Տոսպի Վան քաղաքում, որոնց գերի էր բերել Բարձափրան Իշտունին Տիգրանի ժամանակ։ Սրանց Շապուհը բնակեցրեց Ասպահանում։ Գերի տարան նաև Արտաշատում և Վաղարշապատում ապրող հրեաներին, որոնց նույնպես բերել էր նույն Տիգրան թագավորը, որոնք սուրբ Գրիգորի և Տրդատի ժամանակ հավատացել էին Քրիստոսին. նրանց հետ էր և Զուիթան, Արտաշատի երեցը։ Ապա Մեհրուժանը և Վահանը Շապուհի մոտ գնալով չարախոսում էին Զուիթայի մասին, թե նա այն նպատակով եկավ գերիների հետ, որպեսզի նրանց համոզե պինդ պահել քրիստոնեական հավատը։ Ուստի Շապուհ հրամայեց չարչարել Զուիթային, որ քրիստոնեական հավատը թողնի։ Նա չհամաձայնեց և սպանվեց։ Արշակը բոլոր այս թշվառություններն ու աղետները լսելով՝ Սավուղի պես[289] վերջ դրեց իր կյանքին, թագավորելով երեսուն տարի։

ՄԵՀՐՈՒԺԱՆԻ ՄԵՋ ՀԱՍՑՐԱԾ ՁԱՐՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՊԻ ԹԱԴԱՎՈՐԵԼԸ ՀԱՅՈՑ ՎՐԱ

Արշակի մահից հետո Շապուհը մեծ զորք գումարեց Մեհրուժանի ձեռքի տակ և ուղարկեց Հայաստան, նրան հավատալով մեր աշխարհը։ Նրան կնության տվեց իր որմզդուխտ քրոջը, նաև հրովարտակներ, որոնցով շատ գյուղեր և դաստակերտներ էր (պարգևում նրան) Պարսից աշխարհում. նրան խոստացավ տալ Հայոց թագավորությունը, եթե միայն նախարարներին հնազանդության բերե և մեր աշխարհը դարձնե մազդեզական կրոնին[290]։ Նա հանձն առավ ու եկավ, նախարարներից շատերի կանանց բռնելով՝ զանազան բերդերում հրամայեց պահել, հուսալով որ (այսպիսի միջոցով նրանց) ամուսինները կդառնան։ Նա ջանում էր խափանել քրիստոնեական բոլոր կարգերը. եպիսկոպոսներին ու քահանաներին հարկերի պատճառանքով կապում ուղարկում էր Պարսից երկիրը[291]։ Ինչ գիրք որ գտնում էր այրում էր և հրամայում էր հունարեն գրագիտություն չսովորել, այլ պարսկերեն և ոչ ոք չհամարձակվի հունարեն խոսել կամ թարգմանել։ Նա պատճառ էր բերում, որ հայերը ոչ մի ծանոթություն և բարեկամական հազորդակցություն չունենան հույների հետ, բայց իրոք քրիստոնեության ուսումը խափանելու նպատակ ուներ, որովհետև այդ ժամանակ դեռ հայերեն գիր ու գրագիտություն չկար, և եկեղեցու կարգը կատարվում էր հունարեն լեզվով։

Արդ՝ երբ մեծն Ներսես լսեց այս բոլոր չարիքները, որ Հայոց վրա հասան, նաև Արշակի մահը, ինքնակալ Թեոդոսին ազաչեց, նրանից օգնություն խնդրելով։ Եվ (Թեոդոսը) թագավորեցրեց Արշակի որդուն, Պապին, և մեծ զորք գումարեց Տերենտիանոս քաջ ստրատելատի[292] ձեռքի տակ։ Եվ մեծն Ներսես իր հետ առավ բոլոր նախարարներին, թե՛ Պապի տերության կամակիցներին և թե հակառակներին, նույնպես և (կոտորածից) փրկված Սպանդարատ Կամսարականին և սրանց միաբանությամբ Պապին բերանց Հայոց աշխարհը։ Նրանք գալիս տեսնում են, որ ամբարիշտ Մեհրուժանը տիրացել գրավել է Հայոց երկիրը։ Նրան հալածում են, մեր աշխարհը նրա ձեռքից խլում։ Բայց Մեհրուժանը բերդապահներին հրամայեց՝ նախարարների կանանց բերդերի պարիսպներից կախել, մինչև որ մեռնեն, և դիակները կախաղանների վրա

Թողնել, որպեսզի քայքայվեն ու թափվեն և թռչունների կեր դառնան:

ԼԲ

ԶԻՐԱՎՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԱՄԲԱՐՇՑ ՄԵՀՐՈՒԾԱՆԻ ՍԱՏԱԿՈՒՄԸ

Մհհրուժանը Խորասանի երկրում Շապուհին իմաց տվեց, թե ի՛նչպիսի մեծ օգնություն ցույց տվեց Թեոդոսը Պապին. ուստի Շապուհից հրաման է տրվում, որ Պարսից բոլոր զորքը Մհհրուժանի հետ Հայաստան գնա պատերազմի: Այսպես և Պապն ու Տերենտիանոսը իմաց են տալիս Թեոդոսին, թե Շապուհը բոլոր զորքերին հրամայեց մեզ դեմ դուրս գալ, բացի զրահիկներից[293], Ապա նաև Թեոդոս Ավգոստոսը Ադդե մեծ կոմսին հրամայեց գնալ Պապին օգնության, իր հետ վերցնել բոլոր հունական զորքերը, ոչ ոքի բաց չթողնել, վերցնել նույնիսկ քաղաքների հետևակ պահապաններին, որոնք մեսաքսյա վիշապներ էին կրում:

Պատերազմը խմբվեց Զիրավ կոչված դաշտում, և ճակատներն իրար մոտեցան: Հայոց քաջ նախարարների պատանիներն իրենց կամքով խիզախելով՝ մտան երկու ճակատների մեջ, առաջնորդությամբ իրենց սպարապետ Սմբատ առյուծի, Բագրատի որդու, որ Բագրատունյաց ցեղից էր: Պարսից զորքերի միջից էլ դուրս եկան նրանց հասակակիցները, երկու ճակատների մեջ այս ու այն կողմը շարժվեցին և ցրիվ եկան: Երբ Պարսից պատանիները հետ էին դառնում, մերոնք[294] անմիջապես հասնում էին նրանց հետևից և ինչպես փոթորիկ, որ անտառը տերևաթափ է անում, այնպես էլ նրանք արագորեն նիզակներով նրանց վեր էին գցում ձիերից, դիակները գետնի երեսին փռում, քանի որ նրանք չէին կարողանում իրենց ճակատի մեջ մտնել: Իսկ երբ պարսիկներն էին մերոնց շուռ տալիս, սրանք մտնում էին Հունաց՝ վահաններով պատսպարված ճակատը, իբրև մի ամուր քաղաք և ամենևին չէին վնասվում: Որովհետև Գորդոնոսը, հետևակ զորքի հրամանատարը, այսպես վահաններով պատեց Պապի ճակատը, ինչպես պարսպով:

Որովհետև Հունաց զորքերն սպառազինված էին ոսկեղեն և արծաթեղեն զենքերով և նրանց ձիերն էլ նույնպիսի զարդեր էին

կրում, ուստի նրանք կարծես մի պարիսպ էին կազմում, որոնցից շատերը իրենց զգեստների ջղյա և կաշյա պահպանակների պատճառով կարծր քարերի տեսք էին ստանում, և նրանց վրա անխափան գեսերը[295], իբրև նշաններ, ծածանվում էին սաղարթախիտ ծառերի սաղարթների նման։ Իսկ վիշապների[296] դալարումները, որոնք քամուց ուռչելով ահագին կերպով բացել էին բերանները, ուրիշ բանի չեմ կարող նմանեցնել, քան եթե մի ադամանդյա լեռան, որ իջնում է դեպի ծովը,— այսինքն Հունաց ամբողջ ճակատը դեպի պարսկական զորքը, որովհետև սրանք էլ նմանում էին մի հզոր գետի, դեպի մի կողմ ծավալված, որոնց հագած զրահները արդարև ջրի գույնի տպավորություն էին թողնում։

Երբ մեծն Ներսես այս բոլորը տեսավ, բարձրացավ նպատ լեռան գլուխը և ձեռները դեպի երկինք բարձրացրեց և առանց իջեցնելու աղոթք էր անում, նախամարգարե Մովսեսի նման[297], մինչև երկրորդ Ամաղեկը պարտություն կրեց։

Իսկ երբ արևը ծագեց մեր զորքերի դեմ ու դեմ, պղնձապատ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և (այդ ճակատից) դուրս էին թռչում մեր նախարարներից լավ զրահավորվածները ինչպես փայլատակող ճառագայթները, որոնց տեսքից միայն պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ, բայց մի քիչ նաև մեր գունդը, որովհետև (դիմացից) ծագած արևի պատճառով չէր կարող դեմուդեմ նայել։ Բայց երբ միմյանց ընդհարվեցին, ամպը հովանի եղավ և մեր կողմից սաստիկ քամի փչեց պարսկական գնդի դեմ։ Կռվի խառնուրդի ժամանակ Սպանդարատ Կամսարականը պատահեց մի մեծ խմբի, որի մեջ էր քաջ Շերդիրը, Ղեկաց[298] թագավորը, որ ճակատի մեջ տեղումը պինդ կանգնած էր՝ միջին գնդի գլուխն անցած։ Սպանդարատը հարձակվեց, խումբը ճեղքեց և քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման, և խումբը շուռ տալով փախուստի մատնեց։ Եվ այսպես Հունաց և Հայոց զորքերն առհասարակ, երկնային օգնությամբ զորացած, թշնամիների դիակներով բոլոր դաշտը լցրին և մնացածներին փախցնելով հալածեցին։ Սրանց թվում էր և Ուտնայրը, Աղվանից թագավորը, որ խոցված էր Մուշեղից, Վասակ Մամիկոնյանի որդուց, և պատերազմից դուրս հանեցին։

Բայց ամբարիշտ Մեհրուժանի ձին վիրավորված լինելով՝ նա չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ։ Հայոց Սմ-

քատ սպարապետը աճապարելով հասավ նրա մոտ, նրա հետ եղող զորքերը կոտորեց և այն թշվառականին ձերբակալեց Կոգայովտի եղեգնուտի ափին։ Մտածելով, թե գուցե մեծն Ներսեսը նրան կփրկե, բանակը չտարավ նրան, այլ նույն տեղերում ամբարիշտին փշացնելու համար պատրաստ է գտնում վրանաբնակներ, որոնք կրակ էին վառել, որպեսզի միս խորովեն երկաթե շամփուրով։ Նա շամփուրը տաքացնելով երկու փաթ բոլորեց պատկի ձևով և շիկացնելով ասաց. «Քեզ պատում եմ, Մեհրուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա թագավորելու և իմ՝ սպասպետիս պարտքն է քեզ պատկել իմ հայրենի իշխանության կարգով»։ Եվ կրակի նման կից (շամփուրը) դրեց Մեհրուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց։ Այնուհետև երկիրը խաղաղվեց՝ Պապի ձեռքի տակ նվաճվելով։

ԼԸ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՊԸ ՍԱՒԻՐԻ ՆԵՐՍԵՍԻՆ ՄԱՀՎԱՆ ԴԵՂ ՏԱՂԱՎ ԿՅԱՆՔԻՑ ՉՐԿԵՑ

Երբ պատերազմները վերջացան և երկիրը խաղաղվեց, մեծն Ներսեսը ուխտ էր հաստատում Պապ թագավորի և Նախարարների մեջ, որ արդարության ճանապարհով գնան, որպեսզի նրանց գործերը համապատասխան լինեն քրիստոնեական հավատին, որ թագավորը հորը չնմանի, անիրավություններ չգործի ու չղրկի, այլ ուղղությամբ վարվի նախարարների հետ, հայրական խնամքով, նրանք էլ այլևս չտամբակեն ու չհեռանան նրանից, այլ ծառայեն հավատարմությամբ։ Այս ժամանակ Պապը Սպանդարատ Կամսարականին վերադարձրեց ամեն, որ հափշտակել էր նրա Արշակ հայրը—Շիրակի և Արշարունյաց դավառ, որոնք պատկանում էին Կամսարականների ցեղին, (բայց) ոչ իբրև իր Արշակ հոր ազահությամբ անիրավաբար (խլած), այլ իբրև պարգև քաջ Սպանդարատի ծառայության համար, որ սպանել էր Ղևկաց թագավորին։ Մյուս նախարարներին էլ վերադարձրեց (նրանց կրած) զրկանքները, ցույց էր տալիս անընչասեր բարք և ապրում էր առատաբար։

Բայց որովհետև ամոթալի ախտով գարշելի կյանք էր վարում և սրա պատճառով մեծն Ներսեսից հանդիմանվում ու նախատվում էր, նրան խեթ աչքով էր նայում, մտածում էր վնասել,

բայց ինքնակալ Թեոդոսի (երկյուղից) չէր համարձակվում հայտնի կերպով նրան վնաս հասցնել. (ուստի) գաղտնի կերպով սուրբ Ներսեսին մահացու դեղ խմցնելով՝ զրկեց կյանքից[299], որ եպիսկոպոսության աթոռը գրավեց երեսուն և չորս տարի։ Երանելի Ներսեսն այս աշխարհից փոխվեց Եկեղյաց գավառում, Խախ կոչված գյուղում։ Պապ թագավորը նրա մարմինը վերցրեց, տարավ թաղեց Թիլ ավանում, եղելությունը թաքուն պահելով։

ԼԹ

ՍԱՀԱԿԻ ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՎ ՊԱՊԻ ՍՊԱՆՎԵԼԸ ԹԵՈԴՈՍԻ ՁԵՌՔՈՎ

Այնուհետև Պապ թագավորը տեսնելով, որ բոլոր հայերը սգում են երանելի Ներսեսին, հարկից ստիպված փնտրեց ու գտավ Աղբիանոսի ցեղից ու ժառանգությունից մի ոմն Սահակի, որ գովությունից հեռու չէր և նրան նշանակեց Ներսեսի փոխանակ առանց Կեսարիայի մեծ արքեպիսկոպոսի (ձեռնադրության)[300]։ Նա աթոռը նստեց չորս տարի։

Բայց Պապը լսեց, թե մեծն Թեոդոս Բյուզանդիայից դեպի Հռոմ գնալիս զորքով մտավ Թեսաղոնիկե և իշխանի պատճառով խռովություն ընկավ նրա և քաղաքացիների միջև, կռիվ ծագեց և թե ինքնակալը հաղթեց և քաղաքացիներից տասնևհինգ հազար մարդ կոտորեց։ Այս բաները լսելով՝ Պապն այնպես կարծեց, թե այդ խռովությունները երկար պիտի տևեն. ուստի (Թեոդոսին) արհամարհելով ստամբակեց նրա դեմ և ինքն իր կորուստից գըրգըռվելով Տերենտիանոսին ու նրա զորքը հալածեց և սկսեց պատերազմի պատրաստվել։ Բայց քաջն Տերենտիանոսը մեծն Թեոդոսից հրաման ստանալով՝ կրկին վրա հետ դարձավ։ Եվ բախտը նրան այնպես հաջողեց, որ հանկարծակի հարձակվեց (Պապի) բանակի վրա, ոմանց սրով կոտորեց, մյուսներին փախուստի դարձրեց։ Այստեղ մեծ քաջությամբ դիմադրություն էր ցույց տալիս Անձևացյաց նահապետ Գնելը, Պապի արևելյան զորքի սպարապետը։ Նրան հաղթող Տերենտիանոսը անձամբ սպանեց, սրով նրա գլուխը կես անելով, և Պապ թագավորին բռնեց։ Պապն աղաչեց նրան, որ չմեռցնեն, այլ որ ինքը կայսրին ներկայանա։ Քաջ Տերենտիանոսը գթալով՝ նրա խնդրածը շնորհեց։ Նա երկաթե կապանքներով տարվեց մեծն Թեոդոսի առաջ և ըստ իր անըզգամության սակրով գլխատվեց, յոթը տարի թագավորելուց հետո։

Բայց բարեգործ Թեոդոս Ավգոստոսը, մեծ կոչվածը, իբ (թագավորության) քսաներորդ տարում Հայոց վրա Պապի փոխարեն թագավորեցրից մի ոմն Վարազդատի նույն Արշակունյաց տոհմից։ Այս Վարազդատը երիտասարդ էր տարիքով, սրտոտ, հաղթահասակ, ուժեղ, լի արիության բոլոր գործերով և շատ հզոր նետաձգության մեջ։ Շապուհից փախչելով նա գնացել էր կայսեր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել։ Նախ Պիսայում[301] բունչքամարտներին հաղթելով, հետո հլլեղացիների Արեգ քաղաքում կես օրում մի քանի առյուծ կոտորեց, որի համար Ոլիմպիական հանդեսի ըմբշամարտների խաղերում փառք վաստակեց և հարգանք։ Իսկ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց Ղանկվարտների[302] ազգի դեմ, համարձակվում եմ ասել, թե հավասար էին սուրբ Տրդատի (գործերին), որովհետև թշնամիների կողմից հինդ ախոյան հարձակվեցին նրա վրա և նա մեկը մյուսի հետևից բոլորին սրով կոտորեց. և մի բերդի վրա դիմելով, բերդի պատվարի վրա տասնևյոթ մարդ նետով դարնելով իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը թափվում են ասատիկ մրրիկից։

Երբ նա իբրև թագավոր մեր աշխարհն եկավ Շապուհի հիսունևհինգերորդ տարում, առաջին կռվում պատահում է մի քանի ասորի ավազակների Դարանաղիի դժվար տեղերում. նրանց փախստական է անում և հետևներիցն ընկնում։ Իսկ նրանք Եփրատի նեղ տեղում կամրջից անցնելով՝ փայտը գետը գցեցին իրենց հետևից. իսկ նա հասնելով, վազելով թռավ Եփրատի վրայով, ավելի քան լակոնացի Քիոնեսի վազքը[303] քսաներկու կանգունի չափ. այստեղ մի նոր Աքիլլես էր հանդես գալիս՝ Սկամանդրոս գետի[304] վրայով ցատկելիս։ Ավազակները զարհուրած ղենքերը գցեցին և անձնատուր եղան։

Այսպես իր երիտասարդության քաջություններից հարբած լինելով՝ թագավորության ժամանակ էլ չէր հնազանդում Հունաց վերակացու զորքերի խրատին։ Այլ պատգամավորներ է ուղարկում Շապուհի մոտ, որ իր աղջիկներից մեկին իրեն կնության տա և ինքը Հայոց աշխարհը նրան կդարձնե։ Հունաց զորավարներն այս իմանալով, հայտնում են կայսրին։ Ինքնակալ Թեոդոսը հրա-

մայեց նրան բռնել, եթե նա իր կամքով կայսրի կոչին չգնար։ Ուստի հարկադրված՝ իր կամքով գնում է կայսրի մոտ, հուսալով թե աստ կհանձն Ավգոստոսին։ Իսկ կայսրը նրան նույնիսկ տեսության չարժանացրեց, այլ հրամայեց երկաթե կապանքներով տանել Ովկիանոսի Թուղիս[305] կղզին, չորս տարի թագավորելուց հետո։

Բայց Վարազդատի երկրորդ տարում Հայոց եպիսկոպոսապետ Եղազ Ջավենը, նույն Աղբիանոսի ազգականներից, չորս տարի։

ԽԱ

ԱՐՇԱԿԻ ԵՎ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Թեոդոս Վարազդատի փոխանակ Հայոց վրա թագավորեցրեց Պապի երկու որդիներին, Արշակին և Վաղարշակին, այսպես մտածելով, թե երկուսը չեն միաբանի ապստամբելու համար։ Այս պատանիների մորն իր մոտ պահելով՝ նրանց արձակում է զորքով, իր կողմից էլ հավատարիմ մարդիկ վերակացու նշանակելով։ Սրանք եկան, դրավճերին մեր աշխարհն ու տիրեցին՝ արիաբար կռիվներ մղելով պարսիկների դեմ։ Նրանք իրենց կին առան Արշակը՝ Սյունյաց Բարիկ նահապետի դստերը, իսկ Վաղարշակը՝ Սահակ ասպետինը։ Նա նույն տարին մեռավ։

Բայց Արշակի երկրորդ տարում Հայոց եպիսկոպոսապետ Եղազ Ասպուրակեսը, Շահակի և Ջավենի ազգականը, հինգ տարի։

Իսկ մեծն Թեոդոս պատերազմի դուրս գալով՝ Միդուլանոն[306] քաղաքում հիվանդացավ և մեռավ, թագավորությունը թողնելով իր որդիներին, Արկադիոսին Բյուզանդիան և Ոնորիոսին Հռոմը, որոնք չեզան գովելի և արժանավոր իրենց հոր առաքինության։

ԽԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆՎԵԼԸ ԵՐԿՈՒ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՁՆՈՒՔԻ ՏԱԿ, ԵՐԿՈՒ ԱՁԳԵՐԻՆ՝ ՊԱՐՍԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՀՈՒՆՆԵՐԻՆ ՀՊԱՏԱԿՎԵԼՈՎ

Շապուհն իմանալով, որ Արկադն ուղղամիտ չէ, նրա հետ խաղաղություն է հաստատում, որովհետև հաղթված ու չարդված էր նրա հորից, մեծն Թեոդոսից։ Արկադն էլ համաձայնում է հաշտություն անել, մանավանդ որ զորագլուխների պատճառով, որովհետև թևպետ երանելի Թեոդոսի ապրած ժամանակ աստված նրան

էր շնորհել հաղթությունը, սակայն զորագլուխները հոգնած ձանձրացած էին մշտական պատերազմների նեղություններից։ Ուստի համաձայնության գալով, կամավորապես հանձն առավ Միջագետքը և Հայաստանը բաժանել, նոր սահմաններ դնելով։ Այս պատճառով Արշակը թողնում էր իր հայրերի բուն թագավորությունը, Ալբաթատը, և Պարսից բաժնում ընկած բոլոր մասը և գնաց մեր աշխարհի արևմտյան մասին տիրելու, ոչ միայն իր մոր պատճառով, որ մնում էր կայսերական քաղաքում, այլ լավ համարելով նվազ կռվին տիրել, քրիստոնյա թագավորի հպատակվելով, քան շատ տեղերի իշխել, մտնելով հեթանոսների լծի տակ։ Նրան հետևեցին ու գնացին Շապուհի բաժնի նախարարությունները իրենց կանանց ու որդիների հետ, թողնելով իրենց գույքը, գյուղերն ու դաստակերտները։

Սրա վրա Շապուհը չարանալով գրում է Արշակին. «Ինչո՞ւ իմ և կայսեր մեջ պատերազմ ես գրգռում, իմ բաժնի նախարարությունները (քեզ հետ) տանելով»։ Արշակից նա լսում է պատասխան. «Որովհետև նրանք չէին հոժարում պարսիկ առաջնորդով կառավարվել, ուստի եկան իմ հետևից։ Արդ, եթե դու ինձ հավատաս քո բաժնի իշխանությունը, ինչպես կայսրն իրենը, ես պատրաստ եմ քեզ էլ ծառայել, ինչպես և կայսրին։ Իսկ եթե այս քեզ հաճելի չէ, և նախարարներն իրենց կամքով կամենան դառնալ, ես արդելք չեմ լինի»։ Շապուհն այս լսելով, իր բաժնի վրա թագավորեցրեց Խոսրովին, նույն Արշակունյաց ցեղից, և իր բաժնի նախարարներին, որոնք գնացել էին Արշակի հետ, հրովարտակ գրեց այսպիսի բովանդակությամբ.—

Շապուհի թուղթը նախարարներին

«Դյուցազուններ մեջ քաջ, արքայից արքա Շապուհ, Հայոց նախարարներին, որոնց իշխանության կալվածներն ընկել են իմ բաժնի մեջ, շատ ողջույն եմ շնորհում ձեզ։

Թեպետ և դուք աղնվաբար չվարվեցիք և թողիք ձեր իշխանությունները, և թեպետ դրանից մեզ ոչ մի բան չպակասեց, բայց մենք իբրև տեր խնամելով՝ գթացինք ձեզ և ձեր աշխարհին, մտածելով որ հոտը չի կարող առանց հովվի լինել, և ոչ հովիվներն առանց լավ վերակացուի։ Այս պատճառով ձեզ թագավորեցրինք ումն Խոսրովի, որ ձեր հավատից է և ձեր բնիկ տերության ցեղից։ Ուրեմն նորից դարձեք յուրաքանչյուրդ իր

ատացվածքը և տիրեցնեք՝ ինչպես որ էր մինչև այժմ։ Երդվում ենք կրակով, ջրով և մեր անմահ նախնիքների փառքով, որ այս քանը մենք անում ենք առանց նենգության և խաբեության և անդրդվելի կպահենք։ Իսկ ովքեր չեն լսի մեր այս հրամանին, մենք հրամայեցինք որ նրանց տները գյուղերով և դաստակերտներով հանդերձ արքունիք գրավեն։ Ողջ եղեք»։

Խգ

ՀԱՅՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՆ ԻՐՆՑ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐ ԹԱԳԱՎՈՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Հայոց այն նախարարները, որոնք իշխանություն ունեն Պարսից բաժնում ընկած գավառներում, երբ լսեցին, թե Շապուհը հավատացյալ Արշակունի թագավոր նշանակեց, և տեսան նրա երդման թուղթը, Արշակին թողին և վերադարձան իրենց բնակության տեղերը, բացի երեք պատանիներից, որոնք թագավորի սննդակիցներն էին և մտերիմ մերձավորները, այսինքն՝ Դարայից, որ Սյունյաց տեր Բարիկի, թագավորի աներոջ որդին էր, Գաղավոնից, որ Սպանդարատի, Շիրակի և Արշարունյաց տիրոջ որդին էր, և Պերոզից, որ Գարդմանացոց ցեղից էր։ Սրանց օրինակին հետևեցին նաև՝ Ատատ Գնունյաց ցեղից, Կենան Ամատունյաց ցեղից, Սուրա Մոկաց ցեղից, Ռստոմ Առավենյան և ուրիշ մի քանի անհայտ մարդիկ։ Այս պատճառով խոսրովը Շապուհի հրամանով նրանց ժառանգությունը արքունիք գրավեց, և չթողեց որդու կալվածները նրա հորը և ոչ էլ եղբոր կալվածները նրա եղբորը։

Բայց նախարարների մեջ կային այնպիսիներն էլ, որոնց իշխանությունն ընկնում էր Հունաց բաժնում, Արշակի մոտ, ինչպես Սահակ ասպետը, որ Արշակի Վաղարշակ եղբոր աներն էր, և ցանկանում էին գալ խոսրովի մոտ։ Նրա վրա խեթ էր նայում Արշակը, շարունակ իր կնոջից հրապուրվելով, իբր թե նրա մոտ կա արքունական զարդ, որ մնացել է իր փեսայից։ Այս ժամանակ նրա ազգականներն Սպեր գավառից՝ նրա մասին սուտ քսություն արին, որ պատճառով Արշակը նրան չարչարեց։ Սրանից հետո Սահակը միջոց էր որոնում Արշակից փախչելու և խոսրովի մոտ գնկնելու։ Այս բանում նրան խորհրդակից և գործակից էին Սուրեն

Խոխոռունին, Վահան Առավեղյանը և Աշխադարը Դիմաքսենից ցեղից։ Բայց Սահակի գնալու ժամանակ նրանք չկարողացան նրան հասնել, Արշակի զորքերից արգելվելով, ուստի իրենց (դիտավորությունը) թաքցրին կեղծավորության դիմակի տակ՝ հարմար օրվան սպասելով։

ԽԴ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՈՍՐՈՎԸ ՄԵԾԱՐԵՑ ՍԱՀԱԿ ԱՍՊԵՏԻՆ, ԵՎ ՆՐԱ ՔԱՋԱՔՈՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆԱՆԴԱՑՈՑ ՑԵՂԻ ՀԵԼՈՒՉԱԿՆԵՐԻ ԴԵՄ

Խոսրով չափազանց ուրախացավ Սահակ ասպետի գալուց վրա, նրան իր զորքերի սպարապետ նշանակեց, նրան վերադարձրեց նրա հայրենական կալվածները, պարգևեց նաև ավաններ և ագարակներ այն (նախարարների) ժառանգությունից, որոնք Պարսից բաժնումն (էին, բայց) մնացին Արշակի մոտ։

Այս ժամանակները Վանանդացոց ցեղից ոմանք ապստամբեցին Խոսրովից և ոչ ոքի չապավինեցին, այլ ամրացան իրենց լեռների անտառներում և Տայոց ապառաժների նեղվածքներում. նրանք ավազակաբար արշավում էին Հայոց երկու թագավորների սահմանները, մեր աշխարհը խռովում էին և անհանգստություն պատճառում։ Նրանց վրա գնաց Սահակ ասպետը, Խոսրովի սպարապետը. նրանցից շատերին կոտորեց և շատերին էլ փախցրեց Չորրորդ Հայոց կողմերը։ Որովհետև նրանք ոչ խաղաղ երկիրն ընկան, հույներին ապավինելով, և ոչ էլ անցան Արշակ թագավորի մոտ, այլ նման մի քանի ավազակների, որոնք Չորրորդ Հայքի կողմերումն էին, նրանք դիմեցին ասորոց սահմաններն ապաստանելու։ Որովհետև վանանդացիք ավազակության գործը կատարում էին մեծ ցանկությամբ, որ նրանց անհրաժեշտ էր իբրև մի ուղիղ գործ։ Սահակը երկար տեղ նրանց հետամուտ լինելով՝ քշում է հեռու, մինչև Մանանազիի սահմանները։

ԽԵ

ՍՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԽՈՍՐՈՎԻ ՄՈՏ ԵԿԱՆ ՍՈՒՐԵՆԸ, ՎԱՀԱՆԸ ԵՎ ԱՇԽԱԴԱՐԸ՝ ԱՐՇԱԿԻ ԳԱՆՁԵՐՈՎ

Սուրեն Խոխոռունին, Վահան Առավեղյանը և Աշխադար Դիմաքսյանը հարմար ժամանակ գտան, երբ Արշակ իր գանձերը

Հանի ամրոցից հանելով փոխադրում էր Սոփաց աշխարհը։ Նրանք (այդ գանձը) հափշտակեցին և կամենում էին անցնել Խոսրովի մոտ, բայց չկարողացան ժամանակին անել։ Որովհետև Սամվել Մամիկոնյանը, Արշակի մտերիմը, ուժեղ գնդով շտապով նրանց հետևն ընկավ, և նրանք փախչելով՝ ընկան ամուր քարայրների մեջ Մանանաղիի գավառում։ Քարայրը մտնելու տեղ չկար, մի կողմից միայն մի նեղ տեղ կար բարձրանալու՝ սաստիկ զառիվայր։ Դուռն առաջն էլ ուղիղ բարձրանում էր միապաղաղ մի ապառաժ, իսկ վերևը՝ դուրս ցցված մի ժայռ, որ նայում էր խոր ձորի անդունդներին, և ինչ բան որ պոկ գար, անդիմադրելի սաստկությամբ, անդադար թավալվելով ներքև կգլորվեր՝ դեմ առնելու կովան չգտնելով։ Ուստի Սամվելը տարակուսած մնացել էր, տեղի անմատչելի լինելու պատճառով։ Նա իմաց տվեց Արշակին, որ հրամայեց երկաթակապ արկղ շինել, մեջը քաջ մարդիկ նստեցնել և լվանի նման շղթայով վերևից իջեցնել մինչև քարայրի մուտքը։ Բայց այս (միջոցն) էլ վնաս չբերեց, որովհետև մացառները հեռու էին պահում (արկղը)։

Երբ նրանք սրանով էին զբաղված, բախտի բերմամբ այդտեղ հասավ Սահակ ասպետը Խոսրովի ամբողջ գնդով, որով հալածում էր հելուզակներին։ Նրանց թողնելով՝ դիմում է նրանց վրա, որոնք քարայրի հետ կռվում էին. նրանց հալածում է, դուրս է հանում Սուրենին, Վահանին և Աշխադարին գանձերով միասին և շատ շտապով հասցնում է Խոսրովի մոտ։ Խոսրովն ստանալով՝ մասն է հանում գանձից Շապուհին և նրա հրամանով նրանց տալիս է գյուղեր և ընտիր ու հարմար դաստակերտներ այն (նախարարների) ժառանգությունից, որոնք Պարսից բաժնից էին, բայց մնացին Արշակի մոտ։ Սրանից ծագեց պատերազմը Արշակի և Խոսրովի մեջ։

ԽԶ

ԱՐՇԱԿԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԽՈՍՐՈՎԻՑ ՀԱՂԹՎԵԼՈՎ՝ ՀԼՎԱՆՊՈՒՅՑՈՒՆԻՑ ՄԵՌՆՈՒՄ Է

Թեպետ Շապուհը և Արկադը ձեռք չմեկնեցին Խոսրովին և Արշակին և օգնություն ցույց չտվին իրար հետ պատերազմելու համար, բայց արգելք էլ չեղան։ Ուստի երբ պատգամավորու-

թյունները վերջացան, Արշակ իր զորքը ժողովեց և շարժվեց Խոսրովի վրա։ Խոսրովն էլ իր բանակից, որ Գեղամա ծովի մոտ էր և կոչվում էր Մորս, գնաց Արշակի դեմ, որպեսզի իր սահմանները չմտնի, բայց այնքան շուտ չկարողացավ հասնել, այնպես որ Արշակն արդեն իջել էր նրա սահմանը, վանանդ գավառը։ Նրանք իրար հանդիպեցին Երևել կոչված դաշտում և սաստիկ խիստ պատերազմ տվին։ Արշակի զորքը ջարդվեց, նրա սպարապետը, Դարա Սյունին, պատերազմի մեջ մեռավ և Արշակ քիչ մարդով փախուստի դիմեց։ Քաջ Սահակ ասպետը, Խոսրովի սպարապետը, նրա հետևից ընկած սաստիկ հալածում էր։ Այստեղ Գաղավոնը, Սպանդարատի որդին, ահագին քաջություններ անելով, հաճախակի հարձակումներով ցրվում էր հալածողներին և միջոց էր տալիս Արշակին, որ հեռանա։

Խոսրովը դարձավ իր տեղը, իսկ Արշակ նկեղյաց գավառը։ Նա հիվանդացավ բարակացավով, տենդից հյուծվելով մեռավ, հինգ տարի թագավորելով ամբողջ Հայաստանի վրա և երկու ոչ կես տարի՝ Հայաստանի կեսի վրա։ Այնուհետև հույներն իրենց բաժնում այլևս թագավոր չնշանակեցին, այլ այն կողմի նախարարներին առաջնորդում էր քաջ Գաղավոնը, իսկ հույներն իրենց մասի աշխարհի իշխան նշանակեցին կոմսեր։

ԻԵ։

ԵՐԱՆԵԼԻ ՄԵՍՐՈՊԻ ՄԱՍԻՆ

Տեսնելով, որ Հայոց թագավորության վերջը հասել է, Մեսրոպն (աշխարհի) խոովությունների իր համբերության նյութ դարձրեց։ Նա Տարոնի Հացեկաց (գյուղից) էր, սնվել ու սովորել էր մեծն Ներսեսի մոտ և նրա վախճանվելուց հետո արքունական դռանը քարտուղար էր նշանակվել։ Նա սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը[307], թե ալեկոծված նավն շտապում է դեպի նավահանգիստը, իսկ ժուժկալող մարդը անապատ է փընտրում։ Այսպես էլ նա, աշխարհային զբաղմունքներից փախչելով դեն գցելով մարմնական պատիվը, գնում էր երկնավորի հետևից։ Գնում է Գողթն գավառը և ապրում է մենակյացի կյանքով։ Այդտեղ թաքնված հեթանոսական ազանդը, որ Տրդատի օրերից մինչև այդ ժամանակ ծածուկ էր մնում և Արշակունյաց թագավորու-

Թյան տկարանալու ժամանակ երևան եկավ, նա վերացրեց գավառի իշխանի օգնությամբ, որի անունն էր Շաբիթ։ Այստեղ աստվածային նշաններ երևացին, ինչպես սուրբ Գրիգորի ժամանակ. մարմնավոր կերպարանքով դևերը, հալածված, ընկնում էին Մարոց կողմերը։ Սրանից ոչ պակաս բաներ արավ և Սյունյաց աշխարհում, նրա Վաղինակ իշխանի օգնությամբ։

Սրբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե կարդացողը և թե թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով։ Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել, Հայոց լեզվի համար տառեր ստեղծել, և աշխատանքի անձնատուր լինելով ղանաղան փորձերով չարչարվում էր։

ԽԸ

ԱՐՇԱԿԻ ՄՈՏ ԵՂԱՎ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԴԱՐՁԸ ԽՈՍՐՈՎԻ ՄՈՏ

Հայոց նախարարները տեսնելով, որ հույները նրանց վրա թագավոր չնշանակեցին, դժվար համարելով անառաջնորդ լինելը, որոշեցին կամավորապես հնազանդվել Խոսրով թագավորին։ Ուստի նրան թուղթ գրեցին այս բովանդակությամբ.—

Նախարարների թուղթը Խոսրովին

«Մտրատեալ Գազավոն և Հունաց բաժնի Հայոց բոլոր նախարարները, մեր տեր Խոսրովին, Այրարատի կողմի թագավորին, ողջույն։

Տե՛ր, դու ինքդ գիտես մեր հավատարմությունը հիշատակաց արժանի մեր Արշակ թագավորին, որը մենք անխախտ պահեցինք մինչև նրա մահը։ Այժմ մենք որոշել ենք նույնպիսի հավատարմությամբ քեզ ծառայել, եթե այս երեք բանը պայմանագրով մեզ կհաստատես.— առաջին՝ չես հիշի մեր հանցանքը, որ քեզ հետ պատերազմեցինք, ստիպված և ոչ թե մեր կամքով. երկրորդ՝ որ մեզ կվերադարձնես այդտեղ Պարսից բաժնում եղած մեր բոլոր ժառանգությունները, որ արքունիք գրավեցիր. և երրորդ՝ որևէ հնարքով մեզ կազատես կայսրից, որպեսզի չվրդովվեն մեր բնակությունները, որոնք որ մեզանից իշխանություն ունեն այս (հունական) բաժնում։ Եվ այս ուխտի պայմանը կգրես, և խաչի

կնիքով կհաստատես, որը տեսնելով մենք կփութանք քո ծառայության մեջ մտնելու։ Ողջ եղիր, մեր տերդ»։

Խոսրովը գրում է պատասխան.—

Խոսրովի թուղթը նախարարներին

«Քաջարանց Խոսրով, Հայոց Թագավոր, Գազավոն սպարապետ և բոլոր մեր նախարարներիդ, շատ ողջույն։

Ուրախ եղեք և մենք էլ ողջ ենք և ուրախացանք ձեր ողջության լուրն առնելով։ Ահա ձեզ ուղարկում ենք ուխտի պայմանագիրը ձեր խնդրածի համաձայն։ Առաջին՝ որ չենք հիշի ձեր հանցանքը, որ մենք հանցանք իսկ չենք համարում, այլ իբրև երախտագետ մարդկանց հավատարմության դեպի Արշակունի թագավորը, որին ծառայում էիք, ինչպես, հույս ունենք, կլինիք և դեպի մեզ։ Երկրորդ՝ որ ձեզ կվերադարձնենք ձեր այն ժառանգությունները, որ դրավել ենք արքունիք, բացի նրանցից, որ ոմանց պարգևեցինք, որովհետև թագավորների պարգևները հետ չեն առնվում՝ եթե հանցանք չեն դործել (ստացողները), մանավանդ որ դրանք արդեն մուծվել են մեր տիրոջ՝ արքայից արքա Շապուհի դիվանը։ Բայց դրա փոխարեն ձեր (ժառանգության) պակասությունը կլրացնենք արքունիքից։ Երրորդ՝ որ ձեզ կազատենք Հունաց դործակալներից, թեկուզ կայսրի հետ պատերազմելով, թեկուզ խաղաղությամբ։

Իսկ քեզ, Գազավոն[308], իմ արյունակից և հարազատ, կը-պատվեմ ոչ թե քո վաղնմի աղգականության համաձայն, այլ ըստ այժմյանի՝ քո մոր Արշանուշի Արշակունի ծագման. ուստի քեզ քո հայրենական կամսարական (ցեղից) հանելով, կմտցնեմ քո մայրենական, այսինքն իմ ցեղի մեջ, Արշակունի անունով»։

Գազավոնն այս տեսնելով՝ շատ շուտով բոլոր նախարարներին դարձնում է Խոսրովի մոտ և բոլոր խնդրածներն ու խոստացվածները ձեռք բերելով բախտավորվում է և շատ փառավորվում։ Բայց Սամվել Մամիկոնյանը ձեռք գցելով Խոսրովի թուղթը և նախարարների թղթի պատճենը՝ նրանցից զատվեց ու գնաց կայսր Արկադի մոտ։ Որովհետև նա սպանել էր իր հորը Վահանին, ուրացության պատճառով, ինչպես և մորը, Տաճատուհուն, ուստի երկյուղ կրելով պարսիկներից և Արծրունիներից, իր քեռիներից, չէր համարձակվում հույներից անջատվել։ Արկադը նրան*

---

* Խորենացու մոտ՝ Վարդանին։ Մանոթ. կազմողի։

բարիք արավ և հրամայեց այդ թղթերի օրինակները, հունարեն գրությամբ, իր դիվանը դնել. որպեսզի ապստամբած ցեղերի հիշատակը պահպանվի. և մինչև այսօր էլ մնում են։

Խ

ԽՈՍՐՈՎԻ ՄԻԱՊԵՏԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ԵՎ ՄԵԾՆ ՍԱՀԱԿԻ ՆՊԻՒՍԿՈՊՈՍԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՔՈՐԸ ՆՍՏԵԼԸ

Երբ Խոսրով տիրեց Հայոց բոլոր նախարարներին, ինչպես ցանկանում էր, Արկադին դիմում է խնդրելով, որ իրեն հավատա Հայաստանի հունական մասն էլ, որը շեն պահելով՝ նրան ճշտությամբ հարկերը կվճարի, ինչպես նրա գործակալները։ Եվ Արկադը կասկածելով Հայոց նախարարների միաբանությունից, թե նրանք միաբանելով իրենից բաժինը կառնեն և պարսիկներին կտան, կատարում է Խոսրովի խնդրածը։

Սրանից հետո վախճանվում է Աստղուրակես եպիսկոպոսապետը և Խոսրովը նրան հաջորդ է նշանակում Սահակին, մեծն Ներսեսի որդուն, Աթանագինեսի որդու, Հուսիկի որդու, Վրթանեսի որդու, սուրբ Գրիգորի որդու։ Սա բոլոր առաքինություններով իր հայրերին նմանեց, աղոթքի կողմից գերազանցելով։ Որովհետև նա հավաքեց վաթսուն աշակերտ մայրաքաղաքների սպուդեների[309] նման, կրոնավոր մարդիկ, մազեղեն հագած, երկաթով պատած, ոտաբոբիկ, որոնք միշտ շրջում էին նրա հետ, որոնցով եկեղեցական պաշտամունքի կանոնը անխափան կատարում էր անապատականների նման և մեր աշխարհի հոգսը քաշում էր աշխարհականների նման։ Նրա մոտ եկավ Մեսրոպը հայերեն գրերի հարցի առիթով և տեսավ, որ նա ավելի ևս փափագում է այդ բանին։ Շատ չանքերից հետո, երբ օգուտ չտեսան, գարձյալ աղոթքի ապավինեցին, աստծուց խնդրելով։ Միմյանցից բաժանվելով՝ Մեսրոպը դնաց իր կացարանը. խստակյաց վարքի անձնատուր լինելով՝ ավելի և ավելի ճիգ էին թափում։

Ծ

ԽՈՍՐՈՎԻ ԿԱՊԸՎԵԼԸ ԵՎ ՆՐԱ ՓՈԽԱՐԵՆ ՆՐԱ ՎՐԱՄՇԱՊՈՒՀ ԵԼՔՈՐ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ

Բայց Շապուհ նեղացած էր Խոսրովի վրա, որ նա անձնական բարեկամություն հաստատեց Արկադի հետ և առանց (իր)

Հրամանի եպիսկոպոս նշանակեց մեծն Սահակին, ուստի նրան մեղադրություն ուղարկեց սպառնալիքով։ Խոսրով ըմբոստացավ, խրոխտալով հանդգնաբար պատասխանեց և պատգամավորներին անարգանքով հետ դարձրեց։ Եվ իսկույն սկսեց խոսել Արկադի հետ, որ Շապուհի հետ (կնքած) հաշտությունը լուծե և զորքով իրեն օգնե, և ինքը բոլոր մեր աշխարհը նրան կդարձնե։ Բայց Շապուհը մի լրատու նախարարներից հրապուրվելով անմիջապես իր Արտաշիր որդուն Հայաստան է ուղարկում մեծ զորքով։ Եվ որովհետև Արկադ հրաժարվեց Խոսրովին կոմնակից դառնալ, նա օտար աղգերից ոչ ոքի օգնական չգտնելով և չկարողանալով ոչ դիմադրել և ոչ խուսափել Շապուհից, դնաց նրա մոտ։

Արտաշիրը նրան թագավորությունից զրկելով՝ նրա տեղ նշանակում է նրա Վռամշապուհ եղբորը, բայց ոչ Սահակին և ոչ էլ Խոսրովից նշանակված նախարարներից որևէ մեկին թողեց, այլ խախտեց իրենց պատիվներից[310] նաև հրամայեց, որ հույների հետ էլ նախկին կարգը պահպանեն։ Եվ մի սուվար գունդ (Հայաստանում) թողնելով՝ ինքն շտապում էր Տիզբոն հասնել, աչքի առաջ ունենալով հոր ծերությունը, իր հետ տանելով Խոսրովին, Անհուշ կոչված բերդը դնելու համար, հին տարի թագավորելուց հետու։ Նրա հետ տարավ նաև Գազավոնին՝ կապանքներով, նրա քաջությունից կասկածելով, և հրամայեց արքունիք գրավել նրա տունը, ինչպես և նրա Շավարշ եղբոր և Պարգև Ամատունու (տները)։ Որովհետև այս երկուսը իրենց յոթ հարյուր զինվորներով կարավանին ճանապարհի վրա հետամուտ լինելով՝ հարմար ժամ գտան իրենց Խոսրով թագավորին ազատելու, բայց չհաջողեցին, որովհետև նրա ոտները շղթաներով կապված էին։ Խիստ կռիվ տեղի ունեցավ, որի մեջ սպանվեցին Շավարշը և Պարգևի որդի Մանվելը և սրանց հետ ուրիշ շատերը։ Իսկ Պարգևին կալանավորելով տարան Արտաշիրի առաջ և նա հրամայեց, որ նրանից տիկ հանեն, (փչելով) ուռեցնեն և Խոսրովի աչքի առաջ դնեն շարունակ։

ԾԱ

ՄՆՈՆ ՍԱՀԱԿԻ ՏԻՍԹՈՆ ԳՆԱԼԸ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԵԾԱՐԱՆՔՆԵՐՈՎ ԵՎ ՊԱՏԻՎՆԵՐՈՎ

Մի քանի սուրբ և երևելի մարդիկ, որ մեր աշխարհի նախարարների և եպիսկոպոսների մեջ առաջիններն էին և մեր լու-

սավորության պատճառները, որդեծնությամբ իջան մինչև մեծն Սահակ, որ այլևս արու զավակ չունեցավ, այլ մի դուստր Սահականույշ անունով, որ ամուսնության տվեց Համազասպ Մամիկոնյանին։ Եվ երբ Սահակ ասպետը, Հայոց քաջ սպարապետը, մեռավ, սուրբ Սահակն աղաչում էր Խոսրովին, իսկ նրա կալվելուց հետո նրա եղբորը՝ Վռամշապուհին, որ (Սահակ սպարապետի տեղ) նշանակե (Համազասպին), բայց Վռամշապուհը հրաժարվում էր այդ բանն անել առանց արքայից արքայի հրամանի, հիշելով, որ հենց այսպիսի բաների պատճառով վշտեր է կրում իր Խոսրով եղբայրը։ Ուստի (ս. Սահակը), իր աղջկա թախանձելուց, (թագավորից) թղթեր առնելով անձամբ գնաց Պարսից Արտաշիր թագավորի մոտ, որ իր հոր յոթանասունամյա թագավորությունից հետո թագավորեց չորս տարի։

Նրանից շատ մեծարանք գտավ, նախ՝ պահլավիկների ազնըվական ցեղի պատճառով, և երկրորդ՝ որ աստված իր ծառաներին հարգելի և պատվավոր է հանդիսացնում անհավատների առաջ։ (Թագավորը) նրա խնդիրներն ամբողջապես կատարեց. նախ նրա Համազասպ փեսայի վերաբերմամբ, և ապա նրա առաջ հանցավոր Կամսարական և Ամատունի ցեղերի մնացորդների վերաբերմամբ, որոնք պահ էին մտել թաքնվել էին անհայտ տեղերում։ (Ս. Սահակը) խնդրեց նրանց գթալ, ինչպես աստվածային հրաման է, որ որդիները իրենց հայրերի հանցանքների համար չպատժվեն, մանավանդ որ հանցավոր հայրերը հենց իրենց հանցանքի համար մեռան։ (Թագավորը) նրանց մնացորդներին կյանք շնորհելով՝ հրամայեց այդ երկու ցեղերի տները, որ արքունիք էին գրաված, նրանց վերադարձնել, բայց նրանց չհաստատել իրենց նախկին հայրենական գահում, այլ շատ նախարարներից ներքև դասել, կրտսերագույն նախարարների շարքում։ Իսկ Համազասպի ցեղը, այսինքն Մամիկոնյան տոհմը վեր բարձրացնել, որպեսզի Հայոց նախարարների մեջ հինգերորդ գահը գրավեն, և այսպես էլ գրել իր դիվանում։

Որովհետև (պարսիկները) սովորաբար այս երկու կարգն էին պահում. երբ նոր թագավոր էր նստում, իսկույն արքունական գանձարանում եղած բոլոր դրամները փոխում էին՝ նորի պատկերը դրոշմելով, դիվանի գրությունները էլ փոխում էին նրա անունով, հինը չոչնչացնելով, այլ փոքր ինչ զանազանելով։ Իսկ եթե երկար ժամանակ թագավորեր և նոր աշխարհագիր աներ,

այս դեպքում դեն էին գցում ինչ որ հնից (մնացած ու) փոփոխված էր, որպեսզի բոլորը նորի անունով գրվի։ Արդ՝ Արտաշիրը կարճատև թագավորության պատճառով նոր աշխարհագիր անելու ժամանակ չունեցավ, այլ հրամայեց հնից փոփոխված (դիվանում) գրել այս ամենը[311], և տալ Համազասպին (վերոհիշյալ) գահն ու պատիվը՝ գյուղերի և դաստակերտների իշխանությամբ, այլև Հայոց սպարապետությունը, որին ցանկանում էր. և մեր Վռամշապուհ թագավորին գրեց հետևյալ հրովարտակը.—

Արտաշիրի թուղթը Վռամշապուհին

«Մազդեզանց քաջ, արքայից արքա Արտաշիր, մեր եղբոր Վռամշապուհին, Հայոց թագավորին, շատ ողջույն։

Ստացա թղթերդ, որ գրել էիր Սահակ եպիսկոպոսի մասին, և հիշեցի սրա նախնիքների երախտիքը, որոնք Սուրենյան Պահլավի նախարարներ էին և հոժարությամբ հանձն առան իմ նախնի և իմ համանուն Արտաշիրի տերությունը, և այնքան ավելի նրան սիրեցին, քան իրենց ազգայիններին, որ չբավականացան միայն այստեղ Պարսից աշխարհում նրանց հետ կռվել, այլև նրա (Արտաշիրի) պատճառով ձեր աշխարհը գալով սպանեցին Խոսրովին, քո նախնուն և իրենց կատարած սպանության տույժը հատուցին իրենց մահով։ Իսկ սպանողի որդին, Գրիգորը, հիվանդացած Տրդատին բժշկելով՝ վերադարձրեց նրա կորցրած կյանքն ու թագավորությունը, որի պատճառով ավելի շատ երախտավոր եղավ դեպի ձեզ։ Ուստի (Սահակ եպիսկոպոսին) որդիացած Համազասպին զորքերիդ վրա սպարապետ նշանակիր մեր հրամանով և նրա ցեղին տուր նախարարներիդ մեջ պատվի հինգերորդ գահը, և թող դրանք տիրեն այն գյուղերին և դաստակերտներին, որ քո նախնիքները տվել են դրանց հայրերին։ Նույնպես այն (երկու) հանցավոր ցեղերի տները, որ արքունիք էինք գրավել, բայց թող, որպեսզի նրանց մնացորդներն աներկյուղաբար ժառանգեն. բայց նրանց չարժանացնես իրենց հայրենական գահերի պատվին, ինչպես մենք էլ հրամայեցինք գրել մեր դիվանում։ Ողջ եղիր»։

Բայց երբ մեծն Սահակ եկավ և Արտաշիրի բոլոր պարգևածները հաստատեց, Պարսից Արտաշիր թագավորը մեռավ և նրա տեղ թագավորեց Վռամը, որ Կրման ևս է կոչվում՝ տասը տարի։ Նա միևնույն բարեկամությունը պահպանեց Հայոց աշխարհի մեր Վռամշապուհ թագավորի և մեծն Սահակի հետ. Վռամի և Արկա-

դի միջև էլ խաղաղություն էր տիրում։ Նվ Վռամշապուհը տիրում էր մեր աշխարհին և հպատակվում էր երկու թագավորներին, հարկ վճարելով՝ Պարսից բաժնի համար Վռամին և Հունաց բաժնի համար Արկադին։

ԾԲ

ԴԱՆԻԵԼՑԱՆ ՆՇԱՆԱԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ ժամանակ Արկադը հիվանդացավ, Բյուզանդիոնում մեծըն Հովհաննեսի[312] պատճառով ահագին շարժում և հրդեհներ ծագեցին և Հունաց թագավորությունը շփոթության մեջ ընկավ. զորքերը պատերազմում էին իրար հետ և պարսիկների հետ։ Ուստի Վռամը մեր Վռամշապուհ թագավորին հրամայեց իջնել Միջագետք, խաղաղացնել ու կարգի բերել և երկու կողմերի գործակալների (վեհերը) վճռել։ Երբ նա գնաց այս ամենը կարգավորելու, քիչ նեղություն չէր կրում քարտուղարի պատճառով, որովհետև այն օրից, որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, նա ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում։ Այս առիթով նրան ներկայացավ Հաբել անունով մի քահանա և խոստանում էր հայերեն լեզվի տառեր ստեղծել, որ հարմարեցրել էր Դանիել եպիսկոպոսը, իր մերձավորը։ Թագավորն անփույթ գտնվեց, և Հայաստան գալով տեսավ, որ բոլոր եպիսկոպոսները ժողովվել են մեծն Սահակի և Մեսրոպի մոտ, հայերեն գրերի գյուտի մասին հոգալու։ Երբ թագավորին իմաց տվին այս մասին, նա նրանց պատմեց՝ ինչ որ վանականն ասել էր։ Երբ լսեցին, նրան սկսեցին թախանձել, որ այդ կարևոր բանին հոգ տանի։

Ուստի նա Վահրիճ անունով մի մարդու, Խադունի ցեղից, որ պատվված էր Հայոց աշխարհում, իրեն հավատարիմ էր և շատ փափագում էր այդ գործին, պատգամավոր ուղարկեց հիշյալ Հաբելի մոտ։ Նրան հետն առած՝ միասին գնացին և Դանիելից լավ հմտացան վաղուց գրված տառերի շարքին, որ դասավորված էր հունարենի օրինակով, և բերին մատուցին մեծն Սահակին և Մեսրոպին[313], որոնք սովորելով ու երեխաների էլ վարժեցնելով քիչ տարիներ, համոզվեցին, որ այդ նշանագրերը, այդ մուրացված գծագրությունը, ընդունակ չէր վանկ առ վանկ ճիշտ արտահայտել հայերեն բառերի հնչյուններըւ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆՇԱՆԱԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏՐՎԵՑԻՆ ԵՐԿՆԱՅԻՆ ՇՆՈՐՀՈՎ

Սրանից հետո ինքը Մեսրոպը աշակերտներով իջնում է Միջագետք նույն Դանիելի մոտ, և նախկինից ավելի բան չդտնելով՝ անցնում է Եգեսիա, Պղատոն անունով մի հեթանոս ճարտասանի մոտ, որ դիվանի պետն էր։ Նա ուրախությամբ ընդունեց, և ինչքան որ հայերեն խոսքեր միտքը բերում էր՝ հավաքելով և շատ ջանք թափելով օգուտ չունեցավ հռետորը, և խոստովանեց իր տգիտությունը։ Բայց նա ասաց, թե ինքն առաջ ունեցել է մի ուսուցիչ, շատ հմուտ մարդ, որ հետո Ճարտարների գրվածքներն Եգեսիայի դիվանից առնելով գնացել ու քրիստոնեություն է ընդունել, անունը Եպիփանոս. «Նրան, ասաց, փնտրիր գուցե, որ քո փափագը լցնե»։

Այն ժամանակ Մեսրոպը Բաբիլոս եպիսկոպոսից օգնություն գտնելով՝ Փյունիկեով անցնում դիմում է Սամոս, որովհետև Եպիփանոսը մեռած է լինում, թողնելով մի աշակերտ Հռուփանոս անունով, որ հունարեն գրության հրաշալի արվեստ ուներ և առանձնացել էր Սամոսում։ Մեսրոպը գնում է սրա մոտ և սրանից էլ շահ չգտնելով՝ ապավինում է աղոթքի։ Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի զործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա[314]։ Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին ինչպես մի ամանում։ Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագիրները, Հռուփանոսի հետ ձեռակերպելով Մեսրոպից պատրաստված գրերը, հայերեն տառերը ճիշտ հանդիպեցնելով հունարենի հնչյուններին։ Եվ իսկույն ձեռնարկեցին թարգմանության, խորհրդարար սկսելով (Սողոմոնի) առակներից, ամբողջ քսաներկու հայտնի գրքերը և նոր կտակարանը փոխադրում է հայերեն լեզվի[315], նույնպես և նրա աշակերտները, Հոհան Օկեղեցացին և Հովսեփ Պաղնացին, միևնույն ժամանակ իր ավելի փոքր աշակերտներին սովորեցնել տալով գրության արվեստը։

ՀԱՅՈՑ, ՎՐԱՑ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ ԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արկադը վախճանվելով՝ նրա տեղ թագավորեց նրա որդին, որ կոչվեց Թեոդոս Փոքր. նա նույնպիսի բարեկամություն պահպանեց մեր աշխարհի և մեր Վռամշապուհ թագավորի հետ, քայց իր մասը նրան չհավատաց, այլ իրեն պահեց՝ գործակալներով, և պարսից Հազկերտ թագավորի հետ խաղաղություն կնքեց։ Այս ժամանակներն եկավ Մեսրոպը, բերելով մեր լեզվի նշանագիրները։ Նա Վռամշապուհի և մեծն Սահակի հրամանով ընտրյալ երեխաներ ժողովեց, ուշիմ, առողջակազմ, լավ ձայնով և երկար շնչառությամբ[316]. բոլոր գավառներում դպրոցներ հիմնեց և պարսից բաժնի բոլոր կողմերը սովորեցրեց, բացի հունական մասից, որոնք ձեռնադրության փոխարեն տուժեցին[317], որովհետև Կեսարիայի աթոռին ենթարկվելով՝ պետք է հունարեն դիր և լեզու գործածեին և ոչ ասորերեն։

Մեսրոպ Վրաց աշխարհը դնալով՝ նրանց համար էլ, իրեն տրված երկնային շնորհով, ստեղծում է նշանագիրներ, մի ոմն Ջաղայի հետ, որ հունարեն և հայ լեզուների թարգմանիչ էր, օժանդակություն գտնելով նրանց Բակուր թագավորից և Մովսես եպիսկոպոսից։ Ընտրում և երեխաներ, բաժանում է երկու դասի և նրանց համար ուսուցիչներ է թողնում իր աշակերտներից Տեր Հործենացուն և Մուշե Տարոնացուն։

Ինքն իջնում է Աղվանք, նրանց Արսվաղեն թագավորի և երեմիա եպիսկոպոսապետի մոտ, որոնք հոժարությամբ հանձն առան նրա ուսումը և նրան հանձնեցին ընտիր երեխաներ։ Նա կանչեց Բենիամին անունով մի շնորհալի թարգմանիչի, որին անմիջապես արձակեց Սյունիքի տեր երիտասարդ Վասակը, իւ Անանիա եպիսկոպոսի միջոցով, որոնց (օգնությամբ) նա նշանագրեր ստեղծեց Գարդարացոց այն կոկորդաձայն, կոշտ, խժական, կոպիտ լեզվի համար։ Այնտեղ վերադարձ թողնելով իր հովնաթան աշակերտին, նաև արքունական դռանը քահանաներ նշանակելով՝ ինքը վերադառնում է Հայաստան և տեսնում է, որ մեծն Սահակ զբաղված է (ս. գրքի) թարգմանությամբ ասորերենից, հունարեն չգտնվելու պատճառով։ Որովհետև նախ Մեհրուժանն այրել էր հունարեն գրքերը մեր ամբողջ աշխարհում, իսկ այնուհետև, երբ Հայոց աշխարհը (երկու մասի) բաժանվեց, պարսիկ

վերակացուներն իրենց մասում ոչ ոքի թույլ չէին տալիս հունարեն սովորել, այլ միայն ասորերեն։

ԾԵ

ԽՈՍՐՈՎԻ ԿՐԿԻՆ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՊԱՐՍԻԿ ՇԱՊՈՒՀԻ (ԹԱԳԱՎՈՐԵԼԸ)

Վռամշապուհ քսան և մեկ տարի թագավորելով մեռնում է, թողնելով մի տասնամյա որդի, Արտաշես անունով։ Այն ժամանակ մեծն Սահակը գնաց Պարսից Հազկերտ թագավորի դուռը՝ կապված խոսրովին խնդրելու, որ Արտաշիրի մահից հետո (կապանքներից) լուծվելով՝ արձակ պահվում էր Անհուշ բերդում Վռամի ժամանակ։ Հազկերտը համաձայնելով կատարում է նրա խնդիրը, (խոսրովին) տերությունը տալով արձակում է Հայաստան։ Սա խնդրեց Հրահատին, Գազավոնի որդուն, որին հոր մահից հետո հանել էին Անհիշելի ամրոցից և (զորքի հետ) ուղարկել էին Սագաստանից[318] էլ այն կողմը։ Խոսրովը նրան այլևս չկարողացավ տեսնել՝ կրկին անգամ միայն մի տարի թագավորելով։

Նրանից հետո Հազկերտը ոչ թե նրանցից, այլ իր Շապուհ որդուն թագավորեցրեց Հայոց վրա այսպիսի չար դիտավորությամբ, որ նախարարները դրանով նրա մոտ լինելով՝ նրան կընտելանան խոսակցությամբ, առնել-տալով, խնճույքներով, որսի զրոսանքներով, այլև խնամությամբ, նոր ազգականություններով կմոտենան, և գուցե հնար լինի նրանց սայթաքեցնել դեպի մաղդեզական կրոնը, որով բոլորովին կանջատվեն հույներից։ Անմիտը չդիտեր, թե «Տերը ցրվում է հեթանոսների խորհուրդները»[319], թեպետ մի առժամանակ հաջողվեց (նրա խորհուրդը)։ Որովհետև Համազասպը մեռնելով և Սահակը մեծ սգի մեջ լինելով՝ ոչ ոք Հայոց գնդերը չհավաքեց չմիաբանեց։ Ուստի Շապուհը հեշտությամբ մուտք գործեց Հայաստան, իր հետ բերելով Հրահատին և բոլոր աքսորականներին. բայց նա չկարողացավ նախարարների համակրությունը շահել, այլ բոլորը նրանատեցին և թագավորաբար չէին մեծարում որսի կամ խաղերի ժամանակ։

Մի անգամ դեպք եղավ հանդգնաբար արշավելու ցիռերի և-

թամակների հետևից խորդուբորդ և քարքարոտ տեղերով։ Շապուհը սկսեց հետ մնալ։ Ատոմ Մոկացին պարսավանքով ասաց նրան. «Գնա՛, գնա՛, պարսից աստվածորդի, եթե տղամարդ ես»։ Իսկ նա ասաց. «Դու գնա, քարքարուտների մեջ արշավելը դևերի գործն է»։ Մի ուրիշ անգամ դեպք եղավ եղեգնուտների մեջ կրակով կինճեր որսալու։ Թավ եղեգների մեջ Շապուհը չհամարձակվեց ձին լավ քշել, այնպես որ կրակը նրան շրջապատեց, և նա երկու կողմը նայելով՝ այս ու այն կողմն էր ընկնում ձիով։ Ատոմը դարձյալ ասում է. «Պարսից աստվածորդի, ահա քո հայրն է և աստվածը, ինչո՞ւ ես վախենում»։ Շապուհն ասում է. «Կատակները մի կողմ թող, նայիր որ կրակովն անցնես, որ ես էլ քո հետևից գամ, որովհետև եթե ես առաջ անցնեմ, ձիս կխրտնի»։ Այն ժամանակ նրան Ատոմը նախատեց ասելով. «Մի՞թե սրանք էլ քարեր են, որ ես առաջ անցնեմ. արդ, եթե դու մոկացիներին դիվազգի ես կոչում, ես էլ սասանյաններիդ կնամարդի կկոչեմ»։ Նվ երիվարը մտրակելով՝ կրակի միջով անցնում է ինչպես ծաղկաղարդ հովիտով և աղատոտ է Շապուհին։ Բայց գիտնալով, որ դրանից հետո Շապուհը լուռ չի մնա, անցնում գնում է Մոկաց աշխարհը։

Մի անգամ մականով խաղալիս՝ Շավասպ Արծրունուն աջողվից գնդակը երկու անգամ խլել Շապուհից։ Սա մականով նրան խփելով ասաց. «Ինքդ քեզ ճանաչի՛ր»։ Իսկ նա պատասխանեց. «Այո՛, ճանաչում եմ, որ ես էլ արքայորդի եմ, Սանասարի սերունդ, և իրավունք ունեմ քո եղբայրների հետ թագավորի բարձը համբուրելու, ինչպես և անուն եմ կրում»[320]։ Այսպես ասելով մեծ թամահրանքով ձիարշավի ասպարեզից դուրս սլացավ[321]։

Մի ուրիշ անգամ էլ ուրախության խնճույքի ժամանակ խոսքով Գարդմանացին գինով հարբած՝ Շապուհի ներկայության սիրահարված տարփածուի նման հետամուտ էր լինում մի կնոջ, որ վարժ մատներով չնար էր ածում։ Շապուհը զայրանալով հրամայում է նրան բռնել ու դահլիճում պահել, իսկ նա աջ ձեռքը սրի վրա դրած՝ Տրդատ Բագրատունու նման, անցավ գնաց իր տունը, և արքունի սպասավորներից ոչ մեկը չհամարձակվեց նրան բռնելու, այդ մարդու փորձն առաջուց առած լինելով։

Այս բաները պատմել մեզ հարկադրեց քո ավելորդ խնդիրը։

ԾԶ

ՇԱՊՈՒՀԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՊԱՏԱՀԱԾ ԱՆՑՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏՈ ԵՂԱԾ ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չորս տարի անարգաբար թագավորելուց հետո Շապուհը լուր է ստանում իր հոր հիվանդության մասին և գնում է շտապով, իր տեղակալին ու զորագլխին հրամայելով, որ Հայոց մեծամեծներին բռնի ու տանի Պարսկաստան։ Բայց Շապուհի Տիզբոն հասնելիս մեռավ Հազկերտը, նրա հայրը, տասնմեկ տարի թագավորելով. միևնույն օրը նա ինքն էլ սպանվեց արքունի մարդկանց դավադրությամբ։ Իսկ քաջ և բարեբախտ Ներսես Ճիճրակացին, որ զորագլուխ էր դարձել, ժողովեց Հայոց նախարարներին իրենց զորքերով, Պարսից գնդի հետ պատերազմ մղեցին, նրանց զորքերը կոտորեցին, իսկ Ասպրամ Սպանդունին սպանեց նրանց զորավարին. ապա իրենք էլ ցրվելով, ինքնագլուխ կերպով շրջում էին լեռներում և ամուր տեղերում, իրենց գլուխը պահելու համար, և այս ժամանակ երևելի հանդիսացան բոլոր վանանդացիներն իրենց քաջությամբ։ Այս կերպով մեր աշխարհը երեք տարի անիշխան մնալով, աղմուկների և խռովության մատնված, ավերվում ամայանում էր, արքունական հարկերը պակասում էին, ժողովրդի երթևեկի ճանապարհները կապված էին, ամեն տեսակ բարեկարգություն վրդովվում և անհետանում էր։

Նույն օրերում Պարսից վրա թագավորեց Վռամ երկրորդը, որ մեր աշխարհից վրեժխնդիր եղավ, բայց Հունաց բաժնին չդիպավ, նրանց հետ խաղաղություն պահպանելով։

ԾԷ

ՄԵՍՐՈՊԻ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ ՈՒՂԱՐԿՎԵԼԸ ԵՎ ՀԻՆԳ ԹՂԹԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐԸ

Երբ մեծն Սահակ տեսավ այս բոլոր չարիքները Պարսից բաժնում, գնաց մեր աշխարհի արևմտյան կողմերը, Հունաց բաժինը, բայց իր արժանիքին համապատասխան ընդունելություն չգտավ. ուստի Մեսրոպին և իր Վարդան թոռանն ուղարկեց Բյուզանդիոն Թեոդոս կայսրի մոտ, այսպիսի թղթով.—

Սահակի թուղթը Թեոդոսին[322]

Խաղաղասեր կայսրին, իմ տեր Ավգոստոս Թեոդոսին Հայոց Սահակ եպիսկոպոսից ողջույն։

Գիտեմ, որ մեր նեղության համբավը հասած կլինի ինքնակալիդ լսողության, ուստի քո բարեպարության գթասրտության վրա հույս դնելով ապավինեցի ձեր ողբը. բայց իմ վիճակում ընդունելության չգտա այստեղի վերակացուների հրամանով։ Մեզ այնքան ատեցին, որ մինչև իսկ չընդունեցին այն նշանադիրները, որ բերել էր նույն այս մարդը, որին ուղարկեցի ձեր բարեպարության մոտ. (այդ նշանագիրները) նա դեռ էր երկարաւոր պառն աշխատանքով Ասորաց աշխարհում։ Ուստի խնդրում եմ ձեր տերության բարեհաճությունը, որ մեզ այստեղ մեր վիճակում իշխանությունից չզրկեն. հրամայեցեք, որ մեզ ընդունեն և մեր ուսումը Ողջ եղեք»։

Թագավորական քաղաքի եպիսկոպոսին էլ այս է գրում.—

Սահակի թուղթն Աստիկոսին

«Սահակ, Հայոց եպիսկոպոս, մեր ուսուցիչ Աստիկոսին, աշխարհամուտ դռան եպիսկոպոսին, օրհնությամբ ողջույն։

Ձեր սրբության վրա հույս դնելով (ձեզ մոտ) ուղարկեցինք մեր աշխարհի ուսուցանող Մեսրոպին և իմ թոռ Վարդանին, որպեսզի դրանցից լսելով մեր նեղության պատճառները՝ մեծ թագավորին բարեխոսես մեզ օգնել, ինչպես ճշմարիտ սիրելի եղբայր։ Ողջ եղիր»։

Անատոլիս զորավարին էլ գրում է հետևյալը.—

Սահակի թուղթը Անատոլիոսին

«Սահակ Հայոց եպիսկոպոս, Անատոլիոս քաջ զորավարիդ, ողջույն։

Շնորհակալ եմ աստծուց, որ քեզ պատրաստեց մեր ապավինության համար, ուստի հայտնում եմ քեզ, որ մեր նեղություններին ճար գտնելու համար արքունի դուռն ուղարկեցի մեր ուսուցանող Մեսրոպին և իմ թոռ Վարդանին, և խնդրում եմ քո քաջությունից՝ նրանց նպաստել ճանապարհորդելու։ Ողջ եղիր»։

Անատոլիոսն այս տեսնելով, միանգամայն հիշելով Մեսրոպի առաքինության համբավը, որ առաջուց տարածված էր նրա մասին, ոչ փոքր ընդունելություն ցույց տվեց նրանց, մինչև որ փոխնիփոխ սուրհանդակների միջոցով կայսրին զեկուցեց և նրանից հրաման ստացավ՝ արժանավորապես շուտով ուղարկել։ Ուստի Մելիտինեի քաղաքում Ակակ եպիսկոպոսի մոտ պահում է

աշակերտների բազմությունը, որոնց (Մեսրոպ) տարել էր իր հետ, նրանց գլխավորի Ղևոնդի հետ, իսկ ինքը Մեսրոպին ու Վարդանին առնելով հանձնում է Դերջանի Գինդ եպիսկոպոսին և փառավորապես ճանապարհ է գցում։ Այսպես նրանք մտան Բյուզանդիոն, ներկայացված մեծ թագավորին, ստացան, ինչ որ կհուսային և ինչ որ չէին հուսա, և վերադարձան այսպիսի թղթով.—

Թեոդոսի թուղթը Սահակին

«Ինքնակալ Թեոդոս Ավգոստոս և Հռոմայեցիների կայսր, Հայոց Սահակ մեծ եպիսկոպոսին ողջույն։

Մենք հաճեցանք տեսնել թղթերդ և վերահասու եղանք գրածներիդ։ Քեզ շատ մեղադրեցինք, որ բոլոր սրտով միտվեցիր հեթանոս թագավորների կողմը և մեզ մինչև իսկ գրով հարկ չհամարեցիր տեղեկություն տալ։ Մանավանդ սրանում ենք քեզ մեղադրում, որ արհամարհելով մեր քաղաքում եղող ճարտարներին, ինչ-որ ասորիների մոտ էիր որոնում իմաստության գյուտը։ Այս պատճառով մենք բարեհաճ էինք, որ մեր ծառաներն այդտեղ արհամարհեցին այդպիսի ուսումը։ Բայց որովհետև Մեսրոպը հետո մեզ պատմեց, թե այդ արվեստը գլուխ եկավ երկնային շնորհով, մենք գրեցինք, որ ամենայն փութաջանությամբ սովորեն, և քեզ պատվով ընդունեն իբրև իրենց իսկական ուսուցիչը, Կեսարիայի արքեպիսկոպոսի նման սնունդն ու ծախսերը արքունիքից տրվեն։ Նվ հրամայեցինք այդտեղ Հայոց աշխարհում մի քաղաք շինել իբրև ապավինություն ձեր և մեր զորքերին։ Քո (պատվի) համար ստրատելատ նշանակեցինք Վարդանին, քեզ որդիացածի (փեսայի) որդուն, և Մեսրոպին գրեցինք առաջին ուսուցիչների շարքում։ Ողջ եղիր»։

Ատտիկոս մեծ եպիսկոպոսն էլ գրեց հետևյալը.—

Ատտիկոսի թուղթը Սահակին

«Ատտիկոս, Կոստանդնուպոլսի ինքնագլուխ եպիսկոպոս, մեր սիրելի եղբոր, և աթոռակցին, Հայոց Սահակ եպիսկոպոսին, ողջույն տերով։

Շատ գոհություն ենք մատուցանում աստծուն քո բարի համբավիդ համար այդպիսի բարբարոս ազգի մեջ, բայց մեղադրանքից ազատ չենք թողնում, որ ավելի վաղ չհիշեցիր քո երա-

նելի նախնիքներին, Գրիգորի և Ներսեսի սիրելությունը, նվ ավելի այս բանի վրա ենք զարմանում, քե ի՛նչպես Թողիր եկեղեցու աղբյուրը, մեր սուրբ Հովհաննես Հորը, որի վարդապետությամբ ոչ միայն այս տիեզերական մայրաքաղաքը լուսավորվեց, այլև ամբողջ աշխարհի բոլոր քրիստոնյաները, որի պատճառով նրան Ոսկեբերան կոչեցին։ Իսկ դուք նրան զանց անելով՝ ձեր ծարավը կամեցաք հագեցնել անձրևի ջրերով, մինչև որ Ամենակալը տեսնելով իզուր կրած նեղությունը՝ ձեր մեջ բղխեց ս. Հոգու շնորհը, որի համար այժմ ուրախ ենք։ Արդ՝ մեր ինքնակալ Ավգոստոսի հրամանով քեզ իրավունք է տրվում ուսուցանել մեր կողմի (Հայաստանը), իսկ բորբորիտոնների աղանդը[323] կամ հավանության բեր կամ հալածիր քո վիճակից։ Եվ քեզանից ուղարկված Մեսրոպին ձեռնադրեցինք եկեղեսիաստիկոս»[324]։

ԾԸ

ՄԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԸ. ԲԱԼՈՐԻ ԽԱՂԱՂԱՆԱԼԸ, ՆՎ ԱՐՏԱՇԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ

Մեսրոպ և Վարդան ստրատելատը գալով՝ Անատոլ զորավարին գտան մեր սահմանի մոտ հասած։ Արքունական հրամանն ստանալով նա ավելի մեծ վստահությամբ և փութաջանությամբ գործը գլուխ բերեց։ Որովհետև իշխանները, գործակալները, գըլխավորները և առհասարակ այդ կողմում հայտնի մարդիկ իրենց հոժար կամքով, կարծես աստվածային ձայնով հրավիրված, գալիս ժողովվում էին մի տեղ բոլոր քահանայական դասի հետ միասին։ Եվ անմիջապես ուսուցման գործն սկսելով՝ արագորեն արևմտյան կողմն էլ սովորեցրին արևելյանին նման։

Այս ժամանակ Հայոց նախարարներից շատերը եկան մեծն Սահակին հրավիրելու, որպեսզի գա միջամտե և բոլորին միաբանության բերե։ Որովհետև Պարսից Վռամ թագավորը գիտնալով, որ առանց Հայոց նախարարների չի կարող մեր աշխարհը պահել, հաշտության բանակցություն է սկսում Սմբատ սպասի միջոցով։ Ուստի (Սահակը) Մեսրոպին է հանձնում արևմտյան կողմի ուսուցման գործը և նրա մոտ է թողնում իր Հմայակ և Համազասպյան թոռներին, Վարդան ստրատելատի եղբայրներին։ Հրամայում է քննել պղծագործ բորբորիտոններին, և եթե ոչ մեղ-

մությամբ և ոչ խստությամբ ուղղության չգան, ապա չարչարանքներով հալածել, ինչպես թշնամիներ թշնամիներից վրեժ առնեն, որպեսզի իրավացի մահով հոգիների անիրավ մահը խայտառակվի։ Իսկ ինքն անցնում գալիս է Այրարատյան գավառը, ժողովում է բոլոր նախարարներին և Սմբատ սպասին ու Վարդան ստրատելատին, իր թոռանը, ուղարկում է Պարսից թագավորի դուռը։

Իսկ թագավորը հաշտություն հաստատելով՝ (նախարարների) հանցանքները մոռացության տալու թուղթ է կնքում և նրանց խնդրով թագավոր է նշանակում Վռամշապուհի որդուն, Արտաշեսին, փոխելով, Արտաշիր կոչելով, և նրան է հավատում Հայոց աշխարհը առանց պարսիկ վերակացուի։ Նա տիրեց վեց տարի։

ԾԹ

ՊԱՐԻՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԹԵՈԴՈՊՈԼԻՍ

Անատոլ զորավարն արքունական հրամանն ստանալով՝ գալիս է մեր աշխարհը և շատ կողմեր շրջելով, հավանում է Կարին գավառին՝ այնտեղ շինելու արգավանդ, շատաջուր և բարեբեր քաղաքը, համարելով, որ այդ տեղը միջին դիրք ունի, ոչ շատ հեռու այն տեղերից, որտեղից բխում են Եփրատի մի քանի աղբյուրները և հանդարտ հոսանքով առաջ գնալով ծովանում են, ճահճի տեսք ստանում։ Այստեղ անհաշիվ քանակությամբ ձկներ են լինում և զանազան տեսակ թռչուններ, որոնք սնվում էին այնտեղ, որոնց ձվերով միայն կերակրվում էին բնակիչները։ Եվ ճահճի ափին եղեգնուտներ մեծ քանակությամբ եղեգով։ Դաշտերում բուսնում են բարձր խոտեր և առատաբեր սերմատու բույսեր։ Լճակները լիքն են կրճղակաբաշխ և որոճող երեներով։ Բազմությամբ աճում են այդտեղ ընտանի եղջյուրավոր անասուններ, հաղթահասակ, խոշոր, լիքը մարմնով և պարարտ։

Մի գեղեցկադիր լեռան ստորոտում գտավ մի տեղ, որտեղ բխում են բազմաթիվ մանր աղբյուրներ մաքուր ջրերով, և այդտեղ գծեց քաղաքի տեղը։ Նրան շրջապատեց խոր փոսով, շատ խորը գրեց պատվարի հիմքը, նրա վրա ահագին բարձր աշտարակներ չինեց, որոնցից առաջինը կոչեց Թեոդոս՝ Թեոդոսի պատվին։ Սրանից այն կողմը շինեց ժայռածև աշտարակներ[325], նավերի

ցուկների նման, և անցքեր՝ նիրս ընկած խորշերով, որոնք դեպի լեռն են դարձած։ Այսպես շինեց նաև դեպի հյուսիսային դաշտը (նայող կողմում)։ Իսկ արևելք ու արևմուտք (դարձած կողմերում) կանգնեցրեց բոլորակաձև աշտարակներ։ Իսկ քաղաքի մեջ, մի բարձրավանդակի վրա, շինեց բազմաթիվ մթերանոցներ, որ կոչեց Ավգոստոն, Ավգոստոսի պատվին։ Եվ շատ տեղերից անհայտ ուղիներով ուրիշ ջրեր բերեց մոցրեց քաղաքը։ Քաղաքը լցրեց զենքերով ու պահապան գնդերով և կոչեց Թեոդուպոլիս, որպեսզի քաղաքի անունը հիշելով անմահ մնա (թագավորի) անունը։ Իսկ բխող ջերմուկները վերևից ծածկեց տաշած քարերով։

Կ

ՄԵՍՐՈՊԻ ԿՐԿԻՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԲՅՈՒՋԱՆԴԻՈՆ ԳՆԱԼԸ

Մեսրոպը մնալով Շաղդամք կոչված անապատ և հով տեղեր՝ առաջին խմբերի ուսուցումը վերջացրեց։ Նա ոչ թե սովորեցնում էր որպես արվեստ, այլ աշակերտներին կարծես հոգի էր ներշնչում իբրև առաքյալ։ Սրանից հետո այնտեղ իր աշակերտներից վերակացուներ թողնելով— Սպերում Դևոնդին և Ենովքին, Դերջանում նրանց Գինդ եպիսկոպոսին, իսկ Ծկնղյաց գավառում Դանանին, ինքը գալիս է Այրարատ և գնում է Դողթն, իր առաջին քնակության գավառը։

Որովհետև հեթանոսական աղանդից մնացած դառն արմատը անիշխանության ժամանակ նորից երևան էր եկել և շատերի մեջ տարածվել։ Երանելին նրանց քնաջինջ արավ՝ հայրաբարո Գտի, Շաբիթի որդու օգնությամբ, որ այդ գավառի իշխանն էր։ Նաև տեղեկացավ, որ չարության առաջին ուսուցիչները Բաղասական կողմերումն են։ Նա գնաց այնտեղ, շատերին ուղղության բերեց և քչերին անդառնալի կերպով հալածեց Հոնաց երկիրը։ Այդ կողմերի ուսուցման գործը հավատալով Մուշեղ անունով եպիսկոպոսին՝ ինքը դառնում է Գարդմանի ձորի կողմերը, որովհետև լսեց, թե այնտեղ ևս կան նույն աղանդին հետևողներ։ Նրանց էլ գտնելով՝ ուղիղ ճանապարհի է բերում, նորից ուղղության բերելով Գարդմանացոց իշխանին, որի անունն էր Խուրս։ Այստեղից նրան հրավիրում է Գուգարացոց Աշուշա բդեշխը, խնդ-

բելով որ նույն գործի համար գա իր իշխանության երկիրը, Տաշիրք գավառը։ Այնտեղ գնալով՝ նա ավելի լավ և ավելի հիմնավոր կերպով սովորեցրեց, քան մյուս աշակերտածներին։ Այս ժամանակ Վրաստանում թագավոր էր նստել մի ոմն Արծիլ։

Այնուհետև Մեսրոպը հետ եկավ, և նա ու մեծն Սահակ նույն աշակերտներին, Հովսեփին և նրա մյուս ընկերոջը Կողբ գյուղից, որի անունն էր Եղնիկ, ուղարկեցին Միջագետք, Եդեսիա քաղաքը, որպեսզի ինչ գրքեր որ այնտեղ գտնվեն առաջին սուրբ հայրերից գրված, շուտով մեր լեզվով թարգմանեն ու բերեն որպեսզի այնուհետև Բյուզանդիոն ուղարկվեն նույն գործով։ Նրանք մի քանի ստախոս մարդկանցից հրապուրիչ թղթեր ստանալով՝ իբր թե մեծն Սահակ և Մեսրոպ պատրաստվում են ուրիշներին Բյուզանդիոն ուղարկել, իրենք, առանց ուսուցիչների հրամանին, այնտեղից ուղղակի չվեցին գնացին Բյուզանդիոն, նախանձախնդիր լինելով բարի ուսմունքի. և հունարեն գրագիտության լավ վարժվելով՝ ձեռնարկեցին թարգմանելու և գրելու Նրանց վրա նախանձելով նրանց աշակերտակից ընկերները, որոնց անուններն էին Ղևոնդ և Կորյուն, ինքնակամ եկան գնացին Բյուզանդիոն նրանց մոտ։ Ապա նրանց մոտ են գալիս նաև Հովհաննն ու Արձանը, որոնք Սահակն ու Մեսրոպը դեռ ավելի վաղ էին ուղարկել, բայց նրանք դանդաղ ուղևորվելով և ծուլաբար տնտնալով՝ Կեսարիայում երկար մնացին։ Նրանց բոլորին մեծ ընդունելության ցույց տվից բյուզանդացոց Մաքսիմիանոս եպիսկոպոսը։

ԿԱ

ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԱՄԲԱՐԻՇՏ ՆԵՍՏՈՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Այս ժամանակները բյուզանդացիների եպիսկոպոսության աթոռը նստեց անարժանաբար ամբարիշտ Նեստորը և հրեական հասկացողության հետևելով հայհոյեց ամենասուրբ կույսին, (ասելով թե) նա մարդածին է և ոչ աստվածածին։ Որովհետև, (ասում էր նա), ծնվածը նրանից սկիզբ առավ. ուրիշ էր Մարիամից շնորհով ծնված որդին և ուրիշ էր Հորից հավիտենական ժամանակներից առաջ ծնված որդին. այնպես որ լինում են երկու որդի և երրորդությունը դառնում է չորրորդություն։ Այս առիթով

Ասիայի ժողահայաց Եփեսոս քաղաքում ժողովվեցին գրավոր վավերագիրների ընթերցմամբ սուրբ հայրերը.— Կելեստինոս՝ Հռոմի եպիսկոպոսը, Կյուրեղը՝ Աղեքսանդրիայի, Հովնաղը՝ Երուսաղեմի, Հովհաննեսը՝ Անտիոքի, Մեմնոնը՝ Եփեսոսի, Պավղոսը՝ Հեմեսու, Թեոդոտիոսը՝ Անկյուրայի և ուրիշ շատերը, ընդամենը երկու հարյուր հայր, որոնք Նեստորին նզովելով՝ մի որդի աստծու դավանեցին մեր տեր Հիսուս Քրիստոսին, և ամենասուրբ Մարիամ կուսին (դավանեցին) աստվածածին։

Նվ որովհետև նույն ժողովում չպատահեցին մեծն Սահակ և Մեսրոպ, ուստի նրանց գրեցին Կյուրեղ Աղեքսանդրացին, Պրոկղոս՝ Կոստանդնուպոլսի և Ակակ Մելիտինեի եպիսկոպոսները, նրանց զգուշացնելով, որովհետև լսել էին, թե չարափառ աշակերտներից ոմանք եկել էին Հայոց աշխարհը, իրենց հետ վերցնելով Թեոդորոս Մամուեստացու[327] գրքերը, որ Նեստորի ուսուցիչն էր եղել և Թեոդորի աշակերտը։ Այնուհետև եկան մեր քարգմանիչները, որոնց անուններն առաջուց հիշել ենք, և գտան մեծն Սահակին և Մեսրոպին Տարոնի Աշտիշատում, հանձնեցին Քրղքերը և Եփեսոսի ժողովի կանոնները, սահմանված վեց կանոն, այլև ս. գրքի ստույգ օրինակները։

Մեծն Սահակ և Մեսրոպ ընդունելով (ս. գրքի օրինակը), նորից թարգմանեցին մի անգամ շտապովի թարգմանվածը, նրանց հետ միասին, նորից հորինելով ու նորոգելով։ Բայց որովհետև նրանք մեր արվեստին[328] տեղյակ չէին, ուստի գործը շատ կողմերից քերի էր դուրս գալիս։ Այս պատճառով մեծն Սահակ և Մեսրոպ մեզ առան ուղարկեցին Աղեքսանդրիա, պանծալի լեզուն սովորելու, իսկական ճեմարանում կատարելագործվելու[329]։

ԿԲ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ[330], ԻՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՐԿՆԱՅԻՆ ՉԱՐԴԻ ՆԵՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Նրանք, որ շարունակ հետևում են իմաստասիրության և քննում են մաթեմատիկական գիտությունները, ասում են, թե աստղերը լույս են ստանում լուսնից, լուսինը լցվում է արեգակի լույսով, իսկ արեգակն արփային երկնքից. այնպես որ արփին լույսը ափռում է երկու գոտիներում և այս երկու գոտիները լույս

են ստանում արեգակից ըստ դասի, ըստ շարժման և ըստ ժամանակի։ Սրա նման մենք էլ մեր հոգևոր հայրերի իմանալի ճառագայթներից մշտապես ցոլանալով, հարավային կողմերը շրջագայելով հասանք Եգեսացոց քաղաքը, Թեթևակի ձավեցինք դիվանի խորքերի վրայով, այնտեղից անցանք սուրբ տեղերին երկրպագելու և կարճ ժամանակ պաղեստինացոց ուսմամբ պարապելու։

Այսպիսի շրջագայությամբ մտանք Եդիպտոս, այն հռչակված աշխարհը, որ զերծ է անչափ ցրտից և տոթից, հեղեղներից և երաշտից, երկրի գեղեցիկ մասում գետեղված լինելով, ամենատեսակ պտուղներով լիովին լցված, անձեռագործ Նեղոսով պարսպապատված, որ ոչ միայն պահպանություն է տալիս, այլև ընդունակ է իրենից մատակարարելու բավական կերակուր, և ոռոգման միջոցով տնօրինում է երկրի չորությունը կամ խոնավությունը՝ մշակության համար. և ինչ բան որ երկրումը չկա, գետը հեշտությամբ բերում է և առատություն է սփռում՝ ինչպես կղզու վրա, պատում է երկրի շուրջը և բոլոր տեղերով հոսում է, տասներկու վտակի բաժանվելով։ Այստեղ հարմարավոր դիրքում շինված է մեծն Աղեքսանդրիա քաղաքը, ծովի մեջ, բարեխառն կլիմայով. և շինված է արհեստական լիճ[331], որի պատճառով բարեխառն օդ է շնչում, թե՛ այնտեղից, ուր լճի ջրերը դեպի ծովն են հոսում, և թե ծովին մոտ տեղերից. այսպես հաճախակի քամիներ են շնչում, ծովի կողմից՝ թեթև և լճի կողմից թանձր, որոնց խառնուրդը խիստ առողջարար է կյանքի համար։

Այժմ[332] այս (քաղաքի) առաջը չի նստում Պղոտննիոսը իր հինգ գագաթով, անապատ աշխարհը պատելով, այլ Մարկոսը իր ավետարանի քարոզությամբ. չկան վիշապի ցեղից դյուցազունների գերեզմաններ, այլ վայելչանում են սրբերի վկայարանները։ Ոչ էլ Տուբի ամսի քսանևհինգին խնդալթյուրված տոն է կատարվում,— բեռնակիր անասուններին պսակելով, լորտուներին սպասավորություն անելով, կարկանդակներ բաժանելով,— այլ նույն Տուբի ամսի տասնևմեկին աստվածահայտնության տոնն է կատարվում, գովում են հաղթող նահատակներին, օտարներին ընդունելություն են անում և աղքատներին տուրքեր բաժանում։ Այլևս չեն ղոհում Սարապիսի շար դևին, այլ Քրիստոսի արյունը պատարագ են մատուցանում. այլևս չեն հարցնում պատգամ Պրոգեիտ սանդարամետից[333], այլ սովորում են պես պես գիտություններ նոր Պղատոնից[334], իմ ուսուցչից, որին անարժան աշակերտ չհանդիսա-

ցա և ոչ էլ արվեստ ձեռք բերի անկատար կերպով, քերի ուսումով։

Կամենալով նավով էլլադա[335] գնալ, սաստիկ քամիներով մղվեցինք ընկանք Իտալիա, սուրբ Պետրոսի և Պողոսի հանգստարանները ողջունեցինք և երկար չմնացինք Հռոմայեցիների քաղաքում. էլլադայով անցանք Աւտիկե, քիչ ժամանակ մնացինք Աթենքում։ Ձմեռն անցնելուց հետո Հանապարհ ընկանք Բյուզանդիոն, մեր հայրենիքին փափագելով։

ԿԳ

ՀԱՅՈՑ ՁԱՐ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ԻՐԵՆՑ ԱՆՁԵՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ ԽՈՐՀԵՑԻՆ

Բայց Հայոց Արտաշիր թագավորը սկսեց թաղվել անլափ անառակ ցանկություններ մեջ, այն աստիճան, որ բոլոր նախարարները նրանից զզվեցին։ Նրանք եկան մեծն Սահակի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի (Արտաշիրի) վրա չարախոսեն Պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին դեն գցեն և պարսիկ բերեն աշխարհին կառավարող։ Իսկ (մեծն Սահակ) ասաց. «Ձեզ սուտ չեմ հանում, ինքս էլ լսել եմ նրա ցավալի ամոթալի արարմունքները, շատ անգամ հանդիմանել եմ, բայց նա ուրացել է։ Արդ՝ պետք է մի կարճ ժամանակ տանել այդ մարդու թերությունը, մինչև մտածենք մի ելք գտնենք Հունաց Թեոդոս կայսրի միջոցով, բայց ոչ թե անօրենների մատնել, ծաղր ու խայտառակ լինելուս»։

Իսկ նրանք (այս) չէին կամենում, չանք էին անում նրան իրենց համախորհուրդ դարձնել։ Բայց նա ասաց. «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին, որ ես չպատեմ բեկվածին կամ հիվանդացածին, այլ գահավեժ անեմ։ Թեև հավատացյալ թագավորի առաջ (պետք լիներ գնալ), կփութայի, չէի հապաղի, հուսալով, թե գլորվածին ոտքի (կարելի է) կանգնեցնել. այլ հեթանոսներին հանձնել, ավելի մեծ կործանման համար՝ հանձն չեմ առնում, համաձայն այն խոսքին, թե մի՛ մատնիր գաղաններին մի անձ, որ խոստովանում է քեզ[336]։ Որովհետև նա դրոշմված է ավազանով. թեպետ անառակ է. նա պոռնիկ է, բայց քրիստոնյա է. մարմնով ապականված է, բայց հոգով անհավատ չէ. վարքով զեղխ է, բայց ոչ կրակապաշտ. նա թուլու-

թյուն ունի դեպի կանայք, բայց տարերքներին չի երկրպագում։ Եվ ինչպե՞ս կարելի է այդ իմ ախտավոր ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է»։

Իսկ նախարարները մտածելով, թե խաբելու նպատակով է այդպես անում, որպեսզի իրենց անելիքը հետաձգել տա և թագավորին պատրաստեն, միաբերան ասում են. «Որովհետև դու չկամեցար մեզ հետ համակերպվել, որ նա չթագավորե, ահա մենք էլ չենք կամենում, որ դու մեզ քահանա լինես»։ Եվ բոլորը միաբանությամբ ելան գնացին Պարսից Վռամ թագավորի մոտ, մի ոմն փառամոլ քահանայի Արծկեացի Սուրմակի հետ, չարախոսելու իրենց Արտաշիր թագավորի վրա, և մեծն Սահակի վրա, թե ձրանք հույների կողմն են թեքվել[337]*։*

ԿԴ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐՈՒՄԸ ԻՐԵՆՑ ԿԱՄՔՈՎ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ԱԹՈՌԻ ԱՆԱՐԳԵԼԸ

Այն ժամանակ Պարսից Վռամ թագավորը դուրը կանչեց Հայոց Արտաշիր թագավորին և մեծն Սահակին, և նրանից խնդրում էին, որ Արտաշիրին ամբաստանեն. իսկ նա հրաժարվեց առհասարակ որևէ բան ասելուց, չար կամ բարի։ Ապա (Վռամը) հրամայեց Արյաց հազարապետին, որ Սուրենյան Պահլավ էր, որպեսզի իբրև ազգական, նրան սիրելաբար խրատ տա և համոզե։ Եվ նա հրապուրիչ խոսքերով ասում էր. «Որովհետև դու ինձ արյունակից ես և հարազատ, ուստի քո բարին մտածելով ասում եմ. թե այժմ միայն միաբանիս նախարարների հետ, Պարսից թագավորից մեծարանք կգտնես, և նա քո թոռանը, Վարդանին, Հայաստանի վրա կնշանակե՝ հավասար և համապատիվ մի թագավորի»։ Բայց նա հանձն չէր առնում և ասում էր. «Ի՞նչպես կարող եմ ես ընկերի մասին չարախոսել փառասիրությունից կամ իշխանասիրությունից (դրդված), կամ ինչու՞ եք դուք այդպես ցանկանում Արտաշիրին զահընկեց անել։ Ինձ բոլորովին հայտնի չէ թե նա ապստամբության խորհուրդ ունեցած լինի. իսկ եթե նրան ամբաստանում են անառակ վարքի համար, նա դրանով պետք է պատվի արժանանա ձեր կողմից, ըստ ձեր անմաք-

բասեր օրենքի, թեպետ մերով դատապարտելի է։ Ինձանից համեստ դեպք դուք ոչինչ չեք լսի»։

Այն ժամանակ Վռամը զայրացած մեծ հրապարակում քննություն է կատարում, և ուշադրություն չդարձնելով Արտաշիրի խոսքերին՝ հոժարությամբ լսում էր չարախոսների ասածները, մանավանդ Սուրմակի աղտեղի խոսքերը։ Որովհետև թշնամաբար տրամադրված հակառակասեր նախարարները նրան էին խոստացել եպիսկոպոսության աթոռը, ուստի ինքնասիրությունից դրդված իր լեզուն սատակիչ սուր դարձրեց։ Վերջապես Վռամը հրամայեց՝ Արտաշիրից թագավորությունն առնել և նրան (Պարսկաստանում) արգելել և նրա ցեղի բոլոր գույքը արքունիք գրավել։ Նույնպես և մեծն Սահակին, կաթողիկոսական տունը արքունիք գրավել, և նրա փոխարեն եպիսկոպոսապետության աթոռը տալ Սուրմակին։ Իսկ նախարարներին արձակեց մեծամեծ պարգևներով՝ մի պարսիկ մարզպանի հետ, որ կոչվում էր Վհմիհրշապուհ։

Բայց Սուրմակը (պաշտոնում) մնաց մի տարուց ոչ ավելի և հենց նույն նախարարների ձեռքով աթոռից հալածվեց։ Նա հետո իր բռնությամբ գավառի եպիսկոպոսությունն ստացավ Պարսից թագավորից՝ ժառանգաբար նստելու։ Իսկ մեր նախարարները Վռամից խնդրում էին ուրիշ աթոռակալ. և նա տվեց մի ոմն ասորի Բրքիշոյի։ Սա եկավ վատթար ընկերակիցներով, հետը բերեց տանտիկին կանայք, վարում էր անժուժկալ շռայլ կյանք, հափշտակում էր վախճանված (եպիսկոպոսների) վիճակները։ Այսպես վարվեց նա երեք տարի։ Նախարարները չկարողանալով այս տանել՝ նորից Վռամին աղաչեցին՝ նրան փոխել և տալ մի ուրիշ մարդ ըստ իրենց վարք ու բարքի, կեսն էլ խնդրում էր մեծն Սահակին։

ԿԲ

ՄՆԱՑ ՍԱՀԱԿԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ ԱՐՁԱԿՆԼԸ ԱԹՈՌԱԿԱԼ ՇԱՄՈՒՆԼԻ ՀԵՑ ՄԻԱՍԻՆ

Ինչպես ասացինք, Հայոց նախարարները երկու (խմբի) բաժանվելով՝ մարդիկ ուղարկեցին Պարսից թագավորից աթոռակալ խնդրելու,—Արծրունյաց տեր Վաչեն և Աշոցքի տեր Համայակը, ում որ թագավորը կամենա, իսկ Ապահունյաց տեր Մանեհը և Արշա-

րունյաց տեր Սպանդարատը՝ Մեծն Սահակին, նաև Հունաց Անատոլ զորավարը կարինից ուղարկեց Կուկայաոիճեցի Հավուկին՝ խնդրելու, որ եթե (պարսից) թագավորը չի հաճում նրան իր բաժնում պահել, թող տա Հունաց բաժնին՝ եպիսկոպոսների բազմությունն էլ, որ անելի Մեսրոպի և եկեղեցու բոլոր պաշտոնյաների հետ նույն խնդրով ուղարկեցին Տիրուկ քահանային, Մովսեսիկի որդուն Վանանդի Զարիշատ գյուղից։ Վռամը համաձայնեց երկու կողմերի խնդիրն էլ կատարելու.— եպիսկոպոսապետության աթոռի համար նշանակեց Շամուել անունով մի ասորու, որպեսզի մեծն Սահակին ընդդիմադիր և հակաթոռ լինի, և որոշում է նրա գործը,— ընկերանալ մարզպանին, վերահասու լինել պահանջելիք հարկերի բաշխման, դատաստաններին և այլ աշխարհական կարգերին։ Իսկ մեծն Սահակին արձակելով՝ նրան թողնում է մի քանի գյուղ նրա (կաթողիկոսական) տանից, որպեսզի նստի միայն իր վիճակում, իրավունք ունենալով միայն՝ ուսուցանելու սովորական ուսմունքը և ձեռնադրելու նրանց, որոնց կհոժարի Շամուելը։

Բայց նրան արձակելիս կանչում է իր առաջ բազմամբոխ ատյանում և ասում. «Երդվեցնում եմ քեզ քո հավատով, որ հավատարիմ մնաս մեր հպատակության մեջ, ապստամբության խորհուրդներ չտածես՝ խաբվելով Հունաց մոլորական հավատակցությունից, պատճառ դառնալով, որ Հայաստանը մենք կորուստի մատնենք, և մեր բարերարությունը չարության փոխարինես»։ Այն ժամանակ ոտքի կանգնեց մեծն Սահակը, պարկեշտ և նազելի դիրք բռնելով, ինչպես բեմբասացության ժամանակ, համեստ հայացքով և ավելի համեստ ձայնով, և սկսեց ճառել իր հպատակության երախտիքները և նրանց ապերախտությունը դեպի ինքը. միևնույն ժամանակ երևան հանեց նրանց կեղծավոր անուշ խոսքերն ու դառն խորհուրդներն ու չար գործերը. սրա հետ միասին նա ընդդիմախոսեց այն անմիտ հայհոյությանը, որ արտահայտեց (թագավորն)՝ ասելով «մոլորական հավատակցություն», և նրանց պաշտամունքը խայտառակելով՝ խոսքն ավարտեց հրաշալի աստվածաբանությամբ, որքան որ հեթանոսները լսելիքը հանդուրժում էին, և ոչ թե պայծառ դավանությունը ամբողջովին գցեց անհավատների առաջ ծաղրելու համար, ինչպես մարգարիտը խոզերին ոտնակոխ լինելու. բայց այնքան կայծակի պես ցոլացրեց, որ մոգերի լեզուները մոծիր կտրեցին, և ինքը թագավորը հիացած ապշած մնաց, և ատյանում եղած բոլոր բազմությունը,

քարեկազմ պարսիկները, ականջները ցցած լսում էին ուշադրությամբ, այնպես որ Վռամը հրամայեց շատ արծաթ տալ նրան իբրև ճարտարախոս ու խիզախ հռետորի, որ այնպիսի թագավորի առաջ խոսում է այնպիսի համարձակությամբ։

Բայց նա չընդունելով՝ ասաց իր ազգակից Սուրենյան Պահլավին. «Նրա արծաթը թող իրեն մնա, բայց դու նրան համոզիր, որ այս երկու բանը կատարե ինձ համար. նախ՝ հրամայե, որ Հայոց նախարարների գահը[338] մնա այնպես, ինչպես սահմանվել է Արտաշիրից և պահպանվում է մինչև այսօր, և պարսիկ մարզպաններն իրավունք չունենան, չափազանցացրած ղեկուցումներ տալով, կամայականորեն փոփոխել նվ երկրորդ՝ որ իմ և քո ազգականի, երիտասարդ Գազավոնի[339], Հրահատի որդու տունը վերադարձնե, եթե ոչ իր տեղը տալով,— քանի որ նա ատում է Արշակունի անունը,—գոնե նախարարների կարգի մեջ մտցնելով, ինչ տեղում որ ինքը կամենա, ինչպես (արավ) նրա ազգակից Կամսարականին կամ Ամատունուն, սրանց հայրենական գահից և առաջնակարգ պատվից իջեցնելով ստորին աստիճանի. կամ գոնե արքունական գործակալությունը հավատա նրան (Ամատունուն) և զավակներին համանման վստահությամբ, մինչև որ աստված քաղցրանա և նրան նորից տա հայրենական գահը որևէ թագավորի ձեռքով։ Արդ՝ ջանա՛ նրան համոզել ճարտար միջնորդի նման»։

Վռամը համաձայնելով՝ հրամայում է բոլորը կատարել. և նրա թոռան, Վարդան ստրատելատին, նորից հաստատելով իր Մամիկոնյան ցեղի տերության մեջ, արձակում է Հայաստան վերադառնալու։

Բայց եթե մեկն ասե, թե մենք պետք է գրեինք մեծն Սահակի խոստածները Պարսից ատյանում, թող նա գիտենա, որ ամբողջն իսկությամբ մեր լսելիքին չի հասել ոչ ոքից, ուստի և մենք չենք հոժարում հյուսել այս պատմության մեջ։ Որովհետև ես էլ մի մարդ եմ ծերացած և հիվանդոտ և թարգմանություններից անպարապ. ես միտքս դրի միայն շտապել, առանց խոսքի մաքրության հետևելու, որպեսզի քո կամքը կատարված լինի, և ես ազատվեմ քո ստիպողական խոսքերից և աղաչանքներից. քեզ էլ ես մարդ եմ համարում, կարիքների կողմից մեզ հավասար, և ոչ քե, ինչպես քերթողներն ասում են, որ իշխաններն աստվածների զարմից են, նրանց մերձավոր և սերնդակից։

ՄԵԾՆ ՍԱՀԱԿԻ ԱՆԱՐԺԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՑ ՇԱՄՈՒՆԵԼԻ ԳՈՐԾԵՐԸ

Շամունեը գալով գրավեց եպիսկոպոսապետության աթոռը, և հետևեց Բրքիշոյի վարքին, ագահության կողմից նրան գերազանցելով. որովհետև նա հափշտակում էր միայն վախճանված եպիսկոպոսների վիճակները, իսկ սա՝ նաև կենդանիներինը, որովհետև մեռածների տեղ նոր (նպիսկոպոսներ) ձեռնադրել թույլ չէր տալիս մեծն Սահակին, իսկ կենդանիներին էլ, ընչին պատճառներ գտնելով արքունական հարկերի խափանման մեջ, հալածում էր և բոլորի վիճակները խլում յուրացնում էր։ Ուստի նա ատելի դարձավ բոլոր եպիսկոպոսներին և արհամարհվեց, այնպես որ քեկուզ բյուրավոր չարիքներ նրանից կրեին, չէին գալիս նրա մոտ, բացի այն Սուրմակից, որի վիճակը նույնիսկ մեծացրեց, արքունական հրամանով շատերի վիճակները խլելով ու նրան հանձնելով։ Ուրիշ եպիսկոպոսներ էլ, նրան նախանձելով, հանդրգնեցին նույն բանն անել, Պարսից թագավորին դիմելով իրենց իշխանների միջոցով։

Իսկ մեծն Սահակը չդադարեց հոգևոր կաթով անուցանել եկեղեցու մանուկներին Մեսրոպի հետ միասին, որին հաստատեց Վաղարշապատ քաղաքի կաթողիկե եկեղեցում, իսկ ինքը մնաց Բագրևանդ գավառում[340], այն տեղում, ուր երկնքից լույս ծագեց՝ երբ սուրբն Գրիգոր մկրտում էր Տրդատ թագավորին և բոլոր հայիրին։

Բայց Շամունեը հինգ տարի ապրելով մեռավ մեր աշխարհում։ Այն ժամանակ բոլոր նախարարները ժողովվեցին, գնացին մեծն Սահակի մոտ, խոստովանեցին իրենց հանցավորությունը և աղաչում էին, որ նորից դառնա իր աթոռը. խոստանում էին, որ Պարսից թագավորից նրան հաստատել կտան, և բոլորը կնքում էին ուխտի գիր, որ նույն իշխանությունը նրա թոռներին կտան ժառանգաբար։ Բայց նա հանձն չէր առնում։ Նրանց շատ թախանձանքներից ստիպված պատմեց նրանց այն տեսիլը, որով քնի մեջ շատ ժամանակ առաջ հայտնվեցին ապագայում գալիքները։ Նախարարներն այս լսելով և հասկանալով, որ աստվածային հրամանով նրա ցեղից քահանայապետությունը դադարեց, արտասվեցին, վայ տվին իրենց, համաձայն ավետարանի խոսքին, թե «Դայթակղությունը պետք է գա, բայց վա՛յ նրանց»

որոնց ձեռքով կգա գայթակղությունը[341], *և թողին նրա կամքին։*

ԿԷ

ՄԵԾՆ ՍԱՀԱԿԻ ԵՎ ՆՐԱՆԵԼԻ ՄԵՍՐՈՊԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ ՓՈԽՎԵԼԸ

Վասիլը քսանևմեկ տարի Պարսից վրա թագավորելուց հետո մեռնում է, տերությունն իր Հազկերտ որդուն թողնելով։ Սա հաշտություն մոռանալով, հենց թագավորելուն պես դիմում է Մրծդրնի մոտ եղած Հունաց զորքերի վրա, Ատրապատականի գընդին էլ հրամայում է մեր աշխարհը մտնել։ Սրանք եկան և անկարգ կերպով բանակ դրին Բագնաց ավանի (Բագավանի) մոտ։

Այս ժամանակ մեծն Սահակի վրա մահվան հիվանդություն հասավ. աշակերտները նրան առան փոխադրեցին Բլուր կոչված գյուղը, իբրև մի ավելի սովոր և Պարսից զորքերից ազատ տեղ, որոնք նրանց նեղություն էին տալիս։ Այստեղ հասավ նրա վախճանը, հիսունևմեկ տարի եպիսկոպոսապետություն անելուց հետո, սկսելով Հայոց վերջին խոսրով թագավորի երրորդ տարուց մինչև Պարսից Հազկերտ երկրորդ թագավորի առաջին տարվա սկիզբը, նավասարդ ամսի վերջին, իր ծննդյան օրը։ Որ մահկանացու ծնվելով՝ անմահ թողեց իր հիշատակը, պատվեց պատկերը, պատկառեց կոչումից, կյանքից կյանք փոխադրվեց, և այնպես կենցաղավարեց այնքան տարի, որ ծերությունից ոչ մի տեսակ պակասություն չերևաց նրա վրա և ոչ որևէ ախտի ենթարկվեց։ Նրա մասին պետք էր փառավոր ճառ գրել, դրվատել մեր սուրբ Հորը, ինչպես նրան արժան է, բայց որպեսզի գլխի երկարությունը ընթերցողին ձանձրույթ չպատճառե, ուրիշ տեղի և ժամանակի կթողնենք այս բաները, այս գրքից դուրս, ինչպես սկզբի մասին էլ խոստացանք գրել[342]։

Բայց նրա պատվական մարմինը վերցրին նրա սարկավագապետ Երեմիան իր աշակերտակիցներով և նրա Հարսը, Մամիկոնյան տիկինը, Դատրիկ անունով, որ Վարդան սպարապետի կինն էր, տարան թաղեցին իրենց Աշտիշատ գյուղում, որ գտնվում է Տարոն գավառում։ Նրա աշակերտները, կրոնավոր սպուղենները իրենց գավառները ցրվելով՝ վանքեր հիմնեցին և եղբայրներ ժողովեցին։

Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեհեկան ամսի տասներեքին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում, գերազանցելով բոլոր առաքինի մարդկանցից, որպիսիք այն ժամանակ կային։ Որովհետև ամբարտավանությունը և մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ և բարեմիտ լինելով, երեվում էր բոլորին՝ երկնայիններն սովորությամբ զարդարված։ Որովհետև նա հրեշտակի տեսք ուներ, ծննդական միտք, պայծառ էր խոսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորություններով աննման, խորհրդակցությամբ մեծ, հավատով ուղիղ, հուսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ։

Բայց որովհետև բոլոր բարեմասնություններն անկարող եմ թվել[343], խոսքս կդարձնեմ նրա մարմնի հուղարկավորությանը։ Ինչպես լսեցի բազմաթիվ և արժանահավատ անձերից, խաչի ձևով աղոտ լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց. և շուտով չանհետացավ այս շողքը, քչերին տեսանելի չեղավ, այլ բոլոր բազմությանը[344], այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին։ Այս ժամանակ ժողովված բազմության մեջ աղմուկ և շփոթություն ծագեց՝ այն պարկեշտ մարմինը թաղելու (տեղի) պատճառով, որ դեռ մահից առաջ մեռելության վարժեցրել էր իրեն։ Բաժանվել էին երեք խմբի. մի մասն առաջակում էր տանել Տարոն, իր ծննդավայրը, մյուսները՝ տանել Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց Վաղարշապատ քաղաքում, սրբերի հանգրստարանում։ Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր էր մարմնավորապես, որովհետև պարսիկներն այդ ժամանակ նրան էին հավատացել մեր Հայոց աշխարհի հազարապետությունը։ Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը, Օշական։ Եվ նույն լուսեղեն խաչի երևույթը դագաղի վրա գնում էր դեմ հանդիման բոլոր ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, որից հետո նշանն աներեվույթ եղավ։ Իսկ եպիսկոպոսապետության աթոռը իբրև տեղակալ նստեց երանելի Մեսրոպի հրամանով նրա աշակերտը, Հովսեփ քահանան, որ Վայոց ձորից էր, Հողոցիմ գյուղից։

ՈՂՔ՝ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՅԵՂԻՑ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՏՈՀՄԻՑ

Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ և ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը։

Աղճում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ, բեմիդ բարեզարդությունից անշքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված։ Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը զալար տեղում և հանգիստ ջրերի մոտ անվեխիս[345] և ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում։

Որանի՞ առաջին և երկրորդ փոփոխություններին[346], որովհետև եղավ մի ժամանակ, որ փեսան և խաչեղբայրը հեռացվեցին, բայց դու, հարսդ, համբերեցիր, ուղղախոհությամբ պահելով ամուսնությունդ, ինչպես մեկը մեզանից առաջ խնամատարաբար ասաց[347]։ Մյուս անգամ էլ, երբ մեկը սիրեկանի նման հանդգնաբար հարձակվեց քո անարատ առագաստի վրա, դու, հարսդ, չապականվեցիր. թեպետ բռնի կերպով փեսան վտարվեց —երբ ստամբակ որդիները իրենց ծնողին անարգեցին, միանգամայն և խորթերը արժանապես օտար հորը և եկվոր խորթ հորը,— բայց դու այս անգամ էլ ամեն բանով լքված չմնացիր. ակնկալելով քո (փեսայի) դարձին, դու հովվակցի ձեռքով, մանուկներիդ փայփայեցիր, ոչ ինչպես տագերոջ, այլ ինչպես նույն զավակների տեր երկրորդ հոր ձեռքով[348]։ Իսկ այս երրորդ անգամ հեռանալիս՝ այլևս չկա դարձի ակնկալություն, որովհետև մարմնից բաժանվեց իր ընկերոջ ու գործակցի հետ։

Նրանց համար լավ է Քրիստոսի հետ բնակվել, Աբրահամի գոգում հանգչել և շուրջը հրեշտակների խմբեր տեսնել։ Բայց դո՛ւ ես, որ այրիությանդ մեջ առանց հոգացողի մնացիր, և մենք, ենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից։ Որովհետև այնպես չէ (մեր վիճակը), ինչ որ հնումը (Իսրայելացոց) ժողովուրդն ուներ, այլ մեր թշվառությունն ավելի է[349]։ Որովհետև Մովսեսը վերացվում է, բայց Հեսուն չի հաջորդում, որ ա-

ռաչնորդն դեպի Ավետյաց երկիրը։ Ռոբովամն իր ժողովրդից մերժվեց, բայց նրան փոխարինեց նաթաթի որդին, և աստծու մարդուն ոչ քո առյուծը ոչնչացրեց, այլ հասուն տարիքը։ Եղիան համբարձավ, բայց Եղիսեն չմնաց կրկնակի հոգով՝ Հեուին օծելու, այլ դեռ Ազայելն էլ հրավիրվեց Իսրայելին կոտորելու։ Սեդեկիան գերի տարվեց, բայց չկա Զորաբաբել, որ տերությունը նորոգե։ Անտիոքոսը բռնադատում է թողնել հայրենի կրոնը, բայց Մատաթիան չի դիմադրում. պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում։ Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք. արհավիրքը հեթանոսների կողմից և կռիվներ հերձվածողների կողմից[350], և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր։

Ավա՜ղ այս ղրկանքներին, ավա՜ղ այս թշվառ պատմության։ Ի՞նչպես դիմանամ այս ցավերին, ի՞նչպես ամրապնդեմ միտքս ու լեզուս և հայրերիս (իմ պարտքս) հատուցանեմ այս խոսքով, (իմ) ծնունդի և սնունդի փոխարեն։ Որովհետև նրանք ինձ ծնան և սնուցին իրենց տված ուսումով և ուրիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու[351]։ Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել, խրոխտ և արագ շարժումներով, և առագաստի երգեր երգել,— այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով. նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն և օրհնությունը։

Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում։ Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարատությունը ուղիղների համար և ահավորությունը չարերի համար. ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ արբանյակներ էր գրավում. ո՞ւր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանգրստացողը.— կորա՜վ ժողովուրդը, ծածկվե՜ց նավահանգիստը, լքե՜ց օգնականը. լռե՜ց խրախուսիչ ձայնը։

Ո՞վ այսուհետև պիտի հարգե մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտե՝ մասամբ իր որդուցս հաղթվելով։ Ո՞վ պետք է զսպե առողջ վարդապետության հակառակ

դուրս եկողների հանդգնությունը, որոնք ամեն բանով քանդված ու քայքայված՝ շատ ուսուցիչներ են փոփոխում և բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայրերից մեկը[352], ամեն բանի նրանք հավասարապես դժվարանում են, և իրենց համար չար օրինակ են գործնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ (մարդկանց)։ Ո՞վ պետք է նրանց պապանձեցնեն ասստելով և մեզ սփոփեն գովելով և չափ դնեն խոսքի և լռությանն։

Երբ մտածում եմ այս բաների մասին, իմ մեջ հառաչանք և արտասուք են ծագում, ինձ թելադրում են տխրալից և սգավոր խոսք ասել։ Ով չգիտեմ, ի՛նչպես հորինեմ իմ ողբը և կամ ո՞ւմ արտասվեմ.— արդյոք իմ թշվառ մանուկ թագավորի՞ն, որ վատթար խորհրդակցությամբ իր ցեղով հանդերձ դեն գցվեց և նախքան մահով մեռնելը անարգարար աթոռից կործանվեց, թե ինձ, որ գլխից վերցվեց փառավորող գեղեցիկ կենցաղօգուտ պսակը. արդյոք իմ հո՞րն ու քահանայապետին, այն վսեմ միտքը, լի կատարյալ խոհականությամբ, որով կառավարում էր և բարեկարգում, և սանձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս (ընթացքին) և սանձահարում էր օտարոտի (մտքեր հայտնող) լեզուները, թե ինձ, նրա հոգու խանդից զրվկածիս ու տնանկիս. արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը, որ ոռոգում էր արդարությունը և իբրև հեղեղ դուրս էր գալիս ամբարշտությունը, թե ինձ, նրա խրատները խմելու ծարավից ցամաքածիս ու թառամածիս. արդյոք մեր աշխարհին արդեն եկա՞ծ աղետները, թե ապագայում սպասվածները։

Ո՞վ մեզ այս բաներում ճառակից կլինի՝ մասնակցելով մեր տրտմությանը, ո՞վ մեզ կընկերանա՝ ցավակցելով մեր ողբին, կամ արձանների վրա փորագրելու Զարեհ՞ր, Երեմիա, Զարեհ՞ր, և ողբա[358] մարգարեանալով հանդերձ ինչ թշվառություններ որ կրեցինք և դեռ պիտի կրենք. գուշակի՞ր, որ տգետ հովիվներ պետք է երևան դան, ինչպես (գուշակեց) Զաքարիան Իսրայելացիների համար։

Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ ասածուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով. ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ աստված է քնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը։

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվասեր, քան աստվածասեր։

Վիճակավորները՝ հպարտ, դատեր սիրող[354], դատարկախոս, ծույլ, գիտությունների ու վարդապետական գրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող։

Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են։

Ժողովրդականները՝ ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասագործ, ժառանգությունից փախչող[355]։

Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, հելուզակ[356], ավազակների բնութենակից։

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող, աշխարհ ավերող, աղտեղասեր, ծառաներին համամիտ։

Դատավորները՝ տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անհաստատ, հակառակող։

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած։

Եվ ի՞նչ է այս բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ աստված մեզ անտես է արել և տարրերը փոխել են իրենց բնությունը.— գարունը երաշտ, ամառը աստիճ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը աստիճ ցուրտ, մրրկալից և երկարատև։ Քամիները՝ բուքեր բերող, խորշակի փոխված, ցավեր տարածող. ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր. անձրևներն անժամանակ և անօգուտ. եղանակը դաժան, եղյամ բերող. ջրերի անօգուտ ավելանալը և չափից դուրս պակասելը. երկրի պտղաբերությունը նվազած, անասունների աճելությունը պակասած, այլև երկրաշարժներ և սասանումներ։ Եվ՝ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքին, թե ամբարիշտներին խաղաղություն չկա[357]։

Որովհետև (մեզ) տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս։ Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած. հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար։ Ապստամբություններ են դալիս անհատնում, շատ տեղերի վրա, տները

գերվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի ծառություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ[358]*։ Աստվածապաշտությունը մոռացված է, դժոխքի ակնկալություն։*

Որից փրկե Քրիստոս աստված մեզ և բոլորին, որոնք հշմարտությամբ երկրպագում են նրան։ Նրան փառք բոլոր ստեղծվածներից, ամեն։

Ավարտվեց երորդ գիրքը, որով վերջանում է Հայոց մեծերի պատմությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

1. Բնագիրն ունի «Ծննդաբանութիւնն Հայոց մեծաց», որ մենք թարգմանեցինք Հայոց մեծերի ծննդաբանությունը, այսինքն հայ նահապետների և թագավորների էյուղագրությունը, ինչպես որ է իրապես Պատմության Ա գիրքը։ Ուրիշները թարգմանել են „Родословие Великой Армении„ (էմին), «Մեծ Հայաստանի ծննդաբանություն» (Մանւկյանե), որ ընդունելի չէ. նախ՝ որովհետև երկրի կամ ժողովրդի ծննդաբանություն չի լինում առհասարակ, և երկրորդ՝ որ Պատմահայրը (Մովսես Խորենացին) գրում է ընդհանուր Հայաստանի Պատմությունը և ո՛չ թե միայն Մեծ Հայքի, որ աններելի կլիներ։

2. Բնագրում՝ «մեք, որպէս ասի, պատկեր աստուծոյ։ Ակնարկություն է Մննդ. Ա 27, որտեղ ասված է, թե աստված մարդուն ստեղծեց, «ըստ պատկերի իւրում, ըստ պատկերի աստուծոյ արար զնա»։ Իսկ շարունակության մեջ «Առաքինութիւն բանականին է խոհականութիւնն» հիշեցնում է Արիստոտելի «Ցարդաս առաքինութեանց» գրվածքի հետևյալ ֆրազը. «Ու է խոհեմութիւն առաքինութիւն բանականինն» (Տե՛ս Կորյուն, Մաշտոց, Դավիթ, Վեն. 1833, եր. 629)։

3. Նախարարություն կազմված է նախարար բառից։ Նախարար բառի ծագումը շատ տեսակ բացատրել են զանազան գիտնականներ (տե՛ս Արմատ. բառարան)։ Ամենից հավանական է Մեյեի բացատրությունը, ըստ որի այս բառը ծագել է իրանական nāxavāra բառից, որ նշանակում է ցեղապետ. (սկզբնապես նշել է նահարար), որից մնացել է նահ-ապետ=ցեղապետ, որ հետո փոխվել է նախարար։

Ըստ նշանակության նախարարը համապատասխանում է եվրոպական ֆեոդալին։ Նախարարը բարձր ազնվական է, ավելի կամ պակաս ընդարձակ երկրով, որ ժառանգաբար անցնում էր հորից որդուն, իբրև մայրաժառ։ Այս իր իշխանության մեջ նախարարը զանազան տեսակի հարկեր էր հավաքում իր ժողովրդից, դատաստան էր անում, հավաքում էր զորք և ընդհանրապես կառավարում իր երկիրը։ Պատերազմի ժամանակ նախարարը պարտավոր էր իր զորքով գնալ թագավորի կոչին։ Արշակունի, Բագրատունի թագավորներն ևս նախարարներ էին, բայց մյուսների մեջ նախապատիվը և ունեին ավելի ընդարձակ կալվածքներ և ավելի զորք։

Նախարարները լինում էին ավագ (կամ մեծ) և կրտսեր՝ նայելով իրենց

երկիրների ընդարձակությանը, իրենց պահած զորքի քանակությանը և իրենց գրաված գահին։

Նախարարն իր ընտանիքով (եղբայրներ, որդիք, թոռներ) հին լեզվով կոչվում էր ազդ («ազգ Բագրատունեաց». «յազգէն Սիւնեաց» և այլն)։ Այս ազդ բառը մենք թարգմանեցինք ցեղ, չշփոթելու համար «ազգ» բառի այժմյան ընդհանուր նշանակության հետ։ Դարերի ընթացքում «ազգը» բազմանալով և ճյուղավորվելով՝ առաջ էին գալիս ընտանիքներ, որոնք թեպետ այդ ազգից էին ծագում, բայց շատ հեռացել էին և խզել էին կապը «ազգի» բուն ներկայացուցիչների հետ։ Այսպիսի ընտանիքները կոչվում էին «տոհմ»։ Այնպես որ անուններ թվարկելիս՝ նախ հիշում են «յազգէն Արծրունեաց» (այս ոք), և շարունակության մեջ, վերջը՝ «ի տոհմէն Արծրունեաց» (այս ոք)։ Բայց «տոհմը» հաճախ գործ է ածվում և ավելի ընդարձակ մտքով, պարունակելով թե՛ «ազգը» և թե նրա հեռավոր ճյուղը՝ տոհմը։

Նախարար բառը հին հեղինակները գործ էին ածում որոշ անձի դասակարգը նշանակելու համար. բայց անհատներն իրենց պատվի տիտղոսով կոչվում էին տանուտեր, տեր, նահապետ, իշխան։ Խորենացին ավելի հաճախ գործ է ածում տանուտեր բառը, Եղիշեն, Փարպեցին՝ իշխան բառը։ Այս տիտղոսը կրում էր նախարարական ցեղի անդամներից միայն մեկը, որի ձեռքումն էր իշխանությունը. մյուս անդամորդիկ (իշխանի եղբայրները, որդիները, հորեղբայրները և այլն) կոչվում էին Սեպուհ։

Հայաստանի նախարարությունների և նախարարների մասին ամենից մանրամասն և լավագույն ուսումնասիրությունը գրել է Ն. Ադոնցը „Армения в эпоху Юстиниана" *աշխատության մեջ։*

4. Պտղոմեոս Եղբայրասեր, Եգիպտոսի թագավոր (285—247 Ն. Քր.), հաջորդը Պտղոմեոս Սոտերի, Աղեքսանդր Մեծի զորավարի և Պտղոմյան հարստության հիմնադրի։ Պտղոմեոս Եղբայրասերը (հեգնությամբ այսպես կոչված, որովհետև նա իր եղբորը սպանեց) հայտնի դարձավ իբրև գիտությունների և արվեստների սիրող ու հովանավոր։ Խորենացին ասում է, որ նա «հարկավոր համարեց բոլոր ազգերի մատյաններն ու վեպերը հունարեն թարգմանել»։ Մասնավորապես հիշատակելի է, որ նրա նախաձեռնությամբ 72 գիտնականներ եբրայեցերենից հունարեն թարգմանեցին ս. գիրքը, որ կոչվում է «Եօթանասնից թարգմանութիւն»։

5. Այս պարբերությունը, որ սկսվում է «բայց ոչ ոք» բառերով, մինչև «առաջս նրա մասին», ինչպես պետք էր ծանոթության մեջ դնել, իբրև բացատրություն, թե ինչո՞ւ Պատմահայրը Պտղոմեոսին, Եգիպտոսի թագավորին, կոչել է Հունաց թագավոր։ Մենք այս պարբերությունը խոսքի ընթացքից զատեցինք՝ գծիկներով բաժանելով։ Խոսքի քերականական կարգն է՝ «Ոչ միայն հունաց թագավորներն», «այլև բազմաթիվ... մարդիկ Հունաց աշխարհից»։ Այսպիսի ընդարձակ և բարդ համադրություն հազիվ է պատահում ոչ միայն մեր, այլև օտար ազգերի մատենագրության մեջ։

6. Բերոսոս նշանավոր քուրմ էր Բաբելոնում, Բել աստծու տաճարում. ապրում էր Գ դարում Ն. Քր. Անտիոքոս Սոտերի ժամանակ (280—270 Ն. Քր.), գրել է մի հռչակավոր պատմություն Քաղդեայի և Ասորեստանի, օգտվելով մեհյանի սեպագիր արխիվներից։ Այս պատմությունից օգտվել է Եվսեբ-

բիոս Կեսարացին իր ժամանակագրության մեջ, բայց ներկայումս մի քանի հատակտորներ են միայն մնացել Եվսեբիոսի վկայությամբ։ Նա գրել է նաև աստղագիտության վերաբերյալ գիրք (Տե՛ս և Սիբիլլա, ծանոթ. 21)։

7. Բանասերների համար գայթակղության քար էր այս հանելուկային խոսքը, «որպէս զԱ առ Ք, և զԹ առ Փ» և այլն։ Ընդհանուր իմաստը կարելի է մակաբերել այս մասով, թե հույները գտել են զանազան արվեստներ ու գիտություններ զանազան ազգերի մոտ և փոխադրել են հունարեն։ զ նախդրով նշանակված են արվեստներն ու գիտությունները (զԱ, զԹ, զԿ, զԾ), իսկ առ նախդրով՝ ազգերը, որոնց մոտ գտել են (առ Ք, առ Փ, առ Ե, առ Թ)։ Բայց ի՞նչ ազգեր և ի՞նչ արվեստներ են եղել՝ այս հարցը պարզ չէր և այլևայլ կերպ էր մեկնվում։ Պատմության ձեռագրերից մեկի լուսանցքում բերված է հետևյալ մեկնությունը. «Աստեղաբաշխութիւն առ Քաղդեացիս, Թուականութիւն առ Փիւնիկեցիս, երկրաչափութիւն առ Եգիպտացիս, երաժշտութիւն առ Թրակացիս»։ Պատմության առաջին (Ամստերդամի) և երկրորդ (Վիստոնյան) տպագրության մեջ ուրիշ կերպ է մեկնված. «այսինքն Աիֆ Քաղդեացւոց առ խի Յունաց, զ և Թէ Քաղդեացւոց առ Փսի Յունաց, գային Քաղդեացւոց առ փոքր է (ե) Յունաց, չին Քաղդեացւոց առ սիգմա Յունաց»։ Վենետիկի վերջին տպագրության մեջ (1881) տրված է մեկնությամբ հանգերձ որպես զ Ա(ստեղաբաշխութեան) առ Ք(աղդեացիս) և զ Ե(րկրաչափութեան) առ Ե(գիպտացիս) և զ Թ(ուականութեան) առ Փ(իւնիկեցիս) և զ Ե(րաժշտութեան) առ Թ(րակացիս), (տես. հրատ. Խորենաց. էջ 9 ծան.)։

Արվեստների և գիտությունների այս կամ այն ազգից գտնված լինելու տեղեկությունը, որ Խորենացու Պատմության մեջ վերածված է տառային հանելուկի՝ համառոտված է Դավթի Անհաղթի Սահմանաց գրքի մէջ պրակից, որտեղ ասված է. «զԹուականսն Փիւնիկեցիք գտին... զԵրաժշտականն Թրակացիք... զԱստղաբաշխականն Քաղդեացիք... զԵրկրաչափականն Եգիպտացիք» (Մատեն., եր. 199)։ Այս մեկնությունը բերել է Ներսես Շնորհալին Դավթի Անհաղթի լուծմունքի մեջ (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Վիեննայի Մխիթարեանց, եր. 1047)։ Որ Խորենացու այս հանելուկային խոսքի աղբյուրը Դավիթ Անհաղթի վերոհիշյալ հատվածն է՝ առաջին անգամ մատնանշել է Գալ. Տեր-Մկրտչյան (Միաբան) (տե՛ս Հանդես ամսօրեա 1892 թ. եր. 372)։ Նույնը Միաբանից անկախ նկատեց և պրոֆ. Հ. Մանանդյան «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության վերջում։

Այս առեղծվածային տողը մեր թարգմանության մեջ դետեղեցինք փակագծերում, համարելով ընդմիջարկություն՝ որևէ հին ձեռագրի լուսանցքից մուծված բնագրի մեջ։ Խորենացին, որ ինքը շարունակ մեկնում է այլաբանությունները, հարկավ չէր մտածի այսպիսի մի անմեկնելի առեղծված առաջարկել իր մեկենասին, Սահակ Բագրատունուն, և իր ընթերցողներին։ Եթե նա գրելու լիներ՝ ամբողջ բառերով կգրեր—որպես զաստեղաբաշխութիւն առ Քաղդեացիս և այլն։ Մի անհայտ անձ, կարդալով Դավթի Սահմաններում վերոբերյալ հատվածը իր ձեռագրի լուսանցքում, իր հիշողության համար, համառոտ նշանակել է արվեստների և ազգերի անունները սկզբնատառերով, իբրև ապացույց Պատմագրի այս խոսքերին, «զմեծամեծս զգարմանալեաց արժանաւորս յարուեստից և ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզուս»։ Այդ ձեռագրից մի նոր օրինակ արտագրողը, լուսանցքի հավել-

վածը համարելով բնագրին պատկանող խոսք՝ մուծել է բնագրի մեջ, և այս ընդմիջարկված ձեռագրից ծագել են հետագա ձեռագրերը։ Այսպիսի ընդմիջարկություններ հաճախ են պատահում մեր հին մատենագրության մեջ. բավական է հիշել մի շարք ընդմիջարկություններ Հոհան Մանդակունու ձառում, Ղազար Փարպեցու պատմության մեջ (տե՛ս նոր հրատ. Թիֆլիս, 1904, էջ 179—181)։ Միարանը վերահիշյալ հոդվածում նույնպես ենթադրում է, որ այս առեղծվածային խոսքը կարող է լինել ընդմիջարկություն լուսանցքից։

8. Խորենացին, բացի զուտ պատմական գրավոր աղբյուրներից, հաճախ հիշատակում է նաև ժողովրդական կես-պատմական կես-առասպելական աղբյուրներ, որոնց նա տալիս է մի քանի անուններ՝ առասպել, վէպ, զրոյց, վիպասանք, երգարանք բանից, Թուելեաց երգք։ Այս բառերի նշանակությունը աշխատել են բացատրել նախ՝ Հայկազյան բառարանը, այնուհետև Մ. Էմինը «Վէպք հնոյն Հայաստանի» ուսումնասիրության մեջ. նրանից հետո Գր. Խալաթյանցը („Армянский эпос", էջ 37—46)։ Ամենից մանրամասն և, որքան կարծում ենք, ամենահավանական բացատրությունն այս տերմինների տվել Մ. Աբեղյանը իր «Հայ ժողովրդական առասպելները» ուսումնասիրության մեջ (Վաղարշապատ, 1901)։ Այս աշխատությունից քաղվածաբար բերում ենք վերը նշանակված տերմինների հավանական նշանակությունը։

Վեպ բառը Խորենացու պատմության մեջ, ինչպես և Եվսեբիոսի մեջ չունի այն նշանակությունը, որ ներկայումս տալիս են նրան, այսինքն էպոս, դյուցազներգություն, այլ պարզապես նշանակում է պատմություն։

Զրոյց՝ առանձնապես վերցված Խորենացու Պատմության մեջ գործ է ածվում «գրված պատմություն» նշանակությամբ, բայց կան և բերանացի զրույցներ, որոնց զանազանելու համար գրավորից, Խորենացին կոչում է անգիր. հին, վաղեմուց, նախնական յաւանդութենէ առ մեզ հասեալք և այլն բառերով։ Զրուցել բայն էլ նշանակում է պատմել։

Առասպել՝ ժողովրդական բանահյուսության նյութ, որ կարող էր լոկ պատմվել կամ երգվել։ Ըստ Խորենացու՝ առասպելները հաճախ այլաբանություններ են, որոնց տակ թաքնված է պատմական իրողությունը, որ Պատմահայրը աշխատում է ճշմարտել. այսինքն այլաբանությունից դուրս բերել պատմական իրողությունը։

Վիպասանք, երգք վիպասանաց—որոշ տեսակի առասպելներ, որոնք հավանորեն երգվում էին. Վիպասանք նշանակում է նաև վեպը ասող, վեպը երգող։

Բանք—Խորենացին գործ է ածում նախ՝ խոսք բառի և ապա ընդհանրապես պատմվածք, պատմություն բառի նշանակությամբ, և այս վերջին իմաստով համանիշ է զրույց և վեպ բառերին։

Երգարանք բանից՝ իմաստալից, մտացի երգեր։

«Թուելեաց երգք»— թվել բայի՝ թիվ անել, արտասանել նշանակությունից, թիվ առողների կամ թիվ ասվածների՝ պատմվածների երգերը։ Համանիշ է երգք վիպասանաց տերմինին։

9. Բնագրում գրված է «Սեպհական ազատութեան պայազատութիւն», որ մենք թարգմանեցինք «սեպուհական ազնվականության ծագում»։ Պատմահայրը նկատի ունի այնպիսի վավերագրեր, որոնց մեջ բերվում են որևէ անձի ճյուղա-

21—1455

գրությունը. Նրա ծագումը այսինքն Սեպուհից, որով ապացուցվում էր այդ անձի ազնվականությունը իբրև Սեպուհի սերունդի։

10. «Երկար և շահավոր գործով» — մինչև ներկա ժամանակըս սա այն ծրագիրն է, որը Պատմահայրը աշխատել է իրագործել իր պատմության մեջ, որքան հանգամանքները թույլ են տվել։ Եթե այս ծրագիրը հիրավի առաջարկել է Սահակ Բագրատունին, ինչպես վկայում է հեղինակը, ապա իրավունք ունի նա ասելու, որ Սահակ Բագրատունին առաջինն է եղել այսպիսի մի ընդարձակ ծրագրով Հայոց Պատմություն գրել տալու նախաձեռնող. բոլոր իրենից առաջ եղողներից վեհագույնն է եղել, քանի որ նրանից առաջ Տրդատ Թագավորը, որ Հայոց դարձի պատմությունն է գրել տվել Ագաթանգեղոսին, կամ Դավիթ Երեց Մամիկոնը, որ կրոնական առաջին պատերազմի պատմությունն է խնդրել Եղիշեից՝ կարճ ժամանակաշրջանի կամ մի մասնավոր անցքի պատմության նախաձեռնողներ են, ուստի և չեն կարող հավասարվել Սահակ Բագրատունուն։

11. Տե՛ս Հոբ. լԵ. 20։

12. Բերոսոսի մասին տե՛ս ծան. 6։ Բազմավեպ՝ Աղեքսանդր Բազմավեպն է (Polyistor). Հույն քերթող և պատմագիր, ծնված Միլետում կամ Մինդում Բ դարում Ն. Քր.։ Գրել է բազմաթիվ պատմա-աշխարհագրական երկեր, բազմակողմանի հմտությամբ։ Ներկայումս մնացել են միայն հատակտորներ։ Աբյուղենոսի մասին միայն Եվսեբիոսն է հիշում, ասելով, որ գրել է Ասորեստանի Պատմություն և Քաղդեայի Պատմություն։ Ուրիշ տեղեկություններ չկան։ Այս երեք հեղինակներից՝ Բերոսոսից, Բազմավեպից և Աբյուղենոսից օգտվել է Եվսեբիոս Կեսարացին իր Քրոնիկոնի առաջին մասում, և նրանից էլ օգտվել է Խորենացին։

13. Շար, բաբելոներեն šar, սումերերեն ša-ar, ասոր. sar. հունարեն sâros, 3600 տարվա ժամանակաշրջան։ Գործ է ածված Եվսեբիոսի Քրոնիկոնում, որից առել է Խորենացին, ապա և ուրիշները. ո՞ր լեզվից է փոխ առնված բառը Եվսեբիոսի հայերեն թարգմանության մեջ, պարզ չէ։ Հյուբշմանը կարծում է, թե առնված է հունարենից և սեմականի ձև տարված։ Տե՛ս Արմատ. բառ.։

14. Քսիսութրոս Նոյի անունն է քաղդեական լեզվով, որ գործ է ածում Եվսեբիոսը, առնելով Բերոսոսից և Բազմավեպից, իսկ Խորենացին՝ Եվսեբիոսից։ Քսիսութրոս ձևն ապացուցվում է սեպագիր արձանագրություններով՝ որոնք Բաբելոնի և Նինվեի պեղումներով երևան եկան և պարունակում են ի միջի այլոց ջրհեղեղի ընդարձակ պոեմը, որի մի աննշան հատվածն է կազմում ս. գրքում պատմվածը ջրհեղեղի մասին։

15. Աստղաբաշխները մեծ տարի անվանեցին այն ժամանակամիջոցը, որ արեգակը, մոլորակներն և անշարժ աստղերը (նրանց կարծիքով) գործ էին դնում նրա համար, որ վերադառնան և ամենքը միասին գտնվեն երկնքի նշանակված կետում, որտեղից նրանք սկսում էին իրենց պտույտը։ Այս մեծ տարին նախ բովանդակում էր 25,000, հետո 30,000 և վերջը 432,000 տարի։ Ահա այն աստվածային տարիները, որոնց մասին խոսում է Մովսես Խորենացին այս գլխում և որոնք հնդկական գրքերը շատ որոշ կերպով են հայտնում, ասելով. «Բրահմայի տարին բաղկանում է մեր բազմաթիվ տարիներից, իսկ աստ–

վաճեների օրը իսկ ու իսկ համաձայն է մարդիկների մի դարումն։ („Asiatic researches", հտ. Բ, էջ 111)։ (Ն. Ստեփանեից էջ 18)։

16. Հովսեպոս Փլավիանոս—նշանավոր հրեա պատմագիր, որ ապրել է Ա դարում (37—95) Վեսպասիանոս ու Տիտոս կայսրների ժամանակ, մասնակցել հրեաների ապստամբությանը հռոմայեցիների դեմ, ականատես եղել Երուսաղեմի առման և տաճարի կործանման, որոնք հետո ինքը նկարագրել է։ Շատ հարգված էր հռոմայեցիների կողմից։ Նրա հնախոսությունից հաճախ օգտվում է մեր Պատմահայրը։ Այստեղ խոսքը վերաբերում է այն երկու արձաններին, որ ըստ վկայության Հովսեպոսի, Սեթի սերունդները կանգնեցրին և նրանց վրա փորագրել տվին այն ժամանակվա գիտության արդյունքները՝ ապագայում անկորուստ պահպանելու դիտավորությամբ. մեկը արձաններից քարից էր, որ պետք է դիմանար ջրհեղեղի, եթե ապագայում պատահի, մյուսը աղյուսից էր, որը պիտի դիմանար կրակի։ Այս է, որ Պատմահայրը կոչում է «երկու գալիք դիպվածներ»։

17. Բնագրում գրված է. «Ի հրաւիրեալն մեր յուշարկեացուք տեղիս» խոսքը մութ է. հայտնի չէ, ի՞նչ տեղի վրա է ակնարկում հեղինակը։ Մենք թարգմանեցինք՝ ինչպես կարելի էր բնագիրը հասկանալ բերականորեն, սակայն երաշխավոր չենք, որ ուղիղ հասկացած լինենք։ Ստեփանեն թարգմանել է. «Մեր ենթադրած ուրիշ տեղին կթողնենք»։ Էմինը թարգմանել է. „Отсылаем (читателя) к указанному (нами) месту".

18. Բնագիրն ունի. «Թէպէտ և ըստ մերում թարգմանութեան ոչ ուրեք ի բնագրի գտանի»։ Այս խոսքը տեղիք է տվել այլ ընդ այլո մեկնությունների, քանի որ մեր հայերեն թարգմանության մեջ Թիրասը հիշվում է. «ի բնագրի» բառը քննադատները հասկացել են այժմյան նշանակությամբ. մինչդեռ հեղինակը այն գործ է ածել նախնական նշանակությամբ՝ ծառի բուն, հակադրությամբ նրա ճյուղերի։ Ծննդաբանականի մեջ ուղղակի վերելքի կամ վայրէջքի գիծը կազմում է բունը (Հայր—որդի—թոռ—թոռնորդի—թոռան թոռ և այլն), իսկ կողմնակի սերունդները (եղբայրը, սրա եղբայրը, որդին և այլն) կազմում են ճյուղեր։ Արդ՝ մեր թարգմանության մեջ բնագիրն (ուղղակի վայրէջքի գիծն) ունի Հաբեթ-Գամեր-Թորգոմ. Թիրասը ճյուղում է գտնվում. իբրև կրտսերը Հաբեթի որդիներից։ (Ծն. Ժ, 1—3)։ Նույն տեղում տեսնում ենք որ Թորգոմը Գամերի որդին է, մինչդեռ Խորենացու մոտ՝ նա Թիրասի որդին է։ Թիրասին «բնագրի» մեջ մտցնելով՝ Խորենացին մի անգամով երկարացրել է Հաբեթի ճյուղագրությունը։ Նույնպես է վարվել և Քամի ճյուղագրության մեջ. ըստ Ս. գրքի Քամի ճյուղագրությունն է Քամ—Քուշ—Նեբրովթ։ Մեստրայիմը Քուշի եղբայրն էր (Ծն. Ժ, 6—8). սակայն Խորենացին նրան էլ մտցնում է «բնագրի» մեջ և ճյուղագրության անդամների թիվը մեկով ավելացնում է՝ Քամ—Քուշ—Մեստրայիմ—Նեբրովթ։ Ս. գրքի ճյուղագրությունը թեկուզ մի շատ ուշիմ և ընթերցասէր ասորու վկայությամբ փոփոխելու համար պետք է Խորենացին շատ կարևոր պատճառներ ունենար։ Եվ այդ պատճառները երևում են Պատմության հաջորդ գլուխներից. նախ պետք էր, որ Հայկն ու Բելը այնքան իրար մոտ լինեին ժամանակով, որ կարողանային իրար հետ պատերազմել (Բել=ըստ Խորենացու՝ Նեբրովթ, Նոյից չորրորդ սերունդ, իսկ Հայկը, Թորգոմի որդին, Նոյից հինգերորդ), և երկրորդ՝ որ Նինոսը և Արամը պետք է ժամանակակից լինեին։

Վերոհիշյալ երկու փոփոխություններով հեղինակը հասել է այս երկու նպատակին էլ, սրա համար էլ, ինքն իր գյուտով հիացած՝ ընթերցողին հրավիրում է նայել երեք ցեղերի շարքի համապատասխանությանը և զարմանալ։

19. Կեփաղիոնին հիշում է Եվսեբիոս Կեսարացին և նրանից քաղվածքներ է անում։ Խորենացին էլ Եվսեբիոսից։

20. Մի ոմն Արիոս։ Մ. Էմին Արիոսին համարում է Arios Didyme, որ եղել է հեղինակ փիլիսոփայության պատմության։ Չգիտենք, ո՞ր Դիդիմոսին նկատի է ունեցել Էմինը, Աղեքսանդրացո՞ւն (Ա դար Ն. Ք.), թե կույրին (Դ դարում), բայց ոչ մեկը այս տեղին չի համարվում։ Այստեղ խոսվում է այնպիսի մի հին Արիոսի մասին, որ քաղդեական գրվածքները հունարեն է թարգմանել։ Այսպիսի հեղինակ այդպիսի անունով հայտնի չէ։ Հավանական է, որ այստեղ բնագիրն աղավաղված է. Արիոս ոմնի փոխանակ պետք է լիներ Բյուռիոս ոմն (մի քանի ձեռագրեր ունին Բերոսյան փխկ. Արիոս ոմն), որի մասին հիշում է հեղինակը Բ գլխում. «որ զԹիւսիւրոսի ոմն յայս յորդորեաց դայր քաղդէացիս»։ Հին տպագրությունների Բյուսիրոս ոմնը նոր տպագրության մեջ ուղղված է Բերոսոսի։

21. Բերոսոսյան Սիբիլլա։ Սիբիլլաները հին Հունաստանում և Հռոմում կույսեր էին, նվիրված Ապոլոնին, ապրում էին մենակ, քարայրներում, անձավներում և երբեմն էքստազի մեջ գուշակություններ էին անում։ Շատ հարգված էին ժողովրդից։ Առանձնապես հիշվում է Էրիթրեայի Սիբիլլան, որին վերագրվում է առաջին Սիբիլլյան գիրքը (գուշակությունները) հունարեն, վեցոտնյան ոտանավորով։ Այս գիրքը շատ մեծ գնով գնեց Տարկվինիոս Գոռոզը (Հռոմի թագավոր Զ դարում Ն. Ք.) և հրամայեց պահել Կապիտոլիայում, Յուպիտերի (Զևսի) տաճարում, գետնի տակ, հրդեհից ապահով պահելու համար։ Այդ գիրքը կարող էին բանալ և նայել սենատից հատուկ լիազորված մարդիկ՝ որևէ հասարակական մեծ աղետի ժամանակ։ Բայց մի հրդեհի ժամանակ այս գիրքը այրվեց, դիմեցին Հունաստան և Արևելք գուշակությունների բեկորները հավաքելու՝ որպեսզի նորը կազմեն։

Այս Սիբիլլայի օրինակով առաջ եկան և ուրիշ սիբիլլաներ Արևմուտքում և Արևելքում, քաղդեա-եբրայական, բաբելոնական, նույնիսկ Քրիստոսից հետո գրվեցին սիբիլլյան գրքեր Աղեքսանդրայի հրեա և քրիստոնյա հեղինակների ձեռքով։ Այս արևելյան սիբիլլաներից մեկն է և Պատմահոր հիշած Բերոսյան սիբիլլան, որ բաբելոնական սիբիլլա էր՝ Սաբբա կամ Սամբեթա անունով, դուստր Բերոսի (ոչ 6 ծան. մեջ հիշված Բերոսոսի)։

Այս պատգամները հորինվել են Հելլենիստական Եգիպտա-հրեական դպրոցում, Պտղոմյանների ժամանակ, որոնց գլխավոր հատկանիշն էր՝ հրեական հին անունները ու ավանդությունները խառնել ու համեմատել հունաց դիցաբանության անունների և ավանդությունների հետ, ինչպես որ իրոք նկատում ենք Խորենացու բերած հատվածի մեջ այս սիբիլլայից (Геркавн).

22. Զրվանը, Տիտանը և Հապետոսթեն։ Նախորդ ծանոթության մեջ հիշված Սիբիլլայի հունարեն բնագրում այսպես է գրված։

„Kαὶ βασίλευσε Κρόνος καὶ Τιτὰν Ιαπετόστε", որ նշանակում է—«և թագավորեցին Կռոնոս և Տիտան և Հապետոս»։

Ինչպես տեսնվում է՝ Խորենացու մոտ բնագրի Կռոնոսը փոխարինված է

Ըմբռնում, այսինքն հունական առումով տեղ գրված է նրան համապատասխանող Զրադաշտական առասպելը։ Մյուս՝ աչքի ընկնող տարբերությունն այն է, որ բնագրի Ἰαπετόστε (=և Հապետոս) դարձած է Հապետոսթե, այսինքն հունարենի τε վերջադաս բառը, որ նշանակում է «և», կարդացված է իբրև Ἰαπετός բառի վերջավորություն, այն էլ θε գրությամբ, փոխանակ τε -ի։ Դուտշմիդը կարծում է, թե թարգմանիչը հունարեն լեզվին բավականաչափ հմուտ չէ եղել։ Բայց դժվար է այս կարծիքին համաձայնել. նախ՝ որ մի ընդարձակ հատված հունարենից ուղիղ թարգմանողը չէր կարող չգիտենալ τε շաղկապի գոյությունն ու նշանակությունը, որ շատ հաճախ է հունարենի մեջ. և երկրորդ եթե չգիտենար էլ՝ դարձյալ չէր կարող թարգմանել Հապետոսթե ձևով. այլ Հապետոստե, ինչպես նույն բառի τός մասնիկը հայերեն ուղիղ արտահայտել է տոս ձևով. ինչո՞ւ պիտի նա միևնույն բառում մի անգամ ուղիղ տառադարձեր տ-ով, իսկ հաջորդ վանկում թ-ով։

Ավելի հավանական է, որ հունարեն (կամ արևելյան մի լեզվով) բնագիրը τε -ի փոխարեն ունեցել է θ. և հայ թարգմանիչը (Խորենացին լինի, թե ուրիշ անհայտ մեկը) հավատարմությամբ տառադարձել է «թե» գրով՝ չհամարձակվելով ուղղել բնագիրը։ Ասացինք, թե այդ տողը գուցե թարգմանված լինի ոչ հունարենից, այլև արևելյան մի լեզվից։ Դրա համար Խորենացու մոտ ունենք երկու ուրիշ օրինակ էլ։ Մեկը արդեն տեսանք (ծան. 13), որ հայ թարգմանությունը շարք համապատասխանում է ոչ թե հունական σάρος (սարոս)-ին, այլ բաբելական շար'ին. մյուս օրինակն է Պյուռիդեայ անունը (պարսից առասպելներից, 2), որ ուրիշ տեղ (Բ. կգ) երևան է գալիս զուտ հունական ձևով՝ Պերիթեայ։

Բայց այս սիբիլյան տողում ամենակարևորը Խորենացու անմիջապես հաջորդ մեկնությունն է՝ «որ ինձ թուին Սեմ, Քամ, Հաբեթ», որով նա սիբիլյան (այսինքն հեթանոսական) Տիտանին նույնացնում է ս. գրքի Քամի հետ և հաջորդ գլխում ապացուցելով, թե արտաքին հեղինակները Բելը ս. գրքի Նեբրովթն է՝ ստեղծում է Տիտանյան Բել հեթանոսական հորջորջումը, որ համապատասխանում է ս. գրքի Քամյան Նեբրովթին։ Սրանից բխող մատենագրական կարևոր հետևանքի մասին գրել ենք ինստիտուտի Ա տեղեկագրի մեջ (Խորենացի և Սեբեոս, ինչպես և Սեբեոսի մեր հրատարակության 8-րդ ծանոթության մեջ (էջ 164—166)։

23. Երևում է որ Ὄλυμπος (Օլիմպիոս) լեռան անունը համարել են ծագած հունարեն λείπω. λιπ արմատից, որ նշանակում է ձգել, ընկենուլ, ուրեմն և դյուրընկեց։ Բառը համարել են համանշանակ Օլիմպիոս բառին։

24. Եպիփան Կիպրացի, հրեա ծնողների զավակ, ծնված Պաղեստինում 310 թվին։ Քրիստոնեություն ընդունելուց հետո ձեռնադրվեց եպիսկոպոս Կիպրոսի Սալամանցիս քաղաքի. մեծ հակառակորդ էր Որոգինեսի և հակառակորդ որևէ ազատ մտքի։ Նրա գլխավոր շարադրությունը կոչվում է Panarion (տանու դեղարան), որի մեջ թվարկված են բոլոր հերետիկոսությունները. ունի նաև բազմաթիվ ճառեր։ Մեռել է 404 թվին։ Այս գրվածքը դեռ հինգերորդ դարում թարգմանված էր հայերեն և կոչվում է Գիրք Հերձվածոց։

Խորենացին բուն իր հայացքի, թե հեթանոսական առասպելների իրենց

տակ թաքցնում են պատմական իրողություններ, այստեղ ևս Եպիփան Կիպրացու գրվածքից բերում է մի ընդարձակ հատված՝ արդարացնելու համար Սիբիլլայի ավանդածը, թե Տիտանը (այսինքն Քամը) հափշտակեց Զրվանի (=Սեմի) ժառանգության սահմաններից մի մասը։

25. Գորգիի և Բանանի մասին ոչ մի հիշատակություն չկա ուրիշ տեղ։ Իսկ «ոմն Դավիթն» հավանորեն Դավիթ Անհաղթն է, և նա է, որ ծերերի ժողովում պատմում է՝ ինչ-որ Հունաստանում ուսած ժամանակ լսել էր գիտնական Ոլիմպիոդորից։

26. Այս Ոլիմպիոդորը հույն պատմագիր էր Եգիպտոսի Թեբե քաղաքից և ապրում էր Ե դարում հՔ... Գրել է պատմություն 407—425 թվականներում պատահած անցքերի։ Նրա ապրած ժամանակը և մասնագիտությունը լավ զուգադիպում են Դավթի պատմածին՝ թե՛ ժամանակով և թե նյութով։

27. «Ցերդս ցցոց և պարուցս»։ Ցուց կամ ցուցք պարի մի տեսակի անունն է, բայց ո՛ր տեսակի՝ որոշ չէ։ Տարբեր կերպով են հասկանում։ Քանի որ բառը գործ է ածված պար բառի մոտ, որ ռամկացի նշանակում է կլոր պար, բոլոր պար, երբ պարողներն իրար ձեռքից բռնած մի շրջան են ձևացնում՝ կարծում ենք, թե ցուցքը հակադրությամբ պետք է նշանակի կենտ պար, ինչպես է լեզգին (լեզգինկան)։ Ագաթանգեղոսի մեջ այս բառի գործածությունը («Կայթիւք վազելով, ցուց բարձեալ զգաղափարամէջսն յղինս») հարմար է գալիս մեր ենթադրած նշանակության։ Իսկ Փանդիռն հունարեն բառ է Πανδοῦρα, որևէ երեք լարանի նվագարան։ Մի հեղինակ դա համանիշ է դնում կիթառին։

28. Կռոնոս—հունաց դիցաբանության մեջ ժամանակի աստվածը, Զևսի հայրը։

29. Հեփեստոսը հունաց դիցաբանության մեջ Զևսի որդին էր, կրակի աստվածը, կաղ, ճարտար դարբին։

30. Պրոմեթևս—հունաց դիցաբանության մեջ Եվրիմեդոնի և Հերայի որդին, որ Զևսի կայծակից գողացավ կրակը և եղեգով բերեց մարդկանց տվեց։ Դրա համար բարկանալով՝ Զևսը նրան շղթայեց (Կովկասյան) լեռներում, հրամայելով, որ մի արծիվ ցերեկները կտցե նրա կուրծքն ու լյարդը, (որ գիշերները էլի ամբողջանում էին)։ Վերջը Հերակլեսը, Զևսի թույլտվությամբ, արծվին սպանեց և Պրոմեթևսին ազատեց։ Նա համարվում է նաև արվեստների գտիչ (Սանսկրիտ լեզվով՝ prāmathyius նշանակում է՝ նա որ շփելով կրակ է հանում)։

31. Արշակ պարթևական բառ է, որ նշանակում է արքա կամ արքայական։ Պարթևների մեջ այս անունը գործ էր ածվում իբրև մակդիր ամեն մի թագավորի անվան մոտ. այսպես Պարթևական հարստության 31 թագավորները (Դարեհ, Տրդատ, Արտավան.... Բակուր, Վաղարշ Գ, Արտավան Ե) անխտրաբար կրում են մակդիրը՝ Արշակ Ա, Արշակ Բ... Արշակ ԼԱ (Տե՛ս Սինխրոնիկ ցուցակ)։ Հայերենի մեջ Արշակ բառը գործ է ածվել միայն իբրև հատուկ անուն. բայց հետաքրքրական է, որ մեր հին գրականության մեջ Արշակ անունը ուրիշ անձերի համար չէ գործածված. կարծես զգալիս լինեին, թե այս բառը թագավոր է նշանակում, կամ միայն թագավորի կհարմարի։

32. Միջներկրայք։ Անանիա Շիրակացու Աշխարհացույցի մեջ Միջերկրայք, Միջերկրե կոչվում են Փոքր Ասիայի այն երկիրները, որ գտնվում են «ընդ մէջ Յունաց ծովուն և Պոնտոսին», այսինքն Միջերկրական և Սև ծովերի միջև։ Այս

երկիրներըը ուրեմն կլինեն, ըստ էմինի, Բյուզանդիա, Մյուսիա, Առաջնամակ Ասիա, Լիկիա, Փռյուգիա, Պափլագոնիա, Գաղատիա Ա, Գաղատիա Բ, Իսավրիա, Լիկաոնիա, Պոնտոս Պոլեմոնականն, Կապադովկիա, Կիլիկիա, Կիպրոս կղզի, Առաչին, Երկրորդ և Երրորդ Հայք և Պոնտոս Կապադովկացոց։

33. Թևտալիա անունով մեր հին հեղինակները նշանակում են Բակտրիան իր շրջակա երկրներով, որ կոչվում է նաև Քուշանաց երկիր։ Բայց այստեղ այս բառը անշուշտ ուրիշ երկիր է նշանակում. նախ՝ որ Արշակ Մեծը չէր կարող Վաղարշակին տալ այն երկիրը, որ իր թագավորության կենտրոնական մասն էր կազմում. երկրորդ՝ որ նրա նշանակած սահմաններով՝ Հայաստանը արևելյան կողմից վերջանում էր Կասպից ծովով և Ատրպատականով, ուրեմն Թևտալիան, վերը բերված նշանակությամբ, այս սահմանից դուրս էր ընկնում, շատ հեռու դեպի արևելք։ Մի ուրիշ տեղ (Բ, ժդ) հեղինակը հիշում է Թևտաղայիր բառը, այսինքն Թևտալիայի բնակիչներըը։ Այստեղ այս երկիրը, նայելով իր գրված տեղին Հելլեսպոնտոսի և Հունաստանի միջև, կարող է նշանակել մի երկիր այդ երկու տեղերի միջև, գուցե Թեսալիան։

34. «Արևմտյան ծովը» Կասպից ծովն է, որ Արշակի նստած տեղից՝ Բահլից, արևմուտք է ընկնում։

35. Վաղարշակի այս թղթի, ինչպես առհասարակ այն բազմաթիվ թղթերի մասին, որ մեջ է բերում Պատմահայրը իր գրքում, պետք է ասել, որ դրանք, վավերական պատճեններ չեն իրոք գրված թղթերի, այլ հորինված են հեղինակից այն ձևով ու բովանդակությամբ, որ հեղինակի կարծիքով պետք է ունենային այդ թղթերը— եթե իրոք գրված լինեին Մեր այժմյան հասկացողությամբ սա կեղծիք է, բայց հների մեջ սա սովորական և ընդունված կարգ էր ու մեղադրանքի չէր ենթարկվում։

36. Այսինքն Ազեքսանդր Մակեդոնացու։

37. Մարաբասյան աղբյուրի մասին ընդարձակ դրականություն կա (տե՛ս Պատմագիրք, Խորենացի, էջ ԾԵ—ԿԲ)։ Իրրև վերջին եզրակացություն բանասիրությունն ընդունում է, որ Խորենացին ունեցել է իր ձեռքի տակ այսպիսի մի աղբյուր, բայց որ այս աղբյուրը անվավերական է, ապոկրիֆ է— Այս ապոկրիֆի հեղինակը քրիստոնյա է, բայց ճգնում է ցույց տալ, որ հեթանոս է։ Նինվեի, Ազեքսանդր Մակեդոնացու անուններըը և այլն ստեղծել է՝ իր գրվածքին վավերական կերպարանք տալու նպատակով։ Նրա հեղինակը,— (գուցե և մի հայ, որ թաքնվել է Ասորի Մար-Աբաս Կատինայի անվան տակ.— հիշենք «Ագաթանգեղոսին» և «Փավստոսին»)— իր գրելիք նյութը հավաքել է հայ ժողովրդի հիշողություններից, որոնց մեջ բաբելական և ասորեստանյան պատմությունները մամլնացրած են նրանց աստվածների—Բելի և Շամիրամի մեջ, իսկ նախահայրը (որոնց մենք այժմ ուրարտացի ենք անվանում)՝ մամլնացրած են նրանց (կամ բուն հայերի) աստվածների՝ Հալկի և Արայի մեջ։ Իսկ Բելի և Շամիրամի պատերազմներն արձագանք են այն դարավոր կռիվների, որ Բաբելոնը և Ասորեստանը մղեցին Ուրարտուի դեմ, առաջին շրջանում նպատակավոր Ուրարտուի համար (Հայկը սպանում է Բելին), երկրորդ շրջանում նպատակավոր Ասորեստանի համար, որ ընկճեց Ուրարտուն (Արան սպանվում է Շամիրամից, որը նվաճում է Հայաստանը)։

38. Ձրարատի երկիրը Այրարատյան նահանգը չէ, Հայաստանի կենտրոնում, այլ նրանից արևմտահարավ ընկած երկիրը, Վանա լճից հարավ։

39. Ընդծին՝ հին նահապետական տունը, որպիսին եղել է Հայկինը՝ բազկանում էր հարյուրավոր մարդկանցից։ Սրանց մի մասը բուն նահապետի ազգությունից էին, նրա մերձավոր կամ հեռավոր սերունդները, սրանք են իսկապես «տուն» կազմողները։ Սրանց հետ նույն տանը ապրում էին, իբրև մշտական անդամներ՝ օտար արյունից մարդիկ, որոնք ևս ունեին իրենց սերունդները, բայց տան բուն անդամների իրավունքները չունեին. այսպես էին այդ տան մշակները, սպասավորները և այլն։ Սրանք են, որ կոչվում են ընդծին։

40. Բնագրում գրված է «և լոլոր աղխա», որ մենք թարգմանեցինք «բոլոր տունուտեղով»։ «Աղխա» շատ լայն նշանակություն ունի. նա նշանակում է ընտանիքի ծառանները, անասունները, կահկարասիքը, մթերքները, որոնք տանուտերի գալթելու ժամանակ հետևում էին նրան ուռով կամ սայլերով։

41. Տուն դրարարում, բացի այժմյան նշանակություններից, ունի և ավելի լայն նշանակություն։ Նշանակում է ամբողջ ազգ՝ իր բնական երկրով (տունն Խորսյանի, տունն Բորգոմա), նշանակում է ընդարձակ կալվածք, ինչպես էին նախարարներինը (արքունի տուն, տուն Մամիկոնենից), նշանակում է տոհմ, սերունդ (տուն. ս. Գրիգորի, տուն Հակոբայ. վերջապես նշանակում է կալվածք՝ շինություններով, գյուղ, դաստակերտ, ինչպես այստեղ. նույնպես և քիչ հետո «չինել երկուս տունս» (Ա, ժբ)։

42. Տիտանյան Բելը, ինչպես տեսանք (ծան. 22), Նեբրովթի է, Քամի ցեղից։ Նրան Պատմահայրը Տիտանյան է կոչում՝ հեթանոսական ազբյուրի Տիտան անունով, որովհետև Բել անունն էլ հեթանոսական ազբյուրից է, և ոչ ս. գրքից։ Սրան համապատասխան՝ Հայկին էլ կոչում է Հապետոսթյան, հեթանոսական Հափետոսթե անունից և ոչ Հարեթյան, որովհետև Հայկ անունն էլ հեթանոսական է, և ոչ ս. գրքից։

43. Վանա լիճն է իր համբավավոր տատեխ ձկնով։

44. Ասպարեզ պահլավերեն բառ է (asp rēos, asparēs և այլն) և նշանակում է ձիրեթացարան։ Երկրորդաբար նշանակում է այն տարածությունը, որ ձին մի նվագում կարող է վազել, և այստեղից, իբրև երկայնության չափ՝ նշանակում է 230 մետր տարածություն (=պարսից առաբեզ)։ Կան և ուրիշ ասպարեզներ, 159,8 մետրից մինչև 266 մետր (Տե՛ս Մանանդյան, Կշիռները և չափերը)։

45. Լայնալիճ ագևլ։ Աղևը, ինչպես հայտնի է, կորացրած փայտ էր, որի երկու ծայրերը միացրած էին ձիպ տրված լարով։ Կորացրած փայտի և լարի մեջն եղած տարածությունը կոչվում է լիճ։ Որքան լիճը լայն լիներ, այնքան փայտի կորությունը պակաս լիներ և նրա ծայրերը իրարուց հեռու՝ այնքան մեծ ուժ էր հարկավոր լինում նրա լարը քաշելու համար և այնքան ավելի մեծ թափով կարձակվեր նետը։ Այնպես որ լայնալիճ աղեղ կարող էին գործ ածել միայն շատ ուժեղ մարդիկ։

46. Այսինքն Բզնունյաց ծովը (Վանա ծովը) իր անունը առացել է Բագից։

47. Արեգակնաճեմ բառի նշանակությունն այստեղ պարզ չէ։ Թարգմանել են զանազան կերպ. էմին՝ „Южная гора, над которой солнце совершает свое течение". Ստեփանե՝ «Հարավային մինչև արեգակը բարձրացած սարը», վերջին թարգմանությունն ավելի հավանական է։ Արարատյան դաշտից հայտնին՝

Մասիսի բարձրությունը շատ աչքի է ընկնում, գագաթը կարծես երկինք է բարձրացել, արեգակին մոտեցել։

48. Շարայի շատակերության ավանդությունը բացատրվում է նրանով, որ Շարա (շերե) արաբերեն նշանակում է որկրամոլ։

49. Այսինքն երկար օրվա (ամառային) կես օրվա ճանապարհով։ Թարգմանիչներն այստեղ էլ ճիշտ չեն թարգմանել, բաց թողնելով բնագրի «մեծօրս» բառը։

50. Խորենացին Մասիս լեռան անունը ծագեցնում է Ամասիայի անունից։ Սեբեոսի Մար Աբաս Մծուրնացին, որ օգտվում էր Խորենացուց՝ այս ստուգաբանության չէ համաձայնել. նա բերում է մի ուրիշ ստուգաբանություն — Աբրահամի թոռ Մասեքի անունից, որին բերել է ասլիս Հայաստան։

51. Ծառա բառն էլ գրաբարում լայն նշանակություն ունի։ Հիմնական նշանակությունն է անազատ, ստրկացված. այս մտքով հակադրվում է «ազատին»՝ ազնվականին, և «տերին»՝ իշխողին. սրանից՝ տիրոջ կամքին ենթարկված մարդ՝ հպատակ, սպասավոր, ստրուկ։ Ծառայել բառն էլ համարար նշանակում է տիրոջ կամքը, հրամանները կատարել, հպատակ լինել, հպատակության պարտավորությունները կատարել, ընդհանրապես՝ ուրիշի իշխանության ենթարկվել։

52. Շատ տարօրինակ է թվում, որ Խորենացին, որ այնքան քիչ պատմական նյութ ունի Առաջին գրքի համար՝ առաջարկում է Արամի մասին պատմըված բազմաթիվ քաջագործությունները կամ գրքից դուրս զետեղել (ինչպես Պարսից պատերազմները), կամ նույնիսկ բաց թողնել։ Այս տարօրինակությունը բացատրվում է ԺԴ գլխի վերջում, որտեղ գրված է, թե այս պատմությունները չեն եղել գրված բուն թագավորական մատյաններում կամ մեհենական պատմությունների մեջ, ուրիշ խոսքով՝ վավերական չեն։ Մար Աբասի մատյանում գրված է եղել, թե այս պատմությունները փոքր և աննշան մարդիկ հավաքել են գուսանական երգերից — Սեբեոսի Մար Աբասյան աղբյուրն էլ երևի նկատի ունենալով Խորենացու այս վերաբերմունքը՝ բոլորովին բաց է թողել Արամի գործերը, միայն նրա անունն է հիշում։

53. Մադես նշանակում է Մեդացի, Մարացի։

54. Բնագիրն ունի «յարկեմուստ շարժեալ ի վերայ առաջնոյն չորից բիւրուց» և այլն։ «Ի վերայ առաջնոյն» մենք հասկանում ենք առաջին, նախկին զորքի վրա (ավելացնելով). Արամի առաջին զորքը Պատմահայրը նշանակել էր մոտ հինգ բյուր (ԺԴ)։ Այս զորությամբ հարձակվում է նա Բարշամի վրա, իսկ այժմ ավելացնում է հինգ բյուրի վրա դարձյալ չորս բյուր հետևակ և երկու հազար հեծյալ։ Էմին և Ստեփանեն բաց են թողել «ի վերայ առաջնոյն» բառերը։

55. Պոնտոսը Սև ծովն է, իսկ օվկիանոսը՝ հավանորեն Միջերկրական ծովը. մի քանի տող ներքև նույն ծովը կոչված է Ասիական ծով։

56. Պրոտին Արմենիան հունարենում հայցական հոլով է. ուղղականը լինում է Պրոտե (պրոտի) Արմենիա։ Այս հայցական հոլովը կախում ունի «կոչում են» բայից, որ հունարենում (ինչպես և հայերենում) պահանջում է հայցական հոլովով երկրորդ սեռի խնդիր։

57. Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք անուններով Հայաստանի հունական մասի ստորաբաժանումները սահմանված են Հուստինիանոս կայ-

ներ 31-րդ նովելլայով, 536 թվի մարտի 18-ից։ Նույն նովելլայից երևում է, որ այս թվականից առաջ էլ գոյություն են ունեցել Առաջին և Երկրորդ Հայքը (Աղոնց, Юстиниана)։ Քանի որ Խորենացու Պատմության մեջ հիշատակվում են այս չորս Հայքն էլ, այս հանգամանքը ծառայել է իբրև անժխտելի ապացույց, թե Պատմությունը գրված է 536 թվից հետո։ Այս բանն առաջին անգամ ցույց տվեց Գուտշմիդը Բրիտանական Հանրագիտարանում զետեղված իր հոդվածում։ Մեր «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատության մեջ ցույց ենք տվել, որ մեր ձեռքը հասած Խորենացու Պատմությունը սկզբնագիր չէ, այլ խմբագրություն ավելի ուշ ժամանակի (Է—Ը դարերում), և կրում է ընդմիջարկության հետքեր։ Այսպիսի ընդմիջարկություն է «Որպես զԱ առ Ք» և այլն։ (Ծան. 7)։ Նույնպիսի ընդմիջարկություն ենք համարում նաև «Երրորդ և Չորրորդ Հայք» բառերը, որի նշան կարելի է համարել «այլեւ» շաղկապը, որ երկու անգամ գործ է ածված և կարծես նոր ավելացրած «Երրորդ և Չորրորդ» բառերը կցում է սկզբնագրում եղած Առաջին և Երկրորդ Հայքին։

58. Շատ ճիշտ և գեղեցիկ է Վանի բլուրի և շրջակայքի տեղագրությունը։ Ինչպես այս տեղերից, այնպես էլ շարունակությունից երևում է, որ Պատմահայրն անշուշտ եղել է այս տեղերում և իր աչքով տեսել է— Բլուրից դեպի արևելք գտնված փոքրագույն լեռը՝ Վարագա լեռն է։

59. Մեր ժամանակակից տերմիններով՝ անարվեստ գործավորները չորակյալ բանվորներն են, արվեստավոր գործավորները՝ որակյալ բանվորները կամ վարպետները։

60. Բնագիրն այստեղ ունի «Եւ ի հեղուսուածս արուեստին, որ զքարինքն հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երեւեցուցանէ կարծիս»։ «Արուեստին» բառը իբրև հատկացուցիչ «հեղուսուածքին»՝ անտեղի է և անիմաստ։ Երկու ձեռագիր «արուեստին» բառի փոխանակ ունեն աղուեստին, որ տառացի փոխադրություն է հունարեն ἄσβεστος-ի, որ նշանակում է չհանգած կիր, և որ մենք ուղիղ ենք համարում։ Նույնպես մենք նախընտրում ենք ձեռագրերի մեծ մասի «ի հեղուածս» ընթերցվածը փոխանակ մի քանի ձեռագրերի «ի հեղուածս» ընթերցվածին, որ ընտրված է Պատմագրքի մեջ։ Հեղինակի միտքն է—քարերը իրար հետ կցելու համար՝ նրանց շուրջը կիր էր ածած այնպես կոկ, որ թվում էր թե ճարպ է ածած։ Ուրիշ թարգմանիչներ ճիշտ չեն արտահայտել։

61. Բնագրում գրված է «Ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակալս»։ Մենք թարգմանեցինք «ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության»։ Սխալ ենք համարում Էմինի թարգմանությունը (որին հետևել է Ստեփանյանն) „Обращенных, как надлежала, на восток"։

62. Բնագրում՝ «իբրև գրչաւ զմոմ հարթեալս»։ «Գրիչը» այստեղ չի նշանակում մեր այժմյան գրիչը կամ սագի փետուրինը կամ եղեգից կտրածը, այլ հին ժամանակ Հռոմում գործածվող stilus-ը, երկաթե ձողիկ, մի ծայրը սուր, մյուսը տափակ, որը գործ էին ածում մեղրամոմի վրա գրելու համար։ Մեղրամոմը հարթ սփռում էին տախտակի վրա, գրչի սուր ծայրով վրան գծում էին գրվելիք նյութը։ Երբ կարիքը անցնում էր՝ այդ գրվածը հարթում էին գրչի տափակ կողմով և նորից գրում, և այսպես անվերջ։ Հետաքրքրական է, որտեղի՞ց հայտնի է եղել Խորենացուն այս հին գրչի գործածությունը, ար-

դյոք Հռոմ՞ում է տեսել, որտեղ կարճ ժամանակ եղել է Աղեքսանդրիայից վերադառնալիս, թե Հայաստանում էլ որևէ տեղ գործածվելիս է եղել, որ անկարելի չէ, քանի որ հռոմայեցիները շատ հաճախ պատերազմական գործերով եղել էին Հայաստանում և հայերը կարող էին նրանցից օրինակ առնել։

63. Խոսքը սեպագիր արձանագրությունների մասին է, որոնցով ծածկըված է Վանա բլուրի արևելյան սեպացած քարաժայռի երեսը։ Այս արձանագրությունները մատչելի դարձան արևելագետներին շնորհիվ գիտնական Շուլցի, որ ֆրանսական ակադեմիայի հանձնարարությամբ 1827-ին եկավ Վան և ընդօրինակեց արձանագրությունները և Շուլցի նկարագրությունները (mémoirs) տպագրվեցին, բայց ինքը՝ Շուլցը վերադարձին սպանվեց քուրդ ավազակներից։ Թե՛ այս արձանագրությունները և թե՛ Հայաստանում ուրիշ շատ տեղերում սփռված մյուս սեպագիր արձանագրությունները Խորենացին վերագրում է Շամիրամին— այն աստիճան հայերի մեջ մոռացված էր հիշատակը նրանց իսկական հեղինակների, Ուրարտական թագավորների։ Նույնիսկ սեպագիր գրերը՝ անցորդների զարմանքն են շարժում։

64. Նիոբեն հունաց դիցաբանության մեջ Տանտալոսի դուստրն էր, Թեբեի Ամփիոն թագավորի կինը։ Նա ուներ յոթ տղա, յոթ աղջիկ, որոնցով պարծենալով՝ ծաղրեց Լատոնային, որ միայն երկու զավակ ուներ՝ Ապոլոնը և Դիանան։ Սրանք իրենց մոր արհամարհանքի վրեժը լուծելով՝ նետերով սպանեցին Նիոբեի բոլոր տասնչորս զավակներին։ Դժբախտ կինը սարսափից քար կտրեց։ Պատմահայրը ակնարկում է, թե Հայաստանում էլ գոյություն է ունեցել առասպել Շամիրամի քար կտրելու մասին։

65. Բնագիրն ունի «իսկ ըստ որոց հաւաքումն՝ աստուծոյ լինել յայտնիս» և այլն, որ թարգմանիչները չեն հասկացել։ Էմինը թարգմանել է. „Хотя бог знает, похвалу или порицание заслужит он (этот сборник) от людей, впрочем я равнодушен к тому и другому". Ստեփանեն թարգմանել է և այս կերպով՝ հավաքես աստծուն հայտնի է. իսկ թե գովելի կլինի թե պարսավելի մարդկանց, մենք օտար և հեռու ենք այդ երկուսից ևս։ Վիստոնների թարգմանությունը ավելի հեռու է։ Խորենացին ուզում է ասել, թե ինքը Պատմությունը գրելիս հավատարմությամբ օգտվել է իմաստուն և հմուտ հեղինակներից, իսկ թե նրանք որքան ճշմարիտ են գրել՝ այդ աստծուն է հայտնի. Նրանք գովելի կլինեն մարդկանց, թե պարսավելի՝ այդ իրեն չի վերաբերում. ինքը նրանց համար պատասխանատու չէ։ Այս խոսքերից պարզ երևում է, որ Պատմահայրն այնքան էլ վստահ չէ իր օգտագործած աղբյուրների արժանահավատության, իրենից հեռացնում է պատասխանատվությունը նրանց սխալների համար։

66. Բնագրում ճյուղագրությունները դասված են մեկը մյուսից հետո, նախ Եբրայեցոցը, ապա Քաղդեացոցը, վերջը Հայոցը. առանձին-առանձին տեղեկություններն էլ զետեղված են այն անունների տակ, որոնց վերաբերում են։ Այս կերպով անունների շարքն ընդհատվում է և երեք ազգերի ճյուղագրությունների համեմատությունը դժվարանում։ Էմինը զուգահեռաբար դնում է երեք ազգերի նահապետների անունները։ Բայց առանձին տեղեկություններ նույնպես զետեղում է անունների տակ։ Մենք հետևեցինք Ստեփանեի թարգմանության ձև-

վին, զուգահեռաբար դնելով անունները, իսկ տեղեկությունները՝ ծանոթությունների մեջ։

67. Բնագրում գրված է Քանանիդաս։ Բայց երեք ձեռագիր ունին Քանիդաս. Նույնպես ունի և Ասողիկ և համապատասխանում է եբրայեցերեն khanitha-ին։ (Տե՛ս Մառ, „Халатянц, Армянский эпос", էջ 8)։ Քանանացի նախարարների Ագռաս փախչելու և այնտեղ արձանագրություններ դրոշմելու պատմությունը անում է Պրոկոպիոս նույն պատմագիրը Զ դարում։

68. Բնագիրն այստեղ ունի Վասամկար։ Հին տպագրությունները Վրստակար։ Չորս ձեռագիր, Հոհ. Կաթողիկոս, Գր. Մագիստրոս և վրացերեն հին թարգմանությունը (տ. Մելիքսեթ-Բեգ, Վրաց աղբյուրները, Ա 44) ունեն դրա փոխարեն երկու անուն՝ Վասամ, Կար։ Ընտրեցինք այս վարիանտը։

69. Ո՞վ է այս իմաստուն, իմաստունների մեջ իմաստնագույն և բազմարդյուն (=արդասաւոր ի բանս) հեղինակը, որի չորս հագներգությունները կարդալու բախտ է ունեցել Խորենացին։ Թվում է, թե Դավիթ «Անհաղթն» փիլիսոփան է, որին մի անգամ էլ անորոշ կերպով հիշել է Ա գլխում. «մի ոմն ի նոցանէ. վարժեալ փիլիսոփայութեամբ», որ իր մասին ասում է՝ «էի ի մէջ Յունաց զիմաստութիւն վարժելով»։ Այսպես ենթադրելու հիմք ծառայում է նաև այն, որ բացի Դավիթ Անհաղթից ուրիշ մարդ չգիտենք Ե դարում, որին համար էր այդպես շռայլաբար գործածված իմաստուն տիտղոսը։ Երկրորդ՝ որ արդարև Դավիթ Անհաղթից մնացել են շատ երկասիրություններ, որոնց պատճառով իրավացի է նրան կոչել «արգասաւոր ի բանս»։ Երրորդ՝ որ գտնված է քերթվածքի մի պատառիկ, երեք տողից բաղկացած, նվիրված Տիգրանին և Տիգրանուհուն, այսինքն այն անձերին, որոնց ժամանակի ներբողն է եղել չորս հագներգությունների նյութը. (որովհետև Խորենացու խոսքը, թե այստեղ պետք է մեծ գործ կատարենք, չի կարող վերաբերվել Պարույրին կամ Սկայորդուն, որոնց մասին շատ քիչ բան է գրում, այլ հատկապես Տիգրան Երվանդյանին). իսկ այդ երեք տողերը փայլեցնում են Դավիթ Անհաղթի լեզուն և ոճը։ Իսկ թե ինչո՞ւ պարզ անունը չի տալիս Խորենացին՝ ինձ թվում է, թե սա հետևանք է նրա բարեկրթության և փափկանկատության։ Ընդհանուր ավանդությամբ՝ Դավիթ Անհաղթը Խորենացու քրոջ որդին էր. ուստի հեղինակին անհարմար է գտել իր գրքում գովաբանել իր քրոջ որդուն։ Տե՛ս այս հարցերի մասին նաև Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 379—510։

70. Բնագիրը պարզ չէ—«մնացին նշանակեալ ի վերջինսն»։ Մի քանի ձեռագիրներ ունին. «Մնաց աննշանակելի վերջինսն». Էմինը թարգմանել է. „Записаны только события совершившиеся в последствии". Ստեփանեն թարգմանել է «մնացին նշանակված վերջինները»։

71. Այս խոսքերից երևում է, որ Խորենացու սերն ու համակրությունը դրավում են Հայկազյան տոհմի թագավորները, իբրև բնիկներ, արյունակիցներ, հարազատներ։ Որ նա Արշակունի թագավորներին թեպետ ընդունում և ճանաչում է օրինավոր, բայց համարում է օտար, եկվոր. հակառակ Փավստոս Բյուզանդի, որի համար Արշակունիները «բնիկ տեարք են»։ Տե՛ս Երեմ ՍԱ 27։

72. Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան) Խորենացու ուսումնասիրության մեջ (էջ 50—57) ապացուցանում է, թե «Պարոյր որդի Սկայորդւոյ» խոսքում որդի Սկայորդւոյ ընդմիջարկություն է, և թե «որ ի Սկայորդւոյն Պարոյրս» պետք է

հասկանալ ոչ թե Սկայորդու որդի Պարույր, այլ «որ ի Սկայորդւոյն Պարոյր տանել վիշխանութիւնն»։

73. Բնագիրն ունի Փառոս, ըստ երեք ձեռագրի, մյուս ձեռագրերն ունեն Փաւոս, Հնագույն ձեռագիրը՝ Փաւսոս, վրացերեն հին թարգմանությունը (Վրաց աղբյուրները, 74) նույնպես ունի Փաւոս։

74. Հին տպագրությունները ունեին «ըստ յուսոյ կոչեցեալ սանձ արդեօք, ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին, յիշեսցուք զանուանս զայսոսիկ»։ Այս մութ խոսքը տեղիք էր տվել սխալ թարգմանությունների. Էմին թարգմանել է. „Я полагаю что по именам двух последных названы (следующие) за ними Еруанд—Тигран, вероятно, по надеждам на них возлагавшимся. (Впрочем мы приближаемся к (тому) времени, когда эти имена выступят перед нами“. Խորեն Ստեփանեն հիշյալ հատվածում կետադրությունը փոխել է այսպես. «Քանզի և վերջին Երվանդս և Տիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ սանձ արդեօք, ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին։ Յիշեսցուք զանուանս զայսոսիկ», և ըստ այս ուղղագրության բավական ճիշտ և ընդունելի կերպով թարգմանել է այսպես. «Վերջին Երվանդը և Տիգրան թերևս սոցա անունով են կոչված հույսով. սոցա մեջ ժամանակը շատ հեռու չլինելով։ Հիշենք այս անունները (որից հետո զետեղում է «Հրաչյա կոչվում է սա», որ մենք դրել ենք առաջ՝ իբրև ծանոթություն։ Հատվածի լավագույն ընթերցվածը տալիս է նոր տպագրությունը (Թիֆլիս 1913)— «...Ըստ յուսոյ կոչեալ սանձ արդեօք, ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին. յիշեսցուք զանուանս զայսոսիկ». սրա համաձայն էլ թարգմանել ենք մենք։

75. Ովքե՞ր են այդ անհասանելի մարդիկ, որոնք Բագրատունյաց ցեղը ծագեցնում էին Հայկից և որոնց այդպիսի խիստ խոսքերով դատապարտում է Խորենացին. Առաջ Մխիթարյանները կարծում էին, թե Պատմահայրը նկատի ունի Փավստոսին, իբր թե նա է այդ բանը գրել իր կորած Առաջին կամ Երկրորդ դպրության մեջ։ Այս կարծիքը հիշում է Էմինը (ծանոթ. 78) և իրավացի կերպով մերժում։ Երբ Սեբեոսը իր համբավավոր Առաջին դպրությունով և ոչ նվազ համբավավոր Անանունով մոդա դարձավ՝ բանասերները կարծես մեծ գյուտ արին, թե Խորենացին ակնարկում է հենց այդ Ա դպրության հեղինակի վրա, որովհետև հիրավի այստեղ Բագրատունիները ծագեցրած են Փառնավազից՝ Հայկի սերնդից։ Սրանից արդեն եզրակացնում էին, թե Խորենացին ծանոթ էր այդ դպրության. ապրել է նրա գրությունից հետո և այլն։ Բայց այս կարծիքն էլ սխալ դուրս եկավ։ Մենք այժմ գիտենք, որ Խորենացին ապրել ու գրել է թե՛ Սեբեոսից և թե՛ «Առաջին դպրություն» կոչված հատվածի մեջ հիշված հեղինակից՝ Մար Աբաս Մծուրնացուց առաջ, որոնք երկուսն էլ օգտվել են Խորենացու Պատմությունից։ Ընդհակառակը, եթե Խորենացին կարդացած լիներ Սեբեոսի մեջ այդ տեղեկությունը, որ հաղորդում է Մար Աբաս Մծուրնացին, ոչ նվազ արժանահավատ քան իր աղբյուր Մար-Աբաս Կատինան՝ նա ոչ միայն կզգուշանար այնպիսի արհամարհական ու վիրավորական խոսքեր ասել նրա մասին, այլ մեծ բավականությամբ ինքն էլ կընդուներ և կմուծեր իր Պատմության մեջ, որով ավելի փառավորված կլիներ իր մեկենասի տոհմը։ Խորենացին, որ այնպիսի ջերմ սիրով է խոսում Հայկից սերված թագավորների մասին, իբրև բնիկների, հարազատների մասին՝ չէր կարող մի գերի ընկած հրեա իշխանից ծագումը

գերադասել Հայկից ծագմանը։ Հենց բանն այն է, որ Բագրատունյաց Հայկից ծագելու տեղեկությունը գրավոր և վստահելի աղբյուրի վրա չի եղել հիմնված, այլ մի քանի անվստահելի մարդկանց ասեկոսեների վրա։

Փնտրել այս անվստահելի մարդկանց՝ զուր աշխատություն է։ Հայաստանում Խորենացու ապրած ժամանակ, բացի մի երկու տասնյակ մարդկանցից, որոնց անունները մեզ հասել են, ապրում էին էլի ուրիշ շատ մարդիկ, որոնք կարող էին Բագրատունյաց Հայկի և ուրիշների մասին զանազան բաներ պատմել։ Հայտնի է, որ նախարարություններից շատերի ծագման մասին զանազան զրույցներ են եղել մեկը մյուսից տարբեր։ Խորենացին ուրեմն լսել է մի քանի մարդկանցից կարծիք, թե Բագրատունիք Հայկի սերունդից են, բայց չի հավատացել, որովհետև այդ ասողները ոչ մի բանով չեն եղել ապացուցանելիս իրենց կարծիքը. ուստի մերժելով այդ ավանդությունը՝ ընդունել է Մար-Աբաս Կատինայի հաղորդածը։ Բայց մյուս զրույցը, Հայկից ծագելու մասին, չի մեռել, այլ հետզհետե արծարծվել, ձևավորվել է և Սեբեոսի ժամանակ այնքան ընդհանրացել, որ Սեբեոսի աղբյուրը նրան գերադասություն է տվել, քան Խորենացու ավանդածին, որովհետև Հայկից սերվելը ավելի պատվավոր է համարել Բագրատունյաց համար, քան մի հրեա իշխանից ծագելը։ (Ի դեպ է ասել, որ Սեբեոս ատելով ատում է հրեաներին)։

76. Բդեշխ իրանական բառ է, ունի բազմաթիվ ձևեր. հայերենին ամենամոտ ձևն է պահլավերեն bitaxš (հունարեն [illegible]), որ նշանակում է տեղակալ, փոխարքա։ Հայաստանում բդեշխները նախարարներից բարձր կալվածատեր ազնվականներ էին, մի տեսակ մանր թագավորներ. իրենց թագավորություններով, բայց Տիգրան Մեծի ժամանակ ճանաչեցին Արշակունի թագավորների գերիշխանությունը։ Չորս բդեշխներ կային— Անգեղտան, Ծոփաց, Աղձնյաց, Գուգարաց, որոնց բդեշխությունները (երկրները) ընկնում էին Հայաստանի սահմանագլխներում, նրանք իբրև թե համարվում էին սահմանապահներ (Արմատ. բառարան և Ադոնց Юстиниан)։

77. Նույն Ադրամելեք անունն է, որ աղավաղվելով դարձել է այստեղ Արգամոզյան, որ ըստ Նորայրի ուղղագրության ուղղեցինք Արգամոզյան։ Ինչպես ս. գրքի մեջ երկու անգամ գրված է (Դ Թագ. ԻԹ, 37, Ես ԼԷ, 38), երբ Ասորեստանի Սենեքերիմ թագավորը երկրպագում էր կուռքին՝ նրա երկու որդիքը Ադրամելեք և Սանասար սրով սպանեցին նրան և իրենք փախան Արարադա երկիրը, Հայաստան։ Նույն բանը մի երկու մանրամասնություններով պատմում է և Հովսեպոս, Հնախոսության մեջ, առնելով Քաղդեացի Բյուռոսի գրքից։ (Հմմ, ծանոթ. 79)։ Արծրունյաց նախարարական տունն իրեն համարում է ծագած այս երկու եղբայրներից։ Սենեքերիմի սպանությունը որդիների ձեռքով տեղի է ունեցել 681 թվին ՆՔ և զարմանալի է, ինչպես ավելի քան 2500 տարի կենդանի է մնացել հայ ժողովրդի հիշողության մեջ, որովհետև Սասնա Ծռերի շատ վարիանտներում հիշվում են այս Սանասարն ու Ադրամելեքը, որոնցից սերվել են Սասնա Ծռերը՝ Մհերը և Դավիթ Սասունցին։

78. «Մերկերքս» հեղինակը գործ է ածում հունարենի հետևողությամբ նշանակելու համար այն զինվորներին, որոնք զրահներ, վահան կամ ուրիշ պաշտպանակ չէին կրում։

79. Այս ներբողական նկարագրությունը Տիգրան Երվանդյանի և նրա մեծագործ բարենորոգությունների վերաբերում են Տիգրան Բ.ին (Մեծին), և Խորենացին

չունենալով ստույգ ուղեցույց աղբյուր՝ սխալմամբ վերագրել է Տիգրան Ա-ին (Երվանդյանին)։ Այս բանն առաջին անգամ նկատեց գերմանացի գիտնական Գելցերը, հետո մանրամասն և հետևողական ապացուցեց Մ. Աբեղյանը, որ նույնիսկ ցույց տվեց, թե ներբողը հորինված է բոլորովին համապատասխան ներբողյան այն կանոններին, որոնք ավանդված են Պիտոյից գրքում (որ համարվում է Խորենացու թարգմանությունը)։ Այս եզրակացությունը ընդունում է նաև ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր «Տիգրան Բ» հմտալից աշխատության մեջ, իր կողմից ևս նոր փաստեր ավելացնելով։

80. Բնագիրն ունի տարեգակնատես երեսս, երկու բառն էլ անորոշ նշանակությամբ, որ մենք մոտավորապես թարգմանեցինք տարեգակի նման փայլող երեսս։ «Երես» արդյոք ապարանքի կտո՞ւրն է, որ արևելքում հին ժամանակ տափակ էր լինում, թե պատը։ Երկու բառը միասին կարող են նշանակել նաև արևահայաց, այսինքն դեպի հարավ նայող պատը։

81. Օրիորդ գրաբարում նշանակում է թագավորական կամ իշխանական տոհմին պատկանող աղջիկ։ Օրիորդն Հայոց նշանակում է թագավորի քույր կամ դուստր (աղջիկ)։ Գողթան երգերից մեկում (Բ, ծ) Ալանաց թագավորն ասում է. «Ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգի կոյս օրիորդիս Ալանաց»։ Նույնպես տիկին բառը գրաբարում նշանակում է թագավորական կամ իշխանական տոհմին պատկանող ամուսնացած կին (երբեմն նաև աղջիկ)։ Տիկին Արշակունյաց նշանակում է Արշակունի թագավորի կինը կամ մայրը։ Տիկինն Ռշտունյաց՝ Ռշտունյաց նախարարական տան իշխանուհին։ Երկու բառն էլ այժմ դեմոկրատացել են։ Նույն երևույթը նկատվում է և ուրիշ լեզուների մեջ։

82. Բնագրում անորոշ կերպով գործ է ածված՝ «ասէ» հայտնի չէ, թե ո՞վ։ Սուքիասյանն թարգմանել է «ասում է Պատմագիրը», որ հազիվ թե ուղիղ լինի։ Տիգրանի պատմությունը Խորենացին գրում է ըստ Ջորս հագներգությունների և ի «Հիւսման պատմութենէ Պիտոյից», բայց ոչ ըստ Մար-Աբասյան աղբյուրի։

83. Արիք (սանսկրիտերեն ārye ազնվական) ցեղի անուն է, որ զանազան նշանակություն ունի։ Սկզբնապես նշանակում էր այն ժողովուրդը, որ Հինդուկուշի սարերից իջնելով նվաճեց Հնդկաստանն ու Իրանը (Պարսկաստանը), որոնցից առաջ եկան պարսիկները և Հնդկաստանի բարձր դասակարգերը։ Ուրիշ՝ ավելի լայն նշանակությամբ Արիք են կոչվում բոլոր ցեղերը Հնդկաստանից սկսած մինչև Կովկաս, որոնք խոսում են հնդկա-եվրոպական լեզվով (Հնդիկները, Աղվանները, Պարսիկները, Մարերը, Քրդերը և այլն)։ Երբեմն գործ է ածվում ընդհանրապես հնդկաեվրոպացի նշանակությամբ, հակադրությամբ սեմական ազգերի, մոնղոլների և այլն։ Մեր հին հեղինակները Արիք բառը գործ են ածում ընդհանրապես պարսիկների համար (Իրան), որին հակադրվում է Անարիք բառը, այսինքն՝ ոչ Արի, օտարազգի։ Եղիշեի մեջ Միհրներսեհի նամակի վերնագիրը կրում է նրա տիտղոսը—«Վզրուկ հրամանատար Երան և Աներան», որ հայոց պատասխանում արտահայտված է հայերեն բառերով—«Մեծի հազարապետի Արեաց և Անարեաց»։

84. Տիգրանակերտ քաղաքը շինել է Տիգրան Մեծը և ոչ Տիգրան Երվանդյանը, ինչպես ասում է Խորենացին։ Սակայն սա սխալ չէ, ինչպես վերը (ծանոթ. 79) տեսանք՝ Տիգրան Երվանդյանին վերագրված է շատ բան,

որ սկզբնապես վերաբերվելիս է եղել Տիգրան Մեծին։ Տիգրանակերտի շինությունն էլ պետք է համարել այդպիսի շփոթություններից մեկը։

85. Ոստանի մասին տես ծանոթ. 122։

86. Սա Պտղոմեոս Կլավդիոսն է, ամենանշանավոր հույն աստղաբաշխ, մաթեմատիկոս և աշխարհագիր, որ ապրում էր Ալեքսանդրիայում Բ դարում հՔ։ Նա առաջինը փորձեց գիտական հաշիվների վրա հիմնված կազմել առաջին աշխարհագրական քարտեզը (մի կիսագնդի), հարավային լայնության 20 աստիճանից մինչև հյուսիսային լայնության 65 աստիճանը, որոնցից ավելի հարավ և ավելի հյուսիս ընկած աշխարհամասերը կոչեց անծանոթ երկիր։ Այն մարդիկ, որոնք նրա հանձնարարությամբ շրջել են երկիրը՝ չափելու և նկարագրելու համար, հիշում է և Շիրակացու Աշխարհացույցը, իսկ օտար հեղինակներից, ինչպես գրում է Էմինը (ծան. 98), Դիոդորոս Սիկիլիացին և Մորսեոնը։

87. Քիմեռոն, հունարեն (χειμέριον) ձմեռնային, նշանակում է սառուցյալ երկիր։

88. «Թուելեաց» երգերի մասին տես ծանոթ. 8։

89. Աժդահակ՝ զենդերեն aždāhaka —վիշապ դահակ, որ պարսկերենում պարզապես նշանակում է վիշապ։ Այս անունից է կազմված պարսկերեն, որից և գավառական հայերեն աժդահա բառը, որ նշանակում է հրեշ, հրեշային մեծության (մարդ, կենդանի)։

90. Մի առեղծվածային խոսք Խորենացու Պատմության, հատկապես ժողովրդական երգի մեջ, որ հասկանալու և բացատրելու վրա շատ միտք են հոգնեցրել բանասերները։ Չորս բառերից, (զ) արտախուր, խաւարտ, (զ) տից և խաւարծի, մեկի նշանակությունը կարելի է հայտնի համարել. այն է՝ խաւարտին, ուտելի բանջար, կանաչեղեն նշանակությամբ, զուգե նաև խաւարծի բառինը, որ նշանակում է որթի փափուկ, կակուղ ու մատղաշ ծիլ։ Իսկ (զ) արտախուր և (զ) տից անծանոթ բառեր են։ Ենթադրաբար այս բառերն էլ հասկանում են իբրև բույսերի անուններ։ Կա կարծիք, թե զարտախուրի սկզբի «զ»-ն նախդիր չէ, այլ արմատական է. և բառը պարսկերեն zardxan կամ zardxār բառն է, որ նշանակում է մի տեսակ դեղին ծաղիկ։ Աճառյանը գտնում է, որ այս չորս բառից զարտախուրը և զտիցը գոյական անուններ են (հայցական զ նախդիրով), անծանոթ բույսերի անուններ, իսկ խաւարտ և խաւարծի նրանց ածականներն են՝ իրենց սկզբնական նշանակությամբ, այն է՝ «թավոտ, մազոտ, բրդոտ, աղվամազոտ»։ Ավելի դժվար է որոշել ընդհանուր երգի նշանակությունը։ Իրենց մեկնությունների համար բանասերները ելակետ են ունեցել «ի բարձիցն» բառը, միակ հասկանալին. բայց տարբեր մեկնություններ են տվել երգին՝ նայելով թե ո՞վ ի՞նչ նշանակությամբ է ընդունել բարձ բառը։ Ոմանք բարձ ընդունել են բարձունք, լեռներ նշանակությամբ, և երգը բացատրել են այն մտքով, թե Սաթենիկ տիկինը սաստիկ փափագում էր այս և այն բույսերն ունենալ Արգավանի լեռներից։ Ուրիշները բարձ բառն ընդունել են գահ, նստելու բազմոց (տես գահ, ծանոթ. 120) նշանակությամբ, և այս դեպքում «արտախուրն» ընդունել են «գլխի ծածկոց», «պսակ» նշանակությամբ և երգը մեկնել են այս մտքով, թե Սաթենիկն այնքան սիրահարվել էր Արգավանին, որ իր արքայական գահն ու թագը ցանկանում էր փոխարինել Արգավանի իշխանական գահով և պսակով։ Երրորդները բարձ բառն ընդունել են մարմնի մաս (սրունքի վերին կողմը) նշանակությամբ և արտախուրը (=արտախուրակ) հասկացել են

սրունքների ծածկոց, վարտիք» նշանակությամբ, և երգին տվել են չափազանց ռեալիստական մեկնություն՝ ֆիզիկական մերձավորության նշանակությամբ։ Վերջապես բարձ բառին տվեց նրա սովորական նշանակությունը—գլխի տակ դնելու բարձ, և երգը թարգմանվեց—Սաթենիկ տիկինը փափագելով փափագում է այսինչ բույսերին Արգավանի բարձերից։ Այս թարգմանությունը հիմնվում է մի նամակի վրա, որով Գր. Խալաթյանցը հայտնել է պրոֆ. Ք. Պատկանյանին, թե տեղ-տեղ հայերի մոտ կա սնոտիապաշտություն, իսկապես կախարդության միջոց, ըստ որում եթե մեկը կամենում է գրավել մի ուրիշի սերը՝ գաղտնի նրա բարձի տակ դնել է տալիս անուշահոտ բույսեր, սովորաբար ռեհան, և մի քանի ժամանակից հետո այդ բույսերը փոխադրում է իր բարձի տակ դնում. ըստ ժողովրդական սնահավատության՝ բույսերի հետ այն անձի սերն էլ փոխանցվում է սիրող անձի վրա։ Այս բացատրությունը, որ բոլորից ավելի հավանական է, բերված է Ք. Պատկանյանի Материалы для Армянского словаря, вып. II, էջ 44—45։ Երգի մասին տրված բազմաթիվ մեկնությունները (բացի վերջինից) բերված են Արմատական բառարանում. Արտախույր (?) բառի տակ։

Խորենացին, որ ուրիշ անգամներ երգերի այլաբանությունը մեկնում է՝ այստեղ ոչ մի մեկնություն չի բերում, իսկ մի ուրիշ տեղ (Բ, խԹ) մութ ակնարկում է «իբր տրփանք Սաթինկան ընդ Վիշապազունսն», «իբր» բառով կարծես կամենալով հասկացնել, թե ինքը Սաթենիկի սիրահարությանը Արգամին շատ էլ չի հավատում։

91. «Ազատ» բառը ինչպես Մասիս լեռան մակդիր՝ գործ է ածված այստեղ և հետո մի քանի անգամ։ Ազատ բառին տվել են մի քանի բացատրություն, բայց ամենից հավանականն է «ազնվական, վեհ» նշանակությունը, որ շատ հարմարվում է այս լեռան արդարև վսեմ դիրքին։ Պետք է միայն նկատել, որ Ազատը ածական անուն չէ, իբրև վերադիր Մասիսի, այլ այդ լեռան սկզբնական բուն հայերեն անունն է. իսկ Արարատը հին հայ հեղինակները ոչ մի անգամ չեն գործ ածել այս լեռը նշանակելու համար։ Սեբեոսի մոտ լեռը կոչվում է Ազատ, որ իբրև թե Մարսյակից է առացել Մասիս անունը։

92. Բնագրում գրված է Կունդ ոմն Արամազդ։ Չորս ձեռագիր ունին կատարումն Արամազդ, երկուսն էլ՝ ուռ կամ սուտ։ Թարգմանիչներն ու մեկնիչները չէին հասկանում Կունդ բառը՝ Արամազդի նկատմամբ։ Կունդ, կնդիկ՝ հայերեն բառ է, նշանակում է ճաղատ, և վերադիր է Արամազդի (Զևսի) մի արձանին Արգոսում, որտեղ նա քանդակված է ճաղատ գլխով։ Առաջին անգամ ուղիղ բացատրությունը տվեց Գր. Խալաթյանցը (Арм. эпос, էջ 291—292) բերելով վկայություն Կղեմես Աղեքսանդրացուց, որ հիշում է Արամազդի հինգ արձան, որոնցից մեկին տրված է մակդիր φαλακρος, որ հունարեն նշանակում է ճաղատ։

93. Վահագն իրանական ծագումն ունի։ Զենդերեն կոչվում է veretragne, պահլավերեն varhragna, որից հայերեն Վարհագն—Վահագն։ Պարսիկների մոտ նա հաղթության աստված էր, ինչպես սկզբնապես և Հայոց մեջ։ Տրդատի առաջին հրովարտակում ասված է. «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջն Վահագնէ» (Ագաթ. ԺԲ)։ Բայց ինչպես ուրիշ արևելյան աստվածներ համեմատված են արևմտյանների հետ,— Զրվան=Կռոնոս, Արամազդ=Զևս և այլն,— այնպես էլ

հնուց Վահագն աստվածը համեմատված է հունաց Հերակլեսի հետ։ Արդեն Բ. Մակ. Դ. 19 հունարեն Հերակլեսը թարգմանված է Վահագն (Հյուբշ. Arm. gramm. 77)։ Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ էլ հայերեն Վահագն թարգմանված է Հերակլես (Անդ.)։ Բայց այս համեմատությունը այնքան էլ ճիշտ չէ, քանի որ հայ Վահագնը անտարակույս աստված է, այնինչ Հերակլեսը միայն դյուցազն է և մահկանացու։ Խորենացուն, ինչարկե, լավ հայտնի էր թեկուզ Ագաթանգեղոսից, որ Վահագնը աստված է եղել, պաշտվելիս է եղել սեփական մեհյանում, բայց, համաձայն իր եվհեմերական աշխարհայացքին՝ նրան մարդկացնում է, ինչպես վարվել է և ուրիշ աստվածների հետ։ Նա հիշում է, թե վրաց աշխարհում նրան աստվածացրել են, արձան են կանգնեցրել ու զոհերով պատվել, բայց Հայաստանում նրա պաշտամունքի մասին ոչինչ չի ասում։

94. Էմինը աններելի խոշոր սխալ է արել այստեղ. թարգմանելով „Море разрешилось красненьким тростником" (թե՛ առաջին և թե՛ երկրորդ տպագրության մեջ), այսինքն՝ ծովը երկունքից ազատվեց կարմրիկ եղեգնիկով։ Ծովը ծնավ կարմիր եղեգնիկ։ Այս սխալ թարգմանությունը մեջ է բերում և Գր. Խալաթյանցը, առանց որևէ դիտողության (Арм. эпос, էջ 201)։ Վիստոն եղբայրները ճիշտ են հասկացել և թարգմանել։

95. Ողիական պատերազմ նույն է, թե Տրոյական պատերազմ, Տրոյայի նախկին Ilias կամ Ilion անունից։ Այս անունով էլ Հոմերոսի քերթվածը, որի մեջ նկարագրված է Տրոյական պատերազմը՝ հունարեն կոչված է Ilias, հայերեն թարգմանված՝ Ողիական (Թումանյանի) կամ Իլիական (Բագրատունու)։

Իլիականում ոչ մի հիշատակություն չկա Տևտամոսի մասին և ոչ Զարմայրի։ Բայց Էմինը (ծանոթ. 108) հիշում է, թե Դիոդորոս Սիկիլիացին, (գիրք Բ, հոդ. 22) հիշատակում է, որ Տևտամոսը Պրիամոսի, Տրոյայի թագավորի խնդրով, գնացած է եղել դրան օգնության։

96. Բյուրասպի Աժդահակ—Պարսից առասպելական հերոս Զոհակի մականունն է։ Ֆիրդուսին էլ նրան Աժդահակ է կոչում։ Բյուրասպի զենդերեն baəvarəaspa —բյուր ձի (ունեցող)։ Հայերենի մեջ վերջի «ի» ածանցական մասնիկ է, ինչպես քաջազգի, տմարդի և այլն։

Բանասերները (Գուտշմիտ, Մառ, Էմին և այլն) միաբերան վկայում են, որ Բյուրասպի Աժդահակի մասին Խորենացու պատմածը բոլորովին նման է Ֆիրդուսիի պատմածին։ Ֆիրդուսին Շահնամեն գրեց՝ ԺԱ դարում, հիմնվելով առաջուց գրի առնված ավանդությունների վրա, որոնցից ամենահինը Զ դարից էր։ Ուրեմն Խորենացին նրանից էլ մի դար առաջ գիտեր այս պարսկական առասպելները, և ոչ միայն նա գիտեր, այլև Սահակ Բագրատունին, որ ծերունի Պատմահորը թախանձում էր՝ այս առասպելները գրել ու մեկնել։ Այս երևույթն էլ բազմաթիվ այլ երևույթների մեջ ցույց էր տալիս, ո՛ր աստիճան պարսկական, հատկապես պահլավական կուլտուրան տարածված էր Հայաստանում, գոնե նրա թագավորական և իշխանական տներում։

Որչափ էլ Պատմահայրը ատելություն և արհամարհանք է արտահայտում պարսից առասպելների նկատմամբ, բայց և այնպես նա պակաս հմուտ չէ նրանց, քան իր սիրած Հունաց ասքերն և ողորկս առասպելներին։ Բացի այս տեղից, որտեղ կարճառոտ բերում է Բյուրասպի Աժդահակի մասին առաս-

պելները, նա հիշում է նշանավոր փյունիկյան Ոստոմին, գիտե նրա որտեղացի լինելը և հարյուր քսան փողի ուժ ունենալը (Բ, ը),— մանրամասնություններ, որոնք հայտնի չեն Ցիրդուսին. Թվում է կարճառոտ առասպելներն Արտաշիր Սասանյանի մասին (Բ, հ), մի ամբողջ գլուխ նվիրում է պահլավների ծագման վերաբերյալ առասպելներին (Բ, հ)։

97. Բնագրում անթարգմանելի սրամիտ բառախաղ.— «անյարմար և անոճ բանից մանավանդ թե առավել վասն անբանութեան առնես աշխատ»։

98. Սոկրատեսն առանց աղբյուրը ցույց տալու բերում է հունարեն մի նախադասություն.— „φιλότης ἰσότητα ἀπεργάζεται" և ասում է, թե այս է Պղատոնի խոսքը բարեկամի մասին։ Դժվար է համաձայնել։ Հիշյալ նախադասությունը նշանակում է բարեկամությունը հավասարությունը լրացնում է, որ չի համապատասխանում Խորենացու բերած խոսքին, որ, ինչպես մենք ենք հասկացել ու թարգմանել՝ նշանակում է. «մարդ երբ սիրում է ուրիշին՝ իր եսը մոռանում է նրա համար»։ Սոկրատեսն լավ չէ արտահայտել «սիրելի բարեկամի համար կա՞ արդյոք ուրիշ ես»։ Ավելի հեռու է էմինի թարգմանությունը. „Может ли друг быть для друга другим я", որ գրեթե հակառակ իմաստն է տալիս։

99. Էմինը (ծան. 113), հիմնվելով Մալկոլմի և Դյուլորեյի աշխատությունների վրա՝ ասում է, թե զանազան կարծիքներ կան Զոհակի (=Բյուրասպի Աժդահակի) ծագման մասին։ Ոմանք, որոնց թվում և ինքը Ցիրդուսին, նրան համարում են Արաբացի, Կայիմուրսի ցեղից, որ եղել է Պարսկաստանի առաջին թագավորը։ Ուրիշները համարում են նրան ասորեստանցի, երրորդները, որոնք մեծամասնություն են կազմում, պնդում են, թե նա հենց ինքը՝ Ներրովթն է։ Ուրեմն Խորենացին շատ չի հեռանում մեծամասնության կարծիքից, ասելով, որ Զոհակը եղել է պարսիկների նախնի Ներրովթի ժամանակ։ Նրան նա Ներրովթ չի կոչում, որովհետև Ներրովթը, ըստ Խորենացու Բելն է, սպանվել է Հայկի ձեռքով։ Գալով այն բացատրությանը, որ Խորենացին տալիս է Բյուրասպի Աժդահակի առասպելներին և ընդհանրապես ժողովրդական վեպերին, Մառը, ինչպես և ուրիշները, գտնում են, որ այդ բացատրությունները կամայական են և անհիմն։ Մառը սակայն նկատում է, թե չի կարելի պահանջել Խորենացուց ժողովրդական վեպի գիտական հետազոտություն, ինչպես մենք այժմ ենք հասկանում։ Խորենացու մեկնությունները նույնպես գիտական են, բայց հին Հայաստանում տիրող սխոլաստիկական գիտության տեսակետից իրողությունների այլաբանական իմաստով հասկանալով։ Կենտավրոս Պյուռիդայի մասին, որի հետ Խորենացին նույնացնում է Բյուրասպի Աժդահակին, իմ ձեռքի տակ եղած թարգմանությունների մեջ ոչ մի տեղեկություն չկա. հիշում են միայն անունը։ Կենտավրոս (հունարեն kéntauros) հունարենում սկզբնապես նշանակում էր Թեսալիայում ապրող ժողովուրդները. հետո սկսեց նշանակել մի հրեշ՝ կիսով չափ մարդ, կիսով չափ ձի (հուշկապարիկ)։ Պյուռիդայ Կենտավրոսը թվում է Հոմերոսի մոտ (Ոդիսական, ԻԱ) հիշված Կենտավրոս Պեյրիթոսն է, որ Իկսիոնի կամ Զևսի որդին է եղել, լապիթներից մեկը, որի հարսանիքի ժամանակ կռիվ ու կոտորած է եղել։ Այս Կենտավրոսին հիշում է Խորենացին մի ուրիշ տեղ ևս (Բ, կդ), կոչելով Պերիթոս, որ ավելի մոտ է հունարեն հնչմանը։ Այստեղ Պերիթոսը կոչված է ոչ թե Կենտավրոս, այլ հուշկապարիկ։

Որ Խորենացին միևնույն անձը մի անգամ մարդ է ճանաչում, կենտավրոս բառի հին նշանակությամբ, և երկրորդ անգամ հուշկապարիկ, այդ բառի նոր նշանակությամբ, որ նա մի անգամ նրան կոչում է Պյուռիդայ, մյուս անգամ Պյուռիթոս, առանց գիտնալու, թե դրանք երկուսն էլ միևնույն անձն են,— ցույց է տալիս, որ Խորենացին այս երկու դեպքում երկու տարբեր աղբյուրներից է օգտվում։ Բարեբախտաբար հենց ինքն էլ ասում է, թե Պյուռիդայ անունը գտել է քաղդեական մատյանում, այնինչ Պերիթոս ձևը հիշեցնում է հունական աղբյուր (համմ. ծան. 22)։

100. Կատարյալ չարութիւն ասելով Պատմահայրը երևի ուզում է նշանակել այն կախարդությունը, որ ձեռք էր բերվում չար ոգիների օգնությամբ։ Նոր Պղատոնականները տարբերում էին երկու տեսակ կախարդություն. մեկը, որ ձեռք է բերվում բարի ոգիների օգնությամբ՝ կոչվում էր սպիտակ կախարդություն, մյուսը, որ ձեռք էր բերվում չար ոգիների օգնությամբ՝ կոչվում էր սև կախարդություն։ Պարսիկների մեջ էլ այս աշխարհայացքը տարածվեց՝ նրանց ընդունած երկու սկզբունքների՝ չարի (Արհմն) և բարու (Որմիզդ) շնորհիվ։

101. Խոսքը Դևմավենտ լեռան մասին է, Հյուսիսային Պարսկաստանում, Էլբուրսի լեռնաշղթայում, մինչև 5500 մետր բարձրությամբ։ Սա հրաբխային լեռ է, որ արձակում է ջերմ գազեր, շրջակայքում ունի ջերմուկներ և ծծումբ։

102. Ինագրում գրված է. «Ճաշաղաց վկայութեան առաքելոյն» (եզակի)։ Մենք թարգմանեցինք «մեր առաքյալների» հետևելով նահատակության պատմության գլխի վերև դրված վերնագրին («առաքելոցն մերոց»)։

103. Սելևկյան, Հռոմեական, Պարթևական, Սասանյան և հայ Արշակունի թագավորների հաջորդության և նրանց տարիների մասին տե՛ս սինխրոնիկ ցուցակները ծանոթությունների վերջում։

104. Քետուրա, Աբրահամ նահապետի զավակներից էր, ծնված նրա հարճից։ Նրան Աբրահամ պարգևներ տալով ուղարկեց արևելք՝ արևելյան երկրները. Ծննդ. ԻԵ 1—7։

105. «Թագաւորք ի քէն ելցեն» Ծննդ. ԺԷ, 7, «Թագաւորը ազգաց ի նմանէ եղիցին» Ծննդ. ԺԷ 17։

106. Բահլ առավոտին (հին տպագրությունների մեջ՝ առաւատին. փխկ. առաւաւտին), որ պարսկերեն կոչվում է Բահլի բամիկ, այսինքն Բահլ լուսաճաճանչ։ Ծիրկու բառն էլ նշանակում են Բահլ քաղաքի դիրքը արևելքում, որտեղ արևագալը ավելի վաղ է ծագում։ Այս Բահլը, որ կոչվում է նաև Բագտրա, շատ հին և անվանի քաղաք էր. հիշատակվում է Դարեհ Վշտասպյանի արձանագրությունների մեջ. հայրենիք էր Զրադաշտ մոգի, մայրաքաղաքն էր Կյուրոսի, առևտրի և արհեստների կենտրոն էր և գտնվում էր համանուն Բակտրիա գավառում—Օկսուս գետի (այժմ Ամու-Դարյա) բարեբեր հովտում, Պարապամիս և Տյան-Շան լեռների միջև, Պահլավների բնիկ երկիրն էր («բուն Պահլավը»), որը Արտաշիր Սասանյանը խոստացավ տալ Անակին, եթե նա խոսրովին սպանե։ Ներկայումս ավերակ է. մի քիչ հեռավորության վրա շինված է նոր քաղաք միևնույն անունով և պատկանում է Աղվանստանին։

107. Սիրիպենդես և նրա մի քանի վարիանտները ձեռագիրներում՝ աղավաղված բառ է՝ փոխանակ Սիտրիդեսի, որ հունարեն նշանակում է երկաթյա— նույնպես քիչ վերև Սելևկիոս Նիկանորը (Քեպետ այսպես է և Ովսեբիոսի

Հայերեն թարգմանության, Խորենացու աղբյուրի մեջ), պետք է լինի նիկատոր, որ հունարեն նշանակում է հաղթող։

108. Հերոդոտոս ամենանշանավոր հույն պատմագիրը, «պատմագիրների հայր» վերակոչված, ծնված 484 թ. ՆՔ Հալիկառնասում։ Նա ընդարձակ ճանապարհորդություններ է կատարել դեպի Փոքր Ասիա, Սև ծովի շրջակայքը, Պարսկաստան, Եգիպտոս, Իտալիայի կողմերը և այլն, դիտել է անձամբ և հարցուփորձով տեղեկություններ է հավաքել։ Նա գրել է մի պատմություն ինը գրքից բաղկացած, որ պարունակում է մոտ 300 տարվա պատմություն (մինչև 479 թվականի ՆՔ) ճշմարտախոս է և արդարասեր։ Հազարավոր տարիներ բոլոր երկրներում պատմության դասագրքերում Եգիպտոսին և Արևելքին վերաբերյալ պատմական տեղեկությունները քաղում էին Հերոդոտոսի այս գրքից։

109. Հին տպագրություններն ունեին «ընդարձակեաց ի վերայ սահմանաց իւրոց», որ քերականորեն կանոնավոր արտահայտություն չէ։ Նոր տպագիրն ունի. «ընդարձակ տերեւացս», որը մենք թարգմանեցինք «անկախորեն տիրեցս»։

110. Բնագրում՝ «(զ)ծովեզերեայսն մանկունս» այսինքն Գեղամա ծովի (Սևանա լճի) շրջակայքի երիտասարդներին։

111. Այստեղ հիշված աշխարհագրական անուններից Խաղտիք կոչվում էր Տրապիզոնից հարավ ընկած երկիրը, խալդերի (ժողովրդի) անունով, որ ըստ աշխարհագրական գրքի կոչվում է նաև Պոնտոս։ Ղազիկան (այժմյան արտասանությամբ՝ Լազիկան) լազերի բնակության երկիրն էր Սև ծովի հարավարևելքում, որ մասամբ ընկնում է Թուրքերի սահմանում և փոքր մասով մտնում է Բաթումի գավառի մեջ։ Մաժաքը, որ հետո կոչվեց Կեսարիա, ընկնում է Կապադովկիայում, իսկ Փռյուգիան ընկնում է Կապադովկիայից դեպի արևմուտք։

112. Աշտեա կամ աշտէ (հին պարսկերեն և զենդերեն arš(t)) նշանակում է կարճ նիզակ, որ ձեռքից թափով նետում են թշնամու վրա։ Պատահում է գործածված նիզակի կամ նիզակի սլաքի նշանակությամբ։

113. Եգերացի անունով ընդհանրապես ճանաչվում են լեզգիները (Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան)։ Նրանք ապրում էին Կովկասյան լեռների արևմտյան սահմաններում՝ Կուբան գետի մոտ և տարածվում էին մինչև Ազովյան ծովի արևելյան ափերը։ Բայց այստեղ թվում է, որ Պատմահայրն ուրիշ ազգ ունի նկատի. նախ որ Վաղարշակի արշավանքները նա չի տարածում այդքան հեռու, և երկրորդ՝ որ Վաղարշակին, ըստ Խորենացու, պոնտացիներին և եգերացիներին կարգավորելուց հետո, դառնում է դեպի Նյուսխս... Տայքի միջով. նշանակում է եգերացիք բնակում էին Հայքից հարավ։ Եգերացիք անշուշտ այժմյան աջարացիներն են, ինչպես ընդունում է նաև Ադոնց (Юстиниан. 26) և ինչպես նկարագրվում է Շիրակացու Աշխարհացույցում։

114. Բնագիրն այստեղ ունի—«հաւասարելով զլեռնային և զջերմուհոտ...», որ Էմինը սխալ է թարգմանել „выравнивает гористыя местности, умеряет удушливый воздух". Ստեփանեն թարգմանել է «հավասարելով լեռնային և ջերմոտ տեղերը», որ Էմինի սխալը չի պարունակում, բայց միտքը պարզ չի արտահայտում։ Պատմահոր միտքն այն է, թե այդ հակառակ կլիմայով տեղերը Վաղարշակը բարեխառնել է, այնպես որ մեկը մյուսին լրացնեն, և այս բանը բացատրում է շարունակության մեջ՝ տափա-

բակ, չերմոտ տեղերում երկու գոմ է հիմնում անասունների համար. այս տափարակ չերմոտ տեղերը կծառայեին իբրև ձմեռոց —ղշլա, իսկ դրանց մոտի լեռները կծառայեին իբրև ամառանոց—յայլա և արոտներ։ Կոլայի չերմ տեղերում էլ այգիներ ու բուրաստաններ է տնկում, որոնք օդը մեղմացնում են։

115. Վղնտուր բառը մենք հասկանում ենք ոչ իբրև հատուկ անուն, այլ իբրև Բուլղար Վունդի մականունը կամ պաշտոնի անունը՝ (զորքի) առաջնորդ նշանակությամբ։ Այս բառը մենք համարում ենք հայերեն տառադարձություն մոնղոլական bagatur, պարսկ. behadur բառին, որ ռուսերենում դարձել է богатырь.

116. Գ գլխում Խորենացին հիշել էր արդեն, որ Վաղարշակը Շամբատ Բագարատի ցեղին իրավունք է տալիս կոչվել Բագրատունի։ Խորենացին իբրև տերմին հաճախ գործ է ածում «սերել ազգ» և «զանուն ազգին կոչել...» դարձվածքները։ «Սերել ազգ» նշանակում է որևէ անձի և նրա սերունդը նախարարական ցեղի վերածել, մեր այժմյան բառերով՝ տոհմական բարձր ազնվականություն շնորհել։ Իսկ «զանուն ազգին կոչել»... նշանակում է, որ այդ նոր հաստատված նախարարական ցեղի հաջորդ սերունդները իրավունք են ստանում կրելու իրենց տոհմական ազնվականության՝ իրենց ազգի անունը. (սրանից է ծագում և մեր այժմ գործածած ազգանուն բառը)։ Ուրիշ մարդիկ, որոնք նախարարական ազգի (ցեղի) չէին պատկանում՝ այս արտոնությունը չունեին. ամեն մեկը կոչվում էր իր հոր անունով՝ որդի այսինչի, Միքայելի որդի Աշոտը կոչվում էր Աշոտ Միքայելյան, Աշոտի որդի Գարեգինը՝ Գարեգին Աշոտյան և այլն։ Մի ուրիշ ձև էր՝ մեկին կոչել իր ծննդավայրի անունով՝ Ղազար Փարպեցի, Եղնիկ Կողբացի և այլն։ Բայց սերնդեսերունդ մի ազգանուն կրելու իրավունքը պատկանում էր հին ժամանակ միայն տոհմական ազնվականներին՝ նախարարական տների ժառանգներին։ Այստեղ (գլ. Է) Խորենացին վերհիշելով Գ գլխում ասածը՝ ավելացնում է, որ Վաղարշակը Շամբատ Բագարատին տանուտեր (իշխան, նահապետ) է նշանակում նրա ցեղին, որի անունով նրա ցեղը կոչվեց Բագրատունի։

117. Ասպետ բառի ծագումը պարզ է. սանսկրիտերեն açva-pati, հին պարսկերեն aspa-pali նշանակում է ձիատեր, որ պարսկերենում կրճատվել է aspali, որից հայերեն ասպետ,— «ձիավոր ազնվական, հեծյալ իշխանավոր» նշանակությամբ (Հյուբշ. Արմատ. բառարան)։ Սեբեոսը մի անգամ գործ է ածում այս բառի նախնական ձևը՝ Ասպատ, իբրև հատուկ անուն. բայց սա իսկապես ասպետ մականունն է այն Բագարատի, որ առաջին անգամ այս կոչումն ստացավ Վաղարշակից։ Իսկ թե ինչ պաշտոն կամ պատիվ էր արտահայտում ասպետ բառը՝ դեռ որոշված չէ։

Էմին (ծանոթ. 137) բացատրում է ասպետն իբրև հեծելազորքի պետ, ինչպես պարսկ. «sephahbad»։ Բայց sephahbad-ը հայերեն սպահապետ է կամ սպարապետը։ Բացի սրանից՝ ամեն մի նախարար, որ սեփական հեծելազորքի գունդ ուներ՝ կարող էր կոչվել ասպետ, և ոչ մի տեղ չենք գտնում հիշատակություն, որ հայոց զորքի մեջ հեծելազորքը առանձին պետ ունենար, իսկ հետևակը առանձին։ Բոլոր զորքերի պետը կոչվում էր սպարապետ։— Նորայր Բյուզանդացին (Կորյուն Վարդապետ, էջ 284—285) կարծում է, թե ասպետ նույնն է նշանակում, ինչ որ թագադիրը։ Սակայն Խորենացին ջոկում է տարբերությունը այս երկու պաշտոնների—«կոչել թագադիր, այլ և ասպետ»։ Մենք Սեբեոսի ռուս. թարգմանության մեջ (էջ 140 ծան. 26) մի նոր կար-

Այդ ենք հայտնել— Սեբեոս (էջ 10 նոր հրատար.) հիշելով, թե Արշակ Փոքրը (=Վաղարշակը) Փառապյան Բագարատին ասպետ դարձրեց Հայաստան երկրին՝ անմիջապես ավելացնում է «որ էր իշխան և Երամանատար, ամենայն թագատուրութեանն հրամանաց գլուխ», ցույց տալով, որ Հայաստանի ասպետը ամբողջ երկրի իշխանը, հրամանատարն էր, հրամաններ արձակողը. մի պաշտոն, որ շատ հիշեցնում է Պարսից մեծ հազարապետին (=վզուրկ հրամատար), ինչպես էր Միհրներսեհը, այսինքն թագավորի մերձավորագույն խորհրդականը և թագավորի անունից երկիրը կառավարողը։ Նկատի ունենալով, որ Խորենացին այս գլխում հիշում է զանազան բարձր պաշտոնյաներ (թագադիր, կանանոցի և հարկերի վերակացու, զգեցուցանող. բիկնապահների պետ և այլն), բայց ամենակարևորը չի հիշում— թագավորի մերձավոր խորհրդականին և երկրի ընդհանուր կառավարչին՝ կարծում ենք, որ հենց այս պաշտոնյային էլ ալբի առաջ ունի Պատմագիրը՝ ասպետ անունով, որ իրեն ու ժամանակակիցներին հասկանալի էր։

118. Բնագիրն այստեղ ունի «և զգեցուցանողս իւր գձեռէս ի զաւակէ Քանանացւոց»։ «Ձեռէս» բառը շատերը հասկացել են ձեռնոց և ըստ այնմ թարգմանել։ Վիստոնյան եղբայրները թարգմանել են «ձեռներ հագցնել»։ Բայց ձեռէք-ձեռէս այսպիսի նշանակությամբ բուն չկա։ Հայտնի էլ չէ, թե հին Հայաստանում ձեռնոց հագնո՞ւմ էին, թե ոչ, և տարօրինակ կլիներ, եթե Վաղարշակը միայն ձեռնոցներ հագցնելու պաշտոնյա նշանակեր, բաց թողնելով բոլոր զգեստները։ Բանասերները այս կարծիքին եկան, թե «Ձեռէս» կամ «Ձեռէ» մարդու հատուկ անուն է, որի պաշտոնն է եղել թագավորին հագցնել (=զգեցուցանող)։ (Մառ, К. крит. Хор. էջ 7)։ Միայն Ն. Մառը «Ձեռէս» բառում «ս» համարիտլ հողնականացուցիչ նշան՝ հասկանում է. «Վաղարշակ իրեն զգեցուցանողներ է նշանակում Ձեռեսներին»։

119. Որի անունով և այս ցեղը կոչվեց—հասկացվում է Վարաժնունիք։ Կարծես Խորենացին ուզում է ասել, թե Վարաժնունյաց Նախարարությունը հաստատվեց Արտաշեսի ժամանակ. իսկ Դատը որսերի վերակացու նշանակվեց առանց նախարարական կոչման։

120. Դահ, պարսկերեն Gāh, բառացի նշանակում է տեղ, որից՝ նստելու տեղ, բազմոց, աթոռ և այլն։ Դահ բառը Խորենացին ընդհանրապես, ինչպես և այստեղ, գործ է ածում՝ նշանակելու համար այն տեղը, բազմոցը, որ նախարարները գրավում էին թագավորի սեղանի շուրջը խնջույքների ժամանակ։ Այս տեղերը շշտիվ սահմանված էին պարսից թագավորների կողմից (տե՛ս Դահնամակ), և նրանցով որոշվում էր նախարարներից յուրաքանչյուրի ազնվության կարգը։ Եթե մի նախարար որևէ հանցանքի պատճառով ապաշնորհ էր դառնում՝ թագավորը նրան գրկում էր գահից կամ նրա գահը ներքև էր իջեցնում, որ ամենամեծ վիրավորանքն էր համարվում. ընդհակառակը՝ թագավորը իր գոհունակությունը հայտնելու համար որևէ նախարարի՝ նրա գահը վեր էր բարձրացնում։ Գահով սահմանված ազնվությունը խստիվ պահպանվում էր և ամեն մի նախարար նախանձախնդիր էր իր գահին նզիշեն, երբ րնթում է ցուցակ ուխտապահ նախարարների, որոնք Վարդանի հետ միացան քրիստոնեությունը պաշտպանելու համար, չնայելով որ Վարդանը իր պաշտելի հերոսն է, որ նա առաջնորդն է այս ապստամբության գործում, որ նա բոլոր հայ զորքերի սպարապետն է՝ այնուամենայնիվ նախարարների ցուցա-

կամ նրա անունը դնում է երրորդ տեղում՝ առաջին երկու տեղում նշանակելով Արծրունյաց և Խորխոռունյաց իշխաններին, որովհետև նրանք պահով Մամիկոնյաններից ավագ էին։ Ստեփանոս Օրբելյանը պատմում է (գլ. Թ), թե Սյունյաց Անդովկ իշխանը պարսից արքունիքում վիրավորանք կրելով նրանով, որ Շապուհը նրան տասնչորսերորդ գահը տվեց հայ նախարարների շարքում՝ պահանջած կերակրի ձեռք չտվեց, և երբ Շապուհը պատճառը հարցրեց՝ նա իր զորքերով վրեժխնդրության համար ավերեց նրա ապարանքը, ավար առավ նրա գանձերը և փախավ հույների մոտ։ Գահ բառը հաճախ արտահայտվում է և բարձ բառով, որ պետք է նկատել կամ իբրև թարգմանություն պարսկերեն գահ բառի, կամ որ գահի վրա բարձ էին դնում, որպեսզի տեղը փափուկ լինի։

Գահին կից հաճախ գործ է ածվում և պատիվ բառը։ Պատիվը արտաքին մի նշան էր, իբրև մի հայտնի զարդարանք կամ զգեստի մաս և այլն, որ թագավորը պարգևում էր նախարարին, գահի հետ միասին, և որ այդ նախարարի սերունդները ժառանգաբար կրում էին։ Պատվի և նրա տեսակների մասին մեզ հասած տեղեկությունները քիչ են, այնպես որ դժվար է որոշել պատիվներ բաշխելու օրենքները և նրանց տեսակները։ Խորենացին հիշում է Բագարատին շնորհված պատիվը՝ երեք շարք մարգարիտներից վարսակալ՝ առանց ոսկու և արծաթի (Բ, է)։ Ուրիշ տեղ (Բ, խէ) հիշում է Արտաշեսի շնորհած պատիվը Մուրացան նախարարին՝ պսակ հակինթապատ, երկու ականջներին գինդեր, մի ոտքին կարմիր կոշիկ, ոսկեղեն գդալ, պատառաքաղ և ոսկեղեն բաժակ։ Նույն պատիվները Արտաշեսը շնորհում է և Ամրատին՝ բացի գինդերից և կարմիր կոշիկից։ Եղիշեն ավելի մանրամասն նկարագրում է Վասակի ունեցած պատիվները, որ նա հագավ՝ թագավորի մոտ ընթրիքի գնալու համար (եղ. է)։

121. Այստեղ և շարունակության մեջ մի քանի անգամ Խորենացին գործ է ածում «գիտեմ»—«զԱրծրունիսդ գիտեմ»... գիտեմ և «զԳնունիսդ» և այլն, որ մենք թարգմանեցինք «իմ գիտցածով»։ Այս բառի գործածությամբ Խորենացին ցույց է տալիս, որ բերած ստուգաբանությունը իրենն է, իր ենթադրությունը։ Նույնպիսի նշանակությամբ գործ է ածում և «ասեմ» բառը, որ մենք թարգմանեցինք «համարում եմ»։

122. Ոստան։ Ոստան բառին շատ տեսակ մեկնություններ են տվել (տ. Արմատ. բառ.)։ Ամենից հավանականը Հյուբշմանինն է, ըստ որի ոստան պահլավերեն ձևն է (xōstān), որից պարսկերենում կազմվել է ōstāndār բառը, որ նշանակում է գավառապետ։ Ուրեմն ոստան գավառ։

Հայերենում այս բառը գործ է ածվում մի քանի նշանակությամբ։ 1. Ոստան նշանակում է այն կալվածը (=գավառը), որ կազմում էր սեփականություն Արշակունյաց թագավորների, որ ուրիշ խոսքով կոչվում էր նաև արքունի տուն։ 2. Նշանակում է այն ազնվական դասակարգը, որ ապրում էր այդ ոստանում, այսինքն թագավորական կալվածում և կազմում էր հեռավոր սերունդ Հայկազյան շրջանի կամ Արշակունյաց ժամանակի թագավորների։ Ըստ այսմ՝ ոստանը այնպես է հարաբերում թագավորին, ինչպես սեպուհը նախարարին։ Այս ազնվականությունն է, որ Պատմագիրը կոչում է ոստան կոչեցյալ ազատություն։ Այս նշանակությունից է բխում և ոստանիկ բառը, որ նշանակում է ոստան ազնվականության անդամ։ 3. Ոստան նշանակում է և թագավորական կամ արքունի տուն, գլխավոր քաղաք, մայրաքաղաք։

Արշակունյաց բաժանումից հետո ուրիշ նախարարական տների գլխավոր քաղաքներն էլ սկսեցին Ոստան կոչվել (Ոստանն Վասպուրականի, Արծրունյաց և այլն), բայց առանձնապես Ոստան էր կոչվում Դվին քաղաքը, իբրև պարսիկ մարզպանների նստած քաղաք։

Պատմահայր ասելով՝ ոստան ազնվականներից չորս գունդ կազմեց Վաղարշակը, որոնք ծագում էին բուն հին թագավորների սերունդներից. սրանց տեղ հետո պարսիկները ուրիշ գնդեր կազմեցին, բայց էլի Ոստան անունը պահեցին։

123. Սեփհ ծույլ, հին տպագրություններում սեփծուղ, վրացերեն բառ է—սեփէ (թագավոր) և ծուլի (որդի) ուրեմն սեփեծուլի նշանակում է արքայորդի, արքայազարմ, Վրաստանի բարձր ազնվական դասակարգը, համապատասխան հայերեն ոստանիկին։ Ըստ Ն. Մառի (Հանդ. ամս. 1892 էջ 165), Վրաց սեփէ=նեփէ=մեփէ բառը, որ նշանակում է թագավոր՝ ծագում է հայոց Սեպուհ բառից, «ու» հնչյունի կորստով. սեպ(ու)հե=սեպհե=սեփե։

124. Պատմահայրը առաջին ներքինապետին անվանում է Հայր, իբրև հատուկ անուն. բայց «հայր» ընդհանուր մակդիր էր բոլոր ներքինապետներին։ (Թուրքերեն էլ բաբա էին ասում ներքինապետներին)։ Նրանց ցեղի անունն է Մարդպետություն, իսկ ցեղի նախարարը կոչվում է Մարդպետ (Մարդերը հատուկ ցեղ էին)։ Ասածի համար միասին գործ են ածվում այս երկու անունները՝ Հայր Մարդպետ Արանց. բացի թագավորի կանանոցի կառավարությունից. ուներ և մի ուրիշ պաշտոն—արքունական կալվածների վրա հսկողություն, ինչպես երևում է Փավստոսից (Դ, ժգ)։

125. Այս Դարեհը Աքեմենյան հարստության վերջին թագավորն է, Կոդոմանոս կոչված, որին Ալեքսանդր Մակեդոնացին հաղթելով (33 թ. Ն.Ք.) նվաճեց ամբողջ Պարսկաստանը։

126. Աբյուդենոսի խոսքերը Խորենացին մեջ է բերում Եվսեբիոսի հայերեն թարգմանությունից. «Մեծազորն ասէ Նաբուգոդոնոսոր» և այլն։ Եվսեբիոսի հունարեն բնագրում գրված է „μεγασθένης φησι" —Մեգասթենեսը ասում է։ Հայ թարգմանիչը Մեգասթենես հատուկ անունն ընդունել է իբրև լոկ ածական և թարգմանել է այսպես. մեծազոր բառը Նաբուգոդոնոսորի որոշիչ դարձնելով։ Դժվար այդ գաղթականության՝ պետք է նկատել, որ հին ժամանակ Սպանիայի մի մասը, Ջիբրալթարից մինչև Պիրենյան լեռնաշղթան, կոչվում է Ἰβηρία Իբերիա կամ Իվերիա։ Նույն անունը կրում էր նաև Սև ծովից դեպի արևելք ընկած երկրամասը, հատկապես Վրաստանը։ Տարբեր և իրարուց այսքան հեռու ընկած ազգերի անունների այս պատահական նմանությունն առիթ է տվել ստեղծվելու այն ավանդության, իբր թե Նաբուգոդոնոսորն է Սպանիայից Իբերներ բերել ու բնակեցրել Սև ծովի աջակողմը, որով այս երկիրը կոչվել է Իբերիա կամ Իվերիա։—Հաջորդ նախադասությունը.—«Իվերիան գտնվում է արևմուտքում աշխարհի ծայրում», միջանկյալ բացատրական խոսք է, որ մենք դրինք փակագծերի մեջ։

127. Անգեղ բառը Խորենացին անհաջող ստուգաբանում է, իբրև անգեղեցիկ, տգեղ, որ խորթ է մեր լեզվին։ Անգեղը հատուկ անուն է։ Գարագաշյան (Քնն. պատմ. Ա էջ 250) և Խալաթյանց (Эпос, 327) ցույց են տվել, որ ս. գրքում մի տեղ բնագրի Ներգել աստծու դեմ հայերեն թարգմանությունն ունի Անգեղ (Դ Թագ. ժէ 30). սրանից նրանք եզրակացնում են, որ Անգեղը եղել է մի աստ-

վածությունը։ Այս ենթադրությունը ուժ է ստանում և Սեբեոսի վկայությամբ, որ ասում է. «Վասն զի կոչեցան Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբառոսացն աստուած կոչեցին» (էջ 7)։ Հավանական է, որ Անգեղները մի առանձին ցեղ են եղել, որոնց ազգային աստվածությունը կոչվելիս է եղել Անգեղ, որի անունով կոչվել է և ժողովուրդը։

Խորենացուն ևս գուցե հայտնի է եղել Անգեղի աստված լինելը, բայց նա ըստ իր սովորության այս աստծուն ևս մարդացրել է և Անգեղ անունն ստուգաբանել տգեղ նշանակությամբ։ Տորք Անգեղին վերագրված առասպելական ուժը մի կողմնակի ապացույց է նրա դյուցազնական ծագման։ Հայտնված կան կարծիքներ, թե Անգեղը կապ ունի Անգլ ցեղի հետ (որից Անգլիա), իսկ Տորքը՝ թուրք ցեղի հետ։ Տե՛ս և Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, (էջ 28)։

128. Ռոստոմ Սագճիկ Իրանի համբավավոր հերոսն է, որին անմահացրել է Ֆիրդուսին։ Սագճիկ կոչված է նա իր ծննդավայրի անունով։ Սագստանցի— Սեճեստանցի։ Սեճեստան այժմ Սեյիստան Պարսկաստանի հեռավոր արևելքի գավառն է Աֆղանիստանին սահմանակից։ Ֆիրդուսուն հայտնի չեն ոչ նրա ծննդավայրը, և ոչ 120 փղի ուժ ունենալը. ինչպես վկայում է Էմինը (ծանոթ. 153)։ Էմինը չգիտե, թե ինչո՞ւ Ռոստոմը Սագճիկ է կոչված. ենթադրում է, թե գուցե այս անունը կապ ունի Ռոստոմի ծննդավայրի հետ։ Թեպետ Էմինին ծանոթ է եղել Գուտշմիդի քննությունը Խորենացու Պատմության արժանահավատության մասին (տ. ծան. 25), որի մեջ Գուտշմիդը բացատրել է Սագճիկ բառը— „Rostom saggik (d. i. dem seg'istanischen)" (էջ 17 առանձին արտատպություն),—Ռոստոմ Սագճիկ (այսինքն Սեճեստանցի), բայց նա աչքաթող է արել այս բացատրությունը։

129. Տորքի մասին այս ավանդությունը, որ նա բլրաձև ժայռ է շպրտել թշնամի նավերի վրա՝ շատ է հիշեցնում Հոմերոսի պատմածը միականի Պոլիֆեմի մասին (Ոդիսական, երգ Թ), որին Ոդիսևսը կուրացնելով՝ կարողացավ հնարքով դուրս գալ նրա քարայրից և նավ նստելով ընկերների հետ փախչել։ Կատաղած հսկան ծովի ափին մոտենալով մի ծանր ժայռ է պոկում լեռան կատարից և փախչողների ձայնի ուղղությամբ շպրտում է նրանց վրա։ Ժայռի հարուցած ալիքները Ոդիսևսի նավը դարձյալ դեպի ափն են մղում։ Այստեղ խոսք չի կարող լինել Խորենացու կողմից փոխառության մասին, ինչպես ենթադրում է Խալաթյանցը։ Այս առասպելը մեկն է այն գաղթող միջազգային առասպելներից, որոնք մի տեղ ծնունդ առնելով՝ այնուհետև դարերի ընթացքում թափառում են երկրե երկիր, զանազան կերպարանափոխություններով. այսպիսի առասպել է նաև լեռների մեջ շղթայված դյուցազնի առասպելը։ Նույն կարծիքն ունի և Աբեղյանը (անդ., էջ 280)։ Բայց զարմանալին այն է, որ Պոլիֆեմի այս առասպելը մինչև մեր ժամանակներս էլ դեռ կենդանի է մնացել ժողովրդի հիշողության մեջ։ Ես ունեմ կազմած մի ժողովածու ժողովրդական առասպելների և առակների՝ Ախալցխայի բարբառով, որ գրի եմ առել մոտ 50 տարի առաջ՝ իմ հոր պատմածներից։ Մի առասպելում (համար 73) պատմվում է մի անցք՝ որ շատ նման է Պոլիֆեմի Ոդիսևսի ընկերներին ուտելուն և Ոդիսևսի խորամանկությամբ նրան կուրացնելուն և նրանից խուսափելուն։ Իմ ժողովածուի մեջ էլ հրեշը [illegible] է, այսինքն գլխաչքանի, ճակատի վրա մի աչք ունեցող։ Մարդը նրա այրից դուրս գալու համար ոչ թե [illegible]-

վում է ոչխարի փորի տակ, ինչպես Հոմերոսի մոտ է, այլ ոչխարների մորթերով ծածկում է գլուխը, մարմինը և չորեքթաթ մտնում Էթիոփիացին և անցնում է նրա բաց արած ոտների արանքով։ Բայց իմ ժողովածուն ունի այստեղ մի շարունակություն, որ Հոմերոսի մեջ չկա։ Մարդը Էթիոփիացու անբնակ կղզում մի քանի օր թափառում է, կերակրվելով պտուղներով և բույսերով, վերջը մտածում է, որ մի կերպ պետք է դուրս գալ այս անբնակ կղզուց։ Երկար աշխատելով նա կտրում է մի քանի գերան, լաստ է կապում, նստում վրան և իրեն հանձնում հողմերի կամքին։ Մի քանի օրից լաստը գալիս դեմ է առնում մի ցամաքի։ Մարդը լաստը ափ է հանում, և հիմա մտածում է, ի՞նչպես անել, որ իր երկիրը հասնի, որովհետև ոչ այդ տեղը գիտե, ոչ փող ունի։ Մի հրեա վաճառական մտնենում է, նայում է գերաններին և հարցնում. «Ծախո՞ւմ ես, ծախում եմ»։ Հրեան հազար ղուրուշ է առաջարկում. մարդը, (որ չգիտեր թե այդ գերանները թանկագին փայտեր են և կարծում է, թե շատ շատ՝ մի տասը ղուրուշ արժենան)՝ հրեայի տված գինը ծաղր է համարում. «Ես հանաքի ժամանակ չունեմ, ասում է՝ լուրջ ուզում ես գնել, գին տուր»։ (Հրեան իր կողմից հավատացած է, թե մարդն իր ապրանքի իսկական արժեքը գիտե).— լավ, տասը հազար ղուրուշ կտամ, ասում է։ Մարդը դարձյալ կարծում է թե հրեան իրեն ծաղրում է... Վերջապես հրեան 60000 ղուրուշ է առաջարկում։ Մարդը չարացած ասում է «չառնողին էլ, չտվողին էլ»։ Հրեան 60000 ղուրուշը տալիս ու գերաններն առնում է՝ վերջը միայն հասկանալով, որ մարդը գաղափար անգամ չէ ունեցել իր փայտի բարձր արժեքի մասին։

Ահա մի առասպել, որ ավելի քան երկու հազար տարի կենդանի է մնացել և գոնե 50 սերնդի բերանով անցել։ Որ նրա աղբյուրը գրավոր չէ, այսինքն Հոմերոսից չի առնված՝ երևում է գերանները վաճառելու պատմությունից, որ սերտ կապ ունի նախընթաց պատմության հետ, բայց բացակայում է Հոմերոսի մոտ։

130. «Միանդակն անդառնալի»։ Անդառնալի բառը թարգմանիչները թարգմանել են «հետ չդարձող» (Ստեփանե) «неотразимый» (Էմին), «qui ne recule jamais» (Լանգլուա)։ =որ երբեք չի նահանջում «unbeugsam» (Լաուեր)=անընկճելի, անկոտրելի (Ստեփանե, ծան. 234), բայց մենք կասկածելի ենք համարում վերջին երեք թարգմանությունները, իսկ Ստեփանեինը տառացի ուղիղ. բայց անորոշ։ Այս բառը անշուշտ առնչություն կամ մեկնություն է Միանդակ բառի, բայց թե ի՞նչ է նշանակում այստեղ՝ դժվարանում ենք ասել։

131. Կղեսուր, հունարեն Κοίλη Συρία =Խորագույն Ասորիք, Ասորիքի մի մասը, որ ընկնում է երկու լիբանանների միջև, որտեղ գտնվում է Դամասկոս քաղաքը։

132. Բնագրում՝ «սրիկայի բազմություն»։ Սրիկա բառը բառարանները բացատրում են իբրև սուր կրող, ավազակ, գող ավազակ, դատարկապորտ։ Այսպես էլ թարգմանում են. Էմին՝ „большое число разбойников“ Ստեփանե «շատ սրիկաներ»։ Մենք էլ պահպանեցինք այս բառը, թեպետ և կասկածում ենք ճշտության մասին։

133. Անանյաններ և Եղիազարյաններ— ս. գրքից առնված անձեր են։ Անանյանները (Անանիա, Ազարիա և Միսայել, քաղդեական լեզվով՝ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով) երեք հրեա երիտասարդներ էին Բաբելոնում գերված

հրեաների մեջ, որոնք մերժեցին երկրպագել նաբոգոդոնոսորի կանգնեցրած ոսկի արձանին և սրա համար գցվեցին բորբոքված խարույկի մեջ (Դան. գլ. Գ)։ Եղիազարյաններ.— Երր Սելևկյան Անտիոքոսը բռնադատում էր հրեաներին իրենց կրոնն ուրանալ և կուռքերի երկրպագել՝ եղիազարը, մի հարգելի իննսունամյա ծերունի, հրաժարվեց խոզինի ուտել, և սրա համար նահատակվեց չարչարանքներով. նույնպես վարվեցին յոթն եղբայր իրենց մոր հետ, որոնց սարսափելի տանջանքներով սպանում էին։ Վեց որդուն սպանելուց հետո, երբ ՝ներքը հասավ յոթներորդին թագավորը համոզեց մորը, որ հորդորե որդուն թագավորի կամքը կատարել և փրկվել։ Մայրը նրան էլ խրատ տվեց եղբայրների նման մեռնել։ Վերջը ինքն էլ նահատակվեց (Բ. Մակաբ. գլ. Զ, է)։

134. Այս խոսքերից երևում է, որ Մար Աբասը (ըստ Խորենացու) Հայոց վերաբերյալ պատմությունը քաղդեական մատյանից հանելով ու վաղարշակին բերելով՝ ինքն էլ իր կողմից, իբրև ժամանակակից, գրի է առել վաղարշակի և սրա հաջորդ Արշակ Ա-ի գործերը։

135. Հուլիոս Աֆրիկանոս—նշանավոր պատմագիր, որ առաջինը մտցրեց սինխրոնիկ ժամանակագրություններ պատմության մեջ։ Ննդյամբ Պաղեստինի էմմաուս քաղաքից էր (կամ Լիբիայից), ապրում էր Գ դարում ՀՔ, Ալեքսանդրիայում։ Նա քահանա էր։ Գլխավոր աշխատությունն է Pentabiblon chronologicum, որ սկսվում է աշխարհի ստեղծագործությունից և հասնում է մինչև 221 թ. ՀՔ։ Նրա այս աշխատությունից օգտվել են շատերը և մասնավորապես Եվսեբիոս Կեսարիացին իր ժամանակագրության մեջ։

136. Հիպոլիտա, Հիպոլիտ եկեղեցական մատենագիրը, որ ապրում էր Գ դարում, եկեղեցական պաշտոն էր վարում Հռոմում։ 235 թվին աքսորվեց Սարդինիա, որտեղ և մեռավ։ Գրել է բազմաթիվ վիճաբանական գրվածքներ, որոնցից մի մասը միայն հասել է մեզ։ Հովսեպոսի մասին տե՛ս ծան. 16։

137. Սինոպ—քաղաք և նավահանգիստ Սև ծովի հարավային ափին, Քյուրքիայի Կաստամունիա վիլայեթում։

138. Սա Միհրդատ Ջ Եվպատորն է, որ կոչվում է նաև Միհրդատ Մեծ, Պոնտոսի թագավորը։ Մնվել է 132 թ. ՆՔ, մեռել (ինքնասպանությամբ) 63-ին։ Բոլոր կյանքի ընթացքում, մոտ 50 տարի, անընդհատ պատերազմներ է մղել Հռոմայեցիների դեմ, որոնց ոխերիմ թշնամին էր, և հաճախ էր խիստ նեղը գցել նրանց։ Նրա դեմ կռվեցին նշանավոր զորավարները Սուլլա, Մուռենա, Լուկուլլոս, Պոմպեոս, որին վերջապես հաջողվեց նրան հաղթել ու հալածել Փոքր Ասիայից։ Նա դարձյալ չհուսահատվեց և պատրաստվում էր Մակեդոնիայի վրայով ուղղակի Հռոմի վրա գնալ։ Բայց զորքն ապստամբեց նրա դեմ, և նա ինքնասպանություն գործեց։ Ընդարձակ դրականություն կա նրա մասին։ Վերջինը և լավագույնն է ակագ. Մանանդյանի Տիգրան Երկրորդ աշխատությունը. հորենացին լավ աղբյուրներ չունենալով՝ նրան երկրորդական տեղ է տալիս Տիգրանի մղած պատերազմներում Հռոմայեցիների դեմ։

139. Սկիվղղոսը և Դիպիոնոսը նշանավոր հույն քանդակագործներ էին Միտրոս կղզուց, ապրում էին վեցերորդ դարում ՆՔ, Աթենսում և Սիկիոնում, որտեղ բազմաթիվ աշակերտներ հավաքեցին քանդակագործություն ուսուցանելու։ Նրանց անուններն ու քանդակած արձանները հիշատակում են մի քանի հույն մատենագիրներ։

140. Բնագիրն ունի «առասպելութիւնն Կրիւանայ և Նեքտանեբայ», որտեղ

առարկություն բառի նշանակությունը որոշ չէ։ Էմինը թարգմանել է. «С войне Креза с Нектанебом», Նույնպես Ստեփանյանն՝ «Կրյուսոսի և Նեկտանեբոսի կռիվը»։ Բայց «առարկությունը» երբեք պատերազմ՝ կռիվ չի նշանակում։ Հայկազյան բառարանը առարկություն բառի մի քանի նշանակությունները բացատրելուց հետո՝ բերում է մի բացատրություն ևս. «Ընդդիմութիւն բանիւ կամ կռուով», և այս բացատրության իբրև վկայություն է բերում Խորենացու հիշյալ հատվածը միայն, ուրիշ խոսքով՝ Հայկ. Բառ. հորինողներն այդպես են հասկացել առարկություն բառի նշանակությունը տվյալ տեղում։ Թարգմանիչներն էլ հետևել են Հայկ. բառարանին, բայց ձախորդաբար ընտրել են «կռուով» բառը և ոչ «բանիւ» և ընկել են սխալի մեջ, որովհետև Կրեսոսի մասին չկա հիշատակություն, որ պատերազմած լինի Եգիպտոսի որևէ փարավոնի հետ։ «Առարկությունը» այստեղ պետք է վերցնել այս բառի ավելի սովորական իմաստով, այն է՝ առաջարկություն որևէ առեղծվածի, որ հին ժամանակ թագավորները սովորություն ունեին իրար ուղարկելու։ Եվ իրոք, այսպիսի նշանակություն ունի այստեղ «առարկություն» բառը։ Գուտշմիդը (էջ 15) ցույց է տվել, որ Նեկտանեբոսի և Կրեսոսի ժամանակակցությունը հիշատակվում է Եզովպոսի վարքում։ Արդ՝ այս վարքում գրված է, թե Եզովպոսը մի քանի ժամանակ ապրել է Կրեսոսի մոտ, այնտեղ գրել է իր առակները և մատուցել Կրեսոսին, հետո ճանապարհորդություններ է կատարել և եկել է Բաբելոն, Լեգերոս թագավորի մոտ։ Այս ժամանակ Եգիպտոսի Նեկտանեբոս թագավորը մի առարկություն է ուղարկում Լեգերոսին՝ ուղարկել մի ճարտարապետ, որ մի դղյակ շինի սամից այուների. և Եզովպոսը հանձն է՝ առնում այս առարկությունը լուծել (նույնը մեր Խիկարի պատմության մեջ)։ Խորենացու մոտ Նեկտանեբոսն առարկությունն ուղարկում է ոչ թե Լեգերոսին, այլ Կրեսոսին. բայց սրանով չի խախտվում էականը՝ Կրեսոսի և Նեկտանեբոսի ժամանակակցությունը։

141. Պյութիա, հունարեն Pythia. ընդհանուր անուն այն քրմուհիների, որոնք Դելփիում (Հունաստանի Փոկիս գավառում, Պառնաս լեռան ստորոտում) Ապոլոնի մեհյանում գուշակություններ էին անում և իրենց տրված հարցերին պատասխանում։ Նրանք նստած էին լինում մի եռոտանու վրա, մի ապառաժի ճեղքվածքի վերև, որտեղից գազեր էին դուրս գալիս։ Այս գազերից Պյութիաներն ընկնում էին մի տեսակ զառանցանքի մեջ և տրված հարցերին կցկտուր բառերով պատասխանում, իսկ մի հմուտ քուրմ այդ կցկտուր բառերից մի կապակցված խոսք էր կազմում և հայտնում հարցնողին։ Պյութիայի գուշակությունները լսելու դիմում էին ոչ միայն ողջ Հունաստանից և հունական գաղութներից, այլև հեռավոր տեղերից օտար թագավորներ։ Պյութիաները պետք է լինեին լավ ընտանիքներից, անբասիր վարքի տեր, կույս և հիսուն տարեկանից ավելի հասակում։ Ապոլոնի մեհյանը իր Պյութիաներով մոտ 1000 տարի գոյություն պահպանեց և միայն Մեծն Թեոդոս կայսեր հրամանով փակվեց Դ դարի վերջերում։

142. Խորենացու հիշած այս չորս մատենագիրներից երկուսի անունները աղավաղված էին հին տպագրությունների մեջ, որոնք վերջին տպագրության մեջ ուղղվեցին. Փղեգոնիոս (փխկ. նախկին Փղեգոնիոսի) և Սկամադրոս, (հին տպագր. «գրէ եւ Կամադրոս» ուղղված՝ «գրէ և Սկամադրոս»)։ Այս չորսն էլ իրական անձնավորություններ են, որոնցից մի քանիսի գրվածքներից հատակոտորներ են մնացել։ Բայց Պատմահոր նրանցից բերած ցիտատները չկան այժմ։ Ցի-

տաներն իրար շատ նման են ոճով՝ քերթողական ներբողներ են։ Գուտշմիտ կարծում է, թե ոչ մեկը նրանցից չէր կարող Կրեսոսի պարտությունը վերագրել Արտաշես Պարթևին, փոխանակ Կյուրոսին, և ենթադրում է, թե Խորենացին այս հեղինակների անունները, որոնք Կրեսոսի պարտությունը վերագրած են եղել Կյուրոսին, գտել է որևէ քերթողական ժողովածուի մեջ կամ Հուլիոս Աֆրիկանոսի մոտ և հետո իրենից շարադրել է այդ պատմությունն ու նրանց վերագրել։ Անկարելի է համաձայնել այս կարծիքի հետ, ոչ միայն նրա համար, որ այսպիսի բացարձակ խարդախություն օտար է Խորենացուն, այլև այն պատճառով, որ լիովին հակասում է Խորենացու պատմածի ոգուն։ Խորենացին գիտե, որ ուրիշ աղբյուրներ Կրեսոսի պարտությունը վերագրում են Կյուրոսին, գիտե, որ Կրեսոսը մոտ չորս հարյուր տարով առաջ է քան Արտաշեսը։ Ինչո՞ւ ուրեմն նա այդ հակապատմական և հակաժամանակագրական սուտը պիտի հորիներ՝ Կրեսոսի պարտության պատիվը Արտաշեսին տալու համար։ Եթե նա հերյուրի այսպիսի նպատակ ունենար և դրա համար այդ հակապատմական կեղծ վկայությունները հնարեր՝ ապա պետք է սպասենք, որ մի հոյակապ ու մանրամասն պատմություն պիտի գրեր Արտաշեսի այս հաղթության, որի համար նյութ չէր պակասում իրեն (համեմատել Սկամադրոսի գրածը, որ համապատասխան է Հերոդոտոսի պատմածին)։ Հիշենք, որ Խորենացին Տիգրան Առաջինին է վերագրում Աժդահակի սպանությունը (հակառակ պատմության), հիմնվելով Ձորս հագներգության ու ազգային ասասպելների վրա, և տեսնում ենք ի՞նչպես նա ծաղկեցրել է այս պատմությունը, մի քանի գլուխ նվիրելով նրան։ Նույնը պիտի աներ և այստեղ. մինչդեռ մենք տեսնում ենք, որ այստեղ նա կարճ և անցողակի միայն հիշում է. «Խաղայ յարևմուտս և ձերբակալ առնէ զԿրիսոս թագաւոր Լիւդացւոց»։

Առողջ դատողությունը թույլ չի տալիս ընդունել, որ Խորենացին այդ մի անշուք նախադասությունը գրելու համար դիմեր այնպիսի մեծ կեղծիքի և գիտակցաբար հակապատմական և հակաժամանակագրական մի սուտ սարքեր։ Ընդհակառակը, երևում է, որ Խորենացին այստեղ դժվարության առաջ է եղել կանգնած, երկու տեսակ՝ իրար հակառակ աղբյուրների հանդեպ, և չորս հեղինակների միաբերան վկայության ճնշման տակ ստիպված է եղել Արտաշեսին վերագրելու Կրեսոսի ձերբակալությունը։ Բայց երևում է, որ նա կատարելապես համոզված չէ այդ չորս աղբյուրների անկասկածելի ճշմարտությանը, ուստի բավականացել է իր պատմությունը ամբողջացնելու համար լոկ հիշատակելով Կրեսոսի ձերբակալությունը Արտաշեսից, առանց մանրամասն նկարագրության։ Այս էլ պետք է նկատել, որ Խորենացին հազիվ թե տեղեկություն ունենար այն աշխարհագրական տեղերի մասին (տե՛ս ծան. 143), որոնք հիշատակվում են Փլեգոնիոսին վերագրված հատվածում, ուրեմն և չէր կարող ինքը շարադրել այս հատվածը։ Խորենացու ակներև սխալն այն է, որ նա հիշյալ չորս հեղինակների «Պարթև Արտաշեսին» նույնացնում է Հայոց Արշակունի թագավոր Արտաշեսի հետ, երևի մտածելով, որ այս վերջինն էլ կարող էր կոչվել Պարթև՝ սերված լինելով Պարթևաց թագավոր Արշակ Մեծից։

Առհասարակ այս Արտաշես թագավորի պատմությունը (որ օտարազգի պատմագիրներից չի հիշվում) ներկայացնում է պատմական հիշողությունների մի խառնուրդ մի քանի թագավորների կյանքից։ Այսպես՝ Էլլադա արշավելը, ծովը ցամաք դարձնելը հիշեցնում են Քսերքսեսի արշավանքը Հունաստանի վրա. կուռքերի արձանները Հայաստան փոխադրելը հիշեցնում է Տիգրան Մեծի

Փորը Ասիային տիրելը, ծովը նավերով լցնելը և վերջը օտարության մեջ մեռնելը զորքերի ապստամբության պատճառով՝ հիշեցնում են Միհրդատ Եվպատորին։ Զարմանք չէ ուրեմն, որ հիշողությունների այս խառնուրդի մեջ մտած լինի նաև հիշողությունը Կյուրոսի՝ Կրեսոսին ձերբակալելու մասին։ Սրանց բոլորի աղբյուրը ժողովրդական հիշողություններն են։

143. Այստեղ հիշատակված են մի շարք հին ազգարհագրական և պատմական անուններ։ Հելլեսպոնտոս այն նեղուցն է, որ միացնում է Սև ծովը Մարմարա ծովի հետ։ Բրակիա— Հունաստանից հյուսիս ընկած երկիրը. այժմ այնտեղ են Բուլղարիան և Ռումելիան։ Էլյադա—լծկհանուր անուն Հին Հունաստանի։ Թեսալիա (սովորաբար Թեսաղիա, հմմտ. ծանոթ. 33)—նահանգ Հյուսիսային Հունաստանում։ Փոկիա, Լոկրիա (Ղովտրացիք), Բեոտիա—նահանգներ Միջին Հունաստանում։ Մեկը մյուսին կից։ Լակեդեմոնիա—նահանգ Հարավային Հունաստանում, հայտնի Սպարտա անունով։ Եթովպիա—Եգիպտոսից հարավ ընկած երկիրը, որտեղ նեգրոսի ակոմքներն են. այժմ՝ Հաբեշստան։ Սկյութացիք—հնումը վայրենի թափառաշրջիկ ժողովուրդ, որ սփռված էին հյուսիս-արևելյան Եվրոպայից մինչև հյուսիս-արևմտյան Ասիա։ Մասքութները կամ Մասագետները Սկյութական ցեղին պատկանող ժողովուրդ էին, որ ապրում էին Կասպից ծովից արևելք։ Պատմական անունները Հին Պարսկաստանի Աքեմենյան հարստության լորս թագավորներն են. Կյուրոս Աքեմենյան հարստության հիմնադիրը (մեռավ 529-ին ՆՔ.), Կամբյուս—նրա հաջորդը (529—522), Դարեհ (Դարայավուշ) Վշտասպյան, նրա հաջորդը (521—485)։ Քսերքսես—Դարեհի հաջորդը (485—465)։ Այս թագավորների արշավանքները և կրած անհաջողությունները, որ հիշատակվում են այստեղ բնագրում՝ պատմական իրողություններ են։

144. Այս Անին Բագրատունյաց մայրաքաղաք Անին չէ Շիրակ գավառում, Ախուրյան գետի վրա, որ ներկնացուն բոլորովին հայտնի չէ, այլ հին քերդ է Դարանաղի դավառում, Բարձր Հայքում, որտեղ ըստ Փավստոսի թագվում էին Հայոց Արշակունի թագավորները։ Հաճախ կոչում է և Հանի, և ավելի ուշ դարերում՝ Կամախ։

145. Հաշտից տեղիք հայացրած ձև է Աշտիշատ կամ Հաշտիշատ անվան, որ պահպանվել է ըստ ժողովրդական ստուգաբանության նշանակում է հաշտերի (զոհերի) քաղաք։

146. Պաղեստինացոց երկիրը Հրեաստանն է։ Պտղոմեոս Ավլերի ավագ դուստրն էր, որ իր հոր կտակի համաձայն պետք է թագավորեր նրանից հետո, ամուսնանալով իր փոքրահասակ եղբոր հետ։ Արկածից կյանք ունեցավ, վերջը ինքնասպանության գործեց։ Նրան նվեր տարավ Անտոնիոսը Հայոց Արտավազդ թագավորին շղթայակապ— Իսկ թե ի՞նչ հանցանք է գործած եղել Դիոնիս որդին Արտաշեսի դեմ՝ հայտնի չէ. ինքը Պատմահայրն էլ բան չի ասում այս մասին։

147. Պտղոմայիդ. այստեղ անտարակուս Պաղեստինի Պտղոմայիդ ծովեզերյա քաղաքն է. Տյուրոսից մոտ 40 կմ դեպի հարավ։ Այժմ կոչվում է Ակքա։

148. Այս «հելուզակ Վայկունը» Հռոմայեցիների լուկուլլոս զորավարն էր, որ առանց պատերազմ հայտարարելու, հանկարծակի հարձակվել էր Հայաստանի վրա, որի պատճառով արժանացել է հելուզակ-ավազակ կոչման. (Տիգր. Բ, եր. 92)։ Բայց թե ինչո՞ւ է Վայկուն կոչված՝ հայտնի չէ։ Ակագ.

Մանանդյանը (անգ) կարծում է, թե դա նույն Լուկուլլոս անունն է, որ աղճատված ձևով պահվել է հայ ժողովրդական ավանդության մեջ։ Այսպիսի աղճատում դժվար է ենթադրել։ Դուցե իրոք եղել է և մի նշանավոր ավազակ այս անունը կրող, որի հետ շփոթել կամ նույնացրել են Լուկուլլոսին. այս ենթադրությունը հավանական է դառնում նրանով, որ լեռը նրա անունով շարունակել է կոչվել Վայկունիք։

149. Տիգրան Մեծի պատմությունը Խորենացու մոտ շատ անբավարար է և գաղափար անգամ չի տալիս բուն պատմական իրականության մասին։ Ամենակարևոր անցքերը, որոնք վճռական դեր կատարեցին Տիգրանի պատմության և նրա բախտի մեջ, ինչպես են ճակատամարտը Տիգրանակերտի մոտ, այս քաղաքի առումն ու ավերումը Լուկուլլոսի ձեռքով, Լուկուլլոսի հետագա պարտություններն ու նահանջը, Պոմպեոսի գալը և Տիգրանի նրանից հաշտություն խնդրելը— անցքեր, որոնք տեղի ունեցան 69—66 թվ. ՆԷ.—բոլորովին չեն հիշվում Խորենացու մոտ։ Ավելի բավարար են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Տիգրանի գործունեությունների պաղեստինում, Ասորիքում։ Սրա պատճառն այն է, որ Խորենացին Տիգրանի պատմության համար իրրև աղբյուր է ունեցել միայն Հովհաննոսին, որի դրվածքների գլխավոր նյութն էր Պաղեստինի պատմությունը, բայց ոչ Տիգրանի։ Ուրիշ բազմաթիվ հունական ու լատինական աղբյուրներ (որոնց քանկը բերված է Տիգրան երկրորդ աշխատության մեջ) անհայտ են մնացել Խորենացուն։ Նույնիսկ այն հիշողությունները, որ հայ ժողովուրդը պահպանել էր այս թագավորի կյանքի և վերանորոգչական գործունեության մասին՝ Խորենացին անգիտակցաբար վերագրել է Տիգրան Ա Երվանդյանին։ Բարեբախտաբար ներկայումս մեզ համար մատչելի կարծավ Տիգրան Մեծի մանրամասն պատմությունը՝ ակագ. Մանանդյանի «Տիգրան երկրորդը և Հռոմը» գիտական աշխատության շնորհիվ, որը հիմնված է բոլոր հին և նոր աղբյուրների համեմատական ուսումնասիրության ու քննության վրա։

150. Սինկդիտոս, հուն. σύγκλητος համաժողով, ժողով, որ գործ է ածվել նաև նշանակելու համար Հռոմայեցոց ծերակույտը, Senatus. Խորենացին գործ է ածել հունարեն բառը՝ հետևելով իր աղբյուրին, Հովհաննոսին։

151. Շամշատ-գլխավոր քաղաք Ասորիքի Կոմագինե նահանգի, Եփրատի վրա, Կապադովկիայի սահմանակից, Եգեսիայից հյուսիս։ Շամշատ՝ այս քաղաքի ասորական արտասանությունն է. հունական արտասանությամբ կոչվում է Սամոսատա (Σαμόσατα). ինչպես գործ է ածել Կորյունը և այստեղ Հովսեպոսը, Խորենացու աղբյուրը։

152. Արտավազդից հետո մինչև Վաղարշ, Խոսրով Մեծի հայրը, օտար բազգի պատմագիրներր հիշում են մի շարք հայ թագավորներ զանազան ազգերից, որոնց մասին ոչ մի հիշատակություն չկա Խորենացու և նրա հետևողությամբ հաջորդ հայ պատմագիրների մոտ։ Այս ժամանակաշրջանում (34 ՆԷ.—211 ՀՔ.) ըստ Խորենացու և հաջորդ հայ պատմագիրների՝ Հայաստանում տիրում են մի շարք հայ թագավորներ Արշակունյաց ցեղից, որոնք հայտնի չեն օտարազգի հեղինակներին։ Համմ. սինխրոնիկ ցանկը։ Այս ժամանակի հայ թագավորների պատմությունն ըստ օտար աղբյուրների (տե՛ս Գարագաշյան, Քննական պատմություն, մասն Բ, գլ. ժ—ԺԲ, էջ 169—277)։

153. Արշամ կամ Արջամ անունով թագավոր և ասմասարակ մարդ չի եղել. այս անունը արդյունք է մի խոշոր սխալի։ Խորենացին Եվսեբիոսի եկե-

ղեցական պատմության մեջ կարդալով Աբգարի գրած թուղթը Քրիստոսին՝ թղթի վերնագրում գտել է «Աբգար Արշամայ իշխան աշխարհիս», որից բնականաբար եզրակացրել է, թե Աբգարի հոր անունն եղել է Արշամ կամ Արշամ, թեպետ ինքն էլ հիշում է, թե այս Արշամին ասորիներից ոմանք կոչում են Մանովա, ուրեմն և Աբգարի հայրը կոչվելիս է եղել Մանով, ինչպես որ իրոք եղել է։ Իսկ Արշամը աղավաղություն է ասորական ukkama բառի (որ կարող է կարդացվել նաև akkama), որ նշանակում է թուխ, սև։ Սև բառը մակդիր է Աբգարին—Աբգար սև։ Այս սխալը շատերն են ավել։

154. Պատրիացիք, Պատրիա հայտնի չէ։ Էմին (ծանոթ. 205) համարում է, թե գուցե սխալ է հասկանալ Պետրա քաղաքը Արաբիայում, որ հայտնի վաճառաշահ քաղաք էր հռոմայեցիների տիրապետության ժամանակ Պաղեստինում։ Այս Պետրան այժմ ավերակ է։

155. Փյունիկե—երկիր Միջերկրական ծովի արևելյան ափին, Պաղեստինից հյուսիս, նշանավոր Տյուրոս և Սիդոն քաղաքներով։ Ասորիք—երկիր Հայաստանից հարավ, Եփրատի և Տիգրիսի վերին ընթացքի միջև, Մծբին, Եդեսիա և այլն քաղաքներով։— Միջագետք—Եփրատի և Տիգրիսի միջև ընկած երկիրը, Ասորիքից հարավ, Նինվե և Բաբելոն քաղաքներով։

156. Ելևթերոպոլիս քաղաք էր Պաղեստինում, Հուդայի բաժնում։ Բեթգուբրին նույն քաղաքի անունն է ասորական լեզվով (Բեթգաբրիս), այժմ Բեյթ-Ջիբրին (Լաբուբնա, Աղգասյանում)։

157. Եվսեբիոսի Եկեղեցական պատմության հայերեն թարգմանության մեջ (Ա, գլ. ժգ) Աբգար Արշամա, փոխանակ Աբգար Ուկամա, այսինքն Աբգար սև. տե՛ս ծանոթ. 153։

158. Հռմ. ժԲ 20։

159. Կենդանագիր պատկեր։ Կենդանագիր բառը տառացի թարգմանություն է հունարեն ζωγραφικός բառի ζωγραφεῖν բայից, որ նշանակում է կենդանագրել, այսինքն կենդանի արարած նկարել, մարդու պատկերը քաշել ներկերով։ Հունարեն բարդ բառի մեջ կենդանի բառի իսկական նշանակությունը չհասկանալով՝ հին մարդիկ ուրիշ մեկնություն են տվել նրան, իբրև թե կենդանավույն նկարված, և այս թյուրիմացությունը առիթ է տվել ստեղծելու առասպելը՝ այս պատկերի անձեռագործ լինելու մասին (իբրև թե Քրիստոս դաստառակը տարածել է իր երեսի վրա և իր պատկերը տպավորվել է նրա վրա). Նույնիսկ Լաբուբնան, որ ժամանակով մերձավորագույնն է՝ պարզ գրում է, թե Անանը, որ թագավորի նկարիչն էր՝ ընտիր դեղերով նկարեց փրկչի պատկերը և բերեց Աբգարին, առանց որևէ հրաշք հիշատակելու։

160. Եվսեբիոսի հայերեն թարգմանության մեջ, որից քաղում է Խորենացին Աբգարի պատմությունը՝ իշխանը կոչված է Պոդագրոս (ποδαγρός), որ նշանակում է պոդագրայով հիվանդ, իսկ պոդագրա հունարեն բառ է (ποδάγρα), որ նշանակում է ոտնացավ։

161. Լաբուբնան, որ ասորերեն գրի է առել Աբգարի դարձի պատմությունը բոլոր մանրամասնություններով, որ և ծառայել է աղբյուր Եվսեբիոսի պատմության և Խորենացուն, բոլորովին տարբեր է պատմում Թադեոսի կյանքի վերջին մասը։ Նրա ասելով՝ Թադեոսը Եդեսիայում հիվանդանալով՝ օրհնում է ժողովրդին և մեռնում ու թաղվում է Եդեսիայում։ Իսկ Լաբուբնայի հին հայերեն թարգմանությունն այստեղ ասում է, թե Թադեոսը օրհնեց ժողովրդին և ճանա-

պարճ ընկալ դեպի արևելք: Այս վերջին նախադասությունը հիմք է ծառայել ստեղծելու Թադեոս առաքյալի վկայաբանությունը, ըստ որի՝ Թադեոսը Հայաստանում քարոզում է քրիստոնեական հավատը, դարձի է բերում Սանատրուկի դուստր Սանդուխտին և Սանդուխտի հետ նահատակվում է Սանատրուկի ձեռքով: Սրա վրա էլ հիմնված է ավանդությունը՝ Հայոց եկեղեցու առաքելական լինելու մասին և Սանատրուկի առաքելասպան մակդիրը Փավստոսի մոտ: Խորենացին լիովին ենթարկված է այս հայկական ավանդությունների ազդեցության և իր կողմից մի քայլ էլ առաջ է դնում՝ ասելով, թե Աբգարը Թադեոսին ուղարկեց Հայաստան Սանատրուկ թագավորի մոտ հատուկ թըղթով:—Օրմանյան (Ազգապատում Ա, էջ 28) ջանք է անում ցույց տալ, թե Թադեոսի Հայաստան գալու վարկածը կարող է կատարված լինել նույնիսկ ասորերեն բնագրում և ոչ թե հայ թարգմանչի հանդգնությունն է, բայց համոզիչ չեն նրա խորհրդածությունները:

162. Բնագիրն այստեղ ունի «իբրև յայսմանէ մարդոյն արժան է քաւել զԱստուածս»: «Քաւել» բառի նշանակությունն այստեղ պարզ չէ: Էմինը թարգմանել է „человек берет на себя оправдать божество". Նոր տպագրության մեջ „человеку предоставлено оправдать божество". Ստեփանեն թարգմանել է. «Կարծես թե կվայելեր Աստծուն արդարացնել մարդի ձեռքով»: Ըստ Ստեփանեի (ծան. 326) Լանգլուան թարգմանել է. „que Dieu soit accepté par l'homme", իսկ Լաուերը՝ „da es von jener Menschheit abhängt Gott zu richten": Մենք ավելի հարմար համարեցինք թարգմանել «նվիրագործել» բայով:

163. Բարդուղիմեոս առաքյալի նահատակության տեղը Խորենացին այստեղ կոչում է Արեբանոս, իսկ մի ուրիշ տեղ (Աստվածամոր պատկերի պատմությունը, Թուղթ առ Սահակ Արծրունի, Մատեն. Խոր. էջ 295) կոչում է Ուրբանոս: Օտար հեղինակները կոչում են Ալբանոս, որ Օրմանյան (Ազգապ. Ա, էջ 29) նույնացնում է Աղբակի հետ Բաշքալե քաղաքի մոտ, որտեղ գտնվում է Բարթուղիմեոս առաքյալի գերեզմանն ըստ ազգային ավանդության:

164. Սիմոն Կանանացի առաքյալի (խոսքը միայն սրա մասին կարող է լինել և ոչ Սիմոն Պետրոսի) Պարսկաստանում քարոզելու մասին ուրիշ ոչ մի տեղեկություն չկա, բացի Խորենացուց, որ ինքն էլ բերում է ենթադրաբար՝ ոմանց պատմածի հիման վրա և ասում է, թե ուրիշ տեղեկություն չունի, բացի այն, որ նա նահատակվել է Վերիոսփորա կոչված տեղում: Վերիոսփորա անունով տեղի անունն էլ անհայտ է: Օտարազգի հեղինակների ասելով՝ Սիմոն Կանանացին նահատակվել է Բրիտանիայում («Վրիտացոց աշխարհ» կամ «Վրիտանացոց երկիր»): Բայց այս բառերից չէր կարող աղավաղությամբ ծագել Վերիոսփորա. մանավանդ որ, ինչպես Խորենացու խոսքերից հասկացվում է, Սիմոնը, «որ Պարսից վիճակեցաւ», նահատակվել է Պարսկաստանում, ուրեմն Վերիոսփորան էլ Պարսկաստանում պետք է գտնվեր:

165. Դայեակ, պահլ. dāyak, նշանակում է ծծմայր, սնոտու, (Ներկայումս նշանակում է միայն մանկաբարձ կին): Բայց հաճախ գործ է ածվում նաև տղամարդկանց մասին՝ դաստիարակ, խնամակալ նշանակությամբ: Հին ժամանակ սովորություն կար, որ թագավորը իր որդիներին հանձնում էր

որևէ իշխանի դաստիարակության։ Իշխանը թագավորազն սանին սնուցանում էր իր տանը իր զավակների հետ, և եթե ինքը ունենում էր ծծկեր երեխա՝ թագավորազն և իշխանազն երեխաները միևնույն կնոջ կաթով էին մեծանում, և այս կերպով նրանք դառնում էին կաթնեղբայր։ Մեծանալիս՝ թագավորազնը եթե թագավոր էր դառնում՝ իր մոտ էր բերում իր կաթնեղբորը իբրև մտերիմ։ Եղիշեն (Բ, եր.) դառնապես գանգատվում է, ասելով, Հայոց նախարարներից ոմանք նրա (Հազկերտ Բ-ի) եղբայրներին սնուցել էին իրենց մայրենի կաթով, բայց նա ամենից խիստ նրանց հետ էր վարվում։ Նշանակում է Պարսից թագավորները նույնիսկ հայ նախարարներին հանձնում էին իրենց որդիների դաստիարակությունն ու խնամակալությունը։

Թագավորների օրինակով ավագ իշխաններն էլ իրենց որդիներին հանձնում էին կրտսեր իշխանների կամ սեպուհների դաստիարակության։

Խորենացու Պատմության մեջ մի քանի օրինակներ կան, թե ի՛նչպես դայեակները սիրում էին իրենց սաներին, հավատարիմ էին նրանց և ամեն վտանգ հանձն էին առնում նրանց փրկելու վերահաս վտանգներից։

166. Ձեռագիրներում՝ Ղերուբնա, փոխանակ Ղերուբնա, Լաբուբնա։ Նրանից մնացել է մի անվավերական պատմություն Աբգար թագավորի, Թադեոսի քարոզության և այլն։ Նա իրան կոչում է Աբգարի Ափշադարաց քարտուղարի որդի, ուրեմն եղել է ժամանակակից Աբգար թագավորին։ Բայց քննությունը ցույց է տալիս, որ նրա պատմությունը չէր կարող հորինվել առաջ քան Գ դարը։ Բայց և այնպես այս գրվածքը ամենահին և միակ աղբյուրն է Աբգարի դարձի պատմության, որից օգտվել են և՛ Եվսեբիոս Կեսարացին, և՛ Խորենացին։ Նա շատ վաղուց կորած էր համարվում, և Խորենացու հիշած Ղերուբնան կասկած էր հարուցանում իբրև անծանոթ հեղինակ. բայց անցյալ դարի կեսերին Փարիզի Ազգային մատենադարանի հայկական գրչագիրների մեջ գտնվեց մի ձեռագիր, որ կրում էր վերնագիր. «Թուղթ Աբգարու թագաւորի Եդեսիայի քաղաքին... և վերջում գրված էր թե՝ «յՈւռհայ քաղաքի Հղրուբնեա որդի Անակայ, որդւոյ Աբշադարայ դպրի թագաւորին, գրեաց զամենայն ինչ, որ միանգամ իրք եղեն Աղեխս...։ Անտարակույս, Խորենացու հիշած Ղերուբնայի ձեռագիրն էր։ Նույն ժամանակներում գտնվեց նաև նրա ասորերեն բնագիրը, երկու թերի օրինակներով. (Հայերեն հին թարգմանությունը ամբողջ է)։ Ասորերեն բնագիրը անգլերեն թարգմանության հետ տպագրվեց 1864-ին, իսկ հայերեն թարգմանությունը՝ 1868-ին։ Այնուհետև եղան ուրիշ տպագրություններ և թարգմանություններ։

167. Պասիփայէ, հունաց դիցաբանության մեջ Կրետեի առասպելական Մինոս թագավորի կինն էր, որ ամուսնուց ունեցավ մի քանի զավակներ. բայց նա խառնակվեց նաև Պոսեյդոն աստծուց Մինոսին ուղարկված սպիտակ ցուլի հետ, որից ծնեց Մինոտավրոս հրեշին, մարդկային մարմնով և ցուլի գլխով, որ մարդու մսով էր կերակրվում։ Նրան սպանեց Թեսևսը։ Խորենացին Երվանդին և Երվազին համեմատում է այս Մինոտավրոսի հետ այն հիման վրա, որ նրանց մայրը օրինավոր ամուսին չուներ (որովհետև ոչ ոք սիրտ չէր անում նրան կին առնել), այլ ծնել էր օտար մարդուց այսինքն՝ «անկարգ, ապօրինի խառնակություններից»— Երվանդի մորը Խորենացին որակում է իբրև «հարստի, խոշորադեղ, վարար»։ Առաջին բառը Արմատ. բառարանը հանում է հարուստ բառից՝ նշանակությամբ զարգացած, և թարգմանում է հաստամարմին, վիթ-

խարի։ Այսպես էլ թարգմանել են Էմինը „огромного роста". Սահակյանը՝ խոշոր մարմնով։ Բայց հազիվ թե համապատասխան՝ վիթխարի լինելը, մարմնի խոշորությունը խափանարար լիներ ամուսնանալու։ Մենք այս բառը համարում ենք պարսկերեն ֆերտուտ, որ նշանակում է «հնացեալ և եղծեալ կամ մաշեցեալ», նաև թարշամեալ (բառ. Գէորգ դպիր), կամ մեր այժմյան լեզվով՝ պառաված, խոփած, որ բոլորովին հարմար է գալիս տեղին (պարսկական ֆ-ի հայերենում հ-ի փոխվելն ընդհանուր օրենք է)։

168. «Բայց առանց թագադիրի Բագրատունյաց ցեղիցն»։ Այս նախադասությունն անհրաժեշտ է եղել՝ ցույց տալու համար, որ Երվանդը օրինավոր թագավոր չէր։ Բագրատունի իշխանից թագադրվելը լոկ ձևական արարողություն չէր, այլ իրավաբանական կարևոր ակտ, ըստ որում ավագ նախարարը (Բագրատունին) թագ դնելով թագավորի գլխին՝ իր կողմից և մյուս նախարարների կողմից պաշտոնապես ճանաչում էր նրան օրինավոր թագավոր։ Այստեղ, երբ Խորենացին հայտնում է, թե բոլոր նախարարները միաբանելով Երվանդին թագավորեցրին (առանց նախարարների համաձայնության՝ նա չէր էլ կարող թագավորել), հարկ է համարել վերոհիշյալ խոսքերով ցույց տալ, թե Երվանդը այնուամենայնիվ օրինավոր թագավոր չէր։ Իսկ թե ինչու Բագրատունի իշխանը չհամաձայնեց թագադրել՝ սրան երկու պատճառ է նկատվում. առաջինը՝ որ Երվանդը Արշակունի չէր և երկրորդ՝ որ Բագրատունիք Սանատրուկի օրինավոր հաջորդ էին համարում Սանատրուկի որդուն, Արտաշեսին, որ կոտորածից ազատվեց իր դայեակ Սմբատ Բագրատունու ձեռքով։

169. Բնագրում — «որդւոցն չար նորա թագաւորութեանն սնանի ի Մարս»։ Վերջին բառը տարակուսանքի տեղիք է տալիս. նա նշանակում է Մարաստան և Մարեր։ Էմինը թարգմանել է. «в стране Маров», Սահակյանը՝ «Մարերի մեջ», Վիեննացիները «in Medie» Մարաստանում։ Բայց ճիշտ էլ անտեղի են, որովհետև ինչպես Խորենացին ասում է, Սմբատը Արտաշեսի հետ Պարսից թագավորի մոտ գնաց, այսինքն Պարսկաստան։ Մենք թարգմանեցինք՝ Մարսում, համարելով այս վերջինը մի հատուկ շրջանի անուն Պարսկաստանում, որտեղ գտնվում էին Բաս և Ոզոմն գավառները, Պարսից թագավորի որդիների և Արտաշեսի բնակության տեղը։ Մարս հիշում է Խորենացին և Բ. Կ. որոշելով տեղը Սոհունք գավառում։ Մարսի մասին տե՛ս Ք. Պատկանյան։

170. Վեսպասիանոս և նորա որդին Տիտոս Հռոմայեցիների կայսրներ էին 69—78, 79—81 թվականներին։ Հայտնի են Հրեական պատերազմներով, երբ Երուսաղեմը և Սողոմոնի տաճարը կործանեցին, որ պատճառ դարձավ հրեաների ցրվելուն։

171. Բնագրում գործ է ածված «Հանդոյց ի հանգուցէ փախչել»։ Այս անսովոր ոճը պատահում է միայն այստեղ և կեղծ Կալլիսթենեսի Աղեքսանդրի վարքում, որ համարվում է դարձյալ Խորենացու թարգմանություն։ Արմատ. բառարանը բացատրում է — ճամբորդի ձին փոխելու տեղը. ճանապարհի կայարան։ Քանի որ նույն միտքը արտահայտված է բնագրի նախորդ խոսքերում («իջևաններում նոր-նոր ձիեր հեծնելով»)՝ ուստի չկրկնելու համար մենք «հանդոյցը ի հանգուցէն» թարգմանեցինք անընդհատաբար։

172. Վենետիկի տպագրությունը ունի ի վերա դիակացն բանակեցաւ. քննական տպագր. ունի «ի վերայ դիականցն բանակեցաւն»։ Երկուսից էլ այն-

ղեն է հասկացվում, իբրև թե Ծովանը բանակ է եղել դրած դիակների վրա։ Այնինչ խոսքը Մարաց զորքերի մասին է, որոնք Ծովանդի բանակի կողմը գալով մթության մեջ դիակների վրա բանակ դրին։ Բնագիրը պետք է ուղղել ըստ-նակիցանձ, ըստ տասներկու ձեռագրի։

173. Մառայի նշանակության մասին տե՛ս ծանոթ. 51։

174. Ուղլուղ քուրմ և նրա պատմությունը ուրիշ տեղ հիշված չեն։

175. Այլաբանություն ասում են այն խոսքին, որ երկու իմաստ ունի. մեկը արտաքին և մյուսը ներքին՝ որ ծածկված է արտաքինի տակ։ Սրանից՝ այլաբանությունը ճշմարտել նշանակում է այլաբանության ներքին իմաստը երևան հանել. ցույց տալ, թե այլաբանության տակ ի՛նչ ճշմարտություն է թաքնված։ Խորենացին առասպելները, վիպասանների երգերը համարում է այլաբանություն և սովորաբար աշխատում է նրանց ճշմարտել (բայց ոչ միշտ, օրինակ՝ նա առանց ճշմարտելու է թողնում «Երկնէր երկին», Ա, լա, տե՛ս նաև «Սաթենիկը» Ա, լ և այլն)։ Այսպես վարվելով նա կրկնակի սխալի մեջ է ընկնում. նախ՝ որ իբրև այլաբանություն է ընդունում ոչ այլաբանությունը և երկրորդ՝ որ այլաբանությունը ուղիղ չի մեկնում։ Ամենից լավ այն տեղերն են, երբ Պատմահայրը բերում է անփոփոխ ձևով առասպելը կամ վիպասանների երգերը և կցում է իր մեկնությունը, այսինքն ճշմարտում է։ Այս դեպքերում մենք անաղարտ կունենանք բուն առասպելները կամ վիպասանների երգը, որ մենք կարողենք ընդունել այլաբանություն կամ ոչ, և մեկնել ինչպես մենք այժմ հասկանում ենք։ Խորենացու մեկնությունը այսպիսի դեպքում չի վնասում, այլ ընդհակառակը, օգտակար է, որովհետև մեզ միջոց է տալիս ծանոթանալու Խորենացու կամ նրա ժամանակի կարծիքներին այդ առասպելների մասին։ Դժբախտաբար Խորենացին մեծ մասամբ այսպես չի վարվում. նա բուն առասպելը կամ վիպասանների երգը չի բերում, այլ միայն նրանց մեկնությունը՝ ինչպես ինքն է հասկանում, և մենք զրկված ենք հնարավորությունից ստուգելու, թե ո՛րքան արդյոք հիրավի այլաբանություն է եղել այն առասպելը կամ վիպասանի երգը, որ նա իբրև այդպիսին է ընդունել, և ո՛րքան ուղիղ կամ սխալ է նրա տված բացատրությունը։ Համենայն դեպս այս գլխի ներածությունից երևում է, թե ո՛րքան ընդարձակ ծավալ են ունեցել վիպասանական երգերը, որոնք ընդգրկում են Արտաշեսի ամբողջ կյանքը (նաև նրա մանկությունը, ինչպես և նրա որդու՝ Արտավազդի կյանքը)։ Սրանց մանրամասն ուսումնասիրությունը տե՛ս Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները» գրքում։

176. Ալանները սարմատական ցեղին պատկանող ռազմիկ ժողովուրդ էին, որ բնակվում էին Կովկասյան լեռնաշղթայի արևելյան կողմերում, Կասպից ծովից դեպի արևմուտք։ Նրանք հայտնի են դեռ մեր թվականությունից առաջ։ Պոմպեոս զորավարը Միհրդատին հալածելիս 65 թվին Ն.Ք. նրանց հետ պատերազմ ունեցավ և հաղթեց։ Ժամանակի ընթացքում նրանք զանազան ընդհարումներ ունեցան Հռոմայեցիների, հետո Հոների հետ և ցրվեցին զանազան կողմեր—դեպի Բալթյան ծովը, դեպի արևմուտք, մի մասը մինչև անգամ անցավ Աֆրիկե։

177. Խորենացին այլաբանություն չի կոչում և չի ճշմարտում Ալանաց թագավորի խոսքերը—«Ո՞րտեղից պիտի տա...», բայց «Հեծավ արի արքայն...» համարում է այլաբանություն և ճշմարտում է. իբր թե Արտաշեսը շատ լայքա (—կարմիր մորթ) և շատ ոսկի է տալիս վարձանք և կին է առնում Սաթենիկին,

որ երգի «շիկափոկը» կարմիր լայթան է նշանակում, իսկ «ոսկեօղը»՝ ոսկինե։ Բայց շատ հավանական է, որ «Հեծյալ արի արքայն» նույնպես այլաբանություն չէ, այլ իրական անցքի նկարագրություն։ Եթե Ալանաց թագավորի խոսքերը արձագանք են հին ժամանակ գոյություն ունեցող սովորության—վարձանքով կին գնելու՝ «Հեծյալ արի արքայն» էլ արձագանք է հին ժամանակ նույնպես գործադրվող սովորության—առևանգությամբ կին առնելու, որ նույնպես համարվում էր օրինական միջոց։ Այս երկու միջոցներն էլ մինչև այժմ գոյություն են պահպանում քրդերի և ուրիշ հետամնաց ազգերի մեջ։ Օրիորդի և Տիկինի մասին տե՛ս ծանոթ. 81։

178. Բնագրում գործ է ածված «մնացեալ ոտիցս» անհասկանալի դարձվածքը։ Ստեփանեն թարգմանել է՝ «ոտների հաստատ ընթացքով»։ Էմինը բոլորովին բաց է թողել։ Ձեռագրերից մեկը «մնացեալ» բառի դեմ լուսանցքում ծանոթություն ունի՝ «ամանրաքայլս»։ Մենք մոտավորապես թարգմանեցինք՝ «շնորհալի քայլվածքը»։

179. Բնագրում գրված է «սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն՝ որպես դրակոնտիկոն ի վերայ ոսկւոյ և ի մէջ մարգարտի ծագէր»։ Դրակոնտիկոն բառը երկու թարգմանիչներն էլ դուրս են գցել և ամբողջ ֆրազը սխալ թարգմանել։ Էմին—„в глазах у него были тонкия кровяныя жилки, какия встречаются на золоте и на жемчуге“: Նույնպես և Ստեփանեն—«և աչքերում փոքր արյան երակ ուներ, ինչպես պատահում է ոսկու վերա և մարգարտի մեջ»։ Դրակոնտիկոն հունարեն բառ է δρακοντικόν, որ տառացի նշանակում է փոքր վիշապ։ Բայց բառարաններում չկա։ Հյուբշման բերում է մի ուրիշ ձև այս բառի— δρακοντίας, որ նշանակում է մի տեսակ ազնիվ քար։ Նա հիշում է նաև, որ Արևելագիտության գերմ. ընկերության օրգանում (ZDMG) դրակոնտիկոնը բացատրված է իբրև եղնգնաքար (սարդոնիկս)= կարմիր թանկագին քար։ Դրակոնտիկոն բառի այս նշանակությունը վերականգնելուց հետո հասկանալի կդառնա և ամբողջ ֆրազի միտքը։ Սմբատի աչքերի մեջ արյունի նշանները Պատմահայրը համեմատում է կարմիր թանկագին քարի, որ ագուցված է ոսկու և մարգարտի մեջ։

180. Բնագիրն ունի, «որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար դաստ, որ է Գեղմանց լեառն»։ Բոլոր թարգմանիչները Պատիժահարը հասկացել են իբրև հայերեն բառ, ածական անուն=պատժահար, պատժի ենթարկված, իսկ Գեղմանց բառն ընդունել են իբրև հասարակ անուն— գեղմն, որ նշանակում է բուրդ և ըստ այնմ սխալ են թարգմանել այս ֆրազը։ Ուղիղ թարգմանել է միայն Ստեփանեն, օգտվելով այն բացատրությունից, որ Ք. Պատկանյանը տվել է պատիժահար ու գեղմն բառերին, (ռուս. թարգմ. Աշխարհացույցի, էջ 59—62)։ Ստեփանեի ամփոփումից (ծանոթ. 380) երևում է, որ պրոֆ. Պատկանյանը գեղմն-ը հասկանում է իբրև հատուկ անուն, որ զանազան ձևերով գործ է ածված մեր հին մատենագիրներից Գելան, Գիլան, Գեղում, Գեղումն, Գելմն, Գեալմն և նշանակում է Գիլան գավառը և այնտեղ ապրող Գիլանցի ցեղը։ Պատիժահարն էլ ըստ Ք. Պատկանյանի, հին պարսկերեն հատուկ անուն է լեռան, որ Ստրաբոնը կոչում է Πατισχορεῖς, իսկ Աքեմենյան արձանագրությունների մեջ patisuvaris։ Ըստ այս ուղիղ բացատրության թարգմանեցինք և մենք։

181. Հանի—ամրոց էր, որ կոչվում էր նաև Անի։ Տե՛ս ծանոթ. 144։

182. «Ի մեծէ կարակմէ»—կարակում նշանակում է տիղմ, տղմոտ։ Թարգմանիչները հեռացել են բնագրից։ Էմին թարգմանել է „ИЗ ТЯЖКИХ ОКОВ ЗАБЛУЖДЕНИЯ". Ստեփաննոս թարգմանել է «մեծ կապանքներից և բանտից»։ Մենք պահպանեցինք բնագրի արտահայտությունը։ Գուցե Խորենացին այսպես է կոչել Ջարեհի կալանքի տեղը՝ խոնավ և տղմոտ լինելու պատճառով։ Ադաթանգեղոսն էլ հիշում է նոր Վիրապի կարակում տիղմը։

183. Ահա դարձյալ մի տեղ, երբ Խորենացին առասպելը այլաբանությունն համարելով՝ ճշմարտում է նրան, բայց սխալ կերպով։ Առասպելը հիշում է. «Դոմանտ ոմն եկեալ», որ իսկապես ճիշտ է. Դոմետիոսը Կորբուլոնն է, Հռոմայեցիների զորավարը։ Խորենացին Դոմետը մեկնում է իբրև Դոմետիանոս կայսր, բայց որ նա անձամբ չէ եկել, այլ նրա հրամանը և զորքերը առասպելները նրա անունով են կոչել։

184. Հրեաների մեջ սովորություն կա՝ նախնիքների անունը դնել ըստ հույսի, այսինքն հուսալով, որ եթե մեկի վրա դնեն մի քաջ նախնիի անունը՝ նա էլ նրա նման քաջ կլինի։ Նույն միտքը հայտնել է Խորենացին նաև Ա, իբ։

185. Ըստ Էմինի (ծանոթ. 259) Փելլան քաղաք էր Հրեաստանում Հորդանան գետից դեպի արևելք ընկած, որտեղ ժողովվեցին հրեաները Երուսաղեմի կործանումից հետո— Արիստոնը ապրում էր Ա դարի վերջերին և Բ-ի սկզբներին։ Նա գրել է Հրեաների ապստամբության պատմությունը Բարքոբայի առաջնորդությամբ։ Նրանից է քաղում Եվսեբիոսը իր պատմություն ապստամբության մասին և Խորենացին առնում է Եվսեբիոսից— Գալով Արիստոնի ուղևորելուն Արտաշես թագավորին և նրա մահն ու թաղումը նկարագրելուն՝ որանք ուրիշ տեղից հայտնի չեն։ Արտաշեսի շքեղ թաղման նկարագրությունը շատ նման է Հերոդես թագավորի թաղման նկարագրությանը Հովսեպոսի մոտ (Խալաթյանց, ЭПОС, էջ 310)։

186. Բնագրում «ի Մարսս», մի քանի ձեռագրերներ և հին տպագրություններն ունին «ի Մարսս», որ ավելի ճիշտ է թվում։

187. Հայերի հին թաղման ծեսի մեջ ձայնարկու կանայք նրանք էին, որոնք խոսքերով գովում էին ննջեցյալին, երգի հղանակով. նրանց պարտականությունը կոչվում էր մայր որբոց։ Իսկ լալկան կանայք կրկնում էին երգի խոսքերը և կրծում ու ազիողորմ լալիս։ Համմ. Գնևի մահվան կոծը Փավստոսի մոտ, Դ, ժե։

188. Արտավազդի այսպիսի մահը (խելագարվում, ձիուց վեր է բնկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում անհետանում) Խորենացու ճշմարտած պատմությունն է հաջորդող առասպելների—Արտավազդի՝ նախանձով մեռած հորը դիմելուն և վերջինիս անեծքին, ինչպես նաև պատավների զրույցին, թե նա արգելված է մի քարանձավի մեջ և այլն։ Խորենացուն հայտնի են եղել այս առասպելները, որոնցից նա իբրև իրականություն դուրս է բերել Արտավազդի եղերական մահը վերը հիշված կերպով։

Բայց իրողությունն այն է, որ այստեղ շփոթված են երկու անձ, մեկը պատմական Արտավազդը, Արտաշեսի որդին, և մյուսը մի առասպելական անձնավորություն՝ լեռան քարանձավում հավիտենապես շղթայված, որի մասին առասպելը տարածված էր բոլոր ժողովուրդների մեջ, սկսած Պարսկաստանից, փոքր Ասիայով, Կովկասյան լեռնաշղթայով մինչև Բուլղարիա և Հունաստան, և ամեն մի ազգի մեջ պատմվում էր մի առանձին վարիան-

տով (Տե՛ս В. Миллер, „Кавказские предания о великанах прикованных в горах“)։ Այստեղ էլ Խորենացին իրականն ու առասպելականը միացրել է մի անձի մեջ, ինչպես միացրել է իրական Արգամին առասպելական Արգավանի հետ կամ Տիգրան Ա-ի որդի Վահագնին Վահագն աստծու հետ։ Տես. Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ։

189. Պեգասոսը Հունաց դիցարանության մեջ թևավոր ձի էր, որ առաջ էր եկել զորգոններից մեկի՝ Մեդուզայի արյունից, որին սպանել էր Պերսեոսը։ Այս ձիուն բռնեց Բելլերոֆոնը չուր խմելու ժամանակ և նրան հնձած շատ քաջագործություններ կատարեց։ Երբ նա կամեցավ այս ձիով Օլիմպիոս թռչել՝ ձին նրան վեր պցեց, ինքը մենակ գնաց Օլիմպիոս և Զևսի ձին դարձավ, նրա որոտումներն ու կայծակները կրող։ Շատ է հիշեցնում Դավթի Քուռիկ Ջալալիին։

190. Գայլատվա ծովը մի փոքր լիճ է Դիադինից հյուսիս-արևմուտք, Մասխից արևմուտք, և այժմ կոչվում է Պալըդ-գյոլ (ձկան լիճ)։

191. Վարձակ—Քեթևաբարո կին, որ հասարակության առաջ երգում էր, պարում էր, նվագում էր, միմոսություններ էր անում։ Երբեմն գործ է ածված նաև բուն բառի նշանակությամբ։

192. Ողիսևսը Տրոյական պատերազմի հերոսներից մեկն է, հայտնի իր խորամանկությամբ։ Տրոյայի առումից հետո նա տասը տարի թափառեց ծովերի վրա, զանազան արկածների հանդիպեց. վերջը տուն հասավ։ Իր բացակայության միջոցին սեղեխները շրջապատել էին նրա կնոջը, Պենելոպեին և ցանկանում էին նրան կին առնել։ Ամեն օր կերուխումով սպառում էին Ողիսևսի ստացվածքը։ Ողիսևսը տուն վերադառնալով՝ իսկույն իր անձը չհայտնեց, այլ գաղտնապես պատրաստություններ տեսավ, 3—4 մարդու հայտնեց իր ով լինելը, և մի անգամ սեղեխներին մի սենյակում փակելով և անառիկ դիրք գրավելով՝ մեկիկ-մեկիկ նետով սպանեց բոլորին։ Նրա արկածները նյութ են կազմում Հոմերոսի Ողիսևսյանին։ Լապիթները վայրի ցեղ էին Թեսալիայում հեքիաթական ժամանակներում, ինչպես և Կենտավրոսները (տե՛ս ծան. 99)։ Հոմերոսը (Ողիս. ԻԱ) և ուրիշները հիշում են Լապիթաներին և նրանց կռիվը Պերիթոսի հարսանիքում, երբ Նրանց, Կենտավրոսները, հարբած, խնջույքի ժամանակ բռնաբարեցին բոլոր կանանց։ Թեսևոսը և Լապիթները նրանց մասամբ կոտորեցին և մասամբ հալածեցին։ Այս վերջին տեղեկությունը հաղորդում է Դիոդորոս Սիկիլիացին, որի պատմածը էմֆիմը (ծանոթ. 273) մեջ է բերում։ Համմ. և մեր ծանոթ. 99։

193. Բնագիրն ուներ՝ «Իբրատ, Սմբատ»։ Զեռագիրների մի խումբ Սմբատի տեղ ունեն Տրգատ, որ մենք էլ ընդունեցինք, քանի որ Սմբատը «խժժականա անուն չէ, այլ հրեական Շամբաան է՝ ըստ Խորենացու։ Այս ուղղումն առաջին անգամ առաջարկել է Միաբանը իր ուսումնասիրության մեջ, էջ 48։

194. Տիտոսը այստեղ Հռոմայեցիների այն կայսրը չէ, որ թագավորեց 79—81 թվ., այլ Տիտոս երկրորդ Անտոնինոսը, բարեպաշտ կոչվածը (ըստ Խորենացու՝ Անտոնինոս Ավգոստոս), որ թագավորեց 138—161։ Իսկ Պարթևների Պերոզ մականվանված թագավորը, որ Հունարեն կոչվում էր Վաղեգեսոս, պարսկերեն կոչվում էր Վաղարշ Բ և թագավորեց 121—148 թվ.։

195. Ղուկիանոս Կեսարը Անտոնինոսի որդեգրած Վերոսի որդին է, որ Մարկոս Ավրելիոսի հետ գահ բարձրացավ 161 թվ.։ Խորենացին, որ այստեղ

հիանում է Եվսեբիոսի ժամանակագրության հայերեն թարգմանության՝ այս թարգմանության սխալը կրկնել է և ինքը՝ Լուցիոսը Աբենքում ոչ թե մնչյան էր չինում, այլ զոհ էր մատուցանում (Գուտշմիտ, անդ. 26)։

196. Բնագիրն ունի. «անազգիք էին ի վաշտս», էմինը թարգմանել է. „они как люди худородные в полках не занимали видных мест". Ստեփանեն թարգմանել է. «Ընդա ցած ազգի մարդիկ էին զորքերի մեջ»։ Երիտն էլ սխալ են հասկացել բնագիրը։ Խորենացին ուզում է ասել, թե Տիգրանը կրտսեր նախարարական ցեղեր է հաստատում այն քաջ և երևելի մարդկանցից, որոնք իրան փրկելու համար պատերազմեցին, և որոնք մինչև այդ անազգի էին (=նախարարական ցեղ չէին կազմում) վաշտերի նկատմամբ (=հեծելազորքով)։ Ամեն մի նախարարական ցեղ պետք է սեփական հեծելազորք ունենար, թեկուզ փոքր թվով, իսկ սրանք չունեին։

197. Խոսքը մութ է և դժվար հասկանալի.— «զլատաչագունից ասեմ, մոտաւորաց վճեննից, ի զարմից Հայկազանց»։ Էմինը թարգմանել է „других стран наших из первых наших соседей Вченков". Ստեփանեն թարգմանել է. «առաջագույն մեր դրացի ասված վճեննեներից»։ Մենք այլ կերպ հասկացանք ու թարգմանեցինք։

Գալով այստեղ հիշված վճեններին՝ պետք է ասել, որ Ձեռագրերների մի խումբ «վճեննից» փոխանակ ունի «ղճենաց», որից ոմանք եզրակացրել են, թե խոսքը լինական գաղթականության մասին է։ Ադոնցը (Юстиниан, էջ 266, ծան.) վճեններից բուն ուղղում է «ղճեներից» և ըստ այնմ հիշյալ հատվածը թարգմանում է. „от близких потомков первобытных жителей от ода Айкидов". Իմ հասկացողությամբ՝ վճեննները նախարարական ցեղ են եղել, որ գահնամակում ու մյուս ցուցակներում հիշվում են փոքր ինչ տարբեր ձևով—վճեան, վճեաննունք։

198. Այս պարբերության իմաստը լավ հասկանալու համար պետք է հիշել, որ Խորենացին, համաձայն Սահակ Բագրատունու խնդրի, պատմության հիմնական նպատակն է դրել՝ գրել թագավորների և նախարարական ցեղերի և տոհմերի մասին, թե ո՛վ ումի՛ց ծագեց և նրանցից յուրաքանչյուրն ի՛նչ գործեց և այլն. (Ա, գ)։ Արդ՝ բացի մեծ նախարարական ցեղերից ու տոհմերից, որոնց անունները մուծված են գահնամակի մեջ և որոնց գրեթե բոլորի վերաբերմամբ Խորենացին կատարել է իր խոստումը, կային նաև ուրիշ շատ կրտսեր ազգեր ցեղեր Կորճայքում և Այրարատի դաշտերում, որոնց, ըստ Խորենացու վկայության, հաստատել է Տիգրան վերջինը, բայց Խորենացին հրաժարվում է անուն առ անուն հիշելու նախ՝ որովհետև չգիտե, երկրորդ՝ որովհետև խուսափում է ծանր աշխատանքից և երրորդ՝ որ սրանցից շատերի մասին անհնարինություններն անհավատի են, որ կարող է բոլորի վրա էլ կասկած գցել։ Այս կրտսեր ազգի ցեղերի ցուցակը բերում է Ադոնց (Юстиниан, էջ 251), որի մեջ, բացի գահնամակի ցեղերից, մուծված են և կրտսեր ազգի ցեղեր, որոնցից 16-ը հարյուրավոր ձիավորով, 14-ը հիսունական ձիավորով։ Ահա այս ցեղերին է վերաբերում Խորենացու խոսքը, որ եթե ոչ բոլորին, գոնե մի մասին գիտեր, բայց հանվանեն նրանց յուրաքանչյուրի մասին գրելուց հրաժարվում է։

199. «Մեկի դուռը թակել» նշանակում է այդ տունը խնամախոսության

գնալ, այդ տնից աղջիկ ուզել։ Խորենացին անմիջապես մեկնում է առասպելին ասելով. տորի (=Երվանդի) քրոջը Վարդգեսը կին առնելով՝ շինում է այդ ավանը։ Տուհաց գավառը և Արտիմեդ քաղաքը այլուր հիշված չկան։

200. Բասիլները Սարմատիայում ապրող հին ցեղերից մեկն էին, բնակում էին Վոլգայի ափերում, հաճախ արշավանքներ էին գործում Կովկաս։ Տրդատը պատերազմում է Հայաստան արշաված բասիլների հետ և նրանց թագավորին միջակտուր է անում (տես. Բ, ձե)։ Արտաշես Բ-ի ժամանակ Հայաստան Բասիլների գաղթականություն է գալիս (տես. Բ, ծը).—Խազիրները (կամ խազարները) նույնպես Սարմատիայում բնակվող հին ցեղ էին. ըստ Աշխարհացույցի՝ խազիրների թագավորն էր Հյուսիսի խաքանը։ Կարծվում է, թե թուրքական ցեղից լինեին։

201. Ճորա դուռ կամ Ճորա պահակ այն նեղ անցքն է, որ կազմվում է Կովկասյան լեռնաշղթայի արևելյան ծայրի և Կասպից ծովի միջև, որտեղ այժմ գտնվում է Դերբենդ քաղաքը։ Սա միակ ճանապարհն էր, որով հյուսիսային սարմատական ցեղերն անցնում ու արշավում էին Հարավային Կովկաս և Պարսկաստան՝ ավարառության նպատակով։ Նրանց ավազակային արշավանքները խափանելու համար հնուց այս նեղ անցքում շինված էր հզոր պարիսպ, երկաթե դռներով ու մշտական պահապան զորքով, և Պարսից թագավորները մեծ հոգ էին անում՝ այս պահակն ապահով և անառիկ պահելու։ Կոչվում է նաև դուռն Ալանաց, դուռն Կասպից. Աղվանից դրունք։ Դարբանդ բառն էլ հենց նշանակում է փակված դուռ կամ ըստ Աշխարհացույցի (Հրատ. Սուքրի էջ 27) «Վազ և դուռն, քաղաք պահակին Ճորայ»։

202. Բարդեծան Եդեսացին ծնված է Բ դարի երկրորդ կեսի սկզբում. ունի գնոստիկական ոգով գրվածքներ։ Պատմական բովանդակությամբ գրվածք չի հիշվում.— Մարկիանոս ծնված է Բ դարի սկզբին Սինոպում— նշանավոր հերետիկոս, որ քրիստոնեությունից, մոգությունից և այլ կրոններից մի նոր կրոնական սիստեմ առեղծեց.— Վալենտիանոս ծնված է Եգիպտոսում նույնպես Բ դարի սկզբում, հրեական ծագումից, ապրել է Աղեքսանդրիայում, մեռել է 160 թվ.։ Ամենահայտնի գնոստիկյան հերձվածող։

203. Այսինքն մինչև կե գլխի վերջը, որտեղ պատմել է, որ Խոսրովը արձան է կանգնեցրել Սարմատացոց երկրում։

204. Ագաթանգեղոսի Պատմությունը կա հայերեն, կա նրա հին հունարեն թարգմանությունը հայերենից. վերջերս Ն. Մառը գտավ և հրատարակեց, ռուսերեն թարգմանությամբ հանդերձ, նրա արաբական խմբագրությունը, որ ծագում է մի այլ հունարեն խմբագրությունից։ Կան վերջապես հատուկտորներ վրացերեն և ասորերեն լեզուներով։ Հեղինակն իրեն կոչում է Ագաթանգեղոս և ասում է, թե Հռոմ քաղաքից է եղել, Խոսրովի ժամանակ եկել է Հայոց արքունիքը, դպրի պաշտոնով և Տրդատի հրամանով գրել է Հայոց դարձի պատմությունը, ուրեմն չորրորդ դարի երեսնական թվականներից ոչ ուշ։ Ընդարձակ քննություններ կան այս պատմության մասին։ Ընդհանրապես ընդունված է, որ գոյություն ունեցող խմբագրություններից ոչ մեկը սկզբնական չէ, այլ նրանք վերամշակված են մի հնագույն սկզբնագրից, որ հորինված է եղել պատմական ու վկայաբանական աղբյուրների և ժողովրդական զրույցների հիման վրա, և որ այժմ անհետ կորած է, որ Ագաթանգեղոս անունով անձ չի եղել, այդ բառը հունարեն է և նշանակում է բարի ավետաբեր, մոտավորապես այն, ինչ որ հա-

կանում ենք ավետարան բառով։ Հայերեն խմբագրությունը կատարված է Ճ դարի վաթսունական թվականներին։ Խմբագրողը խիստ ենթարկված է Կորյունի ազդեցության, այն աստիճան, որ շատերը կարծում են, թե հենց ինքը՝ Կորյունը լինի խմբագրողը (որ ընդունելի չէ, որովհետև մեծ զանազանություն կա Կորյունի և այս պատմության լեզվի ու ոճի միջև)։ Հայերեն բնագրի մոտ կենք բռնում է Վարդապետություն Ս. Գրիգորի, որ չկա ոչ հունարենում և ոչ արաբերենում։ Համարում են, թե այս վարդապետությունը Մեսրոպ Մաշտոցի գրածն է, որ Ագաթանգեղոսի խմբագրողը հարմար է գտել զետեղել իր պատմության մեջ, վերագրելով Գր. Լուսավորչին։ Ընդհակառակը, հայերեն բնագրում պակասում է առաջին մասը՝ Արտավանի սպանության հանգամանքները, որ հունարենում կա և եղել է նաև Խորենացու օգտագործած հայերեն օրինակում, ինչպես երևում է նրա մեջ բերած տեղեկություններից։ Պատմագրքի քննական հրատարակության մեջ (Տփղիս, 1909) այս պակասած մասը դրված է իբրև հավելված, հունարենից թարգմանված Գ. Զարբհանալյանի ձեռքով։

205. Տե՛ս Ծննդ. ԺԷ 7 ԺԷ 17 և ԻԷ 2։

206. Ակնարկում է իր Պատմության Բ իէ, իր գլուխների վրա, որտեղ գրել է Արտաշեսի և նրա երկու եղբոր ու մի քրոջ մասին։ Այս քրոջ անունը, որ տպագրությունների մեջ գրված է Կոշմ, մենք ըստ մի քանի ձեռագրերի ուղղեցինք Կոմշ, որ ուղիղ ձևն է, հունարեն Κωμισηνή (հմմտ. Արմ. Արմ. 16)։

207. Պարթև թագավորների այս ցանկը, որ բերում է Խորենացին կը և կթ գլուխներում, համեմատենք օտարների ցանկի պարթևական թագավորների շարքի հետ։ Զննելով այս երկու ցանկերի մեծ տարբերության թագավորների թվի և անունների մեջ՝ Գուտշմիդը (անդ. էջ 17—18) բարձր է գնահատում Խորենացու բերած ցանկը, որ նա առել է Բարծումայից։ Ըստ Գուտշմիդի՝ Խորենացու ցանկում կարճատև կամ անհայտ թագավորությունները կցված են երկարատև կամ փառավոր թագավորություններին։ Այս ցանկում Պարթև թագավորների մահվան տարիները ճշտիվ համապատասխանում են ժամանակակից կլասիկական հեղինակների և դրամների տվյալներին։ Առհասարակ Գուտշմիդը գտնում է, որ Խորենացին լավատեղյակ է Պարթից գործերին։

208. Պաղեփատոս և Փիլեմոն պատմագիրները հայտնի չեն։ Պորփյուրիոս հայտնի է, բայց սրա պատմության հենց այս մասը անհայտ է մնում։ Գուտշմիդ (անդ. էջ 7) կարծում է թե այս երեք անունները հիշված են եղել Բարսումայի գրքի առաջաբանում, որից օգտվել է Խորենացին։

209. Ուստասհուն պարսկերեն բարդ բառ է, rāst ճշմարիտ և saxum խոսք, ուրեմն ռաստասհուն նշանակում է ճշմարտախոս։

210. Բնագրում գրված է «երազոյն փափագոյ»։ Հին տպագրությունները Փափագոյ բառը գրում են փոքր գրով (փափագոյ) համարելով հասարակ անուն. ըստ այսմ էլ բոլոր թարգմանիչները սխալ էին թարգմանել այս խոսքը։ Միայն Սանիանեն, օգտվելով Ք. Պատկանյանի ցուցմունքից (Աշխարհացույցի ռուս. թարգմ. էջ 61), առաջին անգամ ուղիղ թարգմանեց, Փափագն ընդունելով իբրև հատուկ անուն։ Ըստ Պարսկական ավանդության՝ այս Փափագը կամ Պապեքը, երազում տեսնելով, որ Սասանից մի նշանավոր մարդ է ծնվելու՝ իր կնոջը հորդորել է նրա հետ զուգավորվել՝ այդ նշանավոր մարդու մայրը դառնալու համար։ Այս զուգավորությունից ծնվում է Ար-

տաշիրը, որ կոչվում է Բաբագան։ Արտաշիր Բաբագանի առասպելը պահլավերենից հայերեն թարգմանել է դոկտ. Թիրաքյան (Փարիզ, 1907), որի մեջ կան այն բոլոր մանրամասնությունները, ինչ որ Խորենացին հաջորդ տողերում բերում է։ Խորենացու աղբյուրն այստեղ Բարսուման է։ Գուտշմիտը գտնում է, որ ինչ որ Խորենացին բերում է Արտաշիր Սասանյանի երիտասարդության մասին՝ հար և նման է Ֆիրդուսիի պատմածին, միայն ավելի հիշտ գունավորված և ավելի հնության կերպարանքով։

211. Արտավանի սպանության և Սասանյան հարստության սկիզբը տևել ունեցավ 226 թվին, իսկ Փիլիպոսը կայսր նստեց 244—249։ Ժամանակագրական և պատմական անտեղություն կա։ Տե՛ս Սինխրոնիկ ցանկը։

212. Ո՛ւմ նկատի ունի Պատմահայրը «աքանչելի ծերս» ասելով՝ հայտնի չէ. կարծում են, թե նկատի ունի Սահակ Պարթև կաթողիկոսին, իր ուսուցչին։

213. Փերմելիանոս եպիսկոպոսի մասին տեղեկությունները Խորենացին առնում է Եվսեբիոսի եկեղեցական պատմությունից։ Նրա գրած պատմության մասին Եվսեբիոսը տեղեկություն չի հաղորդում։ Խորենացու բոլոր ձեռագրերում Պերմեդիանոս է (պ-ով, փխկ. փ-ի), ինչպես և Եվսեբիոսի եկեղ. Պատմության հայերեն թարգմանության մեջ։ Այս գլխի վերջում բնագիրն ունի. «Բայց և որ ինչ ի թագաւորութենէն Տրդատայ և յետ նորա, ոչ հեղգութեամբ և ոչ անզգուշաբար վրիպեալ և ոչ կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց դիվանագիր մատենիցն յունաց իսկ, զոտ նմանեացն (տպ. ծունաց։ Իսկ զոտ նմանեացն) ապա և որ ինչ ի համբաւոց խմաստնոց... քիչ զրուցեցաքս։ Թարգմանիչները սխալ են հասկացել էմինը թարգմանել է. «касательно же царствования Трдата и случившегося после него Фирмилиан не щадил ни труда, ни забот и не вплетал в свой разсказ умышленной ошибки, напротив все заимствовал из летописей греческих архивов. Все остальное мы разсказали...». Նույնը և Ստեփաննոս։ Այնպես որ, ըստ այս թարգմանություններին, դուրս է գալիս՝ իբր թե Խորենացին վկայում է, թե Փերմելիանոսը գրել է նաև Տրդատի թագավորության և դրանից հետո պատահած անցքերը, որ իհարկե անկարելի է, քանի որ Փերմելիանոսը մեռել է 260 թվին, իսկ Տրդատի թագավորելը ենթադրվում է 287 թվից։ Անտեղի վերջակետը (մատենիցն յունաց իսկ «զոտ նմանեացն») խանգարել է խոսքը ուղիղ հասկանալ։ Հեղինակի միտքը պարզ է. Խոսրովի մահից հետո մինչև Տրդատի թագավորելը, անիշխանության ժամանակի գործերը, Խորենացին խոստանում է առնել Փերմելիանոսից, իսկ ինչ պատահել է Տրդատի թագավորության ժամանակ և հետո—նա խոստանում է իրենից պատմել, օգտվելով Հունաց դիվանագիր մատյաններից և խմաստուն հնախոս մարդկանց զրույցներից, առանց անփույթ գտնվելու կամ անզգուշաբար վրիպելու և իրենից որևէ բան սխալմամբ հարմարեցնելու։

214. Դեկոս (Decius) հռոմեական կայսր, սպանվեց մի պատերազմում գոթերի հետ 251-ին։ Հայտնի է իբրև քրիստոնեության հալածիչ։ Մաքսիմիանոս Կեսար և ապա հռոմեական կայսր, փախավ իր որդուց և սպանվեց 310 թվին։ Դիոկղետիանոս, Հռոմայեցիների կայսր 284—305, նույնպես հայտնի է քրիստոնեության դեմ հարուցած հալածանքներով։ Նրանից Տրդատ ստացավ

Հայաստանի. Թագը։ Որոգինես—ամենահայտնի և ամենաբեղմնավոր քրիստոնյա մատենագիրը։ Ծնվել է Աղեքսանդրիայում 185 թվին, մեռել 254 թվին՝ Դեկոսից քրիստոնեության պատճառով կրած չարչարանքների և բանտարկության հետևանքով։ Գրել է մեծ քանակությամբ դավանաբանական և մեկնաբանական գրվածքներ. նրա ամենանշանավոր աշխատանքն է— Վեցիցեանը՝ հին կտակարանը տուն առ տուն արտագրված, եբրայեցերեն լեզվով ու գրերով, եբրայեցերեն լեզվով, բայց հունարեն գրերով և չորս հունական թարգմանություններով, որոնցից մեկն էր Յոթանասնից թարգմանությունը։ Խառան—քաղաք Միջագետքի հյուսիս-արևմուտքում, Եդեսիայից մի օրվա ճանապարհով հեռու դեպի հարավ-արևելք։

215. Կիկլադյան (հուն. κυκλάδες =շրջանային) մանր կղզիների արշիպելագոս է, ընկած միջին և հարավային Հունաստանի և Փոքր Ասիայի արևմտյան ափերի միջև, թվով 20-ից ավելի։

216. Վալերիանոս, Կլավդիոս, Ավրելիանոս, Տակիտոս, Փլորիանոս, Պրոբոս կայսրների կարճատև թագավորությունը տե՛ս սինխրոնիկ ցուցակում։

217. Բնագրում՝ ճանիւս, որ հոգն. հայցական հոլով է։ Ուղիղն է ճանիւք, հունարեն Τζάνοι, որ Խորենացին բացատրում է հայերեն ավելի ծանոթ բառով—խաղտիք, որի մասին տես ծանոթ. 111։ Տարոն—քաղաք Կիլիկիայում, ծովից ոչ հեռու։

218. Իսկապես Իփիտոս և ոչ Հիփիտոս. Հունաստանի կառավարիչը (procurator), որին վերագրվում է օլիմպիական խաղերը սահմանելը։— Այստեղ հիշատակված ըմբիշները—Կլեոստրատոս և Կերասոս, իրենց ցույց տված մրցություններով, հիշատակված են Եվսեբիոսի ժամանակագրության մեջ, որից և առել է Խորենացին (Խալաթ. Арм. Арш. 112)։

219. Լիկիանոս, այստեղ զորավար, հետո հռոմեական կայսր Արևելքի։ Վերջը Կոստանդիանոս Մեծի հետ ընդհարումներ ունեցավ, պարտություն կրեց և 325-ին մահվան դատապարտվեց իբրև պետական դավաճան. տես նրա մասին նաև գլ. ձբ։ Պռոբոսի մասին տե՛ս ծան. 216։

220. Կար և որդիքը՝ Կարինոս և Նումերիանոս, Հռոմի կայսրներ 282—283 թվականներում։ Սրանց պատմությունը Խորենացին առել է Եվսեբիոսից, բայց կա՛մ ժամանակագրության հայերեն թարգմանության, կա՛մ հենց Խորենացու սխալից՝ շփոթություն կա։ Կարոսը պարսիկներին հաղթելուց հետո վախճանվում է Միջագետքում (կայծակից, ինչպես ունի այստեղ ժամանակագրության լատիներեն թարգմանությունը)։ Միջագետքի կամ կայծակի փոխանակ Խորենացին ունի Յոփնովն (մի քանի ձեռագրերում ի յոյսն, փխկ. յոփնովն)։ Այս անծանոթ բառը բացատրելու համար Խալաթյանցը (Эпос, 34) կարծում է, թե Խորենացին այստեղ հետևել է Մաղաղասին (հույն հեղինակ Է դարի), ըստ որի Կարոսը մեռել է Հոների դեմ մղած պատերազմում (հուն. οὔννους որ հայերեն պիտի տար ի Հոնս. իսկ այս բառը Խորենացու ձեռագրերի մեջ աղավաղվել և դարձել է ի յոյնս՝ (ձեռագրերից ոմանք ունեն ի յոյսն, բայց ոչ մեկը ի յոյնս), որին գրության ձևով (палеографически) նման է յոփնով՚ը։ Ավելի հավանական է պրոֆ. Կոնիբերի բացատրությունը (Հանդ. ամս. 1902, էր. 238), թե Խորենացու Յոփնովն-ը աղավաղություն է հունարեն εν κεραυνῷ (=կայծակից) բառի, որը նա չհասկանալով (կամ գուցե հենց հունարենում աղավաղված լինելով) ընդունել է իբրև հատուկ անուն։ Այս կարծիքը արդարանում է

հայերեն լինելովն գրերի զուգադիպությամբ հունարենի հետ։ Գալով Կոռնակը անվան, Խալաթյանց (Арм. Арш. 144) նրան իբրև անձ չի ճանաչում, այլ, հետեվելով Օվսեբիոսի ժամանակագրության («ի պատերազմին Կոռնակայ») և Հերոնիմայի տեղեկության, կարծում է, թե սա տեղի անուն է։ Հունարեն Μαργος բառի աղավաղություն։ Համենայն դեպս, կարծում է նա, եթե Կոռնակը անձ էլ նշանակեր՝ նա հայ չէր լինի, ինչպես ունի Սամուէլ Անեցին։— Բայց Կոռնակը իրական անձ է։ Սեբեոսը (Գլ. Գ էջ 14—15) պատմում է, թե երբ Կարոսը զորք գումարեց Խոսրովի դեմ, Խոսրովի սպարապետը՝ Կոռնակ, նրա դեմ գնաց պատերազմով, որ տեղի ունեցավ Խառանի և Ուռհայի միջև (Աւորիքում), և որի մեջ մեռան Կարոսն ու որդին՝ Կաբիանոսը։ Այս բանը պատահել է, քսան Սեբեոսի, նույն տարին, երբ Դիոկղետիանոս գահը թարթրացավ, որ միանգամայն համաձայն է օտար պատմիչներին։ Սեբեոսի հիշած քաղաքները (Ուռհայ և Խառան) շատ լավ հարմարվում են Խորենացու պատմածներին, թե Տրդատ զենքերով անցավ Եփրատ գետը, որովհետև այս քաղաքներն ընկնում են Եփրատի մի բազուկի վրա։ Այս Կոռնակին նույնացնում են (Ադոնց, Նախալեռ. ист. 3) Մամիկոնյանների նախնի Կոռնակի հետ։

221. Արտիքես նպիսկոպոսի, Մարկոս միայնակյացի և Հագուռճան տեղի մասին որոշ տեղեկություններ չկան։ Գամիրքը Կապադովկիան է։

222. Ճեն-Բակուր նշանակում է Ճենաց (Չինաց) Բակուր. իսկ Բակուր ծագում է պարսկերեն bog և puhr բառերից, որոնք նշանակում են աստծու որդի. ուրեմն Ճենբակուր=Ճենաց աստվածորդի՝ նրանց թագավորների պատվանունն է։ Հետաքրքրական է հաջորդ բառը Բղդոին, մանավանդ նրա վարիանտները՝ Բղդախայ և Բղդոխայի, որ պարզապես Բողդիխան տիտղոսն է չինական կայսրների՝ մոնղոլերեն, որ նշանակում է մեծ կամ սուրբ թագավոր։ Խորենացու պատմությունը Մամիկոնյանների Հայաստան գալու մասին մանրամասնությունների մեջ տարրերվում է Սեբեոսի և Փավստոսի պատմածներից։

223. Սիրամարգ պարսկերեն բառ է (աղավաղությամբ առաջ եկած սինամարգից», ծագում է sin—չին և murg=թռչուն բառերից, ուրեմն նշանակում է չինական թռչուն։ Հեքիաթների մեջ պահպանված է բառի հայերեն ձևը=Սինամահաւք, իսկ Մուշի բարբառում (Արմատ. բառ.)՝ սինամարթ։ Համոյր ասորերեն բառ է yaxmūrē և նշանակում է վիթի մի տեսակը եղջերուների կարգից։

224. Նզիանան կամ Նյեանան իսրայելացիների Դավիթ թագավորի քաջ զորավարներից մեկն էր (Բ թագ. ԻԳ, 25), իսկ հաջորդ խոսքը, թե «իր նիզակը կանգնեցրեց նույնքան թվով վիրավորների օգնական» վերաբերում է Դավիթի մի ուրիշ քաջ զորավարի, Հովարի եղբոր Աբեսսային, որի համար ասված է (Բ թագ. ԻԳ, 18), թե «նա կանգնեցրեց իր նիզակը հերք հարյուր վիրավորների վրա»։

225. Բնագրում գրված է. «զզոր արարեալ սիւգնոյն». սիւգնոյն լատիներեն signum բառն է, որ նշանակում է նշան (պատերազմական)։

226. Նյեփանդակական բորոտություն, այսինքն փղային բորոտություն. բորի մի տեսակն է, իրբ բոլոր մարմնի վրա պինդ կեղև է դոյանում, փղի կաշու նման։ Բժշկության մեջ էլ կոչվում է Elephantiasis graecorum, այսինքն հունական նյեփանտասյական բորոտություն։

227. Արիոդական, լատիներեն ariolus կամ hariolus բառն է, որ նշանա-

վում է գուշակիչ, հմայիչ։ Մարսիկյան—Marsi ժողովրդի անունից, որ բնակվում էին Լատիումում և հայտնի էին իբրև կախարդներ և օձերի թովիչներ։

228. Կոստանդիանոս կայսրի պատմության այս մասը, Հեղինեի պոռնկից ծնվելը, երկնքում խաչաձև նշան տեսնելը, Մաքսիմիանոսի հետ ամուսնանալը, քրիստոնյաների դեմ հալածանք բարձրացնելը, եկեղեցական բորոտություն ստանալը, քրմերի տված խորհուրդը՝ երեխաների տաք արյունի մեջ լողանալը բժշկվելու համար, երազ տեսնելը, Սեղբեստրոսի ձեռքով մկրտվելն ու առողջանալը.— որոնք այս գլխի բովանդակությունն են կազմում, Խորենացին առել է Սեղբեստրոս պապի առասպելախառն վկայաբանության հայերեն թարգմանությունից, որ կցված է Սոկրատի Եկեղեցական պատմության հայերեն թարգմանության։ Երկու գրվածքներն էլ հայերեն լեզվով գոյություն ունեն երկու խմբագրությամբ. մեկը հավատարիմ թարգմանություն հունարենից (Մեծ Սոկրատ և Մեծ Սեղբեստրոս), մյուսը համառոտված բնագրով և թարգմանչի հավելվածներով (Փոքր Սոկրատ, Փոքր Սեղբեստրոս)։ Որովհետև այս երկու գրվածքների հայերեն թարգմանությունը համարվում է կատարված յոթներորդ դարի վերջերին, սրանից եզրակացվեց, թե Խորենացու պատմությունը, որին իբրև աղբյուր է ծառայել է դարի վերջերի գրվածքը՝ չի կարող գրված լինել Ե դարում, ս. Սահակի աշակերտի ձեռքով։ Խորենացու Սեղբեստրոսի վարքից օգտվելը հայտնի էր դեռ Խորենացու առաջին թարգմանիչ Վիստոնյան եղբայրներին (1746-ին), որոնք նույնիսկ այս պատճառով կասկած հայտնեցին Խորենացու Պատմության հնության մասին (էջ 210, ծանոթ.). հայտնի էր նույնպես Հայկազյան բառարանի հորինողներին (Հառաջաբան էջ 19)։ Բայց այս ցուցումները առանց հետևանքի մնացին. իսկ 1892 թվին ֆրանսիացի հայագետ Կարրիերը Վիեննայի «Հանդես ամսօրեայում» հանդես եկավ մի ընդարձակ հոդվածով, որի մեջ թվարկելով Խորենացու հաղորդած հակապատմական և առասպելական տեղեկությունները Կոստանդիանոսի մասին՝ մատնանշում էր նրանց աղբյուրը՝ Սեղբեստրոսի վարքը (հունարեն թարգմանությամբ, որ կատարված է Զ դարում)։ Հաջորդ հոդվածում հայագետը, ուսումնասիրելով Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունը (որ առաջ նրան հայտնի չէր), իր նախկին եզրակացությունը պնդեց, միայն մտցնելով այս ուղղումը, թե Խորենացու աղբյուրը ոչ թե հունարեն Սեղբեստրոսն է, այլ հայերենը, որ թարգմանված է է դարի վերջերին։ Կարրիերի այս երկու հոդվածը (ինչպես և հետո ուրիշ հոդվածներ) ահագին աղմուկ բարձրացրին հայ բանասիրության մեջ։ Առաջ եկան Կարրիերի պաշտպաններ և հակառակորդներ. կարծես հայ բանասիրությունը երկու բանակի բաժանվեց, որոնք կնքվեցին «Խորենիապաշտ» և «Խորենատյաց» անուններով։ Խորենացու անվան վրա ավելացրին «սուտ» բառը «ստոյն Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն». իբրև լոզունգ հայտարարվեց, թե «678 թվականից առաջ Խորենացու Հայոց Պատմություն չկար»։ Գրվեցին բազմաթիվ մանր ու ընդարձակ ուսումնասիրություններ, որոնց ցուցակը տե՛ս Խոր. քննական հրատարակության Հառաջաբանում (էջ ԽԵ—ԿԲ)։ 1897 թվին Վաղարշապատում տպագրվեց Սոկրատի Եկեղեցական պատմությունը, Սեղբեստրոսի վարքով հանդերձ, երկու խմբագրությամբ։ Այս գրքի լույս տեսնելուց հետո երկու բանասեր՝ Գ. Խալաթյանց և Միաբան, գրեթե միաժամանակ, ցույց տվին Խորենացու Պատմության մեջ մի ընդարձակ հատված (Ս. Մեսրոպի գովեստը. Գ), որ առնված է ընդարձակ Սեղբեստրոսից։ Փոխառությունն այնքան ակներև էր, որ ոչ ոք չհա-

մարձակվեց ժխտել այդ բանը։ Նույնիսկ Սոկրատի հրատարակիչը՝ Մեսրոպ վրդ. Տեր-Մովսեսյանը, որ իր հրատարակության ընդարձակ հառաջաբանում աշխատում էր հերքել Խորենացու կախումը Սեղբեստրոսի վկայաբանության հայերեն թարգմանությունից, այս նոր հայտնության հանդեպ ստիպված եղավ հրապարակով հրաժարվել իր պաշտպանած մտքից և ընդունել Խորենացու փոխառությունը Սեղբեստրոսից։ Այս հարցի լուսաբանման համար մեծ կարևորություն ունի Կոնիբերի հմտալից հոդվածների շարքը «Հանդէս ամսօրեայում» 1902 թ.։

Մենք այս հարցի առիթով, որի հետ կապված է Խորենացու Պատմության գրության ժամանակը և առհասարակ նրա վավերականությունը, առանձին կարծիք ենք ունեցել։ Կարրիերի հենց առաջին հոդվածի առիթով մեր գրած հոդվածում («Մուրճ» 1892 № 12) ցույց տվինք, թե Խորենացու այս ԺԳ գլուխը, որտեղ նկատվում են փոխառություններ Սեղբեստրոսից, Խորենացու գրածը չէ, այլ հետսամույծ հավելված է։ Բուն Խորենացու գրած Պատմության մեջ այստեղ պետք է լինեին Հայոց դարձի պատմությունը, որ չկա մեր այժմյան օրինակներում։ Նույն միտքն ավելի ընդարձակելով՝ մեր մի ուրիշ աշխատության մեջ («Խորենացու առեղծվածի շուրջը» հավելված Բ) ցույց տվինք, որ մեր ձեռքը հասած Խորենացու Պատմությունը սկզբնական չէ, այլ խմբագրություն է Է—Ը դարերի, որ իր մեջ կարող էր ընդունել, և ընդունել է, տեղեկություններ Զ—Ը դարերի ուրիշ աղբյուրներից։ Մանրամասնությունները տեսեք հիշյալ գրքույկում։

229. Տրդատ Մեծի՝ քրիստոնեություն ընդունող թագավորի, պատմության մեջ խառնված են մի քանի էպիզոդներ, որոնք վերաբերում են Տրդատ Ա-ին, որին Խորենացին չգիտե բոլորովին, և որին քննադատները նույնացնում են Խորենացու Արտաշես Բ-ի, Դողթան իրգերի հերոսի հետ։ Այսպես, Տրդատ Մեծի մասին հիշատակությունը Ագաթանգեղոսի և Խորենացու մոտ, թե գնաց Հռոմ Կոստանդիանոս Մեծին տեսության— պատմական չէ, որովհետև այդ բանը չի հիշում ոչ մի օտարազգի պատմագիր։ Բայց պատմական է Տրդատ Ա-ի չքավ երթը Հռոմ, որտեղ նա, համաձայն Պարթևների հետ կնքված պայմանի, հանդիսավորապես Հայաստանի թագն ստացավ Ներոն կայսրից, որ Խորենացու մոտ չկա։ Դարձյալ Խորենացու հիշատակությունը (Բ, ղ), թե Տրդատ Մեծը Գառնիում հովանոց շինեց իր քրոջ՝ Խոսրովիդուխտի համար (որ հետո կոչվեց Տրդատի Թախտ)՝ վերաբերում է Տրդատ Ա-ին, որ Հռոմից ճարտարապետներ բերեց և Գառնիում շինել տվեց հոյակապ մեհյանը։ Ներկա դեպքում ևս Տրդատ Ա-ի մենամարտը Բասիլների թագավոր Գեղահոնի հետ՝ վերաբերում է Տրդատ Ա-ի պատերազմին Ալանների հետ, երբ թշնամիներից մեկը պարան գցելով կաշկանդեց Տրդատին և քիչ էր մնում գերի վերցներ։ Այս պատմությունն անում է Հովսեպոս, որից քաղել է Գ. Խալաթյանցը (Эпос, 244)։ Հիշում են և ուրիշ հեղինակներ։ Ահա երրորդ օրինակ, թե ի՛նչպես պատմական անցքերը բերան բերան ավանդվելով մի թագավորի գործերը վերագրվել են ուրիշ թագավորի և այս կերպ ընկել Խորենացու Պատմության մեջ։ Առաջին օրինակն է Մեծն Տիգրանը, որի գործերից շատը վերագրվել են Տիգրան Երվանդյանին (տե՛ս ծան. 79)։ Երկրորդն էր Արտաշես Ա-ն, որին վերագրված են մի քանի թագավորների գործեր (տե՛ս ծան. 142)։ Երրորդն է երկու Տրդատի գործերը իրար հետ շփոթելը։

230. Տե՛ս Հոր. ԼԸ, 34։

231. Տե՛ս Անոթ., Ե, 8։

232. Փոքրագույն գետն Արագվան է, ինչպես բացատրել է Էմինը (ծան. 331)։ Սոեփանեն տարօրինակ սխալով, երևի Էմինի Արագվան սխալ կարդալով, ծան. մեջ (507) գրում է, թե «Փոքրագույն գետը» Երասխը կամ Արաքսն է։

233. Կղարջք Շիրակացու Աշխարհացույցում մի անգամ նշանակված է իբրև մի գավառ Հայաստանի Գուգարք նահանգի, որ գրավել են վրացիք, և մյուս անգամ Վրաստանի մեջ իբրև նրա գավառներից մեկը։ Այժմ կոչվում է Կլարջեթի — Ալանաց կամ Կասպից դուռը՝ Ճորա պահակն է (տե՛ս ծան. 201)։ Մասքութների մասին տե՛ս ծան. 143։

234. Ս. Նունեի և Վրաց դարձի պատմության իբրև աղբյուր Խորենացու համար՝ Գ. Խալաթյանց ցույց է տալիս Սոկրատի եկեղեցական պատմության երկու խմբագրությունները՝ Մեծ և Փոքր Սոկրատը (Арм. Арш. II, էջ 58—61)։ Բայց այս կարծիքն ընդունելի չէ։ Մի կողմ թողնելով այն, որ Փոքր Սոկրատը շատ ուշ խմբագրություն է և նրա խմբագիրն ինքն է օգտվել Խորենացուց, ինչպես անվիճելի կերպով ցույց տվեց Նորայր Բյուզանդացին («Մշակ» 1898, №№ 192, 193, 195, 203 216, 217 և 1899 №№ 16, 17 նույն կարծիքն ունի և Կոնիբեր), Խորենացու պատմածը պարունակում է այնպիսի կարևոր մանրամասնություններ, տեղագրական ճիշտ նկարագրություններ և ս. Նունեին վերագրված առաքելական քարոզչություն որոշ երկրներում, որոնք բացակայում են երկու Սոկրատների մեջ ևս, որից բնականաբար եզրակացվում է, թե նրանք չեն Խորենացու աղբյուրը։ Ինքը՝ Խորենացին հայտնապես ցույց է տալիս իր աղբյուրն այս գլխի համար «որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»։

Բայց այստեղ ծագում է մի դժվարություն։ Ոչ միայն հայերեն Ագաթանգեղոսը, այլև ոչ Արաբականը, ս. Նունեի անունն անգամ չեն տալիս, իսկ այն երկրները, որտեղ ըստ Խորենացու, քարոզել է ս. Նունեն՝ հայերեն Ագաթանգեղոսի մեջ ցույց են տրված իբրև Գրիգոր Լուսավորչի քարոզության երկրներ, գրեթե նույն բառերով։ Խորենացու մոտ՝ «Քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամբ Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց»։ Ագաթանգեղոսի մոտ՝ «Մինչև առ Կաղարջօք, մինչև յապա ի սահմանս Մասքթաց մինչև ի դրունս Ալանաց, մինչև ի սահմանս Կասպից»։ Ի՞նչպես կարող էր Խորենացին վկա կանչել Ագաթանգեղոսին, որի մեջ Նունեի անունն էլ չկա. ի՞նչպես կարող էր նա Նունեին վերագրել քարոզությունը այն երկրներում, որոնք Ագաթանգեղոսը վերագրում է Գ. Լուսավորչին։ Կարո՞ղ էր նա Լուսավորչից, որին այնպիսի խանդաղատանքով սիրում է, խլել քարոզչության պատիվը հօգուտ ս. Նունեի։ Իհարկե ոչ։

Այս դժվար առեղծվածը սակայն հեշտ լուծվում է այն հանգամանքով, որ Խորենացին օգտվել է Ագաթանգեղոսի ոչ այն խմբագրությունից, որ այժմ գոյություն ունի հայերեն, և ոչ արաբերենից (կամ նրա մայր հունարենից), այլ այն սկզբնագիր պատմությունից, որ կոչվում էր Գիրք սրբոյն Գրիգորի և որի վերամշակություններն են կազմում այժմյան հայերեն, արաբերեն խմբագրությունները (տե՛ս ծան. 204)։ Պրոֆ. Կոնիբերը ևս ճիշտ այսպես է մտածում (Հանդ. ամս. 1902, էջ 82), այսինքն, որ Խորենացին ուղիղ է ցույց տվել Ագաթանգեղոսը իբրև իր աղբյուրը ս. Նունեի մասին։ Բայց որ Ագաթանգեղոսում ս. Նունեի անունը չկա՝ նա նույնպես բացատրում է նրանով, որ ամենևին պատճառ մը չունինք ընդունելու, թե Ագաթանգեղոսի արդի գործը մեր ձեռքն հասած ըլլա առանց ղրտուելու, մաղուելու և առանց կրճատումներու։ Որ

հիրավի Խորենացին այն սկզբնագրից է օգտվել և ոչ այժմյան Հայերեն Ագաթանգեղոսից, բերում է ուրիշ մի քանի օրինակներից։ Այսպես՝ պատմելով, թե Կոստանդիանոսը հիվանդությունից բժշկվեց Սեղբեստրոս եպիսկոպոսից մկրտվելով՝ Խորենացին վկա է բերում Ագաթանգեղոսին «որպես համառոտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (Բ, ձգ)։ Բայց Հայերեն Ագաթանգեղոսում այս բանը չկա, սակայն կա արաբական խմբագրության մեջ։ Դարձյալ Խորենացին պատմում է (Գ, ձէ), որ Կոստանդիանոս Մեծը իր մորը՝ Հեղինեին ուղարկեց Երուսաղեմ փրկչական խաչը որոնելու։ Հայերեն Ագաթանգեղոսում այս տեղեկությունը չկա, բայց արաբականում կա։ Նշանակում է, Խորենացին օգտվել է Ագաթանգեղոսի սկզբնագիր օրինակից, որ պարունակելիս է եղել տեղեկություններ ս. Նունեի և նրա քարոզչության մասին։ Հայերեն Ագաթանգեղոսը, որ խմբագրված է ազգայնական ոգով, հարմար է համարել ս. Նունեի և նրա քարոզչության վերաբերյալ մասը դուրս գցել և այդ քարոզչությունը վերագրել Գր. Լուսավորչին, որ Հայերեն Ագաթանգեղոսի մեջ բոլորովին ազգայնացրած է, միայն Հայաստանի լուսավորիչ է ներկայացված, մինչդեռ արաբականում (հավանորեն նաև սկզբնագրում), նա եղել է լուսավորիչ նաև Վրաստանի, Աղվանների և այլնի։

Այս լուսաբանությունն առաջին անգամ տվեց Ն. Մառը, արաբական խմբագրության և նրա թարգմանության առաջաբանում և վերջաբանում (Крещение Армян, Грузин... 1906, էջ 63—65 և 175)։

Ագաթանգեղոսի տարբեր ու միտումնավոր վերամշակումների հարցը, որ կապ ունի քաղկեդոնական և հակաքաղկեդոնական վեճերի հետ, դեռ շատ մութ է և կարիք ունի լուրջ ու մանրամասն հետազոտության։ Ն. Մառը վերահիշյալ գրքում հարցը դրել է այս պատվանդանի վրա իբրև ենթադրություն։

235. Բնագրում գրված է «տարեկան լուսաւորութեամբ»։ Էմինը թարգմանել է „в продолжение целого года". Ստեփանոսը՝—«մի տարի ժամանակով»։ Մենք հաստատ չգիտենք, արդյոք «տարեկան»-ը այստեղ նշանակում է մի տարի", թե տարեցտարի կրկնվող։ Գործածեցինք «տարևոր» բառը։

236. Վզրուկ, ավելի հին ձևով վզուրկ (Եղիշեի մոտ) պարսկերեն բառ է, buzurg, պահլավերեն v(u)zurg, որ նշանակում է մեծ։ Խաքան նույնպես պարսկերեն բառ է xagan, որ պարսկերենում էլ փոխ է առնված թուրք-թաթարական xaqan-ից, որ նշանակում է կայսր։ Խորենացին և Շիրակացու Աշխարհացույցը խաքան բառով հասկանում են Խազարների կամ Թուրքաստանի թագավորներին։ Սեբեոս (Գլ. ԻԵ) Մեծ խաքան (=վզրուկ խաքան Խորենացու) է կոչում անորոշ կերպով հյուսիսային կողմերի թագավորին։

237. Խորենացին կամար բառը մեկնում է իբրև կիսատ՝ թերի գլուխ ունեցող, պարսկերեն kam փոքր, պակասավոր և sar=գլուխ բառերից։

238. Հին տպագրություններն այստեղ ունեին «Իր հաստատեալ գեօթնպարսպեան Եկբատան երկրորդ, և վերակացուս յինքենէ թողեալ» ...Թարգմանիչներն էլ ընդհանրապես թարգմանել են „второй Экбатан", «երկրորդ Եկբատան», տարակուսաբար ենթադրելով, թե ուրեմն եղել են մի քանի Եկբատաններ։ Քննական տպագրության մեջ սխալ կետադրությունն ուղղված է. «իւր հաստատեալ գեօթնպարսպեանն Եկբատան, երկրորդ և վերակացուս յինքենէ թողեալ», որով «երկրորդ» Եկբատանը վերանում է, Ուղղումը

կատարված է համաձայն Նորայր Բյուզանդացու ցուցման (De l'urgence d'une édition critique..., Հռոմ)։

239. Այս Լիկիանոսի մասին տես ծանոթ. 219։

240. Անհարկություն Երեմիայի մարգարեության վրա (ԺԴ, 23). «Եթե փոփոխեսցէ հնդիկ զմորթ իւր, և ինձ ղխայտող իւր, և դուք կարող լինիցիք գործել զբարիս, ուսեալք զչարիս»։ Հետաքրքրական է, որ այստեղ Խորենացին գործ է ածում «Եթովպացի», ինչպես ունի և Հունարենը, այնինչ ս. Գրքի հայերեն թարգմանությունը ունի «Հնդիկ»։ Բայց ցույց այստեղ Խորենացին հետևել է Գր. Նազիանզացուն, որ նույնպես ունի «Եթովպացոյն զանութիւն», ինչպես ենթադրում է Գ. Խալաթյանց (Арш. II էջ 62, ծան. 3)։

241. Պալադիոն բերածոյ Լատինացոց Palladium-ն է։ Սա փայտից շինված մի արձան էր Աթենաս Պալլասի, որ ըստ ավանդության Զևսից ուղարկված և դրված է եղել Տրոյայի բերդի վրա իբրև երաշխիք նրա անպարտելիության։ Տրոյայի առումից հետո այս արձանը Ոդիսևսը և Դիոմեդը հափշտակել ու տարել են Աթենք։ Ըստ մի այլ ավանդության՝ Տրոյայում երկու արձան է եղել Պալլադայի, որոնցից մեկը Էնեասը փախցրել է Հռոմ, որ այստեղ պահվում էր մեծ զգուշությամբ Վեստայի տաճարում։ Այս Պալլադիոնն է, որ ըստ վերջին ավանդության Կոստանդիանոսը գաղտնի բերել է Հռոմից և դրել է Փորոնում իր կանգնեցրած սյունի տակ։ Փորոն (լատիներեն orum) նշանակում է հրապարակ։ Հին Հռոմում մի քանի ֆորումներ կային՝ դատական, առևտրի, հասարակական ժողովների և այլն։ Սրանց օրինակով Կոստանդիանոս կայսրն էլ Կոստանդնուպոլսում, իր նոր մայրաքաղաքում, մի ֆորում կազմեց, որի մեջ կանգնեցրեց մի հոյակապ սյուն (պալադիոնի վրա) և սյունի գլխին կանգնեցրեց իր արձանը։

242. Խոստովանող՝ կրոնական-եկեղեցական տերմին է։ Խոստովանող կոչվում էր այն մարդը, որ քրիստոնեական կրոնը դավանելով, այդ դավանության պատճառով ենթարկվել է չարչարանքների։ Այս մտքով էլ Գր. Լուսավորիչը մեր ժամագրքի մեջ և այլուր կոչված է «Մեծ խոստովանողն Քրիստոսի»։ Իսկ այն մարդը, որ քրիստոնեական հավատի համար նահատակվում էր՝ կոչվում էր վկա։

243. Տե՛ս Եբր. Դ 12, որտեղ Երկսայրի սուր է կոչված բանն աստծոյ։

244. Ինչպես գրում է Ղուկաս ավետարանիչը (Բ, 8—20) հովիվներն առաջին մարդիկն էին, որոնց երևեցան հրեշտակները և ավետեցին Փրկչի ծնունդը, և նրանք առաջիններն եղան, որ Բեթղեհեմ գնալով երկրպագեցին նորածին մանկանը։

245. Համեմատել Սաղմ. «Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին» և «տնկեալք եղեցին ի տան տեառն և ի գաւիթս աստուծոյ մերոյ ծաղկեսցին» (ՂԱ, 13—14)։

246. Ինչպես ավանդությունը թանձր քողով պատել է Գր. Լուսավորչի ծագումը, ծնունդը, քարոզչությունը, Հայոց դարձը, նույնպես պատել է նրա կյանքի վերջին օրերը՝ մահը, թաղումը։ Հազիվ թե նա կամավորապես քաշված լիներ Մանյա այրը՝ ճգնական կյանքով անհայտության մեջ մեռնելու։ Տրդատ թագավորի մահը, Արիստակեսի մահը, Վրթանեսի վրա կատարված հարձակումը սպանելու դիտավորությամբ և այլն, ցույց են տալիս, թե քրիստոնեությունը ավելի զոհեր տարավ Հայաստանում՝ այնտեղ պաշտոնապես

հաստատվելուց հետո, քան մինչև հաստատվելը։ Եվ գուցե Գր. Լուսավորիչն այդ գործերից առաջինն է եղել։ Սակայն Ագաթանգեղոսի խմբագրողները հարկ են համարել իրականությունը թաքցնել, որ մեծ ամոթ կլիներ հավատացյալ ժողովրդի համար։ Ո՛չ հայերեն Ագաթանգեղոսը, ոչ արաբերենը չեն հիշում, թե ս. Գրիգոր վախճանված լինի Մանյա այրում և թաղված հովիվներից, այլ կարճ հիշում են «մինչև վախճանի օրը» կամ «մինչև Քրիստոս նրան առավ այս աշխարհից և նա վախճանվեց»։ Ոչ մի բառ նրա հիվանդության, ժողովրդական սգի, թաղման հանդեսի մասին։ (Հմմտ. ս. Սահակի և Մեսրոպի մահվան և թաղման նկարագրությունը Կորյունի մոտ)։ Այնպես որ Մանյա այրում անհայտության մեջ մեռնելը և հովիվներից թաղվելը ավելի նոր կարկատան է՝ Լուսավորչի մահվան իսկական եղելությունը վարագուրելու համար։

247. Վենետիկյան տպագրությունները (և նրանց հետևողությամբ քննական հրատարակությունն) ունեն «զ՚ի Քրիստոսէ հանուրց եղելոցս ճշմարիտ թագաւորէն», որ տեղիք է տվել սխալ թարգմանության։ Էմին թարգմանել է „об истинам царе" (այսինքն Տրդատի). „бывшем когда нибудь со времени Христа" (որտեղ բաց է թողնված «հանուրց եղելոցս» խոսքը)։ Ստեփանեն թարգմանել է «Քրիստոսից հետո բոլոր եղածների ճշմարիտ թագավորի մասին»։ Այսպիսի անտեղի գովեստ չէր կարող տալ Խորենացին Տրդատին, հրաշակելով նրան «առաջին ճշմարիտ թագավոր Քրիստոսից հետո» կամ «բոլոր եղածների ճշմարիտ թագավոր»։

Բնագիրն սկզբնապես ունեցել է «զի Քրիստոսէ հանուրց եղելոյս ճշմարիտ թագաւորէն», «զի»-ն շաղկապով և ոչ թե «զ՚ի»-ն երկու կից նախդրով, որ բաժանված են մակակետով։ Այսպես էլ ունին Խորենացու առաջին երկու տպագրությունները (Ամստերդամի և Վիտոնյան եղբայրների)։ Բայց այս կերպով խոսքը անհասկանալի է մնում մի աղավաղության պատճառով։ Խոսքը ըմբռնելու համար Վենետիկի հրատարակությունները «զի»-ն շաղկապը վերծանել են երկու նախդրի (զ՚), որոնցից «զ»-ն նախդիրը նրանց ենթադրությամբ պետք է վերաբերեր «թագաւորէն» բացառականին, իսկ «ի»-ն նախդիրը «Քրիստոսէ»-ն բացառականին։ Խոսքը այս կերպով արդարև քերականորեն կանոնավորվում է, բայց ստացվում է մի իմաստ, որ բոլորովին անընդունելի է. Վենետիկի հրատարակիչները հոնքը շինելու փոխանակ աչքն էլ հանել են։

Աղավաղությունը ուրիշ կերպով պետք է ուղղել։ «Քրիստոսէ» և «թագաւորէն» բառերի «էն» գիրը պետք է զատ գրել իբրև բայ և նրանցից մեկը ջնջացնել, այսպես՝ «զի Քրիստոս է հանուրց եղելոցս ճշմարիտ թագաւոր», կամ «զի Քրիստոս հանուրց եղելոցս ճշմարիտ թագաւոր է»։ Թեպետ ես համոզված էի, որ «զ՚ի» գրությունը Վենետիկի հրատարակիչներինն է և ձեռագրերով չի հաստատվում, այնուամենայնիվ խնդրեցի Պետական ձեռագրատան ավագ աշխատակից ընկ. Աշոտ Աբրահամյանին՝ մի քանի ձեռագրերում ստուգել այդ տեղը։ Նրա ուղարկած երեք ձեռագրի ընթերցվածների մեջ գրված էր «զի» և ոչ «զ՚ի»։

Բնագիրը այս կերպ վերականգնելուց հետո մնում էր պարզել, թե ի՞նչ գործ ունի այստեղ Քրիստոսի՝ իբրև ճշմարիտ թագավորի հիշատակությունը։ Այս էլ հեշտ պարզվում է, միանգամայն ցույց տալով Խորենացու փափկանկատությունը։ Պատմահայրը գրում է. Տրդատի մասին, «զմերոյ լուսաւորութեան

Հոգևոր վէրակացու։ Հաւելով՝ թէ Քրիստոս է հանուրց եղելոց ճշմարիտ թա-գաւոր—հրաշափառագունիւ պարտ էր անցանել բանիւ։ Տրդատ թագավորին Պատմահայրը այստեղ կոչում է՝ «Հոգևոր վէրակացու»։ Վերակացու բառը նա տասնյակ անգամներ գործ է ածել՝ նշանակելու համար մի մարդ, որ թագա-վորից կարգված է մի երկրի կամ մի գործի վրա իբրև կառավարիչ։ Արդ՝ երբ նա թագավորին այստեղ վերակացու է անվանում, դրանով կարծես ստորաց-նում է նրա պատիվը։ Եթե Տրդատը վերակացու է, ապա ո՞վ թագավորն է նրան կարգել այդ պաշտոնի վրա։ Ահա սրա պատասխանն է—Քրիստոս, որովհետև Քրիստոս իսկական թագավորն է բոլոր գոյացությունների, ուրեմն և կարող էր Տրդատին նշանակել հոգևոր վերակացու։

248. Բնագիրն ունի «Հանգներգութիւնս ըստ իւրաքանչիւր պատմագրաց արտասանութեանց և ոչ յատուկ ի մէնջ շարագրեցաւ»։ Էմինը թարգմանել է „все сказанное в этой книге заимствовано у других историков а не нами сочинено". Սուքիասյանն թարգմանել է «Այս գիրքը գրվեցավ զանազան պատ-մագիրների նկարագրությունների համեմատ և ոչ միայն մեզանից»։ Երկու թարգմանություններն էլ բավարար չեն, մանավանդ որ բնագրի «Հանգներգու-թյունս» բառը թարգմանել են գիրք, книга։ Մեր թարգմանությունը փոքր ինչ տարբեր է, բայց խոստովանում ենք, հեղինակի իսկական միտքը պարզ չէ մեզ համար։

249. Տե՛ս Սաղմ. ԼԵ, 8։

250. Տե՛ս Սաղմ. Դ, 3—6։

251. Տե՛ս Սաղմ. ԼԴ, 8—10. Խորենացին միակ հեղինակն է, որ հաղորդում է այս տեղեկությունը Տրդատ թագավորին թունավորելու մասին։

252. Տե՛ս Ես, ԽԲ, 2։

253. Ակնարկում է Գր. Նազիանզացու խոսքի վրա, «ուր շատախոսությանն հոսանք իբրև յաղբերէ զիմենս (Խալաթ. Арм. Арш. II. եր. 70)։

254. Տե՛ս Մատթ. ԻԳ, 35։

255. Տե՛ս Ղուկ. ԻԳ, 31։

256. Դիոդոր Սիկիլիացին հույն պատմագիր է, որ ապրել է Ա դարում ՆՔ.։ Նա գրել է ընդհանուր պատմություն 40 գրքից բաղկացած, որոնցից առաջին հինգ գրքերն ամփոփում են դիցաբանական ժամանակները մինչև Տրոյայի կործանումը։ Շարունակությունն ամփոփում է պատմական ժամա-նակները մինչև 60 թվականը ՆՔ. ժամանակագրական կարգով իբրև տարե-գրություն։ Նրա աղբյուրները հնագույն ժամանակի պատմական գրվածքներ են, որոնք կորած են այժմ և որոնցից նա քաղվածքներ է անում։ Նրա այս Պատմու-թյունից, որի վրա աշխատել է 30 տարի, մեզ հասել է միայն առաջին մասը, 15 գիրք։ Մյուս մասերից քաղվածքներ են մնացել ուրիշ հեղինակների մոտ։

257. Խորենացու Պատմության երրորդ գրքի Բ—ԽԲ գլուխները պարունա-կում են մեր պատմության այն ժամանակաշրջանը, որ ավելի մանրամասն նկարագրված է Փավստոսի պատմության մեջ, որը և պետք է միշտ նկատի ունենալ երկու հեղինակների ավանդածները համեմատելու և փոխադարձա-բար ստուգելու համար։ Հիմնական մասերում երկու հեղինակները համաձայն են իրար, բայց պարագաների և մանրամասնությունների մեջ տարբերվում են։ Եվ որովհետև Փավստոսի Պատմությունն ավելի առաջ է գրված և Խորենացին,

ըստ ամենայն հավանականության, ծանոթ է այդ պատմությանը, շատ հետաքրքրական է դառնում ուսումնասիրել թե ի՞նչ պատճառներով Խորենացին այս կամ այն պարագայում զանազանվում է Փավստոսից։

258. Հովհաննու վկայարանը Հովհաննես Մկրտչի վկայարանն է Տարոնում, ժողովրդի մեջ սուրբ Կարապետ կոչված, աշուղների երգերում՝ «Մշու Սուլթան սուրբ Կարապետ»։ Սա Հայաստանի առաջին եկեղեցին էր, որ շինեց Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից վերադառնալիս և նրա մեջ դրեց Հովհաննես Մկրտչի ոսկորներից մի մասը, ինչպես պատմում է Ագաթանգեղոս։

259. Եղիսե մարգարեի վերաբերմամբ Խորենացին նկատի ունի այն անցքը, որ երբ Եղիսեն գնում էր ճանապարհով, մի խումբ մանր երեխաներ դուրս եկան և ծաղրելով կանչում էին նրան. «Ե՛լ, կնդակ, ե՛լ, կնդակ», (Եղիսեն ճաղատ էր)։ Եղիսեն նրանց անիծեց և իսկույն անտառից դուրս եկան երկու արջ և երեխաներից քառասներկուսին կոտորեցին (Դ Թագ. Բ, 23—25)։ Իսկ հրեաների գետնին զարկվելը տես Հով. ԺԸ, 5—6։

260. Հակոբ, Մծբնա հայրապետ, նշանավոր եկեղեցական հայրերից մեկը, որ մասնակցեց նաև Նիկիայի առաջին տիեզերական ժողովին և վախճանվեց 337 կամ 338 թվին։ Նրա անունով գոյություն ունի մի գրվածք «Զգոն» անունով, որ բովանդակում է 22 ճառ կրոնական բովանդակությամբ, որ դեռ հինգերորդ դարի առաջին կեսում ասորերենից թարգմանված է հայերեն։ Ներկա քննասիրությունը այս ճառերը վերագրում է պարսիկ Աֆրաատ եպիսկոպոսին։ Ս. Հակոբը մեծ ժողովրդականություն է վայելում հայերի մեջ. նրա անունով սուրբ Հակոբա աղբյուր է կոչվում Մասիսի լանջերից բխող մի աղբյուր (սկզբնապես այսպես կոչվելիս է եղել այն աղբյուրը, որ ս. Հակոբը բխեցրել է Սարարատ սարի վրա Կորդվաց աշխարհում, երբ բարձրանալիս է եղել այն սարը՝ Նոյի տապանից մի կտոր փայտ ձեռք բերելու համար։ (Փավստոս, Գ, Ժ)։ Բայց երբ ժողովրդական ավանդությունը Սարարադի փոխարեն Մասիսի վրա փոխադրեց տապանակիր լեռան պատիվը, աղբյուրն էլ նույնպես փոխադրվեց Մասիսի վրա։ Սուրբ Հակոբի անունով շատ եկեղեցիներ են շինված։

261. Բնագիրը մի քիչ անորոշ է— «չետ միոյ նուագին զօր ի յունականացն կրեցին զօրացն»։ Էմին թարգմանել է. „не противился также восстанию и отложению стран после похода греческого войска“ (տպ. 1858 թ.), կամ „Ни же препятствовал отнятию (у себя) стран греческими войсками“ (Բ. տպ. Ստեփանեի թարգմանությունը իմաստի կողմից ավելի ճիշտ է. «Բայց մի անգամից, երբ հարձակվեցավ հունական զորքերի հետ», թեև քերականորեն «ի յունականացն կրեցին զօրացն» չի կարող նշանակել «հարձակվեցավ հունական զորքերի հետ»։ Գուցե Խորենացին այստեղ նկատի ունի այն միակ դիմադրությունը, որ Խոսրովը ցույց տվեց պարսից թագավորին հունական զորքի օգնությամբ (Գ, Ժ)։

262. Աղեքսանդր Մակեդոնացու երեք կանգուն հասակ ունենալը Խորենացին գիտե Սուտ Կալլիսթենեսից։ (Арм. Арш. II. 761 ծանոթ.)։ Հասարակ կանգունը հավասար է երկայնության՝ արմունկից մինչև միջամատի ծայրը, որ կազմում է միջակ մարդու հասակի մի քառորդը։ Ուրեմն Աղեքսանդր Մակեդոնացու հասակը հավասար է եղել միջին մարդու հասակի երեք քառորդին։

263. Այս խոսքից երևում է, որ Խորենացին Դուին բառը համարում է

պարսկերեն, որ նշանակում է բլուր։ Փավստոսի մոտ այս տեղում ասված է. «մինչև ի դաշտն Մեծամորի, ի բլուրն որ անուանեալ կոչի Դուինս։ Ուրեմն ըստ Փավստոսի Դվին այդ բլուրի անունն է եղել, և ոչ թե Դուին պարսկերեն բառ է և նշանակում է բլուր։ Որովհետև մասնագետները ոչ հին և ոչ նոր պարսկերենում չեն գտել Դուին կամ նման հնչող մի այլ բառ բլուրի նշանակությամբ. ուստի եզրակացրին, թե Խորենացին շփոթել է Փավստոսի խոսքերը. (Арм. Арш. 20)։

Այս առիթով ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ Նորայր Բյուզանդացու մի դիտողությունն այս հարցի վերաբերյալ. «Յարգ և ինձ իսկ գլխովին չեղև հնար գտանել զԴուին ի պարսկերեն բառարանի, այլ գտի կենդանաց բարբառոյն մէջ Դուն, որ է հայերեն Բլուր։ Հայտնի է, թե կելտերենն է յազգատոհմէ Հնդկերոպական լեզուաց ընդ սանսկրիտ, հայ, հույն, հռոմայեցի, սլաւեան և գերմանական բարբառս։ Լիտրէ ի գաղղիերէն բառարանին կը գրէ ի ստուգաբանութիւն Dune բառի (Լիտրեի խոսքերը ես բերում եմ հայերեն թարգմանությամբ). «Լատիներեն dunum, հունարեն doynon բառեր, որ նշանակում են բարձրություն և որոնք հին հեղինակներից բերվում են իբրև կելտերեն։ Նրանք այժմ էլ գոյություն ունեն ժամանակակից կելտական լեզուներում՝ կիմրերենում, իռլանդերենում և գալերենում dun ձևով՝ բլրակ, հողաբլուր նշանակությամբ, ստորին բրետոներենում tun բլուր նշանակությամբ»։ Նույն մտքով վկայություն է բերում Նորայր նաև Դեգոբբիի և Բաշլիեի բառարանից։ (Տեղեկություն ի գիրս Պատմության Ասողկան, եր. 13)։

Պատահակա՞ն է արդյոք, որ հնդկրոպական մի ճյուղի մի քանի լեզուներում գոյություն ունի դուն բառը հենց նույն նշանակությամբ, որ տալիս էր Խորենացին Դուին-ին։ Ավելի հավանական չէ՞ ենթադրել, որ պահլավերենն էլ, կելտերենի քույրը, ունեցել է նույն արմատը, որ սակայն պահլավերեն գրականության մեջ գործածված չէ, սակայն ծանոթ էր Խորենացուն։ Արմատական բառարանում պատահում ենք հարյուրավոր պահլավերեն բառերի, որոնք պահլավական գրականության մեջ չեն գործածված, բայց պահպանվել են հայերենում իբրև փոխառություններ։ Դրանց թվին կարող է պատկանել և Դուին բառը։ Չմոռանանք, որ Խորենացին, ինչպես շատ նշաններից երևում է, գիտեր պահլավերեն լեզուն, այսինքն իր ժամանակի պարսկերենը։

264. Բնագիրն ունի «ճախր առնոյր կաճեայն», որ դժվար հասկանալի էր։ Էմինը թարգմանել է. „вращалась его войлочная (броня)“։ Մալխասյանն թարգմանել է «Նիզակի հարվածից նրա թաղիքը ճահում էր»։ Մենք էլ թարգմանեցինք ենթադրաբար՝ «թաղիքը շուռ էր գալիս»։ Բայց պետք է հասկանալ այն մտքով, թե թաղիքը շատ խիտ ու առաձգական էր, ուստի նիզակի հարվածից չէր ծակվում, այլ փոս էր ընկնում և նորից իր ձևն ստանում։

265. Այստեղ մի հակասություն կա. ձիու գավակի կողմից չի կարելի հակառակորդի աչքին խփել, ինչպես ցանկանում էր Վահան Ամատունին։ Կարծում ենք, որ այստեղ «ականն» բառն աղավաղված է, փոխանակ ծոծրակն («ծոծրակն» ձևից), ուրեմն Վահանը թշնամու հետևի կողմից, նրա ձիու գավակից՝ նիզակի հարված է հասցնում նրա մերկ, չպաշտպանված ծոծրակին։

266. Կամսարական Արշավիրը այն պատճառով է կոչված առաջին պատվավոր անձ թագավորից հետո, որովհետև Կամսարականները պահլավական ծագում ունեին, սերված լինելով Կարենյան Պահլավից։ Հայ Արշակունիները, ինչ-

պես հայտնի է, Արշակունիների մեծ տոհմում երկրորդ տեղն էին գրավում Պահլավներից հետո։

267. Ճորա պահակը նույն Ճորա դուռն է։ Տե՛ս ծանոթ. 201։

268. Կեսար (Caesar), Հուլիոս Կեսարի հատուկ անունից, որ հռոմեական կայսրների պատվանուն դարձավ և գրվում էր կայսր (imperator) բառից հետո, հատուկ անունից առաջ։ Հետո թե՛ Հռոմում և թե՛ Բյուզանդիոնում այս անունն սկսեցին կրել այն անձերը, որոնց կայսրները նշանակում էին իրենց հաջորդ, նաև այն բարձրաստիճան անձերը, որոնք կայսրից հետո երկրորդն էին տերության մեջ և կառավարում էին երկիրը կայսրի ղեկավարության տակ։

269. Երանելի Կյուրեղը՝ Կյուրեղ Ալեքսանդրիացին է, նշանավոր հույն հոգևորական և մատենագիր, որ Ալեքսանդրիայի պատրիարքական աթոռը գրավեց երեսունևերկու տարի (412—414)։ Նա հանդես եկավ Կ. Պոլսի պատրիարք Նեստորի դեմ, որ ուսուցանում էր, թե Քրիստոսի մայրը չի կարելի կոչել աստվածածին։ Կյուրեղի ջանքով գումարվեց Եփեսոսի ժողովը 431-ին, որին նախագահում էր ինքը և որը դատապարտեց Նեստորին իբրև աղանդավորի։ Թողել է բազմաթիվ գրվածքներ, որոնց մեջ դավանաբանական տեսակետից առանձին կարևորություն ունին նրա գրվածքները Քրիստոսի մի բնության մասին և նզովքները նրանց դեմ, որոնք չեն դավանում մի բնություն։ Նրա բարձր հեղինակության և անկասկածելի ուղղափառության պատճառով նրա այս գրվածքները զենք եղան մեր նախնյաց (հակաքաղկեդոնականների) ձեռքին՝ մարտնելու քաղկեդոնականների դեմ, որոնք ստիպված էին ընդունել քաղկեդոնական դավանությունը (երկաբնակությունը)։ (Տես Հայոց Թուղթը Կոստանդին կայսրին, Սեբեոսի մոտ, գլ. ԽԳ, էջ 136—137, Խաչիկ կաթողիկոսի Թուղթը Սեբաստիայի մետրոպոլիտին, Ասողիկի մոտ, գլ. ԻԱ, որտեղ հաճախ է հիշվում Կյուրեղը)։

Կյուրեղի բազմաթիվ աշխատություններից շատերը թարգմանված են հայերեն ութերորդ դարում Ստեփանոս Սյունեցու ձեռքով. մի քանիսն՝ ավելի առաջ, հինգերորդ դարում։ Այս թարգմանությունները մի մեծ հատորով տպագրված են Կ. Պոլսում 1712 թվին «Գիրք պարապմանց» հին վերնագրով։

270. Հուլիանոս Կլավդիոս, Կոստանդիանոս Մեծի եղբորորդին, ծնված 331-ին։ Նա 353-ին նշանակվեց Կեսար, 360-ին զորքի կողմից ընտրվեց կայսր, 361-ին ամբողջ կայսրությունը միացրեց իր միահեծան իշխանության տակ։ 363-ին սպանվեց պարսից դեմ մղած պատերազմի ժամանակ։ Դաստիարակված լինելով անապատականների ոգով՝ նա զզվանք զգաց դեպի աշխարհիկ կյանքը և սկսեց հալածել քրիստոնեությունը. և ջանք էր անում վերականգնել հին հեթանոսական կրոնը, բայց իզուր։ Նա կնքված է Ուրացող անունով և նրա անունը մինչև այսօր դեռ կենդանի է հայ ժողովրդի մեջ, որ գործ է ածում «չար Հուլիանոս» անունը, նշանակելու համար խարդախ, խորամանկ մարդկանց։

271. Բնագրում «յորժամ զնա ընդդեմ Պարսից իրավունքն զինեցին»— կասկածելի խոսք։ Էմինը թարգմանել է. „Когда правосудие (Божие) вооружило его против Персов". Ստեփանեն՝ «և երբ իրավունքները զինավորեցին նրան պարսիկների դեմ»։ Մեզ թվում է, թե «իրավունքն զինեցին» խոսքը աղավաղված է։

272. Թաս անունով աստվածություն հայտնի չէ։ Էմինը (Սան. 381) հա-

վանական ենթագրություն է անում, թե սա աղավաղություն է հունական «Արես» բառի, այսինքն պատերազմի աստծու։ Այս աղավաղությունը կարող է հետևանքն լինել հայ ժողովրդի արտասանության։ Համեմատել՝ Արիստակես-Ռոտակես։

273. «Մազդեզանց քաջ», Մազդեղն իրանական բառ է. զենդերեն մազդա-յասնա, պահլավերեն՝ մազդա-յաստ, մազդեզն հայկն, և նշանակում է Մազդին (= Արամազդին) պաշտող, այսինքն զրադաշտական կրոնին հետևող։ Ուրեմն Շապուհի տիտղոսի մեջ «Մազդեզանց քաջը» նշանակում է զրադաշտականների (կամ ինչպես մենք կասեինք՝ հավատացյալների, ուղղափառների) մեջ քաջը։ Մեր հին մատենագիրները ևս համախ գործ են ածում Մազդեզն, Դենի Մազդեզն (դուստ պահլավերեն), մազդեզական և այլն։ Հյուրշման, Արմատ. քառարան։

274. Սեռեկիա—Հուդայի վերջին թագավորը, որին նշանակել էր Նաբուգոդոնոսորը 597 թ. ն. Ք.։ Նա մտածեց ապստամբել Նաբուգոդոնոսորից և քաբելական լուծը թոթափել։ Բայց հաղթվեց, բռնվեց, կուրացվեր և մեռավ բանտում։ Նրա հետ միասին վերջացավ և Հուդայի թագավորությունը։ Սեդեկիային հարենային հիշում է նաև Ողբի մեջ։

275. Աքիլլեսը Հոմերոսի Իլիականի գլխավոր հերոսն է, ամենաքաջը Տրոյան պաշարող հույն զորականների մեջ, որ և սպանեց Հեկտորին, Պրիամոսի մեծ որդուն, որ տրոյացոց ամենաուժեղ կռվողն էր և հույների սարսափը։ Թերսիտեսը նույն Իլիականի մեջ հիշված մի հասարակ զինվոր էր, որ համարձակություն ունեցավ թագավորներին և ավագներին քննադատել, որի պատճառով Ոդիսևսը նրան կծու խոսքերով նախատեց ու ծեծեց։ Հոմերոսը, ինքն էլ ազնվապետական դասակարգին համակրող, այս միակ դեմոկրատին, Թերսիտեսին, դուրս է բերել ծաղրելի և տգեղ արտաքինով։

276. Բորը (Lepra) սաստիկ վարակիչ և անբուժելի հիվանդություն է, ասում հնուց ի վեր ամեն տեղ բորոտներին հալածում էին բնակություններից հեռու, որպեսզի առողջներին չվարակեն։ Բարեկարգ պետություններ հատուկ ուրեխանոցներ էին շինում, որոնց մեջ ժողովում ու փակում էին ուրուկներին (բորոտներին), այնպես որ ուրիշ մարդկանց հետ շփում չունենան։ Նրանց անհրաժեշտ ուտելիքը և այլ պիտույքները շինվածքի մի փոքր բացվածքից ներս էին դնում։ «Օրենք» բառով այստեղ պիտք է հասկանալ Մովսեսական օրենքը (Ղևտ. ժԳ), որ բորոտներին պիղծ էր ճանաչում, պատվիրում էր բանակից դուրս և առանձին պահել և շորերն այրել։ Ինագրում գրված է. «Պաշտեցեն զնոսա հարկավ, բացէ ի բաց»։ Թարգմանիչներն այս երկու բառը բաց են թողնում, այնինչ նրանք կարևորություն ունեն, որոնք ցույց են տալիս, թե Ներսես կաթողիկոսը պարտադիր էր դարձրել դրանց խնամելը (պաշտելը), բայց զգուշության համար պատվիրում էր կերակուր բերողներին չմոտենալ բորոտներին, այլ բացնիբաց, այսինքն հեռվից տալ նրանց պիտույքները։

277. Տե՛ս. Մատթ. է, 2։

278. Ինագրում գրված է. «ի լերինդ Սաղկաց գոպարկացիր ջրով», որ մենք թարգմանեցինք «աննպաստ և ջրավետ տեղում, ինչպես մոտավորապես թարգմանել են և ուրիշները։ Ալիշան (Այրարատ, էջ 516) պարկացիր անծանոթ բառը համարում է հատուկ անուն, Արածանիի վտակներից մեկի անունը։ Նույն տեղում Ալիշանը Սաղկաց լեռը դնում է Սաղկեոտն գավառում, որ հակա-

ռակ է դուրս գալիս Խորենացուն, որովհետև Մաղխազն գտնվում էր Այրարատյան նահանգում, այնինչ Գնելը Արշակի հրամանով, ինչպես քիչ վերը պատմված է, Այրարատյան նահանգից հեռացել էր Աղիովիտ և Առբերանի գավառները, այսինքն Վասպուրական, ուրեմն և այնտեղ պետք է գտնվեր Մաղկաց լեռը։ Գնելի մարմինն էլ, սպանվելուց հետո, իջեցնում են Աղիովիտի դաշտը։

279. «Կյանքի դեղի միջո», այսինքն հաղորդության բաժակի մեջ։ «Առաջին կին» կոչված է Օլիմպիադան՝ ըստ ավագության Արշակի կանանց մեջ, այսինքն տիկնություն, ինչպես անմիջապես հարում է Խորենացին։

280. «Թեոցներով կրել», Քթոց, գրաբար որթ, հարկավոր է եղել՝ սառուցարանելու։ Հյուսմար փիկված երեխաներից գոյացած ամանը՝ Որթը անունով։ Բայց ավելի հետաքրքրական է այն հանգամանքը, որ հունարենում „ἄγγος" բառը, որ ընդհանրապես նշանակում է քթոց, ունի նաև մի հատուկ նշանակություն՝ դամբյուղ, որի մեջ դնում էին ընկեցիկ երեխաներին (Bailly, „Ἄγγος" I, 3)։

281. Սյունյաց տոհմը բնաջինջ անել տալու պատճառն այն էր, որ Տիգրանակերտի հայ զորքի պետը և Շապուհին գլխադրողը Անտիոքն էր (ըստ Փավստոսի՝ Անդովկ), Արշակի աները, Սյունյաց իշխանը։

282. Հեղինակը նկատի ունի Աղաթանգեղոսի խոսքը—«արժարժեն է տուրնջենէ ի գիշեր և ի գիշերոյ ի տիւ, փոխարէնս անկեալ փոխարինինս։ Ցույց է տվել Նորայր Բյուզանդացին (Տե՛ս «Մշակ», 1898 թ. № 217)։

283. Վաղենտինիանոս Փլավիոս (Valentinianus Flavius) կայսր, զորքի կողմից կայսր ընտրվեց 364 թվին, մեռավ 375-ին։ Նրան հաջորդեց եղբայրը, Վաղես (Valens), որ նույն 364-ից սկսած նրա հետ կառավարում էր պետությունը, իսկ նրա մահից հետո միահեծան կառավարեց։ Գրեթե բոլոր ժամանակ նա պատերազմ էր մղում պարսիկների դեմ, բայց խոշոր պարտություն կրեց Գոթերի դեմ պատերազմում և փախուստի ժամանակ մեռավ։ Վաղեսն Արիոսի վարդապետության հետևող էր և սրանով է բացատրվում մեծն Ներսեսի՝ Արշակ թագավորի պատգամավորի՝ աքսորը, թեպետ մանրամասնությունները տարբեր են պատմում Փավստոսը և Խորենացին։

284. Ոստանի մասին տես ծանոթ. 84։

285. Եղիայի և Եղիսեի մասին տե՛ս Գ թագ. ԺԷ, 16, Դ թագ. Բ, 5։

286. Իլիու, լիակատար ձևով՝ Իլիուպոլիս (հունարեն Ἡλιούπολις Հելիոպոլիս), այսինքն արեգակի քաղաք։ Այս անունով հայտնի են երկու ամենահին քաղաքներ, որոնցից մեկը գտնվում էր Ներքին Եգիպտոսում, Կահիրեից հարավ, իսկ մյուսը, որի մասին այստեղ խոսվում է, գտնվում էր Ասորիքում, երկու Լիբանանների («Լիբանանոս») միջև, Կղեսուրում, որ մի ժամանակ շեն և վաճառաշահ քաղաք էր, բայց ներկայումս աննշան փոքրիկ քաղաք է և կոչվում է Բաալբեկ։ Ավերակներն այստեղ երեք խավից են բաղկացած—ստորին՝ ստորերկրյա խավը կազմում է հիմքը. միջին խավը պարունակում է Արեգակի տաճարի ավերակները, իսկ վերին խավը Արաբացիների շինած բերդն է։ Ստորին խավը շինված է ամենահին ժամանակներում, ե՞րբ և ո՞ւմից—հայտնի չէ։ Սա մի կիկլոպյան շինություն է— սալահատակ հսկայական մարմարյա կամ հասարակ քարե տաշած բեկորներից։ Սրանցից երեքը վիթխարի մեծություն ունեն—19 մետր երկայնություն, 4 մետր լայնք, և 4 մետր բարձրություն— ավելի քան 300 խորանարդ մետր միակտուր քար։ Այս երեք վիթխարի քարերի պատճառով է, որ այս տաճարը կոչվել է Երեքքարյան։

287. Մակեդոնը Կոստանդնուպոլսի պատրիարք էր, որ 360 թվին դահավիրկ եղավ ոչ այնքան դավանաբանական սխալ վարդապետության պատճառով, որքան ինքնագլուխ գործողությունների և հակառակորդների ոսոխության պատճառով։ Ս. Հոգու դեմ վարդապետությունը, որ Խորենացին մեջ է բերում, նրան չի պատկանում, այլ նրա հետևողներին, որոնք նրա անունով կոչվեցին մակեդոնականներ կամ հոգեմարտներ։ Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովը, որ կոչվեց երկրորդ տիեզերական ժողով, գումարվեց 381-ին և նզովեց Հոգեմարտության վարդապետությունը Մակեդոնի մահից հետո։ Այս ժամանակ մեռած էր նաև Մեծն Ներսես կաթողիկոսը։

288. Անհուշ բերդի և բանտի տեղը որոշ հայտնի չէ, հավանորեն գտնըվում էր Խուժաստանում (Խուզիստանում)։ Փավստոսը հաճախ հիշում է այս բանտը՝ Անդմըշ, Անդմըշըն անունով, կցելով իբրև բացատրություն «զոր անյուշն անուանեն»։ Հյուբշմանի կարծիքով Անդմըշն անունն առաջ է եկել Անդիմիշկ քաղաքի անունից, որ ներկայումս կոչվում է Դիզֆուլ և գտնվում է Խուզիստանում։ Այս բերդում բանտարկության դատապարտում էին ամենածանր հանցավորներին մշտնջենապես, ցմահ։ Պատժի էր ենթարկվում այն մարդը, որ կհամարձակվեր պարսից թագավորին հիշեցնել որևէ մեկին, որ բանտարկված էր լինում այստեղ։ Նա (բանտարկվածը) մատնվում էր մոռացության, այս իսկ պատճառով օտարազգի հեղինակները այս բերդը կոչում են մոռացության բերդ։

289. Սավուղ, իսրայելացիների առաջին թագավորը, որ մի պատերազմի ժամանակ, թշնամիների ձեռքը չընկնելու համար իր սրով անձնասպանություն գործեց, մոտ 1056 թ. Ն.Ք.։ Նրան հաջորդեց Դավիթը,

290. Այսինքն զրադաշտական կրոնին։ Տե՛ս ծանոթ. 273։

291. «Եպիսկոպոսներին հարկերի պատճառանքով կապում ուղարկում էր Պարսից երկիրը»։ Չպետք է հասկանալ այն մտքով, թե եպիսկոպոսներն իրենց վրա դրված հարկերը չէին վճարում. նրանք այս ժամանակ հարկերից ազատ դասակարգ էին կազմում, այլ որովհետև իրենց թեմերում պետական հարկերը լրիվ չէին հավաքում։ Շատ վկայություններ կան, որ ժողովրդից պետական հարկերը գանձելու պարտականությունը դրված էր կաթողիկոսների վրա, որոնք էլ հարկերը բաշխում էին թեմերի վրա և գանձումը հանձնում եպիսկոպոսներին (թեմերի առաջնորդներին). վերջիններս էլ հավանորեն իրենց թեմի վրա ընկած հարկը բաշխում էին քաղաքների և գյուղերի վրա և գանձումը հանձնում քահանաներին։

292. Ստրատելատ հունարեն բառ է, στρατηλάτης և նշանակում է զորքի հրամանատար, համանիշ սպարապետ և զորավար բառերին։

293. Դրանիկ բառը միայն այստեղ է պատահում մեր հին մատենագրության մեջ, ուստի և դժվար է որոշել նրա ճիշտ նշանակությունը։ Ծագում է դուռն բառից, թագավորի պալատի՝ արքունիքի նշանակությամբ, ուրեմն կարող է նշանակել պալատական սպասավոր, պալատական պաշտոնյա։ Կա գործածված «դրանն մարդիկ» խոսքը, որ հավանորեն նույն նշանակությունն ունի։ Հայկ. բառարանը բացատրում է, «որ կայ առ դրանն»։ Արմատ. բառարանը թարգմանում է պալատական։ Էմինը (ծանոթ. 416) նկատի առնելով, որ այստեղ խոսքը զորքի մասին է և ոչ պալատական պաշտոնյաների, դրանիկ բառը թարգմանել է гвардия, այսինքն թիկնապահ զորք։

294. Ստեփանեի թարգմանությունն այստեղ ճիշտ չէ՝ ամերայինները ձիեր

հեծած, այնինչ ձիավոր էին պարսից պատանիները, որոնք այս պատճառով չէին կարողանում պարսից ճակատի մեջ մանել պատսպարվելու: Երկրորդ թարգմանիչները էլ բնագրի «Դի ցուրտ յերկիր ընկենուին» խոսքը թարգմանել են—Էմին՝ „холодными трупами бросали их на землю". Մալխասյանը՝ «Նրանց ցուրտ դիակները գետին էին ձգում»: Բայց նոր սպանված մարդու դիակը ցուրտ չի լինում: Եթե «ցուրտ» բառն այստեղ ցրել բայից ածանցված ձև չէ՝ «ցիրուցան» նշանակությամբ, ապա պետք է հասկանալ իբրև անշնչացած:

295. «Անխայլամ գէսքս»: Մի քանի ձեռագրեր ունեն «անխայլատ գէսքս», որ սխալ է: Նորայր Բյուզանդացին ցույց է տվել ուղիղ ձևը՝ անխայլամ գէսքս. Խայլամ նշանակում է անասունի գանգ. գէսք՝ գլխի երկար մազերն են, վարսեր: Ուրեմն անխայլամ գեսք նշանակում է մազեր առանց գլխի սկավառակի, մազերի փնջեր: Ըստ այսմ Խորենացու նկարագրությամբ՝ հունաց զորքի շղյա և կաշյա պահպանակների վրա իբրև նշաններ կպցրած էին մազի փնջեր, որոնք քամուց ծածանվում էին: Նման զարդ ներկայումս էլ որոշ զինվորական աստիճանավորներ կրում են իրենց սաղավարտների վրա:

296. Վիշապները հռոմեական պատերազմական դրոշակներ էին, որոնց վրա վիշապներ էին հորինված:

297. Ակնարկություն իսրայելացիների պատերազմների վրա ամաղեկացիների հետ, երբ ժամանակ Մովսես բարձրացավ մի բլուրի վրա և բազկատարած աղոթում էր: Երբ նա ձեռները բարձր պահած էր լինում, հաջողությունն իսրայելացիների կողմն էր լինում, իսկ երբ, հոգնելուց, ձեռներն իջեցնում էր, հաջողությունն անցնում էր ամաղեկացոց կողմը: Այս տեսնելով՝ Ահարոն և Ովր մտան նրա թևերի տակ և նեցուկ եղան, որպեսզի ձեռները միշտ բարձր մնան, մինչև որ ամաղեկացիները կատարյալ պարտություն կրեցին: (Ելից. ԺԷ, 8—12): Այստեղ Մեծն Ներսեսը Մովսեսի դերն է կատարում, իսկ նոր ամաղեկը պարսիկներն են, հայերի և քրիստոնեության թշնամիները:

298. Ղեկերը լեզուններն են:

299. Պապ թագավորը զուր է մեղադրվում Փավստոսից, Խորենացուց և հետագա պատմիչներից իբրև Ներսես Մեծին թունավորող: Նոր հեղինակները (Գարագաշյան, Գ, 145) այս բանը չեն ընդունում: Ներսես Մեծը վախճանվեց արյունաքամ լինելուց, թոքերի մեջ մի մեծ երակ պատռվելով, ինչպես հաճախ պատահում է թոքախտավորներին: (Ճաշկերույթն առատ գինիով գուցե արագացրեց այս մահը): Նա ինքը գիտեր իր հիվանդությունը և արյունահոսության պատճառը, ուստի մերժեց ընդունել առաջարկված դեղթափները, որովհետև գիտեր, որ թունավորված չէ: Թունավորելու ավանդությունը կամ արդյունք է հոգևորական դասի թշնամության Պապի դեմ, կամ տգիտության:

300. Ինչպես Ագաթանգեղոս պատմում է, Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոսական ձեռնադրություն ստացավ Կեսարիայի Ղևոնդիոս արքեպիսկոպոսից: Այն թղթում, որ այս ձեռնադրության առթիվ Ղևոնդիոսը գրեց Տրդատին, ի միջի այլոց հաստատուն պայման (կամ պահանջ) է դրվում, որ այսուհետև Հայաստանի քահանայապետներն անշարժաբար իրենց ձեռնադրությունն ստանան Կեսարիայի աթոռից (Ագաթ. ՃԺԶ): (Շատ նշանակալից է, որ այս պայմանը չկա Ագաթանգեղոսի արաբական խմբագրության մեջ): Այս պայմանը կիրառվում էր բոլոր ժամանակ: Առաջին անգամ Սահակ (Շահակ) կաթողիկոսի մասին հիշվում է, թե Պապը նրան Ներսեսի փոխարեն կաթողիկոս նշանակեց առանց

կեսարիայում ձեռնադրվելու, ուրիշ խոսքով՝ Պապը հայոց եկեղեցին հանեց կեսարիայի ատոռազրության վիճակից, դարձրեց ինքնագլուխ եկեղեցի. մի կարևոր ոեֆորմ, որ ապագայում մեծ նշանակություն ունեցավ մեր եկեղեցական, այլև քաղաքական պատմության մեջ— Փավստոսը Հուսիկ է կոչում այս կաթողիկոսին և ավելացնում, թե կեսարիայի հայրապետը ժողով գումարեց, խիստ բողոք գրեց Պապին այս նորամուծության պատճառով, և վճռեց, որ այդպիսի կաթողիկոսները, որոնք կեսարիայից ձեռնադրություն չեն ստանա, իրավունք չունենան եպիսկոպոսներ ձեռնադրելու։ Այնուհետև Հայոց աշխարհից դիմում էին կեսարիա՝ ձեռնադրություն ստանալու համար։ Բթե այս վերջին տեղեկությունն ստույգ է ապա պետք է ասել, որ դա ժամանակավոր էր, և շուտով հայոց կաթողիկոսները հոգևոր ծայրագույն իշխանություն ստացան, ի միջի այլոց՝ և եպիսկոպոսներ ձեռնադրելու իրավունք։

301. Բնագրում գրված է ան Պիսաս, հունարենի հոգնակի հայցական հոլովի վերջավորությամբ։ Պիսան հին քաղաք էր Հունաստանի էլիտա նահանգում։ Իսկ Արեզ քաղաքի մասին ոչինչ չենք կարող ասել։ Մեզ հայտնի (տե՛ս ծան. 286) երկու Հելիոպոլիսներից, այսինքն Արեգակի քաղաքներից ոչ մեկը չի կարող լինել, իսկ բուն Հունաստանում այս անունով քաղաք մեզ հայտնի չէ։

302. Ղանկվատները՝ Լանգոբարդները կամ Լոնգոբարդներն են (=երկայնամորուսներ), Սվեվների մի փոքրաթիվ էյուզը դերմանական ծագումից, որոնք մեր թվականության Ա դարում ապրում էին էլբայի ձախ ափին. այստեղից նրանք հետզհետե տարածվեցին դեպի Դանուբ, Ալպյան լեռներն անցան, Նավահեցին Հյուսիսային և Միջին Իտալիան, բայց իրենք էլ հետզհետե ձուլվեցին տեղական ռոմանական ազգաբնակության հետ, և ութերորդ դարից այս կողմը նրանց անունն այլևս չի հիշվում։ Նրանց անունն է կրում այժմ Իտալիայի մի ընդարձակ նահանգը Հյուսիսում՝ Լոմբարդիա։

303. Քհննես լսկոնացի ըմբիշին, որ 22 կանգուն վազք (ոստյուն, ցատկում) ուներ, հիշում է Ովսեբիոսը ժամանակագրության մեջ (Арм. Арш. II, 103 ծանոթ.)։

304. Սկամանդրոս փոքր, բայց լայն ու խոր գետ է Բրակիայում, որ Տրոյայից հարավ դաշտով հոսելով թափվում է Հելլեսպոնտոս, կոչվում է նաև Քսանթոս (հուն. ξανθός դեղին) դեղնագույն ջրերի պատճառով։ Այժմ կոչվում է Ժենտերե։ Այս գետի վրայով Թռավ Աքիլես ըստ Հոմերոսի (Իլիական, իգ)։ Այս տեղեկությունն էլ Խորենացին առնում է Սուտ Կալլիսթենեսից (Арм. Арш. II, 109)։

305. Հայտնի չէ, թե իսկապես ո՞ր կղզին է Թուլիսը։ Ըստ Շիրակացու Աշխարհացույցի՝ կարող է լինել Անգլիայի հյուսիսակողմում եղած կղզիներից մեկը։

306. Մեդոլանոն այժմյան Միլանն է Իտալիայում։

307. Ստեփաննոս (ծանոթ. 670) ասում է, թե այս հեղինակը, որի վրա ակնարկում է Խորենացին՝ «Նեղոսն է, ե դարի եկեղեցական մատենագիրը» (ավելի ճիշտ՝ Դ դարի վերջերին), բայց Նեղոսից նա համապատասխան քիտատ չի բերում։ Նեղոսի խրատներից հայերեն թարգմանված հատվածները տպագրված են Վենետիկում 1855-ին։ Ստեփաննոս հիշում է այս խրատների առաջին տպագրությունը Կ. Պոլսում 1820 թվին։ Այս տպագրությունը Զարբհանալյանի Մատենագրության մեջ չի հիշատակված։

308. Գազավոնը Կամսարականների ցեղից՝ Պարթև ծագումից լինելով, Հա-

յաստանում աստիճանով առաջին անձն էր ճանաչված թագավորից հետո (տե՛ս ծան. 266)։ Խոսրովը նրա ցույց տված հավատարմությունը վարձատրելու նպատակով կամենում է է՛լ ավելի բարձրացնել նրա աստիճանը, ուստի խոստանում է նրան պատվել ոչ ըստ հին հայրենական ծագման (այսինքն՝ իբրև Պահլավ-Կամսարական), այլ մոր կողմից, որ Արշակունի էր, նրան ևս Արշակունի գրել։

309. Սպուդէ հունարեն բառ է, σπουδαῖος, որ նշանակում է փութաջան, գործունյա, նախանձահույզ։ Այս անունը կրում է Բյուզանդիայում մի առանձին կրոնավորական կարգ, որի անդամներն ուխտում էին անդադար աղոթել, աղքատ ապրել և գրքերով զբաղվել։ Նրանք կոչվում էին նաև ակումիտ (հուն. ἀκοίμητοι) այսինքն անքուն, արթուն։

310. «Ոչ Սահակին և ոչ էլ... նախարարներից որևէ մեկին չխախտեց իրենց պատիվներից»,— այսպես ունի Խորենացու ձեռագրերի մի խումբը (Ա), որին հետևել են քննական հրատարակության խմբագրողները։ Մյուս երկու խմբերը (Տ, Խ) ընդհակառակն ունեն. «Ոչ Սահակին և ոչ էլ... նախարարներից որևէ մեկին թողեց, այլ խախտեց իրենց պատիվներից»։ Այսպես են բոլոր տպագրությունները բացի քննականից։ Մենք ուղիղ ենք համարում Տ, Խ խմբերի ընթերցվածը։ Գազավոնին և Կամսարականներին գահից ու կալվածներից զրկելը հենց նույն գլխում հիշված է։ Իսկ ս. Սահակի գահընկեց լինելուն ապացույց է ողբը. որտեղ ասված է. «Երանի՜ առաջնոյ և երկրորդի փոփոխմանն», որով ակնարկում է ս. Սահակի երկու անգամ գահընկեց լինելը։ Եթե ս. Սահակն այս ժամանակ գահընկեց եղած չլիներ, անհասկանալի կլիներ ողբի մեջ հիշատակված երկու անգամ գահընկեցությունը։ Ուստի պետք է հետևցնել, թե Արտաշիրը ս. Սահակին էլ իրոք գահընկեց արավ։ Բայց նա անձամբ Տիզբոն գնալով՝ շնորհիվ իր բարձր ազնվական ծագման և կրթվածության՝ հաջողեցրեց ոչ միայն իր փեսայի՝ Համազասպյանի սպարապետությունը, այլև Կամսարականներին վերադարձնել գրավված կալվածքներն ու նախարարական գահը, թեպետ ավելի ստոր աստիճանի։ Նույնպես հաջողեցրեց իր վերահաստատությունը կաթողիկոսական աթոռի վրա Արտաշիրի հավանությամբ։ Այս վերջին կետը լռության է տալիս այստեղ Խորենացին, բայց, ինչպես տեսանք, ողբի մեջ հիշում է։ Այս հիման վրա մենք այս տեղը թարգմանեցինք նախկին տպագրությունների համաձայն։

311. Էմինը (ծան. 445) խոստովանում է, թե այս հատվածի իմաստը լավ չի կարողացել հասկանալ և թարգմանել է ենթադրաբար, առանց երաշխավոր լինելու ճշտության։ Պատմահոր լեզուն այստեղ հիրավի մութ է, բայց իմաստը հասկանալի է։ Ըստ Խորենացու՝ պարսից արքունիքում հետևյալ կարգն էր տիրում։ Երբ նոր թագավոր էր նստում, գանձարանում եղած բոլոր դրամները փոխում էին, նոր թագավորի անունով դրամ կտրում։ Դիվանական մատյանները սակայն չէին ոչնչացնում, այլ նոր թագավորի օրերում կատարված փոփոխությունները կամ կարգադրությունները մուծում էին նրանց մեջ իբրև ուղղում կամ հավելում նոր թագավորի անունով, մինչև որ նոր աշխարհագիր կազմվեր, որի ժամանակ այդ փոփոխված ու լրացրած մատյաններն ի նորս մաքուր գրվում էին նոր թագավորի անունով։ Արտաշիրը կարճ ժամանակ (4 տարի) թագավորելով ժամանակ չունեցավ նոր աշխարհագիր անելու և մատյաններն իր անունով փոխել տալու, այլ նրա կարգադրությունները Համազասպի և ուրիշների մասին մնացին գրված հին մատյաններում՝ նոր թագավորի անունով։

312. Մեծն Հովհաննեսը՝ Հոհան Ոսկեբերանն է, որի աքսորը Բյուզանդիայի մայրաքաղաքում ահագին վրդովմունք և ժողովրդական հուզմունք առաջացրեց։

313. Հայկական բանասիրությունը երկար ժամանակ զբաղվել է «Դանիելյան» նշանագրերի հարցով։ Տիրում էր ընդհանուր համոզմունք, թե դրանք վաղեմի հայերեն գրեր են եղել, որոնք երկար ժամանակ մնացած են եղել առանց գործածության, և երբ նորից նրանն են եկել, նկատվել է, որ նրանց մեջ պակասում են գրեր՝ հայ լեզվի այդ ժամանակվա հնչյուններին լիովին արտահայտելու համար։ Կարծում էին բնականապես, որ Մեսրոպը ոչ թե նոր ինքնուրույն այբուբեն է ստեղծել, այլ լրացրել կամ կատարելագործել է այդ Դանիելյան նշանագիրները։ Եվ զանազան բանասերներ զանազան ենթադրություններ էին անում այս նշանագիրների թվի և Մեսրոպի լրացրած գրերի մասին (տես Իս. Հարությունյան «Հայոց դիրը», Թիֆլիս, 1892 թ.)։ Այս սխալ կարծիքը հետզհետե հերքվեց և այժմ վերջնականապես դեն է դրված շնորհիվ Հր. Աճառյանի «Հայոց գրերը» հետազոտության (Վիեննա, 1928 թ.), որտեղ ամենայն մանրամասնությամբ բերված են բոլոր եղած կարծիքները և հերքված և բերված է Մեսրոպյան այբուբենի իսկական պատմությունը՝ ամեն մի գրի հնչյունի և ձևի մասին առանձին դիտողություններով։

314. Գրերի գյուտի մոմենտը Կորյունի մոտ մութ է և դժվար է հասկանալ, թե ի՞նչ է ուզում ասել. «Որում (այսինքն Մեսրոպ Մաշտոցին) պարգևէր իսկ վիճակի յամենաշնորհողէն աստուծոյ հայրական չարիւն ծնեալ ծնունդս նորոդ և աքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին» Խորենացին այս մոմենտը շատ պարզ և կենդանի է նկարագրում։ Երկու հեղինակն էլ հիշում են սուրբ «աջը» և «երկնային շնորհը», ուրեմն մեր գրերի գյուտը համարում են հրաշքի հետևանք։ Թվում է, թե ս. Մեսրոպն էլ այսպես էր հավատացած։ Իհարկե, ոչ մի հրաշք տեղի չի ունեցել, այլ մեր գրերի գյուտը հետևանք է Մեսրոպի երկարատև, տոկուն աշխատանքներին, իսկ Խորենացու նկարագրած տեսիլքը լոկ մի տեսարանական ռեֆլեքս է։

Դեռ Հայաստանում, Դանիելյան նշանագրերը կատարելագործելու վրա աշխատելիս, Մեսրոպին թվում էր թե մի առանձին դժվարություն չկա մի քանի գրեր ավելացնել այդ նշանագրերի մեջ և հարցը կլուծվի։ Միայն երբ նա միջամուխ եղավ այս գործին, առաջին անգամ երևան եկավ մինը մյուսից բարդ ու դժվար հարցեր, որոնց լուծելու համար նա երկու տարի աշխատեց առանց արդյունավոր հետևանքի և ստիպված եղավ դիմել նախ Դանիելին, ապա Ասորիք՝ զանազան գիտնականների, հուսալով թե նրանց օգնությամբ ու խորհրդով

---

[1] Ղ. Փարպեցին, որ շատ այլաբանում է իր աղբյուր Կորյունի պատմությունը գրերի գյուտի մասին, հետևյալ խոսքերն է դնում Սահակ կաթողիկոսի բերանը՝ երբ Մեսրոպը նրան հայտնում է իր սրտի բաղձանքը ազգային այբուբեն ստեղծելու մասին. «Զորացի՛ր և պինդ կաց, վերացրու քահանաներից մի քանի օգնականներ, որոնց ես ինձանակեմ, և որտեղ որ դժվարության հանդիպեցինք հնչյունները կարգելու, բերի՛ր ինձ մոտ, ես կուղղեմ, որովհետև ինչ որ դու փնտրում ես, շատ հեշտ բան է»։ Արդյոք Սահակ կաթողիկո՞ս է եղել այսքան անտեղյակ, որ այս խոսքերն ասել է, թե, որ ավելի հավանական է, Փարպեցին է, որ այս խոսքերը վերագրել է նրան. բայց իրողությունն այն է, որ մի լեզվի համար այբուբեն ստեղծելը հեշտ բան էր համարվում։

կկարողանա կենդանի հարցերը լուծել։ Այստեղ էլ նրա հույսերն ի դերև ելան։ Ոչ ոք չկարողացավ և չէր էլ կարող լուծել այն դժվարությունները, որոնց հանդիպել էր Մեսրոպը, մանավանդ որ նրանք հայ չէին, հայերեն չգիտեին։ Պետք էր արմատական միջոցի դիմել, ուսումնասիրել հայ լեզվի ֆոնետիկան, հունարենի հետ բաղդատելով, և այս ուսումնասիրության վրա հիմնել իր հորինելիք այբուբենը։

Մի թեթև հասկացողություն տալու համար այն դժվարությունների մասին, որոնք ծառացել էին Մեսրոպի առաջ, բերենք մի քանիսը։

Հայաստանում կային բարբառներ՝ իրենց հատուկ արտասանությամբ. Մեսրոպը ծանոթ էր գոնե Տարոնի, Այրարատի, Գողթնի և Սյունիքի բարբառներին։ Հարց էր ծագում՝ այս բարբառներից ո՞րը համարել հիմնական ու ընդհանուր ազգային և նրա համար գրեր հորինել։ Պե՞տք էր արդյոք մյուս բարբառների հատուկ հնչյունների համար, որոնք հիմնականում չկային՝ հորինել գրեր կամ գոնե առանձին նշաններ։ Պե՞տք էր արդյոք ձայնավոր հնչյունները գրերով արտահայտել հունարենի նման, թե՞ դուրս թողած վերև դրված նշաններով, ինչպես ասորերենում։ Պե՞տք էր աջից ձախ գրել ասորերենի նման, թե՞ ձախից աջ՝ ինչպես հունարենում։ Ո՞ր լեզվի այբուբենը պետք էր վերցնել իբրև գաղափար կամ օրինակ. հունարե՞նը, թե ասորերենը։ Տառերի անունները ու ձևերը պետք էր վերցնել հունարենից կամ ասորերենից, թե՞ ինքնուրույն անուն ու ձև տալ։ Հունարենն ու ասորերենը ունեն երկայն ու կարճ ձայնավորներ, արդյոք հայերե՞նն էլ ունի, և ի՞նչ կերպ պետք է արտահայտել երկայնն ու կարճը։ Ի՞նչպես դասավորել այն գրերը, որոնք չկան հունարենում, արդյոք հունարենին համապատասխանող գրերից հետո՞ (ինչպես վրացերենում, սլավոներենում), թե ցրել մյուս տառերի մեջ և ի՞նչ կարգով։

Սրանք ընդհանուր հարցեր էին։ Գալիս էին ապա մի շարք մասնավոր և ավելի դժվար հարցեր։ Զայները գրում էին ιακωβ. χ:: պե՞տք էր հայերեն էլ նույնպես գրել Իակովբ, ախ, թե՞ հարկավոր է հատուկ գիր (յ) ստեղծել (Յակովբ, այս)։ Հույները «հ» հնչյունն արտահայտելու գիր չունեին, այլ գործ էին ածում թավ հագագ արտահայտելու մի նշան (῾), որ դնում էին ձայնավորի վրա։ Պե՞տք էր նրանց հետևել, թե հատուկ գիր ստեղծել (հ)։ Հույները չունեին ю, я հնչյուններ, որոնք կան հայերենում։ Պե՞տք էր դրանց համար հատուկ գրեր ստեղծել, թե երկու գրով արտահայտել իբրև երկբարբառներ, և ի՞նչպես, արդյոք յու, յա՞ (հյուր, կյանք), թե իւ, եա (հիւր, կեանք)։ Վ հնչյունը Մեսրոպին երևի նույնքան է տագնապեցրել, որքան վերջերս մեզ, վազ և ավազ, վան և ավան. արդյոք միակե՞րպ պետք էր գրել միևնույն գրով, թե տարբեր. (վազ, բայց աւազ...)։ Ւ (ւ) գիրը, որ Մեսրոպը դրեց հունական υ-ի դեմ, ահագին դժվարություններ և թյուրիմացություն էր ծագեցնում՝ երբեմն իբրև ձայնավոր հնչվելով, երբեմն իբրև բաղաձայն (թիւր, թիւ)։ Հույները մի ρ ունեին, պե՞տք էր հայերենում էլ մի գրով բավականանալ, թե նուրր ռ-ի համար հատուկ գիր ստեղծել (ր), մանավանդ որ այս հնչյունը միևնույն բառի մեջ փոխվում է (դուռն, դրան, դռունք)։ Նույն այս կերպով հունարեն λ -ի դեմ դնելով ղ (=փափուկ լ և ոչ ղ), կարիք համարեց մի ուրիշ գիր էլ ստեղծել այդ հնչյունի թավի համար (լ)։ Հունական χ-ի դեմ դնելով ք (և ոչ խ, ինչպես ասորերենում), պետք զգաց և մի հատուկ գիր ստեղծել խ-ի համար։ Շրթնային, լեզվային և կոկորդային թավերը պե՞տք էր երկ-երկու գրով արտահայտել—պհ,

տ՜, կ՜ (ինչպես լատիններին ph, th, kh), թե մի-մի գրեր, ինչպես հունարենն ունէր—փ, թ, ք։ Սկզբնական լեզվաշրջնային հնչյունները, որոնք չկան հունարենում, պետք էր գտնել, որոշել և նրանց համար գրեր ստեղծել. (ծ, ձ, ց, ճ, ջ, ղ)։

Այս և սրանց նման շատ հարցեր, որ մենք չենք էլ կարող երևակայել, Մեսրոպի աշխատության ընթացքում հետզհետե երևան էին գալիս, որոնց լուծելու համար նա ոչ մի նյութ չէր գտնում ոչ իր սովորած ուսման մեջ, և ոչ դրսից, որևէ մեկից։ Պետք էր ինքնաշխատությամբ դիմել, հետազոտել, փորձեր անել, մի անգամ ընդունածը վերաքննել և ուղղել։ Այս աշխատության ընթացքում նա նախ ինքն ուսանում էր, հետազոտության միջոցով ձեռք բերված արդյունքները նշանակում էր մագաղաթի վրա որևէ (հունական կամ ասորական կամ ինքնահնար) տառով, և այսպես կամաց-կամաց ստեղծվում էր այբուբենը։

Վերջապես հասավ բաղձալի ժամը, երբ Մեսրոպին թվաց, թե այբուբենն արդեն պատրաստ է։ Բայց ո՞վ կարող էր երաշխավորել, թե նա լիակատար է, և բավական է արտահայտելու համար հայերենի բոլոր հնչյունները. գուցե դեռ կան հնչյուններ լեզվի մեջ, որ ինքը դեռ չի նշմարել և նրանց համար գրեր չի ստեղծել։ Այս մտքի մեջ խորասուզված՝ նստած էր նա մի գիշեր խցիկում, աղոտ լապտերի (կանթեղի) առաջ, աչքերը հառած այն մագաղաթին, որի վրա գրված էր փորձնական այբուբենը։ Անթարթ նայում էր նա այս մագաղաթին և նրա վրա դրած իր ձեռքին, ընկղմված մտածմունքների մեջ։ Մեկ էլ սթափվելով, աչքերը վեր է բարձրացնում և տեսնում է մթության մեջ մի աջ ձեռք, որ գրում է վեմի վրա. ինչպես նա տեսնում է իր առաջ դրված մագաղաթը, վրայի տառերով և իր սեփական ձեռքը։ Սա մի սովորական տեսողական ռեֆլեքս է, որպիսին հարյուրավոր անգամ նկատել ենք ամենքս, երբ երեկոյան դեմ աչքերս ուղղում ենք մայր մտնող արեգակին և հետո ուրիշ կողմ ենք նայում.— մեր աչքի առաջ գոյանում են մանր-մանր արեգակիկներ, որոնք շարժվում են դեպի աջ և դեպի վեր, հանգչում են, ուրիշ արեգակիկներ են երևում, էլի շարժվում ու էլի հանգչում։ Նույն երևույթը միշտ կրկնվում է, երբ մի առարկայի երկար նայելուց հետո մեր հայացքն ուրիշ կողմ ենք ուղղում։ Գիշերը երկար ժամանակ մի գիրք կարդալուց հետո երբ մարդ պառկում է, փակ աչքերին երևում են գրքի գրերը, երբեմն այնքան պայծառ, որ քիչ է մնում առանձին-առանձին գրերը զատի։

Ահա այսպիսի մի տեսիլք է եղել և Մեսրոպի տեսածը՝ իր սեփական ձեռքը, իր առաջ դրած մագաղաթը, (վեմը) և նրա վրա գրված այբուբենը։ Տեսիլքի մեջ ձեռքը շարժվում է, և Մեսրոպին թվում է, թե այդ աջը գրում է այբուբենը։ Նա, իհարկե, չհասկացավ, թե սա մի ֆիզիկական բնական երևույթ է, այլ համարեց աստծուց ուղարկված տեսիլք, և այս հավատն ամրացրեց նրա հույսը։ Ձեռքի շարժումը տեսիլքի մեջ նա բացատրեց, թե «Գրի՛ր, գրելիս փորձով կիմանաս, լրի՞վ է այբուբենը, թե ոչ. եթե մի բան պակաս նկատես, այն ժամանակ կլրացնես»։ Կամ աջի շարժումը դեպի աջ՝ նա բացատրեց այս մտքով, թե պետք է գրել ձախից աջ, հունարենի նման։

315. Այսպիսի բան չէր կարող լինել, որ Մեսրոպը, երկու աշակերտների հետ, հենց Ասորիքում թարգմանած և ավարտած լիներ հին և նոր կտակարանները։ Սա կհակասեր հենց իրեն, Խորենացուն, որ հետո (Գ, ծդ) հիշում է, թե

ս. գիրքը թարգմանեց ս. Սահակը ասորերենից, հունարենը չլինելու պատճառով, և այնուհետև (Գ, կա), որ ս. Սահակ և Մեսրոպ հունարենից թարգմանեցին մի անգամ շտապովի թարգմանածը։ Կորյունը միայն հիշում է, թե ս. Մեսրոպ երկու աշակերտների հետ սկսեց թարգմանել, սկիզբը դնելով Սողոմոնի Առակներից (առանց հիշելու մյուս գրքերը), որ շատ բնական էր փորձելու համար, թե նորագյուտ այբուբենով կարելի՞ է անսխալ արտահայտել հայերենի բոլոր հնչյունները։ Մեզ թվում է, թե բնագրում ընդմիջարկություն է, [illegible] դակելով գրասն և երկու յայտնիսն և զնոր կտակս լինելու ի հայ բանս խոսքը, որևէ ձեռագրի լուսանցքից բնագրի մեջ մուծված խոսքն էլ անկապ է, որովհետև բայը չի համաձայնվում։

316. Աշակերտության համար ընտրված երեխաները, բացի ուշիմ և առողջակազմ լինելուց, պետք է լինեին նաև փափկաձայն և երկայն շնչառությամբ։ Վերջին երկու հատկությունները հասկանալի կդառնան, երբ նկատի առնենք, որ այդ աշակերտներից պետք է պատրաստվեին եկեղեցու սպասավորներ, որոնք հայերեն լեզվով ժամերգություն պետք է կատարեին, ուրեմն և երգեցիկ լինելը պարտադիր էր նրանց համար։

317. Թարգմանիչները բաց են թողել բնագրի «որք ընդ ձեռնադրությանն տուգանեցանն» նշանակալից խոսքը։ Ինչպես տեսանք (ծան. 300), Կեսարիայի աթոռը բողոքեց Պապի կարգադրության դեմ, ըստ որում Հայոց կաթողիկոսներն այլևս Կեսարիա չպետք է գնային ձեռնադրություն ստանալու։ Երբ այս բողոքն անհետևանք մնաց, Կեսարիայի աթոռը Հայոց կաթողիկոսների իրավասության տակից հանեց Հայաստանի հունական բաժինը և միացրեց իր թեմի հետ։ Այսպիսով Հայաստանի հունական մասը տուժեց ձեռնադրության պատճառով։ Սահակ կաթողիկոսը Թեոդոս կայսրին գրած թղթում (Գ, ձէ) դանդատվում է, թե երբ ինքն այդ կողմը գնաց իբրև իր վիճակը՝ իրեն ընդունելություն ցույց չտվին և հայերեն գրագիտությունն էլ թույլ չտվին։

318. Սագաստան, հետո Սնձստան, այժմ Սեիստան, Պարսկաստանի գավառ է, Քիրմանից արևելք ընկած, Աֆղանիստանին սահմանամերձ. դաժան կլիմայի, անապատների պատճառով աքսորավայր էր համարվում, և Հազկերտ Բ ուղարկում էր Պարսկաստան կանչված հայ նախարարներին՝ կապանքներով Սագաստան քշել անճանապարհ տեղերով, եթե համաձայն չառնեին կրակին երկրպագել։

319. Տես Սաղմոս, ԼԲ, 10։

320. Դժվար է ասել, ի՞նչ է նշանակում այստեղ՝ «որպէս և անուանակոչեցեալս եմ» խոսքը։ Տավասպ անունը, որ պարսկերեն նշանակում է «սևաձի», չի բացատրում այս խոսքը։ Գուցե նրան շնորհած էր պարսից թագավորից մի պատվանուն («արարձ համբուրողը»), որ այլուր չի հիշվում, ինչպես Սեբեոսի մոտ գտնում ենք «Խոսրով-շում», «Ջավիտյան Խոսրով» պատվանունները։

321. «Արփայակնաց լինէր» — միայն այստեղ գործածված բառ, որ ավանդաբար հասկանում ու թարգմանում են՝ սլանալ, խոյանալ, արագարար, իբրև օդի միջով հեռանալ։

322. Սահակ կաթողիկոսի նամակները և Թեոդոս կայսրի ու պատրիարքի պատասխաններն իրական չեն, այլ հորինված են Խորենացու այնպես, ինչպես որ նրա կարծիքով այդ անձերը կգրեին, եթե գրելու լինեին։ (Այսպիսի

նամակներ հորինելը հին ժամանակ ընդունված սովորություն էր ոչ միայն մեր, այլև օտարազգի հեղինակների մոտ և դատապարտելի չէր համարվում)։ Սոսկի կայսրի և պատրիարքի մեծագործությունները, որ Սահակ փոխանակ Հունաստան դիմելու անհրաժան ասորիներին է դիմել գրերի գյուտի համար, չի կարելի համարել նույն Խորենացու հայացքը, որ Հունաստանը ճանաչում էր մայր կամ ցայտել իմաստության։—Մեսրոպի երթը Բյուզանդիոն և նրա միջնայի հաջողումը չի կարելի թերագնահատել։ Առանց երկրայնության կարելի է ասել, որ առանց այս ուղևորության Հայոց աշխարհի կեսը, հունական մասը, անշուշտ կոտարանար հայությունից և կձուլվեր հույն ազգաբնակչության հետ, զրկված լինելով ազգային գրից ու գրականությունից, հույներեն լեզվով ժամերգությունից և կազմելով թեմ մի հունական մետրոպոլիտության, և իբրև սրա հետևանք, մոտ ապագայում ընդունելով Քաղկեդոնի դավանությունը։ Բայց այս շնորհները—Հունական բաժնում ևս հայերեն դպրություն մուծելու, ժամասացությունը հայերենի փոխելու և հունական բաժինը դարձյալ Հայոց կաթողիկոսի վիճակ ճանաչելու—ձրի չտրվեցին, առանց փոխարինության հայերի կողմից։ Մեսրոպին բավական երկար պահեցին Բյուզանդիոնում (տարին դժբախտաբար չի նշանակված) և այս միջոցին հավանորեն կենտրոնից բանակցում էին Կեսարիայի մետրոպոլիտի ու Անատոլիոսի հետ և մյուս կողմից՝ Մեսրոպի հետ։ Բանակցությունների առարկաները հայտնի չեն. հիշվում է միայն պարտավորություն բորբորիտոնների կամ բարբարիանոսների աղանդը բնաջնջելու մասին, բայց կան ուրիշ՝ ավելի կարևոր կետեր։ Մենք կարող ենք կռահել գոնե երկու կետ։ Առաջին՝ պահանջ, որ ս. գրքի հայերեն թարգմանությունը կատարվի հունարենից (կամ գոնե ուղղվի ըստ հունարենի), և երկրորդ՝ որ հայ երիտասարդները բարձրագույն ուսում առնելու գնան այնուհետև ոչ թե Ասորիք, այլ Բյուզանդիա, ուրիշ խոսքով ասելով՝ ասորական օրիենտացիայի փոխանակ հայերն ընդունեն հունական օրիենտացիա։ Այս երկու կետն էլ, որոնք համապատասխանում էին նաև հայերի կուլտուրական շահերին, շուտով իրականացան, և Խորենացու հաղորդած մի քանի տեղեկություններից երևում է, որ հայ երիտասարդությունն էլ դժգոհ էր ասորական ուսումից, և ձգտում էր Բյուզանդիոն, հունական ուսում առնելու և դիմում էր այնտեղ նույնիսկ ինքնագլուխ, առանց ուսուցիչների կամքի։

323. «Բորբորիտոնների աղանդը»։ Բորբորիտոն ծագում է հունական Βόρβορος բառից, որ նշանակում է կեղտ, ցեխ, աղբ, ուրեմն և նշանակում է կեղտոտ, զարշելի, պիղծ։ Այս նախատական անունով կոչեցին հակառակորդները Βαρβηλιῶται կոչված աղանդավորներին, բառախաղ անելով։ Կոչվում են նաև Բորբորիանոս, Բորբորիտոս, Բորբիանոս և այլն (Արմատ. բառ.)։ Կորյունն այս աղանդի մասին խոսելով, կոչում է Բարբարիանոս, որը Հյուբշմանն ուղղում է Բորբորիանոս, և Արմատ. բառարանն ևս ընդունում է։ Սակայն Կորյուն մի քիչ առաջ, երբ թվում է Թեոդոս կայսրի հրովարտակի կետերը, գրում է՝ «և վասն ժանտագործ ազգին բարբարոսաց», ուրեմն դարձյալ բարբարոս, որ այլևս չի կարելի ուղղել բորբորոս, քանի որ սա գոյական անուն է, այն ինչ բարբարոսն այստեղ ածական է։

Խորենացին ևս (Գ. խէ և կ), խոսելով ս. Մեսրոպի գործունեության մասին Գողթն գավառում, հիշում է, որ այդ աշխարհից վերացրեց հեթանոսական աղանդը, որ Տրդատի ժամանակից ի վեր թաքուն էր մնացել և այժմ նորից

երևան էր եկել։ Ուրիմն, հիմնվելով Կորյունի բարբարիանոս ազանդի, բարբարոս ազգի և խորենացու հեթանոսական ազանդի վրա, կարելի է ենթադրել, թե այստեղ խոսքը վերաբերում է Հայաստանում դեռ տեղ-տեղ մնացած հեթանոսական պաշտամունքին, երբ տեղի էին ունենում պղծություններ։ Ապագա հետազոտություններին է մնում որոշել, թե ո՞րն է ճիշտը այս երկու ենթադրություններից՝ հուլն բարբարոսնե՞րը, թե հայ հեթանոսական պաշտամունքին հետևողները։

324. եկեղեցասիկոս հունարեն εκκλησιαστικος, նշանակում է անլամ ուղղափառ նկեղեցու, ըստ Կորյունի՝ Թեոդոս կայսրի հրամանով ս. Մեսրոպին ակումիտ կոչում շնորհեցին, որ նշանակում է անքուն, տքնող (Տե՛ս ծանոթ. 309)։

325. «Աշտարակս ժայռատուրս»։ Վերջին բառն անհարմար է այս տեղում. գուցե աղավաղված է։ (Մի ձեռագիր ունի «ժառանատուրս», հինգ ձեռագիր ունեն «ժառանգատուրս»)։ Էմինը և Մտեփաննն թարգմանել են „зубчатые башни" «ատամնաձև աշտարակներ», որոնք հարմար չեն գալիս հաջորդ խոսքին։ Մենք ենթադրարար թարգմանեցինք «ժայռաձև», սակայն երաշխավոր չենք ճշտությանը։

326. Բնագրում «պրաւորական վերծանութեամբ», անորոշ արտահայտություն, որ տեղիք է տվել տարբեր թարգմանություններ։ Հանգուան (ըստ Մտեփաննի, ծան. 736) թարգմանել է „en vue d'examiner la Sainte Ecriture" (ս. գիրքը քննելու դիտավորությամբ)։ Էմինը և Մտեփաննն թարգմանել են. „Извещенные письмами". «գրավոր հրավերով», որ նույնպես ճիշտ չէ։ Մենք թե՛ վերծանություն բառի նշանակության և թե՛ պատմական իրողության համապատասխան գտանք «գրավոր վավերագրերի ընթերցմամբ», որովհետև Եփեսոսի ժողովի նիստերում բազմաթիվ դոկումենտներ ասաջ բերվեցին ու կարդացվեցին (Տե՛ս История христ. церкви, Лж. Робертсона, пер. Лопухина, I էջ 418)։

327. Սխալ է Թեոդորոս Մամուեստացի, պետք է լինի Մոպսուեստացի, Կիլիկիայի Մոպսուեստիա հին բաղաքի անունով։ Սա Անտիոքի եկեղեցու նշանավոր հայրերից մեկն էր, որ ս. գրքի մեկնության մեջ մտցրեց պատմական, քննադատական և բանասիրական սկզբունքները։ Ժամանակակից և ընկեր էր Հոհան Ոսկեբերանին։ Նրան հետո համարեցին նեստորականության հայր, և այս հիման վրա Նեստորին կոչեցին նրա աշակերտը, թեպետ բառացի մտքով այս բանը չի հաստատվում։ Թեոդորը, իսկապես Թեոդորիտոս Կյուրացին, նույնպես Անտիոքի եկեղեցուց էր, համարվում է Արևելքի ամենաուսյալ աստվածաբանը, բազմակողմանի գիտություններով օժտված և նշանավոր եկեղեցական գործիչ։ Սնվել է 290 թվին և աշակերտել Թեոդոր Մոպսուեստացուն։ Կյուրնի Ազեքսանդրացու մասին տե՛ս ծանոթ. 269։ Նա փառասեր մարդ էր, անզուսպ բնավորությամբ. նպատակին հասնելու համար խորթություն չէր դնում միջոցների մեջ։ Սպառնալիքներով և ահագին գումարներ կաշառք տալով հաջողեցրեց Նեստորի տապալումը։ Թեպետ ինքն էլ դատապարտվեց, բայց վերահիշյալ միջոցներով կարողացավ իր ուղղափառությունը ճանաչել տալ։ Պրոկղը Կ. Պոլսի պատրիարքն էր Եփեսոսի ժողովի ժամանակ։

328. Այդ «արվեստը», որ այստեղ հիշում է Պատմահայրը, և պարծանքով կրկնում է հետո, Ողբի մեջ, քերթողական արվեստն է, մեր այժմյան լեզ-

մով քերականություն և ճարտասանություն, կանոնավոր և վայելուչ խոսքի թեորիան։

329. Բոլոր ձեռագրերն ունեն «ի առոյգ յօդանալ ճեմարանին վերաբանությանն»։ Վերջին բառն այստեղ անտեղի է և անհասկանալի. Նորայր Բյուզանդացին մի սրամիտ և հավանական առաջարկություն է արել՝ այս բառը. «վերաբանություն» ձևով, ընել հաջորդ գլխի վերնագրի սկիզբը՝ «Վերաբանութիւն է վարդապետսն, յինքնս և այլն»։ Մենք այս ուղղումն ընդունեցինք, բայց վերաբանություն բառը հասկանում ենք ոչ իբրև վերջաբանություն (հուն. ἀπολογία կամ ἐπίλογος), այլ իբրև առաջի թարգմանություն հունարեն ἀναλογία-ի — անալոգիա, նմանություն, համեմատություն, այնինչ վերջաբանությունը չի հարմարվում։

330. Այս գլուխը, մանավանդ առաջին պարբերությունը, աչքի է ընկնում խիստ հունաբանությամբ բառերի և քերականության կողմից, և քերթողական ոճով իր նմանը չունի ամբողջ պատմության մեջ և կարծես Պիտոյից գրքից հանած ու Պատմության մեջ զետեղված մի կտոր լինի, — այնքան նման է Պիտոյից գրքի լեզվին ու ոճին։ Կարծիքներ են հայտնված, թե Պատմահայրը այս գլուխը գրել է դեռ երիտասարդ հասակում, և հետո կցել է Պատմությանը, որ անընդունելի է։ Թե ինչն է թելադրել հեղինակին իր սովորական լեզվից ու ոճից հեռանալ, դժվար է ասել։ Գուցե նկարագրած նյութի բարձրությունը նրա կարծիքով պահանջել է նաև արտահայտության բարձրություն։ Գուցե վաղուց անցած այն երջանիկ օրերը, երբ պատանեկան աշխույժով լի, փայլուն ապագայի հույսերով ոգևորված, ուսումնական ճանապարհորդություն էր կատարում դեպի հրաշալիքների աշխարհը, նրա մեջ վերարծարծել են այն պատանեկան հասակի զգացմունքները, որոնց ենթարկվել է և նրա գրիչը։ Գուցե կամեցել է նա այստեղ մի նմուշ ցույց տալ այն քերթողական արվեստի, որը սովորելու համար գնացել էր Աղեքսանդրիա։ Չգիտենք։ Այս գլուխը մենք համեմատաբար ավելի ազատ թարգմանեցինք, որպեսզի դյուրահասկանալի լինի։

331. Արհեստական լիճը ճահճային լիճ էր Աղեքսանդրիայից հարավ ընկած, որ կոչվում էր հնումը Մարեոտիս, իսկ այժմ Մարիուտ — լճից և ծովից շնչող հողմերի հատկությունները Խորենացին առել է Փիլոնից (Арм. Арш. II, 130)։

332. Աղեքսանդրիայի նկարագրության մեջ Խորենացին գործ է ածում հակադրություն կոչված ճարտասանական ձևը. մեջ է բերում այդ քաղաքի հեթանոսական ժամանակների պաշտամունքները, և նրանց հակադրում է իր ժամանակի քրիստոնեական պաշտամունքները։ Հեթանոսական պաշտամունքները նա վերցնում է սուտ Կալլիսթենեսի «Վարք Աղեքսանդրի» առասպելախառն պատմությունից, որ բոլոր բանասերների կարծիքով հենց ինքն էլ թարգմանել է հունարենից, իսկ քրիստոնեական պաշտամունքներն իր կողմից է գրում իբրև ժամանակակից և ականատես։ Հեթանոսական պաշտամունքների մեջ հիշված Փղոտենիոսը (=Պղուտոնիոս=Պղուտոն) եգիպտացոց պաշտած հռչակավոր Սերապիս կուռքն է, նրանց Օզիրիս (=Արեգակ) աստվածը, որ նաև Սանդարամետի և մեռած հոգիների աստվածն էր։ Այստեղ նա կոչված է հունարեն Պղուտոն անունով, որովհետև հունաց դիցաբանության մեջ Պղուտոնը Սանդարամետի և մեռած հոգիների աստվածն էր։ «Անսպառ աշխարհը պատելը» վերաբերում է Սերապիս-Օզիրիսին, այսինքն արեգակին, որ պատում է ամբողջ աշխարհը։ «Վիշապի ցեղից դյուցազունների գերեզմաններ» ակնարկություն է Աղեքսանդրի

վարքի պատմության այն տեղի վրա, որտեղ պատմվում է, թե քաղաքը հիմնելիս երևան եկավ մի վիշապ, որ սարսափ էր ազդում ամենքին։ Աղեքսանդրը հրամայեց այդ վիշապն սպանել ու թաղել և նրա վրա կառուցել մեհյանը։ Հաջորդ հիշատակությունը Տուբի ամսին կատարվող ծեսերի (բեռնակիր անասուններ, լորտուներ, կարկանդակներ) առնված է նույն գրքից, որտեղ գրված է, թե քաղաքը հիմնելուց հետո Աղեքսանդրը հրամայեց՝ Սերապիսի տոնի օրը, որ գալիս է Տուբի ամսի 25-ին, տոն սարքել ի պատիվ այն էշերի և ջորիների, որոնք քաղաքի շինության համար նյութ էին կրում, և այն օրը բոլոր բեռնակիր անասուններին հանգիստ էին տալիս։— Քաղաքի դուռը դնելու ժամանակ ցեխի տակից դուրս եկան լորտուներ (անթույն օձեր), որոնք փախչելով այս և այն տունը մտան։ Քանի որ նրանք անվնաս էին և, ընդհակառակն, վնասակար զեռուններին ոչնչացնում էին, նրանց սկսեցին պաշտել, զոհեր մատուցանել բարի վիշապի ծնունդների։— Կարկանդակներ բաժանելը նույնպես սրան էր կապվում Տուբիի 25-ի տոնի։— Անորոշ է Պրոդիադ Սանդարամետը։ Աղեքսանդրի վարքի մեջ հիշվում է «Պրոդադաս կղզին», ուրեմն կարող է լինել մի մեհյան այդ կղզու վրա. հիշվում է նաև «Պրոդյա դյուցազնի շիրիմը»։ Էմինը կարծում է, թե Պրոդիադան էլ, ինչպես և Պլուտոնը, Սերապիսի հունական անունն է։ (Բայց Bailly-ի բառարանում բառ չկա Պրոդիադը հիշեցնող)։ (Էմին ծանոթ. 476——485. Տաշյան, ուսումնաս. Ստ. Կալլիսթենեսի)։

333. Սանդարամետ, ավելի հին ձևով Սպանդարամետ, պահլավական բառ է, spandarmet, երկրի աստված, զենդերեն՝ spanta armaiti (=սուրբ իմաստություն), որով կոչվում էր զրադաշտական կրոնի մեջ շատ հարգված մի ոգի, երկրի ոգին, որ Արամազդի դուստրը կամ հարսն էր։ Հայերենի մեջ այս բառը գործ է ածվում նշանակելու համար ստորերկրյա աշխարհը, որտեղ մնում էին մեռած մարդկանց հոգիները, ուրեմն համապատասխան հունաց Պլուտոնին, կամ մեր դժոխքին։

334. Բնագրում՝ «Ի նորն Պղատոնէ», որ երկու կերպ կարելի է հասկանալ, կամ՝ երկրորդ Պղատոն, Պղատոնի նման մի նոր փիլիսոփա, կամ նորպղատոնական փիլիսոփայության հետևող։ Ո՞վ է այս նոր Պղատոնը, իր ուսուցիչը՝ Խորենացին չի հիշում, միայն նկատում է, որ ինքը նրան անարժան աշակերտ չհանդիսացավ (հին տպագրություններն ունեն «արժան աշակերտ», որ սխալ է) և նրա մոտ ուսումը կատարելապես ավարտեց։

335. Ատտիկե էլլադայի (Հունաստանի) կենտրոնական նահանգն էր, հռչակավոր Աթենք մայրաքաղաքով։

336. Տե՛ս Սաղմոս, ՀԴ, 19։

337. Բնագրում «զՅունօք զլեալ խորհրդովն»։ Պարզ չէ, թե այս մեղադրությունը միայն ս. Սահակին է վերաբերում, ինչպես հասկացել է Էմինը, թե կաթողիկոսին և թագավորին միանգամայն, ինչպես հասկացել է Ստեփանեն։ Մենք էլ վերջին մտքով ենք հասկանում, որովհետև Արտաշիրին միայն անառակ վարքի մեջ ամբաստանելը հազիվ թե բավական լիներ նրան տապալելու համար. պետք էր ավելի լուրջ ամբաստանություն—հույների կողմը թեքվելու մեղադրանքը։ Նույնը երևում է և հաջորդ գլխից, որտեղ Սահակն ասում է. «Ինձ բոլորովին հայտնի չէ, թե նա ապստամբության խորհուրդ ունեցած լինի»։

338. Հայոց նախարարների գահերի դասավորությունը, որ սովորաբար պահլավերեն բառով կոչվում է «գահնամակ» («=գահերի տեղերի թուղթ»),

բարեբախտաբար պահպանվել է մինչև այսօր։ Էմինն իր Թարգմանության երրորդ հավելվածում (էջ 295) պատմում է, թե այդ մագաղաթյա պատառիկը դտել է իր բարեկամ Ю. О. Ахвердов-ը Թիֆլիսում մի ձեռագրի կողմում։ Գուշակելով այդ պատառիկի կարևորությունը, նա դեղերով վերականգնել է դժգունացած, անընթեռնելի դարձած տառերը և ապա կարդալով ու ծանոթանալով նրա բովանդակության, ուղարկել է Էմինին, որ և հրատարակել է այն առաջին անգամ իր Խորենացու Պատմության առաջին տպագրության մեջ (1858 թ. էջ 358)։ Ստեփանեն, որ այդ հատվածը բառացի թարգմանել է Էմինից՝ Ю. О. Ахвердов-ի փոխարեն գրել է Գ. Հախվերդյան, որ է Սայաթ-Նովայի դիտնական հրատարակիչը։ Ի՞նչ հիման վրա է արել նա այս փոփոխությունը, չի հայտնում։ Որքան էլ հավանական լինի նրա ուղղումը (մանավանդ որ ինքն էլ Թիֆլիսեցի էր և Գևորգ Հախվերդյանին ժամանակակից), այնուամենայնիվ չենք կարծում, որ Էմինը սխալվեր իր բարեկամի անվան մեջ և երկու անգամ էլ գրեր Ю. О. փոխանակ Г.։ Այս գահնամակը նույն բնական մեծությամբ ֆոտոտիպով լույս ընծայեց Ալիշան իր Այրարատում (էր. 431—432)։

Ահա այս գահնամակը ըստ Ադոնցի ընթերցման (Армения при Юстиниане. էջ 219—250), որ լավագույնն է.

«(Իմ Սա)հակայ խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի Թագաւորի զոր ի Տիզպոն խաւսեցեալ, եթէ ես զռամակեանն զնուռա զոր Արտաշրի ի դիւանին տեսի ի քաղոց ամաց մէ։ Եւ Վռամայ արքային արքայի և բարերարի և դիր արարի ես Սահակ կաթողիկոս թէ որպէս ձեր բարերարութիւնդ հրաման տացէ Հայոց ազատաց և տանուտէրաց որպէս յառաջ առ Հայոց ազգին։ Նոյնպէս և ի ձեռամ դիւանի շահհամա(ր)ին առնել, որ յայսմհետէ Հայոց ազատաց և տանուտէրանց գահ ի յայտ լինէր։ Նոյնպէս Ներսէհ հրամանաւ արքայից արքայի և ես (Սա)հակ Հայոց կաթողիկոս կնքեցաք զգահնամակին եւ եդաք մատանի զարքայից արքայի եւ զմերս. եւ է այսպէս արդար եւ ճշմարիտ։

Առաջին իշխանն Հայոց և մաղխազն.

ա. Սիւնեաց տէր
բ. Ասպետն.
գ. Արծրունեաց տէր.
դ. Մամիկոնէից տէր.
ե. Շահապն Ծոփաց տէր.
զ. Մոկաց տէր.
է. Ռշտունեաց տէր.
ը. Վահունեաց տէր.
թ. Կասպէից տէր.
ժ. Անձաւացեաց տէր.
ժա. Ապահունեաց տէր.
ժբ. Կամսարականն
ժգ. Այլ Ապահունի.
ժդ. Վանանդացին.
ժե. Ամատունի տէր.
ժզ. Գողթան տէր.
ժէ. Գնունեաց տէր.
ժը. Այլ Անձաւացի.
ժթ. Տայոց.
ի. Բասենոյ դասաւորն.
իա. Գնթունեաց տէր.
իբ. Վարաժնունին.
իգ. Գարդմանայ տէր.
իե. Սահառունին.
իզ. Գաբեղէնից տէր.
իէ. Աբեղէնից տէր.
իը. Սիւնեաց երկրորդն.
իթ. Արծրունեաց երկրորդն.
լ. Արծրունեաց երրորդն.

լա. Մամիկոնէից երկրորդն.
լբ. Ռոփսեանն.
լգ. Աշոցեանն.
լդ. Դիմաքսեանն.
լե. Բուխա Դիմաքսեանն.
լզ. Այլ Աբեղեանն.
լէ. Այլ Դիմաքսեանն.
լը. Պալունին.
լթ. Առաւեղեանն.
խ. Աշահմարեանն.
խա. Համրուժեանն.
խբ. Վարասպակեանն.
խգ. Ձիւնականն.
խդ. Ակէացին.
խե. Ձարեհաւանեանն.
խզ. Ընծայեցին.
խէ. Մանդակունին.
խը. Սղկունին.
խթ. Տայգրեանն.
ծ. Երմանթունին.
ծա. Սպանդունին.
ծբ. Առաւենեանն.
ծգ. Տրունին.
ծդ. Մումբերացին.
ծե. Հաւնունին.
ծզ. Բժնունին.
ծէ. Քաջբերունին.
ծը. Մեհնունին.
ծթ. Նախճեյին.
կ. Քաղաքապետն արքունի.
կա. Ոստապետն արքունի.
կբ. Արտաշէսեանն.
կգ. Վանանդացին երկրորդն.
կդ. Ցուլն.
կե. Վիժանու(նի).
կզ. Աքածու.
կէ. Շիրակա Դիմաքսեան.
կը. Գազրիկեանն.
կթ. Մուրացեան տ(էր).
հ. Վազրասպու(նին).

Բնագիրը գրված է մագաղաթի երկու երեսի վրա երկու սյունակով, միջին երկաթագրից բոլորգրի անցման գրերով, և սաստիկ աղճատված է, մասամբ արտագրողների անգիտությունից և մասամբ մագաղաթի վնասվելուց, որով մի քանի գրեր չեն կարդացվում։ Էմինի թարգմանությունը բավարար չէ, ավելի հաջող է Ալոնցի թարգմանությունը (Юст. էջ 270)։ Այստեղ դնում ենք ներածության թարգմանությունը, ինչպես մենք ենք հասկանում, որ բավականին տարբերվում է առաջին երկուսից.

«Ես Սահակ խնդիր հարուցի Արտաշես թագավորի արքունի դռնում, Տիզբոնում, ասելով, որ ես տեսա ռամական նամակը Արտաշիսի դիվանում քաղոց ամսի 17-ին, և ես Սահակ կաթողիկոս գիր գրեցի Վռամ արքայից արքային և բարերարին, թե թող ձեր բարերարությունը հրաման տա՝ Հայոց ազատների և տանուտերների ցուցակագրություն կազմել ձեր դիվանում, ինչպես առաջ եղել է Հայոց ազգի մէջ, որպեսզի այսուհետև Հայոց ազատների և տանուտերների գահերը հայտնի լինեն։ Ըստ այդմ Ներսեհը արքայից արքայի հրամանով և ես Սահակ կաթողիկոսս կնքեցինք գահնամակը և վրան դրինք արքայից արքայի և մեր մատանիները։ Եվ այսպէս է արդարև և ճշմարիտ»։

«Ռամական նամակ» Էմինը հասկացել է «Վռամական նամակ», որին հե-

Ծանոթ. 1. Ադոնցը Գ-ից, Արծրունյաց տերից հետո իր կողմից փակագծերով գրել է (Դ Մաղխազունի), որի տեղն այստեղ պետք է լիներ, որ սակայն դրված է բոլորից վերը, առանց թվահամարի։

Ծանոթ. 2. Բնագրում ԻԳ-ին հաջորդում է ԻԵ, այնպես որ բաց է թողնված ԻԴ թվահամարը, (Այս երկու ծանոթ. նկատմամբ տե՛ս քիչ հետո)։

տեսել է Ալիշանը։ Խալաթյանցը (Арм. Арш. էջ 295) ռամականը հասկացել է երամական, ռամկական, այսինքն ժողովրդական, ըստ որի ռամական նամակը պետք է նշանակի ցուցակ հարկատու դասակարգի, հակադրությամբ ազատների ցուցակի, այսինքն գահնամակի։ Ադոնցը ռամ-ը նույնպես կապելով երամ-ի հետ՝ տալիս է նրան «խումբ, բազմություն» նշանակությունը, և հատկապես զինվորական խմբի, գնդի, որ Խորենացին արտահայտում է վաշտ բառով։ Ամեն մի նախարար ուներ սահմանված քանակությամբ վաշտ, որոնց ցուցակն ուրեմն կդառնար ռամական նամակ։ Իսկ նախարարների գահը սահմանվում էր ըստ յուրաքանչյուրի վաշտի քանակության և մուծվում էր գահնամակի մեջ (Юст. էջ 207)։

Գահնամակի և նախարարական վաշտերի մանրամասն ու լավագույն ուսումնասիրությունն արել է Ադոնցը (Юст. էջ 249—297)։

Նախարարների ցուցակում լգ թվահամարի տակ գրված է Գաշոցեան (դ գրի կրկնությամբ), որը Ադոնցը ուղղում է Աշոցեան։ Խ-ի տակ Աշահմարեանը համարում է ուղղելի Աշխադարյան, և ծդ-ի տակ Մամքերացին ուղղում է Տամքերացին (Юст. էջ 250, ծան.)։

Գալով ցուցակում իզ թվահամարի և տողի պակաս լինելուն, Էմինը կարծում է, թե այստեղ բաց է թողնված տողը. նույնպես և Ալիշանն (Այրարատ, էջ 430) նկատում է, որ իզ գահը պակասում է՝ գրչի մոռացությունից կամ գուցե գահակալը թագավորի հրամանով ժամանակավորապես զրկված է եղել գահից։ Սակայն այսպես չէ։ Ցուցակի գլխում առանց թվահամարի գրված է «Առաջին իշխան Հայոց և Մաղխազն»։ Մաղխազները Խորխոռունիներն էին։ Երբէ Խորխոռունյաց իշխան հայոց առաջին իշխան դառնալով (-ե՞րբ), նրա անունը մյուս նախարարների շարքից հանել և վերն են դրել։ Նրանց իսկական տեղն էր, ինչպես բազմաթիվ վկայություններ կան, Դ գահը (որտեղ, ինչպես տեսանք, Ադոնցը փակագծերով գրել է Մաղխազունի)։ Արդ՝ երբ ցուցակից մի անուն հանվել է, հաջորդ անունները մի-մի թվահամարելով առաջ են շարժվել. Մամիկոնյաններն ստացել են Դ գահը, փոխանակ նրանց հատուկ հինգերորդի, Ռշտունյաց տերն ստացել է Է գահը, փոխանակ Ը-ի, և այսպես շփոթությունը նկատելով, մի թվահամար (ԻԴ) դիտմամբ բաց են թողել, որպեսզի գոնե այնուհետև թվահամարները համապատասխան լինեին գահերին։ Ուրեմն եթե Մաղխազունիները իրենց բնական տեղը գրավեցին ցուցակում, այսինքն Դ. գահը, ապա Մամիկոնյանները կունենային Ե, Ռշտունիք՝ Ը, Գարդմանա տերը՝ ԻԴ գահը, և այլևս ոչ մի պակասորդ չէր մնա։

339. Կամսարական տոհմին, որ գահազուրկ էր եղած (Գ, ծ), Արտաշիրը Սահակ կաթողիկոսի միջնորդությամբ վերադարձրել էր իր կալվածները և գահը, ավելի ստոր աստիճանով (Գ, ծա)։ Բայց Գազավոնը, որ նույն Կամսարականներից էր, Խոսրով թագավորը ըստ նրա ծագման Արշակունի մորից, հանել էր Կամսարականների ցուցակից և գրել էր Արշակունի (Գ, խը)։ Արդ Սահակ կաթողիկոսը միջնորդում է նրան ևս գահ տալ, եթե ոչ իբրև Արշակունու, քանի որ Սասանյան թագավորների աչքի փուշն էին հայ արշակունիները, իբրև պահլավունիներին ցեղակից և իրենցից ավելի բարձր ծագում ունեցողներ—գոնե մի ստորին աստիճանի գահ, ինչպես թագավորը կամենա։

340. Ս. Սահակ ստիպված էր Վաղարշապատից դուրս ապրել այն գյուղերից մեկում, որ նրան թողել էր Վռամ թագավորը (Գ, կե), ուստի Վաղարշապա-

տում, կաթողիկե եկեղեցում նա հաստատեց Ս. Մեսրոպին իբրև իր տեղակալ։

341. Տե՛ս Մատթ. ԺԸ, 7.

342. Բնագրում «Այլում տեղւոյ և ժամանակի թողցուք արտաքոյ այսց գրոց, ուր զսկզբանն հրաւիրեցաք առնել թելադրութիւնս։ Այս խոսքի առաջին մասից երևում է, որ Խորենացին խոստանում է ներբողական ճառ գրել Ս. Սահակի մասին՝ «այս գրքից դուրս։ Սրանից և ուրիշ մի քանի տեղերից ոմանք եզրակացրել էին, թե Խորենացին գրել է և Չորրորդ գիրք, որ մեր ձեռքը չի հասել (այս հարցի մասին տե՛ս առաջաբանում)։ Խոսքի երկրորդ մասը մութ է։ Էմին թարգմանել է. „Как мы обещали еще в начале нашего повествования". (բայց այսպիսի խոստում մենք չենք գտնում նրա պատմության սկզբում)։ Ստեփանեն թարգմանել է. «Ինչպես որ սկզբում հրավիրվեցանք տեղեկություն տալու», որ անհասկանալի է։ Օգտվելով քննական հրատարակության ընթերցվածից («զսկզբանն», փոխանակ «սկզբանն») մենք թարգմանեցինք. «Ինչպես սկզբի մասին էլ խոստացանք գրել», որով ակնարկում է Ա, դ՝ «զայլսն վասն սորա ի տեսութեանց ի հրաւիրեալն մեր յուշարկեսցուք տեղիս։ Երկու տեղումն էլ խոստում կա, բայց դրվածը չկա։

343. Ս. Մեսրոպի այս ներբողը—«Որովհետև ամբարտավանությունը— բայց որովհետև նրա բոլոր բարեմասնությունները անկարող եմ թվել», բառացի առնված է Սեղբեստրոսի վարքից, ավելացնելով միայն «ժամոց ծննդականս» և «ուսուցանելով անձանձրույթ», և Սեղբեստրոսի «տրամապայծառացյալ» (հոմերեն բառը տառացի թարգմանություն) բառի փոխարեն՝ պայծառ։ Այս հատվածի մասին տե՛ս ծանոթ. 227 և առաջաբանում։

344. Խորենացին հրաշապատում հեղինակ չէ. ինչպես հեթանոսական աստվածներին նա մարդկայնացնում է, այնպես և իր աղբյուրներում պատահած հրաշքները աշխատում է վերածել բնական երևույթների (համեմատել Ս. Ներսեսի և այլ աքսորականների կերակրվելը անապատ կղզում ըստ Փավստոսի Դ, ը և Խորենացու Գ, լ)։ Ներկա դեպքում էլ Խորենացին, չնայելով որ լուսեղեն խաչի երևումը հիշում է նաև Կորյուն՝ հարկ է համարել շատերին դիմել, հարցուփորձ անել, և երբ ստուգել է ճշտությունը՝ ապա գրի է առել։ Եվ իրավացի կերպով, որովհետև այդ լուսեղեն խաչը ոչ այլ ինչ էր, եթե ոչ դագաղի վրա դրված ողորկ արծաթե խաչի ցոլացումը օդի մեջ խաղաղ եղանակին, արեգակի ճառագայթների տակ։ Նման մի երևույթ արձանագրված է և մեր ժամանակներում։ 1893 թվին Խրիմյան Հայրիկի օծման ժամանակ ռուսաց պաշտոնական «Кавказ» լրագրի խմբագիրն անձամբ գնացել էր Էջմիածին իբրև թղթակից իր լրագրի։ Եվ նա հոկտեմբերին հեռագրեց «Кавказ»-ին, թե օծման ժամանակ (որ կատարվում էր բաց օդում, տաճարի հյուսիսային պատի մոտ) օդի մեջ տաճարի վրա լուսեղեն խաչ երևաց։ Ոմանք այն ընդունել են իբրև լուսեղեն խաչ, ուրիշներն էլ ճանաչել են իբրև արեգակի շուրջը կապած բակ։ Այս մասին, որքան գիտեմ, տպագրված է նաև «Արձագանք» թերթում։

345. Տե՛ս Սաղմ. ԻԲ, 1—2.

346. Առաջին և երկրորդ փոփոխման ասելով Պատմահայրն ակնարկում է Սահակի երկու անգամ գահընկեց լինելու վրա, առաջին անգամ խաչեղբոր հետ միասին (=Խոսրով թագավորի հետ, տե՛ս ծանոթ. 310), երկրորդ

անգամ՝ նախարարների միաբան խորհրդով (Գ, կգ), որոնց կոչում է ստամբա
որդիք, որոնք իրենց ծնողին անարգեցին, բայց որոնք, իբրև խորթ որդիք, ա
ժանապես անարգեցին նաև օտար հորը (=Սուրմակին) և եկվոր խորթ հո
(=Բրքիշոյին)։ (Գ, ԿԴ)։

347. Հեղինակն այստեղ նկատի ունի Գր. Նազիանզացուն, որի զանազ ճառերից մանր-մունր հատվածներ առել հյուսել է այս ողբի մեջ (Ар Арш. II, 140—143)։

348. Կետադրությունը բնագրում սխալ է դրված, թարգմանությունների ճիշտ չեն։ Մանավանդ վատ է էմինինը, «Надеясь видеть возвращен своего (жениха) с его сподвижником ты пусгупила не как и деверем, т щадя ласк к чалам (твоим), как и рожденным от одного отц Ստեփանենն ուղղել է կետադրությունը և ավելի ճիշտ է հասկացել, բա էլի սխալ է մնացել։ Կետադրությունը պետք է ուղղել այսպես. «զանոզրէն ք յոյն յուսալով դարձն հովուակցաւնն և այլն։ Իսկ նշանակությունը շատ պա արտահայտված է մեր թարգմանության մեջ։

349. Այստեղ ներբնացին մի շարք անցքեր իսրայելացիների պատմ թյունից համեմատում է Հայոց անցքերի հետ, ցույց տալու համար, թե մ վիճակն ավելի վատթար է եղել, քան նրանցը։ Այսպես՝ իսրայելացիների մ Մովսեսը վախճանվում է, բայց նրան հաջորդում է Հեսուն, իսկ մեր մեջ Մո սես (=Սահակ) վախճանվում է, բայց հաջորդ չի ունենում։ Իսրայելացիների մ Ռոբովամին ժողովուրդը մերժում է, բայց նրա փոխարեն թագավորեցնում Հերոբովամին, Նաբատի որդուն (Գ Թագ. ԺԲ, 16—21), իսկ մեզ մոտ Արտ շիրին մերժում են, բայց նրա փոխարեն ոչ ոքի չեն թագավորեցնում։ Աստ մարդու մասին, որին առյուծը սպանեց, տե՛ս Գ Թագ. ԺԳ, 1, 23—24։ (Այս հ մեմատությունը առյուծից սպանվածի և ծերությունից մեռածի մեջ՝ մեզ ս հասկանալի)։ Իսրայելացիների մոտ Եղիային փոխանորդեց կրկնակի ղոր թյամբ Եղիսեն, որ Հեսուին օծեց (Գ Թագ. Բ, 11—13, Թ, 1—14, ԺԲ, 17—1 իսկ մեր մեջ Սահակին ոչ ոք չհաջորդեց նրա նման և ոչ ոքի չօծեց։ Իսրայել ցիների մոտ Սեդեկիան գերի տարվեց (Գ Թագ. Ի, 5—7), բայց առաջ եկ Զորաբաբելը, որ նորոգեց տաճարը (Եզր. Դ, 47—58), իսկ Արտաշիրը հաջ յունեցավ՝ աշխարհը բարեկարգելու։ Իսրայելացիների մոտ Մաղաթիա քահան և նրա որդին՝ Հուդա Մակաբէն դիմադրում են Անտիոքոսին ու պաշտպան իրենց կրոնը (Ա և Բ Մակ.), իսկ մեր մեջ այսպիսի դիմադրություն և եկեղե պաշտպանություն տեղի չունեցավ։ (Ինչո՞վ պետք է բացատրել, որ ներբնող չէ հիշում Ղևոնդին, որ Հայաստանում Մաղաթիայի դերը կատարեց, և Վարդ Մամիկոնյանին, որ Հայաստանի Հուդա Մակաբեն եղավ, ինչպես և կոչվեց տո)։

350. «Ներքսը կռիվներ հերձվածողներից», և սրա հետ Ողբի սկզբի խ քերը, թե՝ «Խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չար փառությունը»,— ցույց են տալիս, թե հինգերորդ դարի երկրորդ կիսում Հ յաստանում կրոնական բուռն պայքար էր մղվում, որ կարող էր լինել միայն քաղկեդոնականության շուրջը։ Այս մասին տե՛ս մեր «Ներբնացու առե վածի շուրջը» աշխատությունը, հավելված Գ և այս գրքի ներածությունը։

351. Այս պարբերության մեջ փոփոխակի գործ են ածված եղակի

հոգնակի ձևերը՝ «մեր դարձին», «մենք էլ», «հույս ունեինք» և «իմ արվեստով», «ողբեր եմ ասում», «չհասա տեսնելու»: Այս երևույթը մի բանասեր (Ակինյանը) համարել է անհետևողականություն և լեզվի պակասություն: Բայց այդպես չէ: Խորենացին այստեղ հոգնակի ձևն է գործածում, երբ խոսում է իր և ընկերների մասին, որոնց հետ գնացել էր Աղեքսանդրիա և վերադարձել էր, իսկ եզակի ձև է գործածում, երբ խոսում է միայն իր մասին:

352. «Ինչպես ասաց հայրերից մեկը»: Այս հայրը նույն Գրիգոր Նազիանզացին է, որի մի ճառից Խորենացին առնում է հաջորդ խոսքերը, մինչև «որևէ արվեստից զուրկ մարդկանց» (Арм. Арш. II, էջ 142):

353. Ակնարկություն Երեմիայի ողբի վրա, որտեղ նա նկարագրում է Իսրայելացիների կրած թշվառությունները Երուսաղեմի ավերածից և ժողովրդի գերությունից հետո: Իսկ ոգեւ հովիվների երկան փայլը ցուցակել է Զաքարիա մարգարեն, ԺԱ, 16:

354. Վիճակավորների (=թեմերի առաջնորդների) մասին մի ձեռագիր ունի «դատարկասացք», երեք ձեռագիր՝ «դատարկակացք», մյուսները «դատասացք»: Վերջինս ավելի հավանական է, որովհետև վիճակավորները միևնույն ժամանակ դատավորներ էին, իսկ դատերը եկամուտի աղբյուր էին:

355. Անհասկանալի է «փախչող ի ժառանգութենէ»: Էմինը և նրա հետևողությամբ Ստեփանեն թարգմանել են „чуждающийся духовного звания"— —«եկեղեցական կոչումից փախչող», որ հավանական չէ:

356. «Յուզարկուք», երկու ձեռագիր՝ «խուզարկուք»: Մենք ենթադրաբար թարգմանեցինք «ելուզակ»: Էմինը թարգմանել է «грабители»: Ստեփանեն բաց է թողել:

357. Տես Ես, ԾԷ 21:

358. Ողբի այս վերջին մասը կարդացողը չպետք է գրվածը բառացի ընդունի, իբրև թե հայ ժողովրդի բոլոր դասակարգերը ապականված են եղել ամեն տեսակ մոլություններով և Հայոց աշխարհը լցված է եղել ամենակերպ տարերային աղետներով ու հասարակական չարիքներով: Պատմահայր Պատմության ոչ մի էջը չի արդարացնում այս ողբալի պատկերը, որ այստեղ նկարագրված է: Սա իսկապես արտահայտություն է նրա վշտահար հոգու և հոռետես տրամադրության: Պուշկինը մի անգամ գրել է.

И эта глупая луна
На этом глупом небосклоне.

Ոչ մի ընթերցող իհարկե չի ընդունի, որ անմեղ լուսինն ու երկնակամարը հիմար լինեին, այլ բոլորն էլ այնպես կհասկանան, թե այս տողերը գրելիս բանաստեղծը հոգեկան վատ տրամադրության մեջ է եղել: Սև ապակիներով ակնոց դնողին շուրջն ամեն ինչ սև է երևում՝ վարդագույն ակնոց դնողին՝ վարդագույն: Ողբի գրության ընթացքում, երբ հեղինակն այնպես սուր կերպով զգացել է հայ ժողովրդի անիշխանությունը և անկախությունից զրկվելը, մեծ՝ անփոխարինելի ուսուցիչների կորուստը և իր կրած անձնական զրկանքները, նա համակվել է խոր, անսփոփ վշտով, ընկել է հուսահատության մեջ, և այս զգացմունքների ազդեցության տակ խտացրել իրական պակասություններն ու չարիքները, մասնավորն ընդհանրացնելով, պատահականին տարերային բնույթ տալով: Նկարագրված բացասական երևույթները ոչ այնքան իրականության պատկերն են, որքան անկեղծ հայրենասեր հեղինակի վշտահար հոգու:

ՍԻՆԽՐՈՆԻԿ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ Բ ԵՎ Գ ԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Խորենացին հայ Արշակունի թագավորների հետ միաժամանակ հիշում է և օտարազգի թագավորներ, որոնց հետ նրանք հարաբերություն են ունեցել։ Այս թագավորների տարիներով էլ Խորենացին նշանակում է Արշակունի թագավորների գահակալության տարիները, որովհետև միջնադարյան քվականը գործածելու սովորություն դեռ չկար նրա ժամանակ և նրանից հետո էլ մի քանի դար շարունակ։ Այս պատճառով նրա պատմությունն ուսումնասիրողի և առհասարակ ընթերցողի համար կարևոր է աչքի առաջ ունենալ տիմնադրական աղյուսակ նրա Բ և Գ գրքերի, այսինքն պատմական ժամանակի համար, որտեղ նշանակված լինեին ոչ միայն հայոց, այլև հռոմայեցիների, բյուզանդական կայսրների և պարսից թագավորների տարիները, որով կարելի կլինի ճիշտ գաղափար կազմել գահակալության տարիների և մասնավորապես Խորենացու ժամանակագրության մասին։

Բայց այս ժամանակագրական նյութը չէր կարելի տեղավորել մի աղյուսակում, որովհետև Խորենացու մոտ հռոմեական, բյուզանդական, մասամբ և Պարսից Սասանյան թագավորների ցանկերը լիակատար չեն. դարձյալ նրա մոտ իրև ժամանակակից նշանակված են թագավորներ, որոնք իրապես ժամանակակից չեն, և երրորդ՝ որ ավելի քան հարյուր տարվա ժամանակամիջոցի համար Խորենացին ունի Արշակունի թագավորների անուններ, որոնք հայտնի չեն օտարազգի պատմիչներին, իսկ սրանք այն ժամանակամիջոցի համար ունեն մի շարք հայ թագավորներ, որոնք հայտնի չեն Խորենացուն։

Ուստի որոշեցի կազմել երկու զուգահեռ աղյուսակ, առաջինն ըստ օտարազգի աղբյուրների, երկրորդն ըստ Խորենացու։ Սրանով մի կողմից ճիշտ գաղափար կկազմենք Խորենացու ժամանակագրական սիստեմի մասին և մյուս կողմից՝ պարզ կնկատենք տարբերությունը նրա և օտարազգի աղբյուրների ժամանակագրական տվյալների մեջ։

Առաջին աղյուսակի համար՝ հռոմայեցիների, բյուզանդացիների և պարթևների ու Սասանյանների ժամանակագրությունը ճիշտ մշակված է եվրոպացի բանասերների կողմից և կասկածից դուրս է։ Մենք այս մասերի համար օգտվեցինք առձեռն պատրաստ աղբյուրից՝ Գարագաշյանի Քննական պատմությունից (հատ. Բ, էջ 84, 89), իսկ Սասանյան թագավորների ժամանակագրությունը վերցրինք Նյոլդեկեից (տ. Ասորիք ծանոթ. 85), որ մի երկու թագավորների տարիների նկատմամբ փոքր ինչ տարբերվում է Գարագաշ-

յանից։ Հայոց թագավորների վերաբերմամբ մինչև Սասանյանները դարձյալ օգտվեցինք նույն Գարագաշյանից (հատ. Գ), որ իր տեղեկությունները քաղել է Գաթրճյանի Տիեզերական պատմությունից և ղանաքան օտարազգի հին հեղինակներից, իսկ Սասանյանների ժամանակի համար, հատկապես Տրդատի թագավորությունից սկսած, նրա հիմնական աղբյուրը Խորենացին է, սակայն մի քյուրիմացության դնորհիվ, որի մասին քիչ հետո կխոսենք, նրա այս մասը սխալ է և հակասում է թե՛ Խորենացուն և թե ճիշտ ժամանակագրության. բայց և այնպես այս սխալ մասն էլ զետեղեցինք աղյուսակն ամբողջացնելու համար, մանավանդ որ Գարագաշյանի սխալը կրկնել են ուրիշները նրանից առաջ և հետո։

Գանք երկրորդ աղյուսակին, որ կազմված է Խորենացու ժամանակագրական տվյալների հիման վրա։

Հայ Արշակունի թագավորների ժամանակագրությունը Խորենացու մոտ շատ ճիշտ է և հետևողական։ Նա մի առ մի նշանակում է բոլոր թագավորների տարիների թիվը (բացի Տիգրան Մեծի հաջորդ Արտավազդից, որի հավանական բացատրությունը քիչ հետո կբերենք)։ Այս տարիների գումարը, մնչը հաշված երկու անիշխանությունների տարիները (Խոսրովի սպանությունից հետո 27 տարի և Շապուհ պարսիկից հետո 3 տարի) գալիս է 560 տարի[1]։ Ճիշտ 560 տարի էլ կազմում է պատմական ժամանակը վաղարշակից (132 ՆԿ) մինչև Արշակունյաց բարձումը (428 ՀԿ)։ Ուրեմն Խորենացին նախքան պատմությունը գրելը կազմել է հայ Արշակունի թագավորների ժամանակագրական աղյուսակ, որին անշեղ հետևել է բոլոր պատմության ընթացքում։ Նույնպիսի ճշտություն և հետևողականություն է նկատվում նաև հայոց կաթողիկոսների ժամանակագրության մեջ. նրանց տարիների գումարը Գր. Լուսավորչից սկսած մինչև ս. Սահակի մահը տալիս է 160 տարի. ճիշտ 160 տարի տալիս է նաև պատմական ժամանակը Գր. Լուսավորչի կաթողիկոսանալուց (279) մինչև ս. Սահակի մահը (438)։

Խորենացու մոտ պարթև թագավորների ցանկը համառոտ է, պարունակում է ընդամենը 14 անուն, այնինչ իրապես նրանց թիվը եղել է 31. բայց Դուշմիտը շատ հավանում է Խորենացու այս ցուցակին։ Մի անգամ (էջ 6) նա ասում է, թե Խորենացու տվյալներն հաջորդաբար արդարանում են պարթևական թագավորների դրամներով. մի ուրիշ տեղ (էջ 18) առում է. «Նույնքան նպաստավոր կարծիք պետք է հայտնենք Խորենացու Բարծումայից առած պարթև թագավորների ցանկի մասին։ Այս ցանկը պարունակում է շատ ավելի քիչ թվով թագավորներ քան եղել են, որովհետև կարճատև և

---

[1] Արշակունյաց թագավորների ցանկի մեջ մենք մի ուղղում մտցրինք— Մեծն Խոսրովի թագավորության տարիները նշանակեցինք 41, փոխանակ 48-ի։ Սխալն առաջ է եկել նրանից, որ հինաքաղիր տառերում Ա և Ը իրար շատ նման են և սկզբնական ևև հեշտությամբ կարող էր կարդացվել ևը։ Խորենացու ձեռագրերից կեսը այս թագավորության տարիները բնավ չեն նշանակում, ուրեմն նրանց օրինակների մեջ այս տարեթիվը որևէ կերպ վնասված է եղել, չի կարդացվել։ Մեր ուղղումով մի կողմից թագավորների տարիների գումարը և պատմական ժամանակամիջոցը կզուգադիպեն և մյուս կողմից կարդարանա 27 տարվա անիշխանությունը Խոսրովի սպանությունից մինչև Տրդատի թագավորելը (236—263)։

անհայտ թագավորությունները կցված են երկարատև կամ փառավոր թագավորությունների հետ։ Բայց այս ցանկից բխող՝ պարթևաց թագավորների մահվան տարիները ճշտիվ համապատասխանում են ժամանակակից կլասիկ հեղինակների և դրամների տվյալներին։

Ըստ այսմ՝ անփոփոխ պահելով հայոց թագավորների ցանկը վաղարշակից մինչև պարթևների թագավորության բարձումը (132 ՆՔ—226 ՀՔ), պարթևների ցանկն առանք Ք. Պատկանյանից[1], որ այդ ցանկն առել է Խորենացուց մի լրացումով և ավելացնելով թագավորների օտարազգի անուններն ըստ կլասիկ հեղինակներու նա իբրև լրացում պարթևների երկրորդ թագավորից հետո դնում է մի անհայտ թագավոր (N)՝ 20 տարի թագավորությամբ, որ նրա կարծիքով համապատասխանում է օտար աղբյուրների հիշած Հրահատ Ա-ին, կամ ենթադրում է, որ երկրորդ պարթև թագավորի, այսինքն Արտաշես Ա-ի տարիները պետք է 20-ով ավելացնել, փոխանակ Խորենացու 26 տուն դնել 46, որ շատ հնշտությամբ բացատրվում է Ի և Խ գրերի նմանությամբ (ձեռագրներում ԻՁ է գրված, փոխանակ ԽՁ-ի)։ Այս լրացումն արել է Պատկանյանը, որպեսզի պարթև թագավորների տարիների գումարը, որ Խորենացու այժմյան ձեռագրերով 455 տարի է, ամբողջապես լցնի պատմական 475 տարվա ժամանակամիջոցը պարթևների սկզբից մինչև նրանց բարձումը (250 ՆՔ.—225 ՀՔ)։ Այդ լրացումը միանգամայն ընդունելի է։

Այնուհետև Ք. Պատկանյանը դնում է հայոց Արշակունիների աղյուսակը մինչև Խոսրով, և մի առ մի բերում է բոլոր տասնմեկ գծագրերը այս երկու ազգերի թագավորների ժամանակակցության ըստ Խորենացու, և ցույց է տալիս, որ այս երկու աղյուսակներով բոլոր այդ ժամանակակցություններն արդարանում են, որ ապացույց է, թե այս երկու աղյուսակներն էլ ճիշտ են ըստ Խորենացու, որ նա այսպես էլ կազմած է հղել։

Բայց այս աղյուսակներով մի անտեղություն է առաջվում։ Աբգարը, Արշամի որդին, թագավորում է 18 թվին ՆՔ, 38 տարի. ուրեմն նրա մահը տևգի է ունենում 20 թվին ՀՔ. ապա ուրեմն նա չէր կարող նամակ գրել Քրիստոսին կամ բժշկվել Թադեոս առաքյալից։ Այս անտեղությունը Ք. Պատկանյանը բացատրում է նրանով, որ Խորենացին մի աղբյուրի հիման վրա կազմել է իր ժամանակագրությունը Սրշամի որդի Աբգարի վերաբերմամբ և այս Աբգարի մասին խոսում է յուր Բ գրքի 26—29 գլուխներում. բայց հետո նա օգտագործել է մի ուրիշ աղբյուր՝ Լաբուբնայի պատմությունը՝ Մանուճեի որդի Աբգարի մասին, որ ըստ Լաբուբնայի թագավորել է 32 թվին ՀՔ, և այս Աբգարի մասին խոսում է Բ գրքի 30—33 գլուխներում. մինչև անգամ գրում է, թե Աբգարի հորը՝ Արշամին ասորիները կոչում են Մանուճի։ Ուրեմն այստեղ երկու Աբգարներ միացել են մի անձի մեջ և սրանից է ծագել հիշյալ անտեղությունը։

Մեր կողմից պետք է նկատենք մի ուրիշ սխալ կամ անհետևողականություն Խորենացու կազմած Արշակունյաց աղյուսակի մեջ։ Այստեղ նա Տիգրան Մեծին թագավորեցնում է 72 թվին ՆՔ, ավելի քան քսան տարի ուշ իսկական ժամանակից, և որպեսզի այն կորած 20 տարին լրացնի՝ Արտավազդի թագավորության տարիները չի նշանակում՝ միակ բացատրությունը նրա մոտ

[1] Материалы для Армянского словаря. II, էջ 57:

Մեզ թվում է, թե այս սխալն առաջ է եկել նրանից, որ Խորենացին Արտաշես Ա-ին տվել է 25 տարի, նրան վերագրելով մասամբ Տիգրանի գործերը, մասամբ Միհրդատ Պոնտացու և մասամբ Կյուրոսի, հրապուրվելով չորս հույն հեղինակների վկայություններից, թե Արտաշեսն է ձեռնարկել Ուրմեն Խորենացու այս Արտաշեսը խլել է ոչ միայն Տիգրանի գործերի մի մասը, այլև նրա թագավորության տարիները, գոնե 20 տարի և այս պատճառով ստիպվել է Արտավազդը Մեր կարծիքով՝ Խորենացու սկզբնական ծրագրում Արտաշես Ա-ն կամ բնավ չկար կամ պետք է թագավորեր մոտ 5 տարի (97—92), Տիգրան Մեծը 33 տարի (92—59), Արտավազդը 22 տարի (59—38), որ կհամապատասխաներ արտաքին հեղինակների տեղեկություններին։

Խորենացու Պատմության ուշադիր քննությունը նույնպես ցույց է տալիս, որ բնագրում այստեղ սխալ կա։ Բ գրքի ԺԴ գլխում գրված է. «Յետ Արտաշէսի առաջնոյ թագաւորէ Տիգրան որդի նորա ի քառասուն և ինն երրորդ ամի Արշականայ թագաւորի պարսից» (Քնն. հրատ.)։ Սա բացարձակ սխալ է և հակասում է նույնինքն Խորենացուն, որ Արշակներին երկու անգամ տալիս է միայն 30 տարի։ Մյուս կողմից՝ ձեռագրերն այստեղ աղավաղված են. 5 ձեռագիր ունեն 49, երկու ձեռագիր՝ 29, մյուսները՝ 19։ Նույնպես աղավաղված է Արշակ անունը. շատ ձեռագրերներ և տպագրերներն ունեն Արշանափայ, փոխանակ Արշականայ։ Կարծում ենք լավագույն ընթերցվածը պետք է լինի «ի 29 ամի Արշականայ» (=120—97), որ զուգադիպում է Տիգրանի թագավորության սկզբին, միայն թե փոխանակ «Արտաշէսի առաջնոյ» (որ Խորենացու սկզբնական ծրագրում չի եղել) դրվելու է «Արշակայ առաջնոյ»։

Հայ Արշակունիների ազգատոհմի մեջ ամենախառնակ մասն է Սասանյանների շրջանը և հատկապես Տրդատի թագավորությունից սկսած՝ նորագույն բանասերները Տրդատի թագավորության առաջին տարին դնում են 287 թվականը, հիմնվելով մի կողմից՝ Խորենացու վկայության վրա, թե «մանրախուզիւ քննեալ՝ գտաք դիթագավորներն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի» (Բ, ձբ), և մյուս կողմից՝ Դիոկղետիանոսի թագավորության առաջին տարու վրա, որ է 284։ Այսպես ընդունելով՝ ստացվում է անախրոնիզմների մի շարք մինչև Արշակունյաց բարձումը։ Ն. Ադոնց[1] բերում է Խորենացու այս ժամանակին վերաբերյալ աղյուսակը, Տրդատի առաջին տարին ընդունելով 286 թվականը։ Եվ նրա ցուցակով դուրս է գալիս, որ Արշակ Բ թագավորում է մինչև 396 թվականը, Վարազդատը թագավորում է 401—405 թվականներին (երբ մեր գրերը գանվեցին), Վռամշապուհը, գրերի գյուտի ժամանակակիցը, թագավորում է 415—436 թվականներին, վերջին Արտաշեսը՝ 444—450 թվականներին, երբ Արշակունյաց հարստությունը վերջացավ։ Նույնքան սխալ են և՛ մյուս թագավորների տարիները, և՛ սինխրոնիզմները օտարազգի թագավորների հետ, և՛ ընդհանրապես հետաշրջված է ամբողջ ժամանակագրությունը, և այս բոլոր անտեղությունները վերագրվում են Խորենացու ժամանակագրության մինչև Խորենացին այստեղ բնավ մեղք չունի, մնդավոր են միայն իրենք՝ բանասերները։

Գարագաշյանը[2], դնելով Տրդատի առաջին տարին 287 կամ 297 թվականը՝

---

[1] Начальная Ист. Армении у Себеоса, ծան. էջ 25։

[2] Քննական պատմություն, հատ. Գ., էջ 3—4։

այնուհետև Խորենացու Արշակունյաց ժամանակագրությունը փոփոխում է կամայականորեն այն կերպով, որ Արշակունյաց բարձումը գուգադիպի Հիշտ թվականին, այսինքն 428-ին։ Այսպես՝ նա Տրդատին տալիս է 49 կամ 39 տարի թագավորություն մինչև 336 թվականը, փոխանակ Խորենացու 56 տարվան։ Խորենացին Արշակ Բ-ին տալիս է 30 տարի, Գարագաշյանը այս թիվը կես է անում, տալով միայն 15 տարի, մինչև 368 թվականը, անտես անելով այն հանգամանքը, որ Արշակը արդեն թագավոր եղած ժամանակ ամուսնացել էր Փառանձեմի հետ, որից մի քանի տարի հետո ծնվում է Պապը, ուրեմն Պապը 368 թվին կլիներ հազիվ տասը տարեկան և չէր կարող Բյուզանդիայից գալ և թագավորել։ Նույնպիսի անախրոնիզմներ նկատվում են Գարագաշյանի մոտ նաև հայ Արշակունիների և բյուզանդական կայսրների ժամանակագրության մեջ։ Ըստ Գարագաշյանի Տիրանը թագավորում է 343—353 տարիներում, այնինչ ըստ Խորենացու Տիրանը ժամանակակից է Հուլիանոս կայսեր, որ թագավորել է 361—364-ին։ Պապը ըստ Գարագաշյանի թագավորում է 368—374-ին, իսկ Վարազդատը 374—377-ին, այնինչ ըստ Խորենացու նրանց թագավորեցնողն եղել է Թեոդոս Մեծը, որ թագավորել է 379—395 տարիներում։ Հայաստանի բաժանումը տեղի է ունեցել 384-ին, սակայն ըստ Խորենացու այս բաժանումը կատարել են Շապուհը և Արկադիոսը, իսկ այս վերջինը թագավորել է 395-ին։

Այս անհեթեթությունների հիմնական պատճառն է Տրդատի թագավորության առաջին տարին, որ հիշյալ բանասերները (ինչպես և ուրիշները) դնում են 287-ին, հիմնվելով մի կողմից Խորենացու վերոհիշյալ վկայության վրա, թե Տրդատը թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում, և մյուս կողմից իրենց հանած եզրակացության վրա, թե քանի որ Դիոկղետիանոսի առաջին տարին 284 թվականն է, ուրեմն նրա երրորդ տարին կլինի 287 թվական։ Նրանք իրենց հարց չեն տվել, թե արդյոք Խորենացին նո՞ւյնպես Դիոկղետիանոսի առաջին տարին համարում էր 284 թվական, թե նրա ունեցած աղբյուրում Դիոկղետիանոսի գահակալության տարին ուրիշ է եղել։ Գուտշմիդը մեր քանիցս հիշած քննության մեջ կարճատոհ ասել էր, թե Խորենացին հռոմեական կայսրների պատմության բոլորովին անգետ է և նրանց բոլոր տարիները մոտ 18 տոսի վեր է բարձրացնում (էջ 7), (մեր կարծիքով՝ 18-ից մինչև 24 տարի)։ Դերմանացի գիտնականի այս կարևոր ցուցման վրա ոչ ոք ուշադրություն չի դարձրել, ինչպես նաև Գարագաշյանն ու Ադոնցը, որոնք կարծել են, թե Խորենացին ևս իրենց նման Դիոկղետիանոսի առաջին տարին ընդունում է 284 թվական, և սրանով ընկել են սիստեմական սխալների մեջ։

Քանի որ Տրդատի թագավորության առաջին տարին անստույգ է, մենք ընտրեցինք ուրիշ միջոց՝ ըստ Խորենացու կազմելու Արշակունյաց ժամանակագրությունը Սասանյանների շրջանի համար։ Քանի որ աննկատելի է Արշակունյաց թագավորության վերջանալու տարին, այն է 428 թվականը, մենք այս թվականից դեպի վեր բարձրացանք մինչև Տրդատ, ըստ ամենայնի հետևելով Խորենացուն, գումարելով ամեն մի թագավորի համար նրա նշանակած տարիները[1]։ Ստացվեց 165 տարի, որը դուրս գալով 428 թվականից՝ Տրդատի թա-

[1] Այսինքն՝ Արտաշիր 6 տարի, անիշխանություն 3 տարի, Շապուհ պարսից 4 տարի, նորից երկրորդ անգամ՝ 1 տարի, Վռամշապուհ 21 տարի, նորից 5 տարի, Արշակ—Վաղարշակ 8 տարի, Վարազդատ 4 տարի, Պապ 7

գավորության առաջին տարին գտանք 263 թվականը. ըստ այմ՝ Խորենացու ունեցած ժամանակագրությամբ Դիոկղետիանոսը թագավորել է 261 թվին, իսկականից 23 տարի առաջ։

Ընդունելով 263 թվականը իբրև Տրդատի թագավորության առաջին տարի՝ հաստատվում է զուգություն պատմական ժամանակամիջոցի և թագավորների տարիների գումարի մեջ՝ 165 տարի։ Բայց սա բավական չէ. համոզվելու համար, թե արդարև Խորենացին Տրդատի թագավորության առաջին տարի է ընդունել այս 263 թվականը՝ հարկավոր են կողմնակի ապացույցներ։ Այս ապացույցները, բարեբախտաբար, կան։

Առաջին ապացույց։ Արտաշիր Սասանյանը թագավորեց 226-ին. նրա թագավորության տասներորդ տարում Խոսրովն սպանվեց Անակից ըստ Խորենացու, ուրեմն 236-ին. այնուհետև, դարձյալ ըստ Խորենացու, Արտաշիրը Հայաստանին տիրեց 26 տարի և նրանից հետո, մինչև Տրդատի թագավորելը, Շապուհը դարձյալ մեկ տարի, ուրեմն միասին 27 տարի, որը ավելացնելով 236-ի վրա՝ ստանում ենք 263 թվականը = Տրդատի առաջին տարին։

Երկրորդ ապացույց։ Տրդատի թագավորության 17-րդ տարում, ըստ Խորենացու, տեղի ունեցան Հայոց դարձը և Գր. Լուսավորչի ձեռնադրությունը, ուրեմն ըստ մեր ցուցակի՝ 279-ին։ Եթե սրա վրա ավելացնենք բոլոր կաթողիկոսների տարիները մինչև ս. Սահակի մահը, ըստ Խորենացու ժամանակագրության, այսինքն 160 տարի՝ կստանանք 438 թվականը, որ անկասկածելի թվական է ս. Սահակի մահվան։

Նույնիսկ Դիոկղետիանոսի 263 թվին թագավորելու մասին, ինչպես գիտցել է Խորենացին, ունենք մի անակնկալ գեղեցիկ ապացույց, բոլորովին կողմնակի աղբյուրից։ Սերեոսի մոտ (նոր հրատ., գլ. ԽԹ, էջ 132) կարդում ենք, որ Հայոց եկեղեցական ժողովը Կոստանդ կայսրին դրած քղիում ի միջի այլոց գրում է. «Յամի երեքտասաներորդի կենարարի և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս»։ (Նախկին հրատարակիչները բնագրի այս 13 թվականը չհասկանալով ու սխալ համարելով՝ դեն են գցել և իրանց կողմից դրել Դիոկղետիանոսի իսկական թվականը «յամի երեքերիւր ութսուն և չորրորդի»)։ Սերեոսի նոր հրատարակության 67-րդ ծանոթության մեջ մենք ցույց տվինք, որ ուղիղ է բնագրի 13-րդ տարին և այս տարին պետք է հաշվանակ հունաց թվականից, որ սկսվում էր 248 թվականով ՀՔ (= առաջին տարի Հռոմի շինության տարեթվի երկրորդ հազարամյակի). ուստի այս թվականության 13-րդ տարին համապատասխանում է փրկչական թվականի 261-ին։ Տեսնում ենք, ուրեմն, որ յոթներորդ դարի քառատնական թվականներում էլ, երբ գրվեց վերոհիշյալ թուղթը, ժողովն օգտվել է մի հեղինակություն վայելող ժամանակագրությունից, որի մեջ Դիոկղետիանոսի առաջին տարին նշանակված է 261-ին, իսկականից 23 տարի առաջ, ճիշտ ինչպես և Խորենացու մոտ։

Թե ինչ ժամանակագրություն է եղել այս՝ չգիտենք. ձեռքի տակ աղբյուրներ չունենք այս հարցը քննելու. բայց սա նշանակություն չունի մեր հարցի համար։ Մեզի համար կարևորն այն է, որ Դիոկղետիանոսի թագավորելը

տարի, Արշակ 30 տարի, Տիրան 11 տարի, Խոսրով փոքր 9 տարի, Տրդատ 56 տարի = 165 տարի։

261-ին դնում է ոչ միայն Խորենացին այլ նաև 640-ական թվականներում գումարված Հայոց եկեղեցական ժողովը, որով արդարանում է Դուռնմիտի դիտողությունը։ Մեզ համար ավելի կարևորն այն է, որ Տրդատի 263 թվին թագավորելը հաստատվում է ուրիշ երկու ժամանակագրական հաշիվներով ըստ Խորենացու, այնպես որ հաստատապես կարող ենք ասել, որ ըստ Խորենացու, որ միակ աղբյուրն է այս ժամանակագրության, Տրդատը թագավորել է 263 թվին, իսկ Հայոց դարձը, ս. Գրիգորի ձեռնադրությունը էջմիածնի տաճարի շինությունը տեղի են ունեցել 279 թվին, և ոչ 301-ին, ինչպես առհասարակ ընդունված էր։ Այս է ամենակարևոր եզրակացությունը մեր կազմած աղյուսակից։

Ինչպես Դիոկղետիանոսի, այնպես էլ նրան նախորդող և հաջորդող կայսրների թագավորության տարիները Խորենացու մոտ 18—24 տարով առաջ են իսկական ժամանակներից, և սրա հետևանքով Խորենացու մոտ իրար ժամանակակից են դառնում այնպիսի Արշակունի թագավորներ և Հռոմեական ու Բյուզանդական կայսրներ, որոնք իրապես ժամանակակից չեն եղել, ինչպես Ասորով Մեծը՝ Փիլիպպոս կայսեր, Տիրանը՝ Հուլիանոսին, Կոստանդիանոս կայսրը և Նիկիո ժողովը հանդիպում են Գր. Լուսավորչի կենդանության և այլն։ Այս պատճառով պետք էր Հռոմեական և Բյուզանդական կայսրների ժամանակը նշանակել ըստ Խորենացու ունեցած սխալ ժամանակագրության, և այն ժամանակ բոլոր անախրոնիզմները կվերանան։ Երևում է, որ Խորենացին յուր հիմնական՝ Արշակունյաց ցուցակի հայ թագավորներին հարաբերության մեջ է դնում Հռոմեական և Բյուզանդական այն կայսրների հետ, որոնք, ըստ յուր սխալ ժամանակագրության, ժամանակակից են դուրս գալիս նրանց։ Նրա դատողությունն ուղիղ է, բայց հետևանքը սխալ է՝ սխալ ժամանակագրության պատճառով։

Նույնպիսի տարբերություններ նկատվում են Խորենացու ասած Սասանյանների տարիների և նրանց իսկական տարիների մեջ, ինչպես դարձյալ ճիշտ դիտել է Դուռնմիտը (էջ 7)։ Այստեղ ևս մենք Սասանյանների տարիները գրեցինք ըստ Խորենացու, նկատելով նրա հիմնական ցուցակը։ Արշակունյաց տարիների, որին նա հարմարեցրել է Սասանյանների տարիները։ Գիտենք միայն, որ ինչպես Պարթև թագավորների ցուցակում, այստեղ ևս Խորենացին կարճատև կամ աննշան թագավորությունները կցել է երկարատև կամ նշանավոր թագավորների ժամանակներին։

Առաջին սինխրոնիկ ազյուսակ Հայոց Պատմության
ըստ օտարազգի և ստույգ աղբյուրների

Ա ե լ և կ յ ա ն ն ե ր	Պ ա ր թ և ն ե ր	Ն. Ք ր.	Հ ա յ ե ր
Մահ Աղեքսանդրի		323	
Սելևկոս Նիկատոր		321	
Անտիոքոս Սոտեր		281	
	Արշակ Ա Պարեհ	263	
Անտիոքոս Թեոս		255	
	Բ Տրդատ	253	
Սելևկոս Բ Կալինիկոս		246	
	Պարթևներ ինքնագլուխ	238	
Անտիոքոս Մեծ		222	
	Գ Այտավան	217	
	Դ Պրաապատ	197	
Անտիոքոսի պատանությունը		190	Արտաքսիաս Մեծ Հայքում
		188	Զարեհադրեան
Սելևկոս Հայրասեր		187	
	Ե Հրահատ	182	
Անտիոքոս Երևելի	Զ. Մհհրդատ Ա.	174	
Դեմետրիոս Նիկատոր		146	
	Է Հրահատ Բ	138	
Մահ Անտիոքոսի Սիդետեսի		129	

Երկրորդ սինխրոնիկ աղյուսակ Հայոց Պատմության ըստ Խորենացու

Սելևկյաններ	Պարթևներ	Ն. Քր.	Հայեր	Քանի տարի
	Արշակ Քաջ (Arsaces I, Tiridates) 31 տարի	250		
	Արտաշես Ա (Artabanes) 21 տարի	219		
	N(Priabates, Phraates) 20 տարի	193		
	Արշակ Մեծ (Mithridates I' Artabanes) 53 տարի	173		
		132	Վաղարշակ	22

Ա. աղյուսակ ըստ օտարազգի և տոհմիկ աղբյուրների

Հռոմայեցիներ	Պարթևներ	Ն. Քր.	Հայեր
	Ը. Արտավան Բ	127	
	Թ. Միհրդատ Բ	114	
		90	Տիգրան Մեծ (Երկրորդ)
	Ժ. Արշակ	86	
	ԺԱ. Սանատրուկ	76	
	ԺԲ. Հրահատ Գ	68	
Առաջին եռապետություն, Պոմպեոս		60	
	ԺԳ. Միհրդատ Գ	58	
		56	Արտավազդ, որդի Տիգրանի
	ԺԴ. Որոդես Ա.	54	
Երկրորդ եռապետություն, Անտոնիոս		42	
	ԺԵ. Հրահատ Դ	36	
		34	Մահ Արտավազդի
		34	Արտաշես, որդի Արտավազդի
Օգոստոս Կայսր		20	Տիգրան (Գ), եղբայր Արտաշեսի
			Տիգրան Գ կրտսեր և Երատո
		6	Արտավազդ?
		Հ. Քր.	
	ԺԶ. Հրահատ	1	Արիոբարզան Մար, Օգոստոսից
	ԺԷ. Որոտ.	2	
			Արտավազդ, որդի Արիոբարզանի?
	ԺԸ. Վոնոն	4	

Բ աղյուսակ ըստ Խորենացու

Հռոմայեցիներ	Պարթևներ	Ն. Քր.	Հայեր	Քանի տարի
	Արշական (Mitridates II) 30 տարի	120		
		110	Արշակ	13
		97	Արտաշես Ա	25
	Արշանակ 31 տարի	90		
Վայկուն (=Լուկուլլոս), Պոմպեոս և այլք		72	Տիգրան Մեծ	33
	Արշեզ կամ Արտաշես (Mithridates III, Orondes) 20 տարի	59		
Անտոնիոս	Արտաշիր (Phraates IV, Vonones) 46 տարի	39	Արտավազդ	—
		38	Արշամ	20
		18	Աբգար	38

Ա աղյուսակ ըստ օտարազգի և ստույգ աղբյուրների

Հռոմայեցիներ	Պարթևներ	Ն Քր.	Հայեր
		—	Տիգրան Դ ի տոհմէ թագաւորացն Հայոց
Տիբեր	ԺԹ. Արտավան Գ	14	
		16	Երատո մյուս անգամ։ Վերջ Արտաշիսյան ցեղի
		16	Վոնոն Պարթև, որդի Հրահատի
		18	Զենոն (=Արտաշես), որդի Պոլեմոնի
		34	Արշակ, նշանակված Արտավանից
		35	Միհրդատ, եղբայր Փարսմանի, վրաց թագավորի, նշանակված Տիբերից
Կալիգուլա		37	Պարթևական նահանգ, կուսակալով կառավարվող
Կլավդիոս		41	Միհրդատ, Հռոմից վերահաստատված
	Ի. Վարդան	44	
	ԻԱ. Գոտարզ	47	
	ԻԲ. Վոնոն Բ	50	
		51	Հռադամիստ վրացի
		53	Տիրիթ կամ Տրդատ, եղբայր Վաղարշի, նրանից նշանակված
Ներոն	ԻԳ Վաղարշ	54	
		58	Տիգրան, թոռն Արքելայոսի, Հռոմից նշանակված
		64	Տրդատ-Արտաշես, Ներոնից թագադրվում է Հայաստանի թագավոր
Վեսպասիանոս		69	
Տիտոս		79	
Դոմետիանոս		81	
		82	Արտավազդ, Աշխադար, որդիք Արտաշեսի
	ԻԴ. Բակուր	90	

Բ աղյուսակ ըստ Խորենացու

Հռոմայեցիներ	Պարթևներ	Ն. Քր.	Հայեր	Քանի տարի
	Արտաշես Բ (Artabanes) 34 տարի	7		
		20	Անանուն, Սանատրուկ	30
	Դարեհ (Vardanes, Vologeses) 30 տարի	41		
		50	Երվանդ	20
		70	Արտաշես Բ	41
	Արշակ Գ 19 տարի	71		
	Արտաշես Գ (Pacorus)[1] 20 տարի	90		

[1] Այս Pacorus-ը Պատկանյանի ցուցակում դրված էր նախորդի, Արշակ Գ-ի մոտ, որ, կարծում ենք, տպագրական վրիպակ է։

Հռոմայեցի-ներ	Պարթևներ	Հր.	Հայեր
Ներվաս		96	
Տրայիանոս		98	
	Իբ. Խոսրով	108	Պարթամասիր, Խոսրովի եղբորորդին, պարթևներից նշանակված
		109	
		115	Հռոմեական նահանգ Տրայիանոսի ժամանակ
Ադրիանոս		117	
		118	Պարթամասպատ, որդի Աշխատագարի՝ նախ թագավոր Պարսից
	Իգ. Վաղարշ Ո	121	
Անտոնիոս Պիոս		138	
		140	Աքիմնիդա, թագադրված Անտոնիոսից
	Իէ. Վաղարշ Գ	149	
Մարկոս Ավրիլիոս		161	
		169	Սոյեմոս վերստին
		180	
Կոմոդոս		190	Սանատրուկ, որդի Սոյեմոսի
	Իզ. Արտավան	191	
Սեպտիմոս Սևերոս		193	
	Իթ. Բակուր Ո	199	
	Լ. Վաղարշ Դ	209	
		211	Վաղարշ, որդի Սանատրուկի
	Լա. Արտավան Բ	216	
Մակրինոս, Հելիոգաբալ		217	

Բ աղյուսակ ըստ Խորենացու

Հռոմայեցիներ	Պարթևներ	Հ. Քր.	Հայեր	Քանի տարի
	Պերոզ 34 տարի	110		
		111	Արտավազդ Բ	2
		113	Տիրան	21
		134	Տիգրան Գ	42
	Վաղարշակ (Vologeres) 50 տարի	144		
		176	Վաղարշ	20
	Արտավան (Artabanes) 31 տարի	194		
		196	Խոսրով Ա (Մեծ)	41
Փիլիպպոս (244)		222		

Ա. աղյուսակ ըստ օտարազգի և ստույգ աղբյուրների

Հռոմայեցիներ	Պարթևներ	Ն. Քր.	Հայեր
		218	Տրդատ Բ որդի Վաղարշի, Մակրինոսից նշանակված
Ալեքսանդր Սևերոս		222	
	Սասանյաններ		
	Արտաշիր Ա Բաբիկան	226	
Մաքսիմինոս		236	
Գորդիանոս		238	
	Շապուհ Ա	241	
		241	Հայաստանը նվաճված Շապուհից
Փիլիպպոս Արաբ		244	Հայաստանը ազատվում է Շապուհից
Դեկոս		249	
Վալերիանոս		253	
Գալիենոս		259	
		260	Արտավազդ՝ դաշնակից Շապուհի
Կղավդիոս		268	
Ավրելիանոս		270	
	Որմիզդ Ա	272	
	Վահրամ Ա	273	
Տակիտոս		275	
Փրոբիանոս, Պրոբոս	Վահրամ Բ	276	
Ավրելիոս Կարոս		282	
Կարինոս, Հաբարիանոս		283	
Դիոկղետիանոս		284	

Բ աղյուսակ ըստ Խորենացու

Հռոմայեցիներ	Պարթևներ	Հ Քր.	Հայեր	Քանի տարի
	Սպանություն Արտավանի	225		
	Սասանյաններ			
	Արտաշիր Սասանյան	226		
		236	Սպանումն Խոսրովի	
		236	Հայաստանը պարսիկներից նվաճված 27 տարի	27
Դիոկղետիանոս (284)		261		
		263	Տրդատ	56
		279	Գրիգոր Լուսավորիչ, Հայոց դարձը	30

Ա աղյուսակ ըստ օտարազգի և ստույգ աղբյուրների

Հռոմայեցիներ	Սասանյաններ	Յ. Քր.	Հայեր
		287	Տրդատ Մեծ (որդի Խոսրովի)
	Վահրամ Գ Ներսեհ	293 — 297	Պարսիկները հրաժարվում են Հայաստանից։ Տրդատ Մեծ։
	Որմիզդ	302	
Գալերիանոս, Կոստանդ.		305	
Բյուզանդական կայսրեր			
Կոստանդիանոս		306	
	Շապուհ Բ Երկայնակյաց	309	
Կոստանդիանոս կայսր		324	
		336	Տրդատի մահը
		336	Խոսրով Կոտակ
Կոստանդ Բ, Կոստաս		337	
		343	Տիրան
		353	Արշակ (Բ)
Հուլիանոս		361	
Վաղես, Վաղենտիոս		364	
		368	Պապ
		374	Վարազդատ
		375	
Գրացիանոս		377	Սուրենի մարզպանությունը կամ Մանուելի խնամակալությունը

Բ աղյուսակ ըստ Խորենացու

Հռոմայեցիներ	Սասանյաններ	Ն. Քր.	Հայեր	Քանի տարի
Բյուզանդական կայսրներ				
Կոստանդիանոս (324)		301		
		308	Արիստակես	7
Կոստանդ (333)		312		
		315	Վրթանես	15
	Որմիզդ	318		
		319	Խոսրով փոքր, Կոստանդի օգնությամբ	9
	Շապուհ Երկայնակյաց	321		
		328	Տիրան	11
		331	Հուսիկ	6
Հուլիանոս (361)		336		
		337	Փառներսեհ	4
		339	Արշակ (Բ)	30
Վաղես (364)		341	Ներսես Մեծ	34
Թեոդոս Մեծ (379)		356		
		369	Պապ	7

Ա աղյուսակ ըստ օտարազգի և ստույգ աղբյուրների

Բյուզանդական կայսրներ	Սասանյաններ	Ն. Քր.	Հայեր
Թեոդոս Մեծ	Արտաշիր Բ	379	Արշակ վերջին
	Շապուհ Գ	383	
		384	Բաժանումն Հայաստանի Խոսրով Պարսից բաժնում
		386	
	Վահրամ Գ Կրման	388	
		392	Վռամշապուհ
Արկադիոս, Ոնորիոս		395	
	Հազկերտ Ա	399	
Թեոդոս Փոքր		408	
		414	
		414	Խոսրով երկրորդ անգամ Շապուհ պարսիկ
		418	Զորամյա ապստամբություն
	Վահրամ Ե. Գորին	420	
		422	Արտաշիր կամ Արտաշես վերջին
		428	Բարձումն տերության Արշակունյաց
	Հազկերտ Բ	438	Մահ ս. Սահակի

Բ աղյուսակ ըստ Խորենացու

Բյուզանդ. կայսրներ	Սասանյաններ	Հ. Թր.	Հայեր	Քանի տարի
		376	Սահակ (Շահակ)	4
	Արտաշես կամ Արտաշիր	379		
		380	Զավեն	4
		380	Արշակ, Վաղարշակ	8
Արկադիոս (385)		382		
	Շապուհ Գ	383	Ասպուրակես	5
		384	Բաժանումն Հայաստանի	
		387	Խոսրով, Շապուհից նշանակված	
		387	ս. Սահակ	51
	Վռամ Կրման	388		
Թեոդոս Փոքր (408)		391		
		392	Վռամշապուհ	21
	Հազկերտ (405)	399		
		414	Խոսրով երկրորդ անգամ	1
		415	Շապուհ պարսիկ	4
		419	Անիշխանություն	3
	Վռամ (Զորին)	420		
		422	Արտաշիր	6
		428	Բարձումն տերության Արշակունյաց	
	Հազկերտ Բ	438	Մահ ս. Սահակի	

Պատմական ժամանակ 132-ից նՔ. մինչև Արշակունիների բարձումը 428-ին	560 տ.	Թագավորների անիշխանության տարիները Վաղարշակից մինչև Արշակունյաց բարձումը	560 տ.
Պատմական ժամանակ Լուսավորչից մինչև ս. Սահակի մահը	160 տ.	Գահակալությունների տարիների գումարը Լուսավորչից մինչև ս. Սահակի մահը	160 տ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստ. Մալխասյան — Ներածություն . 5

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Հայոց Մեծերի ծննդաբանությունը

Ա. Սահակի թղթին պատասխան և խոստում՝ նրա խնդրածը կատարելու 93

Բ. Թե ինչո՞ւ մենք հույներից կամեցանք ցույց տալ մեր գործերը. մինչդեռ քաղդեացիների և ասորեստանցիների մատյաններից ավելի հարմար են գալիս սրանք 94

Գ. Մեր առաջին թագավորների և իշխանների անիմաստասեր բարքի մասին 95

Դ. Այն մասին, որ մյուս պատմագիրները չհիշատակեցին (ս. գրքին) Ադամի և մյուս նահապետների վերաբերմամբ 97

Ե. Այն մասին, որ Նոյի որդիների ծննդաբանությունը համառոտ է գալիս մինչև Աբրահամ. Նինոս և Արամ. և թե Նինոսը ո՛չ Բելն է, ոչ Բելի որդին 100

Զ. Այն մասին, թե մյուս հնախոսները որոշ բաներում Մովսես (Մարգարեին) համաձայն են և որոշ բաներում տարբեր, և Աբյուդենոս փիլիսոփայի հին անգիր զրույցների մասին , . . . 103

Է. Համառոտ բացատրություն, թե առաջին հեթանոսների Բել կոչածը ըստ ս. գրքի Նեբրովթն է 106

Ը. Թե ո՞վ և ո՞րտեղից գտավ այս պատմությունները . . 107

Թ. Հայոց Վաղարշակ թագավորի թուղթը պարթից թագավոր Արշակ Մեծին 107

Ժ. Հայկի ապստամբության մասին 109

ԺԱ. Պատերազմի և Բելի մահվան մասին 110

ԺԲ. Հայկից սերված ցեղերի և գավառների մասին. և թե նրանցից յուրաքանչյուրն ի՞նչ գործեց 113

ԺԳ. Արևելցիների հետ պատերազմի և հաղթության և Նյուքար Մադեսի մահվան մասին 116

ԺԴ. Ասորեստանցիների հետ կռվի և հաղթության և Պայապիս Քաղյայի մասին. Նաև Կեսարիայի և Առաջին և մյուս Հայքերի մասին . . 117

ԺԵ. Արայի և նրա մահվան մասին Շամիրամից՝ պատերազմի մեջ . 120

ԺԶ. Թե ինչպես Շամիրամը Արայի մահից հետո շինում է քաղաքը և գետի ամբարտակը և իր տունը 121

ԺԷ. Շամիրամի մասին, թե ինչ պատճառով կոտորեց իր որդիներին, Զրադաշտ մոգից փախավ Հայաստան և մեռավ իր Նինվաս որդու ձեռքով 124

ԺԸ. Այն մասին, թե հաստատապես ինչ անցք է անցել Շամիրամի պատերազմը Հնդկաստանում և հետո նրա մահը Հայաստանում . . 125
ԺԹ. Ինչ որ պատահեց Շամիրամի մահից հետո 125
Ի. Արայան Արայի մասին և թե սրա որդին էր Սոսանվեր Անուշավանը 127
ԻԱ. Սկայորդուց մինչև Պարույրն առաջին անգամ թագավորում է Հայաստանում, օգնական է լինում Մարաց Վարբակեսին Սարդանապալից թագավորությունը վերցնելու 128
ԻԲ. Մեր թագավորների կարգն ու նրանց թվարկումը հորից որդի . 130
ԻԳ. Սենեքերիմի որդիների մասին և թե Արծրունիները, Գնունիները և Աղձնյաց բդեշխ կոչվածը նրանցից են սերված. նույն գլխում նաև թե Անգեղ տունը Պասքամից է 131
ԻԴ. Տիգրանի մասին, թե ի՛նչպես էր ամեն բանով . . . 132
ԻԵ. Աժդահակի երկյուղի և կասկածների մասին Կյուրոսի և Տիգրանի սիրո և միաբանության պատճառով 133
ԻԶ. Թե ի՛նչպես Աժդահակը, կասկածների մեջ լինելով, իրեն պատահելիք դիպվածը տեսնում է սքանչելի երազով 134
ԻԷ. Խորհրդակիցների խոսքերը, հետո և իր մտածած միջոցը և անմիջական գործադրությունը 135
ԻԸ. Աժդահակի թուղթը, Տիգրանի համաձայնությունը և Տիգրանուհուն Մարաստան ուղարկելը 136
ԻԹ. Թե ինչպես նենգությունը հայտնի դարձավ և պատերազմն սկսվեց և Աժդահակի մահն այդ կռվում 137
Լ. Այն մասին, որ իր Տիգրանուհի քրոջն ուղարկեց Տիգրանակերտ. այլ և Աժդահակի առաջին կնոջ՝ Անույշի և գերիների բնակության մասին . 139
ԼԱ. Թե ո՛րոնք են սրա սերունդները և ի՛նչ ցեղեր դասվեցին սրանից 140
ԼԲ. Թե Իլիական պատերազմը Տևտամոսի ժամանակ եղավ և մեր Զարմայրը սակավաթիվ եթովպացի զորքի հետ այնտեղ էր և այնտեղ մեռավ 142
Պարսից առասպելներից: Բյուրասպի Աժդահակի մասին . . . 143
Բացատրություն՝ ինչ որ հավատալի բան կա Բյուրասպի մասին . . 144

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Ա. Միջին պատմություն մեր նախնիների 146
Բ. Արշակի և նրա որդիների թագավորելը: Պատերազմ մակեդոնացիների և սեր հռոմայեցիների հետ 147
Գ. Վաղարշակին Հայոց աշխարհի վրա թագավորեցնելը . . . 148
Դ. Թե ի՛նչպես Վաղարշակը հայոց քաջերին զինվորական կարգի վերածելով՝ արշավում է մակեդոնացիների մտերիմների վրա . . 148
Ե. Մորփյուղիկեսի պատերազմը և նրա մահը մկունդի հարվածից . 149
Զ. Թե ի՛նչպես կարգավորեց Վաղարշակը մեր աշխարհի հյուսիսային և արևմտյան կողմերը 150
Է. Թագավորության կազմակերպությունը, և թե ո՞րտեղից հիմնեց նախարարությունները և ինչպե՞ս հրամայեց կենցաղավարել . . . 151

Ը. Մարաց Աժդահակ թագավորի սերնդից թագավորության երկրորդ նշանակելը 153
Թ. Մեր Արշակ Առաչինի և նրա գործերի մասին . . . 157
Ժ. Թե ո՛րտեղից գոտավ պատմությունը Մար Աբաս Կատինայի գրքից հետո 158
ԺԱ. Մեր Արտաշես Առաչինի մասին և նախագահությունը (պարսիկներից) հափշտակելու մասին 158
ԺԲ. Արտաշեսի արշավանքը դեպի Արևմուտք, Կրեստոսին ձերբակալելը և կուռքերի արձաններն ավար առնելն ու հայերին տալը . . 159
ԺԳ. Ուրիշ պատմագիրներից վկայություններ Արտաշեսի տիեզերակալության և Կրեստոսին կապելու մասին 160
ԺԴ. Տիգրան Միչինի թագավորելը, Հունաց զորքերին դիմադրելը, մեհյաններ շինելը և Պաղնատին արշավելը . . . 162
ԺԵ. Հռոմեայեցիների Պոմպեոս զորավարի մեր վրա դիմելը, Մամուքն առնելը և Միհրդատի մահը 164
ԺԶ. Տիգրանի՝ հռոմայեցիների զորքերի վրա հարձակվելը, Գաբիանոսի խուսս տալը և երիտասարդ Միհրդատին արձակելը 164
ԺԷ. Կրասոսի պատերազմը և Տիգրանից սպանվելը . . . 165
ԺԸ. Թե ինչպես Կասսիոս դիմադրեց Տիգրանին և Միհրդատի ապստամբելն ու կեսարիան շինելը 165
ԺԹ. Տիգրանի և Արտաշեզի միաբանության մասին. Պաղնատին տապատակող զորք ուղարկելը. Հյուրկանոս քահանայապետի և բազմաթիվ հրեաների գերությունը 166
Ի. Հայոց մի այլ պատերազմ հռոմայեցիների հետ. Սիղոնի և Բենդիդիոսի սպարտությունը 168
ԻԱ. Թե ի՛նչպես Անտոնիոսը անձամբ Հայոց զորքերի վրա դիմելով առնում է Շամշատ քաղաքը 168
ԻԲ. Արտավազդի թագավորելու մասին և հռոմայեցիների հետ պատերազմելը 169
ԻԳ. Անտոնիոսի ձերբակալելը Արտավազդին 169
ԻԴ. Արշամի թագավորելու մասին. առաչին անգամ հայոց մասնակի կերպով հռոմայեցիներին հարկատու դառնալը, Հյուրկանոսի արձակվելը և նրա պատճառով բագրատունիների ցեղին հասած վտանգը . . . 170
ԻԵ. Արշամի գժտությունը Հերովդեսի հետ և ակամա հնազանդությունը 172
ԻԶ. Աբգարի թագավորելը, և հայերի ամբողջապես հարկատու դառնալը հռոմայեցիներին, պատերազմը Հերովդեսի զորքերի հետ և նրա եղբորորդի Հովսեփին սպանելը 172
ԻԷ. Եդեսիա քաղաքի շինությունը և համառոտ հիշատակություն մեր լուսավորչի տոհմի 173

ԻՀ. Աբգարի Արևելք գնալը և Պարսից վրա Արտաշեսին թագավորեցնելը, և Քե ինչպես նա կարգավորեց (Արտաշեսի) եղբայրներին, որոնցից ծագում են մեր Լուսավորիչը և նրա ազգակիցները 174

ԻԲ. Աբգարի վերադառնալն Արևելքից և Արեսին օգնություն տալը՝ Հերովդես Ջորդոդապետի հետ պատերազմելիս 175

Լ. Աբգարի իշխանների առաքումը Սաբինոսի մոտ, որի ժամանակ նրանք տեսան մեր Փրկիչ Քրիստոսին, որ ուխտ եղավ Աբգարի հավատալուն 176

ԼԱ. Աբգարի Թուղթը Փրկչին 177

ԼԲ. Աբգարի Թղթի պատասխանը, որ գրեց Թովմաս առաքյալը Փրկչի հրամանով 178

ԼԳ. Թադեոս առաքյալի քարոզությունը նախախայտ և (Աբգարի) հինգ Թղթերի պատճենները 178

ԼԴ. Մեր առաքյալների[102] նահատակության մասին . . . 182

ԼԵ. Սանատրուկի թագավորելը և Աբգարի զավակների ապանելը, Հեղինե տիկնոջ մասին 183

ԼԶ. Մծբին քաղաքի նորոգման, Սանատրուկի անվանակոչության և նրա մահվան մասին 184

ԼԷ. Երվանդի թագավորելը, Սանատրուկի որդիներին կոտորելը և Արտաշեսի փախչելով ազատվելը 185

ԼԸ. Ինչ չանքեր գործ դրեց Երվանդը Արտաշեսին իր ձևոքը գցելու համար, և Միջագետքը թողնելը 186

ԼԹ. Երվանդաշատ քաղաքի շինության մասին 187

Խ. Քե ինչպես շինեց Բագարանը՝ կուռքերի քաղաքը . . . 188

ԽԱ. Ծննդոց կոչված անտառը անկելու մասին . . . 188

ԽԲ. Սրսանդակներտ կոչված ձեռակերտի մասին 188

ԽԳ. Քե, ինչպես Սմբատը Պարսից նախարարներին օգնական դարձնելով՝ խնդրում էր Արտաշեսին թագավորեցնել 189

ԽԴ. Քե ինչպես Երվանդը լսում է Արտաշեսի գալը և զորք է գումարում պատերազմի պատրաստվելով 190

ԽԵ. Քե ինչպես Արտաշեսի իր աշխարհը մտնելուն պես գործը հաջողվեց 190

ԽԶ. Երվանդի պատերազմն Արտաշեսի հետ և փախուստը, քաղաքի առնվելը և նրա մահը 191

ԽԷ. Արտաշեսի թագավորելը և իր նախատավորներին բարիքներ անելը 193

ԽԸ. Երվազին սպանելը և մյուս Բագարանը շինելը, և Արտաշեսի հարկատու դառնալը հռոմայեցիներին 193

ԽԹ. Արտաշատ քաղաքի շինության մասին 194

Ը. Ալաններէ հարձակումը մեզ վրա և պարտությունը. Արտաշեսի խնամիանալը նրանց հետ 195
ԸԱ. Արգամի և նրա որդիների սպանությունը 197
ԸԲ. Թե ի՛նչպիսի մարդ էր Սմբատը և ի՛նչ գործ կատարեց Ալաններէ երկրում, և Արտազում բնակություն հաստատելը 198
ԸԳ. Կասբերի երկրի ավարումը, Արտաշեսի զավակների գրգռությունը Սմբատի դեմ և իրար դեմ 199
ԸԴ. Պատերազմ Բասյանում Դամեխիանոսի զորքերի հետ . . . 200
ԸԵ. Տրայանոսի և նրա գործերի մասին. Մաժանի մահը եղբայրների ձեռքով 201
ԸԶ. Թե ինչպես Արտաշեսը մեր աշխարհը բազմամարդացրեց և սահմաններ հաստատեց 202
ԸԷ. Ամառունիների նախարարության մասին 202
ԸԸ. Առավելյանների տոհմի մասին, թե ո՛րտեղից է այդ ցեղը սերվել 203
ԸԹ. Արվեստների գիտությունը Արտաշեսի ժամանակ . . . 203
Կ. Արտաշեսի մահվան մասին 203
ԿԱ. Արտավազդի թագավորելը, իր եղբայրներին ու քույրերին հալածելը և նրա մահը, այլաբանությամբ հանդերձ 205
ԿԲ. Ինչ որ կա Տիրանի մասին 206
ԿԳ. Տրդատ Բագրատունու մասին. և նրա ցեղի հին անունները . 207
ԿԴ. Թե ի՛նչպես էր Տիգրան վերջինը, և ի՛նչ գործեր է արել . . 209
ԿԵ. Վաղարշի թագավորելու մասին. Բասենի ավանը շինելը, նոր քաղաքը պարսպով պատելը, հռոմիների հետ պատերազմը և նրա մահը . 210
ԿԶ. Թե ո՞րտեղից է պատմում այս բաները 211
ԿԷ. Թե ի՛նչպես Ագաթանգեղոս համառոտ պատմեց . . . 212
ԿԸ. Թագավորական ազգերի մասին, որոնցից չոկվեցին պարթևական ցեղերը 213
ԿԹ. Թե ի՛նչպես էր Պարսից Արտաշես թագավորի ցեղը մինչև վերջը 214
Հ. Ինչ առասպելներ կան Պահլավիկների մասին 215
ՀԱ. Խոսրովի առաջին արշավանքը դեպի Ասորեստան, որով մտադիր էր օգնել Արտավանին 215
ՀԲ. Խոսրովը Փիլիպպոսից օգնություն ստանալով պատերազմով դիմում է Արտաշիրի վրա 216
ՀԳ. Խոսրովի կրկին հարձակվելը Արտաշիրի վրա՝ առանց հռոմայեցիների օգնության 217
ՀԴ. Անակի գալստյան մասին և ս. Գրիգորի հղացումը . . . 218

ՀԵ. Կապադովկիայի Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսի և նրա պատմության մասին 219
ՀԶ. Արտաշիրի մեզ վրա դիմելը և Տակիտոսին հաղթելը . . 220
ՀԷ. Պարսիկների և հույների մեջ խաղաղության հաստատվելը, և Արտաշիրի՝ Հայաստանը բարեկարգ պահելը անիշխանության տարիներում . 221
ՀԸ. Մանդակունիների ցեղի կոտորումը Արտաշիրի ձեռքով . . 221
ՀԹ. Տրդատի քաջագործությունները Հայաստանի անիշխանության միջոցին 222
Ձ. Համառոտ տեղեկություն ս. Գրիգորի սնվելու և վարքի մասին, Արտիթես եպիսկոպոսի թղթից, որ գրել էր (իբրև պատասխան) Հանգուռճանի միայնավոր Մարկոսի հարցմունքին 223
ՁԱ. Թե՛ որտեղից և ի՛նչպես է ծագել Մամիկոնյանների ցեղը . . 224
ՁԲ. Տրդատի քաջագործությունները Թագավոր եղած ժամանակ, նախքան հավատալը 226
ՁԳ. Այն մասին, որ Տրդատը կին է առնում Աշխենին և Կոստանդինը Մաքսիմինային, և թե ի՛նչպես (Կոստանդինը) հավատքի եկավ . . 227
ՁԴ. Սլկունիների բնաջնջումը Ճենազն Մամգունի ձեռքով . . 228
ՁԵ. Տրդատի քաջագործությունները Աղվանքում տեղի ունեցած պատերազմի ժամանակ, երբ մեջքից կես արավ Բասիլների Թագավորին . 229
ՁԶ. Երանելի Նունեի մասին, թե ինչպես պատճառ դարձավ վրացիների փրկության 231
ՁԷ. Շապուհի կրած պարտությունը և ակամայից հնազանդվելը Կոստանդիանոս Մեծին, Տրդատի Եկբատանը գրավելը և ազգականների գալը, և թե այս ժամանակ տեղի ունեցավ փրկական խաչի գյուտը . . . 233
ՁԸ. Լիկիանոսի կալվելը, արքունիքի Հռոմից փոխադրվելը և Կոստանդնուպոլսի շինությունը 234
ՁԹ. Արիոս հերետիկոսի և նրա պատճառով Նիկիայում գումարված ժողովի մասին, և Գրիգորիսի վրա եկած սքանչելիքի մասին . . 236
Ղ. Արիստակեսի Նիկիայից դառնալը, ազգականների հավատալը և Գառնիում եղած շինությունները 237
ՂԱ. Գրիգորի և Արիստակեսի մահվան մասին, և թե ի՞նչ պատճառով լեռը կոչվում է Մանյա այրք 238
ՂԲ. Տրդատ Թագավորի վախճանի մասին, որի հետ և ողբերգական մեղադրություն 240

ՀԱՏՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Ա. Մեր Հայրենիքի պատմության ավարտը 243
Բ. Ի՞նչ անցքեր պատահեցին Մեծն Վրթանեսին և երեք նախարարություններին Տրդատի վախճանվելուց հետո 243
Գ. Սուրբ Գրիգորիսի մահը բարբարոսների ձեռքով . . . 244
Դ. Բակուր բդեշխի անջատվելը Հայոց միաբանությունից և նախարարների խորհուրդը՝ Խոսրովին Թագավորեցնելու մասին . . . 245

Ե. Հայոց թագի պատճենը 245
Զ. Անտիոքոսի գալուստը և նրա գործերը 246
Է. Մանաճէհրի հանցանքը մեծն Հակորի դեմ և նրա մահը . . 247
Ը. Փոքր Խոսրովի թագավորելը, արքունիքը տեղափոխելը և անտառը տնկելը 248
Թ. Սրա ժամանակ հյուսիսային ազգերի արշավանքը մեզ վրա, և վահան Ամատունու քաջագործությունները 249
Ժ. Խոսրովի վախճանվելը և Հայոց պատերազմը պարսիկների հետ 250
ԺԱ. Տիրանի թագավորելու մասին, մեծն Վրթանեսի այս աշխարհից փոխվելը և սուրբ Հուսիկի հայրդեղն աթոռին 250
ԺԲ. Շապուհի պատերազմը Կոստանդի հետ 251
ԺԳ. Թե ի՛նչպես Տիրանը Հուլիանոսին ընդառաջ գնալով պատանեներ է տալիս 252
ԺԴ. Սուրբ Հուսիկի և Դանիէլի նահատակությունը . . . 253
ԺԵ. Թե ի՛նչպես Զորան Հայոց զորքերն առնելով Հուլիանոսի մոտից հետ է դառնում և ցեղով կոտորվում է 253
ԺԶ. Հուսիկի որդիների մահը և Փառներսեհի հայրդեղն աթոռին . 254
ԺԷ. Թե ի՛նչպես Տիրանը Շապուհից խարվեց և նրա կոչին գնալով նրանից կուրացվեց 255
ԺԸ. Շապուհի Արշակին թագավորեցնելը և Հունաստան արշավելը 256
ԺԹ. Թե ինչպես Արշակ արհամարհեց Հունաց թագավորին . . 256
Ի. Սուրբ Ներսեսի և նրա մուծած բարեկարգություններին մասին . 257
ԻԱ. Արշակի եղբոր՝ Տրդատի սպանվելը, սուրբ Ներսեսի Բյուզանդիոն գնալն ու պատանիները հետ դարձնելը 259
ԻԲ. Թե ի՛նչպես խռովություն ընկավ Արշակի և Գնելի մեջ, և Տիրանի մահը 259
ԻԳ. Արշակի նորից նախանձելը Գնելին և նրան սպանելը . . 261
ԻԴ. Թե ի՛նչպես Արշակը հանդգնեց Գնելի կնոջն առնել, որից ծնվեց Պապը 261
ԻԵ. Տիրիթի սպանությունը 262
ԻԶ. Շապուհի պարտություն կրելը Տիգրանակերտում . . . 263
ԻԷ. Թե ի՛նչպես Արշակավանը շինվեց և կործանվեց, և Անին առնվեց 264
ԻԸ. Տիգրանակերտի առնվելը և հիմնովին քանդվելը . . . 265
ԻԹ. Արշակի պատերազմն իր նախարարների հետ և Պապի Բյուզանդիոն ուղարկվելը 266
Լ. Մեծն Ներսեսի աքսորվելը և անբնակ կղզի դցվելը, և ինչպես նրանք կերակրվում էին երկնային խնամքով 268
ԼԱ. Արշակի կոտորելը նախարարներին, և խոր եպիսկոպոսի վարքի մասին 268
ԼԲ. Թե ի՛նչպես Արշակ կամենում էր քարշել և քարկոծել Ներսեսի հոգին՝ իր հանցանքները հանդիմանելու պատճառով 269

ԼԳ. Թեոդոս Մեծի թագավորելը և հոգեժարանների պատճառով գումարված ժողովը 270
ԼԴ. Արշակի ակամա գնալը Շապուհի մոտ և էլ հետ չդառնալը . 271
ԼԵ. Թե ի՛նչ չարիքներ բերեց Շապուհը Հայաստանի վրա, և Արշակի մահը 271
ԼԶ. Մեհրուժանի մեզ հասցրած չարիքները և Պապի թագավորելը Հայոց վրա 273
ԼԷ. Ձիրավում տեղի ունեցած մեծ պատերազմի մասին, և ամբարիշտ Մեհրուժանի սատակումը 274
ԼԸ. Թե ի՛նչպես Պապը սուրբ Ներսեսին մահվան դեղ տալով կյանքից զրկեց 276
ԼԹ. Սահակի սրբոտակալության մասին, և Պապի սպանվելը Թեոդոսի ձեռքով 277
Խ. Վարդղատի թագավորելու և կապվելու մասին 278
ԽԱ. Արշակի և Վաղարշակի թագավորությունը 279
ԽԲ. Հայաստանի երկու մասի բաժանվելը երկու Արշակունի թագավորների ձեռքի տակ, երկու ազգերին՝ պարսիկներին և հույներին հպատակվելով 279
ԽԳ. Թե ի՛նչպես Խոսրովը մեծարեց Սահակ ասպետին, և նրա քաջարից՝ յուրաքանչյուրն իր թագավորի ծառայության 281
ԽԴ. Թե ի՛նչպես Խոսրովը մեծարեց Սահակ ասպետին, և նրա քաջագործությունները Վանանդացոց ցեղի հելուզակների դեմ 282
ԽԵ. Այն մասին, որ Խոսրովի մոտ եկան Սուրենը, Վահանը և Աշխադարը՝ Արշակի դանձերով 282
ԽԶ. Արշակը պատերազմում Խոսրովից հաղթվելով՝ հիվանդությունից մեռնում է 283
ԽԷ. Երանելի Մեսրոպի մասին 284
ԽԸ. Արշակի մոտ եղած նախարարների դարձը Խոսրովի մոտ . . 285
ԽԹ. Խոսրովի միապետելը Հայաստանի վրա և մեծն Սահակի եպիսկոպոսապետության աթոռը նստելը 287
Ծ. Խոսրովի կապվելը և նրա փոխարեն նրա Վռամշապուհ եղբոր գահակալելը 287
ԾԱ. Մեծն Սահակի Տիզբոն գնալը և վերադարձը մեծարանքներով ու պատիվներով 288
ԾԲ. Դանիելյան նշանագրերների մասին 291
ԾԳ. Մեսրոպյան նշանագրերների մասին, որ տրվեցին երկնային շնորհով 292
ԾԴ. Հայոց, Վրաց և Աղվանից դրագիտության մասին . . . 293
ԾԵ. Խոսրովի կրկին թագավորելը և նրանից հետո պարսից Շապուհի (թագավորելը) 294
ԾԶ. Շապուհի Հայաստանից գնալուց հետո պատահած անցքերը և նրանից հետո եղած անիշխանությունը 296
ԾԷ. Մեսրոպի Բյուզանդիոն ուղարկվելը և հինգ թղթերի պատճենները 296

ԸՀ. Մեր արևմտյան կողմերն ուսուցանելը, բոլորի խաղաղանալը, և Արտաշիրի թագավորելը 299
ՈՓ. Կարին քաղաքի շինությունը, որ կոչվում է Թեոդուպոլիս . 300
Կ. Մեսրոպի երկին քարոզչություն անելը և թարգմանիչների Բյուզանդիոն գնալը 301
ԿԱ. Եփեսոսի ժողովի մասին, որ գումարվեց ամբարիշտ Նեստորի պատճառով 302
ԿԲ. Ուսուցիչների, իր և ուսումնական ճանապարհորդության մասին, երկնային զարդի նմանությամբ 303
ԿԳ. Հայոց չար միաբանության մասին, երբ իրենց անձերի կորուստը խորհեցին 205
ԿԴ. Հայոց թագավորության դադարումը իրենց կամքով և եպիսկոպոսապետության աթոռի անարգվելը 306
ԿԵ. Մեծն Սահակին Պարսկաստանից արձակելը աթոռակալ Շամունի հետ միասին 307
ԿԶ. Մեծն Սահակի անարժան իշխանակից Շամունի գործերը . 310
ԿԷ. Մեծն Սահակի և երանելի Մեսրոպի այս աշխարհից փոխվելը . 311
ԿՀ. Ողբ՝ Հայոց թագավորության Արշակունյաց ցեղից դադարելու մասին և եպիսկոպոսապետության՝ սուրբ Գրիգորի տոհմից . . . 313
Ծանոթություններ Մովսես Խորենացու Պատմության աշխարհաբար թարգմանության 318
Հավելված—Մինխորենի աղյուսակներ Խորենացու Պատմության Բ և Գ գրքերի համար 397